

Հայաստանի Հանրապետություն
Գիտությունների ազգային ակադեմիա
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3 (24)
2 0 2 1

*«Գիտական աշխատություններ» հոդվածների պարբերական ժողովածուն
հիմնադրվել է 1998թ. ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Շիրակի հայագիտական
հետազոտությունների կենտրոնի գիտական խորհրդի որոշմամբ (15.01.1998):*

Ընդգրկված է ՀՀ ԿԳՄՄՆ ԲՈԿ-ի կողմից ընդունված պարբերականների ցանկում:

*ISSN 1829-4316
DOI: 10.52971/18294316*

Գլխավոր խմբագիր՝ բանասիրական գիտությունների դոկտոր
Ս.Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Խմբագրական խորհուրդ՝ Աբրահամյան Լ.Հ. (պատմ. գիտ. թեկնածու, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ), Ակոպով Ա.Ա. (պատմ. գիտ. թեկնածու, պատասխանատու քարտուղար), Ավետիսյան Պ.Ս. (պատմ. գիտ. դոկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ), Բազեյան Կ.Ռ. (պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ), Գրիգորյան (Հայկազուն) Ա.Հ. (ճարտ. դոկտոր, պրոֆեսոր), Խաչատրյան Լ.Մ. (բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր), Հայրապետյան Ա.Ս. (պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ) Հարությունյան Հ.Հ. (արվ. թեկնածու), Մահե Ժ.-Պ. (հայագետ, ԳԱԱ արտասահմանյան անդամ, Ֆրանսիա), Մելքոնյան Ա.Ա. (պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս), Պետրոսյան Ս.Գ. (պատմ. գիտ.դոկտոր), Կավրեղիշվիլի Ռ.Ա. (պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, Վրաստան), Սկոյան Ա.Ա. (փիլ.գիտ. թեկն., մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր), Քոսյան Ա.Վ. (պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր)

ԳԱԱ ՇՀՀ ԿԵՆՏՐՈՆԻ «ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

NN 2 (24) / հայագիտություն և հասարակական գիտություններ // ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն/ Խմբ. խորհուրդ՝ Ս. Հայրապետյան և այլք.- Գյումրի, «Ռ. Ավետիսյան» ԱՁ, 2021. – 324 էջ:

Ժողովածուն ընդգրկում է «Հյուսիսային Հայաստանը պատմության խաչուղիներում (պատմա-մշակութային համադրություններ)» միջազգային գիտաժողովի (22-23. 10. 2021թ. Գյումրի-Երևան) զեկուցումները:

Ժողովածուն նախատեսված է մասնագետների և ընթերցող լայն շրջանների համար:

Ժողովածուն հրատարակվում է «Բնօրրան» Պատմական Հուշարձանների Պահպանման Հայկական Ընկերություն ՀԿ-ի ֆինանսական աջակցությամբ:

*Խմբագրության հասցեն՝ 3101, ՀՀ, Գյումրի, Վ. Սարգսյան 5ա
հեռ.՝ +374 /312/6 94 77, +374/94/411-228
էլ. հասցե՝ scient.works@shirakcenter.sci.am
կայքէջ՝ www. shirakcenter.sci.am*

ISSN 1829-4316
DOI: 10.52971/18294316

© ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն 2021

Республика Армения
Национальная академия наук
Ширакский центр арменоведческих исследований

НАУЧНЫЕ ТРУДЫ

ВЫПУСК
3 (24)
EDITION

SCIENTIFIC WORKS

Shirak Centre of Armenological Studies
National Academy of Sciences
Republic of Armenia

Гюмри 2021 Gyumri

*“Научные труды” основан в 1989г. решением ученого совета Ширакского центра арменоведческих исследований НАН РА (15.01.1998)
Входит в перечень периодических изданий, утвержденных ВАК-ом МОНКС РА.*

*The periodical collection of “Scientific Works” was established in 1998 by the decision of the scientific board of Shirak’s Center of Armenological Studies of NAS of RA (15.01.1998).
The periodical is indexed in the list of SCC MESCS RA.*

*ISSN 1829 - 4316
DOI: 10.52971/18294316*

Главный редактор: доктор филологических наук **АЙРАПЕТЯН С. А.**

Редакционная коллегия: **Абрамян Л.А.** (к.ист.н., член кор. НАН РА), **Аветисян П.С.** (д.ист.н., член кор. НАН РА), **Айрапетян А.С.** (к. ист.н, доцент), **Акопов А.А.** (к.ист.н., ответственный секретарь), **Арутюнян А.А.** (к.иск.), **Базеян К.Р.** (к.ист.н., доцент), **Григорян (Айказун) А.А.** (д. архит., профессор), **Каврелишвили Р. А.** (д.ист.н., профессор, Грузия), **Косян А.В.** (д.ист.н., профессор), **Маэ Ж.-П.** (арменовед, Иностраный член НАН РА, Франция), **Мелконян А.А.** (д.ист.н., профессор, академик НАН РА), **Мкоян А.А.** (к.фил.н., д.пед.н., профессор), **Петросян С.Г.** (д.ист.н.), **Хачатрян Л.М.** (д.фил.н., профессор)

“Научные труды” Ширакского центра арменоведческих исследований НАН РА

NN 2 (24) арменоведение и общественные науки// Национальная академия наук РА, Ширакский центр арменоведческих исследований/Ред. совет: С.Айрапетян и др. - Гюмри, ЧП “Р.Аветисян”, 2021.- 324с.

Editor-in –chief: Doctor of Philological Sciences **HAYRAPETYAN S. A.**

Editorial board: **Abrahamyan L.H.** (PhD in History, Corresponding Member of NAS RA), **Akopov A.A.** (PhD in History, Responsible Secretary), **Avetisyan P.S.** (Doctor of History, Corresponding Member of NAS RA), **Bazeyan K.R.** (PhD in History, associate professor), **Grigoryan (Haykazun) A.H.** (Doctor of Architecture, professor), **Kavrelishvili R.A.** (Doctor of History, professor, Georgia), **Khachatryan L.M.** (Doctor of Philology, professor), **Hayrapetyan A.S.** (PhD in History, associate professor), **Harutyunyan H.H.** (PhD in Art Studies), **Mahé J.-P.** (Armenologist, Foreign member NAS RA, France), **Melqonyan A.A.** (Doctor of History, professor, Academician NAS RA), **Mkoyan A.A.** (PhD in Philosophy, Doctor of Pedagogy, professor), **Petrosyan S.G.** (Doctor of History), **Qosyan A.V.** (Doctor of History, professor).

“Scientific Works” Shirak’s Center of Armenological Studies of NAS RA

NN 2 (24) Armenology and Social Sciences // National Academy of Sciences RA, Shirak Center for Armenological Studies/. Ed. Board: S.Hayrapetyan and others.-Gyumri, "R.Avetisyan PE", 2021,- 324p.

Адрес редакции: 3101, РА, Гюмри, ул. В. Саргсяна 5а

Address: 3101, 5a V. Sargsyan Street, Gyumri, RA

тел./tel.: +374 /312/6 94 77, +374/94/411-228

E-mail: scient.works@shirakcenter.sci.am

hppr: www. shirakcenter.sci.am

ISSN 1829-4316

DOI: 10.52971/18294316

@ Ширакский центр арменоведческих исследований НАН РА, 2021

@ Shirak Center for Armenological Studies of NAS RA, 2021

ՀՏԴ՝ 930.2

DOI: 10.52971/18294316-2021.3-5

ՍԱՐԴՈՒՐՅԱՆ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԷՐԻՄԻՍԻ ԵՐԿՐԻ ՄԱՍԻՆ

Ինգա Ավագյան

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն,
Գյումրու «Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարան

Բանալի քառեր՝ *Գանձադուռ, Սարդուրյան տարեգրության, Էրիմիսի երկիր, Վանի Ս.Պողոս եկեղեցի, սեպագիր արձանագրություն:*

Սարդուրյան տարեգրությունը գտնվում է Վանա ժայռի հյուսիսային լանջին՝ արևմտյան որմնախորշում, որը կոչվում է Գանձադուռ (Խազի-նե կափուսի)¹: Սարդուրյան տարեգրության տեքստին է պատկանում նաև Վանի Ս.Պողոս եկեղեցում երկու քարերի վրա արված արձանագրությունը, որը տարեգրության որոշ մասերի կրկնօրինակն է համարվում: Սարդուրին Էրիմիսի երկիր է արշավել ութ անգամ, նույն տարում այդ արշավանքերի թիվը երբեմն հասել է երեքի: Հողվածում ներկայացվում է այդ արշավանքների մանրամասն վերլուծությունը, ճշգրտվում են արշավանքների ուղղությունները և արձանագրությունների թարգմանությունները:

Նախաբան. Սարդուրյան տարեգրության մեջ Էրիմիսի երկիրը հիշատակվում է մի քանի անգամ: Կան հատվածներ, որոնցից հասկանալի է դառնում, որ տվյալ տարում արքան ստիպված է եղել երեք արշավանք ձեռնարկել Էրիմիսի դեմ: Վավերագիրը իր կարևորությամբ հավասարվում է Արգիշտի I-ի Խորխորյան տարեգրությանը և բավա-

¹ 1916թ. Հ. Օրբելին Վանա ժայռի որմնախորշերից մեկում՝ «Գանձադուռ»-ում, պեղեց Արգիշտի I-ի որդի Սարդուրի II-ի տարեգրությունը: **Пиотровский Б.** Ванское царство (Урагу). М.-1959. с.15:

կանին ընդարձակ տեղեկություններ է տալիս Էրիախի երկրի ռազմաքաղաքական, սոցիալ-տնտեսական, կրոնամշակութային կյանքի մասին²:

Սարգուրյան տարեգրության КУКН 241 В հատվածի (1-7 տողեր) հռչակագրում Մանա երկրի հետ առաջին անգամ հիշատակվում է Էրիախի ցեղամիության երկիրը³: Սարգուրին (Ք.ա 764-735 թթ.) պատմում է, որ Խալդին արշավել և սեփական զենքով ենթարկել է Մանա երկիրը, Էրիախի ցեղամիության երկիրը, որոնք զգեսունել է Սարգուրի Արգիշտորդու առջև (1-7 տողեր): 8-12 տողերում, փառաբանելով Խալդիի զորությունը, զենքի ուժը, որի օգնությամբ Սարգուրին արշավել է, նա նկարագրում է Մանա երկիր կատարած արշավանքը (13-27 տողեր), որից իմանում ենք, որ քաղաքները այրելով ու ավերելով, գրոհելով ամրացված Դարբանի քաղաքի ամրոցը և այստեղ բերդակալ նշանակելով, ապա մարդ-կին քշելով Բիայնիլի՝ արքան երկիրը միացրել է Վանի թագավորությանը: Հենց այդ նույն տարում (28-36 տողեր) երրորդ անգամ արքան զինվորներին ուղարկել էր Էրիախի երկիր, երկիրը գրավել, քաղաքները այրել, ավերել, երկիրը յուրացրել, մարդ, կին քշել դեպի Բիայնիլի երկիրը: 37-50 տողերում, Խալդյան մեծությամբ Սարգուրին պատմում է, թե ինչ ավար է նա տարել ամբողջ արշավանքի ընթացքում Մանայից և երեք անգամ (՝) Էրիախի արշավելուց հետո:

Հատվածի 27-28 տողերից իմանում ենք, որ Սարգուրին ստիպված է եղել այդ տարում երրորդ անգամ զորք ուղարկել Էրիախի, 51-56 տողերից՝ որ Խալդիի փոխարեն սույն մեծագործությունները արքան մեկ տարում է կատարել: 57-59 տողերում արքան խոսում է հենց այս տեղից (ժամանակից) «նախիդիի» հաստատվելու մասին: Ի. Դյակոնովը *nahidini* բառը թարգմանում է *բարձրանալ, բերել* իմաստով, Գ. Մելիքիշվիլին *nah*-ը թարգմանում է *բարձրանալ գահին* իմաստով, Ն. Հարությունյանը 59-րդ տողը չի թարգմանում:

² Թարգմանությունը կատարված է ըստ Պ. Հովհաննիսյանի, Ա. Մովսիսյանի Հայ ժողովրդի պատմության (ՀԺՊ) քրեստոմատիայի «Վանի թագավորության սեպագիր աղբյուրները Հայկական լեռնաշխարհի և հարևան պետությունների մասին» գլխի, Երևան, 2007, հ. I, էջեր 161-169, 174-181, 183-184, ըստ Ն. Հարությունյանի Корпус урартских клинообразных надписей, (այսուհետև՝ КУКН), Ереван, 2001; Գ. Մելիքիշվիլիի Урартские клинообразные надписи (այսուհետև՝ УКН). М.-1960, Ի. Դյակոնովի Ассиро-вавилонские источники по истории Урарту (այսուհետև АВИИУ), Предисловие, раздел I-III, IV // Вестник Древней истории (ВДИ). 2-3. М. -1951, Урартские письма и документы (այսուհետև՝ УПД). М. Л. -1963, Գ. Մերեթեիի Урартские памятники музея Грузии. Тбилиси. -1939; М. Salvini, Corpus dei testi Urartei (այսուհետև՝ CTU I), volume I, Le iscrizioni su Pietra e Roccia I testi. Documenta Asiana. VIII. Volume primo. CNR Istituto di studi Sulle civiltà dell' Egeo e del vicino Oriene, Roma, 2008, Corpus dei testi Urartei (այսուհետև՝ CTU IV), volume IV. Iscrizioni su Bronzi. Argilla e Altri supporti nuove Iscrizioni su Pietra Paleografia generale. Documenta Asiana. VIII, Volume quarto, CNR, Istituto di studi Sulle civiltà dell' Egeo e del vicino Oriene, Roma, -2012; G. Lanfranchi, S. Parpola, The correspondence of Sargon II. Part II. Letters from the Northern and Northeastern provinces. Helsinki university press. -1990: Տե՛ս Ավագյան Ի., Պատմական Շիրակը սկզբնաղբյուրներում, Գյումրի, 2015, էջ 40:

³ КУКН/241, ծան. 17:

Մյուս անգամ Սարգսյան տարեգրության C հատվածում (KYKH/241 C) պատմում է նույն տարում Կուլխա երկիր և Աբիլիանիսի կատարած արշավանքների մասին (1-19 տողեր): Հաջորդ տարի արքան արշավում է Էրիախի, Աբիլիանիսի և Իգանի երկրների դեմ, որի ժամանակ հպատակություն են հայտնում այս ցեղերի արքաները (KYKH/241 C)⁴: Այս արքան պատմում է Էրիախի երկիր կատարած արշավանքի մասին (23-47 տողեր), որի ժամանակ նրան հաջողվել է մեկ օրում գրավել Էրիախի երկիրը, նվաճել Էրիախիի 350 գաղտնի շտեմարանները, որոնք ստեղծել էին Էրիախի հարստության ներկայացուցիչները՝ հպատակված արքայի հայրը և պապը: Ուշագրավ է պետության և տաճարների ունեցվածքի հասանելիության խնդիրը: Էրիախիում տաճարի և արքայի ունեցվածքը պահվում էր ժայռափոր պահեստներում⁵: Էրիախիի տիրակալն ունեցել է «թագավոր-արքա» տիտղոսը, արձանագրությունն ակնարկում է ազգագավառում մի քանի սերունդ տիրող արքայատոհմի գոյության մասին: Շիրակի տարածքում ձևավորված վեց իշխանությունների մեջ գերակշռող դեր էր խաղում Էրիախին, որը կառավարվում էր տեղական հարստության կողմից: Մենք գործ ունենք «Մեծ» Էրիախիի հետ, որը վեց իշխանությունների համադաշնություն էր և իրենից ներկայացնում էր թագավորություն: Այդ վեց իշխանություններն են՝ Էրիախին, Կուլիանին, Գուրիանին, որը Գուրիանիա ձևով է հիշատակվում Աշուրիսուայի կողմից Սարգոն II-ին ուղարկված զեկույցում, Գուլութախին և Անիշթերգան, Աշտուխինին⁶: Բացի սրանից՝ անհրաժեշտ է հիշատակել նաև Իշկիգուլու-Իշկիգուլիսի երկիրը, որը, ըստ Արգիշտիի Սարմաշենի արձանագրության, տեղադրվում է Շիրակի հյուսիսում: ^{Kur}Is-gi-gu-lu-u-ի առավել ճշգրիտ տեղորոշմանը կօգնի Իրդանիու/նի/ քաղաքի տեղադրության հարցի լուծումը, որը մինչև օրս վերջնականապես պարզ չէ:

Էրիախիի գաղտնի ամբարները, որոնք լեցուն էին հարստությամբ (27-28 տողեր), երբևէ չէին գրավվել Վանի հզոր արքաների կողմից և այնքան կարևոր նշանակություն ունեին, որ Սարգսյան այս մասին տեղ է հատկացրել իր տարեգրությունում: Ս. Հնայակյանը, հենվելով (E. Murele) բառի՝ Ի.Դյակոնովի առաջարկած «տաճարի ամբարներ» թարգմանության վրա, ենթադրում է, որ Էրիախիի արքան երկրի կրոնական առաջնորդն է եղել: Բացառված չէ երկրի թեոկրատական իշխանապետություն եղած լինելու հանգամանքը, ինչպիսին էր ըստ էության նաև Վանի թագավորությունը⁷: «Տաճարի ամբարներ» թարգմանությունը հավանական է, քանի որ Շարան, որին ըստ ավան-

⁴ Արշավանքի գլխավոր հռչակագրում (19-22 տողեր) Սարգսյան պատմում է, որ Խալդին արշավել և սեփական զենքին է ենթարկել Էրիախի ցեղի երկիրը, ենթարկել Աբիլիանիսի ցեղի երկիրը, զգեստնել նրանց Արգիշտոսի Սարգսյանի առջև (KYKH/241 C):

⁵ Հնայակյան Ս., Ուրարտուի ոսկին, «Հին Հայաստանի ոսկին (մ.թ.ա. III հազ.-մ.թ. XIV դ.)», Երևան, 2007, էջ 159:

⁶ Հնայակյան Ս., Շիրակը Լուշա-Գատարգա-Վիտերուխե դաշնակցության կազմում // Շիրակի պատմամշակութային ժառանգությունը» հանրապետական գիտաժողով (ՇՊՄԺ) I, Գյումրի, 1994, էջեր 21-23:

⁷ Հնայակյան Ս., Էրիախեն՝ աստվածապետություն // «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը» հանրապետական գիտաժողով, II, Գյումրի, 1996, էջեր 12-13:

դության, պատկանել են այդ ամբարները, տարածաշրջանում պաշտվել է որպես հացի և հացագգիների, պտղաբերության և բերրիության աստվածություն⁸. գրեթե նման գծերով է օժտված եղել նաև Շարայի մայրը⁹:

Էրիախի երկրի անասունները և ունեցվածքը խլելով, քաղաքները այրելով, պետությունը թալանելով՝ Սարգուրին տղամարդկանց ու կանանց գերեվարել է Բիայնիլի (KYKH/241 C տող 30-34):

Նույն արշավանքի վերջում՝ Էրիախից հետ դառնալու ճանապարհին, արքան դարձյալ արշավում է Աբիլիանիի, քաղաքները այրում, երկիրը զավթում (35-39 տողեր): Սեպագիր հատվածից իմանում ենք, որ Սարգուրիի դեմ կանգնած էին Էթիունի համադաշնության երկու հզոր երկրների՝ Էրիախիի և Աբիլիանիիի արքաները: Էրիախիի դեպքում Սարգուրին գործ է ունեցել արքայական հարստության հետ, քանի որ նա հիշատակում է արքայի հորը և պապին, իսկ Աբիլիանիիի դեպքում Սարգուրին հիշատակում է Աբիլիանիիի արքա Մուրինիին, որը, գալով իր մոտ, գրկել էր իր ոտքերը, բերանքսիվայր խոնարհվել և արդյունքում՝ հարկ վճարելու պայմանով հետ ստացել թալանված Աբիլիանիիի գահը: Կարելի է եզրակացնել, որ Կուլխա կատարած արշավանքի տարում արքան արշավել է Աբիլիանիիի և հպատակեցրել երկիրը, սակայն հաջորդ տարի, միգուցե Էրիախիի արքայի դրդմամբ, Մուրինի Աբիլիանորդին դարձյալ ընդդիմացել է Սարգուրիին: Նոր արշավանքի արդյունքում ապստամբությունը ձնշվել է:

⁸ Պետրոսյան Ս., Հացագգիների մշակության և պաշտամունքի արտացոլումը Շարայի ավանդազրույցում // «Պատմա-բանասիրական հանդես», 3, Երևան, 1981, էջեր 187-204: Պետրոսյան Ս., «Շիրակյա ամբարք»-ի շուրջ // Լրաբեր հասարակական գիտությունների, 8, Երևան, 1982, էջեր 73-79:

⁹ Պահպանվել է մի ավանդություն այն մասին, թե ինչու է Կողգաթ լեռը ստացել Շարայի լեռանունը: Հին Հայաստանում ամենքը գիտեին Շիրակի տեր Շարայի որկրամոլության մասին: Ամռանը՝ կալսելու ժամանակ, նա մի քանի սայլ ցորեն է բերում և թաքցնում այս լեռան փոքրիկ անձավում: Շարան մտադիր էր ձմռանը երբեմն այստեղ գալ և մարդկանց հայացքից հեռու կշտացնել փորը: Երբ ձմեռը վրա է հասնում, գաղտագողի գալիս է իր թաքստոցը, նստում է անձավում ու մտածում իր անելիքի մասին: Հենց այնպես ցորենատիկներն ուտելը բանի նման չէ, բայց մինչև տանես, աղաս ու հաց թխես, ամենքը գլխի կրնկնեն: Այդ պահին նրա աչքին երևում է մայրը, որն ասում է. «Տղա՛ս, աստվածները կպատժեն այն մարդուն, որը հացի է նստում որդիներից ծածուկ»: Շարան սթափվում է, վերադառնում տուն և հրամայում, որ գնան ու լեռան անձավից ցորենը տուն բերեն: Այդ ժամանակվանից էլ Կողգաթը կոչվել է Շարայի լեռ: Տե՛ս «Հայկական Մովետական Հանրագիտարան», Երևան, 1974, հ. 8, էջ 462: Շարան զուտ տեղական երևույթ չէ, այլ և՛ անվանական, և՛ վարքագծային առումներով իր զուգահեռներն ունի հինարևելյան դիցազնավեպերում: Շումերական տեքստերում Շարան (Շարու) Ումմա քաղաքի պահապանն է՝ Ինաննա (աքքադական՝ Իշտար) դիցուհու որդին կամ տարփածուն, ինչպես նաև հարստության աստվածը: Ինքը՝ Ինաննան, այդ պարագայում տաճարական շտեմարանների հովանավորն է: Ուշագրավ են Իշտարի խեթական և խուրիական առանձնահատկությունները: Տե՛ս Փիլիպոսյան Ա., Հայկական Շարան և հինարևելյան զուգահեռները // «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը», V, Գյումրի, ԳԱԱ ՇՀՀ կենտրոն, միջազգային գիտաժողովի նյութեր 2002, էջ 24:

Շ հատվածի հաջորդ մասում (40-48 տողեր) գերեվարվածների մասին Սարգսյանի հայտնած թվային հանրագումարային տվյալը հետևյալն է՝ 7150 մարդ մեկ տարում, որոնց արքան գերել էր Էրիախից և Աբիլիանից: Սարգսյանն ոմանց սպանել էր, մյուսներին գերեվարել: Մեծ էր նաև տարված անասնաքանակը, բայց հատվածի կարևոր տեղեկությունը (45-46 տողեր) նաև այն է, որ սա միայն թագավորի ավարն էր, և Սարգսյանն զրում է, որ սա այն է, ինչ նա է տարել, իսկ այն, ինչ իրենից հետո տարվել էր զինվորների կողմից, այս թվերի մեջ չէր մտնում և տարվել էր առանձին, այն բանից հետո, երբ Սարգսյանն լքել էր երկրները: Հաջորդ (47-48) տողերում Սարգսյանն ևս մեկ անգամ նշում է, որ սույն մեծագործությունները նա կատարել է մեկ տարում: Հաջորդ (49-53) տողերից մենք հասկանում ենք, որ հաջորդ տարում արքան արշավել էր Ռուիշիանի և Իգանի երկրների դեմ: Վերջինս տեղակայվում է Վանանդում և Էրիախի համադաշնության դաշնակիցն էր ու նաև՝ Էթիուխի մեջ մտնող երկրներից մեկը: Հատվածի մեջ Սարգսյանն հիշատակում է հպատակեցրած երկրների արքաներին՝ Ռուիշիանի երկրի Ռաշունի արքային (50-51 տողեր), Դիուծինի Իյանորդի արքային (51-52 տողեր): Այս երկու երկրները, ինչպես նաև Էթիուխի երկիրը, Խալդին զգեսնել էր Սարգսյանի Արգիշտորդու առջև (52-53 տողեր): Ուշագրավ են 54-55 տողերը, որտեղ Սարգսյանն ասում է. «Հենց այս տեղից (ժամանակից) «ազեբե» բուն «խարարե» հաստատված է»¹⁰: Ի.Դյակոնովը *azibi(e)*-ն թարգմանում է *օրենք*, *պայմանագիր*, Գ. Մելիքիշվիլին *harare*-ն թարգմանում է *բարօրություն* ձևով, *salmathi(e)* բառը Ի. Դյակոնովը թարգմանում է՝ *կողմում*, *կողմից*, Ն. Հարությունյանը՝ *հարևան*, *կողքին* իմաստով, իսկ Ս.Մավրինին՝ *մյուս կողմից* ձևով: Բացառված չէ, որ 54-55 տողերը կարելի է թարգմանել նաև այսպես. «Սարգսյանն ասում է. Այնտեղ օրենք (պայմանագիր) խաղաղության, մյուս կողմից, հաստատեց»: Այսինքն՝ խոսքը Էթիուսի երկրի համադաշնության և Բիայնիլիի միջև օրենք՝ հաշտության պայմանագիր, հաստատելու մասին է: Արձանագրության մեզ հետաքրքրող հատվածում Սարգսյանն խոսում է Էթիուսի համադաշնության մեջ մտած Էրիախի և Աբիլիանիի հզոր ցեղամիությունները հպատակեցնելու մասին, ընդ որում Աբիլիանիին արքան նվաճել է Էրիախից վերադառնալիս: Թուլացնելով և ենթարկելով այս հզոր ցեղամիությունները՝ արքան ստիպված էր բախվել նաև Էթիուսի համադաշնության հյուսիս-արևմուտքում գտնվող Իգանի-Իյանիի և նրա դաշնակից Ռուիշիանի երկրի հետ, ինչի մասին էլ Սարգսյանն պատմում է: Այս բախումից հետո միայն, երբ Սարգսյանն նվաճում, այրում և թալանում է Էթիուսի հյուսիս-արևմուտքը, տեղի է ունենում Էթիուսի Էթիուսիի և Բիայնիլիի միջև հաշտության պայմանագրի կնքում: Կարծում ենք՝ տարածաշրջանում պարտություն էին կրել հզոր ուժ ներկայացնող Էթիուսյան երկրները, և պարտությունն էլ դարձել էր հաշտության պայմանագիր կնքելու հիմնական պատճառ:

Սարգսյան տարեգրության KYKH-241 D հատվածում արքան խոսում է Կուլխայի և Էրիախիի հարավարևմտյան հարևան, Արաքսի աջ ափին տեղադրված Ուիտերուիսի երկրների գրավման մասին: Կուլխա արշավելու համար արքան նախ պետք է

¹⁰ 54-55 տողերը թարգմանել ենք ըստ ՀԺՊ քրեստոմատիայի (էջ 177): Տե՛ս YKH/ 127 ծան. 16, KYKH - ում Ն. Հարությունյանը չի թարգմանում:

հպատակեցներ Էրիախին և Իգանին, ինչպես տեսանք վերը, քանի որ Կուլխա գնացող կարևոր մայրուղիներն ու ճանապարհները անցնում էին պատմական Շիրակով ու Վանանդով: Սարգուրին պատմում է այդ տարում Ուխտերուխի կատարած երրորդ արշավանքի մասին, որի ժամանակ արքան երեք անգամ Ուխտերուխի երեք տարբեր վայրերում բախվել էր երկրի երեք մարզերի կառավարիչներին (18-23): Հաղթանակից հետո արքան Ուխտերուխի կառավարիչ է նշանակում (31-32)¹¹ և Ուխտերուխի կենտրոն Ուրայանի քաղաքում հիմնադրում է ամրոց, տեղադրում կայագոր (28-30): Ուխտերուխի ռազմավարական դիրքը խոսում է այն մասին, որ այս ամրությունն ու կայագորը այստեղ թողնվել էին ոչ միայն այս երկիրը, այլև պարբերաբար ապստամբող հյուսիսային ազգագավառները Վանի թագավորության կազմում պահելու համար:

Սարգուրյան տարեգրությունում Էրիախի երկրի մասին հաջորդ հիշատակությունը սեպագրի KYKH241-E հատվածի 19-30 տողերում է: Փուլուաղի կատարած արշավանքից հետո Սարգուրին, դարձյալ այդ տարում երրորդ անգամ, արշավում է Էրիախի երկիր, նվաճում է երկիրը, քաղաքներն այրում և ավերում, երկիրը թալանում, տղամարդկանց և կանանց գերեվարում Բիայնիլի: Այս հատվածի կարևոր տեղեկություններից մեկն այն է, որ Սարգուրին այս արշավանքի ժամանակ Էրիախիում կառուցում է ամրոցներ և երկիրը վերջնականորեն միացնում Վանի թագավորությանը (23-24): Սարգուրյան տարեգրության KYKH241 E 25-30 տողերում Սարգուրին բերում է Փուլուաղիից և Էրիախիից գերեվարվածների հանրագումարը՝ 6436 պատանի, 15553 կին, ընդամենը 21989 մարդ, ոմանց արքան սպանել էր, ոմանց գերեվարել: 31-33 տողերում բերված է նաև հափշտակված անասունների հանրագումարը: Այս արշավանքները արքան կազմակերպել էր մեկ տարում:

Սարգուրյան տարեգրության KYKH-241 F հատվածի հռչակագրից (4-6 տողեր) պարզ է դառնում, որ Էթիունի երկիր կատարած արշավանքից հետո Էթիունի երկրի շնորհիվ արքային հաջողվել էր ենթարկեցնել Կուրիանի երկրի հարևանությամբ գտնվող Էրիախի երկիրը, որից հետո արքան արշավել էր նույն ուղղության վրա գտնվող Իգանի երկիրը: Որոշ պատմաբանների կարծիքով՝ այս դեպքում Էթիունին օգնել էր Վանի արքային՝ հպատակեցնելու Էրիախի երկիրը¹²:

Ըստ այս հատվածի՝ Իգանին տեղադրվում է Էրիախիից հյուսիս-արևմուտք: Ամենակարևորը Էրիախի երկրի դաշնակցի հզորության մասին վկայող 35 ամրոցները ավերելու և 200 քաղաքներ այրելու, մարդ, կին այստեղից Բիայնիլի գերելու փաստն է, որ արձանագրում է Սարգուրին (6-10 տողեր): 7-րդ տողից իմանում ենք Էրիախիի հզոր դաշնակցի Իգանի երկրի արքայի անունը՝ Կապուրե-Կապուրինի: Ապա արքան խոսում է այն մասին (11-13 տողեր), որ նույն ճանապարհով ուղղվել է Բուզունիա երկիրը և դարձյալ ավերել ամրոցներն ու այրել քաղաքները. նա հիշատակում է Բուզունիա երկրի Ալկանիա և Ծուդալա քաղաքները: Հետ դառնալու ժամանակ Սարգուրին արշավել էր Էրիախի, որտեղ այրել էր քաղաքները, գերեվարել տղամարդկանց և կանանց,

¹¹ KYKH/241 ծան. 18:

¹² KYKH/241, F, ծան. 21:

իսկ այնտեղից վերադառնալով՝ արշավել էր Իշթելուանի, Կադիաինի, Աբունի և Աբիլիանիսի երկրները (14-15):

Ինչ վերաբերում է Իշթելուանի և Կադիաինի երկրների տեղադրությանը, ապա Ն. Հարությունյանը դրանք տեղադրում է Էրիախից հարավ-արևմուտք, Աբիլիանից և Աբունից արևելք և հյուսիս-արևելք: Սակայն հենվելով F հատվածի 13 տողի վրա, որտեղ արքան ասում է, որ հետ է դարձել և նոր արշավել Իշթելուանի ու Կադիաինի երկրներ, կարելի է ենթադրել, որ արշավանքի ուղղությունը ոչ թե հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք էր, այլ հակառակը: Այդ դեպքում ճիշտ կլինի Իշթելուանի և Կադիաինի երկրները Էրիախից հարավ-արևելք տեղադրել¹³: Այստեղից արքան նախ կարշավեր Աբունի, ապա Աբիլիանի, ինչ հերթականությամբ էլ գրված է տարեգրության 14-15 տողերում, հակառակ դեպքում նա պիտի արշավեր Աբիլիանի, ապա Աբունի, ինչը չի համապատասխանում արքայի հայտնած երկրների հերթականությանը, իսկ մենք տարեգրության մյուս հատվածներից իմանում ենք, որ արքան Աբունի է հասել՝ նախ գրավելով Աբիլիանիսին: Իշթելուանի, Կադիաինի, Աբունի և Աբիլիանիսի արշավելուց հետո Աբիլիանիսի երկրում Սարգսյանի գործը հանգստանում և նախապատրաստվում է նոր, երկար արշավանքի դեպի հյուսիս-արևելք: Այս երկրում գործի հանգստանալու փաստը խոսում է այն մասին, որ այս չորս երկրներն էլ վերջնականորեն հպատակվել են Սարգսյանին՝ դառնալով այն կարևոր հենակետեր, որտեղից արքան կազմակերպում էր իր հեռավոր արշավանքներից մեկը դեպի Սևանա լճի ավազան՝ Վելիքունիսի (Վելիքունի) երկիր: Արքան այս ամենը նաև փաստագրում է 15-16 տողերում: Ըստ Ն. Հարությունյանի թարգմանության՝ նա պատմում է գործը շրջելու՝ հանգստացնելու մասին՝ շեշտելով այն հանգամանքը, որ կառավարիչներից որևէ մեկը չէր գորակոչվել:

Եթե հիմք ընդունենք ՀԺՊ քրեստոմատիայի քիչ տարբերվող թարգմանությունը՝ «Ես զինվորներին չհանձնեցի ոչ մեկին: Նախկին գավառապետը ապստամբած էր...»¹⁴, ապա կարելի է ենթադրել, որ արքան ինքն է գլխավորել գործերը Աբիլիանիսի գավառապետի խռովության պատճառով, իսկ Վելիքունի կատարած արշավանքի հաջողությունը փաստում է նաև Աբիլիանիսի նախկին գավառապետի անհաջող խռովության մասին: Այնուամենայնիվ Սարգսյան տարեգրության այս հատվածից կարելի է դատել, որ այս տարածքները, արդեն երկար ժամանակ լինելով Վանի թագավորության կազմում, ներկայանում և ընկալվում էին որպես թագավորության բաղադրամասեր՝ գավառներ՝ Վանի արքաների կողմից նշանակված փոխարքաներով, գավառապետներով և կառավարիչներով: Բոլորովին այլ է իրադրությունը այս գավառներից հյուսիս ընկած Էրիախի և Իգանի երկրներում, որոնց մասին խոսելիս Սարգսյանը հիշատակում է այս երկրների արքաներին: 16-28 տողերում Սարգսյանը պատմում է Վելիքունի կատարած արշավանքի մասին, որի ընթացքում արքան կռվում գրավել էր 22 ամրոց, ավերել, քաղաքներն այրել, երկիրը միացրել իր երկրին: Սարգսյանը F հատվածի 29-31 տողերում բերում է մեկ տարում կատարված այս մեծ արշավանքի ընթացքում

¹³ Հնայական Ս., Շիրակը սեպագիր աղբյուրներում // «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը»...2007, էջ 60:

¹⁴ ՀԺՊ քրեստոմատիա, էջ 180:

թալանված անասնաբանակի և գերեվարվածների հանրագումարը՝ 10000 պատանի, 4600 տղամարդ, 23200 կին, ընդամենը՝ 37800 մարդ: Արքան ոմանց սպանել էր, ոմանց ողջ տարել, քշել էր 3500 ձի, 40353 խոշոր եղջերավոր անասուն, 214700 ոչխար¹⁵: Սարդուրին սույն մեծագործությունները մեկ տարում էր կատարել:

Եզրահանգում. Այսպիսով մինչև Ք. ա. VIII դ. վերջին տարիները Ուրարտական պետության շատ ծայրագավառներ, մասնավորապես և Էթիունյան իշխանությունները (բացի Վազայից), հարկատու լինելով Վանի արքաներին, հակադիր էին նրանց¹⁶: Սարդուրի II-ը (Ք.ա. 763-735 թթ.) դեպի Ուդուրի Էթիունի արշավում է երկու, իսկ Էրիախի՝ ութ անգամ: Սա նշանակում է, որ վերջինս բավականին հզոր և ինքնուրույն կազմավորում էր, և Սարդուրի II-ը մեծ ջանքեր գործադրեց այն Վանի թագավորության կազմում պահելու համար:

Այս գործընթացը շարունակեց նաև Սարդուրի II-ի հաջորդ Ռուսա I-ը: Այս հավանարտության վերջին իրադարձություններից մեկն է Ռուսա I-ի (Ք.ա. 735-714 թթ.) դեմ 730-ական թթ. բարձրացված ապստամբությունը, որին մասնակցում էին նաև Էրիախի (Էրիանի) և Կուրիանիի (Կուրիանի) արքաները: Այս երկրները, ինչպես հայտնի է, տեղադրվում են Շիրակում: Վճռական ճակատամարտը տեղի է ունենում Սևանա լճի հարավային ափերի մոտ: Էթիունյան իշխանները պարտություն են կրում: Էրիախի և Կուրիանին, ինչպես վկայում է Սարգոն II-ին ուղղված Աշուրիսուայի զեկույցը, կրկին ընդունում են Վանի արքաների գերիշխանությունը¹⁷:

ЛЕТОПИСЬ САРДУРИ О СТРАНЕ ЭРИАХИ

Авагян И.Э.

Ключевые слова: *Гандзадур, летопись Сардури, страна Ериахи, церковь Св. Погоса в Ване, клинописные надписи.*

В статье представлены и изучены те урартские клинописные тексты, которые содержат информацию о стране Эриахи и сопредельных территориях. В хронологическом порядке представлены и изучены отрывки летописи Сардури II (Хазине-Капуси) и дубликаты летописи - надписи на двух камнях, найденных в Ване, в церкви Сурб Погос. Из хроники выясняем, что Сардури организовал восемь походов в страну Эриахи, что в этой стране правила династия и что здесь царь Биайнили разграбил 350 амбаров, которые строили отец и дед правителя Эриахи.

¹⁵ St 'u **Արությունյան Н.** Земледелие и скотоводство Урарту, Ереван.,-1964, էջ 180:

¹⁶ **Հմայակյան Ս.**, Հոռոմի բերդաբաղաբը և Ուրարտուի պատմության հետ առնչվող որոշ հարցեր // «Շիրակի պատմա-մշակութային ժառանգությունը»...IV, Գյումրի, 2000, էջեր 8-9:

¹⁷ **Շրեմյան Ս.**, Կիմերական ու սկյութական ցեղերի արշավանքները և Ուրարտուի ու Ասորեստանի պայքարը քոչվորների դեմ // Պատմա-բանասիրական հանդես, 2, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1968, էջ 91:

THE SARDURI CHRONICLE ABOUT THE LAND OF ERIAKHI

Avagyan I. E.

Key words: *Gandzadur, Sarduri Chronicle, the land of Eriakhi, St. Paul's Church in Van, cuneiform inscriptions.*

The article presents the Urartu cuneiform texts which contain information about the Land of Eriakhi and adjacent territories. There are presented and studied excerpts from the chronicles of Sarduri II (Khazine-Kapusi) and duplicates of the chronicles - inscriptions on two stones found in Van, in the church of St. Paul. From the chronicles we find out that Sarduri organized eight trips to the country of Eriahi. The dynasty has the ruled in this country and that here King Biaynili has plundered 350 barns that were built by the father and grandfather of Eriahi's ruler.

Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. Ավագյան Ի., Պատմական Շիրակը սկզբնաղբյուրներում, Գյումրի, 2015:
2. Երեմյան Ս., Կիմերական ու սկյութական ցեղերի արշավանքները և Ուրարտուի ու Ասորեստանի պայքարը քոչվորների դեմ, Պատմա-բանասիրական հանդես, 2, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1968, 89-116 էջեր:
3. Հայկական Սովետական Հանրագիտարան, Երևան, 1974-1987, հ. 8, Երևան, 1982:
4. Հմայակյան Ս., Շիրակը Լուշա-Կատարգա-Վիտերուիսե դաշնակցության կազմում // «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը» միջազգային գիտաժողով, I, Գյումրի, 1994, 21-23 էջեր:
5. Հմայակյան Ս., Էրիախեն՝ աստվածապետություն // «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը» միջազգային գիտաժողով, 2, Գյումրի, 1996:
6. Հմայակյան Ս., Հռոմի բերդաքաղաքը և Ուրարտուի պատմության հետ առնչվող որոշ հարցեր // «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը» միջազգային գիտաժողով, 4, Գյումրի, ԳԱԱ ՇՀՀ կենտրոն, 2000:
7. Հմայակյան Ս., Շիրակը սեպագիր աղբյուրներում // «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը» միջազգային գիտաժողովի նյութեր, 7, Գյումրի, ԳԱԱ ՇՀՀ կենտրոն, 2007, 54-60 էջեր:
8. Հմայակյան Ս., Ուրարտուի ոսկին, «Հին Հայաստանի ոսկին (մ.թ.ա. III հազ.-մ.թ. XIV դ.)», Երևան, 2007, 151-185 էջեր:
9. Հովհաննիսյան Պ., Մովսիսյան Ա., Հայ ժողովրդի պատմության (ՀԺՊ) քրեստոմատիա, «Վանի թագավորության սեպագիր աղբյուրները Հայկական լեռնաշխարհի և հարևան պետությունների մասին» զլուխ, Երևան, 2007, հ. I
10. Պետրոսյան Ս., Հացագզիների մշակության և պաշտամունքի արտացոլումը Շարայի ավանդազրույցում // Պատմաբանասիրական հանդես, 3, Երևան, 1981, 187-204 էջեր:
11. Պետրոսյան Ս., «Շիրակայ ամբարք»-ի շուրջ // Լրաբեր հասարակական գիտությունների, 8, Երևան, 1982, 73-79 էջեր:
12. Փիլիպոսյան Ա., Հայկական Շարան և հինարևելյան զուգահեռները // «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը» միջազգային գիտաժողով, Գյումրի, ԳԱԱ ՇՀՀ կենտրոն, 5, Գյումրի, 2002: .

13. Арутюнян Н. Земледелие и скотоводство Урарту. Ереван.-1964.
14. Арутюнян Н. Корпус урартских клинообразных надписей (КУКН). Ереван. -2001.
15. Дьяконов И. Ассиро-вавилонские источники по истории Урарту (АВИИУ). Предисловие, раздел I-III, IV // Вестник Древней истории (ВДИ), 2-3. М. -1951.
16. Дьяконов И. Урартские письма и документы (УПД). М.-Л. -1963.
17. Меликишвили Г. Урартские клинообразные надписи (УКН). М. -1960.
18. Пиотровский Б. Ванское царство (Урарту). М. -1959.
19. Церетели Г. Урартские памятники музея Грузии. Тбилиси. -1939.
20. Lanfranchi G., Parpola S. The correspondence of Sargon II, Part II, Letters from the Northern and Northeastern provinces. Helsinki university press. -1990.
21. Salvini M., Corpus dei testi Urartei (CTU I), volume I, Le iscrizioni su Pietra e Rocca I testi. Documenta Asiana, VIII, Volume primo, CNR, Istituto di studi Sulle civiltà dell' Egeo e del vicino Oriene, Roma, -2008, Corpus dei testi Urartei (CTU IV), volume IV, Iscrizioni su Bronzi, Argilla e Altri supporti nuove Iscrizioni su Pietra Paleografia generale, Documenta Asiana, VIII, Volume quarto, CNR, Istituto di studi Sulle civiltà dell' Egeo e del vicino Oriene Roma. -2012.

*Ընդունվել է՝ 16. 09. 2021
Գրախոսվել է՝ 22. 10. 2021
Հանձնվել է տպ.՝ 15. 11. 2021*

Տեղեկություններ հեղինակի մասին

Ինգա ԱՎԱԳՅԱՆ՝ պատմական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտաշխատող,
Գյումրու «Կուսմայրի» պատմամշակութային արգելոց-թանգարանի տնօրեն,
Էլ. հասցե՝ inga.avagyan.76@mail.ru

ՀՏԴ՝ 902/908

DOI: 10.52971/18294316-2021.3-15

**ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԵՆՔԵՐԻ ԵՎ ԶԻՆԱՏԵՍԱԿՆԵՐԻ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

(նախնական ակնարկ)

Արթուր Հովհաննիսյան

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

Բանալի բառեր՝ Հին Հայաստան, զենք, զինատեսակ, արտեֆակտ, նյութական մշակույթ, հնագիտություն, խորհրդային, նախախորհրդային, հետխորհրդային:

Հին Հայաստանի նյութական մշակույթը ներկայացնող հուշարձաններից բազմաթիվ են տարբեր զինատեսակների փաստագրման դեպքերը, և պատմամշակութային կապեր մատնանշող բոլոր զինատեսակների քննարկումն անկասկած պահանջում է խոր ու համակողմանի ուսումնասիրությունների իրականացում: Սույն հաղորդման մեջ հանձնառել ենք ներկայացնել զինատեսակների վերաբերյալ ուսումնասիրություններ՝ դրանք ժամանակագրորեն բաժանելով երեք փուլերի՝ նախախորհրդային, խորհրդային և հետխորհրդային շրջանների: Աշխատանքում նաև փորձ է արվել ներկայացնելու նյութերի ուսումնասիրման հարցում տարբեր հետազոտողների մեթոդաբանությունը և բացահայտելու առաջադրված խնդիրների ընդհանրություններն ու տարբերությունները:

Նախաբան. Հին Հայաստանի նյութական մշակույթի ուսումնասիրությունը սկսվել է դեռևս 19-րդ դարի կեսերից: Հայկական լեռնաշխարհը մշտապես եղել է ռուս և եվրոպացի հնագետների հետաքրքրությունների կիզակետում: Մակայն, ինչպես իրավափորձ են նշում է Գ. Արեշյանը, նախախորհրդային շրջանի ուսումնասիրությունները իրենց մեթոդաբանությամբ և արդյունքով խստիվ տարբերվում էին: Նախախորհրդային շրջանում հիմնականում պեղվել են վաղերկաթիդարի և ուշբրոնզիդարի դամբաններ,

որոնց հարուստ գտածոները պեղողների կարծիքով կարող էին լույս սփռել Հին աշխարհի մետաղագործական ակունքների վրա¹: Այս շրջանում Հայաստանի տարածքում ուսումնասիրություններ են կատարել Ֆ. Բայերնը, Ժ. դը Մորգանը, Ա. Իվանովսկին: Վերջինս էլ իր աշխատություններում ներկայացրել է նաև Հայաստանի տարածքից հայտնաբերված զինատեսակները (գուրգեր, դաշույններ և այլն), սակայն նրա աշխատությունները մասնագիտական շրջանակներում մեծ քննադատության էին արժանանում, քանի որ նրա ուսումնասիրման մեթոդները հիմնված էին միայն թվային տվյալների վրա, իսկ պատմական և մարդաբանական տվյալները հեղինակը շատ հաճախ անտեսում էր²: Ըստ Գ. Արեշյանի՝ նախախորհրդային Հայաստանում հայագգի հնագետների կատարած ուսումնասիրությունները և դրանց մեթոդները նույնպես ճշգրիտ չէին: Որպես դրա հիմնավորում՝ նա հիշատակում է Ե. Լալայանի՝ Շրեշ-բլուրում կատարած վաղբրոնզիդարյան բնակավայրի պեղումները, որը նա ընկալել է որպես նոր քարիդարի դամբարանադաշտ³: Սակայն ճշմարտության դեմ չմեղանչելու համար հարկ է նշել, որ նախախորհրդային շրջանում ուսումնասիրություններ կատարած շատ այլ հնագետների արդյունքներից՝ Ն. Սառի պեղումների արդյունքները առաձևանում էին: Դրանք կատարված էին պատմագիտական լայնամասշտաբ ուսումնասիրությունների հիման վրա, որոնցով Մառը փորձում էր բացահայտել Կովկասի ժողովուրդների մշակութային և պատմական օրինաչափությունների էությունը⁴:

Ընդհանուր առմամբ նախախորհրդային տարիների հնագիտության մասին կարելի է ասել, որ այդ տարիների բնորոշ գիծը աշխատանքների իրագործումն էր ոչ մասնագետների կողմից. նրանց ուշադրությունը բևեռված էր նյութի հայտնաբերման ու ցուցադրման վրա: Հայտնաբերված հսկայական նյութի հետագա ուսումնասիրության անհրաժեշտությունը և գիտական մեկնաբանման հարցերին շատ հաճախ ուշադրություն չէր դարձվում⁵:

Ի տարբերություն նախախորհրդային հնագիտության՝ խորհրդային հնագիտությունը կարևորություն տվեց պատմագիտական խնդիրների լուսաբանմանը: 1920-ականներից սկսած շատ հուշարձաններում սկսվեցին իրականացվել սիստեմատիկ պեղումներ⁶: Այդ տարիների ականավոր հնագետներից էին Ե. Բայբուրդյանը, Բ Կուֆտինը, Բ. Պյատրովսկին: Վերջինս իր "Археология Закавказья" գրքում ներկայացնում է Կովկասի տարբեր դամբանադաշտերից (Լալչիկ, Շամխոր և այլն) հայտնաբերված զինատեսակները և պատմահամեմատական մեթոդով դրանց հետ բաղդատում Հայաստանի տարածքից (Շենգավիթ, Կարմիր բլուր և այլն) հայտնաբերված զենքերը՝ դրանք ենթարկելով բազմակողմանի ուսումնասիրության՝ պարզելու հնագույն զենքերի յուրահատկությունները: Հեղինակն այս աշխատության մեջ կատարում է կարևոր վերլուծու-

¹ http://www.ysu.am/files/10G_Areshyan.pdf (25.02.2021թ.)

² **Ивановский А. А.** По Закавказью. М. -1911. сс. 96-98.

³ **Լալայան Ե.**, Դամբարանների պեղումները Խորհրդային Հայաստանում, Երևան, էջեր 61-62:

⁴ **Март Н. Я.** К вопросу о задачах арменоведения (Избранные работы). СПб. -1899. с. 18.

⁵ **Խնկիկյան Օ.Ս.**, Հայաստանի հնագիտությունը, Երևան, էջ 10:

⁶ **Եսայան Ս.Ա.**, Հայաստանի հնագիտությունը, Երևան, 1992, էջ 9:

թյուններ՝ հիմնված հնագիտական աղբյուրների վրա: Նա նշում է, որ սկսած վաղ բրոնզ-զիդարից՝ Հայաստանի տարածքում ավելանում է անասնապահության ծավալները, ինչն իր հերթին նպաստում է մեծ ցեղերի իշխող դիրքի ամրապնդմանը: Վերջինս էլ իր հերթին հանգեցնում է ցեղախմբերի միջև բախումների ու հակամարտությունների թվի անընդհատ աճին և դրանով պայմանավորված՝ զենքի կիրառման ծավալների ընդլայնմանը⁷: Մեծ տեղ հատկացնելով գրավոր աղբյուրներին՝ աշխատության հեղինակը դրանց հաղորդած գիտական տեղեկատվությունը համադրում է գտածո նյութերին և առաջ քաշում նոր վարկածներ: Նրա ուսումնասիրություններում մեծ տեղ են զբաղեցնում Ուրարտուն և Արգիշտիինիլի պեղումները⁸: Կարելի է ասել, որ էրեբունիի պեղումները ձևավորեցին նոր հնագիտական դպրոց, որտեղից շատ անվանի հնագետներ ասպարեզ եկան՝ Հ. Մարտիրոսյան, Ս. Եսայան, Գ. Արեշյան և ուրիշներ:

Զինատեսակների մասին ուսումնասիրություններ է կատարել նաև Հ. Մարտիրոսյանն իր "Армения в эпоху бронзы и раннего железа" գրքում⁹: Հ. Մարտիրոսյանն առաջինն է խոսել դեռևս պղնձի-քարիդարում սառը կոման եղանակով զանազան մետաղյա իրերի, այդ թվում և զենքերի¹⁰ պատրաստման մասին: Բացահայտելով Հայկական լեռնաշխարհի մետաղամշակման ակունքները՝ նա հանգամանալի ուսումնասիրության է ենթարկում նյութական մշակույթի տարրերը՝ սկսած վաղբրոնզիդարից մինչև վաղերկաթիդար: Վաղբրոնզիդարի նյութական մշակույթի առանձնահատկությունները, մասնավորապես՝ զենքերի կատարելագործումն ու լայնորեն կիրառումը վկայաբերելիս Մարտիրոսյանը այն պայմանավորում է 3 հանգամանքով.

ա. ուշբրոնզիդարից սկսած՝ խեցեղենի և զենքերի պատրաստման եղանակների արդիականացմամբ,

բ. հայկական լեռնաշխարհում մետաղամշակման կտրուկ աճով, ինչի մասին վկայում է մետաղաձուլական նոր խոշոր կենտրոնների ստեղծումը,

գ. զարագացած առևտրաշրջանառությամբ¹¹:

1966 թ. Ս. Եսայանը լույս է ընծայում իր "Оружие и военное дело древней Армении (III-I тыс. до н. э.)" աշխատությունը¹², որում պատմահամեմատական մեթոդով ներկայացնում է տարբեր հեղինակների կողմից մինչև 60-ական թվականները պեղումներով հայտնաբերված զենքերն ու զինատեսակները՝ դասակարգելով դրանք ըստ տիպերի, տեսակների և ենթատեսակների, անդրադառնում է զինատեսակների առաջացման պատմությանը և դրանց ուսումնասիրության խնդիրներին: Նրա կարծիքով, զենքերը երևան եկան խոշոր ցեղախմբերի միջև դասակարգային բախումների ժամանակ և

⁷ Пиотровский Б. Б. Археология Закавказья с древнейших времен до I тысячелетия до н. э., Л. -1949. сс. 53-55.

⁸ <http://historic.ru/books/item/f00/s00/z0000123/st012.shtml> (15.04.2021).

⁹ Мартиросян А. А. Армения в эпоху бронзы и раннего железа. Ереван. -1964 с. 114.

¹⁰ Նույն տեղում, էջ 25:

¹¹ Նույն տեղում, էջ 184:

¹² Есян С. А. Оружие и военное дело древней Армении. Ереван. -1966.

հետզհետե սկսեցին ավելի ու ավելի շատ կիրառվել ու զարգանալ¹³: Աշխատանքում ներկայացվում են Հայկական լեռնաշխարհում պեղված զինատեսակներն ու դրանց օգտագործման եղանակները՝ էնեոլիթյան շրջանից մինչև ուրարտական ժամանակաշրջանի վերջը: Տրված է զենքի բոլոր տեսակների տիպաբանությունը, հստակեցված են դրանց ծագման, հարևան երկրներում դրանց առկայության և ժամանակագրության հարցերը: Որոշ զինատեսակների համար (թուր, սաղավարտ, վահան և այլն) նոր տվյալների հիման վրա հեղինակը կատարել է նաև նորովի դասակարգումներ:

Դիտարկվել են Հայկական լեռնաշխարհի ցեղերի ռազմական գործերը, ուրարտական պետության գործերի կազմն ու տեսակները, փոխադրամիջոցների դերը ռազմական գործում, կատարվել է նաև զինատեսակների դասակարգում ըստ տարածաշրջանների, առանձնացվել են այն զինատեսակները, որոնք ներմուծվել են հեռավոր վայրերից և բնորոշ գծեր չունեն տարածաշրջանում գոյություն ունեցող հարատիպ զենքերի հետ, ինչպես, օրինակ՝ սրածայր թերթը, որ ներմուծվել են, սակայն Հայաստանում մեծ տարածում չեն գտել: Մ. Եսայանը նաև ներկայացրել է զենքերի հետ հայտնաբերված ուղեկցող գույքը, որը նա կարևորում է զենքերի թվագրությունները հստակեցնելու գործում¹⁴:

Նախախորհրդային և խորհրդային շրջաններում հնագիտական հետազոտությունների իրականացման համեմատական քննությունը թույլ է տալիս վստահաբար արձանագրել դրանց գիտական մետեցումների ու ուսումնասիրման եղանակների տարբերությունը: Եթե առաջինի պարագայում չկար հստակ մեթոդաբանություն, և ուսումնասիրությունները կատարվում էին շատ դեպքերում սիրողական մակարդակով, ապա խորհրդային շրջանի հնագիտությունը մեծ ավանդ բերեց Հայաստանի հնագիտության զարգացման գործում:

Հետխորհրդային շրջանը իր մեթոդաբանական ձևակերպումներով և առաջադրած խնդիրներով խորհրդային շրջանի հնագիտության հետագա զարգացումն էր: Հետխորհրդային շրջանի ուսումնասիրություններից հարկ է նշել Մ. Գորելիկի աշխատությունը՝ "Оружие Древнего Востока"¹⁵, որտեղ ներկայացված է հնագույն զենքը Հին Արևելքում՝ Եգիպտոսից մինչև Չինաստան: Ներկայացվում են նաև Եվրասիայի տափաստանային շրջանների ժողովուրդների հարձակողական և պաշտպանական զենքերի վերաբերյալ ուսումնասիրությունները (մ.թ.ա. IV հազարամյակից մինչև մ.թ.ա. IV դար): Հետազոտությունը մեծ մասամբ հիմնված է հնագիտական հարուստ գտածո նյութի վրա, ուսումնասիրության մեջ ներգրավված են նաև գրավոր աղբյուրներ և հեղինակի կողմից արված ազգագրական գուգահեռներ¹⁶: Հեղինակը զենքերը դասակարգում է ըստ իրենց գործառույթի, արտադրության տեխնոլոգիայի, նշանակության և այլն: Հստակ սահմանվել են զենքերի հարձակողական և պաշտպանողական տիպերը: Մ.

¹³ **Есаян С. А.** Оружие и военное дело древней Армении. Ереван. -1966. с. 5:

¹⁴ Նույն տեղում, էջեր 78-80:

¹⁵ **Горелик М. В.** Оружие Древнего Востока. СПб. - 2003.

¹⁶ **Горелик М. В.** Оружие Древнего Востока. СПб. - 2003. с.174.

Գորելիկն իր աշխատության մեջ բազմիցս օգտագործել է զենքերի սկեպտրալ հետազոտությունների տվյալներ, ինչը, ցավոք, գրեթե չի կիրառվել մեզանում:

Դեռևս նախորդ դարի կեսերից սկսած՝ մասնագիտական գրականության մեջ դաստակավոր դաշույններին տրվել էր «առաջավորասիական» անվանումը¹⁷: Ի լրումն մասնագիտական գրականության մեջ շրջանառվող տեսակետի՝ Աշ. Փիլիպոսյանը իր աշխատության մեջ¹⁸ վերաձևակերպում է վերոհիշյալ եզրույթը՝ փաստարկելով վերջին տարիների պեղումների արդյունքները, որոնք ապացուցում են, որ «առաջավորասիական» կոչվող դաշույնները չեն սահմանափակվում միայն Առաջավոր Ասիայի տարածքով, այլև աշխարհագրական ավելի լայն տարածք են ընդգրկում¹⁹: Վերոնշյալ աշխատանքը ծավալուն ուսումնասիրություն է՝ առարկաների ծագման, կիրառման և այլ օրինաչափությունների վերաբերյալ մասնագիտական լրջագույն եզրահանգումներով²⁰:

Եզրահանգում. Հայաստանում հայտնաբերված զենքերի և զինատեսակների շուրջ ուսումնասիրությունները սկիզբ են առել դեռ նախախորհրդային շրջանում և զարգացում ապրել հատկապես խորհրդային տարիներին: Վերջին տասնամյակներին Հայաստանի տարբեր հուշարձաններից հայտնաբերված զինատեսակների մասին մասնագիտական գրականության մեջ քիչ է խոսվել: Գիտական վերջին՝ համահավաք ուսումնասիրությունը, որտեղ ներկայացված են Հին Հայաստանի տարածքից գտնված բոլոր զինատեսակները, կատարվել է նախորդ դարի երկրորդ կեսին, իսկ այդ ժամանակից ի վեր բազմաթիվ հնագիտական արտեֆակտներ են երևան եկել, որոնք ունեն 1. ուսումնասիրման, 2. հանրահռչակման և 3. թանգարանացման կարիք: Եվ այս բացը լրացնելու մեծ անհրաժեշտություն կա այսօր:

ОБ ИЗУЧЕНИИ ВИДОВ ОРУЖИЯ ДРЕВНЕЙ АРМЕНИИ (предварительный просмотр)

Оганисян А.

Ключевые слова: *оружие, виды оружия, Древняя Армения, артефакт, объект, досоветский, советский, постсоветский.*

В работе представлены отрывки из профессиональной литературы, целью которой является раскрытие исследований, проводимых в области оружия и его типов в Армении. Статья также может служить каталогом. В результате исследования выяснилось, что в последние десятилетия оружие, найденное на различных памятниках Армении, практически не упоминалось в профессиональной литературе. Последнее научное комплексное исследование, в котором представлено все оружие, найденное на территории Древней Армении, было проведено во второй половине прошлого века, и с тех пор было обнаружено множество ар-

¹⁷ **Եսայն Ս. Ա.** Оружие и военное дело древней Армении. Ереван. -1966. с. 70.

¹⁸ **Փիլիպոսյան Ա.Ս.**, Հին Արևելքի շրջանակավոր դաստակով դաշույններն ու սրերը, Երևան, 1999, էջ 7:

¹⁹ Նույնը:

²⁰ Նույն տեղում, էջ 33:

хеологических артефактов, которые нуждаются в 1. исследовании, 2. популяризации и 3. в музеефикации. Эта работа является краеугольным камнем реализации трех вышеуказанных пунктов. Чтобы выполнить эту задачу, мы продолжим работать в этом направлении для решения поднятых нами проблем.

STUDY OF THE WEAPONS OF ANCIENT ARMENIA (preview)

Hovhannisyan A.

Key words: *Weapons, types of weapons, Ancient Armenia, artifact, pre-Soviet, Soviet, post-Soviet.*

The paper contains excerpts from professional literature with the aim of revealing researches carried out in the field of weapons and their types in Armenia. The article can also serve as a catalogue. The study found, that in recent decades, weapons found on various monuments in Armenia have been virtually non-existent there was little mention in professional literature.

The latest scientific complex study, which presents all weapons found at in the territory of ancient Armenia, was held in the second half of the last century. And since then, many archaeological artifacts have been discovered, which needed 1. study, 2. published and 3. In museumification. This work is the cornerstone of the implementation of the three above-mentioned items. To meet this challenge, we will continue to work in this direction to address the concerns we have raised problems.

Գ ր ա կ ա ն ո թ յ ո Ւ Ն

1. Լալայան Ե., Դամբարանների պեղումները Խորհրդային Հայաստանում, Երևան, 1936:
2. Եսայան Ս.Ս., Հայաստանի հնագիտությունը, Երևան, 1992:
3. Փիլիպոսյան Ա.Ս., Հին Արևելքի շրջանակավոր դաստակով դաշույններն ու սրերը, Երևան, 1999:
4. Խնկիկյան Օ. Ս, Հայաստանի հնագիտությունը, Երևան:
5. Ивановский А. А. По Закавказью. Москва. -1911.
6. Пиотровский Б. Б. Археология Закавказья с древнейших времен до I тысячелетия до н. э. Л. -1949.
7. Горелик М. В. Оружие Древнего Востока. СПб. -2003.
8. Есаян С. А. Оружие и военное дело древней Армении. Ереван. -1966.
9. Мартиросян А. А. Армения в эпоху бронзы и раннего железа. Ереван. -1964.
10. Марр Н. Я. К вопросу о задачах арменоведения (Избранные работы). СПб. -1899.
11. http://www.y-su.am/files/10G_Areshyan.pdf (25.02.2021թ):
12. <http://historic.ru/books/item/f00/s00/z0000123/st012.shtml> (15.04.2021):

Ընդունվել է՝ 20. 08. 2021

Գրախոսվել է՝ 22. 10. 2021

Հանձնվել է տպ.՝ 15. 11. 2021

Տեղեկություններ հեղինակի մասին

Արթուր ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ՝ ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական
հետազոտությունների կենտրոնի ասպիրանտ (հնագիտություն),
Էլ. Խաղցե՝ arthur.hovhannisyan333@gmail.com

ԼԵՌՆԱԿԵՐՏԻ ԲՐՈՆԶ-ԵՐԿԱԹԻԴԱՐՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ
ՄՈՂԵԼԱՎՈՐՈՒՄԸ

Բենիկ Վարդանյան

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

Լեռն Մկրտչյան

ՀՀ ԿԳՄՄՆ «Պատմամշակութային արժեքների պահպանման և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ

Բանալի բառեր՝ Հայաստան, Շիրակ, Լեռնակերտ, օդալուսանկարահանում, թվայնացում, եռադիմենսիոնալ մոդելավորում, քարտեզագրում, տվյալների շտեմարան, Բրոնզի դար, Երկաթի դար:

Արագած լեռան հյուսիսարևմտյան լանջերի բրոնզ-երկաթիդարյան հուշարձանների հետազոտության շրջանակներում 2019-2021 թթ. Լեռնակերտի երկու կիկլոպյան ամրոցների, բնակավայրերի դամբանադաշտերի և մեգալիթյան այլ հուշարձանների հնագիտական հետազոտություններին զուգահեռ կատարվել են թվայնացման, օդալուսանկարահանման, եռադիմենսիոնալ մոդելավորման և հուշարձանի փաստագրված հատվածի քարտեզագրման աշխատանքներ: Սույն հաղորդման մեջ ներկայացվում է Շիրակի Լեռնակերտի հնագիտական համալիրի օրինակով՝ հուշարձանի հետազոտության և փաստագրման մեթոդներն ու սպասվելիք արդյունքները անօդաչու սարքերի (այսուհետ՝ ԱՍ) տվյալների միջոցով, դրանց մեթոդաբանությունն ու առավելությունը:

Սույն մեթոդի կիրառումը պեղումներին զուգահեռ, իսկ երբեմն նաև առանց դրա, թույլ է տալիս վեր հանել ամրոցների կառուցողական մանրամասները, դամբանադաշտերի տեղադրման և կառուցապատման

օրինաչափությունները և զարգացման փուլերը, ուրվագծել հնագույն ճանապարհները, որոշել հուշարձանի սահմանները և այլ հարցեր:

Օդալուսանկարահանման և տվյալների մոդելավորման արդյունքում ստեղծվել է տվյալների շտեմարան, որը մեթոդական հիմք է ծառայում Արագածի հյուսիսարևմտյան լանջերի մյուս հուշարձանների հետագա ուսումնասիրության համար:

Նախաբան. Հնագիտական հուշարձանների ուսումնասիրության մեջ առանցքային դեր են խաղում նորագույն սարքերն ու տեխնոլոգիաները: Հնագիտական հուշարձանի ուսումնասիրությունը ենթադրում է նրա շերտագրության, կառուցվածքի և իրավիճակի գիտակցված փոփոխություն, և պատահական չէ, որ պեղումները երբեմն բնութագրվում են որպես «չկրկնվող փորձ» (“unrepeatable experiment”)¹: Խնդիր է առաջանում ուսումնասիրել հուշարձանն առանց պեղումների, ինչը կնպաստի հուշարձանների պահպանությանը: Այս պարագայում մեծ կարևորություն է ներկայացնում հուշարձանների թվային փաստագրումը, եռադիմենսիոնալ մոդելավորումն ու հետազոտությունը:

Լեռնակերտի դիրքը և ուսումնասիրության պատմությունը

Լեռնակերտի հնավայրի թվայնացման և մոդելավորման աշխատանքները սկսվել են 2019 թվականից և կրում են պարբերական բնույթ: Ընդհանուր առմամբ, հուշարձանի տարածքում թվայնացվել է մեծ տարածք՝ երկու ամրոցներ (Վերի Բերդ և Վարի Բերդ), դամբանադաշտեր, քարագիծ ուղիներ և այլն:

Թվայնացման աշխատանքները կատարվել են դաշտային հնագիտական աշխատանքներին զուգահեռ: ԱՄ-ով կատարվել է տարածքի օդալուսանկարահանում: Ստացված էլակետային լուսանկարներից պատրաստվել են հետազոտվող հուշարձանների օրտոֆոտոպլաններն ու բարձրությունների քարտեզները: Այս երկու տվյալների համադրությամբ պատրաստվել են դրանց թվային և եռաչափ մոդելները:

Յուրաքանչյուր հուշարձանի կամ տեղամասի համար համապատասխան սանդղակով կազմվել է բարձրությունների և տեղանքի ուրվագծերի քարտեզ՝ ¹մ հորիզոնականների բարձրությամբ և կտրվածքներ՝ համապատասխան երկարությամբ, կոորդինատներով ու բարձրությունով: Կազմվել են հետազոտվող տարածաշրջանի և ինդրո առարկա հնավայրերի երկչափ և եռաչափ քարտեզները:

2019-2021 թվականների արշավախմբի վեց պեղաշրջանների ընթացքում եռաչափ հետազոտվել, փաստագրվել և ուսումնասիրվել են երկու բրոնզիդարյան ամրոցներ (Վերի Բերդ և Վարի Բերդ), դրանց կից բնակավայրեր, ահռելի տարածքներ զբաղեցնող դամբանադաշտեր, մեգալիթյան բնույթի կառույցներ և այլ հուշարձաններ: Հետազոտության արդյունքում ձեռք բերված տվյալները մուտքագրվել են տվյալների շտեմարան:

Հուշարձանների թվայնացման մեթոդը

Օդային լուսանկարահանումները կատարվել են Inspaire 1v2 և Phantom 4 Pro ԱՄ-երի միջոցով: Յուրաքանչյուր տեղամասի համար նախօրոք պատրաստվում էր պո-

¹ Barker 1982, էջ12.

լիզոն՝ եռաչափ կարգավորումներով: Ելնելով զբաղեցրած տարածքից, ռելիեֆից՝ նկարահանումը կատարվում է տարբեր բարձրություններից. ամրոցները՝ 50-70 մ, իսկ դամբարանադաշտերը՝ 30-50 մ (նկ. 2-9): Յուրաքանչյուր օղակարահանումից հետո ստացված 50-70 էլակետային լուսանկարները հուշարձանի թվայնացման հիմնական աղբյուր են:

Օդալուսանկարահանումներից հետո, սվյալների համակարգչային մշակումով, էլակետային լուսանկարներից պատրաստվում են հուշարձանների օրտոֆոտոպլանները՝ կոորդինատային հիմքով (Geo Tif) և մակերեսների թվային մոդելը (DSM)՝ բազմաթիվ կոորդինատային և բարձրությունների կետայնությամբ: Բացի էլակետային լուսանկարների մշակումից, օրտոֆոտոպլանների և մակերեսների թվային մոդելների միջոցով՝ GIS համակարգում կազմվել են խնդրո առարկա հուշարձանների տեղահանույթները ուրվագծերով՝ 1 մ հորիզոնականների բարձրություններով քարտեզները՝ համապատասխան սանդղակով, և հուշարձանների կտրվածքը:

Հուշարձանների հավաստման, հետագա վերականգնումների, համակարգչային վերակազմությունների համար չափազանց կարևոր նշանակություն ունեն Լեռնակերտի բոլոր թվայնացված հուշարձանների և մշակութային լանդշաֆտների եռաչափ մոդելները:

Լեռնակերտի հնագիտական մեծ համալիրը Հայաստանի և տարածաշրջանի ամենախիտ և ամբողջական թվայնացված գոտիներից մեկն է, որի բաղադրատարրերը բրոնզ-երկաթիդարյան գրեթե բոլոր հուշարձանատեսակներն են՝ իրենց համապատասխան լանդշաֆտով: Առաջիկայում՝ մի քանի բաց մնացած տեղամասերի թվայնացումով, արդեն պատրաստ կլինի Լեռնակերտի ողջ մշակութային լանդշաֆտի եռաչափ քարտեզը, որը հնարավորություն կտա պեղումների և վերգետնյա հնագիտական ուսումնասիրության արդյունքների գուգորդումով կազմելու Լեռնակերտի հնամշակութային լանդշաֆտի թվային մոդելը՝ առանձին շերտերով:

Լեռնակերտի հուշարձանների մոդելավորումը

Լեռնակերտի բրոնզ-երկաթիդարյան հուշարձանների մեջ առանձնահատուկ տեղ են զբաղեցնում երկու ամրոցները, որոնք տեղակայված են բնական բարձր բլուրների գագաթներին և տարածվում են արհեստականորեն հարթեցված լանջերին: Երկու ամրոցներն ունեն մի շարք ընդհանրություններ, նմանություններ, որոնք արտահայտվում են ինչպես ճարտարապետության և դրա մանրամասների, այդպես էլ կենսատարածքի կազմակերպման և լանդշաֆտի օգտագործման սկզբունքների մեջ:

Ամրոցները

Լեռնակերտի երկու ամրոցները տեղադրված են Արագածի լանջերին՝ արևելք-արևմուտք ձգվող լեռնաբազուկներից առանձին, սակայն դրանց մերձակայքում՝ առանձին բնական ժայռոտ բլուրների վրա (Figure 1): Ամրոցների պաշտպանությունը կազմակերպված է բլուրների բնական հատկությունները հաշվի առնելով: Օրինակ՝ երկու ամրոցներում էլ բլուրների գագաթների արևմտյան հատվածներում, որտեղ բնաժայռը մերկացած է, դրանց կցվել են հիմնապարիսպներ:

Վարի և Վերի Բերդերի հիմնապարհսպները հարմարեցված են բլրի եզրերին, իսկ լանջերը (Վարի Բերդում արևելյան և հյուսիսային, Վերի Բերդում՝ հյուսիսարևելյան լանջերը) օգտագործվել են ամրացված կասկադային համակարգով (նկ. 2-4):

Ամրոցակիր երկու բլուրների լանջերն օգտագործվել են նաև որպես բնակավայր:

Վարի Բերդի տարածքը, ըստ վերգետնյա նյութի և պեդոմոնների, բնակեցված է եղել մի քանի փուլերով, որոնցից վաղագույնը վերաբերվում է մ.թ.ա. 3-րդ հազարամյակին: Բրոնզի դարի վաղ շրջափուլին վերաբերող շինությունների մնացորդներ հայտնաբերվել են բլուրի արևմտյան և հյուսիսային լանջերին և ստորոտին: Վաղ բրոնզիդարում այս բնակավայրը տարածվում է դեպի հյուսիս՝ հասնելով գյուղի հարավային և հարավարևմտյան եզրերին: Ամրոցի տարածքի բնակեցման հաջորդ փուլը վերաբերում է բրոնզի դարի ուշ շրջափուլին, ինչը վկայում են վերգետնյա խեցեղենը և արևմտյան լանջում վաղբրոնզիդարյան բնակատեղիի մեջ իջեցված ուշբրոնզիդարյան թաղումները: Շնորհիվ օդալուսանկարահանման և եռաչափ մոդելավորման՝ հնարավոր եղավ մոտավոր սահմաններով առանձնացնել վաղբրոնզիդարյան բնակավայրի սահմանները և հետևել վերգետնյա երևացող ճարտարապետական կառույցների ձևերին և դրանց փոփոխություններին (Figures 2-3):

Վարի Բերդի արևելյան լանջը նույնպես բնակեցված է եղել: Այս հատվածում նկատվում են տարատեսակ կառույցների մնացորդներ, որոնցից աչքի ընկնողը երրորդ հարթակից արևելք տեղորոշվող անվաճ կառույցն է: Դրա փաստագրումը հնարավոր եղավ միայն առաջարկվող մեթոդի կիրառման պարագայում (նկ. 2)²:

Վերի Բերդի բնակավայրը տեղորոշված է ամրոցի արևելյան և հյուսիսային լանջերում, որտեղ, ըստ երևույթին, ամրոցի անմատչելի հատվածն է, և պատահական չէ, որ ամրոց տանող մուտքն իր ճանապարհով անցնում է հենց հյուսիսային լանջին տեղակայված բնակավայրի միջով³: Բնակավայրում նկատելի են տարաձև և տարաչափ կառույցների մնացորդներ (նկ. 4):

Ամրոցանիստ բլուրը հարավարևմտյան կողմում աստիճանաբար ձուլվում է հարթավայրի հետ (ամրոցի բարձրությունը ծ.մ.՝ 2153մ, հարավարևմտյան լանջը՝ 2145մ, իսկ արևելյանը և հյուսիսայինը՝ համապատասխանաբար 2099 և 2117 մ), հետևաբար սա ամրոցի պաշտպանական համակարգի մեջ համարվել է ամենախոցելի հատվածը: Հիմնապարսպին զուգահեռ կառուցված պատերը, դրանցով ձևավորված անկանոն կառույցները, քարացրոնները ստեղծում են իրար կից համալիրների ցանց, որը նմանվում է պատնեշների համակարգի, որոնց նպատակը, կարծում ենք, հարձակվող ուժի թափը կոտրելն էր: Ամրոցի հարավարևմտյան լանջից է սկիզբ առնում իրար զուգահեռ պատերով կառուցված մի քարագիծ ուղի, որը արտերի քարհավաքների պատճառով տեղ-տեղ ընդհատվում է: Այս ճանապարհը, ըստ օդային լուսանկարների,

² Վարի Բերդի անվաճ կառույցի հնագիտական հետազոտություններն իրականացվել են 2021 թվականին:

³ Vardanyan et all, 2021, էջ 191.

պետք է միանար դամբանադաշտեր տանող և դրանք իրար կապող քարուղիների ցանցին (նկ.նկ. 4-5):

Դամբարանադաշտեր

Լեռնակերտի բրոնզ-երկաթիդարյան երկու ամրոցների շուրջ տարածվում են ընդարձակ դամբանադաշտեր: Թաղման կառույցների տեղաբաշխման վայրերը, ժամանակագրական տարբերությունները, կառուցողական ընդհանրությունները, պատաշարերով իրարից առանձնացված լինելու հանգամանքը հաշվի առնելով՝ դամբանադաշտում կատարվել են խմբավորումներ և առանձնացվել վեց խմբեր (I-VI cluster)⁴:

Լեռնակերտի Վերի Բերդի I դամբանախումբը տարածվում է ամրոցից արևելք՝ երկու փոքրիկ սեզոնային վտակների առաջացրած հրվանդանի վրա և լանջերին (նկ. 6-7): Հրվանդաններն առանձնացնող ձորակները եզրագծված են վերկանգուն (օրթոստատ) շարով՝ կառուցված փոքր և միջին չափերի անմշակ քարերից: Դամբաններն այս հատվածում կառուցված են բնաժայռի մերկացումների վրա, այսինքն՝ թաղման սրահները մասամբ կառուցված են դամբանի լիցքի մեջ (կրոմլեխների տրամագիծը՝ 7-15 մ, թմբերի բարձրությունը՝ 0.5-2.5մ):

Լեռնակերտում դամբանախցերը տարբեր կառուցվածք ունեն՝ հիմնահողային⁵, քարարկղային, սալարկղային և կեսհիմնահողային-կեսսալարկղային: Առաջին խմբին պատկանողները ուղղված են հյուսիս-հարավ (երբեմն՝ հս-արլ.-հվ-արմ.) և վերաբերում են ՈՒԲ դարին, իսկ երկրորդ և երրորդ տիպի դամբանախցերը ուղղված են դամբանադաշտի մի հատվածում հյուսիս-հարավ (վերաբերում են երկաթի դարին), մյուս հատվածում՝ արևելք-արևմուտք (վերաբերում են ուշ բրոնզի դարին և երկաթի վաղ շրջափուլին): Այսպիսով, դամբանախցերի կառուցվածքների տարբերությունները կրում են ժամանակագրական բնույթ:

Լեռնակերտի Վերի Բերդի III դամբանախումբը փաստագրվածներից առաջմ ամենաբարձրադիրն է (ծ. մ. 2182 մ): Դամբանների այս խումբը գտնվում է *Կասկեի Չալի* կոչված վայրում՝ դարավանդացված բնական ժայռի գագաթին, որը հյուսիսից և հարավից եզրագծում են 2-3 շար բարձրությամբ վերկանգուն քարուղիները, որոնք ձգվում են մոտ 700-800 մ: Քարուղիների միջև ընկած տարածքներում նկատելի են 8-15 մ տրամագծով, բարձր հողաթմբով դամբանաբլուրներ: Նշված վերկանգուն պատերը հրվանդանի արևմտյան ծայրում միանում են ճարտարապետական և կառուցվածքային բարդ մանրամասներով օժտված դամբանային կառույցի (նկ. 8-9):

Արևելք-արևմուտք ուղղված սալարկղային խուցը եզերվում է 21 մ տրամագծով (հյուսիս-հարավ) և 16 մ (արևելք-արևմուտք) շրջանով, որի վրա արևելյան կողմից անցնում է 1.2-1.6 մ բարձրություն ունեցող պատ: Դա կրոմլեխի առաջին շրջանն է: Երկրորդ շրջանը հատակագծում ստանում է բազմաթերթ ծաղկի տեսք (նկ. 8): Կրոմլեխի հարավային կողմում հենապատը երկշար է:


Հրվանդանի հարավային եզրին է կառուցված կլորացող անկյուններով, երկայնական առանցքով արևելք-արևմուտք ուղղված, ուղղանկյուն հատակագծով, 1.2-1.5

⁴ Vardanyan et al, 2021, էջեր 196-197.


⁵ Vardanyan et al, 2021, էջ 197.

մետր բարձրությամբ պատով մի շինություն, որի հարավային կողմը միաձուլված է ժայռին: Նմանատիպ կառույցներ առկա են Լեռնակերտի բոլոր դամբանախմբերում և, ըստ երևույթին, կապված են թաղման ծեսի դեռևս անհայտ մի դրսևորման հետ:


Եզրահանգում. Այսպիսով, Արագած լեռան հյուսիսարևմտյան բարձրադիր գոտում գտնվող Լեռնակերտի բրոնզ-երկաթիդարյան մշակութային լանդշաֆտը ներկայացված է համալիրներով՝ երկու ամբոցներ, իրենց շուրջ տարածվող արտաքին բնակատեղիներով, բացօդյա պաշտամունքային կառույցներով (հարթակավոր շինություն, մենաքարեր են), ջրաբաշխական համակարգերով, քայիներով և այլ մեգալիթյան բնույթի կառույցներով: Այս հուշարձանների հնագիտական պեղումներին զուգահեռ՝ կատարվել են օդալուսանկարահանումներ: Համակարգչային մոդելավորման միջոցով ստացված տվյալների հետազոտությունը հնարավորություն է ընձեռում հետևելու հնագույն կենսատարածքի ձևափոխությունների աստիճանաբար տեղի ունեցած ընթացքին ու դրսևորումներին:




Նկ. 1 Լեռնակերտի դիրքը և հուշարձանի թվայնացված հատվածները




Նկ. 2 Վարի Բերդի օրտոֆոտոպլանը




Նկ. 3 Վարի բերդի բարձրությունների քարտեզը, ուրվագծերը և կտրվածքը




Նկ. 4 Վերի բերդի օրտոֆոտոպլանը



Նկ. 5 Վերի Բերդի բարձրությունների քարտեզ, ուրվագծերը և կտրվածքը




Նկ. 6 Վերի Բերդի №1 դամբանախմբի օդառճոտայկան



Նկ. 7 Վերի Բերդի №1 դամբանախմբը, հանույթը, ուրվագծերը և կտրվածքը



Նկ. 8 Վերի Բերդի №3 դամբանախամբի կառույցի և ժայռային հարթակների օրտոֆոտոսպլան



Նկ. 9 Վերի Բերդի №3 դամբանախամբի և ժայռային հարթակների բարձրությունների քարտեզը, ուրվագծերը և կտրվածքը

МОДЕЛИРОВАНИЕ ПАМЯТНИКОВ ЛЕРНАКЕРТА БРОНЗОВОГО И ЖЕЛЕЗНОГО ВЕКОВ

Варданян Б. В., Мкртчян Л. А.

Ключевые слова: *Армения, Ширак, Лернакерт, дистанционное зондирование, аэрофотосъемка, оцифровка, 3D-моделирование, картография, база данных.*

Археологические исследования в Лернакерт (Ширакская область) были проведены в 2019-2021 гг. Комплекс состоит из двух циклопических крепостей, остатков поселений, некрополей и мегалитических памятников, расположенных на северо-западных склонах горы Арагац. Большинство памятников относятся к бронзовому и железному веку. Новые подходы, такие как оцифровка, аэрофотосъемка, 3D-моделирование и картографирование, являются неотъемлемой частью наших исследований.

Эти методы наряду с археологическими раскопками (иногда даже без них) позволяют выявить архитектурные модели крепостей, расположение и регулярность некрополей, фазы их развития, а также очертания древних путей и улиц, определить границы памятников. На основе аэрофотоснимков и моделирования данных была создана база данных, которая служит методическим примером для дальнейшего исследования склонов горы Арагац.

MODELLING OF BRONZE AND IRON AGE MONUMENTS AT LERNAKERT

Vardanyan B. V., Mkrtchyan L. A.

Key words: *Armenia, Shirak, Lernakert, remote sensing, aerial photography, digitalization, 3D-modelling, mapping, database.*

Archaeological investigations in Lernakert (Shirak province) were carried out in years 2019-2021. The site consists of two cyclopean fortresses, remains of settlements, necropolises and megalithic monuments situated on the northwestern slopes of the mount Aragats. Most of the monuments date back to the Bronze and Iron age. New approaches, such as digitalization, aerial photography, 3D-modelling and mapping are an integral part of our research.

These methods, along with archaeological excavations (sometimes even without) reveal architectural patterns of fortresses, the location and regularity of necropolises, the phases of their developments, as well as the outline the ancient ways and streets, and define monuments' borders.

Based on aerial photographs and data modelling, a database was created, which serves as a methodical example for further investigation of the slopes of the mount Aragats.

Գ ր ա կ ա ն ո թ յ ո ն

1. Barker P. -1982. Techniques of Archaeological Excavation. 2nd edn. London. Batsford.
2. Vardanyan B., Davtyan R., Manukyan S., Saribekyan, M. -2021, Lernakert: ein neues archäologisches Projekt in Shirak, in: Avetisyan, P., Bobokhyan A. 2020 (eds.) //Archaeology of Armenia in Regional Context, Proceedings of the International Conference dedicated to the 60th Anniversary of the Institute of Archaeology and Ethnography, Held on July 9-11, 2019 in Yerevan, 189-200 pp.

*Ընդունվել է՝ 12. 10. 2021
Գրախոսվել է՝ 22. 10. 2021
Հանձնվել է տպ.՝ 15. 11. 2021*

Տեղեկություններ հեղինակների մասին

Բենիկ ՎԱՐԴԱՆՅԱՆ՝ պատմական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայազիտական հետազոտությունների կենտրոնի
գիտաշխատող, էլ. հասցե՝ vbenik@yahoo.com

Լևոն ՄՎՐՏՉՅԱՆ՝ Պատմամշակութային արժեքի պահպանման գործընկերների
և պատմական միջավայրի պահպանության ծառայության
գիտաշխատող, էլ. հասցե՝ levoncultur@gmail.com

ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Սարգիս Պետրոսյան

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

Բանալի բառեր՝ *Ուրուատրի, Նաիրի, Ուրարտու, ցեղամիություն, թագավորություն, Շուրա, Բիայնա, Տուշպա, հիմնադիրներ, Վանա լիճ:*

Ուրարտագիտության մեջ առ այսօր շրջանառվող տեսակետի համաձայն՝ Ուրարտական թագավորությունը ժառանգորդն է Ուրուատրի ցեղամիության և կրողը նրա անվան: Մեր կարծիքով, դա պատմական իրականությանը չի համապատասխանում: Վերջինը խոսում է Ուրարտական թագավորության՝ Նաիրի ցեղամիության քաղաքական ժառանգորդը և բոլորովին այլ հանգամանքներում ստեղծված այլ տեսակի պետություն լինելու մասին:

Նախաբան. Ուրուատրի ցեղամիությունը, նրա բնակիչներն ու բաղադրիչ երկրները հիշատակված են Ասորեստանի Մալմանասար թագավորի այն արձանագրության մեջ, որ խոսում է այդ ցեղամիությունը կազմած ութ ցեղային երկրների նվաճման մասին: Դրանով կազմալուծված Ուրուատրի ցեղամիությունը դադարել էր գոյություն ունենալուց, իսկ նրա բաղադրիչ ցեղային երկրները կա՛մ հիշատակված են այլ ցեղային կազմավորումների մեջ, կա՛մ այլևս չեն հիշատակվել: Ուրարտական թագավորության կազմում չեն եղել:

1. Ուրուատրի ցեղամիության տեղադրությունը և անվան ստուգաբանությունը:

Ուրուատրի ցեղամիությունը, նրա բնակիչներն ու ցեղամիությունը կազմած երկրները հիշատակված են Ասորեստանի թագավոր Մալմանասար I-ի (մ.թ.ա.1274-1245 թթ.) հաղթական արձանագրություններից մեկում: Նա գրում է. «...Իմ գահակալության տարին ուրուատրիները ըմբոստացան իմ դեմ: Ձեռք կարկառեցի Աշշուրին և մեծ աստվածներին՝ իմ տերերին: Իմ զորքի հավաքը կազմակերպեցի (և) նրանց ամուր լեռ-

նաշղթաները եւ բարձրացաւ: Խիմնէ, Ուատկուն, Մաշգուն, Սալուա, Խալիլա, Լուխա, Նիլիպախիւրի և Զինգուն՝ նրանց ութ երկրներին և նրանց աշխարհագրութիւն եւ հաղթեցի: Նրանց 51 քաղաքները քանդեցի, այրեցի, նրանց ռազմավարը, նրանց ունեցվածքը հափշտակեցի. բոլոր ուրուատրիներին երեք օրում խոնարհեցրի իմ տիրոջ՝ Աշշուրի ոտքերի (առաջ): Նրանց ընտրյալ սերունդը բռնեցի, ծառայության և իմ աշխատանքի համար վերցրի, լեռների ծանր հարկը նրանց վրա հավիտյան դրի»¹:

Ուրուատրին հետագա Ուրարտուի հետ նույնացնող տեսակետը հենված է լոկ անունների հնչունական նմանության վրա²: Հ. Կարագոյոյանն իրավամբ առարկում էր. «Ուրարտու (^{KUR} Urartu) և Ուրուատրի (^{KUR} Uruatri) երկրները, եթէ բացարձակապէս տարբեր աշխարհագրական տարածքներ էլ չեն, ապա նրանց անունները ծագմամբ միմյանց հետ կապ չունեն»³: Ընդ որում, տարածական առումով ևս նրանք նույնական չէին: Եթէ Ուրուատրի ցեղամիությունը կազմած հիշյալ 8 երկրները հետագա Ուրարտուի բաղադրամասերից լինէին, ապա անշուշտ հիշատակված կլինէին որպէս այդպիսիք: Բայց բանն այն է, որ մ.թ.ա. IX դ. առաջին կեսին կազմավորված Ուրարտական թագավորությունից դրանք կա՛մ դուրս էին գտնվում, կա՛մ առհասարակ գոյություն չունէին⁴: Նախկինում Ուրուատրի ցեղամիության մեջ ընդգրկված Խիմնէ և Լուխա երկրները, օրինակ, Թիգլաթփալասար I-ի (մ.թ.ա. 1115-1077 թթ.) օրոք Խաբխի ցեղամիության Սուգի երկրի կազմում էին, իսկ Ադադներարի II-ի (մ.թ.ա. 911-890 թթ.) օրոք որպէս առանձին երկիր Urartu-ի հարևանությամբ հիշատակվում է նախկին Ուրուատրիի կազմում գտնված Սալուան⁵: Աշուրբէլկալա թագավորի (մ.թ.ա. 1076-1059 թթ.) հիշատակած Զիգսու բնակավայրը Ուրուատրի ցեղամիության երկրներից Zingun-ի հետ, իսկ սրանք Վանա լճի հյուսիսային ափի Զիսու(ու) բնակավայրի հետ նույնացրած Բ. Դյակոնովի⁶ հետևությամբ եզրակացնում են, որ «ուրուատրիական շրջանները տարածվում էին հյուսիս-արևելք՝ ընդհուպ Վանա լճի հյուսիսային ափեր»⁷: Կարծում ենք՝ միտումը պարզ է. Ուրուատրին առնչել դարեր անց ստեղծված Ուրարտու թագավորությանը: Բայց այդ երեք տեղանուններից վերջինը կապ չունի նախորդների հետ, որովհետև հստակ է նրա ծագումը. Զիսու(ու)-ն սեպագրային արտացոլումն է հայերեն *ձիուկ* բառի

¹ Дьяконов И. Ассиро-вавилонские источники по истории Урарту (այսուհետև՝ АВИИУ) // «Вестник древней истории». -1951, № 2-4, надп. № 2: «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա» (այսուհետև՝ ՀԺՊՔր.), հ. I, Երևան, 1981, էջ 14:

² Luckenbill D., Ancient records of Assyria and Babilonia, I. Chicago -1926. № 114; Меликшвили Г. Наири-Урарту. Древневосточные материалы по истории народов Закавказья. Т. I. Тбилиси. -1954. сс. 150, 155.

³ Կարագոյոյան Յ., Մեպագիր տեղանուններ (Այրարատում և յարակից նահանգներում), «Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբիւրներում», հ. I, գիրք 1, Երևան, 1998, էջ 14:

⁴ Հմմտ. Арутюнян Н., Биайнили (Урарту). Военно-политическая история и вопросы топонимики (այսուհետև՝ Биайнили). Ереван. -1970. сс. 12-17.

⁵ АВИИУ, №№ 10, 21.

⁶ АВИИУ, № 2, пр. 5.

⁷ Биайнили. с. 17, (նաև՝ էջեր 55-56):

և արգասիքը ծովածին ձիերի մասին առասպելաբանական պատկերացման⁸: Հմնտ. Վանա լճի հարավային ափի *Երեւարք*/*Երիվարք* գավառանունը (<երիւար, երիվար «ձի ընտիր յառոյգ հասակի»)⁹, իսկ անվան փառաբանական ձևի համար՝ Սասնա ծռերի ձիու *Քուտկիկ Ջալալի* անունը:

Գ. Մելիքիշվիլու կարծիքով, Ուրուատրին գտնվել է Վանա լճից արևելք ընկած լեռնային Եթե Սալմանասար I-ը Ուրուատրիի բնակիչների համար ասում է, թե «նրանց ամուր լեռնաշղթաները ես բարձրացա» և «բոլոր ուրուատրիներին երեք օրում խոնարհեցրի», ապա դա ուղղակի ցուցում պետք է համարել Ուրուատրին կազմած ութ երկրների ոչ ընդարձակ բարձրլեռնային մի տարածքում գտնվելու վերաբերյալ: շրջանում¹⁰, բայց Է. Ֆոռերը ավելի վաղ ցույց էր տվել նրա մոտավոր տեղադրությունը՝ Ասորեստանից ոչ հեռու՝ Արևելյան Տիգրիսի ավազանից հարավ¹¹: Ի դեպ, «Նաիրի-Ուրուատրի ցեղերի երկրներ», «Նաիրի-Ուրուատրի ցեղերի միություն», «Նաիրի-Ուրուատրի երկիր»¹² հասկացությունները հնարավոր են: Ինչպես ժամանակին Հ. Մանանդյանն էր նկատել տալիս. «Ուրուատրին և Նաիրին խոշոր ցեղերի միություններ էին պատմական Հայաստանի իրարից հեռու գտնվող շրջաններում. Ուրուատրին գտնվում էր Կարգուխական (իմա՝ Կորդվաց – Ս.Պ.) լեռներում, իսկ Նաիրին Արածանի գետի ավազանում»¹³: Ավելին, դրանք տարբեր էին նաև իրենց զբաղեցրած տարածքների չափերով: Եթե Ուրուատրին ներառում էր Հայկական Տավրոսում գտնված ութ երկիր, ապա Նաիրին ներառում էր մեր լեռնաշխարհի ավելի հյուսիս տարածված մեծ մասը՝ երբեմն 40 (գուցե և ավելի) ցեղային երկրներով:

Սալմանասարի կողմից ջախջախված և կազմալուծված Ուրուատրի ցեղամիությունը ռազմաքաղաքական տեսակետից այլևս գոյություն չունեք: Բայց կարծես, նա հանկարծակի «հանում» է գրեթե 200 տարի անց, երբ հիշատակվում է Աշուրբեկվալա թագավորի արձանագրություններից մեկում¹⁴: Մեր կարծիքով, այդտեղ բերված *Ուրուատրի* անունը հնաբանություն է՝ տարածքի հին տեղանուններին ծանոթ գրագետ դպրի գրչի արգասիք (դա հնում, և ոչ միայն, տարածված երևույթ էր): Ինչ վերաբերում է

⁸ Դրանց առարկայական դրսևորումներից հիշենք Սևանա լճի մոտ, Գավառ քաղաքի Բերդի Գլուխ հնավայրից պեղված կնիքը՝ վրան մի մարմին, բայց զույգ հակադիր գլուխներ ունեցող ձիու պատկերով (**Միքայելյան Գ.**, Ուելիքուխի երկրի կենտրոնական կիկլոպյան ամրոցը // «Պատմա-բանասիրական հանդես», 1964, թիվ 1, էջեր 119-132), ինչպես նաև Արևմտյան Հայաստանից տարված Լուդոնի Բրիտանական թանգարանի արձանիկը՝ նույնպիսի երկգլխանի ձիուն բազմած կնոջ ֆիգուրով (**Herzfeld E.**, Iran in the Ancient East // "Archeological Studies presented in the Lowell Lectures at Boston". London-New-York. -1941. p. 175. fig. 295 d):

⁹ **Երեմյան Ս.**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջեր 51, 107-108: «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» հ. I, Երևան, 1979, էջ 684:

¹⁰ **Меликшвили Г.**, նշվ. աշխ., էջ 150:

¹¹ **Forrer E.**, Reallexikon der Assyriologie. I. Berlin -1928, S. 265.

¹² Биайнили, с. 12 пр. 2, сс. 8, 53, 60 пр. 203, сс. 61, 65.

¹³ **Манандян Я.** О некоторых спорных проблемах истории и географии древней Армении. Ереван. - 1956. с. 11.

¹⁴ Биайнили, стр. 21.

Ադադներարի II արքայի հիշատակած Urartu-ին¹⁵, այսպես Ուրուատրիի հետ գործ չունի: Ի. Դյակոնովը կասկածի տակ էր առնում Urartu-ն Uruatri-ի հետ միանշանակ նույնացնող տեսակետը՝ գրելով. «Արձանագրության «Ուրատրու»-ն Ուրուատրի ցեղամիությունն է, թե՛ Ուրարտու թագավորությունը, դեռևս որոշել չի կարելի»¹⁶: Վերևում ասվածները թույլ են տալիս Urartu-ն Urartu-ի -rt->-tr- դրամաբանության ենթարկված ձևը համարել (չի բացառվում հին Uruatri-ի ազդեցությամբ) և վերագրել Ուրարտուին, մանավանդ որ ժամանակով էլ մոտ է այս վերջինին և ոչ թե վաղուց իր գոյությունը դադարեցրած Ուրուատրիին:

Ուրուատրիի նման լեռնային շրջանները մեր լեռնաշխարհին վերաբերող ոչ միայն ասորեստանյան, այլ նաև ուրարտական, խեթական, եգիպտական սեպագիր արձանագրությունների համաձայն, կոչվում էին Babhi, Babanahi, Papanhi¹⁷: Դրանց հիմքում սովորաբար տեսնում են խուրիերեն *pap-/*rab-/*bab- արմատից -hi և -an վերջածանցներով կազմություններ¹⁸: Այդուհանդերձ, «լեռ» նշանակող այդ արմատը «բլուր» նշանակությամբ եղել է նաև հայերենում՝ «բարայ-բլուր»¹⁹: Ըստ երևույթին, այս նույն բառն էր պահպանված Դերսիմի *Տուժիկ պապա//Ղուժիկ բարա և Պաղր պապա//Բաղր բարա* լեռնանուններում²⁰: Դժվար թե դրանց մեջ առկա լինեն պարս. bābā և հայ. բրբ. պապա/բարա «հայր, հայրիկ» նշանակող բառերը²¹: Սրանք ուղենիշ են Uruatri երկրանվան ստուգաբանության հարցում, մանավանդ որ նախկին Ուրուատրին կազմած ցեղային երկրներից Զինգունը և Խալիլան գտնվել են հետագայում Babhi կոչված տարածքում՝ Արևելյան և Արևմտյան Տիգրիս գետերի միախառնման վայրում²² (հմմտ. ուշ ժամանակների Զենգանի և Խալիլայի անունները)²³: Հին Աշուրի բանիմաց դպիրներին Uruatri երկրանունը ծանոթ էր լինելու ավելի վաղ ժամանակներից, երբ իրենց քաղաքը գտնվում էր Հյուսիսային Միջագետքի հզոր պետության՝ Միտանիի գերիշխանության տակ: Մեր կարծիքով, այն գալիս է Միտանիի վերնախավը կազմած արիացիների լեզվից և ունի արիական ստուգաբանություն²⁴: Քանի որ այդ լեզուն մոտ էր հատկապես հին

¹⁵ АВИИУ, № 20.

¹⁶ Дьяконов И. Предыстория армянского народа. История Армянского нагорья с 1500 по 500 гг. до н. э. Ереван. -1968. с. 140.

¹⁷ АВИИУ, №№ 3, 7, 10; Меликишвили Г. Урартские клинообразные надписи (այսուհետև՝ УКН). М. -1960. надп. №28.

¹⁸ Мещанинов И. Аннотированный словарь урартского (биайнского) языка. Л. -1978. сс. 78-79.

¹⁹ «Բարդիք հայոց», Քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Հ. Ամալյանի, Երևան, 1975, էջ 45, ծան. 6: Ղափանցյան Գր., Հայոց լեզվի պատմություն. հին շրջան, Երևան, 1961, էջեր 105-106, 133:

²⁰ Ղանալանյան Ա., Ավանդապատում, Երևան, 1969, էջ 28:

²¹ Երկու լեռներն էլ առնչվում են Ս. Սարգսի պաշտամունքին՝ մեկն անվանական հիշատակումով, մյուսը՝ իր փոթորիկներով (նույն տեղում, թիվ 65 և 66):

²² Биайнили, сс. 22, 24, 173.

²³ Манандян Я., նշվ. աշխ., էջեր 6-8 և 7-ի քարտեզը:

²⁴ Uruatri-ն շումերերեն սու «քաղաք» և իրանական *atru (<h.-ե. *ater- «կրակ») բառերի միջոցով ստուգաբանելու փորձը (Չարագեօզեան Յ., նշվ. աշխ., էջ 14) հիշեցնում է ավելի վաղ Urartu-ի

հնդկերենին, մենք Uruatri-ն ստուգաբանում ենք նրա օգնությամբ: Երկրանունը պետք է բաղկացած լինի Uru-//հին հնդկ. սրն «հեռավոր», «տարածված, ընդարձակ»²⁵ և -atri//հին հնդկ. ádri «լեռ, ժայռ»²⁶ բաղադրիչներից: Անվան ընդհանրական նշանակությունը «ընդարձակ լեռ, տարածուն լեռ» է և վերաբերել է Հայկական Տավրոս լեռնաշղթային: Բացառված չէ, որ նույն adri «լեռ, ժայռ» արմատից է ծագում ուրարտական արձանագրություններում

Մուծածիրի մայրաքաղաքին տրված Ardini²⁷ (<*adrini, հայերենին բնորոշ -dr>-rd դրափոխությամբ -ին վերջածանցով) անունը: Հիշենք, որ Ասորեստանի արքա Սարգոն II-ը Մուծածիրի քուրմ-արքա Ուրգանային կոչում էր «չար լեռնից»²⁸: Այս դեպքում, Uruatri-ն պետք է համարել Հայկական լեռնաշխարհի «լեռնային (երկիր)» բնույթի տեղանուններից մեկը:

2. Ուրարտու թագավորությունը Նաիրի ցեղամիության ժառանգորդն է

Ուրարտուն Նաիրի ցեղամիության քաղաքական ժառանգորդը լինելու մասին առաջինը խոսում է Ուրարտուի արքա Սարգուրի I-ը (մ.թ.ա. 840-ական - 825 թթ.) Վանի ժայռի ստորոտի պարսպի շարվածքում տեղադրած իր ասուրերեն (ասորեստանյան արաղերեն) արձանագրություններում²⁹: Ահա դրանցից մեկը. «Սարգուրեի արձանագրությունը, որդու Լուրիպրիի, մեծ արքայի, Նաիրիի արքայի, արքայի, որին հավասարը չկա, զարմանահրաշ հովվի, (որ) չի վախենում կովից, արքայի, որ ենթարկում է անհնազանդներին: Սարգուրեն՝ որդին Լուրիպրիի, արքան (է) արքաների, որը բոլոր արքաներից հարկ վերցրեց»³⁰:

Կելիշիի երկլեզվյան արձանագրության ասուրական տեքստում Իշպուլիի Սարգուրորդին (մ.թ.ա. 825-810 թթ.) իրեն կոչում է «արքա Նաիրի երկրի», իսկ ուրարտականում՝ «արքա Շուրա երկրի, արքա Բիաինա երկրի, տերը Տուշպա քաղաքի»³¹: Նույն կերպ է վարվել Ռուսա II-ը (մոտ մ.թ.ա. 685-645 թթ.): Զվարթնոցի արձանագրության մեջ նա ասում է. «Ռուսան՝ Արգիշտիի որդին, թագավոր է, թագավոր մեծ, թագավոր Շուրայի, թագավոր Բիայնայի, թագավոր թագավորների, տերը Տուշպա քաղաքի»³²:

Ուրարտական թագավորները, իրենց Նաիրիի թագավորներ հռչակելով, ըստ Գր. Ղափանցյանի, իրենց «կարծես թե շարունակողն էին համարում Նաիրիի քաղաքական ֆունկցիայի, նրա «պետականության» սկզբնական դերի: Դեռ իրենց առաջին արձանագրություններում, գրված ասուրական լեզվով, նրանք իրենց հորջորջում էին

համար առաջարկված նման ստուգաբանությունը (Գավուքչեան Մ., Արմեն և հայ անունների ծագումը և Ուրարտուն, Պեյրութ, 1973, էջեր 187-188): Անհավանական է:

²⁵ “Wörterbuch Sanskrit-Deutsch” von Prof. Dr. Dr. habil. Klaus Mylius. VEB Verlag Enzyklopädie. Leipzig. -1980, S. 87.

²⁶ Նույն տեղում, էջ 25:

²⁷ YKH, N N 19, 264.

²⁸ Ադոնց Ն., Հայաստանի պատմություն. Ակունքները. X-VI դդ. մ.թ.ա., Երևան, 1972, էջ 361:

²⁹ YKH, № 1, ՇԺՊՔր., հ. I, էջ 40:

³⁰ Նույնը:

³¹ Ղափանցյան Գր., Ուրարտուի պատմություն (այսուհետև՝ ՈւՊ), Երևան, 1940, էջ 143:

³² ՈւՊ, էջ 210:

«թագավոր երկրի Նաիրի»³³, երբ դրան հակառակ՝ «Ասսուրական արձանագրությունները մինչև վերջը շարունակեցին կոչել «Ուրարտու» և «ուրարտացի», թերևս դրանով ցանկանալով ցույց տալ և շեշտել դրանց նոր լինելը և Ասորեստանից փոքր ու կախյալ լինելը»³⁴: Տեղը տեղին արված, բայց անտեսված դիտարկումներ: Մենք էլ ենք կարծում, թե Ուրարտուի թագավորները ասուրերեն իրենց արձանագրություններում Ասորեստանի թագավորներին ակնարկներ են հղում՝ ա/. որ իրենք նորաստեղծ փոքր թագավորության՝ Ուրարտուի թագավորները չեն միայն, բ/. որ իրենք թագավորներն են Նաիրի երկրի, այսինքն՝ ամբողջ Հայկական լեռնաշխարհի, գ/. որ իրենց նորաստեղծ թագավորությունը ձևավորվել է Նաիրյան երկրների ռազմական դաշինքի հիման վրա, ուստի նրա քաղաքական իրավահաջորդն է: Այս վերջին հանգամանքը հատկապես շեշտվում է ուրարտական տեքստերում, երբ արքայական տիտղոսաշարում առաջինը հիշատակվում է Շուրա երկիրը:

Դեռևս Ա.Սեյսն էր անդրադարձել այս հանգամանքին՝ նշելով, որ Շուրան եղել է Ուրարտուի հիմնական երկրամասերից մեկը³⁵: Անգամ Բիայնայի հետ միասին հիշատակելիս, ուրարտական թագավորները առաջնությունը տալիս են Շուրային³⁶: Այդ հանգամանքը նշում են Գր. Ղափանցյանից սկսած մինչև Հ. Կարազյոզյան: Ըստ այսմ, ինչպես ժամանակին նկատել էր տալիս Ն. Ադոնցը՝ Կելիշինի ասուրերեն տեքստի KISSATI «ամբողջություն» բառը *šuraue/Շուրայի համարժեքը* չէ: Վերջինի ցուցիչից պարզ է դառնում, որ սա «աշխարհագրական տերմին է և թույլ չի տալիս հավատալ, որ սա հավասարազոր է KISSATI-ին»³⁷: Շուրայի մասին ճշմարիտ դատողություն ունի նաև Հ. Կարազյոզյանը: Նա շեշտում է, որ այն բացակայում է Արգիշտի I-ի տիտղոսաշարում, այդուհանդերձ, «առաջին անգամ որպես կոնկրետ երկիր հիշատակվում է հենց նրա կողմից»³⁸ և «երկիր է Վանա լճից հյուսիս»³⁹:

Šura երկրանունը (կարդա՝ **Unru*) արմատով նույնական է Խալդի աստծու զենքը համարված *Šuri*-ի (կարդա՝ **unrḫ*) հետ: Գրեթե հարյուր տարի է, ինչ այս վերջինը տարբեր ստուգաբանությունների առարկա է ծառայում: Առաջարկված ստուգաբանություններից առավել հիմնավորված է թվում Գ. Ջահուկյանինը՝ *šuri//հայ. unur* «թուր»⁴⁰:

³³ ՈւՊ, էջ 131:

³⁴ ՈւՊ, էջ 132:

³⁵ Sayce A., The Cuneiform Inscriptions of Van // "Journal of the Royal Asiatic Society of Great Britain and Ireland". London. -1882, p. 621.

³⁶ ՈւՊ, էջեր 18-19: Կարազեօղեան Յ., էջեր 22, 31:

³⁷ Ադոնց Ն., նշվ. աշխ., էջեր 215-216:

³⁸ ՀԺՊՔր., էջ 68 ծան. 37:

³⁹ Նույն տեղում, էջ 69 ծան. 50: Տե՛ս նաև Պետրոսյան Ս., Դասերը և եռադասության դրսևորումները հին Հայաստանում, ՀՀ ԳԱԱ ՊԻ, Երևան, 2006, էջեր 183-185:

⁴⁰ Ջահուկյան Գ., Ուրարտական արձանագրությունների ներածական բանաձևերի հնարավոր հայկական բնույթի մասին, «Պատմա-բանասիրական հանդես», 2000, 1, էջեր 124-125: Մերժելով Ն.Մառի և իր կողմից *šuri* բառին տրված «խնամք, ողորմածություն» և Գր. Ղափանցյանի տված «դրոշ, ազդանիշ, ստանդարտ» բացատրությունները, Ի. Մեջլանինովը առաջարկում էր նորը՝ «զինված ուժ, զորք, կռվի զենք» ընդհանուր իմաստով (Мещанинов И., նշվ. աշխ., էջեր 290-291):

Վասկած լինել չի կարող, որ Տւրա երկրանունը ևս իր հիմքում ունի հայերեն *սուր* «թուր» բառը: Երկիրը այդպես է կոչվել սուր կրող մարդկանց անունով, այսինքն՝ եղել է զինվորական դասին պատկանող և սրա վերնախավի կողմից կառավարվող տա-րածք:

Եզրահանգում. Այսպիսով, կասկած լինել չի կարող, որ դարերով միմյանցից անջրպետված, պատմական տարբեր ժամանակաշրջանների ծնունդ Ուրուատրին և Ուրարտուն իրար հետ որևէ առնչություն չեն ունեցել: Հայկական Տավրոսից հեռու, Վանա լճի հյուսիսային և արևելյան ափամերձ շրջաններում ձևավորված Ուրարտու թագավորությունը ժառանգորդն էր ոչ թե վաղուց գոյություն չունեցած Ուրուատրի ցեղամիության, այլ Նաիրի ցեղամիության: Ուրարտական թագավորությունը որպես դաշնային պետական կազմավորում ձևավորած նաիրյան երկրները եղել են Շուրան, Բիայնան և Տուշպան, որոնք էլ (և միայն նրանք) հիշատակված են ուրարտական թագավորների տիտղոսաշարում:

К ОБРАЗОВАНИЮ УРАРТСКОГО ЦАРСТВА

Петросян С. Г.

Ключевые слова: *Уруатри, Наири, Урарту, племенной союз, царство, Шура, Биайна, Тушпа, основатели, озеро Ван.*

В надписях ассирийского царя Салманасара I на южной окраине Армянского нагорья упомянуты уруатрийцы, которые возмутились против него. Страна союза горских племен Уруатри не является первоначальной родиной урартов, как предполагает часть урартоведов, так как наири-уруатрийское объединение племен никогда не существовало. Уруатри и Наири являлись разными союзами племен и находились в разных районах Армянского нагорья.

Страна союза уруатрийских племен находилась на юге, у границы с Ассирией, а страны Наири – севернее Уруатри. Государство Урарту возникло на основе военного объединения стран Наири. Этим и объясняется титул урартского царя Сардури I, который называет себя царем страны Наири. В титулах других урартских царей упомянуты только три страны – Шура, Биайна и Тушпа, которые находились севернее и восточнее озера Ван. Эти наирийские страны и являлись основателями первоначально федеративного государства Урарту.

Ֆ. Քյոնիգը *šuri*-ն թարգմանում էր «մարտակառք» (*König F.*, Handbuch der chaldischen Inscriften. I, Graz. 1955, S. 202), Գր. Ղափանցյանը՝ «նետ» (*Капанян Г.* Историко-лингвистические работы. Т. II. Ереван. -1975. сс.265-266), Ս. Ռիսշնադերը՝ «նիզակ» (*Римшайдер М.* От Олимпии до Ниневии во время Гомера. М. -1977. сс. 109), Ի.Դյակոնովը՝ «զենք» (*Дьяконов И.* Предыстория армянского народа, с. 147), Ի.Դյակոնովը և Ի. Մեդվենկոյայն՝ «սուր» (*Дьяконов И., Медведская И.* Урартское государство в новом освещении // “Вестник древней истории”. -1987. №3. сс. 207-208. пр. 13), Հ. Չարազյոզյանը «մական» (*Չարազեօզեան Յ.*, նշվ. աշխ., էջեր 28-30), Ս. Այվազյանը՝ «սուր» (*Այվազյան Ս.*, Ուրարտերեն-հայերեն. Բառապաշար և պատմահամեմատական քերականություն, Երևան, 2008, էջեր 102, 363):

ON THE FORMATION OF THE URARTIAN KINGDOM

Petrosyan S. G.

Key words: *Uruatri, Nairi, Urartu, tribal union, kingdom, Shura, Biayna, Tushpa, founders, Lake Van.*

In the inscriptions of the Assyrian king Shalmaneser I on the southern outskirts of the Armenian Highlands, the Uruatrians are mentioned, who rebelled against him. The country of the union of the mountain tribes of Uruatri is not the original homeland of the Urarts, as some of the Urartian scholars suggest, since the Nairi-Uruatri union of tribes never existed. Uruatri and Nairi were different tribal alliances and were located in different regions of the Armenian Highlands.

The country of the union of the Uruatrian tribes was in the south, near the border with Assyria, and the country of Nairi was north of Uruatri. The state of Urartu emerged on the basis of the military association of the Nairi countries. This explains the title of the Urartian king Sarduri I, who calls himself the king of the country of Nairi. In the titles of other Urartian kings, only three countries are mentioned - Shura, Biaina and Tushpa, which were located north and east of Lake Van. These Nairi countries were the founders of the originally federal state of Urartu.

Գ ր ա կ ա ն ո թ յ ո Ւ Ն

1. Ադոնց Ն., Հայաստանի պատմություն. Ակունքները. X-VI դդ. մ.թ.ա., Երևան, 1972:
2. Այվազյան Ս., Ուրարտերեն-հայերեն. Բառապաշար և պատմահամեմատական քերականություն, Երևան, 2008:
3. «Բառգիրք հայոց», Քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Հ. Ամալյանի, Երևան, 1975:
4. Գավուքչեան Մ., Արմեն և հայ անունների ծագումը և Ուրարտուն, Պեյրուբ, 1973:
5. Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963:
6. Կարազեօզեան Յ., Սեպագիր տեղանուններ (Այրարատում և յարակից նահանգներում), «Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբյուրներում», հ. I, գիրք 1, Երևան, 1998:
7. «Հայ ժողովրդի պատմության քրեատոմատիա», հ. I, Երևան, 1981:
8. Ղափանցյան Գր., Հայոց լեզվի պատմություն. հին շրջան, Երևան, 1961:
9. Ղափանցյան Գր., Ուրարտուի պատմություն, Երևան, 1940:
10. Ղանալանյան Ա., Ավանդապատում, Երևան, 1969:
11. Միքայելյան Գ., Ուելիքուխի երկրի կենտրոնական կիկլոպյան ամրոցը, «Պատմա-բանասիրական հանդես», 1964, թիվ 1:
12. Պետրոսյան Ս., Դասերը և եռադասության դրսևորումները հին Հայաստանում, ՀՀ ԳԱԱ ՊԻ, Երևան, 2006:
13. Ջահուկյան Գ., Ուրարտական արձանագրությունների ներածական բանաձևերի հնարավոր հայկական բնույթի մասին, «Պատմա-բանասիրական հանդես», 2000, թիվ 1:
14. Арутюнян Н. Биайнили (Урарту). Военно-политическая история и вопросы топонимики. Ереван.-1970.
15. Дьяконов И. Ассиро-вавилонские источники по истории Урарту // “Вестник древней истории”. - 1951. № 2-4.
16. Дьяконов И. Предыстория армянского народа. История Армянского нагорья с 1500 по 500 гг. до н. э. Ереван. -1968.

17. Дьяконов И., Медведская И. Урартское государство в новом освещении //“Вестник древней истории”. -1987. № 3.
18. Капанян Г. Историко-лингвистические работы. Т. II. Ереван. -1975.
19. Манандян Я. О некоторых спорных проблемах истории и географии древней Армении. Ереван. - 1956.
20. Меликишвили Г. Наири-Урарту. Древневосточные материалы по истории народов Закавказья. Т. I. Тбилиси. -1954.
21. Мещанинов И. Аннотированный словарь урартского (биайнского) языка. Л. -1978.
22. Римшнайдер М. От Олимпии до Ниневии во время Гомера. М. -1977.
23. Forrer E. Reallexikon der Assyriologie. I. Berlin. -1928.
24. Herzfeld E. Iran in the Ancient East, “Archeological Studies presented in the Lowell Lectures at Boston”. London-New-York. -1941.
25. König F. Handbuch der chaldischen Inscriften. I. Graz. -1952.
26. Luckenbill D. Ancient records of Assyria and Babilonia. I. Chicago. -1926. № 114.
27. Sayce A. The Cuneiform Inscriptions of Van // “Journal of the Royal Asiatic Society of Great Britain and Ireland”. London. -1882.
28. “Wörterbuch Sanskrit-Deutsch” von Prof. Dr. Dr. habil. Klaus Myliu. VEB Verlag Enzyklopädie. Leipzig. -1980.

*Ընդունվել է՝ 22. 09. 2021
Գրախոսվել է՝ 23. 10. 2021
Հանձնվել է սպ.՝ 15. 11. 2021*

Տեղեկություններ հեղինակի մասին

Սարգիս ՊԵՏՐՈՍՅԱՆ՝ պատմական գիտությունների դոկտոր,
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի
առաջատար գիտաշխատող, էլ. հասցե՝ vaha1996@mail.ru

ՀՏԴ՝ 93/94

DOI: 10.52971/18294316-2021.3-42

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅՈՒ ՀԻՇՍԱԿԱՍՇ ՇԵՐՏԱԻՈՐ ԵԶՐՈՒՅԹԻ ՇՈՒՐԶ

Լուսինե Պետրոսյան

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

Բանալի բառեր՝ շերտաւոր, հետևակ, հեծելագոր, բանակ, բարեփոխում, վահան, նիզակ, ճակատամարտ, Տիգրան Երվանդյան, Տիգրան Մեծ:

Հոդվածում քննարկվել են այնպիսի հարցեր, ինչպիսիք են Մովսես Խորենացու հաղորդումը Տիգրան Երվանդյանի օրոք (մ. թ. ա VI դարի կեսեր) Հայոց բանակում տեղի ունեցած բարեփոխումների և այդ առթիվ հիշատակված շերտավոր զորատեսակի մասին: Ապացուցվում է, որ 1 Խորենացու կողմից Տիգրան Երվանդյանին վերագրված բարեփոխումների իրական հեղինակը եղել է Տիգրան II Մեծը: 2 Շերտաւոր կոչվել է հետևակ զինվորը իր կրած շերտավոր վահանի, այլ ոչ թե սակրավոր (տապարավոր) կամ մահակավոր (կոպալավոր) լինելու պատճառով: 3 Տիգրան Մեծն է ստեղծել հայոց բանակի թեթևագեն հեծելագորը և ծանրագեն հետևագորը:

Նախաբան. Տիգրան Երվանդյանի գործունեությունը նկարագրելիս Մովսես Խորենացին աղբյուր ուներ նաև, այսպես կոչված, «Չորս հագներգություն»-ը՝ «Գիսապատմական-կիսագեղարվեստական տիպի՝ հռետորական արվեստի կանոններով գրված մի գործ»: Զինված ուժերում Տիգրան Երվանդյանի կատարած բարեփոխումները հանգեցրին նաև նրան, որ «Հետևակամարտքն ի վերայ ուսոց ձիոց բերեալք, և պարսաւորքն առ հասարակ դիպաղեղունք, և շերտաւորքն ի սուսեր և ի տեգ նիզակի վառեալք, մերկքն վահանօք և զգեստոք երկաթեօք պարածածկեալք»¹: Այս մեջբերման մալխասայանական թարգմանությունը հետևյալն է «Հետևակ կռվողները ձիավոր դարձան, պարսերով կրո-

¹ Մովսեսի Խորենացու Պատմություն Հայոց, Քննական բնագիրը Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի, աշխարհաբար թարգմանությունը և մեկնաբանությունները Ստ. Մալխասյանի (այսուհետև՝ Խորենացի), Երևան, 1981, գիրք Ա, գլ. իր:

վողները՝ հաջող աղեղնավորներ, կոպալներով կովողները զինվեցին սրերով ու տեգավոր նիզակներով. մերկերը պատսպարվեցին վահաններով և երկաթե զգեստներով»²:

1. Թեթևազեն հեծելագործի ստեղծումը

«Այս ներքողական նկարագրությունը Տիգրան Երվանդյանի և նրա մտցրած բարենորոգությունների, վերաբերում են Տիգրան Բ-ին (Մեծին), և Խորենացին չունենալով ստույգ ուղեցույց աղբյուր, սխալմամբ վերաբերել է Տիգրան Ա-ին (Երվանդյանին): Այս բանն առաջին անգամ նկատեց գերմանացի գիտնական Գելցերը: Այս եզրակացությունն ընդունում է նաև ակադեմիկոս Հ. Մանանդյանը իր «Տիգրան Բ» հմտալից աշխատության մեջ, իր կողմից ևս նոր փաստեր ավելացնելով»³: Որ Տիգրան Մեծին պետք է վերաբերեր բանակի շարքերում իրագործած բարեփոխումը, պարզ երևում է Խորենացու հաղորդումից: Դա Տիգրան Երվանդյանը լինել չէր կարող այն պարզ պատճառով, որ նրա ժամանակ՝ մ. թ. ա. 6-րդ դարի կեսերին, հայկական բանակը լինելու էր արևելյան տիպի բանակ, ինչպես էին դրան նախորդած ուրարտական բանակը և հայոց բանակին համաժամանակյա մարականն ու պարսկականը: Մ. Աբեղյանը ևս կարծում էր՝ Մովսես Խորենացու բերած վկայության հասցեատերը ոչ թե Տիգրան Երվանդյանն է, այլ Տիգրան Մեծը, որի գործունեությունը «Մ. Խորենացին սխալմամբ վերագրել է պարսից Կիրոս թագավորի ժամանակակից Տիգրան թագավորին»⁴:

Պարթևների մոտ պատանդ եղած Տիգրան Մեծը (մ. թ. ա. 95-55 թթ.) հասկացել էր, որ Հայոց բանակին պետք է ոչ միայն ծանրազեն, այլև թեթևազեն հեծելագործ: Մինչև Տիգրան Մեծի գահակալումը Հայոց բանակը հետևում էր բանակաշինության հունամակեդոնական ավանդույթին: Պատճառը Ալեքսանդր Մակեդոնացու տարած հաղթանակներն էին արքեմենյան բանակների դեմ և դրա հետևանքով Արքեմենյան տերության կործանումը: Ինչպես ժամանակին արքեմենյան բանակն էր զիջել հունամակեդոնականին, այնպես էլ սելևկյան՝ հունամակեդոնական ավանդույթներով առաջնորդվող բանակն էր զիջում պարթևական բանակին: Պարթև Արշակունիներին հաջողվել էր 100-ամյա պայքարի ընթացքում Սելևկյաններից ազատագրել ամբողջ Իրանը և, ավելին, Միհրդատ II Մեծը (մ. թ. ա. 123-87 թթ.) նրանց վտարեց նաև Միջագետքից: Պարթևների հաղթանակի մեջ իր մեծ բաժինն ուներ պարթևական հեծելագործը՝ բաղկացած թեթևազեն և ծանրազեն հեծելագործներից:

Հայկական «մերկերից», որոնք հետևակ զինվորներ՝ նետաձիգ-աղեղնավորներ էին, Տիգրան Մեծը պարթևականի օրինակով ստեղծել էր աղեղնավոր հեծելագործը՝ թեթևազեն հեծելագործը, իսկ ծանրազեն հեծելագործը հայերին վաղուց էր հայտնի (ուստի վերոբերյալ մեջբերումում Խորենացու կողմից հիշատակված չէ): Նույնը պետք է ասել նաև արքեմենյան բանակի պարսկա-մարական հեծելագործի վերաբերյալ: Վերջինի և ժամանակակից այլ բանակների հեծյալների սպառազինության առթիվ Մ. Վ. Գորելիկը գրում է. «Դրա տարրերը իրենց մեծամասնությամբ հանգում էին մերձավորարևելյան՝

² Խորենացի, գիրք Ա, գլ. իդ

³ Նույն տեղում, էջ 472-473, ծան. 79:

⁴ Աբեղյան Մ., Երկեր, հ. III, Երևան, 1968, էջ 59: Նույնի՝ հ. I, Երևան, 1966, էջ 107 (այդ մասին ավելի մանրամասն տե՛ս էջեր 97-115):

հատկապես ուրարտական ավանդույթին... Հեծյալի և մարտական ձիու համար ստեղծված ծանր սպառազինության ամբողջական կազմը ընդգրկուն տարածում և զարգացում ունեցավ հետագայում թե՛ Արևելքում և թե՛ Արևմուտքում, ինչպես նաև Եվրասիայի տափաստանային գոտում և դարձավ հիմնական աղբյուրներից մեկը զրահապատ (կատաֆրակտարիոս - օղագրահով) հեծելազորի, որը շատ կարևոր դեր ունեցավ Եվրասիայի բազմաթիվ տարածաշրջանների ռազմական գործում մ. թ. ա. III – մ. թ. IV դդ. ընթացքում»⁵:

Հայաստանի զարգացած ձիաբուծությունը հնարավորություն տալիս էր ունենալու և՛ ծանրազեն, և՛ թեթևազեն հեծելազոր: «Հայաստանի գավառներից են նաև Փավենե, Գոմիսեն և Օրքիստենե, որ հայթայթում են մեծաքանակ պատերազմական ձի» վկայում է Ստրաբոնը⁶: Հույն աշխարհագետը այլ դեպքերում ևս անդրադառնում է այդ իրողությանը: Աղվանների մասին Ստրաբոնը գրում է. «Պատերազմում են հետևակ և ձիավոր՝ թե՛ թեթևազեն և թե՛ զրահավորված՝ ինչպես հայերը»⁷: Մեծ Մարաստանի ձիաբուծության առթիվ էլ ասում է. «Ասում են նաև, թե այս երամակները արքայական էին և այն Նեսեական ձիերը, որ պարսից թագավորները գործ էին ածում՝ նրանց ազնվության և մեծության պատճառով, դուրս էին գալիս այդ երամակներից և կամ Հայաստանից: Սրանք առանձին ձև ունեն և ինչպես այժմ պարթևական կոչված ձիերը, տարբեր են հունական և մեզ մոտ եղած այլ տեսակի ձիերից»⁸: Նույն Ստրաբոնը գրում է նաև հետևյալը. «Արտավազդը Անտոնիոսին, բացի մյուս ձիավորներից, 6000 զրահապատ ձիավորների զորահանդես արեց, երբ նրա հետ Մարաստան արշավեց: Այսպիսի հեծելազորք ոչ միայն մարերն ու հայերն են սիրում, այլև աղվանները. նրանք էլ ունենին զրահավորված ձիեր»⁹:

Ըստ Ապիանոսի՝ Տիգրանակերտի ճակատամարտից հետո Տիգրան Մեծը փոխել էր իր բանակի մարտավարությունը: Նա բանակը բաժանել էր երկու մասի. Միհրդատ Եվպատորի հրամանատարությանն էր հանձնել հետևազորը և հեծելազորի փոքր մասը՝ ծանրազենը, «իսկ Տիգրանը հեծելազորի մյուս մասով սրնթաց հարձակվում էր թշնամու վրա, խանգարում էր ու խափանում նրա պարենավորումը և հասցնում զգալի կորուստներ»¹⁰: Որ Տիգրան Մեծի առաջնորդած հեծելազորը եղել է թեթևազենը, երևում է նաև հետևյալից. «Երբ Տիգրանը տեղեկություն ստացավ, որ Լուկուլլոսն արագացած երթով գնում է դեպի Արտաշատ՝ նա հասավ չորրորդ օրը, ինչպես վկայում է Պլուտարքոսը, հռոմեական զորքի ետևից և նրա առաջը կտրեց Արածանիի գետանցի մոտ՝ գետի աջ ափին»¹¹:

⁵ Горелик М. В. Защитное вооружение персов и мидян Ахеменидского времени // «Вестник древней истории». 1982. N 3. с. 105.

⁶ Strabo XI, 14, 4 (Ստրաբոն, քաղեց և թարգմանեց Հ. Աճառյան, Երևան, 1940, էջեր 56-57):

⁷ Strabo XI, 4, 4-5 (Ստրաբոն, էջ 33):

⁸ Strabo XI, 13, 7 (Ստրաբոն, էջ 51):

⁹ Strabo XI, 14, 9 (Ստրաբոն, էջ 61):

¹⁰ Մանանդյան Հ., Տիգրան Երկրորդը և Հռոմը, Երևան, 1940, էջ 148 (App., Mithr., 87):

¹¹ Նույն տեղում, էջ 149 (Plut. Lucul., 31):

Ինչպէս Մանանդյանն է նշում. «Տիգրան Մեծն ուզեցել էր հարված հասցնել թշնամուն գետից անցնելու ժամանակ: Տիգրանի հեծելագործի փախուստը պարզապէս կեղծ փախուստ էր, որի միջոցին նրա նետաձիգ արագաշարժ ձիավորները նոր ջարդ էին տալիս թշնամուն: Կովելու արևելյան այդ ձևը գործադրել էին, ինչպէս հայտնի է, նաև պարթևները Կրասուսի դեմ, որը կատարյալ պարտություն էր կրել 53 թվին»¹²:

2. Ծանրագեն հետևագործի ստեղծումը

Ս. Կրկյաշարյանը «Անաբասիս»-ի իր թարգմանության մեջ ճիշտ է թարգմանում և բացատրում հին հույների *գյումնետայ*՝ «մերկեր» գորամասի էությունը: Նա գրում է. «Բնագրում՝ γυμνῆτα/մերկեր: Այսպէս էր կոչվում թեթևագեն հետևակը, որը չունէր պաշտպանողական սպառազինություն»¹³: «Մերկ» բառը նույնպիսի նշանակությամբ գործածել է նաև Մովսես Խորենացին: Խոսելով Տիգրան Երվանդյանի գործունեության մասին՝ պատմահայրը իմիջիպայոց գրում է. «մերկքն վահանօք և զգեստուք երկաթեօք պարածածկեալք»¹⁴: «Մերկերը» հեղինակը գործ է ածում հունարենի հետևողությամբ նշանակելու համար այն զինվորներին, որոնք զրահներ, վահան կամ ուրիշ պահպանակ չէին կրում»¹⁵: *Մերկեր* կոչվածների միջոցով, որոնք հետևակ աղեղնավորներ էին, Տիգրան Մեծն ստեղծել էր իր բանակի աղեղնավոր հեծյալ գորամասը՝ «հետևակամարտքն ի վերայ ուսոց ձիոց բերեալք»:

Խորենացին ասում է «մերկքն վահանօք և զգեստուք երկաթեօք պարածածկեալք», երբ հայտնի է, որ հեծելագործում վահան կրելն ընդունված չէր: Ըստ այդմ՝ կարելի է ենթադրել, որ մերկերի մյուս մասը թեթևագեն հետևագործի շարքերից անցել էր ծանրագեն հետևագործի շարքերը: Վերջինիս զինվորն իսկապէս կրում էր վահան և երկաթե զրահ: Սրանով Տիգրան Մեծը վերացրել էր *մերկեր* գորատեսակը և սրանց երկրորդ մասն ընդգրկել էր *շերտաւորք* կոչված գորատեսակի մեջ:

Մեր կարծիքով, այս անվանումն անցյալում ճիշտ բացատրված չի եղել: Խորենացու երկի՝ Ստ. Մալխասյանցի թարգմանության մեջ տրված «կոպալներով կովողներ» բացատրությունը ժամանակավրէպ է. մ. թ. ա. 1-ին դարի ոչ մի պետության բանակում կոպալը (մահակ) զենք համարվել չէր կարող: «Նոր հայկազյան բառարանում» կարդում ենք. *Շերտաւոր* «ունող զգործի շերտ շերտ կոտորելոյ, ջարդելոյ. որպէս տապարաւոր, սակրաւոր, տիգաւոր են»¹⁶, Հ. Աճառյանի «Արմատական բառարանի» *Շերտ* բառահոդվածում կարդում ենք. *շերտ* «ցանկապատի ցից, ցանկ», «տապար, կացին», որից՝ *շերտաւոր* «տապարավոր զինվոր»¹⁷, Գ. Սարգսյանը Խորենացու երկի ռուսերեն թարգմանության մեջ *շերտաւորն* հասկացել է «մահակավոր» (*дубинщик*)¹⁸, Ստ. Մալխասյանցի «Բացատրական բառարանում» կարդում ենք. *Շերտաւոր* «փայտի շեր-

¹² Մանանդյան Հ., էջ 154:

¹³ Քսենոփոն, Անաբասիս, թարգմ. Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1970, էջ 245, ծան. 18:

¹⁴ Խորենացի, Ա, իդ:

¹⁵ Խորենացի, էջ 472, ծան. 78:

¹⁶ «Բառգիրք հայկազեան լեզուի», հ. II, Երևան., 1981, էջ 476:

¹⁷ Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. III, Երևան, 1977, էջ 511:

¹⁸ Мовсес Хоренаци, История Армении, Перевод с древнеармянского языка, введение и примечания Г. Саркисяна. Ереван. -1990. с. 39.

տերով շինված», «շերտեր կրող, շերտերով զինված (զուցե մահակավոր, կոպալավոր)»: Հայկ(-ազեան) բառ(-արանք) հասկանում է՝ «շերտ շերտ կոտորելու գործիք ունեցող, տապարաւոր, սակրաւոր, տիգաւոր», որ անհավանական է: Հացունին հասկանում է՝ «շերտ շերտ զրահներ հագած», որ նույնպես անհավանական է¹⁹: Քննադատությունը տեղին է, բայց, ինչպես տեսանք, շերտաւոր-ի «կոպալավոր» թարգմանությունը նույնպես հեռու է բառի բուն իմաստից:

Շերտաւոր բառի իմաստի բացահայտման բանալին կարող ենք դարձնել Քսենոփոնի «Կյուրոպեդիա»-ի այն հաղորդումը, որում խոսվում է Հայոց թագաժառանգ Տիգրանի կողմից մարական զորավար (և պարսից թագաժառանգ) Կյուրոսին ներկայացված գորքի մասին. «Հաջորդ օրը եկավ ինքը՝ Տիգրանը, պատրաստ ճանապարհվելու. նրա հետ էր նաև հավաքված զորքը՝ չորս հազար ձիավոր, շուրջ մեկ բյուր աղեղնավորներ և այդքան էլ պելտաստներ»²⁰: Պարզ է, որ Տիգրանի հեծյալ զորամասից հետո հիշված աղեղնավորներն ու պելտաստները հետևազորից էին, ընդ որում աղեղնավորները հետագայի նույն մերկերն էին, իսկ Ս. Կրկյաշարյանի թարգմանության մեջ *պելտաստ* կոչվածները լինելու էին վահանակիրները, որովհետև հունական բանակում այդպես կոչվում էին թեթև, կլոր վահան (պելտե) կրող զինվորները²¹: Ըստ այդմ՝ Հ. Մանանդյանը հունարեն այս բառը թարգմանել է «թեթևազեն վահանակիր»²²:

Հենց սրանք են եղել *շերտաւոր* կոչված հետևակ զինվորները: Այդ անունը նրանց տրվել է իրենց կրած վահանի տեսակը նկատի առնելով: Այդ բառի հիմքում հայերեն *շերտ* արմատն է, որը նշանակել է նաև «ընդհանրապես նեղ՝ երկայն ու տափակ փայտ կամ այլ իր»²³: Այս դեպքում պետք է նկատի առնել, որ վահանը նաև փայտյա էր լինում, բայց հոծ փայտից պատրաստված վահանը ծանր էր լինում, իսկ շերտավոր վահանը՝ համեմատաբար թեթև: Նրա նախնական օրինակներից մեկը Հայկական լեռնաշխարհի հյուսիսային շրջաններում տարածված է եղել դեռևս մ. թ.ա X դարում²⁴ (զուցե և ավելի վաղ): Դրա ավելի կատարյալ տեսակը հետագայում կիրառվում էր Հայաստանից բացի նաև ուրիշ մի շարք երկրներում, ընդհուպ մ. թ. V դարի կեսերը²⁵: Այս վահանակիրներին Տիգրան Մեծը, զինելով տիգավոր նիզակներով և սուսերով (սրով), փաստորեն նրանց ևս մերկերի նման զրահավորել էր: Դրանով, ուրեմն, փոխվել էր շերտավորների կարգավիճակը՝ թեթևազեն վահանակիրներից նրանց դարձնելով հունական հուպիտների նման ծանրազեն վահանակիրներ:

Եզրահանգում. Ինչպես ժամանակին արեմենյան բանակն էր զիջել հունամակեդոնականին, այնպես էլ սելևկյան՝ հունամակեդոնական ավանդույթներով առաջնորդվող բանակն էր զիջում պարթևական բանակին: Պարթևների հաղթանակների մեջ իր

¹⁹ Մալխասյանց Ստ., Հայերեն բացատրական բառարան, հ. III, Երևան, 1944, էջ 513:

²⁰ Xen. Κύρου., III, II, 3 (Քսենոփոն, Կյուրոպեդիա, թարգմ. Ս. Կրկյաշարյանի, Երևան, 2000, էջ 108).

²¹ Քսենոփոն, Անարասիս, էջ 245, ծան. 19:

²² Մանանդյան Հ., Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. I, Երևան, 1944, էջ 406:

²³ Մալխասյանց Ստ., նշվ. աշխ., հ. III, էջ 513:

²⁴ Есаян С. А. Оружие и военное дело древней Армении (III-I тыс. до н. э.). Ереван. -1966. с. 92. рис. на с. 93. N 2.

²⁵ Горелник М. В., նշվ. աշխ., էջ 105:

կարևոր բաժինն է ունեցել ծանրազեն և թեթևազեն մասերից բաղկացած պարթևական հեծելազորը: Պարթևների մոտ պատանդ եղած Տիգրան Մեծը հասկացել էր, որ հայոց բանակին ծանրազեն հեծելազորի կողքին անհրաժեշտ էր ունենալ նաև թեթևազեն հեծելազոր: Տիգրան Մեծն այդ հարցը լուծեց՝ հիմնվելով Հայաստանի զարգացած ձիաբուծության և բանակի որոշ հետևակ զորամասերի վերազինման վրա: Վերջինները հիմնականում աղեղնավոր մերկերից էին, մասամբ նաև՝ պարսավորներից, որոնք համարվեցին թեթևազեն հեծելազորի շարքերը: Մյուս նորամուծությունը ծանրազեն հետևազորի ստեղծումն էր: Հայոց բանակի վահանակիրները՝ շերտավորները, հունական պելտաստների նման թեթևազեն էին: Տիգրան Մեծը նրանց դարձրեց ծանրազեն՝ զինելով նրանց սուսերով և տիգավոր նիզակներով: Ըստ երևույթին, հետևակ մնացած մերկերի նման, նա սրանց նույնպես զրահավորել էր:

О ТЕРМИНЕ ШЕРТАВОР УПОМЯНУТОМ МОВСЕСОМ ХОРЕНАЦИ

Петросян Л. С.

Ключевые слова: *шертавор, пехотинец, кавалерия, армия, реформа, щит, копье, битва, Тигран Ервандян, Тигран Великий.*

В «Истории Армении» Мовсеса Хоренаци реформы в армии приписываются Тиграну Ервандяну (VI в. до н. э.). Фактически эти реформы произошли в годы царствования Тиграна II Великого (95-55 гг. до н. э.). Цель армянского царя – расширение и укрепление тяжеловооруженной пехоты, у которых распространенным был большой щит из прутьев. Тогда такой щит носили только пехотинцы, а всадники не пользовались такими щитами. Армянские *шертаворы* уже вооружились мечами и копьями.

ABOUT THE TERM "SHERTAVOR" MENTIONED BY MOVSES KHORENATSI

Petrosyan L. S.

Key words: *shertavor, infantryman, cavalry, army, reforms, shield, spear, battle, Tigran Yervandyan, Tigran II the Great.*

In the “History of Armenia” by Movses Khorenatsi, reforms in the army are attributed to Tigran Yervandyan (6th century BC). In fact, these reforms took place during the reign of Tigran II the Great (95 - 55 BC). The goal of the Armenian king is to expand and strengthen the heavily armed infantry, in which a large shield of rods was common. Then such kind of shield was worn only by infantrymen, and horsemen did not use such shields. Armenian “shertavors” were already armed with swords and spears.

Գրականություն

1. Աբեղյան Մ., Երկեր, հ. 3, Երևան, 1968, հ. 1, Երևան, 1966:
2. Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. 3, Երևան, 1977:
3. «Բառգիրք հայկազեան լեզուի», հ. 2, Երևան, 1981:
4. Մալխասյանց Ստ., Հայերեն բացատրական բառարան, հ. 3, Երևան, 1944:
5. Մանանդյան Հ., Տիգրան Երկրորդը և Հռոմը, Երևան, 1940:
6. Մանանդյան Հ., Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. 1, Երևան, 1944:
7. Մովսիսի Խորենացու Պատմություն Հայոց, Քննական բնագիրը Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի, աշխարհաբար թարգմանությունը և մեկնաբանությունները Ստ. Մալխասյանի, Երևան, 1981:
8. Ստրաբոն, Քաղեց և թարգմանեց Հ. Աճառյան, Երևան, 1940:
9. Քսենոփոն, Անաբասիս, թարգմ. Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1970:
10. Քսենոփոն, Կյուրոպեդիա, թարգմ. Ս. Կրկյաշարյանի, Երևան, 2000:
11. Горелик М.В. Защитное вооружение персов и мидян Ахеменидского времени // «Вестник древней истории». -1982. N 3.
12. Есаян С. А. Оружие и военное дело древней Армении (III-I тыс. до н. э.). Ереван. -1966.
13. Мовсес Хоренаци, История Армении. Перевод с древнеармянского языка, введение и примечания Г. Саркисяна. Ереван. -1990.

Ընդունվել է՝ 20. 09. 2021
Գրախոսվել է՝ 23. 10. 2021
Հանձնվել է տպ.՝ 15. 11. 2021

Տեղեկություններ հեղինակի մասին

Լուսինե ՊԵՏՐՈՍՅԱՆ՝ պատմական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի
գիտաշխատող, էլ. հասցե՝ vahe1996@mail.ru

ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ ՏԱՅՔՈՒՄ ԵՎ
ԿՂԱՐՋՔՈՒՄ VIII Դ. ՎԵՐՋԻՆ-IX Դ. ՄԿՁԲԻՆ

Լիանա Նազարյան

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

Բանալի բառեր՝ *Բագրատունիներ, Տայք, Կղարջք, Աշոտ կուրապատաս, Ատրներսեհ Բագրատունի, Վասակ, Աշոտ Մսակեր, «Վրաց Տարեգիրք», Ջուանշեր պատմիչ, Ջուանշեր Խոսրովունի (Խոսրովյան):*

Ուսումնասիրությունը վերաբերում է Բագրատունիների Տայքում և Կղարջքում հաստատվելու իրողություններին: Հատկապես կարևորվում է այն փաստը, որ այդ տոհմից Հայոց իշխան Աշոտ Կույր Բագրատունու (732-748) երկու որդիների սերունդները՝ Աշոտ Մսակերն ու նրա հորեղբայր Վասակը և սրա որդի Ատրներսեհը, Բագրևանդի 774-775 թթ. ճակատամարտում արաբներից կրած պարտությունից հետո միաժամանակ հաստատվում են Տայքում և Կղարջքում: Հողվածում ճշգրտվում են այնտեղ նրանց պատկանած տարածքները:

Ելնելով աղբյուրների տեղեկությունների քննությունից՝ կարելի է պնդել, որ հայ իշխանները 775-779 թթ. միջակայքում են գնացել Տայք: Նրանց մի մասը Վասակի ու Ատրներսեհի գլխավորությամբ այնտեղից անցել է Կղարջք, իսկ մյուս մասը Աշոտ Մսակերի գլխավորությամբ մնացել է Տայքում՝ հիմնելով Կալմախ ամրոցը:

Ատրներսեհը խնամիանում է վրացական Խոսրովյան դինաստիայի վերջին ներկայացուցիչ Ջուանշերի հետ (Արչիլ II-ի որդին): Վերջինս ամուսնանում է Բագրատունի իշխանի դուստր Լատավրիայի հետ և աներոջն է հանձնում որոշ տիրույթներ: Այդպիսով, Ատրներսեհը հիմք է դնում նոր իշխանության՝ Բագրատունիների վրացական ճյուղի գլխավորությամբ:

Այն բռնեց հզորացման ուղին Ատրնեքսեի որդի Աշոտ Բագրատունու օրոք, քանի որ Ջուանշեր Խոսրովունու մահից հետո նրա բոլոր տիրույթներն անցնում են Աշոտին: Այդ իշխանությունն է, որ վրաց պատմագիտական գրականությունն անվանում է «Տառ-Վլարջեթի» (Տայք-Վղարջքի) կամ «Քարթվելական թագավորություն», նույնիսկ՝ «Իբերական թագավորություն»¹:

Սույն ուսումնասիրության հիմնական նպատակն է քննել և պարզաբանել Աշոտ Մսակերին ու Վասակ և Ատրնեքսե Բագրատունիներին պատկանած սկզբնական տիրույթները, ինչպես նաև Ջուանշեր Խոսրովունուց հետո Բագրատունիների վրացական ճյուղի իշխանության տարածքները:

Նախաբան. Բագրատունի իշխանների տիրույթների և նորաստեղծ իշխանության ընդգրկած տարածքի հարցերը բավականին վիճահարույց են: Դրանք բազում քննարկումների են արժանացել հայ և վրացի հեղինակների կողմից: Բանն այն է, որ հայ ուսումնասիրողների մեծ մասը խուսափել է Վղարջքի հետ ի սկզբանե Բագրատունիների վրացական իշխանության կազմում ընդգրկել նաև Տայքը: Նրանք հիմնականում բավարարվել են միայն X դ. կեսերից Տայքի կուրապաղատ Դավթի իշխանության ժամանակաշրջանի մասնակի ուսումնասիրությամբ²: Կան հեղինակներ, որ փորձում են Տայքն առանձնացնել վրաց Բագրատունիների ճյուղի իշխանությունից՝ այն ամբողջովին ընդգրկելով հայ Բագրատունիների թագավորության կազմում³: Մինչդեռ վրացի հեղինակները, ելնելով հիմնականում վրացական աղբյուրների տեղեկություններից, ինչպես նաև Տայքում քաղկեդոնականության տարածման, վրացերենի կիրառման ու տեղի վիճաբերի բովանդակությունից, միանշանակ պնդում են, որ Տայքը, ի սկզբանե լինելով «վրացական» երկրամաս, ամբողջությամբ ընդգրկված էր վրաց Բագրատունիների իշխանության կազմում⁴:

Բագրատունիների իշխանության տարածքները Տայքում և Վղարջքում

VIII դ. վերջին-IX դ. սկզբին

Ինչպես նշվեց, Հայոց իշխան Աշոտ Կուրի սերունդները՝ Վասակ Բագրատունին, իր որդի Ատրնեքսեի և Աշոտ Մսակերը, միաժամանակ հաստատվեցին Տայքում: Վերջինս մնաց այնտեղ, իսկ Վասակն ու Ատրնեքսեն անցան Վղարջք: Հիմք ընդունե-

¹ საქართველოს ისტორიის ნარკვევები, ტომი II, თბილისი, 1973, გვ. 445; Лордкипанидзе М. Из истории грузино-византийских взаимоотношений на границе X-XI вв., საქართველოს ფეოდალური ხანის ისტორიის სავითხეები. II, თბილისი. -1972, ს. 31.

² Տե՛ս **Ճանաչեան Մ.**, Դավիթ Կուրապաղատ (պատմական ուսումնասիրություն), Վենետիկ, 1972: **Աղոնց Ն.**, Դավիթ Կուրապաղատ, «Պատմա-բանասիրական հանդես» (այսուհետև՝ ՊԲՀ), 2002, թիվ 3:

³ Տե՛ս **Եղիազարյան Ա.**, Հայ Բագրատունիների տերությունը (885-905 թթ.), (Պատմաշխարհագրական ուսումնասիրություն), Երևան, 2011, էջեր 111-122, նույնի՝ Տայքի իշխանությունը Հայ Բագրատունիների տերության համակարգում, ՊԲՀ, Երևան, 2008, թիվ 3, էջ 197:

⁴ Տե՛ս **Джанашиа С.** Об одном примере искажения исторической правды. По поводу книги Н. Токарского “Архитектура древней Армении”. Тбилиси. -1947. сс. 22-23. Очерки истории Грузии. Т. II. Грузия в IV-X веках. Тбилиси. -1988. сс. 306-319:

լով Վարդան վարդապետի տեղեկությունը, ըստ որի՝ Աշոտ Մսակերը տիրեց «զՇիրակ և զԱշոցք, և զգաւառն Տայոց»⁵, Ա. Եղիազարյանը գտնում է, որ Տայքն ամբողջությամբ պատկանել է Մսակերին⁶: Իսկ վրացի հեղինակները Տայք-Կղարջքի (Տառ-Կլարջեթի) իշխանության պատմությունը գերազանցապես սկսում են Ատրներսեհի որդի Աշոտ Կուրապաղատից⁷: Մակայն դա չի նշանակում, որ վրաց գիտնականները Տայքը չեն դիտարկում որպես վրացական երկրամաս և Բագրատունիների վրացական ճյուղի իշխանության անբաժանելի մաս:

Հայ հեղինակներից Ն. Ադոնցը գրում է. «Ճշմարիտ է Մարկվարտի կարծիքը, որ Բագրատունիները միմիայն Կղարջքի իշխաններ էին և *Վրաստանի հետ կապ չունեին* որչափ ատեն որ Թիփլիսի մեջ նստած էին Շուաբի բռնավորները»⁸ [ընդգծումը մերն է-Լ.Ն.]: Այսինքն՝ Ն. Ադոնցը նկատի ունի, որ Բագրատունիների վրացական ճյուղը Կղարջքից չէր կարող առաջանալ դեպի Վրաստանի խորքեր, քանի որ Տիփլիսում նստում էր արաբ էմիր Իսմաիլ իբն Շուաբը⁹: Այսինքն՝ խոսքը վերաբերում է ոչ թե նրան, որ Բագրատունիները չէին կարող տիրել նաև Տայքին, այլ խոսքը Վրաստանին կամ բուն Վիրքին տիրելու մասին է: Իսկ Յ. Մարկվարտը ոչ միայն կրկնում է Ն. Ադոնցին, այլև վրաց Բագրատունիների մասին նշում հետևյալը. «Տայքի Արտանուջի Բագրատունիներեն գատ. գիծ եւս կար Սպերի մեջ, որ այս ցեղին հին բնագաւառն էր»¹⁰: Այսինքն՝ թե՛ Ն. Ադոնցը, թե՛ Յ. Մարկվարտը Տայքը չեն առանձնացնում Կղարջքի Բագրատունիների տիրույթներից:

Ցավոք, հայկական աղբյուրները փոքր-ինչ անորոշ են ներկայացնում՝ Բագրատունիների վրացական ճյուղի տիրույթներն իշխանության հաստատման ժամանակաշրջանում: Օրինակ՝ Թովմա Մեծոփեցին գրում է, որ Բագրատունիները «թագաւորք եղեն...ի տունն Վրաց»¹¹: Ստեփանոս և Ներսես Մեծոփեցիները նշում են. «մնացեալքն ի Բագրատունեաց գնացին ի մեջ Վրաց և եղեն նոցա թագաւոր»¹²: Այսինքն՝ երկու աղբյուրում էլ նշված է «Վրաց» եզրույթը, և պարզ չէ, թե դրանում ո՞ր երկրամասերն են ընդգրկվում: Միայն Վարդան վարդապետն է նշում, որ Աշոտ Կուրապաղատը «տիրե-

⁵ Հավաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի, լուսաբանեալ, ի Վենետիկ, 1862 (այսուհետև՝ Վարդան վարդապետ), էջ 76:

⁶ Տե՛ս Եղիազարյան Ա., Հայ Բագրատունիների տերությունը, էջեր 114-115, 214-215, տե՛ս նաև Նույնի՝ Բագրատունիների Վրացական թագավորության ձևավորման գործընթացը, մաս Ա // ՎԷՄ, Երևան, 2012, թիվ 4, էջ 27: Նույնի՝ Տայքը և Կղարջքի կուրապաղատությունը IX դարում, Բանբեր Երևանի համալսարանի (այսուհետև՝ ԲԵՀ), Հայագիտություն, Երևան, 141.1, 2013, էջ 8:

⁷ Տե՛ս Очерки истории Грузии. т. II сс. 306-339.

⁸ Ադոնց Ն., Երկեր, հ. Ա, Երևան, 2006, էջ 504:

⁹ Տե՛ս Очерки истории Грузии. т. II. сс 343-345.

¹⁰ Մարկուարտ Յ., Վրացական Բագրատունեաց ծագումը, գերմաներեն թարգմանեց Հ. Հապոգեան, Վիեննա, 1913, էջ 139:

¹¹ Թովմաս Մեծոփեցի, Պատմագրություն, Աշխատասիրությամբ Լ. Խաչիկյանի, Երևան, 1999, էջեր 19-20:

¹² Խաչիկյան Լ., Հայ պատմագրության անհայտ էջերից // ՊԲՀ, 1972, թիվ 4, էջ 239:

աց ի Կաղըջաց մինչև ի Տփխիս, լեռնակողմամբ հանդերձ»¹³, իսկ թե նրա հայրը և պապը որ տարածքներին էին տիրում, մնում է անհայտ: Այդ բացը լրացնում են վրացական աղբյուրները՝ նշելով Ատրնեբսեհի տիրույթների մասին:

Ինչպես վերը նշվեց, Ատրնեբսեհը կամ Ադարնասեն գնացել էր Արչիլի որդի Ջուանշերի մոտ, և վերջինս ամուսնացել էր նրա դուստր Լատավրիայի հետ: Պատմիչ Ջուանշերը վկայում է, որ Ատրնեբսեհը բնակության տարածք էր խնդրել Արչիլից (իրականում՝ նրա որդի Ջուանշերից) և ստացել Շուլավերն ու Արտահանը¹⁴: Ջուանշերի «Պատմության» հայերեն թարգմանությունում Ատրնեբսեհին տրված տարածքները հետևյալն են. «գՌիշա և գՇղուեր և գԱտանէ (գԱտոնէ)»¹⁵: Տրամաբանական է կարծել, թե Ատրնեբսեհին տրված երկրամասերը պետք է մոտ, նույնիսկ սահմանակից լինեին միմյանց: Հայերեն և վրացերեն բնագրերում Արտահանի կամ Ատանէի հիշատակումն աներկբա փաստում է, որ այն իսկապես տրվել է Ատրնեբսեհին, ուստի մյուս տարածքները պետք է մոտ լինեին նրան: Ջուանշերի երկի հայերեն թարգմանությունում նշված «Ռիշա»-ն, հավանաբար, «Աշխարհացոյց»-ից հայտնի Ռեխան է: Այն գտնվում էր Վերին աշխարհ Վրաց երկրամասում¹⁶՝ բավական հեռու Արտահանից, ուստի դժվար է պատկերացնել, որ այն տրվել է Ատրնեբսեհին: Ինչ վերաբերում է «գՇղուեր և գԱտանէ (գԱտոնէ)»-ին, ապա դրանցից երկրորդը նույնական է Արտահանին, իսկ «Շղուեր»-ը կա՛մ Շուլավերն է, կա՛մ Շավշեթ: Սակայն այս երկուսից Արտահանին մոտ է, անգամ հյուսիս-արևմուտքից սահմանակից է՝ Շավշեթը (Շավշք), որը Գուգարք նահանգի գավառներից է¹⁷: Իսկ Շուլավերը գտնվում է Տփխիսից հարավ՝ Բորչալուի գավառում¹⁸: Ուստի Շուլավերը չէր կարող տրված լինել Ատրնեբսեհին, քանի որ այն ոչ միայն սահմանակից չէր Արտահանին, այլև բավականին հեռու էր: Հետևաբար, Ջուանշերի վրացերեն բնագրում նշված Ադարնասեն (Ատրնեբսեհը) ստացել էր ոչ թե Շուլավերն ու Արտահանը, այլ Շավշեթն ու Արտահանը: Այդ պնդումը կարելի է հաստատել վրացական այլ աղբյուրների տեղեկություններով:

«Վրաց Տարեգրքում» և արքայազն Վախուշտի երկում նշվում է, որ Ադարնասեն (Ատրնեբսեհը) Ջուանշերի հետ փոխանակում է Կղարջքի, Շավշեթի, Աճարայի, Նիգա-

¹³ Վարդան վարդապետ, էջ 78:

¹⁴ Տե՛ս «Վրացական պատմության և լեզվաբանության համառոտագրություն», Երևան, 1955 (այսուհետև՝ Վրացական պատմություն, Երևան, 1955), էջ 243, Վրացական պատմության և լեզվաբանության համառոտագրություն, Երևան, 1955, էջ 243; Картлис Цховреба. История Грузии. главный редактор Р. Метревели. Тбилиси. -2008 (այսուհետև՝ Картлис Цховреба. 2008). с. 112.

¹⁵ Համառոտ Պատմության Վրաց ընծայեալ Ջուանշերի պատմիչ, Վենետիկ, 1884 (այսուհետև՝ Ջուանշեր պատմիչ), էջ 101:

¹⁶ Տե՛ս Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի (Փորձ VII դարի հայկական քարտեզի վերակազմության ժամանակակից քարտեզագրական հիմքի վրա), Երևան, 1963, էջ 79, տե՛ս նաև նույնանուն քարտեզը:

¹⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 73: Տե՛ս նաև նույնանուն քարտեզը:

¹⁸ Տե՛ս Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, կազմեցին՝ Թ. Խ. Հակոբյան, Ստ. Տ. Մելիք-Բախչյան, Հ. Խ. Բարսեղյան, հ. 4, Երևան, 1998, էջեր 157-158:

լի, Ասիափորիի, Արտահանի և Ստորին Տայքի մեկ երրորդը, ինչպես նաև այն բերդերը, որոնց իշխում էին Վախթանգ Գորգասալի թոռները¹⁹: Փաստորեն, այդ աղբյուրներում հստակ նշվում են Արտահանն ու Շավշեթը և ոչ մի խոսք չկա Շուլավերի ու Ռեխայի մասին, ուստի մեկ անգամ ևս կարելի է պնդել, որ վերջիններս չեն տրվել Ատրներսեհին: Բացի այդ, թվարկված բոլոր տարածքները մոտ են և սահմանակից միմյանց, ինչը ևս հաստատում է մեր կարծիքը: Ն. Աղոնցը, հիմնվելով «Վրաց Տարեգրք»-ի վկայության վրա, գրում է. «Ատրներսեհ տեր դարձավ Կղարջքի, Շավշեթի, Աջարայի, Նիգալի, Ասեաց-Փորի, Արտահանի և ստորին Տայքի: Մինչ այդ բոլոր այս երկրները Վախթանգի սերունդի ժառանգությունն էր»²⁰: Ա. Եղիազարյանը, հղելով «Քարթլիի Մատեան»-ի ռուսերեն 1976 թ. Մ. Լորդքիփանիձեի թարգմանությունը, գրում է. ««Քարթլիի մատյանը» հաղորդում է, որ Վասակի որդի Ատրներսեհը տիրում էր Շավշքին, Կղարջքին, Նիգալին, Ագարին (Էգր կամ Աճարա), Մամցխեին, Ստորին Տայքին և Ասիափորիին (իմա՝ Արսեաց փոր)»²¹ [ընդգծումը մերն է-Լ.Ն.]: Այսինքն՝ նա Արտահանի փոխարեն նշում է Մամցխեն, մինչդեռ աղբյուրում գրված է Արտահան²²: Մ. Բրոսսեն նույնպես նշում է Արտահան²³: Մամցխեի արձանագրումը հակասում է ոչ միայն հղված աղբյուրի՝ «Քարթլիի Մատեան»-ի բնագրին, այլև՝ Ջուանշերի վկայությանը, թե՛ Ատրներսեհը ստացավ Շավշեթն ու Արտահանը: Հետևաբար, Մամցխեն չի եղել Ատրներսեհին տրված տիրույթներում:

Փաստորեն թե՛ Ն.Աղոնցը և թե՛ Ա. Եղիազարյանն այն կարծիքին են, որ Ատրներսեհը տեր դարձավ վերը թվարկված բոլոր տարածքներին: Սակայն, աղբյուրներում մեկ հետաքրքիր վկայություն կա, որը վրիպել է հետազոտողների ուշադրությունից: Խոսքը վերաբերում է Ջուանշերի հետ հիշյալ տարածքների «մեկ երրորդի փոխանակմանը»: Այսինքն՝ կարելի է կարծել, որ նրանք այդ տարածքները բաժանել են միմյանց

¹⁹ Տե՛ս **Вахушти Багратиони**, История царства грузинского, перевел, снабдил предисловием, словарями и указателем **Накашидзе Н.Т.** Тбилиси. -1976 (այսուհետև՝ **Вахушти Багратиони**), с. 187, ქართლის ცხოვრება, ტომი I, 251, ქართლის ცხოვრება, 2008, էջ 255, Матиане Картлиса, перевод, введение и примечания **М. Д. Лордкипанидзе**, Тбилиси, 1976 (այսուհետև՝ Матиане Картлиса), էջ 28, «Քարթլիի մատյան», թարգմանությունը՝ **Վ. Մարտիրոսյանի** և **Հ. Մկրտումյանի**, մաս Ա // Լրաբեր հասարակական գիտությունների, 1989, թիվ 9 (այսուհետև՝ «Քարթլիի մատյան»), էջ 62:

²⁰ **Աղոնց Ն.**, Երկեր, հ. Ա, էջ 485:

²¹ **Եղիազարյան Ա.**, Բագրատունիների Վրացական թագավորության ձևավորման գործընթացը, մաս Ա, էջ 25: Տե՛ս նույնի՝ Հայ Բագրատունիների տերությունը, էջեր 118, 214, հմմտ. Матиане Картлиса, էջ 28:

²² Տե՛ս Матиане Картлиса, 28: Ընդ որում, Ա. Եղիազարյանը նույն միտքը մեկ անգամ էլ նշելիս հղում է նաև «Քարթլիի Մատեան»-ի հայերեն թարգմանությունը, որտեղ նույնպես նշված է ոչ թե Մամցխե, այլ Արտահան (տե՛ս **Եղիազարյան Ա.**, Տայքը և Կղարջքի Կուրապաղատությունը IX դարում, էջ 5, հմմտ. «Քարթլիի մատյան», էջ 62), տե՛ս նաև **Եղիազարյան Ա.**, Բագրատունիների Վրացական թագավորության ձևավորման գործընթացը, մաս Բ, Վեմ // 2013, թիվ 2, էջեր 40-41, որտեղ նույնպես հղված է «Քարթլիի Մատեան»-ի հայերեն թարգմանության 62 էջը:

²³ Տե՛ս Histoire de la Géorgie depuis l'antiquité jusqu'au XIX^e siècle par **M. Brosset**. 1^{re} partie. S.-Petersbourg. -1849 (այսուհետև՝ **Brosset M.**, Histoire de la Géorgie), էջ 259:

միջև, այլապես չի ընկալվում «փոխանակել» բառի իմաստը (վրաց. բնագրում՝ ოცვალა (իցվալա))²⁴: Կամ էլ պետք է հասկանալ, որ Ջուանշերը, ամուսնանալով Ատրնեբսեհի դստեր հետ, փոխարենը նրան էր տվել հիշյալ տարածքների մի մասը: Ընդ որում, աղբյուրները շեշտում են, որ փոխանակումը կատարվել է մինչև Ջուանշերի մահը՝ 787 թ.: Այսինքն՝ մինչև 787 թ. Ատրնեբսեհը տիրել է այդ երկրամասերի մի մասին, իսկ ավելի հստակ՝ Արտահանին ու Շավշեթին, որոնք էլ թվարկված տարածքների մտտավորապես հենց մեկ երրորդ մասն են կազմում: Փաստորեն, երբ Ատրնեբսեհ Բագրատունին հիմք դրեց Բագրատունիների վրացական ճյուղին, նրա իշխանությունը սահմանափակվում էր Տայքի ու Կղարջքի հարևանությամբ գտնվող Արտահան և Շավշեթ գավառներով:

Իրադրությունը կտրուկ փոխվեց Ջուանշերի մահից (787 թ.) հետո, երբ նրա իշխանության անբողջ տարածքներն անցավ նրա աներորդուն՝ Ատրնեբսեհի որդի Աշոտ Բագրատունուն (787-826), որը դեռևս կուրապաղատի տիտղոս չունեք: Վերջինս էլ տեր դարձավ վերը թվարկված բոլոր տիրույթներին՝ այդ թվում՝ Տայքի Արսեաց փոքր գավառին և Ստորին Տայքին (Ճակքին)՝ հիմք դնելով Բագրատունիների վրացական ճյուղի ժառանգական իշխանությանը: Դա է վկայում նաև Վարդան վարդապետը՝ գրելով. «Եւ տայր իշխանն Իսմայելի Աշոտի որդոյ Ատրնեբսեհի որդոյ Վասակայ, որդոյ Աշոտոյ Հայոց իշխանի՝ զերկիրն Վրաց, որոյ երթեալ հնազանդեցուցանէ ինքեան»²⁵: Այսինքն՝ նրա իշխանությունը ճանաչվել է նաև արաբների կողմից, իսկ «զերկիրն Վրաց» ասելով՝ պատմիչը նկատի ունի ոչ միայն որոշակի տարածք, այլ նաև իշխանություն: Աշոտից առաջ իշխած Ջուանշերը և՛ նշված տարածքների կառավարիչն էր, և՛ Խոսրովյան դինաստիայի վերջին գահակալը՝ կոչվելով երիսթավների երիսթավ ու թագավոր: Հետևաբար Աշոտը ժառանգեց ոչ միայն նրա տիրույթները, այլև իշխանությունը և դարձավ վրաց իշխանաց իշխանը: Թվարկելով Աշոտ Բագրատունու տիրույթները՝ Մ. Լորդքիփանիձեն գրում է. «Իշխանության կազմում մտնում էին Կղարջք, Շավշեթ, Նիգալ, Աճաբա, Հյուսիսային Տայք, Սամցխե, Ջավախք, Արտահան գավառները»²⁶ կամ շրջանները, այսինքն՝ աղբյուրի նշած տարածքներին ավելացնում է Սամցխեն և Ջավախքը, սակայն չի նշում Ասիսփորեի (Արսեացփորի) մասին, իսկ աղբյուրում հիշված Ստորին Տայքի փոխարեն գրում է Հյուսիսային Տայք: Ստորին Տայքը համապատասխանում է երկրամասի հյուսիսային հատվածին, սակայն այն չի ներառում նահանգի հյուսիսարևելյան Կող գավառը: Դրա ապացույցն է, ինչպես իրավացիորեն նշել է նաև Ա. Եղիա-

²⁴ «Քարթլիի Մատեան»-ի ռուսերեն մեկ այլ թարգմանությունում նշվում է. «Но еще при жизни Джуаншера *переместился* Адарнасе Багратион в (свою) треть Кларджети, Шавшети...» [ընդգծումը մերն է-Լ.Ն.] (տե՛ս Լетопись Картли, перевод, введение и примечания Г. В. Цулая, Памятники грузинской исторической литературы. IV. Тбилиси.-1982 (այսուհետև՝ Լетопись Картли), էջ 48), որը, կարծում ենք, համապատասխան չէ բնագրին:

²⁵ Վարդան վարդապետ, էջ 77:

²⁶ Лордкипанидзе М. Из истории грузино-византийских взаимоотношений на грании X-XI вв.. с. 31.

գարյանը, Ղևոնդի վկայությունը Ամատունիների 789 թ. գաղթի վերաբերյալ, երբ պատմիչը շեշտում է, որ նրանք հասան «ի սահմանս Վրաց ի գաւառն Կող»²⁷:

Այսպիսով, 775-779 թթ. միջակայքում, երբ Վասակ և Ատրնէրսեհ Բագրատունիներն Աշոտ Մսակերի հետ գնացին Տայք, այդ ժամանակ նրա հյուսիսային և հյուսիսարևմտյան հատվածը՝ Ճակք և Արսեացփոր գավառները, գտնվում էին վրաց իշխան կամ էրիսթավ Ջուանշերի տիրապետության տակ: Չի բացառվում, որ այդ պատճառով էլ արաբական որոշ աղբյուրներ Տայքը ներառում են և՛ Երկրորդ, և՛ Երրորդ Արմինիայի կազմում: Այսինքն՝ հավանական է, որ արաբ հեղինակները, ելնելով նահանգի մի մասի՝ վրաց իշխանին պատկանելու հանգամանքից, այն ընդգրկում էին նաև Երկրորդ Արմինիայի կազմում, որի մեջ էր Ջուրգանը (Վիրքը)²⁸:

Աղբյուրներում, բացի հիշյալ վկայությունից, որևէ այլ տեղեկություն չկա այն մասին, որ Տայքի որևէ հատված պատկանել է վրաց իշխաններին կամ գտնվել է նրանց տիրապետության տակ: Հետևաբար ենթադրելի է, որ Արսեացփորն ու նահանգի հյուսիսային մասը VIII դ. երկրորդ կեսին են անցել նրանց տիրապետության տակ: Ջուանշեր պատմիչը, թվարկելով Արշիլ II-ի կողմից VIII դ. սկզբներին եղբոր դուստրերին տրված տարածքները²⁹ (նրանց տիրույթները Կղարջքից հարավ չէին անցնում³⁰), դրանցում չի նշում Տայքի և ոչ մի հատված: Ուստի կարելի է ենթադրել, որ Արսեացփորն ու Տայքի հյուսիսային հատվածն ավելի ուշ են անցել վրաց իշխանի, առավել ստույգ՝ Ջուանշերի ենթակայության տակ, քանի որ դրանք չեն հիշվում նաև Արշիլ II-ի տիրույթների շարքում: Հնարավոր է՝ 775 թ. հետո, երբ Մամիկոնյանները գրկվեցին իրենց տիրույթներից, Ջուանշերը տեղ դարձավ Տայքի հյուսիսային և արևմտյան հատվածներին, իսկ մնացած մասն էլ կարճ ժամանակով ընկավ արաբների տիրապետության տակ: Դրանով էլ կարելի է բացատրել Վարդան վարդապետի այն վկայությունը, ըստ որի՝ Աշոտ Մսակերն արաբներից գրավեց Շիրակը, Աշոցքը և Տայքը:

²⁷ Պատմաբանություն **Ղևոնդեայ Մեծի վարդապետի** Հայոց, Մատենագիրք Հայոց, հ. Զ, Ը. դար, Անթիլիաս-Լիբանան, 2007 (այսուհետև՝ **Ղևոնդ վարդապետ**), էջ 850: Տե՛ս նաև **Շղիագարյան Ա.**, Հայ Բագրատունիների տերությունը, էջ 113: **Նույնի՝** Տայքի իշխանությունը հայ Բագրատունիների տերության համակարգում, էջ 199: **Նույնի՝** Տայքը և Կղարջքի Կուրապատկանությունը IX դարում, էջ 4: **Նույնի՝** Բագրատունիների Վրացական թագավորության ձևավորման գործընթացը, մաս Ա, էջ 26:

²⁸ Տե՛ս Արաբ մատենագիրներ Թ-Ժ դարեր, Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 16, Արաբական աղբյուրներ, Գ, ներածությունը և բնագրերից թարգմանությունները պ.գ.դ., պրոֆեսոր **Ա. Տեր-Ղևոնդյանի**, Երևան, 2005 (այսուհետև՝ Արաբ մատենագիրներ Թ-Ժ դարեր), էջ 265:

²⁹ Արշիլի և եղբոր՝ Միհրի իշխանության շրջանում ավագության սկզբունքով էրիսթավների էրիսթավը Միհրն էր: Նա, արաբների դեմ ճակատամարտում մահացու վիրավորվելով, մահից առաջ իշխանությունը փոխանցեց եղբորը: Քանի որ Միհրն արու գավակ չունեք, այլ յոթ դուստր, իր տիրույթների կեսը տվեց Արշիլին և հանձնարարեց, որ նա մյուս կեսը բաժանի իր դուստրերին՝ նրանց ամուսնացնելով տեղական էրիսթավների կամ իշխանների հետ (մանրամասն տե՛ս *Карлис Цховреба*, 2008, էջեր 110-111):

³⁰ Տե՛ս *Карлис Цховреба*, 2008, էջ 111 *ქართლის ცხოვრება*, ტომი I, էջեր 241-243. *ქართლის ცხოვრება*, -2008, էջ 241- 242:

Փաստորեն, Տայքի մնացյալ մասն անցել է Աշոտ Մսակերին: Վերջինս, ինչպես նշվել է, Տայքում հիմնեց Կալմախ ամրոցը, որի տեղադրության վերաբերյալ վկայություն է պահպանել Վախուշտի Բագրատիոնը³¹: Դա հաստատում է, որ Տայքի կենտրոնական և արևելյան հատվածները (Կող գավառով) գտնվում էին Մսակերի տիրապետության ներքո, որի կենտրոնը, ըստ Վախուշտի, Կալմախն էր:

Աշոտ Բագրատունին իր հերթին վերակառուցեց և ամրացրեց Արտանուջ ամրոցը Կղարջքում՝ այն դարձնելով իր իշխանության կենտրոնը³²:

Եթե Աշոտ Մսակերը IX դ. սկզբին Խալիֆայության աջակցությամբ ձեռք բերեց Հայոց իշխանի տիտղոս, ապա Աշոտ Բագրատունին փոքր-ինչ ուշ վաստակեց Բյուզանդիայի հովանավորությունը: Նա կայսրից ստացավ «կուրապաղատի» տիտղոս³³՝ հիմք դնելով Կուրապաղատների ժառանգական իշխանությանը: Նրա իշխանության մասին Վարդան վարդապետը նշում է. «Կուրապաղատն Աշոտ տիրեաց ի Կաղրջաց մինչև ի Տփլիս, լեռնակողմամբն հանդերձ»³⁴: Վրաց մատենագիրներից Դավթի որդի Սմբատը վկայում է, որ Բագրատունի իշխանն արաբների դեմ պայքարից հետո հաստատվեց Շավշեթում ու Կղարջքում, իսկ հետո՝ սպանվեց Նիգալում³⁵:

Եզրահանգում. Փաստորեն, Վասակն ու Ատրներսեհը, երբ գնացին Կղարջք, վերջինս ստացավ Արտահանն ու Շավշեթը, իսկ նրա որդին ժառանգեց Ջուանշերի տիրույթները, այդ թվում՝ նաև Տայքի հիշյալ հատվածները: Այսինքն՝ Բագրատունիների վրացական իշխանության կազմում նախապես ընդգրկված էր Տայքի միայն հյուսիսային (առանց Կող գավառի) և հյուսիսարևմտյան հատվածը, իսկ մնացած մասն Աշոտ Մսակերի իշխանության կազմում էր:

Այսպիսով, պարզվում է, որ VIII դ. վերջին և IX դ. սկզբին Տայքը քաղաքականապես բաժանված էր Բագրատունի տան երկու ներկայացուցիչների միջև, և նրա մեծ մասը գտնվում էր Աշոտ Մսակերի տիրապետության ներքո: Այդ իրավիճակը պահպանվեց մինչև 826թ., երբ միևնույն տարում մահացան և՛ Աշոտ Մսակերը, և՛ Աշոտ Բագրատունին:

³¹ Царевич Вахушти, География Грузии, введение, перевод и примечания М. Джанашивили. Тифлис. -1904. сс. 180-181.

³² Տե՛ս Գեորգիյ Մերչուլ. Житие Григория Хандзтийского, перевод Н. Я. Марра (Тексты и разыскания по армяно-грузинской филологии, кн. VII), СПб., 1911 (այսուհետև՝ Գեորգիյ Մերչուլ), էջ 128: სუმბატ დავითის ძის ქრონიკა ტაო-კლარჯეთის ბაგრატიონთა შესახებ, გამოცემა მესამე, ტექსტი გამოსცა ვრცელი შესავლით, შენიშვნებით და ორი გენეალოგიური ტაბულით საქართველოს სსრ მეცნიერებათა აკადემიის ნამდვილმა წევრმა: ე. თაყაიშვილმა, თბილისი, 1949 (այսուհետև՝ სუმბატ დავითის ძის ქრონიკა), էջ 62: Toumanoff C., Studies in Christian Caucasian History, Georgetown University press, Georgetown, 1963, էջ 342:

³³ Տե՛ս Վարդան վարդապետ, էջ 77; Летопись Картли, էջ 48; Картлис Цховреба, -2008, էջ 140:

³⁴ Վարդան վարդապետ, էջ 78:

³⁵ Տե՛ս სუმბატ დავითის ძის ქრონიკა, էջ 62:

ВЛАДЕНИЯ КНЯЖЕСТВА БАГРАТУНИ В ТАЙКЕ И КХАРДЖКЕ В КОНЦЕ VIII – НАЧАЛЕ IX вв.

Назарян Л.

Ключевые слова: *Багратуни, Тайк, Кхарджк, Ашот Куропалат, Атрнерсех Багратуни, Васак, Ашот Мсакер (Мясоед), «Грузинские хроники», историк Джуаншер, Джуаншер Хосровуни (Хосровян).*

Исследование касается реалий заселения Багратуни в Тайке и Кхарджке. Потомки двух сыновей армянского князя Ашота Куйра (Слепого) Багратуни (732-748) – Ашот Мсакер и его дядя Васак и сын последнего Атрнерсех, поселились в Тайке и Кхарджке в одно время после поражения арабами в битве при Багреванде в 774-775 гг. В статье указаны принадлежащие им владения.

На основании изучения источников можно констатировать, что армянские князья сначала направились в Тайк, затем часть из них во главе с Васакком и Атрнерсехом перешла оттуда в Кхарджк. Остальные во главе с Ашотом Мсакером остались в Тайке, основав крепость Калмах.

Когда Васак и Атрнерсех отправились в Кхарджк, Атрнерсех получил Артахана и Шавшета, а его сын Ашот унаследовал владения Джуаншера Хосровяна, включая только северную часть (без кантона Кох) и северо-западную часть Тайка, а остальная часть находилась под властью Ашот Мсакер. Так продолжалось до 826 года, когда в том же году скончались Ашот Мсакер и Ашот Багратуни.

THE DOMAINS OF THE BAGRATUNI POWER IN TAYK AND KGHARJK IN THE LATE 8TH-EARLY 9TH CENTURY

Nazaryan L.

Key words: *The Bagratuni, Tayk, Kgharjk, Ashot Kuropalates, Atrnerseh Bagratuni, Vasak, Ashot Msaker (the Meat Eater), “Georgian Chronicles”, Juansher historian, Juansher Khosrovuni (Khosrovian).*

The study concerns the realities of the settling of the Bagratuni in Tayk and Kgharjk. The descendants of the two sons of the Armenian prince Ashot Kuyr (the Blind) Bagratuni (732-748) – Ashot Msaker and his uncle Vasak and the latter’s son Atrnerseh, settled in Tayk and Kgharjk at one time after the defeat by the Arabs in the Battle of Bagrevand in 774-775. The article specifies the domains belonging to them there.

Based on the examination of the sources, it can be stated that the Armenian princes had first headed to Tayk, then some of them, led by Vasak and Atrnerseh, passed from there to Kgharjk. The rest, led by Ashot Msaker, remained in Tayk, founding the Kalmakh Fortress.

When Vasak and Atrnerseh went to Kgharjk, Atrnerseh received Artahan and Shayshet, and his son Ashot inherited the domains of Juansher Khosrovian, including only the northern part (without Kogh canton) and the northwestern part of Tayk, and the rest was under the rule of Ashot Msaker. This situation lasted until 826, when Ashot Msaker and Ashot Bagratuni passed away in the same year.

Գրականություն

1. Ադոնց Ն., Դավիթ Կյուրոպաղատ // Պատմա-բանասիրական հանդես /ՊԲՀ/, 2002, թիվ 3:
2. Ադոնց Ն., Երկեր, հ. Ա, Երևան, 2006:
3. Արաբ մատենագիրներ Թ-Ժ դարեր, Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 16, Արաբական աղբյուրներ, Գ, ներածությունը և բնագրերից թարգմանությունները պ.գ.դ., պրոֆեսոր Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 2005:
4. Նդիագարյան Ա., Հայ Բագրատունիների տերությունը 885-905թթ. (Պատմաձխարհագրական ուսումնասիրություն), Երևան, 2011:
5. Նդիագարյան Ա., Բագրատունիների Վրացական թագավորության ձևավորման գործընթացը, մաս Ա // ՎԷԼ, Երևան, 2012, թիվ 4:
6. Նդիագարյան Ա., Բագրատունիների Վրացական թագավորության ձևավորման գործընթացը, մաս Բ // ՎԷԼ, 2013, թիվ 2:
7. Նդիագարյան Ա., Տայքի իշխանությունը Հայ Բագրատունիների տերության համակարգում // ՊԲՀ, Երևան, 2008, թիվ 3:
8. Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, (Փորձ VII դարի հայկական քարտեզի վերակազմության ժամանակակից քարտեզագրական հիմքի վրա), Երևան, 1963:
9. Թովմաս Մեծովեցի, Պատմագրություն, Աշխատասիրությամբ Լ. Խաչիկյանի, Երևան, 1999:
10. Խաչիկյան Լ., Հայ պատմագրության անհայտ էջերից // ՊԲՀ, 1972, թիվ 4:
11. Ճանաչեան Մ., Դավիթ Կիրապաղատ (պատմական ուսումնասիրություն), Վենետիկ, 1972:
12. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, կազմեցին՝ Թ. Խ. Հակոբյան, Սոս. Տ. Մելիք-Բախչյան, Հ. Խ. Բարսեղյան, հ. 4, Երևան, 1998:
13. Համառոտ Պատմութիւն Վրաց ընծայեալ Ջուանշերի պատմչի, Վենետիկ, 1884:
14. Հավաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի, լուսաբանեալ ի Վենետիկ, 1862:
15. Մարկուարտ Յ., Վրացական Բագրատունեաց ծագումը, գերմաներէնէ թարգմանեց Հ. Հապոզեան, Վիեննա, 1913:
16. Պատմաբանութիւն Ղևոնդեայ Մեծի վարդապետի Հայոց, Սատենագիրք Հայոց, հ. Զ, Ը. դար, Անթիլիաս-Լիբանան, 2007:
17. «Քարթլիի մատյան», թարգմանությունը՝ Վ. Մարտիրոսյանի և Հ. Մկրտումյանի, մաս Ա // Լրաբեր հասարակական գիտությունների, 1989, թիվ 9:
18. Տաբուրեզոսի իստորիոս նարկვეզեք, Թոմո II, Թբիլոսի, -1973.
19. სუმბატ დავითის ძის ქრონიკა ტაო-კლარჯეთის ზაგრატიონთა შესახებ, გამოცემა მესამე, ტექსტი გამოსცა ვრცელი შესავლით, შენიშვნებით და ორი გენეალოგიური ტაბულით საქართველოს სსრ მეცნიერებათა აკადემიის ნამდვილმა წევრმა ე. თაყაიშვილმა, თბილისი, - 1949.
20. ქართლის ცხოვრება, ტექსტი დადგენილი ყველა ძირითადი ხელნაწერის მიხედვით ს. ყაუხჩიშვილის მიერ, Թոմო I, Թბილისი, -1955.
21. ქართლის ცხოვრება, მთავარი რედაქტორი რ. მეტრეველი, თბილისი, -2008.
22. Вахушти Багратиони. История царства грузинского, перевел, снабдил предисловием, словарями и указателем Н. Т. Накашидзе. Тбилиси. -1976.
23. Георгий Мерчул, Жизнь Григория Хандзтийского, перевод Н. Я. Марра (Тексты и разыскания по армяно-грузинской филологии, кн. VII). СПб. -1911.
24. Картлис Цховреба. История Грузии. главный редактор Р. Метревели. Тбилиси. -2008.
25. Летопись Картли. перевод, введение и примечания Г. В. Цулая. Памятники грузинской исторической литературы. IV. Тбилиси. -1982.

26. Лордкипанидзе М., Из истории грузино-византийских взаимоотношений на грании X-XI вв., საქართველოს ფეოდალური ხანის ისტორიის საკითხები, II, თბილისი, -1972.
27. Матиане Картлиса. перевод, введение и примечания М. Д. Лордкипанидзе. Тбилиси. -1976.
28. Царевич Вахушти. География Грузии. введение, перевод и примечания М. Джанапшвили. Тифлис. -1904.
29. Histoire de la Géorgie depuis l'antiquité jusqu'au XIX^e siècle par M. Brosset. 1^{re} partie. S.-Petersbourg. - 1849.
30. Toumanoff C. Studies in Christian Caucasian History. Georgetown University press. Georgetown. -1963.

Ընդունվել է՝ 25. 09. 2021
Գրախոսվել է՝ 23. 10. 2021
Հանձնվել է տպ.՝ 15. 11. 2021

Տեղեկություններ հեղինակի մասին

Լիանա ՆԱԶԱՐՅԱՆ՝ պատմական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Միջին դարերի պատմության
բաժնի գիտաշխատող, էլ. հասցե՝ Lian_nazaryan@mail.ru

ԽԱՂՏԻՔ – ՀԱՄՇԵՆԸ

ՀԱՅՈՑ ԲԼՕՐՐԱՆԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍ

Լուսինե Սահակյան

Երևանի պետական համալսարան

Բանալի բառեր՝ *Խաղտիք, արմենոխալիք, Համշեն, Տայք, հայկական իշխանություն, Մամիկոնյան, Ամատունի, բանակաթեմ, ձեռագիր:*

Հոդվածում մանամասնորեն ներկայացվում է ՄԵԾ Հայքի հյուսիսարևմուտքում՝ Տայքի նահանգին սահմանակից Պարխարյան լեռնահովիտներում սփռված Խաղտիքի երկրամասը, որ դեռևս վաղնջական ժամանակներից եղել է հայոց բնօրրաններից մեկը: Խաղտիքում հայ ժողովուրդը կերտել է իր ռազմաքաղաքական, հոգևոր և մշակութային պատմությունը, որը պետք է հող նախապատրաստեր հետագայում այնտեղ Համշենի հայկական իշխանության կազմավորման համար¹:

Նախաբան. Խաղտիք աշխարհի պատմությունը կարող է նորանոր բացահայտումների: Երբեմն այն թյուր տպավորությունն է ստեղծվում, որ Համշենի իշխանության հիմնումն են հայության հոծ զանգվածները հաստատվել այս նահանգում: Այնինչ պատմական փաստերի ու XVI դարի համշենցի գրիչների վկայությունների վերլուծությունն ու համադրումը հաստատում են, որ Խաղտիքի նահանգն ու VIII դարում այնտեղ հիմնված Համշենի հայկական իշխանությունն անբակտեղի մաս են կազմել հայոց բնօրրանի և պետականության: Խաղտյաց կամ Պարխարյան լեռների՝ Քաջքարի լեռնաշղթայի գոգահովիտներում

¹ Մոյն ուսումնասիրությունը կատարվել է ՀՀ ԿԳՄՄՆ ԳԿ-ի Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային՝ «Օսմանյան կայսրությունից համշենահայերի գաղթը Ռուսաստան և Աբխազիա (XIX-XX դդ.)» նրանց տարածման ավագանը, ժողովրդագրությունը և ինքնության արդի խնդիրները» թեմայի շրջանակում (Ծածկագիր 21T-6A113):

սփռված հայոց Խաղտիքի նահանգի և հետագայում այնտեղ հիմնված Համշենի² գավառի պատմությունն առավել համակողմանի հասկանալու համար հարկավոր է պատկերացնել պատմաաշխարհագրական այն տիրույթը, որտեղ հնագույն ժամանակներից տեղի են ունեցել ռազմաքաղաքական իրադարձություններ և ճակատագրական են եղել տարածաշրջանի հայ ժողովրդի համար: Պատմական փաստերը ցույց են տալիս, որ Խաղտիքի նահանգի պատմությունն անհրաժեշտ է քննել Մեծ Հայքի ամբողջականության մեջ, որը վերականգնում է Խաղտիք աշխարհի նոր համապատկերը:

Խաղտիքը հայ ժողովրդի բնօրրանի անքակտելի մաս

Խաղտիքը կամ խաղտիների երկիրն ընկած էր Ճորոխ գետի և մինչև Տրապիզոն ձգվող Պարխարյան լեռների միջև, որին հույները կոչել են *Խալբ*, *Խալիբ* կամ *Արմենոխալիբու*: Հռոմեացի պատմագիր Պլինիոս Ավագը (61-113 թթ.) իր «Բնական պատմություն» ("Naturali Historia") աշխատության մեջ կարևոր տեղեկություններ է հաղորդում Սև ծովի ափամերձ շրջանների ու *արմենոխալիբների* վերաբերյալ:

Ն. Ադոնցը նշում է, որ Պլինիոսի հիշատակած *Արմենո խալիբները* (*Armenochalibes*) հավանորեն հայերին հարևան *Chal-di` հայ խալիբների* անվանումն է: Խաղտիան երբեմն հիշվում է *Հայոց աշխարհ*³: Թեև կա տեսակետ, որ խալիբների անունը ծագել է հունարեն *խալլուր - պրինս* բառից, այնուհանդերձ Ն. Ադոնցը կարծում է, որ այն Պոնտոսի որևէ հնագույն լեզվում նշանակել է մետաղ: Խաղտիքցիները հայտնի էին արծաթի և երկաթի արտադարությամբ⁴: Հույն պատմիչները խաղտիքցիներին բնութագրում են որպես երկաթի հայտնաբերողներ, և խաղտիք (խալիբ) անվանումը հիշատակում են ոչ թե որպես էթնոնիմ, այլ խաղտիքցիների մասնագիտություն⁵: Քսենոփոնը հաղորդում է, որ խալլուրները հռչակված հմուտ երկաթագործներ էին (*οἱ σιδηροτέκτονες χάλυβες*)⁶: Խաղտիքի

² Համշենի գավառը հարավից սահմանակից էր Սպեքի գավառի, արևելքից՝ Տայքի Ուրաղե (այժմ՝ Թորթումի գավառ) և Արայաց փոքր (Կիսկիմի կամ Բերդագրակի գավառ, այժմ՝ Յուսուֆեյիի գավառ), իսկ հյուսիսից՝ Ռիզեի (պատմական՝ Ռիզոն) և Աթինայի (պատմական՝ Աթենաս) գավառներին: Այսօր Համշենը վարչականորեն գտնվում է Թուրքիայի Ռիզեի նահանգում՝ ընդգրկելով Հեմշին (Համշեն), Չամլըհեմշին (նախկինում՝ Աշաղը Վիչե կամ Վիժե, Թարգմ. Ներքին Վիժե), Ֆընդըբլը (նախկինում՝ Վիչե կամ Վիժե), Փագար (նախկինում՝ Աթինա), Չայելի (նախկինում՝ Սափավրի), Իքիզդերե (նախկինում՝ Քուրա-ի Սեբա) գավառները:

³ Pliny, *Naturali Historia, Geography and Ethnography, Loeb Classical Library*, Translated by H. Rackham, Books 1-2. -1938. p. 350. Հմմտ. Ադոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, «Հայաստան» հրատ., Երևան, 1987, էջ 72: Ն.Ադոնցը նշում է, որ թեև Ստրաբոնն իր հիշատակած խալլուրներին ու խալլայներին նույնացնում է, այնուամենայնիվ դրանք տարբեր ցեղեր են և բնակվել են տարբեր շրջաններում՝ պատմական տարբեր փուլերում կրել են կոլլերի կամ հայերի ազդեցությունը:

⁴ Ադոնց Ն., նշվ. աշխ., էջեր 72-73:

⁵ Քսենոփոն, Անաբասիս, թարգմ.՝ Ս. Կրկյաշարյանի, ՀՄՄՀ հրատ., Եր., էջ 94: Տե՛ս նաև **Арутюнян Б.**, К вопросу об этнической принадлежности населения бассейна реки Чорох VII-IV вв. до н. э., «Պատմա-բանասիրական հանդես», № 1-2, Երևան, 1998, էջեր 234-235:

⁶ **Martirosyan H.** Etymological Dictionary of the Armenian inherited lexicon, Leiden Indo-European Etymological Dictionary Series, Edited by A. Lubotsky, Volume 8, Leiden-Boston, -2010, p. 384. Տե՛ս նույնի՝ Լեռնային ակունքի ֆառնը, Արշալույսի դիցուհին և գլխի ու մորթու գոհածեսը վիշապա-

երկաթի հանքերի գոյությունը հաստատում է նաև հույն աշխարհագրագետ և պատմագիր Ստրաբոնը. Սպերին հարևան Խաղտիքը հարուստ էր երկաթի ու արծաթի հանքերով, և այնտեղ ապրողները հիմնականում զբաղվել են հանքարդյունաբերությամբ⁷: Հունա-լատինական շատ հեղինակներ «ընդհանրական անեծք են հղում երկաթը հայտնագործած խայտուբներին, որոնք չարի ստեղծագործությունը հանել էին գետնի տակից»⁸: Բ. Հարությունյանի կարծիքով խայտուբներն ուրույն ցեղ էին, որոնց կարևոր զբաղմունքի պատճառով էր դուրս մղվել նրանց բուն ցեղանվանումը⁹, որն է **արմենոխալիբ**, *այսինքն՝ հայ* երկաթագործներ:

Հույն պատմիչները խաղտիքցիների բնակավայրերը տեղակայում են Սև ծովի հարավային ափերում՝ մոսինոյկների բնակավայրերից արևմուտք, տիբարեններից՝ արևելք¹⁰: Ն. Ադոնցի տեղադրությամբ՝ Խաղտիքը կամ խաղտիների երկիրն ընդգրկում էր Ճորոխից Տրապիզոնի և Պարխարյան լեռների միջև ընկած երկրամասը¹¹: Խաղտիքը, որ «յետոյ Բյուզանդեան Խալտիս բանակաթեան էր» դառնալու, Հ. Տաշյանը տեղադրում է «Մեծ ծովու եզերքը, մինչև Ճորոխի բերանն իսկ»¹²: Ինչպես գրում է Ա. Մելքոնյանը. «Իրականում Խաղտիքը, հաճախ մաս կազմելով Տայք աշխարհին, հնագոյն ժամանակներից եղել է հայաբնակ: Պատահական չէ, որ այստեղ ապրող առաջին բնակիչներին յոյներն անուանել են արմենոխալիբներ, այսինքն՝ Խաղտիք-Խալիբ երկրի հայ բնակիչներ»¹³: Նշենք, որ խաղտիքցիների հարևանությամբ՝ Սև ծովի առափնյա շրջաններում, ապրում էին կոլխեր, մոսքեր, տիբարներ, մակրոններ, խալդիներ, մոսինոյկներ կոչվող ցեղերը¹⁴: Այս երկրամասը կոչվել է նաև Ճանիք կամ Ճաների երկիր, քանի որ Ճաները¹⁵ խաղտիքցի-

կոթողների իմաստաբանական հենքում, Վիշապ քարակոթողները, «Գիտություն» հրատ., Երևան, 2015, էջ 146:

⁷ Տե՛ս նաև **Նահապետյան Ռ.**, Հունական և հռոմեական անտիկ սկզբնաղբյուրների ազգագրական տեղեկությունները Հայաստանի և հայերի մասին, ԵՃ հրատ., Երևան, 2018, էջ 94: Տե՛ս **Ստրաբոն**, Աշխարհագրություն, կազմեց և առաջաբանի հեղինակ Ս. Հովհաննիսյան, «Նահապետ» հրատ., Երևան, 2011, գիրք XVI, I, 24:

⁸ **Հարությունյան Բ.**, Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համարկարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, Մաս Ա, (Արևմտյան և հարավային աշխարհներ), ԵՃ հրատ., Երևան, 2001, էջ 91:

⁹ Նույնը:

¹⁰ **Арутюнян Б. А.** К вопросу об этнической принадлежности населения бассейна реки Чорох VII-IV вв. до н. э.

¹¹ **Ադոնց Ն.**, նշվ. աշխ., էջ 36:

¹² **Տաշեան Հ. Յ. վ.**, Տայք, դրացիք եւ Խոտորջուր, Պատմական-տեղագրական ուսումնասիրություն, հ.Ա, Վիեննա, Մխիթարեան տպ., 1973, էջ 72:

¹³ **Մելքոնյան Ա.**, Համշեն. Պատմաաշխարհագրական ակնարկ (16-20-րդ դարեր), Համշեն եւ համշենահայություն (գիտաժողովի նիւթեր), Համագրային Վահէ Սէթեան տպ., 2007, Երևան-Պեյրուք, 2007, էջ 30:

¹⁴ **Հերոդոտոս**, Պատմություն ինը գրքից, թարգմ. Ս. Կրկյաշարյանի, ՀՄՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1986, էջեր 410-411: **Ադոնց Ն.**, նշվ. աշխ., էջ 437:

¹⁵ Մակրոններին անտիկ աղբյուրները սովորաբար նույնացնում են Սան-Ճաների հետ (տե՛ս **Հարությունյան Բ.**, նշվ. աշխ., էջ 98:

ներին հարևան ցեղերից մեկն էին¹⁶: Խաղտիքի տեղագրությանն անդրադարձել է նաև Բ. Հարությունյանը՝ մերժելով վրաց գիտնականների՝ խաղտիքցիներին վրացակա-նացնելու ձգտումները¹⁷:

Մինչև Պոնտոսի թագավորության և Հռոմի կայսրության տարածաշրջանում երևալը, Խաղտիքի շրջանը եղել է Հայասայի, Վանի (Արարատի), հետագայում՝ Փոքր Հայքի թագավորությունների սահմաններում կամ գտնվել է նրանց ռազմաքաղաքական ազդեցության ոլորտում¹⁸: Ռուսա II-ի թողած սեպագիր արձանագրության մեջ Եփրատից անդին Խաղտիքի տարածքը հիշվում է Խալիտու (Halitu) անունով: Մասնագետներն այն նույնականացնում են Սև ծովի հարավային ափերի մերձպոնտոսյան և ոչ հեռու հարավարևելյան անկյունում գտնվող Խաղտիքի (Haltikh) հետ¹⁹:

Մ.թ.ա. XV դարի վերջին և XIV դարի սկզբին Հայասայի թագավորությունը կարճ ժամանակահատվածում վերոնշյալ վայրերում ձեռք է բերում առաջնային դիրք: Ուստի պատահական չէ, որ Խաղտիքի տարածքը ևս համարվում է հայ ժողովրդի կազմավորման օրրաններից մեկը²⁰: Կարևոր է նաև այն, որ Խաղտիք տեղանվան սեռականի կազմիչին համապատասխան *-h* և գերազանցապես հավաքական արժեքով *-p* (հ.ե. *-es*) (*-hp*) վերջավորությունները բնորոշ են բուն հայկական տեղանուններին: Հնդեվրոպական *-h* ածանցը հանդիպում է եզակի ու հոգնակի թվով, ինչպես օրինակ՝ Արծաթի, Երեբի, Հացիք: Ակադ. Գ. Ջահուկյան գրում է. «...հատկապես պետք է նշել այն դեպքերը, երբ անցում է կատարվում ժողովրդանունից կամ ցեղանունից տեղանուն՝ Հայք «հայեր» > Հայաստան, այսպես էլ՝ Անձաւացիք (Անձեւացիք)»²¹, Ականիք, Արշարունիք, Աղձնիք, Բզնունիք, Պալունիք, Պարսպատունիք, Սյունիք, Ռշտունիք Վարաժնունիք և այլն:

Ըստ Գ. Ջահուկյանի՝ *Haiša-* և *Հայ-ք* (սեռ. Հայոց) երկրանունները ծագում են հնդեվրոպական *h²eios-[*Haios-] (*s*-հիմք, չեզոք սեռ) «մետաղ, պղինձ, երկաթ» արմատից: Այսինքն՝ Հայասա նշանակում է «մետաղի կամ երկաթի երկիր», իսկ հայ ցեղանվան բնիմաստը՝ «մետաղի/երկաթի երկրի բնակիչ»²²: Հ. Մարտիրոսյանի մեկնաբանմամբ. «...նմանատիպ իմաստաբանական հենք ունի մերձակա տարածքների խալուր

¹⁶ Ադոնց Ն., նշվ. աշխ., էջ 79:

¹⁷ Հարությունյան Բ., նշվ. աշխ., էջ 90:

¹⁸ Տաշեան Հ. Յ. վ., Հայ բնակչությունը Սև ծովին մինչև Կարին, պատմական-ազգագրական հարեւանցի ակնարկ մը Մխիթարեան տպ., Վիեննա, 1921, էջեր 9-10: Տե՛ս նաև Վարդանյան Ս., Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը (կյութեր և ուսումնասիրություններ), ԵՃ հրատ., Երևան, 2009, էջեր 9-18:

¹⁹ Арутюнян Н.В. Корпус Урартских клинообразных надписей. Изд-во «Гитутюн». Ереван. -2001. с. 507.

²⁰ Капанцян Гр., Хайаса-колыбель армян. Этногенез армян и их начальная история. Изд. АН Арм. ССР. Ереван. -1947, էջեր 129-130.

²¹ Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն, Նախագրային շրջան, ՀՄՄՀ ԳԱ հրատ., Երևան., 1987, էջեր 415-419:

²² Jahukyan G., The Hayasa Language and its Relation to the Indo-European Languages. Archiv Orientalni, N 29. Prague, pp. 353-405. Տե՛ս նաև Մարտիրոսյան Հ., Լեռնային ակունքի ֆառեր..., էջ 146:

(նկատի ունի խալիբ - խաղտիբ - Լ. Ս.) ցեղանունը, որի հիմքում ընկած է հուն. *χάλυψ* «թրծած երկաթ, պողպատ» բառը²³:

Խաղտյաց կամ Պարխարյան լեռների համակարգում գտնվող Քաջքարի (Խաչքարի) լեռնաշղթայի և հետագայում այնտեղ կազմավորված Համշենի գավառի լեռները ևս հայտնի էին երկաթի հանքերով: Ղ. Ալիշանի տեղագրությամբ՝ «ի հիւսիսակողման պարուս են լերինք Պարխարայ, յորս բարձրն Խաչքար կամ Վարսամպէկ (որ է Վարշամակ), իբրէւ 1200²⁴ ի կողմանս Համշինու, այս բազուկ երկայնեալ պատի զհարաւով Պոնտոսի»²⁵:

Համշենում դաշտային ուսումնասիրությունների ժամանակ մեզ հաջողվել է բարձրանալ գավառի Քաջքարի լեռներում Ճմիլ (Ջիմիլ) գյուղի մոտ գտնվող *Ղեսիբ դաղը*, թարգմ.՝ *Երկաթի սար*, որտեղ պահպանվել են հնագույն ժամանակների հանքավայրերի բազմաթիվ հետքեր²⁶: Համշենի Եղնովիտ գյուղը ևս ժամանակին դարբնոցներ է ունեցել, որտեղ մշակել են մոտակա լեռներից բերված երկաթի հումքը²⁷: Այս գյուղից մոտավորապես 45 րոպե հեռավորության վրա գտնվող Լաքուպար կոչվող սարի շրջակայքը ևս պղնձի ու երկաթի հայտնի հանքատեղի է եղել: Մեր զրույցներում տեղացիները հաստատում էին, որ դարբնոցներ կային Համշենի գավառի Ջիլ քալեի (Ներքին բերդ) շրջակայքում (Չամլրհեմշին), Դեմիր դաղին առավել մոտ Սենոզի լեռնային գյուղերից մեկի՝ Քեդուտի (Գեդուտ, այժմ վերածվել է ամառանոցի և արոտավայրի) հարևանությամբ գտնվող վաղուց լքված Այդվար (Արտվար) հայկական գյուղում²⁸:

Ուշագրավ մի փաստ է արձանագրված Համշենին վերաբերող 1530 թ. Օսմանյան Աշխարհագիր մատյանում, որը լրացնում է հույն պատմիչների տեղեկությունները: Ժամանակին Համշենի իշխանության կենտրոն Վերին բերդում (Քալե-ի Բալա) օսմանյան զինատեսակների և այլ կենցաղային առարկաների շարքում, որպես հարկատեսակ, գրանցվել է տեղեկություն *Հայկական երկաթի՝ Ermeni demirü* ձուլածոների և բերդում ապրող դարբինների մասին²⁹: Հավանաբար Համշենում հայ դարբինների ձուլած երկաթն առանձնահատուկ է եղել, որի համար էլ ստացել է *Հայկական երկաթ* անունը: Ուստի կարծում ենք, թե խաղտիբցիների հնագույն բնակավայրերն ընդգրկել են Պարխարյան լեռնագոգերում սփռված Համշենի գավառի նախկին տարածքը: Այս առումով կարևոր է նաև հայերենի Համշենի բարբառի նմանությունը գրաբարին այնպիսի հազվագյուտ բառերով, որ ոչ մի բարբառի մեջ կարելի չէ գտնել³⁰: Գ.Ջահուկյանն իր V դա-

²³ Նույնը: Տե՛ս նաև **Martirosyan H.**, Etymological Dictionary of thr Armenian Inherited Lexicon, pp. 338-339.

²⁴ Նկատի ունի ոսնաչափ բարձրությունը (տե՛ս **Տաշեան Հ. Յ. վ.**, Տայք, դրացիք եւ Խոտորջուր, պատմական-տեղա- գրական ուսումնասիրութիւն, հ. Բ, էջ 79):

²⁵ **Ալիշան Ղ.**, Տեղագիր Հայոց Մեծաց, Մբ Ղազար, Վենետիկ, 1855, § 5, էջ 1:

²⁶ Տե՛ս **Սահակյան Լ.**, Համշեն գավառի նշանավոր Ճմիլ Ջիմիլ գյուղը ըստ հայ և օտար աղբյուրների //«Պատմաբանասիրական հանդես», Երևան, 2020, N 2, էջեր 113-125:

²⁷ **Öztürk Ö.** Karadeniz. Ansiklopedik Sözlük, *Heyamola Yayınları*, İstanbul, -2005, c. 1, pp. 350-351.

²⁸ **Սահակյան Լ.**, Համշենը հայկական ձեռագրերում, ԵՃ հրատ., Երևան, 2019, էջ 24:

²⁹ **BOA. TD., no 387 (H.937/M.1530)**, ss.732, 733.

³⁰ **Աճառյան Հ.**, Քննություն Համշենի բարբառի, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1947, էջ 12:

րի բարբառների դասակարգման աղյուսակում, որպես Արևմտյան կամ բյուզանդական բարբառների 7-րդ ենթաբարբառ, առանձնացնում է Խաղտիքահայ (Ճանիքահայ)՝ Համամաշեն > Համշենի ենթաբարբառը՝ «Ջանիք», «Ջեֆանոս», «Մալա» խոսվածքներով³¹: «Հայերենի բացատրական բառարանում» տրվող «խաղտալեզու» հասկացությունը նշանակում է «թանձր, կոպիտ հնչյուն ունեցող լեզու»³², որը, մեր կարծիքով, հենց բնորոշում է Խաղտիքի տարածաշրջանի հայերենի բարբառային հնչյունական յուրահատկությունը:

VIII դարում արաբական արշավանքների հետևանքով Արևելյան Հայաստանի Արագածոտնի և Կոտայքի գավառներից Շապուհ և Համամ Ամատունիների ու Վասպուրականի նահանգից այլ նախարարների հետ միասին տասներկու հազար հայեր տեղաշարժվում են դեպի Խաղտիք, և այնտեղ հիմնվում է Համշենի հայկական իշխանությունը: Լեզվական փաստերը ցույց են տալիս, որ Համշենի հայերենի բարբառն իր խոսվածքներով իսկապես խրթին է և իր հնչյունափոխական ու բառային, քերականական որոշ կառույցներով տարբերվում է վերոնշյալ հայկական բնակավայրերի բարբառներից: Անկասկած, տեղի է ունեցել այնտեղ հաստատված և տեղաբնիկ հայերի լեզվական միախառնում: Դեռ այսօր էլ կենսունակ այս բարբառում, որով խոսում են քրիստոնյա և Խոպայի իսլամացված համշենցիները, գերակա է վաղնջահայկական լեզվաշերտը:

Այսպիսով, վերոբերյալ փաստերը ցույց են տալիս, որ Խաղտիքի տարածքում հնագույն ժամանակներից հայեր են ապրել, ովքեր եղել են հմուտ երկաթագործներ՝ ստանալով **արմենոխալիք**, կամ ինչպես Հ.Տաշյանն է գրում՝ **հայախաղտիք** անվանումը³³:

Խաղտիքն օտար տիրապետությունների շրջանում

Մ.թ.ա. 585 թ. Մարաստանի և Լիդիայի միջև կնքված հաշտությամբ, Մարաստան փոքրասիական տիրույթը Հայաստանին միացվելով³⁴, հայկական սահմանը հասնում է Սև ծովի ափը, քանի որ այն տարածվում էր մինչև Փառնակիա՝ ծովային խայրութների երկիրը: Գ. Տիրացյանը նկատում է, որ «...ման վիճակը բացատրվում է Հայաստանի էթնոքաղաքական տարածմամբ դեպի արևմուտք ու հյուսիս արևմուտք... Այդ պատճառով

³¹ Ջահուկյան Գ., Հայ բարբառագիտության ներածություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1972, էջ 182: Տե՛ս նաև **Մահակյան Լ.**, Հայկական երգերը՝ բռնի կրոնափոխված համշենահայերի ինքնության հիշողություն և դրսևորում // Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, հ. V, ՀՀ ԳԱԱ հրատ., Երևան, 2008, էջ 244:

³² **Մալխասյանց Ս.**, Հայերենի բացատրական բառարան, ՀՍՍՌ հրատ., Երևան, 1944, էջ 234: Տես նաև **Հարությունյան Բ.**, Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, Մաս Ա, էջեր 95-96:

³³ **Տաշեան Հ. Յ. վ.**, Հայ բնակչությունը Սեւ ծովէն մինչեւ Կարին... էջ 18:

³⁴ **Дьяконов И.** История Мидии. М.-Л.-1956. с. 337, Տե՛ս մարական տերության քարտեզը, էջ 337: Տե՛ս նաև **Վարդանյան Ս.** Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը..., էջ 12:

Էլ Հայիսից արևելք գտնվող նվաճված տարածքը՝ ծովափը ներառյալ, պետք է նույնպիսի ճակատագիր ունենար և ենթարկվեր Հայաստանին»³⁵:

Աքեմենյան տիրակալ Դարեհ I-ի (մ.թ.ա. 550-486) վարչական բաժանումով Հայաստանից կազմվում է 13-րդը նահանգը, որի սահմաններն, ըստ Հերոդոտոսի, հասնում էին մինչև Սև ծով: Ս. Վարդանյանն իրավամբ նկատում է, որ սևծովյան տիրույթներն օտար տիրակալների կողմից ընկալվում էին որպես Հայաստանի անքակտելի մաս³⁶: Հ. Տաշյանի տեղագրությամբ, այն սկիզբ առնելով Կոտիորայից (Օրդու)³⁷, այս «Հարկաց շրջանի» կամ «Հայոց և դրացեաց» սահմանները հասնում էին մինչև «արդի Բաթումի մոտերը» Սև ծով³⁸:

Մ.թ.ա. 410 թ. հունական տասրհազարանոց բանակի նահանջը նկարագրելիս Խաղտիքի մասին արժեքավոր են հույն պատմիչ, գորավար Քսենոփոնի վկայությունները: Հունական զորքը հարավից դեպի հյուսիս հասնելու համար պետք է անցներ Պոնտական լեռներն ու Տրապիզոնը: Սատրապական Հայաստանի հյուսիսային սահմանները կազմող Խաղտիքի ու Տայքի շրջաններն ապստամբել էին և մեծ դժվարություններ էին ստեղծում նրանց համար: Քսենոփոնը հաղորդում է, որ Խաղտիքի և Տայքի բնակչությունը դեռևս հնագույն ժամանակներից աչքի է ընկել իր խիզախությամբ ու մարտունակությամբ: Խայտիքները (իմա՝ խաղտիքցիները - Լ. Ս.) և տառիները (իմա՝ տայեցիները - Լ. Ս.) որպես վարձկան, ծառայում էին Կյուրոս Կրտսերի պարսկական բանակում³⁹: Փասիս (Ճորոխ) գետի մոտակա լեռնանցքում հունական վարձկանների դեմ դուրս են գալիս խայտիքները, տառիներն ու փասիանները (իմա՝ բասենցիները - Լ. Ս.)⁴⁰:

Այս փաստը ցույց է տալիս նաև հիշյալ երեք հայկական ցեղերի մերձակցությունը և նրանց միջև ամուր ռազմական դաշինքի գոյությունը: Պատմիչի մեկ այլ արժեքավոր տեղեկությունը բացահայտում է խայտիքների ռազմունակությունն ու խիզախ բնավորության գծերը. «Սրանք, առավել քան բոլորը, ում երկրից անցել էին հելլենները, քաջ էին և ձեռնամարտի էին բռնվում...»⁴¹:

Խաղտիքը վարչականորեն եղել է նաև Փոքր Հայքի կազմում: Այդ մասին արժեքավոր է Ստրաբոնի վկայությունը. «Փառնակիայի (ներկայիս՝ Կիրեսուն - Լ. Ս.) ու Տրապիզոնի գավառներից վերև, մինչև Փոքր Հայք, գտնվում են Տիբարենացիք և Խաղտիք: Փոքր Հայքը բավական բերրի երկիր է: Ծովաց նման, սա էլ ունեցել է միջոտ իր բնիկ իշխանները, որոնք մերթ Մեծ Հայոց բարեկամ էին և մերթ ինքնագլուխ: Իրենց հնագանդ

³⁵ Տիրացյան Գ., Երվանդյան Հայաստանի տարածքը (մ. թ. ա. 6-րդ դ. վերջ, մ. թ. ա. 3-րդ դ. վերջ) // «Պատմա-բանասիրական հանդես», № 2, Երևան, 1981, էջ 69:

³⁶ Վարդանյան Ս., նշվ. աշխ., էջ 13:

³⁷ Տիրացյան Գ., նշվ. աշխ., էջ 70:

³⁸ Տաշյան Հ. Յ. վ., Հայ բնակչությունը Սև ծովին մինչև Կարին, էջ 10:

³⁹ Քսենոփոն, Անաբասիս, թարգմ. Ս. Կրկյաշարյանի, ՀՄՄՀ հրատ., Երևան, 1970, էջ 94:

⁴⁰ Քսենոփոն, էջ 99:

⁴¹ Քսենոփոն, էջ 103:

Էին Խաղտիք և Տիբարենները, այնպես որ իրենց իշխանությունը տարածվում էր մինչև Տրապիզոն և Փառնակիա»⁴²:

Որպես երկաթի հանքարդյունաբերողներ՝ կարելի է ենթադրել, որ խաղտիքցիները նյութապես կայուն էին և ապահով, որով էլ պայմանավորվել է նրանց կիսանկախ, հաճախ նաև՝ ապստամբ կեցվածքը: Նաև սա է պատճառը, որ օտար նվաճողները ձգտում էին տիրանալ երկաթի, պղնձի ու արծաթի հանքավայրերով հարուստ և ռազմավարական տեսանկյունից կարևոր Խաղտիք աշխարհին:

Ստրաբոնը, Արտաշես Ա - ի (մ.թ.ա. 189-160) օրոք Մեծ Հայքի (Armenia mair) սահմաններն ուրվագծելիս, հիշում է նաև «Բաց ի Կարին ու Դերջան գաւառներէ՝ որոնք յատկապէս կը շեշտուին, կը պարունակէր Պարխարի ստորոտը (Παρῳρετα του Παρτάρδρου), Կղարջքը» և այլն⁴³: Այդ ժամանակ հիմնվում են նաև Փոքր Հայքի և Ծոփքի թագավորությունները:

Խաղտիքը հետագայում թեև հայտնվում է Պոնտական թագավորության, ապա Հռոմի գերիշխանության ներքո, սակայն այնտեղ շարունակում էին կառավարել բնիկ իշխանները⁴⁴:

IV դարի սկզբին Սև ծովի ափամերձ շրջանները, մինչև Ղազիկա (Լազիկա), գտնվում էին Հայաստանի դքսի ենթակայության տակ: Բյուզանդիայի կայսր Կոստանդին Մեծը (306-337 թթ.) կայսրությունը բաժանում է դիոցեզների (թեմ) և նահանգների: Առաջին և Երկրորդ Հայքերը, Պողեմոնյան Պոնտոսի հետ միավորվելով, ենթարկվում էին Հայաստանի դուքս (dux Armenia) կոչվող պաշտոնյային⁴⁵: Այս փաստը վկայում է, որ հայոց վերնախավը Պողեմոնյան Պոնտոսում ևս ունեցել է ազդեցիկ դիրք: Հետագա դարերում բյուզանդական կայսրերը հաճախ էին օգտագործում տեղական հայ գործակալները ռազմական տարբեր արշավանքներում⁴⁶:

Խաղտիքը Մեծ Հայքի 16-րդ նահանգ և Մամիկոնյանների իշխանական տիրույթ

«Աշխարհացոյց»-ում Խաղտիքի չնշվելու հետևանքով այն դուրս է թողնվել Մեծ Հայքի վարչական բաժանումներից: Այս առումով խիստ արժեքավոր է Բ. Հարությունյանի հիմնարար ուսումնասիրությունը, որն ուղղում է պատմական այս բացթողումը: Ալեքսանդրացի հայտնի աշխարհագրագետ Կղավգիոս Պտղոմեոսի (100-160 թթ.) և IV դարի պատմիչ Ագաթանգեղոսի երկերում, ինչպես նաև «Աշխարհացոյց»-ում Մեծ Հայքի վարչական բաժանումները ներկայացնող փաստերի քննական համեմատության արդյունքում Բ. Հարությունյանը ցույց է տալիս, որ Հայոց թագավորությունը IV դարում վարչականորեն բաժանվում էր 20 աշխարհների (նահանգ), որոնց մեջ հիշվում են նաև

⁴² Ստրաբոն, քաղեց և թարգմանեց Հ. Աճառյանը, ԵՂ հրատ., Երևան, 1940, էջ 75: The Geography of Strabo, Loeb Classical Library edition, Vol. V. -1928. §28. p. 555.

⁴³ Տաշեան Հ. Յ. վ., Հայ բնակչությունը Մեծ ծովին մինչև Կարին..., էջ 11:

⁴⁴ Ստրաբոն, նույն տեղում: Տե՛ս նաև Լույսին՝ Geography of Strabo, XII գիրք, 3. § 29. p. 556 :

⁴⁵ Աղոնց Ն., նշվ. աշխ., էջ 112:

⁴⁶ Հայ ժողովրդի պատմություն, հ. II, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1984, էջեր 235-238, 271:

Արսեսան (Arsesa)՝ Արսիքը կամ Խաղտիքը⁴⁷: Բ. Հարությունյանը, հենվելով Ագաթանգեղոսի տեղեկությունների վրա, Մեծ Հայքի վարչական բաժանումներում՝ Խաղտիքը ներկայացնում է որպես 16-րդ աշխարհ (նահանգ)⁴⁸: «Աշխարհացոյց»-ում, սակայն, Մեծ Հայքը վարչականորեն բաժանված է եղել 15 նահանգների: Բ. Հարությունյանը, «Աշխարհացոյց»-ի հեղինակ համարելով Մովսես Խորենացուն, նշում է, որ պատմահոր համար, որպես հիմք, ծառայել են III դարի աշխարհագրերը (մարդահամարներ), որոնք ժամանակագրորեն մոտ են Պտղոմեոսի ապրած դարաշրջանին: Սակայն, «քանի որ այն գրվել է V դարում, նրանում տեղ են գտել V դարի վարչական իրողություններ», որի համաձայն, ինչպես գրում է Բ. Հարությունյանը, «Արսեսա-Խաղտիքը հատվածաբար միացվել է Ակիլիսենեին (նկատի ունի Եկեղիք գավառը - Լ. Ս.)՝ առաջ բերելով Բարձր Հայքը» և Բոլխենե Բուդխային կամ Բոքաս Բոխասին՝ մաս կազմելով աշխարհացոյցյան Տայքին⁴⁹:

Ինչպես նկատում է Ա. Եղիազարյանը, II դարում Տայքը կազմված էր երկու Բոխասի և Արսեսա-Խաղտիքի գորավարություններից: Խաղտիքի կենտրոն Արսայց փոքր գավառի տարածքը, Ագաթանգեղոսն ու Եղիշեն կոչել են Խաղտիք՝ «չնույնացնելով Պոնտական լեռներից հյուսիս գտնվող Խաղտիքին»⁵⁰: «Գահնամակում» բացահայտվում է շատ կարևոր մի փաստ ևս. IV դարի սկզբին Խաղտիքը՝ Բագրատունի իշխանական կուսակալով, եղել է հայ եկեղեցու եպիսկոպոսական աթոռներից մեկը: Այնտեղ Բագրատունիների ներկայությունը հիշվում է դեռևս Տրդատ I թագավորի օրոք⁵¹: Իսկ նման թեմեր կարող էին հիմնվել առավել հզոր և հայտնի նախարարական ընտանիքների տիրույթներում: Բացի այդ՝ այս վարչական միավորները պատերազմի ժամանակ պարտավոր էին մարտադաշտ դուրս բերել 500-ից ավելի զինվոր⁵²: Այսինքն՝ ակնհայտ է, որ Խաղտիքի վարչական միավորը ևս ունեցել է իր առանձին հայկական գործը:

Հայտնի է, որ Խաղտիքին, կամ ինչպես Բուզանդն է հիշատակում «յերկիրն Խաղտեաց» (նահանգ կամ գավառ)⁵³, սահմանակից Տայքը համարվում էր Մամիկոնյան տոհմի նախահայրենիքը⁵⁴, որի բարձրաբերձ լեռներում գտնվող բերդերն այս նախարարական տան համար ծառայել են որպես անառիկ ամրություններ: Բնական է, որ Խաղտիքի նահանգի սահմանակից տարածքը չէր կարող դուրս մնալ Մամիկոնյանների վերա-

⁴⁷ Տե՛ս **Հարությունյան Բ.**, Հայոց եկեղեցու թեմական բաժանումը Գրիգոր Լուսավորչի հովվապետության շրջանում // «Պատմա-բանասիրական հանդես», № 2, ՀՀ ԳԱԱ հրատ., 2000, էջեր 118, 120:

⁴⁸ **Հարությունյան Բ.**, նշվ. աշխ., էջ 121:

⁴⁹ **Հարությունյան Բ.**, նշվ. աշխ., էջ 118: Տայքի աշխարհացոյցյան նկարագրի մասին մանրամասն տե՛ս նաև **Եղիազարյան Ա.**, Մեծ Հայքի Տայք աշխարհն ըստ «Աշխարհացոյցի» // «Վեմ համահայկական հանդես», Զ (ԺԲ) տարի, թիվ 2 (46) ապրիլ-հունիս, 2014, էջ 44:

⁵⁰ **Ագաթանգեղոս**, Հայոց պատմություն, Աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Արամ Տեր-Ղևոնդյանի, ԵՊՀ, Երևան, 1986, էջեր 440, 441: Եղիազարյան Ա., նշվ. աշխ., էջ 40:

⁵¹ **Եղիազարյան Ա.**, նշվ. աշխ., էջ 46:

⁵² **Հարությունյան Բ.**, Հայոց եկեղեցու թեմական բաժանումը..., էջ 123:

⁵³ **Փավստոս Բուզանդ**, Հայոց պատմություն, ԵՊՀ հրատ., Եր., 1987, էջ 277:

⁵⁴ **Ադոնց Ն.**, նշվ. աշխ., էջ 343:

հսկողությունից: 387թ. Մեծ Հայքի՝ Հռոմի և Պարսկաստանի միջև բաժանումով, երկրում ստեղծվում է մի նոր իրավիճակ: Փոփոխվում են Հայաստանի սահմանները, վարչական և թեմական կացությունը: Պարխարյան լեռնագոգերում սփռված Արսեաց փոքր գավառը կամ Խաղտիքը, վարչականորեն ենթակա էր Տայքին⁵⁵: Արսեաց փոքրի հյուսիսարևմտյան սահմանագիծը հարավարևմտյան հատվածում ձգվում էր մինչև Քաջարի լեռնաշղթայի ամենաբարձր Վերջենբակ (ներկայումս՝ Վերջենիկ, 3711մ) լեռնագագաթը՝ հատելով Հունուտն ու Մպեր գավառը: Այսինքն՝ ընդգրկում է հետագայում այնտեղ ձևավորվող բուն Համշենի գավառը⁵⁶: Իսկ Մպեր գավառի հետ միասին նրան սահմանակից Խաղտիք աշխարհի արևմտյան հատվածն անցնում է Հռոմի տիրապետության տակ: Ըստ «Աշխարհացոյցի»՝ Մեծ Հայքի Տայք նահանգը բաղկացած էր ութ գավառներից՝ Կոդ, Բերդացփոք, Պարտիզացփոք, Ճակք, Բողխա, Ոքաղե, Ագորդացփոք, Արսեացփոք⁵⁷:

57-59թթ. Տայքն անջատվել էր Մեծ Հայքից, բայց Տրդատ I թագավորը վերամիավորում է այն: 230-ական թթ. հայոց թագավոր Տրդատ II Արշակունին Տայքի մեծագույն մասը ճանաչում է որպես Մամիկոնյանների ժառանգական կալվածք⁵⁸: Որոշ ուսումնասիրողներ այս տարածաշրջանում Մամիկոնյանների ներկայությունը հասցնում են ավելի վաղ ժամանակաշրջան: Ինչպես նկատում է Ա. Ակոպովը. «Տարօրինակ է, որ Մ. Խորենացին լռում է Տայքը Մամիկոնյանների պատկանելու մասին»⁵⁹: Այս հանգամանքը թերևս պայմանավորված էր Խորենացու՝ Մամիկոնյանների հանդեպ ունեցած կանխակալ վերաբերմունքով: Պատճառներից մեկը կարող էր լինել այն, որ 301 թ. քրիստոնեության ընդունումից հետո Տայքի Մամիկոնյան տոհմը, ի տարբերություն Տարոնի Մամիկոնյանների ճյուղի, սկզբնական շրջանում հավատարիմ է մնացել հայ աստվածներին, և առ ժամանակ անհայտանում է Հայաստանում տիրող քաղաքական կյանքից⁶⁰: Ազաթանգեղոսը գրում է, երբ Գրիգոր Լուսավորիչը Դարանաղյաց գավառում թագավորի (Տրդատ III) օժանդակությամբ սկսել էր իր քարոզչությունը, և «ղևերն այլակերպ ձևերով փախստական դարձան՝ ընկնելով Խաղտյաց կողմերը»⁶¹: Դներ ասելով՝ պատմիչը նկատի ունի հեթանոսներին: Հ. Տաշյանը կարծում է, որ Ազաթանգեղոսը նկատի է ունեցել Քաջերու լեռանց (Քաջքար), Եղիշեի հիշատակած «անլոյս աշխարհի կողմերը», կամ «աւելի արդի Համշենը»⁶²: Այս փաստը հաստատում է, որ Մամիկոնյաններին պատկանող

⁵⁵ Տե՛ս **Հարությունյան Բ.**, Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համարկարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 111: **Եղիազարյան Ա.**, Մեծ Հայքի Տայք աշխարհն ըստ «Աշխարհացոյցի», էջ 45:

⁵⁶ **Եղիազարեան Ա.**, Համամաշեն-Համշենի, համանուն իշխանության, Արտաշենի եւ Համշենի այլ բնակավայրերի տեղադրութեան շուրջ, «ՀԱԴԿ», թիւ 5, Անթիլիաս, 2009, էջ 510:

⁵⁷ **Ակոպով Ա.**, Տայք, վարչաժողովրդագրական պատկերը XVI դարի I երեսնամյակը, Պատմության ինստիտուտ, Երևան, 2013, էջեր 23-24:

⁵⁸ **Ակոպով Ա.**, նշվ. աշխ., էջ 23-24:

⁵⁹ Տե՛ս նույնը:

⁶⁰ **Հովհաննիսյան Գ.**, նշվ. աշխ., էջ 92:

⁶¹ **Ազաթանգեղոս**, Պատմութիւն հայոց, էջ 440: Տե՛ս նաև **Տաշեան Հ. Յ. վ.**, Տայք, դրացիք եւ Խոտորջուր, հ. Ա, էջ 72:

⁶² **Տաշեան Հ. Յ. վ.**, նույն տեղում:

Խաղտիքում հայերն առժամանակ հավատարիմ են մնացել հին աստվածներին, որտեղ ապաստանել էին հեթանոսները: Իսկ Մամիկոնյանների տոհմից հեռացած Մամգունի ճյուղը հաստատվում է Տարոնում և գործուն մասնակցություն է ունենում Հայաստանի քրիստոնեացման գործում⁶³: Մյուս պատճառը թերևս այն էր, որ Սահակ կաթողիկոսը Սահակ Բագրատունու մահից հետո ամեն ինչ արել է, որ նրա տեղը սպարապետի պաշտոնում նշանակվի Համազասպ Մամիկոնյանը⁶⁴՝ սպարապետության պաշտոնը վերադարձնելով Մամիկոնյան տոհմին:

Մամիկոնյաններն անհնազանդ էին և երբեմն ուղղակի գլխացավանք էին հայոց թագավորների համար⁶⁵: Սակայն Արշակ II թագավորին հաջողվում է Տայքի ամուր վայրերում գտնել և հաշտվել իր հոր հետ գծոված Մամիկոնյաններին՝ Վասակ Մամիկոնյանին նշանակելով հայոց սպարապետ⁶⁶: Ազդեցիկ հայկական այս տոհմը շարունակում է անձնուրաց և հավատարիմ մնալ հայոց արքունիքին, պետականությանն ու կրոնին: Ինչպես նշել ենք, հայ պատմագիտությունը վաղուց ճշտել է, որ պատմահոր հիշատակած ճենաց երկիրը կամ Բուզանդի նշած «ճենաց թագավորությունը» (այն պետք է հասկանալ որպես տեղական իշխանություն) ոչ թե հեռավոր Չինաստանն է, այլ Խաղտիքը կամ Ճենքճանիք-Ճանիքը⁶⁷: Եվ Մամիկոնյանները սերում էին ոչ թե Չինաստանից⁶⁸, այլ Մեծ Հայքի մաս կազմող Խաղտիք աշխարհից: Խորենացու հիշատակած «ճենագն» բնորոշումը ոչ թե պետք է ընկալել Ճաներից սերած, այլ բնիկ «...ճանիս որ են Խաղտիք» աշխարհի դուրս եկած ազնվական տոհ: Ազն, ըստ Գ. Զահուկյանի, ստուգաբանվում է բնածին, ազնվական, ազնիվ⁶⁹: Հակառակ պարագայում քիչ հավանական էր, որ օտար ծագման նախարական տոհմին վստահվեր արքայի դայակի ծառայությունը, և հայոց արքան համոզեր նրանց՝ վերադառնալու ու մասնակցելու «հայոց միաբանության», հայոց «բոլոր գործերին»՝ սերնդեսերունդ նրանց վստահելով հայոց սպարապետի պաշտոնը: Փավստոս Բուզանդն անթաքույց հիացմունքով գրում է, որ *բուն նախնյաց կարգի համաձայն՝ Մեծ Հայքի բոլոր գործերի վրա սպարապետության գործակալության գործում նշանակվում է աներկյուղ, քաջասիրտ, քաջանուն, բարեհամարավ, պատերազմական գործերում հաջողակ Մամիկոնյան ցեղից*:

⁶³ Մամիկոնյանների տիրույթների մասին տե՛ս **Վարդանյան Ա.**, Մամիկոնյան նախարարական տան տիրույթները, «Հայագիտության հարցեր», 1 (16), ԵՃ հրատ., Երևան, 2019:

⁶⁴ **Ադոնց Ն.**, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջեր 298-304:

⁶⁵ **Հովհաննիսյան Գ.**, Հայոց տերերը, «Հայրենիք» Ակումբ հրատ., Երևան, 2012, էջեր 93-94:

⁶⁶ Տե՛ս **Փավստոս Բուզանդ**, Հայոց պատմություն, էջ 69:

⁶⁷ «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացոյ յաւելուածովք նախնեաց», հրատ. Ա. Սուքրեան, Վենետիկ, 1881, էջ 27: «...ճանիս որ են Խաղտիք»: Տե՛ս **Ադոնց Ն.**, նշվ. աշխ., էջեր 447-448: Նկատենք, որ Ն.Ադոնցը, հենվելով Փավստոսի վրա գրում է, թե Մամիկոնյանները հպարտությամբ են խոսում իրենց նախնիների ճենաց աշխարհի թագավորությունից դուրս գալու մասին (տե՛ս էջ 447):

⁶⁸ Հայկական ժողովրդական հեքիաթներում Չինաստան տեղանունը բարբառային ձևով գրանցվել է Չինումաչին (տե՛ս **Հայրապետյան Թ.**, Արևելքը հայ ժողովրդական հեքիաթներում (առևտրատնտեսական և պատմամշակութային փոխառնչությունների շուրջ), (տե՛ս «Ոսկե դիվան հեքիաթագիտական հանդես», պրակ 3, 2011, էջ 10):

⁶⁹ **Զահուկյան Գ.**, Հայոց լեզվի պատմություն, էջ 512:

Այն, որ Խաղտիքը V դարում շարունակել է պատկանել գահերեց Մամիկոնյան տոհմին, հաստատում են նաև հետևյալ փաստերը. 451թ. Վարդանանց պատերազմի ընթացքում ապստամբական ամրություններից էր նաև Խաղտիքը: Պատմիչ Եղիշեն վկայում է, որ պատերազմի օրերին նախարարական հայտնի տներից եղբայրներ, որդիներ ու դուստրեր, իրենց բոլոր սիրելիների հետ ապաստանել էին ամուր վայրերում, մի մասը՝ Տնորիքի անմատչելի ամրոցներում, մի մասն էլ՝ Արցախի խիտ անտառներում, ոմանք՝ «անլոյս երկիրն Խաղտեաց»⁷⁰: Պատմիչ Ղազար Փարպեցին ևս հայտնում է շատ կարևոր տեղեկություն. «Եւ ոչ ժամանեալ ի գործ ժամու պատերազմին՝ առ վայր մի լեռամբ որ կոչի Պարխար, մերձ առ սահմանակցութիւնն Խաղտեաց, ամրագոյն տեղի մի գտեալ դադարեցին... և ընդ ծագել առաւօտուն պատրաստքն զինուք անկանէին ի վերայ այնց նորին ընկերաց Հմայեկայ Մամիկոնէի, ի գիւղն որ անուանի Որջնահաղ⁷¹ ի գաւառին Տայոց. քանզի ի ժամուն իջեալ էին ի յամրոցացն լերինն Պարխարայ...»⁷²: Տեղի ունեցած կատաղի ճակատամարտի ժամանակ Վարդանանց զինվորներին և նրանց միացած փախստականներին հաջողվում է ջարդել պարսից զորքից շատերին և ստիպել նրանց նահանջել: Սակայն զոհվում է հրամանատար Հմայակ Մամիկոնյանը, և ինչպես գրում է պատմիչը. «Անդ զկատարելիութեան պսակն ընդունէր, զոր երանելի սեպուհն Հմայեակ փափագանօք և բազում ցանկութեամբ խնդրէր՝ ժամանել զկնի սուրբ եղբօրն իւրոյ»⁷³: Իսկ ուխտապահ զինվորները, տեսնելով իրենց հրամանատարին զոհված, մեծ սուգ են անում. «զարհուրեալք անդէն ի վեր ի լեռնն դառնային ի Պարխար, հայթայթանս իմն առ չարի և սուգ պատճառանաց մեծի և ահաւոր հասելոյ տրտմութեան հաշուէին»⁷⁴:

Խաղտիքի և Մամիկոնյանների ուղղակի կապը հաստատում են նաև XVI դարի համշենցի գրիչները: Վարդանանց նահատակների աճյունները Խաղտիքի լեռներում, հետագայում Համշենի գավառի Եղնովիտ գյուղի Ս. Խաչիկ հոր վանքում ամփոփելու մասին է հաստատում XVI դարի համշենցի գրիչ Կարապետ երեցը: Իր ընդօրինակած տասներկու ձեռագրերի հիշատակարաններում գրիչ Կարապետը հպարտությամբ է գրում մեծաբժեք պատմական այս տողերը. «...և սուրբ Վարդանացս, որ աստ կան հաւաքեալ ի պահպանութիւն երկրիս և գաւարիս մերոյ», «...Սրբոց Վարդանացս, որ աստ կան հանգուցեալ ի պահպանութիւն գեղիս Եղովտա և երկրիս մերոյ Համշինոյ», «...ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնի եւ Սուրբ Միովնի եւ նշխարաց սրբոց Վարդանացս, որ աստ կան հաւաքեալ...», «...ի յերկրիս Համշինի, ի յանապատս Ս. Խաչիկ հաւրն հոգեւորի, ընդ

⁷⁰ Եղիշէ, Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Ի լոյս ածեալ բաղդաստութեամբ ձեռագրաց, աշխատասիրութեամբ Ե. Տէր-Մինասեանի, Երևան, 1957, էջ 45:

⁷¹ Որջնահաղ/Օշնաղ գյուղ-էրզրումի նահանգի Բերդագրակ գավառում, այժմ՝ Յուսուֆեյի գավառում, Ճորոխ գետի աջ ափին, ուր գտնվում են հին բերդի ավերակներ (տե՛ս Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 5, ԵՂ հրատ., Երևան, 2001, էջ 484):

⁷² Ղազար Փարպեցի, Պատմութիւն հայոց, Թուղթ առ Վահան Մամիկոնեան, քննական բնագիրը՝ Գ. Տէր-Մկրտչյանի և Ստ. Մալխասյանցի, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Բ. Ուլուբաբյանի, ԵՂ հրատ., Երևան, 1982, էջեր 174-176:

⁷³ Նույնը:

⁷⁴ Նույն տեղում, էջ 177:

հովանեալ Սբ Աստուածածնին և Սրբոց Վարդանանցս...», «...ի յերկիրս Համամաշինի, ի յանապատս Սբ Խաչիկ հարն հոգեւորի, ընդ հովանեալ Սբ Աստուածածնին և Սբ Վարդանանցս, որ աստ կան հաւաքեալ, ի պահպանութիւն երկիրս եւ գաւարիս մերոյ...»⁷⁵: Գրիչ Կարապետն օգտագործում է *հաւաքեալ, հանգուցեալ, եղեալ ստորոգյալները*: Հանգուցեալ նշանակում է «ննջեցեալքն զմարմնով ի տապանի»⁷⁶, այսինքն՝ վախճանվածների մարմինը զերեզմանում, *եղեալ*՝ «և կերպ դնելոյն զմարմինն ի տապանի»⁷⁷, և կամ, ինչպէս գրիչը շեշտում է, «...ի յանապատս Սուրբ Խաչիկ հարն և սուրբ Վարդանանցն նշխարաց, որ աստ եղեալ են ի պարծանք և ի պահպանութիւն գաւառիս Համաշինոյ, ընդ հովանեալ Սուրբ Աստուածածնին և Սուրբ Սիովնի»⁷⁸: Չի բացառվում, որ Համշենի Եղնովիտ գյուղի Սբ Խաչիկ հոր վանքում ժամանակին եղել է Մամիկոնյանների ընտանեկան շիրմատունը: Հաշվի առնելով վերոբերյալ փաստերը՝ Մամիկոնյանների ծագումը պէտք է փնտրել Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևմտյան հատվածում և ոչ այլուր:

Մամիկոնյան տոհմը մինչև VIII դարն ունեցել է մեծ ճանաչում ու վճռորոշ ռազմաքաղաքական ազդեցություն⁷⁹: VIII-IXդդ. արաբական արշավանքների շրջանում, հատկապես 774-775 թթ. արաբների դեմ ազատագրական կռիվների ժամանակ կրած ծանր պարտությունները թուլացրին Մամիկոնյանների դիրքերը, և ապստամբության դեկավարները ստիպված հեռացան Բյուզանդիա՝ Տարոնն ու Տայքը զիջելով Բագրատունի հայ նախարարներին⁸⁰:

774-775 թթ. Խաղտիքի նահանգն իր անմատչելիության շնորհիվ դառնում է ապաստան արաբական կեղեքումներից խուսափող հայ նախարարաների ու բնակչության համար: 788-790 թթ. Արևելյան Հայաստանից գաղթած Համամ Ամատունին Խաղտիքի Քաջքարի լեռնաշղթայում՝ Մամիկոնյան Համամ իշխանին պատկանող Տամբուր քաղաքի ավերակների վրա, հիմնում է Համշենի հայկական իշխանությունը⁸¹:

840 թ. Բյուզանդիայի երկրորդ մեծ հայկական Արմենիակոնի բանակաթեմից Խաղտիքը (Խալդիա) անջատվելով դառնում է առանձին բանակաթեմ⁸², որի կենտրոնը

⁷⁵ Սահակյան Լ., նշվ. աշխ., էջեր 179-180:

⁷⁶ Նոր բառգիրք հայկազգեան լեզուի, հ. Բ, տպարան Ս. Ղազար, Վենետիկ, 18, էջ 846:

⁷⁷ Նոր բառգիրք հայկազգեան լեզուի, հ. Ա, տպարան Ս. Ղազար, Վենետիկ, էջ 646:

⁷⁸ Տե՛ս նաև Արզումանյան Զավեն Ժ. Վրդ., Հայերեն ձեռագրեր Հյուսիսային Ամերիկայում, «Բանբեր Մատենադարանի», № 11, «Մատենադարան» հրատ., Երևան, 1973, էջ 387: Տե՛ս նաև Սահակյան Լ., Համշենը հայկական ձեռագրերում, էջեր 179-181:

⁷⁹ Ադոնց Ն., նշվ. աշխ., էջեր 145, 261: Տե՛ս նաև Հայ ժողովրդի պատմություն, հ. III, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան., 1976, էջ 107:

⁸⁰ Տե՛ս նաև Եղիազարյան Ա., Հայ Բագրատունիների տերությունը (885-908թթ.), ԵՃ հրատ., Երևան, 2011, էջ 28:

⁸¹ Այդ մասին մանրամասն տե՛ս Եղիազարյան Ա., Համամաշեն-Համշենի հիմնադրման ժամանակի շուրջ, Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, հ. VI, «Գևորգ-Հրայր» ՄՊԸ հրատ., Երևան, 2009, էջեր 218-228:

⁸² Գեղցեր Հ., Սկզբնաւորութիւնք Բուզանդեան Բանակաթեմերու դրութեան, հայերեն թարգմանությունը՝ Հ. Գարանիկեան, Մխիթարեան Տպարան, Վիեննա, 1903, էջ 108: Հայկական սովետական հանրագիտարան, հ. 2, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1975, էջ 95):

Տրապիզոն քաղաքն էր: Բյուզանդական աղբյուրներում այս նահանգը ևս հիշվում է որպես «Հայկական բանակաթեմ»⁸³ և պատերազմների ժամանակ դուրս էր բերում 4000-անոց զորք: Խաղտիքի բանակաթեմը գոյատևել է մինչև 1204 թ.՝ Տրապիզոնի կայսրության հիմնումը⁸⁴:

Համշենի իշխանությունը, որը Խաղտիա (Խաղտիք) բանակաթեմի մաս էր կազմում, 1204 թ. ընկնում է Բյուզանդիայի հյուսիսարևելյան շրջաններում ստեղծված Տրապիզոնի կայսրության (այն մեծ մասամբ ընդգրկում էր Պոնտոսի շրջանը) ենթակայության տակ և մինչ 1489 թ. յոթ դար պահպանում է իր կիսանկախ գոյությունը⁸⁵: Համշենի իշխանության, նրա պարոնաց պարոն իշխանների, Համշենի հոգևոր թեմի և գրչության կենտրոն լինելու մասին արժեքավոր են համշենցի գրիչների՝ 1422-1630 թթ. շուրջ երկու հարյուր տարի ընդգրկող հիշատակարանները: Մա մի ժամանակահատված էր, երբ Հայաստանում ու հարակից տարածքներում տեղի էին ունենում աշխարհաքաղաքական լուրջ իրադարձություններ: Գրիչների վկայություններից ակնհայտ է դառնում, որ քարաքոյունիւնների, քրզլըբաշների և օսմանյան նվաճողական քաղաքականությունից զերծ չի մնացել նաև հայոց Համշենի գավառը: Մինչև գավառի զանգվածային բռնի իսլամացումը (1710-1723 թթ.) Համշենը կարողանում է պահպանել իր ազգային դիմագիծը:

Եզրահանգում. Այսպիսով, հավաստի այս տեղեկությունները հաստատում են, որ Խաղտիք աշխարհի Պարխարյան լեռներն ու գոգահովիտները մինչև Համշենի իշխանության ստեղծումը մաս են կազմել հայոց բնօրրանի և պետականության, հետագայում դարձել Մամիկոնյանների ձեռնարկած իշխանության տարածք: Խաղտիքը նաև սրբատեղի էր, որտեղ ամփոփվել են Վարդանանց նահատակների աճյունները և Ղևոնդյան սրբերի մասունքները⁸⁶: Հակառակ դեպքում՝ Խաղտիքը չէր դառնա հայոց ապստամբական ամրություն և այնտեղ չէին ապաստանի իշխանական տներն ու չէին ամփոփվի Հմայակ Մամիկոնյանի ու նրա հետ նահատակվածների աճյունները: Պատահական չէ նաև, որ հայկական հին օրացույցի ամսօրերից մեկը կոչվել է Պարխար: Այսինքն՝ Պարխարի հայ լեռնաբնակները Մասիսի և Արագածի նման սրբացրել են նաև այս բարձրաբերձ լեռները⁸⁷: Հավելենք նաև, որ Համշենի տարածքն ընդգրկող Խաղտիքում հայերի ներկայությունը հաստատում է առավել կայուն լեզվաշերտ հանդիսացող վաղնջահայկական մանրատեղանունների դոմինանտությունը⁸⁸:

⁸³ **Կոստանդին Ծիրանածին**, Բյուզանդական աղբյուրներ, հ. 6, Թարգմանությունն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հ. Բարթիկյանի, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1970, էջ VIII: Հայ ժողովրդի պատմություն, հ. III, էջ 106:

⁸⁴ Տե՛ս **Սահակյան Լ.**, Համշենը հայկական ձեռագրերում, էջեր 38-46:

⁸⁵ **Սահակյան Լ.**, նշվ. աշխ., էջեր 66, 73-74:

⁸⁶ Ղևոնդյան սրբերի աճյունները ամփոփվել են Համշենի Խուժիկ կամ Խուժկա վանքում (տե՛ս **Սահակյան Լ.**, նշվ. աշխ., էջեր 99-106):

⁸⁷ **Անանիա Շիրակացի**, Մատենագրություն, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Գ. Աբրահամյանի, Գ. Բ. Պետրոսյանի, Երևան, 1979, էջ 257: Տե՛ս նաև **Վարդանյան Ս.**, Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը, էջ 18:

⁸⁸ Տե՛ս **Սահակյան Լ.**, Համշենի մանրատեղանունները, Hemşin Mikro Yer İsisimleri, Микротопонимы Амшена, ԵՊՀ, Երևան, 2012:

ХАХТИК-АМШЕН – ПРАРОДИНА И ЧАСТЬ ГОСУДАРСТВЕННОСТИ АРМЯН

Տաակյան Լ. Ս.

Ключевые слова: *Хахтик, арменохалиб, мастера обработки железа, Амшен, Тайк, армянское княжество, Мамиконян, Амадуни, фемы.*

Расположенная на северо-западе Мец Айка (Великой Армении) провинция Хахтик с древнейших времен упоминается как прародина арменохалибов – армян хахтикцев. Местность эта была известна своими железными рудниками. Коренные жители в основном занимались обработкой железа, чем и обусловлено их наименование – *халиуб*, или *халиб*, являющееся не этнонимом, а названием их профессиональной деятельности. Из-за богатых рудников этот район Пархарских гор стал постоянной мишенью для чужеземных захватчиков. В IV в. он отмечается как 16-я область Мец Айка, в V в. – часть провинции Тайк в составе области Арсяц пор. Рассматриваемые факты ведут корни Мамиконянов в страну Хахтик, и их происхождение следует искать на северо-западе Армянского нагорья. С древнейших времен до VIII века Хахтик вместе с Тайком являлись княжеским владением Мамиконянов. Не случайно неприступный Хахтик в V веке становится убежищем для армянских нахараров. Сопоставление свидетельств Лазара Парбеци и амшенских писцов XVI века подводит нас к выводу, что Хахтик был также священным местом: в селе Егновит образованного впоследствии на этой территории княжества Амшена были преданы земле останки мучеников Вардананц – Амаяка Мамиконяна и его соратников. Таким образом, провинцию Хахтик следует рассматривать как неотъемлемую часть Мец Айка. Происходившие здесь военно-политические, духовные и культурные события подготовили почву для основания здесь в XVIII веке армянского княжества Амшена, ставшего одним из духовных центров армян и армянской письменности.

KHAGHTIQ-HAMSHEN – THE ANCESTRAL HOMELAND AND PART OF THE STATEHOOD OF ARMENIANS

Sahakyan L. S.

Key words: *Khaghtiq, armenokhalib, iron workers, Hamshen, Tayq, Armenian Principality, Mamikonyan, Amatuni, themata.*

The Region of Khaghtiq, located in the north-west of Metz Hayq (Greater Armenia), had been mentioned from ancient times as the ancestral homeland of armenokhalibs, or Khaghtiq Armenians. The terrain was known for its iron mines. The aboriginal people were mainly engaged in processing iron ore, which is why they were called *khaljub* or *khalilb* – which word is not an ethnonym, but denotation of their professional occupation. For the abundance of iron ore on the slopes of the Parkhar mountains, this area had turned into a perpetual target for foreign invaders. In the IV century it was mentioned as the 16th district of Metz Hayq, and later, in the V century it was incorporated in the Taiq Region as part of the Province of Arsyats Por. The facts studied lead the Mamikonyans' roots toward the land of Khaghtiq, and their origination should be sought in the north-west of the Armenian Highlands. From ancient times until the VIII century, Khaghtiq with Taiq were the princely fiefdom of the Mamikonyans. It is not coincidental that the inaccessible region of Khaghtiq served as a refuge for Armenian nobles. Having juxtaposed the evidence by

Ghazar Parpetsi and the XVI century scribes of Hamshen, we arrive at the conclusion that Khaghtiq was also a sacred place: in the village of Yeghnovit of the Principality of Hamshen, formed subsequently on this territory, the remains of the Vardanants martyrs – Hmayak Mamikonyan and his comrades-in-arms – were interred. Thus, the Region of Khaghtiq should be viewed as an inalienable part of Metz Hayq. The military, political, spiritual and cultural events there had paved the way for founding the Armenian Principality of Hamshen in the XVIII century, which was to become one of the spiritual centers of Armenians and Armenian writing.

Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, Աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Արամ Տեր-Ղևոնդյանի, ԵՃ հրատ, Երևան, 1986:
2. Ադոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, «Հայաստան» հրատ., Երևան, 1987:
3. Ալիշան Ղ., Տեղագիր Հայոց Մեծաց, Մր Ղազար, Վենետիկ, 1855:
4. Ակոբյով Ա., Տայք, վարչաժողովրդագրական պատկերը XVI դարից մինչև XIX դարի I երեսամյակը, Պատմության ինստիտուտ, Երևան, 2013:
5. Աճառյան Հ., Քննություն Համշենի բարբառի, ՀՄՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1947:
6. Արզումանյան ծ. վրդ. Զ., Հայերեն ձեռագրեր Հյուսիսային Ամերիկայում // «Բանբեր Մատենադարանի», № 11, «Մատենադարան» հրատ., Երևան, 1973, 377-398 էջ:
7. Գեղցեր Հ., Սկզբնաղբյուրներ Բուզանդեան Բանակաթեմերու դրութեան, հայերեն թարգմանությունը՝ Հ. Գարանֆիլեան, Մխիթարեան Տպարան, Վիեննա, 1903:
8. Եղիազարյան Ա., Հայ Բագրատունիների տերությունը (885-908թթ.), ԵՃ հրատ., Երևան, 2011:
9. Եղիազարյան Ա., Մեծ Հայքի Տայք աշխարհն ըստ «Աշխարհացույցի» // «ՎԷՄ համահայկական հանդես», Զ (ԺԲ) տարի, թիվ 2 (46) ապրիլ-հունիս, 2014, 35-61 էջեր:
10. Եղիազարյան Ա., Համամաշեն-Համշենի, համանուն իշխանության, Արտաշենի եւ Համշենի այլ բնակավայրերի տեղադրութեան շուրջ // «Հասկ», Անթիլիաս, № 5, 2009, 503-511 էջեր:
11. Ա. Եղիազարյան, Համամաշեն-Համշենի հիմնադրման ժամանակի շուրջ // Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, հ. VI, «Գևորգ-Հրայր» ՄՊՐ հրատ., Երևան, 2009, 218-228 էջեր:
12. Եղիշե, Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Ի լոյս ածեալ բաղդատութեամբ ձեռագրաց, աշխատասիրութեամբ Ե. Տեր-Մինասեանի, Երևան, 1957:
13. Կոստանդին Ծիրանածին, Բյուզանդական աղբյուրներ, հ. 6, Թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հ. Բարթիկյանի, ՀՄՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1970:
14. Հայ ժողովրդի պատմություն, հ. III, ՀՄՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1976:
15. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 5, ԵՃ հրատ., Երևան, 2001:
16. Հայրապետյան Թ., Արևելքը հայ ժողովրդական հեքիաթներում (առևտրատնտեսական և պատմամշակութային փոխառնչությունների շուրջ) // «Ոսկե դիվան, հեքիաթագիտական հանդես», պրակ 3, 2011, 10-25 էջեր:
17. Հայկական սովետական հանրագիտարան, հ. 2, ՀՄՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1975:
18. Հարությունյան Բ., Հայոց եկեղեցու թեմական բաժանումը Գրիգոր Լուսավորչի հովվապետության շրջանում // «Պատմա-բանասիրական հանդես», № 2, ՀՀ ԳԱԱ հրատ., 2000, 108-127 էջեր:
19. Հարությունյան Բ., Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համարկարգն ըստ «Աշխարհացույց»-ի, Մաս Ա (Արևմտյան և հարավային աշխարհներ), ԵՃ հրատ., Երևան, 2001:
20. Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից, թարգմ. Ս. Կրկյաշարյանի, ՀՄՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1986:

21. Հովհաննիսյան Գ., Հայոց տերերը, «Հայրենիք» Ակումբ հրատ., Երևան, 2012:
22. Մալխասյանց Ս., Հայերենի բացատրական բառարան, ՀՍՍՌ հրատ., Երևան, 1944:
23. Մարտիրոսյան Հ., Լեռնային ակունքի ֆառնը, Արշալույսի դիցուհին և գլխի ու մորթու զոհածեղ վիշապակոթողների իմաստաբանական հենքում // Վիշապ քարակոթողները, «Գիտություն» հրատ., Երևան, 2015, 136-171 էջեր:
24. Մելքոնյան Ա., Համշեն. Պատմաաշխարհագրական ակնարկ (16-20-րդ դարեր) // Համշեն եւ համշենահայություն (գիտաժողովի նիւթեր), Համազգային Վահե Մելքեան տպ., 2007, Երևան-Պեյրուֆ, 2007, 25-37 էջեր:
25. Նահապետյան Ռ., Հունական և հռոմեական անտիկ սկզբնաղբյուրների ազգագրական տեղեկությունները Հայաստանի և հայերի մասին, ԵՂ հրատ., Երևան, 2018:
26. Նոր բառգիրք հայկազեան լեզուի, տպարան Ս. Ղազար, հ. Ա, Վենետիկ, 1836, հ. Բ, Վենետիկ, 1837 :
27. Շիրակացի Անանիա, Մատենագրություն, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Գ. Աբրահամյանի, Գ. Բ. Պետրոսյանի, Երևան, 1979:
28. Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն, Նախագրային շրջան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1987:
29. Ջահուկյան Գ., Հայ բարբառագիտության ներածություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1972:
30. Սահակյան Լ., Հայկական երգերը բռնի կրոնափոխված համշենահայերի ինքնության հիշողություն և դրսևորում, Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, հ. V, ՀՀ ԳԱԱ հրատ., Երևան, 2008 , 243-260 էջեր:
31. Սահակյան Լ., Համշենը հայկական ձեռագրերում, ԵՂ հրատ., Երևան, 2019:
32. Սահակյան Լ., Համշեն գավառի նշանավոր ճմիր Ջիմիլ գյուղը ըստ հայ և օտար աղբյուրների // «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 2020, N 2, 113-125 էջեր:
33. Վարդանյան Ա., Մամիկոնյան նախարարական տան տիրույթները, Հայագիտության հարցեր, 1 (16), ԵՂ հրատ., Երևան, 2019:
34. Վարդանյան Ս., Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը (կյութեր և ուսումնասիրություններ), ԵՂ հրատ., Երևան, 2009:
35. Տաշեան Հ. Յ. վ., Հայ բնակչությունը Սեւ ծովին մինչև Կարին, պատմական-ազգագրական հարեւանցի ակնարկ մը, Մխիթարեան տպ., Վիեննա, 1921:
36. Տաշեան Հ. Յ. վ., Տայք, դրացիք եւ Խոտորջուր, Պատմական-տեղագրական ուսումնասիրություն, հ. Ա, Վիեննա, Մխիթարեան տպ., 1973:
37. Տիրացյան Գ., Երվանդյան Հայաստանի տարածքը (մ.թ.ա. 6-րդ դ. վերջ, մ.թ.ա. 3-րդ դ. վերջ) // «Պատմա-բանասիրական հանդես», № 2, Երևան, 1981, 68-84 էջեր:
38. Ստրաբոն, Աշխարհագրություն, կազմեց և առաջաբանի հեղինակ Ս. Հովհաննիսյան, «Նահապետ» հրատ., Երևան, 2011:
39. Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, թարգմանությունը և ծանոթագրությունները Ստ. Մալխասյանցի, ԵՂ հրատ., Երևան, 1987:
40. Քսենոփոն, Անաբասիս, թարգմ., Ս. Կրկյաշարյանի, ՀՍՍՀ հրատ., Երևան, 1970:
41. Ստրաբոն, քաղեց և թարգմանեց Հ. Աճառյանը, ԵՂ հրատ., Երևան, 1940:
42. Арутюнян Б. К вопросу об этнической принадлежности населения бассейна реки Чорох VII-IV вв. до н. э //, «Պատմա-բանասիրական հանդես», № 1-2, Երևան, 1998:
43. Арутюнян Н. В. Корпус Урартских клинообразных надписей. Изд-во "Титутпон". Ереван. -2001.
44. Дьяконов И. История Мидии. Изд-во Академии наук СССР. -Л. -1956.
45. Капанцян Гр. Хайаса-колыбель армян, Этногенез армян и их начальная история. Изд. АН Арм. ССР. Ереван. -1947.

46. Jāhukyan G. The Hayaša Language and its Relation to the Indo-European Languages. Archiv Orientalní. N 29. Prague. 353-405 pp..
47. Martirosyan H. Etymological Dictionary of the Armenian inherited lexicon, Leiden Indo-European Etymological Dictionary Series, Edited by A. Lubotsky, Volume 8, Leiden-Boston. -2010.
48. Pliny, Naturali Historia, Geography and Ethnography, *Loeb Classical Library*. Translated by H. Rackham. Books 1-2. -1938.
49. The Geography of Strabo, Loeb Classical Librery edition. Vol. V. -1928.
50. Başbakanlık Osmanlı Arşivi, Tahrir Defterleri, no 387 (H.937/M.1530).
51. **Öztürk Ö.**, *Karadeniz, Ansiklopedik Sözlük*. c. 1. *Heyamola Yayınları*. İstanbul.- 2005.

Ընդունվել է՝ 02. 09. 2021
Գրախոսվել է՝ 22. 10. 2021
Հանձնվել է տպ.՝ 15. 11. 2021

Տեղեկություններ հեղինակի մասին

Լուսինե ՄԱՀԱԿՅԱՆ, բանասիրական գիտությունների թեկնածու,
Երևանի պետական համալսարանի թյուրքագիտության ամբիոնի դոցենտ,
Էլ. հասցե՝ lsahakyan@ysu.am, lkhastur@yahoo.com

ՎԵՆԵՏԻԿԻ ՄԽԻԹԱՐՅԱՆՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆՆ
ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ

Գևորգ Այվազյան

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

Բանալի բառեր՝ վերածնունդ, պետություն, մշակույթ, Եվրոպա, Անի, միաբանություն:

Հոդվածում քննարկվում է Մխիթարյանների պատմական առաքելությունից բխած եղանակներով Ալեքսանդրապոլի հասարակական կյանքի ազգային պարունակության հարստացման գործընթացը: Հստակեցվում է, որ դավանական տարամերժությունները և անմիաբանության համախտանիշը Հայաստանի հզորացման և բարգավաճման գործի մրցակիցներ չեն եղել:

Նախաբան. 1717թ. սեպտեմբերի 8-ին Վենետիկի մոտ գտնվող Սբ Ղազար կղզում հաստատվելուց հետո Մխիթարյան կաթողիկե¹ հայ բենեդիկտյան² վանականների միաբանության թափանիվն ուժ է հավաքել և գլորվելով շարժման մեջ դրել Գաղափարական կամ Հոգևոր Հայաստանի տեսլականը: «Աշխարհուրաց»³ ժողովրդապետների քաղաքական ենթագործունեության այդ հիմքը կենսունակ է նաև մեր օրերում, որովհետև Հայկական լեռնաշխարհը դեռ բռնազավթված է օտար պետությունների կողմից:

¹ Հնում գործածվել է *կաթոլիկ* ձևը:

² Սբ Բենեդիկտ Նուրսիացու անվան կաթոլիկ միաբանություն, որը հիմնվել է VI դարում Իտալիայի Սուբի(յ)ակո քաղաքում և Մոնտեկասսինոյում: Տե՛ս <https://www.osb.org/our-roots/saint-benedict/> (23.07.2021).

³ **Այվազովսքի Գ.**, Ուրազիծ ոգույ եւ ընթացից Մխիթարեան միաբանութեան Վենետկոյ, Փարիզ, 1857, էջ 20:

Մխիթարյան ուխտի ավանդը հայ մշակույթի զարգացման գործում գնահատել և ցույց են տվել առաջին հերթին հենց իրենք՝ միաբանները: Այդ խոհածին ներդրումն անտարբեր չի թողել և ոչ մի հայ լուրջ գիտնականի, եկեղեցականի կամ հասարակական գործչի: Հոդվածում ներկայացրել ենք ուխտապահների Հայաստանի վերածնության մոդելը և XIX դարում դրա տեղայնացումն Ալեքսանդրապոլի գավառում: Շոշափել ենք նաև Հայ կաթողիկե համայնքի և Սբ Ղազարի կրթամշակութային կապերին վերաբերող հարցերը:

Ազգի բարօր ապրելու ձգտումը պաշտպանելու ամենայն հայոց կաթողիկոսներ Ստեփանոս Մալմաստեցու (1545-1567), Միքայել Մեբաստացու (1567-1576) և Հակոբ Ջուղայեցու (1655-1680) բանագնացությունների ջանքերը,⁴ եվրոպական և պարսկական իշխանական (արքունական) պալատներում դիվանագետ Իսրայել Օրու (1659-1711) կատարած դժվարին աշխատանքը Մխիթարյանների մոտ հասունացնում են հասարակության սովոր խմբերի հայ ազատագրական պայքարի հորձանուտ ներքաշելու գործելակերպ: Նրանց հավաքական միտքը ծնում է արտաքին աշխարհին հակազդելու և նույն աշխարհից ազդվելու կառուցվածքային նոր վիճակներ:

Շվեդական թագավորության և հյուսիսեվրոպական պետությունների դաշինքի միջև ընթացող Հյուսիսային պատերազմի (1700-1729) ավարտից հետո առձակատող կողմերից մեկը՝ Ռուսական թագավորությունը, իր սահմաններից դեպի հարավ ընդլայնվելու հնարավորություն է ստեղծում՝ ձեռնարկելով կասպիական արշավանքը (1722-1723): Ռազմաքաղաքական առաջխաղացումը դրական սպասելիքներ է ձևավորում հայության շրջանում: Ակտիվանում են Սյունիք և Արցախ լեռնագավառները (1722-1730): Պարսկահպատակ մահմեդականների և օսմանյանների դեմ տեղաբնակների զինված պայքարը գլխավորում էին գորապետ Դավիթը (1669-1728) և Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանը: Միաբանության հիմնադիրը՝ Իտալիայում շինարարական և գիտաստեղծ աշխատանքով զբաղված Մխիթար Մեբաստացին (1676-1749), այդ նվիրական գործին առնչակից փաստերը վավերագրելով, փորձել է Հայաստանը վեր բարձրացնել արագ մոխրացող իրականությունից: Նրա հանձնարարությամբ երիտասարդ միաբան Ղուկաս Մեբաստացին (1709-1752) դեպքերի ականատես Ստեփանոս Շահումյանից (1702-1782) գրառել է Սյունյաց դյուցազնամարտի դրվագները⁵:

Մխիթարի և բախտակիցների գործունեությունն այդ ընթացքում Մանուկի (Իմա՝ Հայոց պետության- Գ.Ա.) ծննդի սպասում էր:⁶

XIX դ. երևակել է միաբանների «փօլիթիքան»⁷: Երբ ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմները Հայաստանի վաղեմի հզորությունը վերագտնելու քաղաքական և զինական հարմար իրադրություններ են ստեղծել և ինքնաբացահայտման նոր

⁴ Tololyan Khachig, Textual Nation: Poetry and Nationalism in Armenian Political Culture. Intellectuals and the Articulation of the Nation. Edited by Ronald Grigor Suny and Michael D. Kennedy. Ann Arbor: The University of Michigan press. -1999. p. 89.

⁵ Մեբաստացի Ղ., Դավիթ-Բեկ կամ Պատմություն Ղափանցոց, Երևան, ԵՃ. հրատ., 1992, էջ 112:

⁶ Խորհրդանշական կերպով վանահայր Մխիթար Մեբաստացու ավագանի անունն էլ Մանուկ էր:

⁷ Երիցեանց Ա., Վենետիկի Մխիթարեանք, Թիֆլիս, 1883, էջ 36:

լիցքեր հաղորդել հայությանը, Մբ Ղազարի և Պաշտպան Մբ Աստվածածնի վանքի (Վիեննա) ճգնավորների ազգասիրությունը պայթել է: Շարադրելով կամ փոխադրելով Ռուսաստանի (1836՝ Գաբրիել Այվազովսկի, 1856՝ Մեսրոպ Ծաղիկեան), Օսմանյան կայսրության (1841՝ Գաբրիել Այվազովսկի), Ֆրանսիայի (1849՝ Աբրահամ Ճարեան) և Անգլիայի (1862՝ Ժյուլ Ռայմոն Լամե-Ֆլեորի) պատմությունները՝ նրանք ազգին հուշել են, որ Հայկական հարցի լուծումն ամրակայված է Եվրոպայում ձևավորված քաղաքատնտեսական հարաբերություններին:

Սոցիալ-մարդաբանական «հայ» տեսակի պահպանության և զարգացման Մխիթարյանների պատումի բովանդակությունը կարելի է ներկայացնել պատմաճանաչողության խթանման հետևյալ հորիզոնական սխեմայով. մայրենի լեզվագիտություն – նախնայաց և օտարազգի մատենագիրների ստեղծագործությունների թարգմանություն և հրատարակություն (վերահրատարակություն), բանաստեղծությունների, երգերի, դասագրքերի, տարեգրքերի և ամսագրերի հրատարակություն, դպրոցների բացում, թատերգությունների բեմադրություն: Ընդ որում, թատերգությունների նյութերում հեղինակները հոլովել են պատմական ժամանակը և իմաստը. Արշակունյաց Հայաստան, Բագրատունյաց Հայաստան, Վասպուրականի թագավորություն և այլն⁸:

1701թ. սեպտեմբերի 8-ին Կ.Պոլսում ծնունդ առած միաբանության առանձնության մեջ մտավոր լույս ճառագելու նախադեպը XIX դ. 40-ական թվականներից հրապուրել է Հայաստանի հոգևոր-հասարակական գործիչներին: Նրանք մտածել են Մբ Էջմիածնի (IVդ.), Սևանա թերակղզու (IVդ.) և Հառիճի (VIIդ.) վանական համալիրներն այդպիսի օջախներ դարձնելու մասին: Ալեքսյուցի երիտասարդներն, օրինակ, տուրք տալով նման մտայնությանը, 1850 թ. ստեղծել են Հառիճայի (Հառիճի) վանական ընկերությունը:⁹ 1868-1874 թթ. այդ ուղղությամբ բուռն աշխատանքներ են կատարվել Մայր Աթոռում, որոնց պսակը դարձել են Մբ Գևորգյան Հոգևոր ճեմարանը և Հնությունների թանգարանը: Կարծեք թե Մխիթարյանների գործունեության լուսապատճենն է ընկած ռոմանտիզմի դարաշրջանի հարյուրավոր հայկական բարեգործական-մշակութային ընկերությունների գաղափարաբանության հիմքում:

Անիագիտության և անիացավության խնդիրների պարզաբանման, Մբ Ղազարում տպված գրքերի սպառման, գործնական նամակագրության և փոխայցելությունների տեսքով Ալեքսանդրապոլում մշտապես զգացվել է Մխիթարյանների հոգևոր ներկայությունը:

Անի-Ալեքսանդրապոլ. պատմական Շիրակ գավառի այդ խոնարհ և ժրաջան հարսներն իրար թև տալով աշխարհասփյուռ հայությանը հույս են ներշնչել, որ կամաց-կամաց վերամիավորվելու են Մեծ Հայքի 15 նահանգները: Անին, որ խորհրդանշում էր Հայաստանի փառքը, կաթողիկե հայ միաբանության մտասնեռուն գաղափարներից էր

⁸ **Սարգիսեան Բ.**, Երկհարիւրամեայ գրականական գործունեութիւն եւ նշանաւոր գործիչներ Վենետիկոյ Մխիթարեան միաբանութեան, Վենետիկ, Մբ Ղազար, 1905, էջեր 185-220:

⁹ **Մխիթարեանց Աբ.**, Պատմութիւն Մենաստանին Հառիճոյ ի Շիրակ, Տփլիս, ի տպարանի Յակովբայ Գրիգորեան Արզու մանեանց, 1856, էջ 90: Հմմտ. Շիրակ տեղագրութիւն պատկերացոյց: Հաւաքեաց **Հ.Ղեւոնդ Վ. Մ.Ալիշան**, Վենետիկ, Մբ Ղազար, 1881, էջ 164:

(idea fix): Պատահական չէ, որ հանրահռչակ հայագետ Ղևոնդ Ալիշան (1820-1901) իր պատմատեղագրական բնույթի հետազոտությունների առաջնեկը նվիրել է Շիրակին. «Ընտրեցաւ ՇԻՐԱԿ գաւառ Այրարատայ, վասն բազմակերպ նոր եւ հին յիշատակաց իւրոց, միանգամայն եւ վասն ճոխագոյն մնացուածոց կիսականգուն շինուածոցն եւ արձանագրութեանց, զորս առաւելապէս է գտանել աստանօր ի կենսակիր մեռեալն Անի, որ երկակի եւս կերպարանօքն՝ յինն դարուց հետէ՝ առաջին դէմք Հայ երկրի հանդիպի նկատողացն գնոյն...»¹⁰:

Դարակեսին Ալեքսանդրապոլն իր արևմտահայ բնակչությամբ Արևելյան Հայաստանում հայրենասիրական զգացումներ հեղեղող միտցներից էր, որն ուժգին հարվածելու էներգիա ստանում էր նաև Վենետիկի միաբանության լուսաշահ ծառայությունից: Ալեքսանդրի հայասերները, աչքի առաջ ունենալով ինքնահասկացման և ինքնավերլուծության, քարոզչական-խրախուսական «մխիթարյանական» վերոհիշյալ մեթոդները (տե՛ս գծապատկերը), միևրո մակարդակում բնորոշել են ապագայի Հայաստանի տիպարը:

Գավառի և գավառակենտրոնի կաթողիկե համայնքների և միաբանության միջև ձևավորվել էր փոխգործակցության լավագույն մթնոլորտը: Հայ կաթողիկեները հնարավորության դեպքում իրենց երեխաներին սովորելու համար ուղարկել են Փարիզ և Վենետիկ: Մշակութային այդ կղզյակների հետ կապը հիմնականում պահպանվել է գավառի կաթողիկե վիճակի առաջնորդներ Աղեքսանդր վրդ. Արարատյանի (1820-1888)¹¹ և Պողոս վրդ. Նահապետյանի (1820-1906)¹² միջոցով: Վերջինս բացել է «Երօպայի ճանապարհը ուսումնասեր մանուկների առաջ»:¹³ Նրա աշակերտներից և ազգականներից

¹⁰ **Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., Յառաջաբան: Հայ քնարի նահապետ Ղ. Ալիշանին «Այրարատ» (1890) ստվարածավալ հատորի կազմման աշխատանքներում մեծապես օգնել են ալեքսանդրի եղբայրներ Կարապետ և Հովհաննես Կոստանյանցները:

¹¹ Աղեքսանդր (Ղազար) վրդ. Արարատյանը ծնվել է Փոքր Ղարաքիլիսա գյուղում (այժմյան Շիրակի մարզի Ազատան համայնքն է): Պատանի հասակում գնացել է Կարին: Ախալցխայում սովորել է Պողոս վրդ. Շահխուլյանի մոտ: 1845թ. երիտասարդ դպիրը Ս.Պետերբուրգի «լատին» եպիսկոպոսի կողմից ձեռնադրվել է վարդապետ: Եղել է Ախալցխայի Հայ կաթողիկե հոգևոր կառավարության նախագահ-անդամ, Անդրկովկասի Հայ կաթողիկե հոգևոր կառավարության ավագ անդամ և Ալեքսանդրապոլի գավառի Հայ կաթողիկե վիճակի կառավարիչ (կանոնիկոս): Ի պաշտոնե հարաբերություններ է հաստատել Սարատովի «լատին» եպիսկոպոսի հետ: Ազգային իրավունքների ճնշման դավանական ուղղության դեմ տևական պայքարի արդյունքում Հայ կաթողիկե եկեղեցին զերծ է պահել օտարամուտ բարքերից: 1872թ. և 1876թ. Հայ կաթողիկե թեմ ստեղծելու նրա փորձերը հանդիպել են կաթողիկե քահանաների լուրջ դիմադրությանը: Ախուրյան գետի ափին հիմնել է «Վարդապետի բար» կոչված այգին: Տե՛ս **Պ. Բ.**, Հայր Ալեքսանդր վարդապետ Արարատեան // «Մշակ», Թիֆլիս, 1888, № 79, էջ 1-2; «Մշակ», 1881, № 4, էջ 3; «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1881, № 50, էջ 3:

¹² Պողոս (Աբրահամ) վրդ. Նահապետյանը տիրապետել է մի քանի օտար լեզուների՝ լատիներեն, ռուսերեն, պարսկերեն: 1859թ. եղբոր՝ Սողոմոնի հետ հիմնել է Ալեքսանդրապոլի գավառի Քյաֆթառլու գյուղի (այժմյան Շիրակի մարզի Փանիկ համայնքն է) դպրոցը: Տե՛ս **Նահապետյան Պ.**, Փանիկ գյուղի պատմությունը, Երևան, 2021:

¹³ **Եզեկեան**, Նամակ խմբագրին // «Մշակ», 1883, № 137, էջեր 1-2:

Մուրատյան և Ռափայելյան վարժարաններում են սովորել Ավետիք Եզեկյանը,¹⁴ Ներսես Ճնտոյանը,¹⁵ Գաբրիել Ս. Նահապետյանը,¹⁶ Բարսեղ Սարգիսյանը, Սարգիս Հովսեփյանը, Մովսես Նազարյանը, Հովսեփ Յազիջյան և այլք: Ուսանող երիտասարդներից մի քանիսը հետո դարձել են միաբանության հայտնի անդամներ:

Դավանանքով կաթողիկե հրապարակախոս, կուսակցական գործիչ Ատրպետը (Սարգիս Մուրադյան, 1860-1937) իր հուշերում բացահայտել է Պողոս վարդապետի

¹⁴ Ուսուցիչ, հասարակական գործիչ Ավետիք Եզեկյանը ծնվել է 1849թ. Ալեքսանդրապոլում: 1859թ. ընդունվել է Փարիզի Մուրատյան վարժարան, որի փակվելուց հետո տեղափոխվել է Վենետիկ: Ուսումնառությունը հետո 1877թ. նա վերադարձել է Ալեքսանդրապոլ և դասավանդել տեղի Արդոթյան իգական դպրոցում: 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո տեղափոխվել է Թիֆլիս և աշխատանքի անցել Ներսիսյան դպրոցում: 1883-1892թթ. եղել է Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերության քարտուղարը: Դրանից հետո դասավանդել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում և եղել Սինդոի քարտուղարը: 1903թ. աշխատել է Բաքվի Նավթարդյունաբերողների խորհրդի գրասենյակում, 1905թ. հետո ավագ ուսուցչի պաշտոն է ունեցել Ախալցխայում: 1908թ. մինչև իր կյանքի վերջը ապրել է Թիֆլիսում և աշխույժ հասարակական գործունեություն ծավալել: Ա.Եզեկյանը լավ հայերեն իմացողի հոչակ է ունեցել և իր լեզվի ու ոճի մեջ հավատարիմ է մնացել Մխիթարյաններից ստացած ժառանգությանը: Տե՛ս Գ.Ա., Աւետիք Եզեկեան (1849-1916) // «Գործ», Բազու, 1917, №1, յունուար, Բ մաս, էջեր 146-148:

¹⁵ Տարոնի և Վասպուրականի կաթողիկե եպիսկոպոս Ներսես Ճնտոյանը ծնվել է 1848թ. Փետրվարի 15-ին Քյաֆթառլու գյուղում (այժմյան Շիրակի մարզի Փանիկ համայնքն է)՝ քահանայի ընտանիքում: 1867թ. սովորելու համար մեկնել է Վենետիկի Մխիթարյան միաբանություն և դարձել համաշխարհային պատմության մասնագետ (Համառոտ հին պատմություն արևելեան ազգաց եւ յունաց, Վենետիկ, տպ. Մխիթարեան, 1879, էջ 327: Առձեռն ընդհանուր ժամանակագրություն: Հին եւ նոր տեղութեանց, Վենետիկ, տպ. Մխիթարեան, 1880: Դամբանական ի սգալի մահ Ամեն. Հոգևոր Տեառն Տեառն Ստեփանոսի Պետրոսի Ժ. կաթողիկոսի և Պատրիարքի Տանն Կիլիկիոյ, Վենետիկ, տպ. Ս.Ղազար, 1899, էջ 7): 1873թ. ձեռնադրվել է քահանա, դարձել նույն միաբանության անդամ և վանքի ընծայարանում դասավանդել պատմություն: 1880թ. Գործուղվել է Շիրակ և 2 տարի դասավանդել Քյաֆթառլուի դպրոցում: 1884-1892թթ. եղել է Պարտիզակի թեմի ժողովրդապետը: Այդտեղ կառուցել է եկեղեցի, վանատուն և դպրոց: 1892թ. օծվել է եպիսկոպոս և Կ.Պոլսի մշտեցի պանդոխտների պահանջով ստանձնել Մուշի թեմի ժողովրդապետությունը: Պաշտոնավարման տարիներին կարճ ժամանակով ճամփորդել է Եվրոպայում: Մուշում բացել է դպրոց, Առինձ, Ողունք և Նորշեն գյուղերում՝ նախակրթարաններ, կառուցել և նորոգել է եկեղեցիներ: Տե՛ս Հանգիստ Ներսէս գեր. Ճնտոյեանի եպիսկոպոսին Տարօնոյ եւ Վասպուրականի // «Բազմավեպ», Վենետիկ- Ս.Ղազար, 1909, թիւ 9:

¹⁶ Գաբրիել (Ստեփան) Սողոմոնի Նահապետյանը ծնվել է 1857թ. հունվարի 27-ին Քյաֆթառլուում: 1869թ. մեկնել է Վենետիկի Սբ Ղազար կղզի: 1874թ. ստացել է վանական սքեմ և Գաբրիել անունը: 1878թ. ձեռնադրվել է քահանա: Երկու տարի սովորել է Հռոմի Հիսուսյան հայրերի համալսարանում: 1883-1885թթ. դասավանդել է Մուրատ-Ռափայելյան վարժարանում: 1888-1896թթ. առաքելական գործունեություն է ծավալել Շիրակում, իսկ 1896-1907թթ.՝ Թիֆլիսում: 1908-1909թթ. Հովսեփ եպ. Կեպերի հրավերով հաստատվել է Եկատերինոպոլում (այժմյան ՌԴ Կրասնոդարի երկրամասի վարչական կենտրոնը): 1909թ. մինչև կյանքի վերջն ապրել է Վենետիկում և Փարիզում: 1919-1920թթ. խմբագրել է «Բազմավեպ» ամսագիրը: Տե՛ս Զ.Ե.Փ., Հանգիստ հոգւոյ Հ.Գաբրիէլ վ.-ի Նահապետեան // «Բազմավեպ», 1939, № 11-12, էջեր 313-314:

գործունեության մի ուշագրավ կողմն է: Գրողի հավաստմամբ, 1865-1866թթ., երբ էկեղեցականը վերադարձել է Փարիզից, իր հետ բերել է Փանիկ գյուղ է տարել Ռուսաստանի գրաքննության կոմիտեի կողմից արգելված բազմաթիվ գրքեր:¹⁷



Հ. Գ. Նահապետեան



Գեր.Ն. Ճնտոյեան



Ավետիք Եգեկյան



Հ. Բ. Սարգիսեան



Պ. վրդ. Նահապետյան



Կ. Կոստանյանց



Հ. Կոստանյանց




Ատրպետ

Եզրահանգում. Այսպիսով, «կիսկատար»¹⁸ կաթոլիկությունը Մխիթարյաններին չի խանգարել, որ ազգի մտապատկերում ստեղծեն Հայաստանի գունեղ և շնչավոր կերպարը: Բանահյուսելու և ոգևորելու նրանց արվեստն, իհարկե, գլուխգործոց չէր, բայց, առանց գերազնահատության, Հայտնության գորություն է ունեցել Ախուրյան գետի այս ափին ծվարած և Ռուսաստանի հասարակական կյանքին հարմարվող կարսեցիների, կարիցիների, ալաշկերտցիների, բայազետցիների և բասենցիների համար: Նոր ինքնության փնտրտուքը ալեքսպոլցի (գավառացի) արևմտահայերին ավելի ամուր է կապել արմատներին:

Ստեղծարար լուսավորականությանը հաղորդակցվելու պոլսեցի ազգակիցների փափագին հետևելով և ֆինանսական համեստ միջոցների տեր լինելով (կամ չլինելով)՝ նրանք իրենց զավակների կրթությունը կազմակերպել են արտասահմանյան առաջադեմ ուսումնական հաստատությունների ծրագրերին համահունչ աշխատող Մխիթարյան դպրոցներում:

¹⁷ Ե.Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Ատրպետի ֆոնդ, վավերագիր 95, թերթ 17:

¹⁸ Այվազովսքի Գ., նշվ. աշխ., էջ 33:



ДУХОВНОЕ ПРИСУТСТВИЕ ВЕНЕЦИАНСКОЙ КОНГРЕГАЦИИ МХИТАРИСТОВ В ОБЩЕСТВЕННОЙ ЖИЗНИ АЛЕКСАНДРОПОЛЯ

Այվազյան Գ. Ս.

Ключевые слова: *возрождение, государство, культура, Европа, Ани, единодушие.*

Неоспоримо существенную роль играла Венецианская Конгрегация Мхитаристов в деле развитии армянской культуры. Католическое вероисповедание не мешало членам ордена с виртуозной дальновидностью создавать идейный образ великолепной страны и нации. Они в своих стихотворениях и в работах исторического характера восхищались потерянной славой Отечества. Братья по зову Матери Армения с другими нациообразующими структурами старались вовлечь молодое поколение в борьбу за свободу и народное достоинство.

Между конгрегацией и католической общиной Александропольского уезда образовалось перспективное и плодотворное сотрудничество в сфере печати и образования. Дети общинников учились в гимназиях Мурадян и Рафаелян.

В городе Александрополе со стороны местной интеллигенции успешно реализовалась программа повышения интереса к своему историческому прошлому по разработанной технике ординаров-романтиков Венеции и Вены.

SPIRITUAL PRESENCE OF THE VENETIAN CONGREGATION OF THE MKHITARISTS IN THE PUBLIC LIFE OF ALEXANDRAPOL

Ayvazyan G. S.

Key words: *revival, state, culture, Europe, Ani, unanimity.*

The essential role of the Venetian Congregation of Mkhitarists in the development of Armenian culture is undeniable. The Catholic faith did not prevent the members of the order with virtuoso foresight to create the ideological image of a magnificent nation. In their poems and in works of a historical nature, they admired the lost glory of the Fatherland. Brothers at the call of Mother Armenia, together with other nation-forming structures, tried to involve the younger generation in the struggle for freedom and people's dignity.

A promising and fruitful cooperation in the field of press and education has been formed between the congregation and the Catholic community of the Alexsandrapol district. The children of the community members studied at the Muradyan and Rafaclyan grammar schools.

In the city of Alexandrapol, the local intelligentsia successfully implemented a program to increase interest in their historical past according to the technique developed by the romantic ordinaries of Venice and Vienna.

Գ ր ա կ ա ն ո թ յ ո ն ի ն

1. Ալիշան Դ., Շիրակ տեղագրություն պատկերացոյց, Վենետիկ, Մք Ղազար, 1881, 192 էջ:
2. Այվազովսքի Գ., Ուրազիծ ոգւոյ եւ ընթացից Մխիթարեան միաբանութեան Վենետկոյ, Փարիզ, ի գրանոցի Ճ.Արամեան, 1857, 160 էջ:
3. Դ.Ա., Աւետիք Եզեկեան (1849-1916) // «Գործ», Բազու, 1917, № 1, յունուար, Բ մաս:

4. Եզեկեան, Նամակ խմբագրին // «Մշակ», Թիֆլիս, 1883, № 137:
5. Երիցեանց Ա., Վենետիկի Մխիթարեանք, Թիֆլիս, տպ. Յովի. Մարտիրոսեանցի, 1883, 162 էջ:
6. Հանգիստ արհի Ներսէս գեր. Ճնտոյեանի եպիսկոպոսին Տարօնոյ եւ Վասպուրականի // «Բազմավէպ», Վենետիկ-Ս.Ղազար, 1909, թիւ 9:
7. Հ.Ե.Փ., Հանգիստ հոգւոյ Հ.Գաբրիէլ վ.-ի Նահապետեան // «Բազմավէպ», Վենետիկ-Ս.Ղազար, 1939, № 11-12:
8. Մխիթարեանց Ա., Պատմութիւն Մենաստանին Հառիճոյ ի Շիրակ, Տփիսիս, ի տպարանի Յակոբրայ Գրիգորեան Արզումանեանց, 1856, 90 էջ:
9. Նահապետյան Պ., Փանիկ գյուղի պատմությունը, Երևան, 2021:
10. Պ.Բ., Հայր Ալեքսանդր վարդապետ Արարատեան // «Մշակ», Թիֆլիս, 1888, № 79:
11. Մարգիսեան Բ., Երկհարիրամեայ գրականական գործունէութիւն եւ նշանաւոր գործիչներ Վենետիկոյ Մխիթարեան միաբանութեան, Վենետիկ-Սր Ղազար, 1905, 400 էջ:
12. Մերաստացի Ղ., Դավիթ-Բեկ կամ Պատմություն Ղափանցոց, Երևան, ԵՃ հրատ., 1992, 112 էջ:
13. Intellectuals and the Articulation of the Nation. Edited by Ronald Grigor Suny and Michael D. Kennedy. Ann Arbor: The University of Michigan press. -1999. 430 p.
14. «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1881, № 50:
15. «Մշակ», Թիֆլիս, 1881, № 4:
16. Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Ատրպետի ֆոնդ, վավերագիր 95:
17. <https://www.osb.org/our-roots/saint-benedict/> (23.07.2021).

Ընդունվել է՝ 27. 08. 2021

Գրախոսվել է՝ 23. 10. 2021

Հանձնվել է տպ.՝ 15. 11. 2021

Տեղեկություններ հեղինակի մասին

Գևորգ ԱՅՎԱԶՅԱՆ՝ պատմական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի
գիտաշխատող, էլ. հասցե՝ AyG.84@mail. ru

ИСТОРИЯ
Պ Ա Տ Մ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
HISTORY

УДК: 93/94

DOI: 10.52971/18294316-2021. 3-87

ЕПАРХИИ ТРАПЕЗУНДСКОЙ МИТРОПОЛИИ В IX-XI вв.

Геворг Казарян

Богословский факультет Афинского национального университета, Греция

Ключевые слова: армянские земли, Константинополь, Церковь, Трапезундская митрополия, фема Армениакон, Высокая Армения, исторические сведения, Тайк.

Исторические связи греческого Понта и армянских земель начались еще в эпоху эллинизма и продолжались вплоть до трагических событий начала XX в. В сложном переплетении армяно-понтийских политических, культурных, экономических контактов особой, но сравнительно малоизученной сферой являются церковные отношения. В этой связи, по мнению автора статьи, проблема епархий Трапезундской митрополии в IX-XI вв. имеет особую значимость, поскольку большая часть этих кафедр находилась на исторических армянских территориях¹.

¹ Одним из важных исследователей данной темы является митрополит Трапезундский Хрисанф (Филиппидис, архиеп. Афинский и всея Эллады в 1938-1941 гг.), обширный исторический труд которого «Церковь Трапезунда» занял целый выпуск греческого научного журнала «Архив Понта» (см. **Χρυσανθος, Μητροπολίτης** Τραπεζούντος και Αρχιεπίσκοπος Αθηνῶν, «Н Εκκλησία Τραπεζούντος», *Архив Понта*, т. 4-5 (1933) (далее Φιλλιπιδης, «Н Εκκλησία»), между тем как карта Трапезундской митрополии была издана в предыдущем томе того же журнала. Практически одновременно к трапезундским епархиям обратился Э. Хонигманн (см. *Die Ostgrenze des Byzantinischen reiches von 363 bis 1071 nach griechischen, arabischen, syrischen und armenischen Quellen*, von **E. Honigmann**, éd. De l'Institut de Philologie et d' Histoire Orientales, Bruxelles, -1935 (далее Honigmann, *Die Ostgrenze*), сс. 191-200. Важной вехой в исследовании вопроса является статья **Э. Л. Даниеляна**, который попытался уточнить локацию некоторых кафедр в свете маршрута императора Василия II (см. **Է. Լ. Դանիելյան**, «Վաւիլ Բ-ի 1000 թ. արևելյան արշավանքի նպատակը և երթուղին» // *Լրաբեր հասարակական գիտությունների*, 1973, № 10 (далее Դանիելյան, «Վաւիլ Բ-ի» էջեր 61-74: В дальнейшем доводы Хонигмана и Даниеляна повторила Арутюнова-Фиданиян (см. **В. А. Арутюнова-Фиданиян**, *Армяно-византийская контактная-зона (X-XI вв.) // Результаты взаимодействия культур*, М. «Наука». Изд. «Восточная литература». -1994. сс. 29, 63): Беглые замечания относительно епархий Трапезунда имеются и в работах некоторых современных греческих исследователей. Так, Т.

Введение: Трапезундская епархия, отделившись от Неокесарийской митрополии, была возведена в отдельную митрополию при императоре Василии I (867-886)². Наиболее ранним документом, исчисляющим епископские кафедры Трапезундской митрополии, является Тактикон константинопольского патриарха Николая I Мистика (901-907, 912-925). Согласно этому источнику, епархиями Трапезунда являлись Хериана, Хамадзур, Хахеон, Пайперт, Керамея, Лерион, Визана (*ὁ Χεριάνων, ὁ Χαματζούρ, ὁ Χαχαίων, ὁ Παῖπερτ, ὁ Κεραμέων, ὁ Λερίων, ὁ Βιζάνων*)³. Из перечисленных район Хериан или Шариян (Շարիան), занимавший первое место среди епархий Трапезунда, находился между Халдией (в арм. источниках Խալդիիք) и Колонией, однако местонахождение кафедрального пункта епархии остается нерешенным⁴. Следующий топоним митр. Хрисанф отождествляет с горой Хахмаджур, который согласно ему находился севернее оз. Ван⁵. Неясно, о какой именно возвышенности идет речь, т. к. гора с таким наименованием неизвестна. Согласно мнению Э. Даниеляна топоним Χαματζούρ должен быть исправлен на [Σαρ]τζαμάτζουρ⁶. В таком случае епархию можно отождествлять с поселением Сарчам (Серчам), приблизительно 35 км. северо-западнее г. Карин⁷. Примечательно, что сохранились имена двух епископов данной епархии – Феодора (X в.) и Иоанна (XI в.)⁸. Кафедра Хахеон, должно быть, находилась в области Екегяц и тождественен с известным поселком Хах⁹, а Пайперт безусловно тождественен с Ба-

Георгиадис, очерк которого не отличается научной глубиной, ограничивается лишь замечанием, что топонимы иностранные и не подлежат точной локализации (см. **Θ. Γεωργιάδης**, «Н Εκκλησία του Πόντου (από τον 7^ο αι. ως το 1204.)», *Πόντος. Ιστορία και πολιτισμός* (т. 1-2), εκδ. «Μαλλάρης-Παιδεία», -2007, т. 1, с. 312). Н. Акритидис, не вдаваясь в подробности, тем не менее отмечает, что «Епископии Трапезунда находились, как видно из их названий, преимущественно в районах с армянским населением между реками Акампис и Евфрат горных областей Держана, Ликанда и Спера» (**Ν. Σ. Ακριτίδης**, *Η ιστορική γεωγραφία του Οικουμενικού Πατριαρχείου από τον 9^ο αι. μ. Χ. μέχρι το 1453*, εκδ. οίκος Α. Σταμούλη, Θεσσαλονίκη, -2009, с. 118).

² См. **С. Карпов**, *Средневековый Понт / Российские исследования по мировой истории и культуре*, т. 15, The Edwin Mellen Press, Lewiston-Queenston-Lampeter. New York. -2001 (далее Карпов, *Средневековый Понт*), с. 44.

³ *Notitiae episcopatum ecclesiae constantinopolitanae*. Texte critique, introduction et notes par **J. Darrouzès**. Paris.-1981 (далее Darrouzès, *Notitiae*), с. 284.

⁴ См. **Φιλππίδης**, «Н Εκκλησία», с. 163. Подробнее про топографию района см. **A. Bryer, D. Winfield**, *The Byzantine Monuments and Topography of the Pontos*, With Maps and Plans by R. Anderson and Drawings by J. Winfield (Vol. 1-2), Dumbarton Oaks Research Library and Collection, Washington, D. C. 1985, т. 1 (далее Bryer, Winfield, *The Byzantine Monuments*), сс. 165-177. Небольшое, но примечательное описание страны Шериан оставил Акоб Карнеци (XVII в.) (см. **Հակոբ Կարնեցի**, «Տեղագիր Վերին Հայոց», *Մանր Մամանակագրություններ XIII-XVIII դդ.*, կազմեց **Վ. Ա. Հակոբյան** (h. I-II), ՀՄՄԲ ԳԱ հրատ., Երևան, h. II, 1956, էջ 552).

⁵ См. **Φιλππίδης**, «Н Εκκλησία», с. 168.

⁶ **Դանիելյան**, «Վասիլ Բ-ի», сс. 65-66.

⁷ Ср. **Թ. Խ. Հակոբյան, Ս. Տ. Մելիք-Բաշխյան, Հ. Խ. Բարսեղյան**, *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բարարան, 1-4*, Երևանի համալսարանի հրատ., Երևան, 1896-2001 (այսուհետև՝ ՀՀՏՏԲ), h. 4, էջեր 591-592:

⁸ См. **G. Fedalto**, *Hierarchia Ecclesiastica Orientalis, Series Episcoporum Ecclesiarum Christianorum Orientalium, I (Patriarchatus Constantinopolitanus), II (Patriarchatus Alexandrinus, Antiochensus, Hierusolymitanus)* edizioni Messagero, Padova,-1988 (далее Fedalto, *Hierarchia Ecclesiastica*), с. 401.

⁹ Ср. ՀՀՏՏԲ, h. 2, էջ 628; А. Брайер и Д. Винфилд считают, что данная епархия находилась недалеко от г. Келкит (Гайлпет). Основанием для такого мнения служит синодальное послание Констан-

бердом. До нас дошли имена Бабердских епископов – Николая и Григория (IX в.), Давида (XI в.) и Иоанна (1023-1027)¹⁰.

Топоним Керамеон, как считает митр. Хрисанф, идентичен с местностью, впоследствии названной Киремитли и расположенной в районе Мацука в Халдии¹¹, а епархия Лериона располагалась в нынешнем селе Кабакёй, 27 км восточнее г. Гюмушхане. Судя по топониму (*Ἰερῆλι* – род. пад. от *Ἰκωνλί* (гора)), изначально это было армянское поселение¹². На расстоянии 35 км восточнее Лерина находится Варзаан, известный своим средневековым храмовым комплексом. Именно с Варзааном, а не с Вжаном, мы отождествляем упомянутую епархию Визанон¹³.

Таким образом, в X в. епископские кафедры Трапезундской митрополии тянулись юго-восточнее г. Трапезунд, вглубь Халдии и Армении. Тенденция углубления усилилась в конце X-начале XI в., когда, согласно византийским Тактиконам, число Трапезундских епископских кафедр увеличилось до 15: новооснованными 8 кафедрами были Мананалис, Заринакон (Заримака), Андакон (Андака, Андакта), Месуни, Халхеон (Хахеон), Сакавон, Хавдзидзин (Хавдзидзон), Хантиерз (Ханзтиерз), Олнутин (Улнутон), Фасиани, Сермандзу («*Μανανάλιος, Ζαρινάκου (Ζαριμάκων), Ἀνδάκου (Ἀνδάκων, Ἀνδάκτων), Μεσουνή, Χαλχάιου (Χαχάιου), Σακάβου, τὸ Χαβτζίτζιν (Χαβτζίτζου), τὸ Χαντίερζ (Χαντζιέρζ, Χαντζιέρζ), τὸ Ὀλνούτιν (Ὀύλνούτου), ὁ Φασιανῆς, ὁ τὸ Σερμάντζου (Σερμάτζου)*»)¹⁴.

тинопольского патриархата к Камахскому митрополиту Лаврентию, датируемое 1670 г. В этом документе отмечается, что из древних кафедр Трапезунда Хах тождественен с Келкитом, Визана – с Держаном, Хандиердз – с Эрзинджаном, Сакав – с Джинисом, Фасиани – с Басеном, Пайпер – с Байбурдом, а Лерион – с Куазом (см. **Π. Τριανταφυλλίδης**, *Οἱ Φυγάδες, δράμα εἰς μέρη πέντε μετὰ μακρῶν προλεγόμενων περὶ Πόντου, ἐν Ἀθήναις*, 1870, с. 140): А. Брайер и Д. Винфилд не сомневаются в верности приведенных отождествлений (см. **A. Bryer, D. Winfield**, *The Byzantine Monuments*, сс. 167, 170, 171; ср. N. A. Bees (Βέης), “Sur quelques évêchés suffragants de la Métropole de Trébizonde”, *Βυζάντιον*, Т. I, 1924, сс. 117-137). По нашему мнению, из вышеперечисленных верны лишь идентификация Фасиани с Басеном и Пайпера с Бабердом. Видимо, ошибочные идентификации возникли в связи с перенесением древних кафедр в новые места с сохранением прежних названий. Но Брайер и Винфилд правы, пытаясь найти проблематичную кафедру на берегу реки Ликос (Гайл), где и находился Хах. Интересно, что в армянском переводе-редакции Тактикона псевдо-Епифания Кипрского, автором которого является архиеп. Нерсес Ламбронати (XII в.), проблематичный топоним фигурирует как *Σωρηνί* (см. *Ἐπιφυάνη Ἐκθεσις πρωτοκλήσιδων πατριαρχῶν τε καὶ μητροπολιτῶν*. Ζωητερεῖς ἐκ τῶν ἀρχαίων, ἠρμηνευτικῆς **Φ. Ὑ. Φηλέ**, Ἱερῆλι, 1902, էջ 34). Если редакция Ламбронати верна, то епархию, возможно, следует отождествлять с поздним селом Шаше-Гора, что в области Карина (ср. *ՀՀՇՏԲ*, h. 4, էջ 77).

¹⁰ См. **Φιλίππιδης**, «Н Екκλῆσία», с. 162; **Fedalto**, *Hierarchia Ecclesiastica*, с. 403.

¹¹ См. **Φιλίππιδης**, «Н Екκλῆσία», с. 168.

¹² В Кабакёй стоит обращенная в мечеть трехнефная базилика Св. Софии, очевидно возведенная в юстиниановскую эпоху и имеющая явные признаки армянского храмостроительства. Про топографию Лерина и церковь Св. Софии вместе с ее планом см. **A. Bryer, D. Winfield**, *The Byzantine Monuments*, сс. 313-316, схемы 111, 112 (между сс. 318-319).

¹³ Ср. *ՀՀՇՏԲ*, h. 4, էջ 787; Недавно А. Виноградов посвятил трем храмам Варзаанского комплекса специальную статью, где на основе предположений, как вероятную датировку строительства предлагает период 979-988 гг. (см. **А. Ю. Виноградов**, «Архитектура на стыке культур: храмовый комплекс Варзахана близ Байбурга в свете новых находок»//*Античная древность и средние века*, т. 48 (2021), сс. 368-407). В статье упущена возможность отождествления Варзаана с топонимом *Βιζάνων* и, как следствие, вероятность того, что комплекс мог быть епархиальным центром.

¹⁴ *Dagouzès, Notitiae*, σελ. 303, 326.

Рассмотрим подробнее вышеперечисленные топонимы: кафедра Мананалиса несомненно находилась в населенной тондракитами области Мананали. Поскольку центром области являлся г. Вжан, то можно предположить, что там и находилась кафедра Мананальского архиерея. Видимо именно Мананальским иерархом являлся епископ Еписарат, правивший в начале XI в. и упомянутый Аристакасом Ластиверци¹⁵. До нас дошло также имя Мананальского епископа Михаила, жившего на стыке X-XI вв¹⁶.

Кафедру Заринакон митр. Хрисанф отождествляет с крепостью Зерник, что северо-восточнее оз. Ван¹⁷. Возможно, он имел в виду село Зернак васпураканской области Хошаб, где сохранялись руины крепости¹⁸. Примечательно, что еще два села с названием Зернак существовали – одно в Васпуракане, другое – в окрестностях Карина¹⁹. Э. Хонигманн, в свою очередь, связывает проблематичный топоним с горой Зернак, северо-западнее г. Хлат и восточнее г. Маназкерт²⁰. Наконец, согласно Э. Даниеляну, кафедра Заринакон тождественна с поселением Дзернак области Харк в Тароне²¹.

Епархию Андака митр. Хрисанф однозначно ищет в Армении, однако ошибочно отождествляет ее с Арчешом, который на самом деле являлся кафедрой Таронской и Хордзьянской митрополии²². Э. Хонигманн располагает кафедру Андака в области Хавнуник²³. Другой населенный пункт, который на наш взгляд мог бы отождествляться с кафедрой, – это поселок Андап (Айнтап) в окрестностях крепости Даруйнк²⁴.

Кафедра Месуни, как считает Э. Даниелян, находилась в древнем городе Мцурн в Тароне, однако это ошибочное мнение, т. к. Мцурн был разрушен еще в IV в. по Р. Х. Вероятным кажется отождествление *Μεσοῦνη* с областью Мещуник (Варажнуник), расположенной юго-восточнее оз. Ван²⁵. К сожалению, наименование лишь названия области не позволяет нам локализовать кафедральный город епархии.

Топоним Халхеон (Хахеон) возможно возник по ошибке переписчиков, повторивших наименование Хаха. С другой стороны, топоним напоминает Хаху (по-груз. Хахули) – известный церковный центр Тайка с одноименным монастырем.

Епархия Сакавона по всей видимости связана с горой Сукав (Сукавет), севернее г. Вагаршакерт, на стыке областей Басен и Кагзван²⁶. Вероятность основания здесь кафедры

¹⁵ См. Повествование вардапета Аристакаса Ластиверци/Пер. с древнеарм., вступ. ст., коммент. и прил. К. Н. Юзбабяна. М. -1968. с. 127. Согласно патриарху Фотию (IX в.), в Мананали уже в VII в. стал проповедовать предводитель павликиан Константин Армянин, названный Силуаном, а в нач. VIII в. здесь была организована община под названием «Ахаяя». «Церковь Ахаяи» являлась одной из шести общин павликиан, простиравшихся от Колонии до киликийской Мопсуестии (см. *PG* 102, 21-24, 45-57). Ср. **Р. М. Бартикян**, «Петр Сицилийский и его “История павликиан”» // Византийский временник. Т. XVIII. -1961. с. 341.

¹⁶ См. **Fedalto**, *Hierarchia Ecclesiastica*, с. 402.

¹⁷ См. **Φιλίππιδης**, «Н Εκκλησία», сс. 167-168.

¹⁸ Ср. *ՀՀՇՏԲ*, h. 2, էջ 294.

¹⁹ Ср. *ՀՀՇՏԲ*, h. 2, էջ 294.

²⁰ См. **Honigmann**, *Die Ostgrenze*, с. 193.

²¹ См. Դանիելյան, «Վաշիլ Բ-ի», с. 65.

²² См. **Φιλίππιδης**, «Н Εκκλησία», с. 165. Ср. **Darrouzès**, *Notitiae*, с. 336.

²³ См. **Honigmann**, *Die Ostgrenze*, с. 193.

²⁴ Ср. *ՀՀՇՏԲ*, h. 1, էջ 235.

²⁵ См. **Φιλίππιδης**, «Н Εκκλησία», с. 167; **Honigmann**, *Die Ostgrenze*, с. 194. Ср. *ՀՀՇՏԲ*, h. 3, էջ 773.

²⁶ См. Դանիելյան, «Վաշիլ Բ-ի», էջ 65. Ср. *ՀՀՇՏԲ*, h. 4, էջ 707.

высока, если иметь в виду значение Сукавета как места мученичества св. Сукиаса (Сухия) и его сподвижников²⁷. Маловероятным кажется вариант таронской деревни Сакав, относительно которой не сохранилось исторических сведений²⁸.

Весьма интересен топоним Хавдзидзин, который тождествен г. Хавчич. Город был построен напротив Карина, с югу, и являлся перекрестным местом между Феодосиополем и Маназкертом²⁹.

Топоним *Χαυτίερς* Э. Даниелян предлагает исправить на *Χαλτίερς* и далее отождествить с крепостью Халтойарич³⁰. Последний находился на границе Феодосиополя и области Басен. Что касается кафедры Олнутин, то митр. Хрисанф отождествляет его с тайкским г. Олти³¹. Другим вариантом является таронская крепость Еганц или Вогнут (у Константина Багрянородного *Ὀλνυόπιν*)³². Вогнут перешел к империи в первой половине X в. Интересным вариантом, на наш взгляд, является пожалуй, и поселение Егновит в Амшене, где до XVI в. проживали ромеи, а на расстоянии 8 км от него расположено село Чат³³. Не исключено, что название села происходит от слова «ца(й)т» - средневекового названия православных армян. Что касается кафедры Фасиани, то она несомненно находилась в области Басен, провинции Айрарат, причем если византийские источники знают об одноименном городе, то армянские упоминают лишь об области³⁴.

И наконец, кафедру Сермантзу исследователи локализуют или вблизи горы Срманц (Бюракн), что вблизи г. Хнус, или же отождествляют с крепостью Джерманц, которая находилась северо-восточнее упомянутой горы³⁵. Предпочтительным является второй вариант, т. к. кафедра могла быть расположена в крепости. Другим возможным местом является область Джермадзор (Шатах) провинции Мокк. Хотя в данном случае кафедра значительно отстоит от Трапезунда, возможность основания епархии в крепости Джермадзора высока,

²⁷ Св. Сукиас почитался как в Армянской и в Грузинской Церквях, так и в кругу православных армян. Так, в иверонском сборнике житий армянских святых, переведенных в VII-VIII вв. (вероятно в Тайке или в Эреги) на грузинский язык, содержится мученичество Сукиаса, причем обретение мощей мучеников, подвизавшихся и скончавшихся на горе Сукав, в нем приписывается императору Константину I Великому (306-337) (см. *Հայոց «Վարք արքոց»-ի վրացական խմբագրությունը*, Թարգմ. հին վրացերենից և ուսումնասիրությունը Պ. Մ. Մուրադյանի, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2008, էջեր 55-68). Также память св. Сухия и его дружины приведена под 27 октября в армянском православном месяцеслове, составленном монахом Косьмой в 1203 г. (см. **Գ. Ղազարեան**, «Կոզմոս կրօնաւորի «Սենարսար» (1203 թ.)» // *Հանդէս Ամսօրեայ*, 2018, թիւ 1-12, էջեր 409-410).

²⁸ Ср. *ՀՀՇՏԲ*, h. 4, էջ 476.

²⁹ См. **Honigmann**, *Die Ostgrenze*, сс. 194-195; **Դանիելյան**, «Վասիլ Բ-ի», էջեր 65, 67-71.

³⁰ См. **Դանիելյան**, «Վասիլ Բ-ի», с. 65. А. Брайер и Д. Винфилд ошибочно отождествляют этот топоним с Хордзяном (см. **Bryer, Winfield**, *The Byzantine Monuments*, с. 167). Данная точка зрения неверна, т. к. в X-XI вв. Хордзян вместе с Тароном образовал отдельную митрополию – одну из величайших, Константинопольского патриархата (см. **Darrouzès**, *Notitiae*, с. 292, 294, 334, 335.).

³¹ См. **Փίλιππίδης**, «Н Εκκλησία», сс. 163-164.

³² См. **Honigmann**, *Die Ostgrenze*, с. 196; **Դանիելյան**, «Վասիլ Բ-ի», էջ 65.

³³ См. **Լ.Ս. Սահակյան**, «Համշենի Եղնովիտ-Էլվիթ բնակավայրի պատմությունը և տեղանվան ստուգաբանությունը» // *Լրաբեր հասարակական գիտությունների*, 2012, № 2-3, էջեր 305, 311.

³⁴ Ср. *ՀՀՇՏԲ*, h. 1, էջ 610.

³⁵ См. **Honigmann**, *Die Ostgrenze*, с. 197; **Դանիելյան**, «Վասիլ Բ-ի», էջ 65.

если учесть, что в X в. она была в центре внимания византийцев³⁶. По нашему мнению, еще одним вероятным местом является поселок Джерм(а) области Мананали, т. к. в XIV в. Джерм являлся центром тондракитов и, следовательно, вероятность основания в нем византийскими властями епископской кафедры с целью обращения в Православие сектантов весьма высока.

Итак, хотя не все епархии Трапезундской митрополии могут быть определены с желаемой точностью, тем не менее, ясно, что большинство из них находилось на армянских территориях. В этой связи, необходимо ответить на вопросы когда, при каких обстоятельствах были учреждены данные кафедры и почему основанные на армянских землях епархии были отнесены именно к Трапезундской митрополии.

Как мы уже видели, самыми северными епархиями Трапезундской митрополии являлись Хериан, Лерион и Керамеон, расположенные в феме Халдия. Далее следовали Бабберд, Хах, Сарчам и Варзаан в Высокой Армении. Таким образом, первые семь епархий, учрежденные во второй пол. IX в., были расположены в византийских фемах Халдия и Феодосиуполь. Основанные в дальнейшем восемь епархий располагались в землях Высокой Армении, Айрарата, Тарона и Васпуракана. Нетрудно заметить, что исторический контекст нас отсылает к антиарабским войнам Византии и к последующей экспансии армянских княжеств. В процессе освобождения армянских земель от арабского владычества важной вехой стало освобождение г. Карина и его окрестностей в 949 г. Далее в 968 г. последовало присоединение Тарона к империи, в то время как Васпуракан отошел к державе ромеев в 1021 г. Если отождествление топонимов *Χαλχάδιον* и *Ολυβότιν* соответственно с Хахули и Олти верно, то следует принять, что в 1022-1023 гг. после окончательной инкорпорации бывших владений царя Давида Курапалата (961-1000) в состав империи и организации здесь фемы Иверия в Хахули и Олти были учреждены епископские кафедры, подчинившиеся Трапезундской митрополии, а через нее – Константинопольскому патриарху. В пользу этого предположения может свидетельствовать то, что в одном позднем Тактиконе среди епархий Вселенского патриархата значится митрополия Ишхана (*ἡ Ἰσχανίου*)³⁷.

Выводы: Таким образом, учреждение кафедр Трапезундской митрополии неразрывно связано с продвижением власти василевса ромеев вглубь армянских и грузинских княжеств в течение X-XI вв. Почему же основанные преимущественно на армянских территориях православные епархии были отнесены к Трапезунду, который с IX в. являлся столицей новой фемы Халдия³⁸? Для ответа на этот вопрос следует обратиться к истории доарабского периода. В 536 г. император Юстиниан I (527-565) организовал четыре восточных провинций под названием Армении I, II, III, IV. В Первую (Внутреннюю) Армению вошли не только армянские города, такие как Феодосиуполь, Сатала, Никополь, Колония, но и Керасунт и Трапезунд. В дальнейшем, император Маврикий (582-602) учредил провинцию Великая Армения, столицей которой был провозглашен г. Трапезунд. В сер. VIII в. была организована обширная фема Армениакон, в которую вошли армянские, понтийские и малоазийские территории. Необходимо отметить, что борьбу за освобождение армянских земель от арабов и

³⁶ См. **Constantine Porphyrogenitus**, *De Administrando Imperio*, Greek text edited by Gy. Moravcsik, English Translation by R. J. H. Jenkins, New, Revised Edition. Dumbarton Oaks. Washington. -1967, с. 191. Следует отметить, что относительно точной локацией Τζερματζοῦ среди исследователей нет единомыслия (см. **К.Н. Юзбашян**, *Армянские государства эпохи Багратидов и Византия IX-XI вв.*, М. Изд. "Наука". -1988. с.127).

³⁷ См. **Darrouzès**, *Notitiae*, с. 420.

³⁸ См. **Карпов**, *Средневековый Понт*. сс. 35-36, 38, 39.

политику экспансии армянских княжеств Византия мыслила как попытку вернуть себе утраченные по причине арабских нашествий территории. Поскольку в доарабский период Трапезунд был тесно связан с армянскими землями, то и новооснованные епархии были отнесены именно к Трапезундской митрополии. При этом обращает на себя внимание то, что епархии не были основаны в известных центрах Армянской Апостольской Церкви. Иными словами, Константинопольская Церковь не пыталась организовать в Армении параллельную иерархию. Целью основания новых епархий, должно быть, являлось душепопечение местных православных общин, а также миссионерская проповедь среди сектантов.

ՏՐԱՊԵԶՈՆԻ ՄԵՏՐՈՊՈԼԻՏՈՒԹՅԱՆ
ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԹԵՄԵՐԸ IX-XI ԴԴ.
Ղազարյան Գ. Ս.

Բանալի բառեր՝ *հայկական հողեր, Կոստանդնուպոլիս, Եկեղեցի, Տրապիզոնի մետրոպոլիտոսություն, Արմենիակոնի թեմ, Բարձր Հայք, պատմական վկայություններ, Տայք:*

IX դ. երկրորդ կեսին Տրապիզոնը, դառնալով առանձին մետրոպոլիտոսություն, ուներ յոթ եպիսկոպոսական թեմ, որոնք գտնվում էին Խաղտյաց և Բարձր Հայք աշխարհներում: Հետագայում՝ X-XI դդ., հիմնվեցին այլ ութ թեմեր: Թեպետ դրանց միանշանակ տեղայնացումը դժվար խնդիր է, այդուհանդերձ պարզ է, որ այդ եպիսկոպոսությունները գտնվում էին հայկական տարածքներում՝ Բարձր Հայքում, Այրարատում, Տարոնում, Վասպուրականում, հավանաբար նաև հայ-վրացական Տայքում: Խնդրի ուսումնասիրությունը պարզում է, որ քննվող թեմերի հիմնադրումն աղերսվում է վերոնշյալ տարածքների՝ կայսրության կողմից նվաճվելու հետ, ինչը բյուզանդացիներն ընկալում էին որպես մինչարաբական շրջանի իրողությունների վերականգնում:

THE SUFFRAGANS OF METROPOLIS OF TREBIZOND
IN IX-XI CENTURIES

Kazaryan G. S.

Key words: *Armenian lands, Constantinople, church, metropolitan of Trebizond, diocese of Armeniakon, High Hayq, historical evidences, Tayq.*

In the second half of IX cent. the See of Trebizond, organized as separate Metropolis, had seven suffragans located in the regions of Chaldia and Upper Armenia. Later in the X-XI cent. eight other Bishoprics were organized. Despite the fact that their exact location is a complex problem, undoubtedly, they were located mostly in Armenian territories, namely in Upper Armenia, in Ayrarat, in Taron, in Vaspurakan, probably in Armeno-Georgian Tayk (Tao) as well. The investigation of this issue shows that the organization of new Suffragans is related with the reconquest of Armenian regions and their incorporation in Byzantine Empire, which was viewed by Byzantines as restoration of realities of pre-Arabian period.

Библиография

1. Ακριτίδης Ν. Σ., Η ιστορική γεωγραφία του Οικουμένου Πατριαρχείου από τον 9^ο αι. μ. Χ. μέχρι το 1453, εκδ. οίκος Α. Σταμούλη, Θεσσαλονίκη, 2009.
2. Арутюнова-Фиданян В. А., Армяно-византийская контактная-зона (X-XI вв.). Результаты взаимодействия культур, М., «Наука», изд. “Восточная литература”, 1994.
3. Бартикян Р. М., Петр Сицилийский и его “История павликиан”//Византийский временник, т. XVIII (1961), с. 323-357.
4. Bees (Βέης) Ν. Α., “Sur quelques évêchés suffragants de la Métropole de Trébizonde”, Βυζάντιον, V. I, 1924, p. 117-137.
5. Bryer A., Winfield D., The Byzantine Monuments and Topography of the Pontos, With Maps and Plans by R. Anderson and Drawings by J. Winfield (Vol. 1-2), Dumbarton Oaks Research Library and Collection, Washington, D. C. 1985.
6. Constantine Porphyrogenitus, De Administrando Imperio, Greek text edited by Gy. Moravcsik, English Translation by R. J. H. Jenkins, New, Revised Edition, Dumbarton Oaks, Washington, 1967.
7. Χρύσανθος, Μητροπολίτης Τραπεζούντος και Αρχιεπίσκοπος Αθηνών, «Η Εκκλησία Τραπεζούντος», Αρχαίον Πόντου, τ. 4-5 (1933).
8. Դանիելյան Է. Լ., Վապիլ Բ-ի 1000 թ. արևելյան արշավանքի նպատակը և երթուղին, Լրաբեր հասարակական գիտությունների, 1973, № 10, էջ 61-74:
9. Die Ostgrenze des Byzantinischen reiches von 363 bis 1071 nach griechischen, arabischen, syrischen und armenischen Quellen, von E. Honigmann, éd. De l'Institut de Philologie et d' Histoire Orientales, Bruxelles, 1935.
10. Եպիփան Կիպրացու Էκθεσις πρωτοκλησιών πατριαρχών τε και μητροπολιτών. Հայերէն եւ յունարէն, հրատարակեց Ֆ. Ն. Ֆինկ, Թիֆլիս, 1902:
11. Fedalto G., Hierarchia Ecclesiastica Orientalis, Series Episcoporum Ecclesiarum Christianorum Orientalum, I (Patriarchatus Constantinopolitanus), II (Patriarchatus Alexandrinus, Antiochensus, Hierusolymitanus) edizioni Messagero, Padova, 1988.
12. Γεωργιάδης Θ., «Η Εκκλησία του Πόντου (από τον 7^ο αι. ως το 1204)», Πόντος. Ιστορία και πολιτισμός (τ. 1-2), εκδ. «Μαλλιάρης-Παιδεία», 2007, τ. 1, с. 309-320.
13. Հակոբ Կարնեցի, Տեղագիր Վերին Հայոց, Մանր Ժամանակագրություններ XIII-XVIII դդ., կազմեց Վ. Ա. Հակոբյան (տ. I-II), ՀՍՍՌ ԳԱ հրատ., Եր, հ. II, 1956, էջ 541-582:
14. Հակոբյան Թ. Խ., Մելիք-Բաշխյան Ս. Տ., Բարսեղյան Հ. Խ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1-4, Երևանի համալսարանի հրատ., Եր., 1896-2001:
15. Հայոց «Վարք սրբոց»-ի վրացական խմբագրությունը, թարգմ. հին վրացերենից և ուսումնասիրությունը Պ. Մ. Մուրադյանի, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2008:
16. Карпов С., Средневековый Понт/Российские исследования по мировой истории и культуре, т. 15, The Edwin Mellen Press, Lewiston-Queenston-Lampeter, New York, 2001.
17. Ղազարեան Գ., Կոզմա կրոնատրի «Մենարսար» (1203 թ.), Հանդես Ամսօրեայ, 2018, թիւ 1-12, սիւն. 401-438:
18. Notitiae episcopatum ecclesiae constaninopolitanae. Texte critique, introduction et notes par J. Darrouzès. Paris, 1981.
19. Повествование вардапета Аристако́са Ластивертци/Пер. с древнеарм., вступ. ст., коммент. и прил. К. Н. Юзбашяна, М., 1968.
20. Սահակյան Լ.Ս., Համշենի Եղևպիտ-Էլվիթ բնակավայրի պատմությունը և տեղանվան ստուգաբանությունը, Լրաբեր հասարակական գիտությունների, 2012, № 2-3, էջ 305-314:
21. Τριανταφυλλίδης Π., Οι Φυγάδες, δράμα εις μέρη πέντε μετά μακρών προλεγόμενων περί Πόντου, έν Αθήναις, 1870.
22. Виноградов А. Ю., «Архитектура на стыке культур: храмовый комплекс Варзахана близ Байбурта в свете новых находок»//Античная древность и средние века, т. 48 (2021), с. 368-407.
23. Юзбашян К. Н., Армянские государства эпохи Багратидов и Византия IX-XI вв., М., изд. “Наука”, 1988.

Принята: 16. 09. 2021
 Рецензирована: 23. 10. 2021
 Сдана в пч.: 15. 11. 2021

Информация об авторе

Геворг КАЗАРЯН: доктор Богословия,
 Богословский факультет Афинского национального университета, Греция.
 Эл. почта: dngevorg@gmail.com

ԿԱՐԻՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՇՈՒՐՁ
(XVIII դ. վերջին քառորդ – XIX դ. առաջին քառորդ)

Արևան Մալոյան

ՀՀ ԿԳՄՄՆ «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն»

Բանալի բառեր՝ *Արևմտյան Հայաստան, եվրոպացի հեղինակ Լ.-Ֆ. Ֆերիեր-Սովբեֆ, ուղեգրություն, տեղեկություն, հայեր, քաղաք, առևտուր, արհեստագործություն:*

Հոդվածում քննության են առնվել XVIII դարի վերջին և XIX դարի առաջին քառորդների Կարին (Էրզրում) քաղաքի պատմության մի քանի տվյալներ, կատարվել են համապատասխան եզրահանգումներ, ճշգրտումներ ու լրացումներ: XVIII դարի երկրորդ կեսին Արևմտյան Հայաստանի ամենամարդաշատ և ամենահայաշատ քաղաքը Կարին-Էրզրումն էր, և հայոց թիվը XVIII դարի վերջին քառորդին Էրզրումում կազմել է շուրջ 24000-27000 մարդ: Արևմտյան Հայաստանի ամենամարդաշատ քաղաքը լինելուց բացի, Կարինը առևտրի ու արհեստագործության ամենախոշոր կենտրոնն էր:

Նախաբան. Մեծ Հայքի Բարձր Հայք աշխարհի Կարնո գավառի կենտրոն Կարին քաղաքը Հայաստանի հնագույն քաղաքներից է: Գրեթե բոլոր ժամանակներում Կարինը եղել է բավականին բազմամարդ, հայաշատ ու վաճառաշահ քաղաք:

XVIII դարավերջին և XIX դարասկզբին Արևելքում ճանապարհորդած եվրոպացի հեղինակների ուղեգրություններում կան արժեքավոր վկայություններ, որոնք կարևոր, հավաստի տվյալներ են հաղորդում վերոհիշյալ ժամանակաշրջանի Օսմանյան կայսրության, ինչպես նաև հայոց պատմության վերաբերյալ: Դրանք բավականին գնահատելի տեղեկություններ են և կարող են օգտակար լինել հետագա ուսումնասիրու-

թյունների համար: Եվրոպացի ճանապարհորդները հետաքրքիր և արժեքավոր տվյալներ են հաղորդում նաև Կարինի մասին: Մասնավորապես, XVIII դարի վերջին քառորդի Ֆրանսիացի հեղինակ Լ.-Ֆ. Ֆերիեր-Սուվրեֆը¹ Կարինի մասին գրում է հետևյալը. «Էրզրումը՝ Հայաստանի գլխավոր քաղաքներից մեկը, բավական ընդարձակ է, վատ կառուցված և տեղադրված մեծ հարթավայրի ծայրին. շրջապատված է սարերով, որոնք նրա կլիման դարձնում են շատ ցուրտ. բնակչությունը շատ բազմաթիվ է, թուրքերն այնտեղ համարյա բոլորը զինվորական են, իսկ հայերը կազմում են բնակչության մեկ երրորդը. Եփրատը սկիզբ է առնում այս քաղաքից մի քանի լյո հեռավորության վրա. նրա տարածքը նույնքան հաճելի է, որքան բերրի:

Հարևան հանքերն արտադրում են շատ պղինձ, որից պատրաստում են ամանեղեն, որը կազմում է Էրզրումի առևտրի լավագույն ճյուղը, և որի կաթասները հոչակված են ամբողջ կայսրությունում:

Այնտեղ շարունակաբար մեծ թիվով քարավաններ են գալիս Բաղդադից, Պարսկաստանից կամ Վրաստանից, և մաքսատունը անսահման մեծ է և շահույթի մեծ մասը տալիս է փաշային, որը վեզիրի տիտղոս է կրում»²:

Կարին քաղաքի բնակչության ազգային կազմը XVIII դարի վերջին քառորդին և XIX դարի առաջին քառորդին

XIX դարասկզբին, ըստ Ղ.Ինձիճյանի, Կարին-Էրզրումի բնակչության թիվը «կարծի լինել 100000 տուն տաճկաց. և իբրև 13000 տուն հայոց, յորոց չորս մասն են օտա-

¹ Ֆրանսիացի քաղաքական գործիչ և դիվանագետ Լուի-Ֆրանսուա Ֆերիեր-Սուվրեֆը XVIII դարի վերջին քառորդի հեղինակ է. նրա ճանապարհորդության շարժառիթը դեսպանագնացական էր: Նա 1782–1789 թթ. Լյուդովիկոս 16-րդի կառավարության կողմից դիվանագիտական առաքելությամբ ուղարկվում է Կ.Պոլիս և այստեղից երկու անգամ (1784–1785 թթ. և 1787 թ.) մեկնում է Իրան՝ Սպահան: 1788 թ. սեպտեմբերի 18-ին Ֆերիեր-Սուվրեֆը վերադառնում է Ֆրանսիա և Արևելքում ճանապարհորդական իր հիշողությունները հրատարակում է 1790 թ. Մասատրիխտում (2 հատոր), ապա նաև Փարիզում (1790, 2 հատոր): Ֆերիեր-Սուվրեֆի ուղեգրությունը երրորդ անգամ հրատարակվում է Փարիզում 1807 թ. «Voyages Faits en Turquie, en Perse et en Arabie» վերնագրով, 2 հատորով: Այն հրատարակվել է նաև զերմաներեն: Տե՛ս La Grande Encyclopédie Inventaire Raisonné des Sciences, des Lettres et des Arts, t. 17; Biographie Universelle Ancienne et Moderne, Nouvelle Edition, Tome Septième, Bruxelles, 1843-1847; Larousse du XXe Siècle en Six Volumes, Publié sous la Direction de Paul Augé, Tome Troisième. Paris. -1930 (այստեղ նրա ծննդյան թվական է նշված 1762 թվականը): **Полневктов М.** Европейские путешественники XIII-XVIII вв. по Кавказу, Академия наук СССР. Научно-исследовательский институт кавказоведения имени академика Н. Я. Марра. Тифлис. -1935: **Զուլայան Մ. Կ.**, Հայ ժողովրդի XIII-XVIII դարերի պատմության հարցերը ըստ Եվրոպացի հեղինակների, գիրք Ա., Երևան, 1990:

² **Ferrières-Sauveboeuf L.-F.**, Mémoires historiques, politiques et géographiques des voyages du comte de Ferrières-Sauveboeuf, Fait en Turquie, en Perse et en Arabie; Depuis 1782 jusqu'en 1789; Avec ses Observations sur la Religion, les Mœurs, le Caractère et le Commerce de ces trois Nations. Suivies de détails très-exacts sur la Guerre des Turcs avec les deux Cours Impériales, d'Autriche et de Russie; les dispositions des trois Armées, et les résultats de leurs Campagnes. A Maestricht, Chez J. P. Roux et Compagnie, Imprimeurs-Libraires, associés. -1790, tome premier, p. 207.

րականք, և մի մասն բնիկ քաղաքացիք հայք»³: Անդրադառնալով Բնճիճյանի վերոբերյալ տեղեկությանը՝ վաստակաշատ պատմաբան Ա. Մելքոնյանը իրավամբ կարծում է, թե «այստեղ տաճիկների թվաքանակի կողքը դրված «տուն» բառը պետք է կարդալ նույնքան բնակիչ», իսկ հայերի մասին տվյալները համարում է թերի⁴:

XIX դարի առաջին քառորդի Կարինի բնակչության թվաքանակի վերաբերյալ տարբեր թվային տվյալներ են բերում նշված ժամանակաշրջանում այդ քաղաքում եղած եվրոպացի ուղեգրողները: Այսպես, ֆրանսիացի Պ.-Ա. Ժոբերը, 1805 թ. լինելով Կարինում, գրում է, որ քաղաքն ուներ 70000 բնակիչ⁵: 1807 թ. աշնանը Կարինում գտնված գեներալ Գարդանը նշում է 130000 բնակիչ⁶, որոնցից հինգ հարյուրը հայ կաթոլիկ էին: Իսկ 1809 թ. հունիսին Կարին ժամանած անգլիացի Ջեյմս Մորիերը գրում է, որ քաղաքում 4000-5000 հայ ընտանիք կա և մոտավորապես հարյուր հույն, առաջիններն ունեն երկու եկեղեցի, և վերջինները՝ մեկ: Կա թերևս 1000 պարսիկ: Երգրումի թուրքական բնակչությունը 50000 ընտանիք է: «Այս տեղեկությունը ես տալիս եմ՝ հիմնված մի լավատեղյակ հայի հաղորդագրության վրա, բայց այս երկրում մանրամասնությունները միշտ չափազանց կասկածելի են, և մեկ երրորդը պետք է զեղչել թրքական ընտանիքների թվի հաշվառումից»⁷: Հետևելով անգլիացի ուղեգրողի դիտողությանը՝ Ա. Մելքոնյանը քաղաքի բնակչության թիվը ճշգրտում է՝ մոտավորապես 100000 մարդ⁸:

Ջ. Մորիերի վերոհիշյալ տեղեկությունը կասկածի տակ է առել նաև 1812 թ. Կարինում եղած անգլիացի Վ. Աուզլեյը՝ գրելով. «Բնակիչների թվի մասին նույն չափազանցած տեղեկությունները հաղորդեցին նաև ինձ: Մակայն նա (Մորիերը) ընդունելով 270000 կամ 275000 բնակիչ, թերևս չափազանց շատ է պահել տեղական ենթադրությունը... սակայն իմ մակերեսային նկատողությունը հեղինակություն չի տալիս ինձ նրանց թիվը նույնիսկ 200000 համարելու»⁹: Անգլիացի մեկ այլ ուղեգրող Քեր Փորթըրը գրում է, որ «վերջիններից (հայերից) տեղեկացա, թե քաղաքի (Կարին - Ա.Մ.) բնակչության թիվը մոտավորապես 6000 քրիստոնյա էր և 50000 մահմեդական: Կան քառասունհինգ մզկիթ

³ Բնճիճեան Ղ., Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, Ասիոյ. Եւրոպիոյ. Ափրիկոյ և Ամէրիկոյ: Աշխատասիրութեամբ Տեառն Հայր Ղուկաս Վարդապետի Բնճիճեան Կոստանդնուպօլսեցոյ. յաշակերտութենէ Տեառն Միսիթարայ մեծի Աբբայի: Ի Վենետիկ, Ի Վանս սրբոյն Ղազարու, Յամի տեառն 1806, Մասն Առաջին, Ասիա, Հատոր Ա., էջ 68 (այսուհետև՝ Բնճիճեան Ղ., Աշխարհագրութիւն):

⁴ Մելքոնյան Ա., Երգրում. Երգրումի նահանգի հայ ազգաբնակչությունը XIX դարի առաջին երեսնամյակին (Պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Երևան, 1994, էջ 35 (այսուհետև՝ Ա. Մելքոնյան, Երգրում):

⁵ Հակոբյան Հ., Աղբյուրներ Հայաստանի և Անդրկովկասի պատմության, Ուղեգրություններ, Հատոր Զ., ԺԹ. դարի առաջին քսանամյակ (1800-1820), հրտ. Մելքոնյան ֆոնդի, Երևան, 1934, էջ 147 (այսուհետև՝ Հակոբյան Հ., Ուղեգրություններ):

⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 96:

⁷ Հակոբյան Հ., Ուղեգրություններ, հ. Զ., էջ 285:

⁸ Մելքոնյան Ա., Երգրում, էջ 136:

⁹ Հակոբյան Հ., Ուղեգրություններ, հ. Զ., էջ 485:

և երկու եկեղեցի»¹⁰: Ա. Մելքոնյանն իրավացիորեն գրում է, որ հայերը միտումնավոր իրենց թվաքանակը իրականից նվազ են ցույց տվել, որպեսզի կառավարությունը չբարձրացնի հարկերը և մտցնի նորերը¹¹: 1813-1814 թթ. Արևելքում ճանապարհորդած Ջոն Մաքքոնալդ Քիննեյը Կարինի բնակչության թիվը համարում է 15000 տուն մահմեդական, 3700 տուն հայ, 300 տուն հայ կաթոլիկ և 350 տուն հույն¹²: Վրացի ճանապարհորդ Գ. Ավալիշվիլին, որը ճանապարհորդել է 1819-1820 թթ., գրում է, որ Կարինում կար 300 տուն հույն, 400 տուն ֆրանկ, 7000 տուն հայ և 14000 տուն մահմեդական¹³: Ակնհայտ է, որ երկու հեղինակների մոտ զգալի տարբերություն կա հատկապես մահմեդական և հայ ընտանիքների տվյալներում: Պ. Չոբանյանն իրավամբ Կարինի հայերի վերաբերյալ Գ.Ավալիշվիլու տվյալը համարում է բացահայտ ուռճացում¹⁴: 1830 թ. առաջ Կարինի բնակչության թիվը Բրանտը համարում է 130000, Սմիթը և Դուայթը՝ 16878 ընտանիք կամ 80000-100000 շունչ, որից 11733 ընտանիքը՝ մահմեդական, 3950 ընտանիքը կամ 19000 հոգին՝ առաքելական, 645 ընտանիքը՝ կաթոլիկ հայ¹⁵, Ժ.-Շ. Բեսը՝ 70000 հոգի¹⁶, Ն. Ուշակովը՝ 80000-100000 մարդ արական սեռի, որից հինգերորդ մասը հայեր էին, Ա. Ս. Պուշկինը՝ 100000 բնակիչ¹⁷, Ա. Վեդենյայինը՝ 25000 տուն, 1/3-ը՝ հայեր, 2/5-ը՝ թուրքեր, 1/15-ը՝ հրեաներ, քրդեր, լազեր, աջարներ, եզդիներ կամ սաֆիներ և այլն¹⁸:

Ավելի ուշ շրջանի ուսումնասիրողներից ոմանք ևս կարծիքներ և տեսակետներ են հայտնել քննարկվող հարցի մասին: Այսպես, հայ աշխարհագրագետ Մ. Ծաղիկյանը բերում է 100000 թիվը¹⁹: Սփյուռքահայ հեղինակ Ս. Ս. Ծոցիկյանը կրկնում է նրան²⁰:

¹⁰ Նույն տեղում, էջ 835:

¹¹ Մելքոնյան Ա., էրզրում, էջ 36:

¹² Kinneir J. M. Voyage dans l'Asie-Mineure, l'Arménie et le Kourdistân, dans les années 1813 et 1814; Suivi de remarques sur les Marches d'Alexandre, et la Retraite des Dix-Mille, Par John Macdonald Kinneir, Capitaine au service de l'honorable Compagnie des Indes, major de place au fort Saint-George, et agent diplomatique auprès du Dorbar de sa hauteesse le Nabâb du Carnatic. Traduit de l'Anglais, par N. Perrin, Avec une grande carte. Librairie de Gide Fils. Paris. -1818. tome deuxième. p. 121: Հմմտ. «Մասեաց Աղանի», 1864, N 11, 21 հոկտեմբեր, էջ 338 (ճանապարհորդությունն ի Հայս, Ճոն Մաքքոնալդ Քիննեյը):

¹³ Чобанян П. Армяне в “Путешествии” Георгия Авалишвили. // “Кавказ и Византия”. Выпуск 1. Ереван. -1979. с. 103: Նաև՝ Պ. Չոբանյան, Վրացական ուղեգրությունները և նրանց տեղեկությունները հայերի մասին, էջ 113:

¹⁴ Чобанян П. Армяне в “Путешествии” Георгия Авалишвили. // “Кавказ и Византия”. Выпуск 1. Ереван. -1979. с. 103,

¹⁵ Մելքոնյան Ա., էրզրում, էջ 37:

¹⁶ St u Besse Jean-Charles. Voyage en Crimée, au Cavcase, en Géorgie, en Arménie, en Asie-Mineure et à Constantinople, en 1829 et 1830; Pour servir à l'histoire de Hongrie. Par Jean-Charles Besse. Delaunay. A Paris. Libraire. Au Palais-Royal.-1838. p. 316.

¹⁷ Մելքոնյան Ա., էրզրում, էջ 37:

¹⁸ St u Ներսիսյան Մ. Գ., Դեկաբրիստները Հայաստանում, Երևան, 1959, էջ 264, հմմտ. Ա. Մելքոնյան, էրզրում, էջ 37:

¹⁹ St u Ծաղիկեան Հ. Մ. վ., Համառոտ աշխարհագրությունն դասատանց համար, Գրեց՝ Հ. Մեսրոպ վ. Ծաղիկեան Մխիթ. ուխտէն, Վիեննա, Մխիթարեանց տպարան, 1857, էջ 139:

80000-100000 է նշում թուրք պատմաբան Հալիլ Ինալչիքը: Հ. Ղազարյանը պնդում է, որ XIX դարի առաջին երեսնամյակին Կարինում ապրում էր նվազագույնը 130000 մարդ, որից 100000-ը՝ թուրք և այլազգի, 30000-ը՝ հայ²¹:

XVIII դարի վերջին քառորդին Մերձավոր Արևելքում ճանապարհորդած Խրիստոս Լեոպոլդսոն գրում է.«Երբ Աստծո օգնությամբ Էրզրումը գրավվի ձմեռ ժամանակ, ինչպես վերն էր ասված, ապա կարելի է հուսալ, որ այնտեղ կգտնենք մինչև 20000 քրիստոնյա հայ ընտանիք»²²: Նշենք, որ այս տեղեկության մեջ ևս զգալիորեն ուռճացված է Կարինի հայերի թվաքանակը:

Այսպիսով՝ տարբեր աղբյուրների վկայությունները և ուսումնասիրողների կարծիքները Կարինի բնակչության թվի վերաբերյալ տատանվում են 56000-ից 200000-ի սահմաններում, հեղինակների մեծամասնությունը պնդում է 80000-130000-ի օգտին:

Ա. Մելքոնյանի հաշվումներով՝ XIX դարի առաջին քառորդին Կարինի ամբողջ բնակչությունը կազմել է մոտ 108500-110000 մարդ, որոնցից հայ՝ մոտ 27000²³ հոգի:

Այսպիսով՝ եթե XIX դարի առաջին քառորդին քաղաքի բնակչությունը կազմել է առավելագույնը 110000 մարդ, ապա XVIII դարի վերջին քառորդին այն, ամենայն հավանականությամբ, եղել է 70000-90000 մարդ: Եվ եթե, ըստ Լ.-Ֆ. Ֆերիեր-Սովրեֆի վկայության, Կարինի բնակչության մեկ երրորդը կազմել են հայերը, ապա հայոց թիվը XVIII դարի վերջին քառորդին Կարինում եղել է մոտ 24000-30000:

Ինչպես վերը նշվեց, Կարինի հայերն ունեին երկու եկեղեցի: Ըստ Ղ. Ինճիճյանի՝ երկուսն էլ «յանուն Աստուածածնի», մեկը՝ Վերի կամ Միաբան Աստվածածին, մյուսը՝ Վարի: «Վերի եկեղեցին ունի կաթողիկէ»²⁴: Սակայն Էրզրումի հայոց առաջնորդանիստն էր Մուսուրկու գյուղի Լուսավորչի վանքը²⁵:

Կարինի հայության տնտեսական կյանքը

Արևմտյան Հայաստանի ամենամարդաշատ ու ամենահայաշատ քաղաքը լինելուց բացի՝ Կարինը նաև Արևմտյան Հայաստանի ամենախոշոր առևտրա-արհեստավորական կենտրոնն էր և մինչև զանգվածային գաղթը մնում էր ոչ միայն իբրև ասիական առևտրի ու արհեստագործության խոշոր կենտրոններից մեկը, այլև ամբողջ երկրի արհեստավորների համար ավանդներ ստեղծողը, կանոններ մշակողը, էսնաֆությունների մեջ ընդգրկվածների իրավունքներն ու պարտականությունները սահմանողը²⁶:

Կարինը նաև կապող օղակ էր Դամասկոսի, Հալեպի, Ջմյունիայի, Վանի, Դիարբեքի, Կարսի, Թոքատի, Տրապիզոնի, Մերաստիայի, Անդրկովկասի, Պարսկաս-

²⁰ Տե՛ս Ծոցիկեան Ա. Մ., Արևմտահայ աշխարհ, Նիւ Եորք, Տպագրութիւն Ա. Յ. Լիլիկեան, 1947, էջեր 292-293:

²¹ Տե՛ս Ղազարյան Հ., Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800-1870թթ., ՀՄՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1967, էջ 147, հմմտ. Ա. Մելքոնյան, Էրզրում, էջ 38:

²² Путешествия по Востоку в эпоху Екатерины II, Издание подготовили А. А. Вигасин, С. Г. Каршук. Издательская фирма „Восточная литература“ РАН. М. "Школа-Пресс". -1995. с. 272.

²³ Տե՛ս Մելքոնյան Ա., Էրզրում, էջ 40:

²⁴ Ինճիճեան Ղ., Աշխարհագրութիւն, Մասն Ա., հ. Ա., էջ 69:

²⁵ Նույն տեղում, էջ 75:

²⁶ Ղազարյան Հ., Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը, էջ 177:

տանի առևտրական կենտրոնների միջև: Քաղաքի վաճառանոց-շուկաներում և փողոցներում կային զանազան արհեստավորների բազմաթիվ կրպակներ՝ ոսկերիչների, արծաթագործների և մանավանդ «պղնձագործաց և երկաթագործաց, որոց կրպակք ըստ մեծի մասին կարգեալ կան ի միում պողոտայի՝ որ ծածկեալ է փայտայարկ առաստաղիք, և են յազգէս հայոց: Են ի նմա և բազմութիւն վաճառականաց մանաւանդ յազգէս հայոց, որոց յաճախութիւն դասէ գէրգիւռում ի կարգս վաճառաշահ քաղաքաց Օսմանեան տէրութեան....»²⁷:

Փաստորեն, XVIII դարավերջին և XIX դարասկզբին հայերը Կարինում, բնակչության թվով բացարձակ մեծամասնություն չկազմելով հանդերձ, իրենց ձեռքում էին պահում քաղաքի արհեստագործությունն ու առևտուրը: Թեև Կարինում պղնձագործությունը զարգացման բարձր մակարդակի վրա էր գտնվում, այնուամենայնիվ պղնձաձակության ասպարեզում առաջնության դափնին պատկանում էր Թոքատ-Եվդոկիային²⁸: Այդ մասին վկայում է Ղ. Ինձիճյանը՝ գրելով. «Ի Թոխաթէն առնու պղնձեղէն անօթս, զի շինեալն իւր ստորին է քան զնորայն»²⁹: Ինչնիցէ, պղնձագործությունը Կարինում իր բարձրակետի վրա պահպանվեց մինչև 1830 թ. և այնուհետև կարողացավ կենդանության նշույլներ ցույց տալ դարի երկրորդ կեսին միայն³⁰:

Գաղթից առաջ Կարինի հայերի զբաղմունքի վերաբերյալ հետաքրքիր տվյալներ են պահպանվել մի տեղեկագրում, որտեղ նշված է. «Էրզրումի բնակիչներից հայերը զլիսավորապես պարապում էին վաճառականությամբ: Էրզրումը Պարսկաստանի և Տաճկաստանի փոխադրական վաճառականության կենտրոնն էր, ուստի թե՛ տեղացի և թե՛ օտար վաճառականներն անդադար լցվում էին Էրզրումում և ծաղկեցնում վաճառականությունը: Ներքերում էին օսմանյան սահմաններից շաքար, սուրճ, նիշատիր, լեղակ, կարմիր որդան, հինա, երկաթ, պողպատ, պղինձ, գոմշի մորթի (Ախայցխայից և Թիֆլիսից): Կտորեղեններ՝ խումաշ, խութնի, չիչեկլի (Հալեպից), ֆես, մանր ապրանքներ՝ հայելի, ածելի, թուղթ, մկրատ ու ֆրանսիական մահուդ, ատլազ, դատիֆա և այլ կտորներ: Պարսկաստանի սահմաններից՝ շալ, մուշտակներ (թույալեթ), բամբակ: Իսկ արտահանում էին ցորեն, գարի, զանազան պղնձեղեն և արծաթեղեն շինվածքներ, զենքեր և այլն:

Բացի վաճառականությունից, ժողովուրդը պարապում էր և արհեստներով, որոնցից առավելապես ծաղկած էր պղնձագործությունը: Մեծ էր և որմնադիրների, քարտաշների, հյուսների, դանակ շինողների թիվը: Քաղաքացիների մի մասն էլ պարապում էր երկրագործությամբ և պարտիզպանությամբ՝ մշակելով քաղաքի շրջակայքի ընդարձակ դաշտերը»³¹:

²⁷ Ինձիճեան Ղ., Աշխարհագրութիւն, Մասն Ա., հ. Ա., էջ 71:

²⁸ Տե՛ս Ղազարյան Հ., Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը, էջ 176:

²⁹ Ինձիճեան Ղ., Աշխարհագրութիւն, Մասն Ա., հ. Ա., էջ 63:

³⁰ Տե՛ս Ղազարյան Հ., Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը, էջեր 178-179:

³¹ Գարբիւյան Մ., Ուշագրավ տեղեկագիր Կարնո գավառի հայության և 1829-1830թթ. գաղթի վերաբերյալ // Բանբեր Հայաստանի արխիվների, N 3, 1974, էջ 87:

Շնորհիվ առևտրական տարանցիկ երթուղիների խաչմերուկ հանդիսացող իր դիրքի՝ Կարինը Օսմանյան կառավարությանը հսկայական շահույթ էր ապահովում³²: Դրան նպաստում էր նաև այն, որ «Վաճառականութիւն Էրզրումայ ծաղկեալ է յոյժ. և գլխաւոր վաճառք են բերք նորա: Առաքէ ի Գաղղիա, Յօլանտա և յԱնգղիա թիֆտիկ այծի, առաքէ ի Մոսկով և անտի ի Պոլխարա գմորթ ջրշան, ուստի կազմեն ի Պոլխարայ գաղարայ մուշտակաց իւրեանց. գմորթ ջրի ոչխարի, ուստի մոսկովք կազմեն իւրեանց գլխարկս. առաքէ ընդ պէսպէս աշխարհս նաև զամորձիս այսր կենդանւոյ, ի տաճկաց կոչեցեալ Գունտուզ հայասի, որ ի գործ ածի ի դեղորայս. ...մորթս գայլոյ, կուզ կենդանւոյ, և կատուի. ի Պարսս առաքէ անօթս պղնձիս պախրոեղէնս: Ինքն առնու յայլոց սահմանաց Օսմանեան տէրութեան պէսպէս հրահալելիս, նիւթս գունոց. նաև երկաթ՝ որ գայ ի Սամախոռէ, որ ի յԱռումելի. առնու նաև ի Մոսկովէն, զի որ ելանէ ի Կեղի սանձագ սորա՝ է նուազ: Ի փաշայութենէ Ախլցխայի առնու մանաւանդ շրջակայ ոլորտն Էրզրումայ քաղաքին զանազան պտուղս. զորօրինակ խաղող, թուզ, նուռն, ձէթ. և այլն: Ի Պարսից առնու զպէսպէս վաճառս նորա, նաև ի Հնդկաց, և ի Գաղղիոյ և ի Գերմանիոյ և այլն, զզանազան վաճառս նոցա»³³: XIX դարասկզբին (1811-1812 թթ.) Կարինով անցած գերմանացի ուղեգրող Ֆրեյզանը գրում է. «Էրզրումը Հայաստանի արևմտյան մայրաքաղաքն է, նմանապես պահեստը թրքական առևտրի, որ այստեղից անցնում է դեպի Հնդկաստան...»³⁴:

Արևմտյան Հայաստանի այլ վաճառաշահ քաղաքները՝ Ակնը և Արաբկիրը, Կարինում ունեին մշտական առևտրական ներկայացուցիչներ: Կային առևտրական և դիվանագիտական մարմիններ, որոնք Թուրքիայի արևելքում ներկայացնում էին եվրոպական մի քանի երկրներ³⁵:

Եզրահանգում. Այսպիսով՝ XVIII դարի երկրորդ կեսին և XIX դարի առաջին քառորդին Արևմտյան Հայաստանի ամենամարդաշատ և ամենահայաշատ Կարին-Էրզրում քաղաքն ունեցել է մոտ 70000-90000 բնակչություն: Եվ եթե, ըստ Լ.-Ֆ. Ֆերիեր-Սովբեֆի վկայության, Էրզրումի բնակչության մեկ երրորդը հայեր էին, ապա հայոց թիվն այդ շրջանում քաղաքում եղել է մոտ 24000-30000:

Կարինը նաև առևտրի ու արհեստագործության խոշորագույն կենտրոն էր, նաև՝ կապող օղակ Դամասկոսի, Հալեպի, Ջմյուռնիայի, Վանի, Դիարբեքիրի, Կարսի, Թոքատի, Տրապիզոնի, Մեքաստիայի և Անդրկովկասի ու Պարսկաստանի առևտրական կենտրոնների միջև: Փաստորեն, նշյալ ժամանակահատվածում հայերը Կարինում, բնակչության թվով բացարձակ մեծամասնություն չկազմելով հանդերձ, իրենց ձեռքում էին պահում քաղաքի արհեստագործությունն ու առևտուրը:

³² Տե՛ս Մելքոնյան Ա., Էրզրում, էջ 42: Տե՛ս նաև **Чихачев П.**, Письма о Турции. Перевод с французского и предисловие В. В. Цыбульского. Ответственный редактор А. С. Тверитинова. М. Издательство восточной литературы. -1960. с. 31, **Линч Х. ֆ. Բ.**, Армения. Путевые очерки и этюды. Перевод с англ. Елизаветы Джунковской. Тифлис. Торговый дом Е. И. Питоев. -1910. Т. 2. сс. 262-263.

³³ **Ինճիճեան Ղ.**, Աշխարհագրութիւն, Մասն Ա., հ. Ա., էջեր 63-64:

³⁴ **Հակոբյան Հ.**, Ուղեգրություններ, հ. Զ., էջ 410:

³⁵ Տե՛ս Մելքոնյան Ա., Էրզրում, էջեր 42-43:

**О НЕКОТОРЫХ ДАННЫХ ИЗ ИСТОРИИ КАРИНА
(последняя четверть XVIII века – первая четверть XIX века)**

Maloyan A. M.

Ключевые слова: *Карин (Эрзрум), Западная Армения, европейский автор Л.-Ф. Феррьер-Совбеф, путевые заметки, сообщения, армяне, город, торговля, промысел.*

В статье исследованы некоторые факты конца XVIII века из истории города Карин (Эрзрум), и сделаны определенные выводы, уточнения и дополнения.

Во второй половине XVIII века Карин-Эрзрум был самым густонаселенным городом Западной Армении, где проживало самое большое количество армян. В конце XVIII века в Карине проживало около 70000-90000 человек. И если, по свидетельству французского путешественника Л.-Ф. Феррьер-Совбефа, одну треть Эрзрума составляли армяне, то в конце XVIII века их численность составляла около 24000-30000 человек.

Будучи самым густонаселенным и самым большим городом с армянским населением Западной Армении, Карин был еще и центром торговли и ремесел. Карин являлся также связующим звеном между торговыми центрами Дамаска, Алеппо, Смирны (Измира), Вана, Диярбакыра, Карса, Токата, Трапезунда, Себастии, Закавказья и Персии. Фактически, в конце XVIII века и в начале XIX века армяне в Карине, не составляя абсолютное большинство, сосредоточили в своих руках торговлю и ремесла в городе.

**ABOUT SOME DATA FROM THE HISTORY OF KARIN
(last quarter of the XVIII century - first quarter of the XIX century)**

Maloyan A. M.

Key words: *Karin (Erzrum), Western Armenia, European author L.-F. Ferrières-Sauvebœuf, travel notes, information, Armenians, city, trade, handicrafts.*

There are some facts of the last 18th century from the history of the city of Karin (Erzrum), and certain conclusions, clarifications and additions in the article.

In the second half of the 18th century, Karin-Erzrum was the most populous city in Western Armenia, where the largest number of Armenians lived. At the end of the 18th century about 70,000-90000 people lived in Karin. According to the testimony of the French traveler L.-F. Ferrières-Sauvebœuf, one third of Erzrum were Armenians. At the end of the 18th century the number was about 24,000-30,000 people.

Being the most populous and the largest Armenian population city in Western Armenia, Karin was also a center of trade and crafts. Karin was also a link between the shopping centers of Damascus, Aleppo, Smyrna (Izmir), Van, Diyarbakir, Kars, Tokat, Trebizond, Sebastia, Transcaucasia and Persia. In fact, at the end of the 18th century and at the beginning of the 19th century, the Armenians in Karin, not constituting an absolute majority, concentrated trade and crafts in the city in their hands.

Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. Դարբինյան Մ., Ուշագրավ տեղեկագիր Կարնո գավառի հայության և 1829-1830 թթ. գաղթի վերաբերյալ, // Բանբեր Հայաստանի արխիվների, N 3, Երևան, 1974, 83-96 էջեր:
2. Զուլալյան Մ. Կ., Հայ ժողովրդի XIII-XVIII դարերի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների, Գիրք Ա. Քաղաքական պատմություն, Երևան, ՀՀ ԳԱ հրատ., 1990, 364 էջ:
3. Ինճիճեան Ղ., Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, Ասիոյ, Եւրոպիոյ. Ափրիկոյ. և Ամերիկոյ: Աշխատասիրութեամբ Տեառն Հայր Դուկաս Վարդապետի Ինճիճեան Կոստանդնուպօլսեցոյ. յաշակերտութենէ Տեառն Մխիթարայ մեծի Աբբայի: Ի Վէնետիկ, Ի Վանս սրբոյն Ղազարու, Յամի տեառն 1806, Մասն Առաջին, Ասիա, Հատոր Ա., 424+58 էջ:
4. Ծաղիկեան Հ. Մ. վ., Համառօտ աշխարհագրութիւն դասատանց համար, Գրեց՝ Հ. Մեսրոպ վ. Ծաղիկեան Մխիթ. ուխտէն, Վիեննա, Մխիթարեանց տպարան, 1857, 191 էջ:
5. Ծոցիկեան Ս. Մ., Արեւմտահայ աշխարհ, Նիւ Եորք, Տպագրութիւն Ա. Յ. Լէյլէկեան, 1947, 816 էջ:
6. Հակոբյան Հ., Աղբյուրներ Հայաստանի և Անդրկովկասի պատմության, Ուղեգրություններ, ԺԹ. դարի առաջին քսանամյակ (1800-1820), Հրտ. Մելքոնյան ֆոնդի, Երևան, 1934, Հատոր Զ., 884 էջ:
7. Ղազարյան Հ., Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800-1870 թթ., Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1967, 669 էջ:
8. Մելքոնյան Ա., Էրզրում. Էրզրումի նահանգի հայ ազգաբնակչությունը XIX դարի առաջին երեսնամյակին (Պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Երևան, «Հայաստան», ԳԱ հրատ., 1994, 180 էջ:
9. Ներսիսյան Մ., Դեկարիստները Հայաստանում, Երևան, Հայպետհրատ, 1958, 440 էջ:
10. Չոբանյան Պ. Ա., Վրացական ուղեգրությունները և նրանց տեղեկությունները հայերի մասին, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1981, 199 էջ:
11. [Քիննէյր ճոն-Մարտոնալ], Ճանապարհորդութիւն ի Հայս, // Մասեաց Աղանի աւետարեր Հայաստանեայց, N 11, 21 հոկտեմբեր, Փարիզ, 1864, 337-343 էջեր:
12. Линч Х.ф.Б. Армения. Путевые очерки и эпюды. Перевод с англ. Елизаветы Джунковской. Тифлис. Торговый дом Е.И. Питоев. -1910. Т. 2. 675 с.
13. Поливектов М. Европейские путешественники XIII-XVIII вв. по Кавказу. Академия наук СССР. Научно-исследовательский институт кавказоведения имени академика Н. Я. Марра. Тифлис.-1935.
14. Путешествия по Востоку в эпоху Екатерины II. Издание подготовили А. А. Вигасин, С. Г. Карпюк. Издательская фирма «Восточная литература» РАН; М. «Школа-Пресс». -1995. с. 272.
15. Чихачев П. Письма о Турции. Перевод с французского и предисловие В.В. Цыбульского. Ответственный редактор А.С. Тверитинова. М. Издательство восточной литературы. -1960. 86 с.
16. Чобанян П. А. Армяне в «Путешествии» Георгия Авалишвили. // „Кавказ и Византия”. Выпуск 1. Ереван. Издательство АН Армянской ССР. -1979. 98-119 сс.
17. Besse Jean-Charles, Voyage en Crimée, au Cavcase, en Géorgie, en Arménie, en Asie-Mineure et à Constantinople, en 1829 et 1830; Pour servir à l'histoire de Hongrie. Par Jean-Charles Besse. Delaunay. A Paris. Libraire. Au Palais-Royal. -1838. 464 p.
18. La Grande Encyclopédie Inventaire Raisonné des Sciences, des Lettres et des Arts, t. 17, p. 326; Biographie Universelle Ancienne et Moderne, Nouvelle Edition, Tome Septième. Bruxelles. -1843-1847. 367 p.; Larousse du XXe Siècle en Six Volumes, Publié sous la Direction de Paul Augé. Tome Troisième. Paris. 1930. 458 p.

19. Ferrières-Sauveboeuf L.-F. Mémoires historiques, politiques et géographiques des voyages du comte de Ferrières-Sauveboeuf, Fait en Turquie, en Perse et en Arabie; Depuis 1782 jusqu'en 1789; Avec ses Observations sur la Religion, les Mœurs, le Caractère et le Commerce de ces trois Nations. Suivies de détails très-exacts sur la Guerre des Turcs avec les deux Cours Impériales, d'Autriche et de Russie; les dispositions des trois Armées, et les résultats de leurs Campagnes. Chez J. P. Roux et Compagni. A Maestricht. Imprimeurs-Libraires. associés. -1790. tome premier. 242 p.
20. Kinneir J. M. Voyage dans l'Asie-Mineure, l'Arménie et le Kourdistân, dans les années 1813 et 1814; Suivi de remarques sur les Marches d'Alexandre, et la Retraite des Dix-Mille, Par John Macdonald Kinneir, Capitaine au service de l'honorable Compagnie des Indes, major de place au fort Saint-George, et agent diplomatique auprès du Dorbar de sa hauteesse le Nabâb du Carnatic. Traduit de l'Anglais, par N. Perrin, Avec une grande carte. Paris. Librairie de Gide Fils. -1818. tome deuxième. 404 p.

Ընդունվել է՝ 02. 09. 2021

Գրախոսվել է՝ 22. 10. 2021

Հանձնվել է տպ.՝ 15. 11. 2021

Տեղեկություններ հեղինակի մասին

Արման ՄԱԼՈՅԱՆ՝ պատմական գիտությունների թեկնածու,

ՀՀ ԿԳՄՄՆ «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն»

հիմնադրամի վերապատրաստման ծրագրերի մշակման և վերապատրաստումների արդյունավետության գնահատման բաժնի պետ,

Էլ. հասցե՝ armanmaloyan@mail.ru , armanmaloyan1976@gmail.com

ՀՏԴ՝ 93.94

DOI: 10.52971/18294316-2021.3-105

ԿԻՍԿԻՄԻ (ԲԵՐԴԱԳՐԱԿԻ) ԳԱՎԱՌԻ
ՊԱՏՄԱՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ
ՏԵՂԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԻ ՇՈՒՐՁ¹

Արկադի Ակոպով, Արմեն Հայրապետյան

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

Բանալի բառեր՝ *Տայք, Ճորոխ, նահանգ, հուշարձան, եկեղեցի, բերդ, գյուղ, բնակչություն, հայեր:*

Մույն հոդվածի շրջանակներում առանձին ուսումնասիրության առարկա են դարձել Օսմանյան կայսրության Ախալցխայի, իսկ 1878թ. սկսած՝ Էրզրումի նահանգի Կիսկիմի գավառի տարածքի պատմաճարտարապետական հուշարձանները: Հայ և օտար աղբյուրների համադրմամբ լուսաբանվում է այդ հուշարձանների վիճակը մեր օրերում, զուգահեռ ներկայացվում են ժողովրդագրական տվյալներ, որոնք ընդգրկում են XIX դ-ից մինչև Հայոց Մեծ եղեռն ընկած ժամանակաշրջանը:

Լսվաբան. Պատմական Մեծ Հայքի Տայք աշխարհի արևմտյան գավառ Արսեացփոքը համարվում էր «...յետին սահմանք Հայոց ընդ արևմտեանն հիւսիս և սահմանակիցք Պոնտոսի...»²: Գավառը, որ զբաղեցնում էր բավականին ընդարձակ տարածք, Օսմանյան տիրապետության տարիներին վարչականորեն տրոհվեց երկու հատվածների՝ Պարխարի և Կիսկիմի (Բերդագրակ): Վերջինս տեղագրվում էր պատմական Մեծ Հայքի Տայք աշխարհի Արսեացփոք գավառի հարավային և կենտրոնական շրջաններում: Գավառի սահմաններն արևմուտքում հասնում էին մինչև Մալերի հովիտ, հարավում և հա-

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՄՆ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21T-2A292 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

² Ալիշան Ղ., Տեղագիր Հայոց մեծաց, Վենետիկ, 1856, էջ 38:

րավ-արևելքում՝ Թորթում, հյուսիսում և հյուսիս-արևմուտքում՝ «Պարխար լեռինք անջրբլետեն ընդ Համշեն յարեւմուտս հիւսիսոյ»³:

XVI դ. վերջերից մինչև 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմը Կիսկիմի գավառը գտնվում էր Օսմանյան կայսրության Ախալցխայի նահանգի (էյալեթ) կազմում: Սակայն, կայսրությունում տեղի ունեցած վարչական փոփոխությունների արդյունքում Կիսկիմի գավառն 1831 թ. ընդգրկվեց Էրզրումի նահանգի նույնանուն սանջակի կազմի մեջ⁴ իբրև կազա (գավառակ): Ըստ ֆրանսիացի արևելագետ Վ. Քինեի հաղորդած տեղեկությունների՝ XIX դ. երկրորդ կեսին այն բաժանված էր 12 գյուղախմբերի⁵ (նահիե)՝ 61 գյուղերով⁶: Ի դեպ, դրանց ստվար մասն ամառանոց ու ձմեռանոց էր:

Կիսկիմի գավառի գյուղական բնակավայրերը տեղաբաշխված էին ճորոխի երկայնքով: XIX դ. կեսերին Ղ. Ալիշանը հետևյալ կերպ է նկարագրում գավառը. «Բերդագրակ եւ Կիսկիմ. սա յաջմէ կայ ճորոխի մերձ ի սահմանս Թորթումայ. եւ մերձ նմին Արսիս, որ թուի գլխաւոր տեղի Արսեացիոր գաւառի Տայոց. իսկ Բերդագրակ յահելէ գետոյն ի հիւսիսոյ Արսեաց. որոց մերձ է Օշնախ կամ Որջնհաղ գիւղ...: Կուտրաշեն, Կարմիրք հայաբնակ գէօք, ի յետնումն բնակեն Հռովմէական Հայք, վասն որոյ եւ Ֆռենկ քէօյի կոչի: Բազմութիւն Հռովմէական Հայոց բնակէ եւ յարեւմտից Բերդագրակայ ի Խոտրջուր կամ Խոտորջուր վիճակի յետքն կամ յութ գիւղից գումարելոյ...»⁷:

1843-1844թթ. տարածաշրջան այցելած գերմանացի ճանապարհորդ Կ. Կոխի նկարագրությամբ՝ գավառն ուներ 20 գյուղ՝ Կարմրիկ (Կարմենիկ, Կարմիրք), Կուդրաշեն, Նիխաղ, Որջնհաղ, Ջորկանց, Կիսկիմ, Արսիս, Ջոջեք (Կոջեք) և Քոլիկ գյուղերը ճորոխի աջ ափին, Քամրուտ, Կիցփորուտ, Դյորթթիլիսա, Գուռնառ, Բերդագրակ, Հունգամեք, Իցաձոր, Վերին և Ստորին Սոխուրկուտներ, Խնակ գյուղերն ու Խոտորջրի գյուղախումբը՝ ձախ ափին⁸: Կիսկիմի գավառատեր Դուրախ-Ալի բեգի հավաստմամբ՝ գավառի բնակիչները մինչև XVIIIդ. վերջերը քրիստոնյա էին: Տեղի հայ իշխանը սպանվել էր «հավատի համար մղված կոլում»: Նրա որդին Կ. Պոլսում մահմեդական կրթություն էր ստացել և վերադարձել էր հայրենի իշխանություն: Գավառի բնակչության մահմեդա-

³ Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 39:

⁴ **Karpat K.**, Ottoman Population, 1830–1914. Demographic and Social Characteristics (= Turkish and Ottoman studies). University of Wisconsin Press. Madison. -1985, p. 14. Վարչական այսպիսի բաժանումը երկարաժամկետ չի լինում, իսկ Էրզրումի նահանգը XIX դ. ընթացքում պարբերաբար ենթարկվում է վարչական վերաբաժանումների:

⁵ 12 գյուղախմբերի մասին խոսում է ֆրանսիացի Վ. Քինեն, սակայն թվարկում է դրանցից միայն 6 –ը՝ Խոտորջուրի, Որջնհաղի, Հունգամեքի, Բերդագրակի, Արսիսի և Վակուֆի գյուղախմբերը: Տե՛ս **Cuinet V.**, La Turquie d'Asie : géographie administrative, statistique, descriptive et raisonnée de chaque province de l'Asie-Mineure, tome premier. Paris. -1892. p. 134.

⁶ **Cuinet V.**, նշվ. աշխ., էջ 205:

⁷ Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 39:

⁸ **Koch K.**, Wanderungen Im Oriente Während Der Jahre 1843 Und 1844. Reise Im Pontischen Gebirge Und Türkischen Armenien, Weimar, -1846, s. 76. Խնակ գյուղը, որը կազմված էր 5 թաղերից և ուներ 1000-1200 հոգի բնակչություն, Կ. Կոխի կողմից սխալմամբ վերագրվում էր Կիսկիմի գավառին: Տե՛ս **Koch K.**, նշվ. աշխ., էջ 98:

կանացումը սկսվել էր կոտորածով, «...ինչպես ամեն տեղ, ուր ներմուծվելու էր Մուհամեդի վարդապետությունը»⁹: Ի դեպ, այդ մասին XIX դ. սկզբին վկայում էր նաև Ղ.Ինճիճյանը. «...բնակիչք նոցա առհասարակ էին յազգէս Հայոց, այլ ապա ըստ մեծի մասին դարձան ի տաճկուօրին. և սակաւ մնացին ի քրիստոնէից»¹⁰: Այն որ Կիսկիմի գավառի մահմեդական ազգաբնակչությունը գերազանցապես կրոնափոխված հայեր էին, երևում է հետևյալից. նրանք ծանոթ էին հայկական տեղանուններին, նույնիսկ գյուղամասերի և թաղերի անվանումներին: Օտարականին արտաքնապես կարող էր թվալ, թե երկրի մեծ մասը թրքախոս է: Սակայն հայ մահմեդականը, հատկապես համիդյան սթիփն շրջանում, ստիպված էր «խորշիլ հայութեան արտաքին երեւոյթներէն» և չհալածվելու համար թուրքերեն խոսել¹¹: Գավառի մահմեդականները խիստ տարբերվում էին իրենց թուրք կրոնակիցներից: Նրանք, լինելով կեսկեսներ, խոսում կամ լիովին հասկանում էին հայերեն, չունեին խիստ մահմեդական սովորություններ և բարեկամական հարաբերությունների մեջ էին քրիստոնյա հայերի հետ¹²:

Գավառի բնակչության թվաքանակի վերաբերյալ մանրամասն տեղեկությունների ենք հանդիպում Գ.Սրվանձոյանի 1878 թ. կազմած վիճակագրական աղյուսակներում: Դրանցում տեղեկություններ կան բնակավայրերի ընդհանուր վիճակի, ծխերի թվի, բնակչության էթնոկրոնական կազմի, նյութական միջոցների, կրթօջախների, դրանց տնտեսական վիճակի, սովորողների թվի և այլնի մասին: Այսպես, Սրվանձոյանի հավաստմամբ, 1878 թ. գավառի բնակչության թիվը հասնում էր 13440-ի, որից «...ի Կիսկիմ հայք են 8350, թուրք՝ 5000, հույնք՝ 90»¹³:

Կիսկիմի գավառը հարուստ է պատմամշակութային հուշարձաններով, որոնց տեղագրության և արդի վիճակին է նվիրված սույն հետազոտությունը:

Ճորոխի աջ փիի պատմաճարտարապետական հուշարձանները

Գավառի վարչական կենտրոնը սկզբնապես Կիսկիմ (այժմ՝ Alanbaşı) գյուղն էր¹⁴, որ XIX դ. կեսերին բնակեցված էր գերազանցապես հայերով: 1878 թ. հայության թիվն այստեղ կազմում էր 400 մարդ (41 տուն), այնինչ թուրքերն ընդամենը 50-ն էին: Գյուղում գործում էր Հայկազյան վարժարանը՝ 50 սովորողներով¹⁵: Այսօր բնակավայրից 1 կմ հարավ պահպանվում են փոքր չափերի եկեղեցու մնացորդները: Եկեղեցու ավերակների կարելի է հանդիպել նաև գյուղի տարածքում: Գյուղից 800 մ արևմուտք՝

⁹ Koch K., նշվ. աշխ., էջ 75:

¹⁰ Ինճիճյան Ղ., Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, մաս Ա, հ. Ա, Ասիա, Վենետիկ, 1806, էջ 132:

¹¹ Տաշեան Յ., Հայ բնակչութիւնը Մեւ ծովէն մինչեւ Կարին, Վիեննա, 1921, էջ 79:

¹² Տաշեան Յ., Տայք, դրացիք և Խոտորջուր, հ. Բ, Վիեննա, 1980, էջ 290:

¹³ Կոստանդյան Է., Արևմտյան Հայաստանի հայաբնակ վայրերի վերաբերյալ Գ.Սրվանձոյանի կազմած վիճակագրություններից // Բանբեր Հայաստանի արխիվների, 1976, № 2, էջ 87:

¹⁴ Հետագայում թուրքերը վարչական կենտրոն դարձրին Արսիս (Էրսիս) գյուղը՝ պատճառաբանելով, թե այստեղ մահմեդականներն ավելի մեծ թիվ են կազմում (Մանրամասն տե՛ս Տաշեան Յ., Հայ բնակչութիւնը Մեւ ծովէն մինչեւ Կարին, էջ 53):

¹⁵ Կոստանդյան Է., նշվ. աշխ., էջ 85:

դժվարամատույց ժայռի վրա են գտնվում բերդի մնացորդները: Դա մոտ 5 մ բարձրությամբ պարիսպ է՝ կառուցված փոքր ու միջին չափերի քարերով¹⁶:

Գիսկիմից փոքր-ինչ հեռու գտնվում էր ոչ պաշտոնական գավառակենտրոն Արսիսը (այժմ՝ Kiliçkaya): Ա. Երիցյանի հավաստմամբ՝ Արսիսը Գիսկիմի գավառի խառը ազգային կազմ ունեցող բնակավայրերից մեկն էր: Հայերի հետ միասին այստեղ ապրում էին թուրքեր ու լազեր: 1872 թ. տվյալներով Արսիսում բնակվում էր 28 հայկական ընտանիք (224 մարդ)¹⁷: Այսօր գյուղից մոտ 5 կմ հարավ պահպանվում է միջնադարյան բերդը, որի պարսպաշարի առավելագույն բարձրությունը հասնում է 15 մետրի: Բերդի ներսում պահպանվում են նաև այլ կառույցներ: Տեղացիները բերդն անվանում են Գալբոյնու¹⁸:

Արսիսից հյուսիս էր գտնվում Կոջեք գյուղը (այժմ՝ Çeltikdüzü): 1872 թ. տվյալներով սա ևս խառը ազգային կազմով գյուղ էր և ուներ 13 հայ ընտանիք (104 մարդ)¹⁹: Գյուղից 2 կմ արևելք՝ բլրի վրա, պահպանվում են բերդի հատվածներ, իսկ գյուղի ծայրին՝ ժայռափոր եկեղեցի²⁰:

Գավառակենտրոն Գիսկիմից 6-7 կմ հարավ-արևմուտք Որջնհաղ (այժմ՝ Köprügören) գյուղն էր՝ հայտնի դեռևս վաղ միջնադարից²¹: Այն գավառի հայախառն բնակչություն ունեցող գյուղերից էր: XVIII դ. վերջին գյուղը մահմեդականացել էր, սակայն 1830-ականներին 42 ընտանիք կարմրիկցիներ, հաստատվելով այստեղ, եկեղեցի կառուցեցին²²: Ցավոք, այսօր այդ եկեղեցուց հետքեր չկան: Փոխարենը, պահպանվել են Մամիկոնյանների ժամանակ կառուցված միջնադարյան ամրոցի ավերակները: Պահպանված հատվածում ամրոցի պարսպի բարձրությունը հասնում է 3 մ-ի: Պարիսպը կառուցված է միջին չափերի քարերով և կրաշաղախով²³:

Որջնհաղից 7-8 կմ դեպի հարավ-արևմուտք՝ Ճորոխից ոչ հեռու, գտնվում էր Նիխաղ գյուղը (այժմ՝ Yokuşlu): Գ. Սրվանձությանի հավաստմամբ՝ գյուղը 1878 թ. ուներ 15 տուն (135 մարդ) հայ ազգաբնակչություն: Գյուղի Փրկյան վարժարանում սովորում

¹⁶ Կառ-Վլադիմիր Դեգլեբի 2016 թ. հունիսի 16-րդ համաժողովի անգարիմբի, Թ. Խուրմուշյան, Զ. Գոբալիմբի, Կ. Իմեդաշվիլի, Մ. Կոլոբաշվիլի, Դ. Մալխաչյան, Լ. Միլիտարով, Կ. Միլիտարով, Կ. Միլիտարովի համագործակցությամբ, Երևան, 2017, թ. 85-87:

¹⁷ Երիցյան Ա. Список населенных пунктов бывшей Эрзерумской области, находившейся во временном управлении России, / «Известия Кавказского отдела императорского русского географического общества». Т. 8. Тифлис. -1884-85. Дополнения. с. 84:

¹⁸ Կառ-Վլադիմիր Դեգլեբի 2016 թ. հունիսի 16-րդ համաժողովի անգարիմբի, թ. 99:

¹⁹ Երիցյան Ա., նշվ. աշխ., էջ 84:

²⁰ Կառ-Վլադիմիր Դեգլեբի 2016 թ. հունիսի 16-րդ համաժողովի անգարիմբի, թ. 72:

²¹ Որջնհաղ գյուղը հայտնի է նրանով, որ Ավարայրի ճակատամարտից հետո Վարդան Մամիկոնյանի եղբայրը՝ Հմայակը, գնդավար էր այստեղ՝ պարսիկների դեմ մղած կռիվի ժամանակ: Տե՛ս Լեռ, Հայոց պատմություն, հ. 2, Երևան, ՀՍՄԻ ԳԱ հրատ, 1947, էջեր 82-83:

²² Տաշչյան Յ., Տայք, դրացիք և Խոտորջուր, հ. Բ, էջ 83:

²³ Կառ-Վլադիմիր Դեգլեբի 2016 թ. հունիսի 16-րդ համաժողովի անգարիմբի, թ. 88:

էր 17 աշակերտ²⁴: Այսօր պահպանվել են մի փոքր հատված բերդից (մոտ 3 մ բարձրությամբ պարսպի մնացորդներ) և գյուղի եկեղեցու մեկ պատը՝ 8 մ երկարությամբ²⁵:

Կիսկիմի գավառի հարավային մասում՝ Թորթումի գավառի հարևանությամբ էր գտնվում Ջորկանց գյուղը (այժմ՝ Yamaçüstü): XIX դ. կեսերին այն ամբողջությամբ մահմեդականացած էր: Այդուհանդերձ միջնադարյան բերդի և եկեղեցու մնացորդները պահպանվել են առայսօր: Միջին չափերի քարերով և կրաշաղախով կառուցված բերդից համեմատաբար լավ է պահպանվել մոտ 5 մ բարձրությամբ աշտարակը: Ինչ վերաբերում է եկեղեցուն, ապա հստակ երևում է, որ այն միանավ սրահավոր տիպի էր՝ հյուսիսից, հարավից և արևմուտքից կից կառույցներով: Եկեղեցու պահպանված հատվածներում պատերն ունեն մինչև 2,5 մ բարձրություն²⁶:

Կիսկիմի գավառի հարավում՝ Սպեր գավառի հարևանությամբ էր գտնվում Կարմրիկ գյուղը: Գերմանացի ճանապարհորդ և երկրաբան Կ. Կոխը գյուղն անվանել է «Ֆիրենգի», ինչը ենթադրում է վերջինիս հայ կաթոլիկ լինելը²⁷: 1878թ. դրությամբ գյուղն ուներ 150 տուն (1200 մարդ) ազգաբնակչություն²⁸: Կարմրիկն ուներ նաև 2 եկեղեցի՝ Սբ Հայր Հովսեփի և Սբ Աստվածածին²⁹: Դրանց ավերակներին կարելի է հանդիպել նաև այսօր: Այսպես, Կարմրիկի կենտրոնից մոտ 900 մ հարավ-արևելք գտնվում է բավականին մեծ չափերի, համեմատաբար լավ պահպանված եկեղեցի: Եկեղեցու շրջակայքում գերեզմանոց է եղել, ինչի մասին վկայում են պահպանված խաչքարատիպ գերեզմանաքարերը: Գյուղի կենտրոնից 1,3 կմ արևելք մյուս եկեղեցու ավերակներն են: Կարմրիկի տների պատերի մեջ այսօր էլ կարելի է հանդիպել բազմաթիվ տաշված և զարդանախշերով քարեր՝ հանված եկեղեցիների պատերից³⁰:

Ճորոխի ձախ ափի պատմաճարտարապետական հուշարձանները

Կիսկիմի գավառի հյուսիսում՝ Ճորոխի ձախ ափին է գտնվում Չորդվանք գյուղը (այժմ՝ Tekkale): Թուրքական տիրապետության շրջանում բնակավայրը ստացավ Դյորթքիլիսա անվանումը, որը Չորդվանքի բառացի թարգմանությունն է: Գյուղը հայտնի է իր IX դ. եռանավ բազիլիկ տաճարով, որը X դ. վերանորոգվել է Դավիթ Կյուրապաղատի հանձնարարությամբ: Է. Թաղայշվիլու հավաստմամբ՝ հուշարձանն այդ անունն է ստացել ոչ թե կառուցված չորս եկեղեցիների պատճառով, այլ որ Տայքի չորրորդ հրաշակերտ եկեղեցին էր Օշկից, Խախուից և Իշխանից հետո³¹: Չորդվանքը Մամիկոնյանների շառավիղ Թոռնիկյանների ժառանգական արտոնությունն էր: Թոռնիկյան եպիսկոպոսները կրել են «Չորդվանեխի» տիտղոսը: «Չորդվանեխի» անվան մեջ «եխի» վերջա-

²⁴ Կոստանյան Է., նշվ. աշխ., էջ 85:

²⁵ Կառ-Վլադիմիրյանի մեջլեքի 2016 թվականի հունիսի 15-ի նիստի անգարիմբի, թ. 88-89.

²⁶ Կառ-Վլադիմիրյանի մեջլեքի 2016 թվականի հունիսի 15-ի նիստի անգարիմբի, թ. 89-90.

²⁷ Koch K., նշվ. աշխ., էջեր 57-58:

²⁸ Տե՛ս Կոստանյան Է., նշվ. աշխ., էջ 85:

²⁹ Էփրիկյան Ս., Պատկերագրող բնաշխարհիկ բառարան, հ. Բ, Վենետիկ, 1907, էջ 332:

³⁰ Կառ-Վլադիմիրյանի: Իստորիա և կուլտուրի մեջլեքի շառավիղ, թ. 55:

³¹ Տե՛ս Կառ-Վլադիմիրյանի Յ. Է., Археологическая экспедиция 1918 года в Южные провинции Грузии. Тб. - 1952. с. 82.

վորությունը վրացերեն է և համապատասխանում է հայերեն «եցի» վերջածանցին (Չորդվանեցի): Մա բացատրվում է հենց այն իրողությամբ, որ բնակավայրը և հուշարձանը պատկանել են քաղկեդոնական հայերին³²: Բացի այդ՝ «Չորդվանել» տիտղոսից առաջացել են բազմաթիվ անձնանուններ, որոնք հանդիպում են Թոռնիկյանների մոտ: Պատմությանը հայտնի են մի շարք «Չորդվանելներ», որոնք X դ. սկսած մեծ դեր են ունեցել Տայքի քաղաքական կյանքում³³:

Այսօր պահպանվում են Չորդվանքի վանական համալիրի շինությունները՝ եռանավ բազիլիկ տաճարը, սեղանատունը, ճեմարանը և երկհարկ աղոթասրահը: Մայր եկեղեցուց 100 մ հյուսիս-արևմուտք և 800 մ արևելք՝ պահպանվել են ևս երկու եկեղեցիների ավերակներ³⁴, որոնք միանավ բազիլիկ են և, ամենայն հավանականությամբ, մաս են կազմել վանական համալիրի:

Չորդվանքից մի քանի կմ հարավ-արևմուտք՝ բարձրադիր վայրում էր գտնվում Կիսկիմի գավառի երբեմնի կենտրոնը՝ Բերդագրակը (այժմ՝ Çevreli): Օսմանյան տիրապետության առաջին շրջանում Բերդագրակը նույնանուն գավառի վարչական կենտրոնն էր, և հիշատակվում է նաև Հակոբ Կարնեցու մոտ: 1872թ. դրությամբ այստեղ ապրում էր 312 հայ (39 տուն)³⁵: Այսօր պահպանվել է Բերդագրակի բերդի զգալի մասը, որի տարածքում ուրվագծվում է նաև հիմնահատակ ավերված եկեղեցու հատակագիծ³⁶:

Կիսկիմի գավառի հայկական բնակավայրերից էր Մոխուրկուտը (այժմ՝ Karakale): Գյուղը պատկանում էր Խոտորջուրի գյուղախմբին, սակայն նրանից բաժանված էր Երանավող լեռով: Կաթովիկ մոխուրկուտցիները խոսում էին Խոտորջուրի բարբառով: Տաշյանի հավաստմամբ՝ բնակավայրը բաղկացած էր 3 թաղերից (կամ գյուղերից)՝ Վերին Մոխուրկուտ, Գորգանց և Վարի Մոխուրկուտ³⁷: Վերջինում, հայերից գատ, բնակվում էին նաև 30 տուն մահմեդականները, ինչի պատճառով Կ. Կոխը ողջ Մոխուրկուտը ներկայացնում է իբրև 200 տներից (մոտ 1600 մարդ) բաղկացած խառն ազգաբնակչությամբ գյուղ³⁸: Հետաքրքիր է այն, որ Ղ. Ինճիճյանը Մոխուրկուտի ժողովրդագրական պատկերը ներկայացնելիս չի հիշատակում մահմեդականների: Կարելի է ենթադրել, որ մահմեդականներն այստեղ հայտնվել են 1830 թ. արևմտահայերի վերաբնակեցումից հետո՝ զբաղեցնելով վերջիններիս տեղը: Հավանաբար նույն օրերին մահմեդականներ

³² Ակոսով Ա., Տայքը XVI դարից մինչև XIX դարի I երեսնամյակը, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հրատ., 2013, էջ 75:

³³ Տե՛ս Դանիելյան Է., Տարոնի և Սասունի Մամիկոնյաններ-Թոռնիկյանները, ՊԲՀ, 1979, N 2, էջեր 140-141: Մագիստրոս Չորդվանելը մասնակցել է Վասիլ II-ի դեմ Վարդ Փոկասի ապստամբությանը, Լիպարիտ գորավարի քրոջ որդի Չորդվանելը 1021թ. զինակցել է սելջուկների դեմ դուրս եկած Վահրամ Պահլավունուն:

³⁴ Երևան-Վանաձորի միջև 2016 թ. հունիսի 1-ին կատարված զբոսաշրջության շրջանակում, զ. զ. 77-78.

³⁵ Ершов А., նշվ. աշխ., էջ 84: Բերդագրակի մասին խոսելիս Ա. Երիցյանը նշում է, որ գյուղի մահմեդականներից շատերը կրում են հայկական անուններ՝ Խաչատուր, Կարապետ, Սերոբ և այլն:

³⁶ Երևան-Վանաձորի միջև 2016 թ. հունիսի 1-ին կատարված զբոսաշրջության շրջանակում, զ. զ. 70.

³⁷ Տաշյան Յ., Տայք, դրացիք և Խոտորջուր, հ. Բ, էջ 286:

³⁸ Koch K., նշվ. աշխ., էջ 81.

են հայտնվել նաև Վերին Մոխուրկուտում: Հաջորդ տարիներին գյուղի հայերը մահմեդականներից վերագնեցին տներն ու հողամասերն ու ստիպեցին սրանց հեռանալ Վերին Մոխուրկուտից³⁹, այնպես որ Կ. Կոխի այցելության ժամանակ՝ 1843-1844 թթ., մահմեդական թաղ ուներ միայն Վարի Մոխուրկուտը: Գ.Սրվանձոյանի հաշվումների համաձայն՝ Վերին Մոխուրկուտը 1878 թ. ուներ 40 տուն (300 մարդ), իսկ Վարի Մոխուրկուտը՝ 15 տուն (100 մարդ) ազգաբնակչություն⁴⁰: Բնակչության թվի անկումը, մեր կարծիքով, պայմանավորված է XIX դ. 70-ական թվականներին Կիսկիմի գավառում լայն թափ ստացած Շարիֆօղլի Հուսեին բեգի, Թուլլօղլի Դուրսուն բեգի և Կակալօղլու ավագակային խմբերի գործունեության հետ⁴¹: Նեղվելով ավագակայիների ասպատակություններից՝ մոխուրկուտցիների մի մասն ապաստան գտավ հարևան Խոտորջուրում կամ հեռացավ Էրզրում: Այսօր Մոխուրկուտ գյուղից դուրս պահպանվում են մինչև հիմքն ավերված բերդի և եկեղեցու մնացորդները: Ի դեպ, տեղացիները խոստովանում են, որ բերդը կառուցել են «անհավատները»⁴²:

Ճորոխի ձախ ափին Կիսկիմի գավառը հասնում էր մինչև Խոտորջուր կոչվող գյուղախումբը (այժմ՝ Sirakonaklar)⁴³՝ բաղկացած ինը հիմնական գյուղերից (թաղերից)՝ Ճիճապաղ, Կրման, Կիսակ, Միջինթաղ, Խնդաձոր, Սունինց, Կախմուխուտ, Վահնա, Քեղուտ-Ցուցուլա, և երկու փոքր թաղամասերից՝ Արեգի և Մասրուտ: Գյուղախմբին էին պատկանում նաև 33 բարեշեն ամառանոցները և 10 ձմեռանոցները⁴⁴:

Խոտորջուրի բնակչության թվի վերաբերյալ կան տարբեր վկայություններ: Թեքրես բացառություն է միայն գերմանացի ճանապարհորդ Կ.Կոխը: Խոտորջուրցիներն արգելեցին նրան և ուղեկցող թուրք պաշտոնյաներին մտնել գյուղ: Ըստ Ղ. Ալիշանի՝ XIX դ. կեսերին գյուղախումբն ուներ մոտ «400 տունք եւ 2000 կամ անելի ոգիք»⁴⁵: Ընդամենը երեք տասնամյակ անց գավառակ այցելած Գ. Սրվանձոյանն պնդում է, որ Խոտորջուրը 1878 թ. դրությամբ ուներ 642 տուն (5650 մարդ) ազգաբնակչություն, որից գյուղախմբի կենտրոն Ճիճապաղն ուներ 95 տուն (830 մարդ), Կրմանը՝ 60 տուն (450 մարդ), Քեղուտը՝ 75 տուն (750 մարդ), Խնդաձորը՝ 96 տուն (800 մարդ), Սունինցը 82 տուն (770 մարդ), Կախմուխուտը՝ 80 տուն (770 մարդ), Վահնան՝ 30 տուն (230 մարդ),

³⁹ Տաշեան Յ., Տայք, դրացիք և Խոտորջուր, հ. Բ, էջ 288:

⁴⁰ Տե՛ս Կոստանդյան Է., նշվ. աշխ., էջ 85:

⁴¹ Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 1407, ց. 2, գ. 17, թ. 2:

⁴² ტაო-ვლარჯეთი: ისტორიისა და კულტურის ძეგლების კატალოგი, გვ. 237:

⁴³ Խոտորջուրի տարածքը մինչև VIII դարը պատկանել է Մամիկոնյաններին, այնուհետև՝ Բագրատունիներին, իսկ XIII-XVI դդ. ընդգրկված է եղել Սամցխեի աթաբեկության կազմի մեջ: Ղ. Ինճիճյանն այսպես է նկարագրում Խոտորջուրը. «Յրտուի օդոյ սրա ի լեռնային վայրս, գրեթե նման է գաւառին Էրզրոմայ. իսկ ի ձորավայրս առաւել ջերմ է քան գնորայն: Երկիրն լեռնային և ապարաժուտ, ունի և ձոր բազում և լերինս հողայինս, յորս բազում աղբերակունք գտանին քաղցր և պատուական ջուրց. այլ և խոտաւէտ արօտս անասնոց. ի տեղիս տեղիս ունի և անտառ զանազան ծառոց: Բաց ի Հայոց օտար ազգ ոչ գտանի ի Խոտորջուր...»: Տե՛ս Ինճիճեան Ղ., նշվ. աշխ., էջ 133:

⁴⁴ Տե՛ս Գևորգյան Թ., Խոտորջուր // Բանբեր Երևանի համալսարանի, 1971, № 3, էջ 205:

⁴⁵ Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 39:

Կիսակը՝ 41 տուն (350 մարդ), Միջինթաղը՝ 63 տուն (550 մարդ), Արեգինը՝ 20 տուն (150 մարդ)⁴⁶:

Մեր կարծիքով, Խոտորչուրի ժողովրդագրական դրության մասին Ղ. Ալիշանի հաղորդած տեղեկությունները թերի են: Դժվար է պատկերացնել, որ 30 տարվա ընթացքում գյուղախմբի բնակչության թիվն ավելանար մոտ 200 %-ով: Չնայած Խոտորչուրի Մեծավոր Տեր-Կարապետ I Չախալյանին հաջողվել էր մինչև 1840 թ. շոշափելի առավելության հասնել ավազակապետեր Կիսկանչու, Կրճելի, Ղարադերելի, Օնբաշու նկատմամբ և 1840-1860-ական թթ. Խոտորչուրի բնակչության համար բարենպաստ պայմաններ ապահովել⁴⁷:

Մինչև Հայոց Մեծ եղեռնը Խոտորչուրը հարուստ էր պատմաճարտարապետական հուշարձաններով: Բոլոր գյուղերում կային եկեղեցիներ և մատուռներ: Այսպես, Խանդավազի կենտրոնում էր գտնվում Սբ Երրորդություն եկեղեցին, որի կողքին էր հին՝ Սբ Աստվածածին եկեղեցին: Կային նաև մատուռներ՝ Սբ Հայր Հովսեփ, Սբ Հակոբ և Սբ Կարապետ⁴⁸: Գեղուտ-Ցուցուլայի մայր եկեղեցին էր Սբ Աստվածածինը⁴⁹, իսկ Վահնայինը՝ Սբ Գևորգը⁵⁰: Միջին թաղի կենտրոնում մայր եկեղեցին էր: Միջին թաղի գերեզմանատանն էր գտնվում Սբ Պետրոս-Պողոս մատուռը, իսկ դեպի Կիսակ տանող ճանապարհին՝ Սբ Դավիթ մատուռը: Կար նաև Սբ Գևորգ անունով մատուռ⁵¹:

Այսօր Խոտորչուրում պահպանվել են հայության երբեմնի ներկայության եզակի հետքեր: Հայկական պատմամշակութային ժառանգության մեծագույն մասը ոչնչացվեց թուրքերի կողմից՝ վերջին հարյուրամյակի ընթացքում: Պահպանված հուշարձաններից կարելի է առանձնացնել Միջին թաղի բավականին լավ պահպանված եկեղեցին, որն այսօր գործող մզկիթ է: Պահպանվել է նաև մուտքի մոտ հայատառ արձանագրությամբ Միջին թաղի գերեզմանատունը՝ իր խաչազարդ տապանաքարերով: Հազվադեպ կարելի է հանդիպել նաև բնակելի շինությունների, որոնց գոյության մասին առաջին անգամ տեղեկացել ենք հարյուրամյա վաղեմության լուսանկարներում:

Եզրահանգում. Պատմական Մեծ Հայքի Տայք աշխարհի Արսեացվոր գավառի կենտրոնական և հարավային հատվածներում օսմանյան տիրապետության շրջանում տեղագրվում էր Կիսկիմի գավառը: Գավառում ցայսօր պահպանվող պատմաճարտարապետական հուշարձաններից շատերը՝ եկեղեցիներ ու վանքեր, բերդեր ու ամրոցներ, վկայված են դեռևս վաղ միջնադարյան սկզբնաղբյուրներում և կազմում են հայկական պատմամշակութային ժառանգության մաս: Ցավոք, գավառի հուշարձաններից շատերը չեն հասել մեր օրեր՝ բարբարոսաբար ոչնչացվելով երկրամասի այսօրվա տերերի և գանձախույզների կողմից: Մեզ հասած հուշարձանների ձևող մեծամասնությունն էլ,

⁴⁶ Տե՛ս **Կոստանդյան Է.**, նշվ. աշխ., էջ 85:

⁴⁷ ՀԱԱ, ֆ. 1407, ց. 2, գ. 17, թ. 2:

⁴⁸ ՀԱԱ, ֆ. 1407, ց. 2, գ. 97, թ. 2-3:

⁴⁹ Նույն տեղում, էջ 25:

⁵⁰ Նույնը:

⁵¹ Նույն տեղում, էջ 38:

չնայած իր ներկայիս անմխիթար վիճակին, գավառի հայկական անցյալի փառավոր ու խոսուն վկան է:

**О РАСПОЛОЖЕНИИ И СОВРЕМЕННОМ СОСТОЯНИИ
ИСТОРИЧЕСКИХ И АРХИТЕКТУРНЫХ ПАМЯТНИКОВ
ПРОВИНЦИИ КИСКИМ (БЕРДАГРАК)**

Акопов А. А., Айрапетян А. С.

Ключевые слова: *Тайк, Чорох, область, памятник, церковь, крепость, село, население, армяне.*

Провинция Киским находилась в центральной-южной части области Арсеатспор исторической провинции Тайк Великой Армении во время османского владычества. Многие историко-архитектурные памятники, сохранившиеся в Тайке до наших дней - церкви и монастыри, крепости и замки - упоминаются в раннесредневековых источниках и являются преимущественно частью армянского исторического и культурного наследия. К сожалению, многие памятники провинции не дошли до наших дней, будучи варварски уничтоженными нынешними владельцами и кладоискателями региона. Подавляющее большинство дошедших до нас памятников, несмотря на плачевное состояние, являются славными и красноречивыми свидетельствами армянского прошлого края.

**ON THE LOCATION AND CURRENT CONDITION OF
THE HISTORICAL AND ARCHITECTURAL MONUMENTS
OF KISKIM (BERDAGRAK) PROVINCE**

Akopov A. A., Hayrapetyan A. S.

Key words: *Tayk, Chorokh, province, monument, church, fortress, village, population, Armenians.*

The province of Kiskim was located in the central-southern parts of the Arseatspor province of the historical Tayk during the Ottoman rule. Many of the historical-architectural monuments preserved in province to this day - churches and monasteries, fortresses and castles - are evidenced in the early medieval sources and are predominantly part of the Armenian historical and cultural heritage. Unfortunately, many of the monuments of the province have not reached our days, being barbarically destroyed by the current owners of the region and treasure hunters. The vast majority of the monuments that have reached us, despite being in a deplorable state, are the glorious and eloquent testimonies of the Armenian past of the province.

Գ ր ա կ ա ն ո թ յ ո ն

1. Ալիշան Ղ., Տեղագիր Հայոց մեծաց, Վենետիկ, 1856:
2. Ակոսով Ա., Տայքը XVI դարից մինչև XIX դարի I երեսնամյակը, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հրատ., 2013:
3. Գևորգյան Թ., Խոտորջուր // Բանբեր Երևանի համալսարանի, 1971, № 3, 204-216 էջեր:
4. Դանիելյան Է., Տարոնի և Սասունի Մամիկոնյաններ-Թոռնիկյանները, «Պատմա-բանասիրական հանդես», 1979, N 2, 137-153 էջեր:
5. Էփրիկյան Ս., Պատկերագրող բնաշխարհիկ բառարան, հ. Բ, Վենետիկ, 1907:
6. Ինձիճեան Ղ., Աշխարհագրություն չորից մասանց աշխարհի, մաս Ա, հ. Ա, Ասիա, Վենետիկ, 1806:
7. Լեռ, Հայոց պատմություն, հ. 2, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ, 1947:
8. Կոստանդյան Է., Արևմտյան Հայաստանի հայաբնակ վայրերի վերաբերյալ Գ.Սրվանձությանի կազմած վիճակագրություններից // «Բանբեր Հայաստանի արխիվների», 1976, № 2, 62-94 էջեր:
9. Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 1407, ց. 2, գ. 17,:
10. Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 1407, ց. 2, գ. 97:
11. Տաշեան Յ., Հայ բնակչությունը Սև ծովն մինչև Կարին, Վիեննա, 1921:
12. Տաշեան Յ., Տայք, դրացիք և Խոտորջուր, հ. Բ, Վիեննա, 1980:
13. Еришов А. Список населенных пунктов бывшей Эрзерумской области, находившейся во временном управлении России / "Известия Кавказского отдела императорского русского географического общества". Т. 8. Тифлис. -1884-85. Дополнения.
14. Такайпшвили Э. Археологическая экспедиция 1918 года в Южные провинции Грузии. Тб. -1952.
15. Cuinet V. La Turquie d'Asie : géographie administrative, statistique, descriptive et raisonnée de chaque province de l'Asie-Mineure, tome premier. Paris. -1892.
16. Karpat K. Ottoman Population, 1830–1914. Demographic and Social Characteristics (= Turkish and Ottoman studies). University of Wisconsin Press. Madison, -1985.
17. Koch K., Wanderungen Im Oriente Während Der Jahre 1843 Und 1844. Reise Im Pontischen Gebirge Und Türkischen Armenien. Weimar. -1846.
18. Երևան-Վան կարգադրություն: Իստորիոս և քաղաքային ժողովրդագրության քաղաքագրություն, ռեդ. Զ. Կալանթարյան, Երևան, 2017:
19. Երևան-Վան կարգադրության ժողովրդագրության 2016 թվականի վերջին տվյալների վերաբերյալ, Երևան, 2017:

Ընդունվել է՝ 15. 10. 2021

Գրախոսվել է՝ 23. 10. 2021

Հանձնվել է տպ.՝ 15. 11. 2021

Տեղեկություններ հեղինակների մասին

Արկաղի ԱԿՈՍՈՎ՝ պատմական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների
կենտրոնի գիտքարտուղար, էլ. հասցե՝ arkadonel@gmail.com

Արմեն ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ՝ պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի տնօրեն,
էլ. հասցե՝ armenani@mail.ru

ՀՏԳ՝ 93/94

DOI: 10.52971/18294316-2021.3-115

ԿԱՐՄԻ ՓՈԽԱՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Աշոտ Մանուչարյան

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Բանալի բառեր՝ *հանրապետություն, թեմ, փոխանորդություն, վարդապետ, եկեղեցի տաճար, որբ, եպիսկոպոս, քաջալերել:*

Հոդվածում ներկայացվում է Հայաստանի առաջին Հանրապետության տարիներին (1918-1920 թթ.) Երևանի հայրապետական թեմի Կարսի փոխանորդության գործունեությունը (1919 թ. մայիս-1920 թ. հոկտեմբեր), որը փոխանորդներ Արտակ և Կորյուն վարդապետների անկոտրում ջանքերով հիմնականում ծավալվել է մարզի եկեղեցիների, նախ և առաջ բերդաքաղաքի հնամենի Սբ Առաքելոց տաճարի վերագործարկման, հարյուրավոր որբացած երեխաների հոգածության ուղղությամբ:

Նախաբան. Հայտնի է, որ 1918 թ. ապրիլի 25-ին թուրքերին հանձնվեց Կարսը: Քաղաքում և շրջակա գյուղերում քեմալականները կոտորեցին 10 հազարից ավելի հայի: Տասնյակ հազարավոր հայեր էլ գաղթեցին Շիրակ, Երևան և այլ բնակավայրեր:

1919 թվականի ապրիլին անգլիացիների պահանջով թուրքերը հեռացան Կարսի մարզից: 1919 թ. ապրիլի 24-ին հայկական զորքերը մտան Կարս, մայիսի 13-ին՝ Օլթի և Կաղզվան¹:

1919թ. հունվարի 14-ին Ալեքսանդրապոլի վիճակի վերահաստատված փոխանորդ, նշանավոր եկեղեցական գործիչ, հայագետ, հետազայում ստալինյան բռնաճնշումների զոհ Արտակ վարդապետ Սմբատյանցը (1876-1937) համատեղությամբ ժամա-

¹ Տե՛ս «Կարսի մարզը Հայաստանի առաջին Հանրապետության կազմում (ապրիլ 1919թ.- հոկտեմբեր 1920թ.)», Նյութեր և փաստաթղթեր, աշխ.՝ Վ. Հակոբյանի, Երևան, 2016, էջ 98:

նակավորապես նշանակվում է Կարուց հաջորդության առաջնորդի թափուր պաշտոնին²:

Արտակ վրդ. Մմբատյանցը 1919 թ. մայիսի 22-ին նամակով Երևանի փոխթեմակալ Խորեն եպիսկոպոսին (հետագայում Ամենայն հայոց կաթողիկոս Խորեն Ա. Մուրադբեկյան՝ 1932-1938) իրազեկում է, որ մայիսի 2-ին թուրքերից ստացել է Կարսի Ս. Առաքելոց տաճարը՝ «իւր մեջ մնացած իրերով»: Հայր սուրբը հայտնում է տաճարի, հատկապես տանիքի նորոգության անհրաժեշտության մասին, որ «ապագայ խոնաութեան ազդեցութիւնից ազատուի, և բացի այդ, եկեղեցական զգեստներ և անօթներ պիտի գնուի, սեղանը երևի պիտի յարմարուի հայկականին ... Այժմ հարկաւոր է նախ նորոգութիւնը կատարել և ապա իսկալա³ կապել գմբէթի վերայից կիսալուսինները իջեցնելու և խաչեր բարձրացնելու»⁴: Վարդապետը վերջում առաջարկում է Ս. Առաքելոցն օգտագործել իբրև զինվորական եկեղեցի:

1919 թ. հունիսի 2-ին Կարսի նահանգապետ Ստեփան Ղորղանյանը Երևանի փոխթեմակալ Խորեն Մարադբեկյանին գրություն է ուղարկում, որտեղ հետաքրքրական մանրամասներ ենք գտնում Ս. Առաքելոց եկեղեցին հայությանը վերադարձնելու պատմությունում. «Դեռ 10-րդ դարում, ինչպէս յայտնի է, մեր Աբբաս թագաւորի օրով կառուցվեց Կարսի Սուրբ Առաքելոց տաճարը: Այնուհետև այդ եկեղեցին տարուբերում էր քաղաքական բախտի առանցքում, մերթ որպէս մզկիթ, մերթ ուղղափառ աղօթարան և տասնումէկ դար շարունակ՝ մայրենի մրմունջների ապաստարան... Այդպէս է մեր հինաւորց մեծահամբաւ տաճարի անցեալը: Մայիսի սկզբներում, երբ Կարսը անցաւ մեր իշխանութեանը, ինձ այցելեց Վեհափառ Կաթողիկոսի հրամանով Աղէքսանդրապօլի փոխանորդ Արտակ վարդապետը և խնդրեց այդ եկեղեցին: Քաղաքական միտումներով անժամանակ համարելով իրագործել Վեհափառի պատուէրը անյապաղ, ես բացատրեցի փոխանորդին, որ ես միջոցներ ձեռք կառնեմ, որպէսզի թուրքերը իրանք յանձնեն մեզ այդ եկեղեցին, առանց մեր պահանջների: Եւ այսօր թուրք հոգևորականութիւնը, շրջապատուած անուանի մեծատուններով, ներկայացաւ ինձ և խնդրամատոյց եղաւ յետ ստանալու մեր հինաւորց սրբութիւնը: Ես պատուիրեցի ոստիկանապետին առաջնորդել այդ պատուիրակութիւնը դէպի մեր առաջնորդարանը և սուրբ Առաքելոց հնադարեան տաճարը այսօր հանդիսաւոր կերպով յանձնեց մեզ»⁵:

Աղէքսանդրապոլի հաջորդ և Կարսի ժամանակավոր փոխանորդ Արտակ վարդապետը 1919 թ. հունիսի 22-ին հայտարարություն է ուղարկում Երևանի փոխթեմակալ

² Տե՛ս «Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության: Արտակ եպիսկոպոս Մմբատեանց (Տաուշեցի)», գիրք Գ, կազմեց Ս. Բեհբուդյան, Երևան, 1997, էջ 156 (այսուհետև՝ Վավերագրեր, Գ):

³ Նշանակում է փայտամած, որը ժամանակավոր փայտաշեն կառույց է՝ շենքի պատերը բարձրացնելու համար (տե՛ս «Հայոց լեզվի բարբառային բառարան», հ. 2, Երևան, 2002, էջ 182): Կարծում ենք՝ *իսկալա* բարբառային ձևը ծագում է ռուսերեն *шкала* = սանդղակ բառից:

⁴ «Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության: Խորեն Ա Մուրադբեկյան. Կաթողիկոս Ամենայն Հայոց (Հոգևոր գործունեությունը 1901-1938 թթ.)», գիրք Բ, կազմեց՝ Ս. Բեհբուդյան, Երևան, 1996, էջ 67:

⁵ Նույն տեղում, էջ 68:

Խորեն Եպիսկոպոսին, որտեղ առաջարկում է հրավիրել Ս. Առաքելոցի ռուսական մարմարյա սեղանի ու գեղաքանդակ խաչկալի հեղինակ վարպետ Անտրոլետտոսին, «որ անվնաս կարողանայ յետ տանել և հայկականին յարմարեցնել»⁶:

1919 թ. սեպտեմբերի 12-ին Արտակ վարդապետը գրությամբ Երևանի փոխբեմակալ Մուրադբեկյանին մանրամասնում է, որ ինքը, ժամանելով Կարս, օգոստոսի 17-ին հանդիսավոր թափորի ուղեկցությամբ Ս. Առաքելոց եկեղեցում կատարել է «պղծեալ տաճարի» կարգը, իսկ հաջորդ օրը՝ մատուցել ս. պատարագ, որի ընթացքում բարձրաձայն հիշատակել է «նոյն Ս. Տաճարի հիմնադիր Աբաս թագաւորը, և նօրա մեծ զօրավար և Հայաստանի երախտաւոր իշխան Գեորգ Մարգալետունին և յետոյ Հայոց Հանրապետութիւնը»⁷: Դրանով «զիս արժանի կացուցիք այն պատմական սրբազնագործութեան, որի շնորհիւ բացուեցին դարերով շարունակ հայի առաջ փակուած Հայ Թագաւորի շինած Մեծ տաճարի դռները»⁸:

1919 թ. հունիսի 14-ին Կարուց ժամանակավոր փոխանորդ Արտակ վարդապետը գեկուցագիր է ուղարկում Ամենայն հայոց կաթողիկոսին՝ Կարսում ամերիկյան կոմիտեի հիմնադրած որբանոցի և հիվանդանոցի մասին: Այդ տեղեկագրից իմանում ենք, որ ամերիկյան կոմիտեն Կարսում բացել էր որբանոց: Մանկատան մի մասը տեղավորված էր Կարսի նախկին առաջնորդարանի շենքում, որտեղ կար 266 որբ: Մյուս մասը տեղավորված էր քաղաքային դպրոցի շենքում, որտեղ կար 240 երեխա, միասին՝ 506 որբ: Արտակ վարդապետն այցելել է այդ որբանոցներ: Բոլոր որբերը մաքուր հագնված էին: Առաջնորդարանում գործող որբանոցն ուներ 16 սենյակ, որից 4-ը հիվանդանոց էր՝ տարատեսակ հիվանդությունների դեմ: Հիվանդանոցը և որբանոցը շատ լավ կահավորված էին և մաքուր, որբերը չունեին սննդի խնդիր⁹: Արտակ հայր սուրբը հայտնում է, որ երեխաների «կրօնաբարոյախոսական դասերի համար ես նշանակեցի Տ. Կորին քահանայ Քոթանջեանին»¹⁰: Արտակ վարդապետը հանդիպում է նաև որբանոցի լիազոր պ. Մակքեին, որը 22 տարի Ամերիկայում քարոզիչ է եղել: Նա ասաց, որ եկել են ոչ թե հայերի կրոնական զգացմունքներին դիպչելու, այլ սովից ազատելու, և ուրախացավ, որ քահանա է նշանակվել՝ որբերին բարոյական դասեր տալու համար:

Մինչև մեկ շաբաթ երկու բաժանմունքների որբերը պետք է տեղափոխվեն Բերդի ձորում գտնվող գորբանոցները, որտեղ ամերիկացիները պատրաստություն են տեսնում՝ որբերին միատեղ խնամելու համար¹¹:

Արդեն 1920 թ. սկզբին Կարսում կար յոթ որբանոց, որոնցից հինգը ձորի մեջ, երկուսը՝ քաղաքում: 1920 թ. հունվարի 9-ին ԱՄՆ-ի գլխավոր ներկայացուցիչ Քրեյնի խնդրանքով Կարսի վիճակի նորանշանակ փոխանորդ Կորյուն վարդապետ Սահակյանը հայ որբերի քրիստոնեական դաստիարակության համար Տ. Կորյուն քահանա Քո-

⁶ Վավերագրեր, Բ, էջ 69:

⁷ Նույն տեղում, էջեր 70-71:

⁸ Նույնը:

⁹ Վավերագրեր, Գ, էջ 166:

¹⁰ Նույնը:

¹¹ Նույն տեղում, էջեր 165-166:

թանջյանին նշանակում է ձորի հինգ որբանոցներում աշխատելու, իսկ Տ. Գրիգոր քահանա Նժդեհյանցին՝ քաղաքի երկու մանկատներում¹²:

Կարուց փոխանորդ Կորյուն վարդապետը 1920 թ. հունվարի 25-ին զեկուցագիր է ուղարկում Ամենայն հայոց կաթողիկոսին, որտեղ ներկայացնում է հունվարի 3-ին Կարսում ՀՀ վարչապետ Ալեքսանդր Խատիսյանի և ԱՄՆ ներկայացուցիչ, գնդապետ Հասկելի հանդիպումը և վերջինիս ճառը¹³:

Հունվարի 26-ին կաթողիկոսին հղված հայտարարությունում Կորյուն վարդապետը նկարագրում է Կարսի զինվորական հրապարակում կազմակերպված տոնահանդեսը՝ նվիրված Հայաստանի անկախության ճանաչմանը, որտեղ առաջինը խոսելու պատվին արժանացել է ինքը՝ Կարուց փոխանորդը¹⁴:

1920 թ. ապրիլի 14-ին Կարուց վիճակի փոխանորդ Կորյուն վարդապետը հայտարարությամբ Ամենայն հայոց կաթողիկոսին տեղեկացնում է, որ «ամսիս 11-ին 29 մարտի Զատիկի ս. Յարութեան օրը, պատարագեցի ինքս Ս. Առաքելոց Տաճարում և յետ ս. Պատարագի, Տաճարի ընդարձակ շրջափակումը ի ներկայութեան խումն բազմութեան, զինուորականաց և երկսեռ քաղաքացւոց, կատարեցի հանդիսաւոր հոգեհանգիստ, մասնակցութեամբ քաղաքիս երկու եկեղեցեաց միաբան քահանայից, 1915 թի Պօլսոյ և Հայաստանի բոլոր գաւառներում նահատակւած եօթ հարիւր վաթսուն հոգևորականների և մտաւորականների յիշատակին: Խօսեցի թէ օրուայ Մեծ Տօնի և թէ այդ առթիւ, կարդալով ի լուր ներկայից նահատակւած հոգևորականների և աշխարհականների այն անունները, որոնք իբրև յայտնիներ տպուած էին Մ. արքեպիսկոպոս Օրմանեանի տեղեկագրում»¹⁵:

Կարսի հոգևոր կառավարիչը 1920 թ. մայիսի 29-ին շնորհավորում է վեհափառ հայրապետին՝ Հայոց Հանրապետության հաստատության երկրորդ տարեդարձի առթիվ: Շնորհավորագրում մասնավորապես ասվում է. «Մայիսի 28-ին Ղարսի սուրբ Առաքելոց եկեղեցում պատարագից յետոյ եկեղեցոյ բակում հոգևորականութիւնն զօրքի և խումն բազմութեան ներկայութեամբ հանդիսաւոր մաղթանք կատարեց Հայոց Հանրապետության հաստատութեան երկրորդ տարեդարձի առթիւ, որի համար կառավարութիւնս սրտի անկեղծ ակնածութեամբ պատիւ ունի Ձերդ Վեհափառութեան զեկուցանելու իւր սրտաբուղիս շնորհաւորանքները»¹⁶:

Ամենայն հայոց կաթողիկոսի դիվանը 1920 թ. մայիսի 31-ին գրությամբ կարգադրում է Կորյուն վարդապետին մինչև առաջիկա հուլիսի 1-ը նոր փոխանորդ ընտրել Կարուց վիճակի համար: Դրան հաջորդում է խորհրդակցություն Կարսի քաղաքային վարչությունում՝ քաղաքազլիսի օգնական Խաչատուր Բզնունու նախագահությամբ, որտեղ հավաքվում է 50 ստորագրություն՝ ուղղված հայրապետին՝ խնդրանքով, որ մինչև

¹² Տե՛ս «Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան: Գեւորգ Ե Վշտալի Սուրենեանց. Կաթողիկոս Ամենայն Հայոց», զիբք ԺԳ, կազմեց Մ. Բէհբուղեան, Երևան, 2005, էջեր 502-503:

¹³ Տե՛ս նույն տեղում, էջեր 267-269:

¹⁴ Տե՛ս նույն տեղում, էջեր 269-270:

¹⁵ Վաւերագրեր, Երևան, էջեր 381-382:

¹⁶ Վաւերագրեր, Երևան, էջ 421:

նոր առաջնորդի ընտրություն փոխանորդի իր պաշտոնում մնա Կորյուն վարդապետը, որը բարեխիղճ կերպով վարել է փոխանորդությունը: Խորհրդակցության մասնակիցները միաժամանակ վեհափառին առաջարկում են Կարուց փոխանորդության վիճակի փոխարեն հիմնել Կարսի առաջնորդություն՝ թեմակալ առաջնորդով, թեմի պատգամավորական ժողովից ընտրված թեմական խորհրդով և «և ոչ թե կառավարի օրերով հեռու ընկած ռուսական կոնսիստորիաներով»: Պետք է նախապես որոշվեն թեմի սահմանները, «քանի որ Հայաստանի Հանրապետական Կառավարությունը իր քաղաքական բաժանումներն կատարել է Ղարսի և Աղեքսանդրապոլի վիճակների վերաբերման»¹⁷:

1920 թ. հունիսին Կարսի վիճակի փոխանորդ է շարունակվում հիշատակվել՝ «տէր Կորին վարդապետ»¹⁸: Ժամանակին Կորյուն վարդապետը եղել է Մկրտիչ Ա. Վանեցի կաթողիկոսի (1892-1907) անձնական քարտուղարը և գավազանակիրը: Տ. Կորյունը 1905-1906 թթ. Անդրկովկասում հայ-թաթարական ազգամիջյան արյունալի ընդհարումների ժամանակ ղեկավարել է Ելիզավետպոլի հայության ինքնապաշտպանության գործը: Ստեփան Կերտողը հիացմունքով նշում է, որ Կորյուն վարդապետ Սահակյանի «անունը չէր իջնում տեղի հայերի շուրթերից, և որը եղավ քաղաքի և գավառի հայերի ինքնապաշտպանության փայլուն ղեկավարներից մեկը»¹⁹: Ապա ուսումնասիրողը շարունակում է, որ ռուսական 1905-1907 թթ. հեղափոխությունը ճնշելուց հետո ցարական կառավարությունը մարեց նաև Կովկասի ազգամիջյան ընդհարումների օջախները և «արդարադատության իր սուրբ անարդար ձևով ուղղեց միայն պաշտպանվող հայերի, ինչպես նաև Հայ եկեղեցու սպասավորների դեմ... Ելիզավետպոլի հերոս վարդապետին հատուկ դատարանը դատապարտեց 10 տարվա ազատազրկման և աքսորեց Իրկուտսկի մարզ, որտեղից նա ազատվեց միայն 1917 թվականի մայիսին՝ ցարիզմի տապալումից հետո»²⁰: Կորյուն վարդապետը մասնակցել է 1918 թ. մայիսյան հերոսամարտերին²¹:

Կորյուն վարդապետ Սահակյանը 1920 թ. օգոստոսի 2-ին նշանակվում է Մայր Աթոռի դիվանապետ²²: Նա 1920 թ. օգոստոսի 20-ին դիմում է վեհափառին հետևյալ առաջարկությամբ. «Ինչպես Ալեքսանդրապոլում, նոյնպես և Կարսում, միաձայն փոխանորդական ընտրութեանց, պահանջում են թեմական առաջնորդների ընտրութիւն: Եւ եթէ դէպի եկեղեցին ունեցած այսպիսի անտարբեր ժամանակներում, լինում են դիմումներ՝ ունենալ իրենց մէջ հոգևոր իշխանութեան ներկայացուցիչներ, Հայրապետական հեղինակութեան և հայ եկեղեցւոյ շահերը պահանջում են ընդառաջ գնալ ժողովրդի ցանկութեան և հրամայել առաջիկայ սեպտեմբերին առաջնորդական ընտրութիւն-

¹⁷ Վավերագրեր, Երևան, էջեր 443-444:

¹⁸ Վավերագրեր, Գ, էջ 175:

¹⁹ Տե՛ս Ստեփան Կերտող, Հայ հոգևորականության մասնակցությունը XX դարի պատերազմներին և հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումներին, Երևան, 1999, էջ 10:

²⁰ Նույն տեղում, էջ 11:

²¹ Նույն տեղում, էջ 19:

²² Տե՛ս Վավերագրեր, Երևան, էջ 464:

ներ կատարել թե՛ Ալեքսանդրապոլում և թե՛ Կարսում, նախապես որոշելով նույն թեմերի սահմանները»²³:

1920 թ. սեպտեմբերի 4-ի կոնդակով Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե. Սուրենյանցը (1911-1930) ստեղծում է Վանանդի թեմը, որի «գսահմանն, որ արդիս կազմէ նահանգն Վանանդայ»²⁴: Միաժամանակ ստեղծված Շիրակի թեմին է անցնում «մասն ինչ է գործակալութենէ արևմտեան Շիրակայ Կարուց փոխանորդութեան, որ արդիս ըստ քաղաքականին միացեալ է ընդ նահանգին Շիրակայ»²⁵:

Վանանդի նորաստեղծ թեմը հյուսիսում սահմանակցում էր Վրաստանին, հյուսիսարևելքում՝ Շիրակին, արևելքում՝ Արարատյան նահանգին, արևմուտքում և հարավարևմուտքում՝ Թուրքիային անցած Արևելյան Հայաստանի արևմտյան շրջաններին²⁶:

Վեհափառը Վանանդի առաջնորդի ընտրություն է սահմանում հոկտեմբերի 26-ին²⁷: Սակայն 1920 թ. հոկտեմբերի 29-ին Կարս անառիկ բերդաքաղաքի անկմամբ Վանանդի թեմը չկայացավ:

Ուշադրության արժանի է փաստը, որ 1920 թ. հոկտեմբերի 4-ին, երբ հայ-թուրքական կարսյան ճակատում ընթանում էին թե՛ մարտեր, Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե. Սուրենյանցը քաջալերական նամակ է ուղարկում Դանիել Բեկ Փիրումյանին, որտեղ, գովելով զորավարի տաղանդը, շնորհքը և քաջությունը, կոչ էր անում. «Մի՛ վախենաք և մի՛ յուսահատիք, յիշեցէք Սարդարապատը: Ս. Խաչը ձեզ օգնական, Ս. Լուսաւորիչ չոր հզօր Աջը Ձեզ պահապան: Ողջ լինել մաղթում եմ Ձեզ մնալով միշտ աղօթաբար»²⁸:

Ըստ Ստեփան Կերտողի «Այս ժամանակ Գարեգին եպս. Հովսեփյանը գրեց իր հայտնի նամակը՝ «Ներքին թշնամին», որն ուղղված էր դասալքության դեմ»²⁹: Ապա՝ «Կարսի զինվորականությանը ոգևորելու նպատակով և Գևորգ Ե-ի կոնդակը (1920 թ. հոկտեմբերի 2-ի-Ա.Մ.) հրապարակելու համար Կարս եկավ խիզախ հայրենասեր Գարեգին եպս. Հովսեփյանը: Նա զորքի առաջ կարդաց հայրապետական կոնդակը: Ինչպես Սրբազան հայրը գրում էր Կարսից Գևորգ Ե-ին. «Առաքելոց հինաւորց տաճարում խառն բազմութեամբ զօրքի առաջ կարդացի Ձերդ Սրբութեան քաջալերական կոնդակը, կատարեցի մաղթանք: Ոգևորութիւնը զօրքի և ժողովրդի մեծ է»³⁰: Ստեփան Կերտողը շարունակում է, որ «Գարեգին Սրբազանը մնաց քաղաքում՝ ոգևորելու հայոց բանակին և մինչև վերջ կատարելու իր պարտքը հայրենիքի պաշտպանության գործում»³¹:

²³ Տե՛ս Վավերագրեր, Երևան, էջեր 445-446:

²⁴ Վավերագրեր, Գ, էջ 176:

²⁵ Նույնը:

²⁶ Տե՛ս Վանանդի նահանգը Հայաստանի առաջին Հանրապետության քարտեզի վրա:

²⁷ Տե՛ս Վավերագրեր, Գ, 176:

²⁸ Վավերագրեր, Երևան էջեր 478-479:

²⁹ Ստեփան Կերտող, Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու գործունեությունը Հայաստանի Առաջին Հանրապետության տարիներին, Ս. Էջմիածին, 2018, էջ 331:

³⁰ Նույն տեղում, էջ 332:

³¹ Նույնը:

Եզրահանգում. Ցավոք, Հայաստանի առաջին հանրապետության տարիների հայ հայրենասեր, նվիրյալ հոգևորականների անդուլ, համառ ջանքերը, ազգանպաստ գործունեությունը ի դերն եղան վերահաս ռազմական գործողությունների պատճառով, որի արդյունքում մենք պարտվեցինք և Վարսը կորցրինք. Թուրքիան 1920 թ. սեպտեմբերի 24-ին պատերազմ սկսեց Հայաստանի դեմ, հոկտեմբերի 14-ին ծանր մարտեր մղվեցին Վարսի ճակատում, որոնք ավարտվեցին նույն ամսի 29-ին հայկական անառիկ բերդաքաղաքի անկմամբ³²: Այդպիսով ցայսօր փակվեց Վարսի փոխանորդության պատմության վերջին էջը, դադարեց գոյություն ունենալ Վանանդի հնամենի թեմը, որը տակավին հիմնադրել էր Ս. Գրիգոր Լուսավորիչը IV դ. սկզբին:

КАРСКИЙ ВИКАРИАТ В ГОДЫ ПЕРВОЙ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Манучарян А. Г.

Ключевые слова: *республика, епархия, викарий, архимандрит, церковь, храм, сирота, епископ, ободрить.*

В годы Первой Республики Армения (1918-1920) деятельность Карсского викариата патриархальной епархии Еревана (май 1919 - октябрь 1920) усилиями викариев архимандритов Артака Смбабянца и Корюна Саакяна в основном осуществлялась в зановом открытии армянских церквей региона, прежде всего старинного храма Св. Аракецоца Карса, а так же забота о сотнях детей-сирот. В октябре 1920 года в Карс прибыл епископ Гарегин Овсепян, чтобы ободрить армянских солдат, и остался в армии до конца 4 сентября 1920 г. Католикос Всех Армян Георг V Суренянц (1911-1930) учредил Ванандскую (Карсскую) епископальную епархию, которая, однако, не состоялась по причине падения Карса 29 октября.

THE VIKARTIAT OF KARS IN THE YEARS OF THE FIRST REPUBLIC OF ARMENIA

Manucharyan A. G.

Key words: *republic, diocese, vicar, archimandrite, church, temple, orphan, bishop, encourage.*

During the years of the First Republic of Armenia (1918-1920), the activities of the Kars Vicariate of the Patriarchal Diocese of Yerevan (May 1919 - October 1920), through the efforts of the vicars of Archimandrites Artak Smbatyants and Koryun Sahakyan, were mainly carried out in the reopening of Armenian churches in the region, primarily the ancient temple of St. Arakelots Kars, as well as caring for hundreds of orphans. In October 1920, Bishop Garegin Hovsepyan arrived in Kars to encourage the Armenian soldiers, and remained in the army until the end. On September 4, 1920, Catholicos of All Armenians George V Surenyants (1911-1930) established the Vanand (Kars) Episcopal Diocese, which, however, did not take place due to the fall of Kars on October 29.

³² Տե՛ս «Հայոց Պատմություն», ԳԱԱ ՊԻ հրատ., հ. IV, գ. I, Երևան, 2010, էջեր 254, 256, 262, 263:

Գ ր ա կ ա ն ո թ յ ո ն ն

1. «Կարսի մարզը Հայաստանի առաջին Հանրապետության կազմում (ապրիլ 1919թ.- հոկտեմբեր 1920թ.)», Նյութեր և փաստաթղթեր, աշխ.՝ Վ. Հակոբյանի, Երևան, 2016:
2. Ստեփան Կերտոդ, Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու գործունեությունը Հայաստանի Առաջին Հանրապետության տարիներին, Ս. Էջմիածին, 2018:
3. Ստեփան Կերտոդ, Հայ հոգևորականության մասնակցությունը XX դարի պատերազմներին և հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումներին, Երևան, 1999:
4. «Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության: Արտակ եպիսկոպոս Սմբատեանց (Տաուշեցի)», գիրք Գ, կազմեց Ս. Բեհբուդյան, Երևան, 1997 (այսուհետև՝ Վավերագրեր Գ, Ե, ԺԳ):
5. «Հայոց լեզվի բարբառային բառարան», հ. 2, Երևան, 2002:
6. «Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան: Գետրոզ Ե Վշտալի Սուրենեանց. Կաթողիկոս Ամենայն Հայոց», գիրք ԺԳ, կազմեց Ս. Բեհբուդեան, Երևան, 2005:
7. «Վավերագրեր Հայ եկեղեցու պատմութեան: Խորեն Ա Մուրադբեկյան. Կաթողիկոս Ամենայն Հայոց (Հոգևոր գործունեությունը 1901-1938 թթ.)», գիրք Բ, կազմեց՝ Ս. Բեհբուդյան, Երևան, 1996:

*Ընդունվել է՝ 20. 09. 2021
Գրախոսվել է՝ 22. 10. 2021
Հանձնվել է տպ.՝ 15. 11. 2021*

Տեղեկություններ հեղինակի մասին

Աշոտ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ՝ պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի վիմագրության
բաժնի ավագ գիտաշխատող, էլ. հասցե՝ ashot.manucharyan.1959@mail.ru

ԿԱՐՄԻ ԱՆԿՄԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ ԺԱՄԱՆԱԿԻ ՀԱՅ
ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ (1920թ. ՀՈԿՏԵՄԲԵՐ)

Նարինե Մովսեսյան

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

Բանալի բառեր՝ Քաղաքական հարաբերություններ, թուրք-հայկական պատերազմ, Կարսի մարզ, պատմագրություն, պետական գործիչներ, Հայաստանի Հանրապետություն, կուսակցական գործիչներ:

1920թ. թուրք-հայկական պատերազմի տարբեր հարցերի վերաբերյալ հայ պատմագրության մեջ բազմաթիվ ուսումնասիրություններ են կատարվել: Տարբեր հեղինակների կողմից ներկայացվել են նախապատերազմյան ժամանակաշրջանի ռազմաքաղաքական բարդ իրավիճակի քննությունը, պատերազմի պատճառներն ու բնույթը, ռազմական գործողությունների ընթացքն ու պարտության պատճառները, միջազգային աննպաստ պայմաններում հայկական կողմին պարտադրված ծանրագույն պայմանագրի կնքման իրողությունը և այլն: Հողվածում փորձ է արվում ի մի բերել քննարկվող հարցերը, որոնց մեջ կարևորագույն տեղ է զբաղեցնում պատերազմի ելքի համար ճակատագրական նշանակություն ունեցած Կարսի անկումը:

Նախաբան. 1920 թ. թուրք-հայկական պատերազմում Կարսի անկումը շրջադարձային եղավ ոչ միայն պատերազմի ելքի, այլև առհասարակ Հայաստանի Հանրապետության ճակատագրում: Հայտնի է, որ անցնելով Սարիղամիշ-Կաղզվան ճանապարհով, հոկտեմբերի 30-ին, գրեթե առանց դիմադրության, թուրքերը գրավեցին Կարսը, իսկ նոյեմբերի 7-ին՝ Ալեքսանդրապոլը:

Կարսի անկումն ինքնին նախանշեց Ալեքսանդրապոլ քաղաքի գրեթե առանց կրակոցի հանձնումը, տասնյակ հազարավոր մարդկանց գերի ընկնելը, բարոյական

անկայուն վիճակի խորացումը, Հայաստանի կառավարության կողմից հաշտության առաջարկին ընդառաջ գնալը և այլն: Կարսն իր ամբողջություններով ռազմավարական խոշորագույն նշանակություն ուներ հայկական կողմի համար, և պատահական չէ, որ հայերն իրենց հույսը դրել էին Կարսի բերդի ամբողջությունների վրա (բերդում տեղակայված էր զորք և ռազմամթերք, ինչը հայերին հնարավորություն կտար շուրջ չորս ամիս դիմակայելու): Կարսի անկումը համարվել է ամոթ և խայտառակ պարտություն¹: Թուրքերը Կարսը գրավել էին առանց գնդակ արձակելու, ինչը ծանր տպավորություն էր գործել հայ քաղաքական գործիչների վրա: «Ո՞վ կարող էր մտածել, թե մի երկու ամսում դաշտից յարձակուող տաճիկները լեռնաշղթայի բարձունքը կը հասնեն, եւ գրեթէ առանց կռուի կը տիրանան առաջնակարգ ամրութիւն ունեցող բերդին», - գրում է դեպքերի ակնաստես Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանցը²:

1920 թ. թուրք-հայկական պատերազմը քննարկման առարկա դարձավ ժամանակի հայ պատմագիրների կողմից, ովքեր հիմնականում հանդիսանում էին քաղաքական ու պետական գործիչներ: Հարցին հանգամանալի անդրադարձավ ժամանակի մամուլը: Քննարկելով պատերազմի սկիզբնավորման, ընթացքի ու ավարտի վերաբերյալ առանցքային հարցեր՝ նրանք հատկապես անդրադարձել են Կարսի անկմանը՝ որպես պատերազմի ճակատագրական դրվագ, փորձել են բացահայտել դրա պատճառներն ու տալ գնահատականը:

Սակայն ցարդ վիճահարույց են մնում մի շարք հարցեր, ինչպես օրինակ՝ արդյո՞ք քաղաքի անկումն իսկապես անակնկալ էր հայկական կառավարության համար, և ինչո՞վ էր պայմանավորված կարևոր ռազմավարական նշանակություն ունեցող քաղաքի թույլ պաշտպանությունը:

Ալ. Խատիսյանը (ՀՀ վարչապետ, ֆինանսների, այնուհետև՝ արտաքին գործոց նախարար) ճակատագրական է համարում հոկտեմբերի 30-ը՝ թուրքերի կողմից Կարսի գրավման օրը, ինչը, հիրավի, ներկայացված է որպես շրջադարձային կետ՝ ոչ միայն պատերազմը տանուլ տալու առումով, այլև Հայաստանի հանրապետության կործանման: Նա գրում է. «Կարսի անկումը ամեն տեսակետե սարսափելի աղետ եղաւ: Իսկապես, այդ օրէն սկսած՝ Հայաստանի անկախութեան օրերը հաշուուած էին»³: «Հոկտեմբեր 30-ի, ժամը երկուք մօտ էր, երբ ես նկատեցի, որ Երեւան քաղաքի վրայ կը սլանայ սաւառնակ մը: ...Ոչ ոք չէր կրնար ենթադրել թէ ան բերած է սարսափելի լուր մը, - Հոկտեմբեր 30-ին, առաւօտեան թուրքերը գրաւած էին Կարսը»⁴:

¹ Տե՛ս Կարսի մարզը Հայաստանի Հանրապետության կազմում (1919 Ապրիլ-1920 Հոկտեմբեր), Կարսի նահանգապետ Ստեփան Դորդանեանի յուշերը (այսուհետև՝ Կարսի մարզը...), աշխատասիրութեամբ՝ Վլ. Յարութիւնեանի, Երևան, 2018, էջ 168: Եսաղրճեան Գ., Ոգուն չապարհներ լու արդիւնքը, Երևան, 2002, էջեր 4, 41,

² Տե՛ս նույն տեղում, էջեր 4-7:

³ Տե՛ս Խատիսեան Ալ., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Պէյրութ, 1968, էջ 280:

⁴ Նույն տեղում, էջ 278:

«Կարսը պահպանող զորքերու բարոյալքումը կատարեալ էր»⁵, - գրում է Ալ. Խատիսյանը: Վերջինս և Հայաստանի Հանրապետության վերջին վարչապետ Ս. Վրացյանը վկայակոչում են հոկտեմբերի 29-ին Կարսը պաշտպանող զինվորների կողմից գնդապետ Մազմանյանի հարձակման հրահանգին չենթարկվելու փաստը⁶:

Կարսի անկումը⁷ համարելով պանթուրքական և պանիսլամական զաղափարի հաղթանակը՝ «Մշակը» գրում է. «Այլ ևս կասկած չը կայ որ Քէմալ փաշան իր արշավանքն սկսել է Բագուի հետ համաձայնութիւն կայացնելուց յետոյ»⁸: Խոսքը գնում էր 1920թ. սեպտեմբերին Բաքվում գումարված Արևելքի ժողովուրդների համագումարի արդյունքում սեպտեմբերի 17-ին կայացված որոշմանը, որով թուրքական և ռուսական զորքերի առաջ խնդիր էր դրվում համատեղ հարձակվել Հայաստանի վրա»⁹: Այսպիսով, փաստելով, որ Բաքվի թուրքերը հրճվանքի մեջ են, քանի որ գիտեն, որ շուտով Հայաստանի դիակի վրայով պիտի միանան միլլի շարժմանը, թերթի խմբագրությունը վախ է հայտնում, որ Կարսի անկումը կարող է հուսալքել հայ զինվորներին¹⁰:

Կարսի զորախմբի պարտության պատճառների շարքում հատկապես շեշտադրվում է բերդի և դաշտային մասերի անկազմակերպվածությունը, սպաների ու զինվորների, զորավարների և Կարսի նահանգապետ Ս. Ղորղանյանի անհաշտ փոխհարաբերությունները, զորքին բաժանված անզիական հրացաններին զինվորների անվարժությունը, թիկունքի վատ կազմակերպվածությունը, բուլշևիկների ստեղծած դժվարությունները¹¹: ՀՀ արտգործնախարարության քարտուղար Հակոբ Տեր-Հակոբյանը (Իրազեկ) նկարագրելով Կարսի անկումը, դրա պատճառներից մեկն էլ համարում է 8-րդ գնդի ու Երևանի պահակազորքի հրամանատար Սեպուհի (Արշակ Ներսիսյան) և հայկական դիվիզիայի հրամանատար, զորավար Սիլիկյանի միջև տարաձայնությունների խորացումը, ինչի պատճառով Սեպուհը չհասցրեց հասնել Կարս¹²:

Ս. Ղորղանյանն իր հուշերում ընդգծում է, որ հոկտեմբերի 28-ի դրությամբ Կարսի ոստիկանապետն իրեն զեկուցում է, որ «...դասալքությունը ահռելի է դարձել, որ փախչում են աւագ սպաները և իրանց յետևից տանում ամբողջ գումարտակներ...»¹³:

Արտաշես Բաբայանը (ՀՀ խնամատարության նախարար) և Շիրակի նահանգապետ Կարո Մասունին (1920 թ. մայիսից) Կարսի անկման պատճառների շարքում

⁵ Տե՛ս **Խատիսյան Ալ.**, էջ 279:

⁶ Գնդապետն անգործությունից զորաջոկատի առջև ինքնասպանություն է գործել: Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 200, գ. 1, ց. 486, թ. 393: **Խատիսյան Ալ.**, նշվ. աշխ., էջ 279: **Վրացյան Ս.**, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 509:

⁷ «Մշակը» Կարսի գրվման օր է նշում 1920 թ. նոյեմբերի 4-ը, Տե՛ս «Մշակ», նոյեմբերի 5, 1920, N 128, էջ 1:

⁸ «Մշակ», նոյեմբերի 5, 1920, N 128, էջ 1:

⁹ Տե՛ս Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան., 2000, ՀԱԱ, ֆ. 200, գ. 1, գ. 581, 602, ֆ. 113, գ. 3, գ. 7 և այլն:

¹⁰ «Մշակ», նոյեմբերի 5, 1920, N 128, էջ 1:

¹¹ **Վրացյան Ս.**, Հայաստանի Հանրապետություն, էջ 508:

¹² **Տեր-Յակոբեան Յ.**, Հայաստանի վերջին աղետը, Կ. Պոլիս, 1921, էջ 91:

¹³ Տե՛ս Կարսի մարզը... էջ 170:

առաջ են քաշում մի շարք գործոններ. զինվորական բարձր հրամանատարության ապաշնորհությունն ու անփութությունը, հետախուզության բացակայությունը, սեփական ուժերի գերազնահատումը, Կարսի քաղաքային և զինվորական հրամանատարության միջև առկա հակամարտությունները, պատերազմին անպատրաստությունը, բոլշևիկների դավադրական քարոզչությունը, թուրքական բանակի առավելություններն ու կարգապահությունը և այլն¹⁴:

Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանցը մատնանշում է, որ զինվորներն անհմուտ էին իրենց բաժանված զենքի գործածության մեջ. «...նոյնիսկ սպաներից ոմանք դեռ չէին թափանցել նոր զենքի գործածության գաղտնիքների մեջ, որպեսզի սովորեցնել կարողանային իրենց ենթարկել զինուորների»¹⁵: Գ. Հովսեփյանցը ևս վկայում է, որ «...զինուորական և քաղաքացիական իշխանության ղեկավարների մեջ հասկացողությունների և կարծիքների մեծ տարբերություններ կային»¹⁶:

Համո Օհանջանյանի կողմից Ա.Ահարոնյանին հղած հարցման մեջ ներկայացված են Կարսի անկման հետևյալ պատճառները. դասալքության մեծ չափը, սպաների թուլությունն ու զինվորների շրջանում հեղինակություն չվայելելը, ռազմական ղեկավարության ոչ հմուտ լինելը, կապի տեխնիկական միջոցների բացակայությունը և այլն¹⁷:

«Յառաջը» որպես անկման պատճառներ նշում է թշնամու ճիշտ ռազմական տակտիկան և այն, որ մեր հրամանատարությունն իր բարձրության վրա չեղավ¹⁸: «Ճակատամարտը», որը մշտապես հանդես էր գալիս հայկական բանակի անկոտրուկության պաշտպանության դիրքերից, գրում է, որ Կարսն ընկավ, քանի որ «Ոչ միայն թուրքերը երեք թեուվ կը յառաջանային զայն (Կարսը-Ն.Մ.) պաշարելու համար, այլև պոլշեիկները»¹⁹:

Ժամանակի հուշագիրներն ու մամուլը պարտության պատճառները փնտրում են նաև Թուրքիայի և Անդրկովկասյան հանրապետությունների դիրքորոշման մեջ: Նրանք եզրահանգում են, որ Հայաստանի վրա հարձակումից առաջ Թուրքիան կարգավորել էր հարաբերությունները Ռուսաստանի, Վրաստանի ու Ադրբեջանի հետ՝ ապահովելով վերջիններիս չեզոքությունը պատերազմում²⁰: Նրանք նախևառաջ վկայակոչում են պատերազմի նախօրյակին ռուս-թուրքական մերձեցման միտումները՝ մատնանշելով երկու երկրների՝ Հայաստանի համար վտանգավոր շահերը, ինչի արդյունքում Թուրքիային են տրվելու Կարսը, Արդահանը, Բաթումը և այլն²¹:

¹⁴ Տե՛ս **Շաղրճեան Գ.**, Ոգուն չապաւիներու արդիւնքը, Երևան, 2002, էջեր 4-7:

¹⁵ Նույն տեղում, էջ 31:

¹⁶ Նույն տեղում, էջ 34:

¹⁷ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 486, թ. 393: ֆ. 201, ց. 2, գ. 632, թ. 2:

¹⁸ «Յառաջ», Երևան, նոյեմբերի 3, 1920, N 240, էջ 1:

¹⁹ «Ճակատամարտ», Կ. Պոլիս, 1920, նոյեմբերի 10, թիւ 602, էջ 2:

²⁰ **Տէր-Յակոբեան Յ.**, նշվ. աշխ., էջեր 23-25: **Խատիսեան Ալ.**, նշվ. աշխ., էջ 253:

²¹ «Մշակ», Թիֆլիս, հոկտեմբերի 7, 1920, N 106 էջ 1. հոկտեմբերի 21, 1920, N 116, էջ 1., հոկտեմբերի 22, 1920, N 117, էջ 1. «Յառաջ», Երևան, սեպտեմբերի 2, 1920, N 188, էջ 2. հոկտեմբերի 1, N 213, էջ 2. հոկտեմբերի 3, N 215, էջ 2: **Կարո Սասունի**, Ռուսական Օրիենտացիան // «Հայրենիք», Պոսթրն, 1928, յունուար, թիւ 6, էջ 108: Նաև՝ «Հայրենիք», Պոսթրն, 1928, նոյեմբեր, N 1, էջ 117:

Կարսի անկման գործում ժամանակի հայ պետական ու հասարակական գործիչներն ընդգծում են Վրաստանի էական դերակատարությունը²²: «Բորչալուի սահմանների մասին» առաջնորդողում վրացական «Մաքարթվելո» թերթը (թիվ 157) Հայաստանի կողմից Թուրքիայի նախնական հաշտության պայմանների ընդունումը դիտում է այն տեսանկյունից, որ եթե Ալեքսանդրապոլից մինչև Կարս երկաթուղին տրվեր թուրքերին, դրանով Վրաստանի ամրությունը կսասանվեր, և Թուրքիան կգրավեր նաև Բորչալուի դաշտավայրերը: Հետևաբար, պարտված Հայաստանին պաշտպանելու համար անհրաժեշտ է, որ Վրաստանն ամուր մնար, և նրա անկախությունն աներեր լիներ: Այդպիսով, թերթը Վրաստանի կողմից Հայաստանի «պաշտպանությունը» պատկերացնում էր Բորչալուի հարավային մասի գրավմամբ²³: Նույն կարծիքն էր արտահայտում վրացական սոցիալ-դեմոկրատիայի պաշտոնաթերթ «Էրթոբան»՝ «Վրաստանն ու Հայաստանը» թղթակցության մեջ²⁴:

Ըստ այդմ՝ Ռուբեն Տեր-Մինասյանը վրացիների դիրքորոշումը համարում է երկդիմի՝ գտնելով, որ նրանք արագացրին թուրքերի մուտքը Կարս և Հայաստան²⁵:

Ս. Վրացյանը Կարսի անկումը համարում է թուրք-բոլշևիկյան համագործակցության արդյունք: Նա մեջբերում է ժամանակի մամուլի («Յառաջ» (Երևան), «Կոմունիստ» (Բաքու) վկայություններն այն մասին, որ հայ զինվորները վստահ էին, որ Կարսի վրա հարձակվողները բոլշևիկներ էին, և չդիմադրեցին: «Պատմում են, - շարունակում է Վրացյանը,- որ Կարսի անկումից առաջ բոլշևիկները գաղտնի աշխատանքներ են տարել՝ համոզելով մեր զորքին՝ չդիմադրել. ավելին, Կարս մտնող թուրքերի հետ եղել են նաև բոլշևիկներ»²⁶: Նա ներկայացնում է Թիֆլիսի, Բաքվի բոլշևիկների հրճվանքը Կարսի գրավման առիթով, դատապարտելով, որ այդ հարցում հայ բոլշևիկները լռություն էին պահպանում²⁷:

Ահարունեան Ա., Քեմալական Թուրքիա // «Հայրենիք», 1928, փետրվար, N 4, էջեր 76-80: **Տեր-Յակոբեան Յ.**, Հայաստանի վերջին աղետը, Կ. Պոլիս, 1921, էջ 13: **Վրացեան Ս.**, Հայաստանը բոլշևիկեան մուրճի եւ թրքական սալի միջեւ, Պեյրուք, 1953, էջեր 20-41: **Խատիսեան Ալ.**, նշվ. աշխ., էջ 252, **Վրացյան Ս.**, Հայաստանի Հանրապետություն, էջեր 473-475: Տե՛ս նաև **Գալոյան Գ.**, Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Երևան, 1999, էջեր 265-268), **Զոհրաբյան Է.**, 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Երևան, 1997, էջեր 145-148:

²² Տե՛ս «Մշակ», հոկտեմբերի 26, N 119, 1920, էջ 2. նոյեմբերի 4, N 127, 1920, էջ 1. «Ժամանակ», Կ. Պոլիս, 1920, 14 մայիսի, թիւ 3825, էջ 1. **Տեր-Յակոբեան Յ.**, նշվ. աշխ., էջեր 77-78: **Վրացյան Ս.**, Հայաստանը բոլշևիկեան մուրճի եւ թրքական սալի միջեւ, էջեր 121-122, **Խատիսեան Ալ.**, նշվ. աշխ., էջ 253, **Ռուբեն**, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. 7, Երևան, 1991, էջեր 132, 134: **Մասուրեան Ս.**, Վրացի Մենշևիկները և Անգլիական Զօրավարները // «Հայրենիք», Պոսթըն, 1928, յունուար, թիւ 3, էջ 146, փետրուար, թիւ 4, էջ 147:

²³ «Մշակ», նոյեմբերի 27, 1920, N 147, էջ 2:

²⁴ Նույն տեղում, դեկտեմբերի 4, 1920, N 153, էջ 2:

²⁵ **Ռուբեն**, նշվ. աշխ., էջ 136:

²⁶ **Վրացեան Ս.**, Հայաստանը բոլշևիկեան մուրճի եւ թրքական սալի միջեւ, էջ 115-118:

²⁷ Նույն տեղում, էջեր 111-112:

Այն, որ բոլշևիկները, այդ թվում՝ հայ, որոշակի գործունեություն են ծավալել, որ հայկական բանակը չկռվի բոլշևիկաթուրքական միասնության դեմ, հասկանալի է: Առնվազն զարմանալի է սակայն, որ ժամանակի քաղաքական ելևէջումների հորձանուտում գտնվող գործիչն այդ մասին հանդես է գալիս ոչ որպես ականատես, այլ մեջբերում է ժամանակի մամուլի ենթադրությունները, կամ հարցին մոտենում է «Պատմում են, որ...» նախաբանով:

Վ. Նավասարդյանը (հասարակական-մշակութային գործիչ, Թիֆլիսի ՀՅԴ պաշտոնաթերթ «Հորիզոնի» խմբագիր) գրում է, որ երբ թուրքական բանակը գրավելով Մարիդամիշն՝ արշավում էր դեպի Կարս, թուրքիկներ էին տարածվում բանակում ու ժողովրդի մեջ այն մասին, որ քեմալական հեղափոխական բանակը գալիս է փրկելու հայ բանվորին, գյուղացուն ու զինվորին դաշնակների անարգ լծից²⁸:

Նշածից եզրահանգում ենք, որ թուրքական բանակի անընդմեջ առաջխաղացումը պետք է որ հայ պետական գործիչներին լրջամիտ մտորումների առիթ տար: Հատկապես, երբ սեպտեմբերի 29-ին հայկական բանակը նահանջեց՝ թշնամուն հանձնելով Մարիդամիշն ու Կաղզվանը, ինչին ժամանակի հայ հեղինակները հատկապես անդրադարձել են:

Հիրավի, Մարիդամիշի անկումն անհանգստություն առաջ բերեց ՀՀ կառավարության ու պետական-հասարակական գործիչների շրջանում, քանի որ կարող էր կոտրել բանակի ոգին ու հիասթափություն մտցնել բնակչության շրջանում: Դրանով է բացատրվում կառավարության կողմից անհապաղ հրապարակված կոչը, որում բացատրություն է տրվում, որ հայկական զորքը նահանջել է անակնկալներից ու զոհերից խուսափելու և ավելի հարմար դիրքեր զբաղեցնելու համար²⁹:

«Մշակը» նշում է, որ նահանջը եղել է ռազմագիտական նպատակներով. Անակնկալներից ու զոհերից խուսափելու և ավելի հարմար դիրքեր գրավելու նպատակով մեր հրամանատարությունը սեպտեմբերի 29-ի զիջերը դատարկել էր Մարիդամիշն ու Կաղզվանը, քանի որ հայտնի էր դարձել, որ թուրքերի նպատակն է եղել կտրել Մարիդամիշ-Կարս երկաթուղին և ազատությունից զրկել Մարիդամիշի և Կաղզվանի շրջանի մեր զորքերն ու ժողովուրդը³⁰:

Եզրահանգում. Կարսի անկումը անակնկալի բերեց երկրի քաղաքական ու հասարակական ուժերին, որոնք ահազանգ հնչեցրին: Անհրաժեշտ էր ի մի բերել ուժերը և կասեցնել թշնամու առաջխաղացումը: Սակայն գործադրած ջանքերը մեծ արդյունք չեն տալիս, և հոկտեմբերի 30-ի կառավարության նիստի ժամանակ միաձայն որոշում է ընդունվում՝ հաշտություն կնքել Թուրքիայի հետ: Թեև տարածքային և այլ առումներով թուրքերի ներկայացրած պայմաններն անընդունելի էին հայկական կողմի համար, սակայն հաշտություն կնքելն անխուսափելի էր, քանի որ դիմադրության ոգին ընկած էր³¹:

²⁸ Նավասարդեան Վ., Հ.Յ.Դաշնակցութեան անելիքը, Գահիրե, 1924, էջեր 223-224, հղումը՝ Վրացեան Ս., Հայաստանը բոլշևիկեան մուրճի եւ թրքական սալի միջեւ, էջ 113:

²⁹ «Յառաջ», Երեւան, հոկտեմբերի 1, 1920, N 213, էջ 1:

³⁰ «Մշակ», հոկտեմբերի 16, 1920, N 114, էջեր 1-2:

³¹ Տե՛ս Խատիսեան Ալ., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, 1968, էջ 286:

Այսպիսով, ժամանակի հայ պատմագիրները փաստում են, որ Չարսի գրավումը կտրականապես փոխեց պատերազմի ընթացքը հոգուտ թուրքերի և ի վնաս հայերի: Թե որքան կարևոր էր Չարսի գրավումը, ակնհայտ է այն հանգամանքից, որ քաղաքի անկումը մղեց հայկական կողմին գնալ ամոթալի հաշտության ճանապարհով:

ОЦЕНКА ПАДЕНИЯ КАРСА В ИСТОРИОГРАФИИ СОВРЕМЕННОКОВ АРМЕНИИ (ОКТАБРЬ, 1920 Г.)

Мовсесян Н. М.

Ключевые слова: *политические отношения, турецко-армянская война, область Карс, историография, государственные деятели, Республика Армения, политика, партийные деятели.*

Вследствие турецко-армянской войны 1920 г. Республика Армения не только понесла огромные потери человеческого, материального и морального характера, но и потеряла почти половину своей территории: Карсскую область, Сурмалинский уезд и Шарур-Нахичевань.

В статье раскрываются позиция и отношение историков, очевидцев и партийно-политических деятелей к ключевым вопросам причин падения Карса.

THE ASSESSEMENT OF THE FALL OF KARS IN THE HISTORIOGRAPHY OF CONTEMPORARIES OF ARMENIA (OCTOBER, 1920)

Movsesyan N. M.

Key words: *political relations, Turkish-Armenian War, the region of Kars, historiography, political figures, the Republic of Armenia, politic, party leaders.*

As a consequence of the Turkish-Armenian War of 1920 the Republic of Armenia sustained not only significant losses in material and lives, but also almost the half of its territory, especially the region of Kars, the provinces of Surmalu and Sharur-Nakhidjevan.

The article illustrates the position and attitude of historians, eye-witnesses, party-political leaders over the problem of the real reasons of the fall of Kars.

Գ ր ա կ ա ն ո թ յ ո ն

1. Ահարոնեան Ա., Քեմալական Թուրքիա // «Հայրենիք», 1928, փետրվար, N 4:
2. Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Երևան, 1999:
3. Եազրճեան Գ., Ոգուն չապալինելու արդիւնքը, Երևան, 2002:
4. Զոհրաբյան Է., 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Երևան, 1997:
5. «Ժամանակ», Կ. Պոլիս, 1920, 14 մայիսի, թիւ 38:
6. Խատիսեան Ալ., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Պէյրուք, 1968:

7. Կարսի մարզը Հայաստանի Հանրապետության կազմում (1919 ապրիլ-1920 հոկտեմբեր), Կարսի նահանգապետ Ստեփան Ղորղանեանի յուշերը (այսուհետև՝ Կարսի մարզը...), աշխատասիրութեամբ՝ Վլ. Յարութինեանի, Երևան, 2018:
8. Կարօ Սասունի, Ռուսական Օրիենտացիան // «Հայրենիք», Պոսթըն, 1928, յունուար, թիւ 6:
9. Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 200, գ. 1, ց. 486, թ. 393:
10. ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 7:
11. ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 581, 602:
12. ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 486, թ. 393: ֆ. 201, ց. 2, գ. 632, թ. 2:
13. Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան., 2000:
14. «Հայրենիք», Պոսթըն, 1928, նոյեմբեր, N 117:
15. «Ճակատամարտ», Կ. Պոլիս, 1920, նոյեմբերի 10, թիւ 602:
16. Մասուրեան Ս., Վրացի Մենշևիկները և Անգլիական Զորավարները // «Հայրենիք», Պոսթըն, 1928, յունուար, թիւ 3
17. «Մշակ», Թիֆլիս, հոկտեմբերի 7 1920, N 106: հոկտեմբերի 16, 1920, N 114: հոկտեմբերի 21, 1920, N 116: հոկտեմբերի 22, 1920, N 117: հոկտեմբերի 26, N 119, 1920: նոյեմբերի 4, N 127, 1920: նոյեմբերի 5, 1920, N 128: նոյեմբերի 27, 1920, N 147:
18. «Յառաջ», Երևան, սեպտեմբերի 2, 1920, N 188: հոկտեմբերի 1, N 213: հոկտեմբերի 3, N 215: նոյեմբերի 3, 1920, N 240:
19. Նավասարդեան Վ., Հ.Յ.Դաշնակցութեան անելիքը, Գահիրե, 1924:
20. Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. 7, Երևան, 1991:
21. Վրացեան Ս., Հայաստանը բոլշևիկեան մուրճի եւ թրքական սալի միջեւ, Պեյրուք, 1953:
22. Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993:
23. Տեր-Յակոբեան Յ., Հայաստանի վերջին աղէտը, Կ. Պոլիս, 1921:

Ընդունվել է՝ 04. 09. 2021

Գրախոսվել է՝ 22. 10. 2021

Հանձնվել է տպ.՝ 15. 11. 2021

Տեղեկություններ հեղինակի մասին

Նարինե ՄՈՎՍԵՍՅԱՆ՝ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի
ավագ լաբորանտ, էլ. հասցե՝ narinem2006@gmail.com

ԿԱՐՄ. ԱՆՑՅԱԼԸ ԵՎ ՆԵՐԿԱՆ

Անժեյա Սարգսյան

ՀՀ ԳԱԱ միջազգային գիտակրթական կենտրոնի մագիստրոս

Բանալի բառեր՝ բերդ, քաղաք, հայություն, Ս. Առաքելոց եկեղեցի, Օսմանյան կայսրություն, սզկիթ, Ե. Չարենցի տուն, Վարդանի կանուրջ:

Ուսումնասիրությունը նվիրված է Այրարատ աշխարհի Վանանդ գավառի Կարս քաղաքին: Անդրադարձ է կատարված քաղաքի IX-XX դդ. քաղաքական պատմության որոշ դրվագների, Կարս քաղաքի՝ միջնադարյան քաղաքաշինությանը բնորոշ կառուցվածքային առանձնահատկություններին: Առանձին քննության առարկա են դարձել քաղաքի ներկան, հայկական հետքը ներկայում և Կարսում մեր ուսումնասիրությունների արդյունքները:

Նախաբան. Կարսն իբրև բնակավայր գոյություն ուներ հնագույն ժամանակներից, թեպետ որպես բերդաքաղաք մեր մատենագրության մեջ հիշատակվում է համեմատաբար ուշ: Կարսը գտնվում էր Այրարատ աշխարհի Վանանդ գավառում, և նրա առաջին տերերը եղել են IV դարից հիշատակվող Վանանդի իշխանները: Ամենայն հավանականությամբ, ի սկզբանե եղել է Վանանդի կենտրոնը, նրա գլխավոր բերդը և նախարարների աթոռանիստը:

Կարսն առավել հայտնի է դարձել սկսած IX դարից, երբ Հայաստանում սկսեցին հիմնվել տասնյակ նոր քաղաքներ, կամ նախկինում գոյություն ունեցող շատ բերդեր ու ամրոցներ, այդ թվում՝ Կարսը, վերածվեցին քաղաքների: Վերջինս IX դարից հիշատակվում է իբրև բերդաքաղաք, իսկ 928 թ. դառնում Հայաստանի մայրաքաղաք¹: Կարճ ժամանակ անց՝ 961 թ., Աշոտ III Ողորմածը Բագրատունյաց թագավորության մայրաքաղաք է հռչակում Անին, իսկ Կարսը մնում է որպես Բագրատունիների կրտսեր ճյու-

¹ Հակոբյան Թ. Խ., Պատմական Հայաստանի քաղաքները, Երևան, 1987, էջեր 166-167:

դի՝ Կարսի կամ Վանանդի թագավորության մայրաքաղաք²: 947 թ. կաթողիկոսական աթոռն Աղթամարից Արգինայի վանք տեղափոխվելուց հետո Կարսը դառնում է նաև հոգևոր կենտրոն (մինչ այդ արդեն սկսել էր կառուցվել Ս. Առաքելոց եկեղեցին), արագ աճում ու դառնում է խոշոր ու բարեկարգ քաղաք³:

Պատմական ակնարկ

Կարսի մեկդարյա թագավորության ընթացքում (963-1065 թթ.) զարգացում են ապրել երկրագործությունը, անասնապահությունը, գինեգործությունը: Կարսը հայտնի էր նաև պղնձի, արծաթի, երկաթի, արձիճի, ինչպես նաև աղի հանքերով, որոնց շնորհիվ զարգացած էր նաև արհեստագործությունը: Քաղաքն առանձնահատուկ դեր ուներ նաև տարանցիկ առևտրի մեջ, ինչի մասին վկայում է նաև Արիստակես Լաստիվերցին: Այսպիսով, Կարսը հատկապես նշանակալից էր իր առևտրա-արհեստավորական կյանքով⁴:

Կարսի թագավորությունն անկում է ապրում 1064 թ.: Գագիկ Աբասյանը, խուսափելով սելջուկ-թյուրքերի տիրապետությունից, իր տիրույթները թողնում է Բյուզանդիային՝ տարածքներ ստանալով Կապադոկիայում⁵: Նկարագրելով Կարսի ավերումը սելջուկյան արշավանքների ժամանակ՝ XI դարի պատմիչ Արիստակես Լաստիվերցին վկայում է, որ վերջինս հարստացել էր «բազում ընչեղությամբ ի ծով է և ցամաք է ամբարեալ»⁶: Լաստիվերցու այս խոսքերը պարզ կերպով ցույց են տալիս, որ Կարսի հարստացման աղբյուրը եղել է ծովային ու ցամաքային առևտուրը⁷:

1071 թ. Մանազկերտի ճակատամարտում Բյուզանդական կայսրությունը, ծանր պարտություն կրելով, ստիպված է լինում սելջուկ-թյուրքերին զիջել մի շարք քաղաքներ ու գավառներ, որոնց թվում՝ նաև Կարսը: 1206-1207 թթ. հայ-վրացական բանակը Զաքարյան եղբայրների գլխավորությամբ պաշարում է Կարսը և ազատագրում այն սելջուկ-թյուրքական լծից: Հետագայում Կարսը գրավվում է մոնղոլների, Լենկթեմուրի և թյուրքմենական ցեղերի կողմից⁸:

XVI դարում Կարսը գրավվում է թյուրքերի կողմից՝ դառնալով Օսմանյան կայսրության նույնանուն նահանգի (էյալեթ) վարչական կենտրոնը: Այնտեղ էին կենտրոնացած նահանգի գլխավոր վարչությունը և առևտրի մեծ մասը: Նույնիսկ լինում էին դեպքեր, երբ Կարսի փաշաները դառնում էին Էրզրումի սերասկյարներ⁹:

XIX դարի ռուս-թյուրքական պատերազմների ժամանակ (1828 թ. և 1855 թ.) Կարսը գրավվում է ռուսների կողմից, սակայն Ադրիանուպոլսի և Փարիզի հաշտու-

² Հարությունյան Վ. Մ., Հայկական ճարտարապետության պատմություն, Երևան, 1992, էջ 192:
³ Մովսիսյան Ա. Ե., Արևմտյան Հայաստանի 10 ուխտավայրեր, Երևան, 2011, էջ 26:
⁴ Առաքելյան Բ., Քաղաքները և արհեստները Հայաստանում IX-XIII դդ., Երևան, 1958, էջեր 80-81:
⁵ Հակոբյան Թ. Խ., նշվ. աշխ., էջ 167:
⁶ Պատմութիւն Արիստակեսայ վարդապետի Լաստիվերցույ, Թիֆլիս, 1912, էջ 91:
⁷ Մանանդյան Հ. Ա., Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. 2, Երևան, 1960, էջ 357:
⁸ Վարդանյան Ս., Հայաստանի մայրաքաղաքները, Երևան, 1995, էջ 139:
⁹ Մուրադյան Հ.Ղ., Կարսի նահանգի վարչաժողովրդագրական նկարագիրը 19-րդ դարի առաջին երեսնամյակին, Երևան, 2006, էջեր 31, 2:

թյան պայմանագրերով վերադարձվում է Օսմանյան կայսրությանը: 1877-1878թթ. ռուս-թուրքական հերթական պատերազմի օրերին՝ 1877թ. նոյեմբերի 6-ին, Կարսը գրավվում է հայազգի զենեքավ Զ. Լազարևի կողմից: 1878թ. Սան-Ստեֆանոյի հաշտության պայմանագրով Կարսն անցնում է Ռուսական կայսրությանը և դառնում նորաստեղծ Կարսի մարզի կենտրոնը: Անդրկովկասի վիճակագրական կոմիտեի 1885թ. Կազմած վիճակագրության համաձայն՝ Կարսի առաքելական հայության թիվը հասնում էր 4631-ի, որոնց հոգևոր պահանջմունքները բավարարում էին Ս. Նշան եկեղեցու 1 և Ս. Աստվածածին եկեղեցու թվով 5 հոգևորականները¹⁰: Կարսի ազգային կազմի վերաբերյալ ավելի հարուստ տեղեկությունների կարող ենք հանդիպել Կարսի նահանգապետ, գեներալ-մայոր Տոմիչի «ամենահպատակ հաշվետվության» մեջ, համաձայն որի՝ 1890թ. հունվարի 1-ի դրությամբ Կարսի բնակչության թիվը հասնում էր 4305-ի, որից 26-ը՝ ռուս ուղղափառ, 347-ը՝ ռուս մոլոկան, 212-ը՝ ռուս սուբոտնիկ, 338-ը՝ հույն, 1-ը՝ լեհ, 17-ը՝ գերմանացի, 157-ը՝ հայ կաթոլիկ, 2327-ը՝ հայ առաքելական, 13-ը՝ հայ բռնա, 814-ը՝ թուրք, 22-ը՝ քուրդ, 20-ը՝ պարսիկ, 11-ը՝ շիա թուրքմեն¹¹:

XIX դարում Կարսն ուներ 18 եկեղեցի (Ս. Նշան, Ս. Աստվածածին, Ս. Առաքելոց, Ս. Գրիգոր, Ս. Մարիամ և այլն) և մի քանի մզկիթ: Օսմանյան լծից ազատագրվելուց հետո քաղաքում բավական աշխուժանում է կրթական գործը: Այստեղ 1880 թ. բացվում են քաղաքային, տարրական, արական և իգական ուսումնարաններ: 1909 թ. սկսում է գործել իգական գիմնազիան: Նշվածները ռուսական դպրոցներ էին: Դրանցից բացի հայկական մի քանի եկեղեցիներին կից կային տարրական ուսումնարաններ: Այդպիսի ուսումնարան ուներ, օրինակ, Ս. Մարիամ եկեղեցին¹²:

Առաջին աշխարհամարտից հետո Կարսը դառնում է նորաստեղծ Հայաստանի Հանրապետության կարևոր քաղաքներից մեկը՝ Վանանդ գավառի կենտրոնը: Սակայն հանրապետությունն անկում է ապրում, իսկ 1921 թ. հոկտեմբերի 13-ին ստորագրվում է Կարսի պայմանագիրը, որով Կարսի մարզն ու Սուրմալուի գավառը անցնում են Թուրքիային¹³:

Կարսի կառուցվածքը

Կարսը տիպիկ քաղաք – ամրոց է՝ բաղկացած միջնաբերդից, շահաստանից (երկուսն էլ պաշտպանված էին պարիսպներով) ու արվարձաններից, ինչպես նաև պաշտպանական կառույցներից (պարիսպներ, խանդակներ, գաղտնուղիներ): Պաշտպանական նկատառումներով քաղաքը հիմնադրվել է ընդարձակ սարահարթի վրա և հյուսիսից, արևմուտքից ու հարավ-արևմուտքից պաշտպանված է տարբեր բարձրության լեռնապարերով: Մարահարթի հյուսիսարևմտյան անկյունում մոտ 800 մ երկարությամբ ձգվում է մի բարձրադիր ժայռազանգված, որի վրա էլ ստեղծվել է Կարսի բերդը: Այն տարածքի ընտրությամբ և հավելյալ պաշտպանական կառուցվածքներով Հա-

¹⁰ Վրաստանի պատմության պետական արխիվ, ֆ. 415, ց. 1, գ. 21, թ. 29:

¹¹ Վրաստանի պատմության պետական արխիվ, ֆ. 12, ց.7, գ. 3950, գլուխ 1, հավելված 1:

¹² Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 3, Երևան, 1991, էջ 70:

¹³ Մովսիսյան Ա. Ե., նշվ. աշխ., էջեր 32-33:

յաստանի ամենաանառիկ բերդերից մեկն էր ու կանգուն է առ այսօր¹⁴: IX-XIII դարերում հենց բերդի շուրջն էլ ծավալվում է քաղաքը, իսկ բերդը մնում է իբրև միջնաբերդ: Արդեն թուրք-պարսկական պատերազմների շրջանում Կարսի հին հայկական բերդը շարքից դուրս է գալիս: Թուրքերը պաշտպանական նոր կառույցներով պարբերաբար ամրացնում են այն: Համաձայն Քյաթիբ Չելեբիի վկայության, 1579-1580 թթ. Կարսի բերդը վեզիր Կարա Մուստաֆա փաշայի կողմից ոչ միայն հիմնովին վերակառուցվել է, այլ նաև կառուցվել են մզկիթն ու բաղնիքը¹⁵: Հետագայում ամրակայվող աշխատանքները շարունակվել են այն աստիճանի, որ Կարսը՝ որպես ամրություն, XIX դարի կեսերին համարվում էր Վերդենին (Ֆրանսիա) հավասար հռչակ ունեցող բերդ: Կարսի բերդն ուներ կրկնակի պարիսպներ՝ 26 աշտարակներով, որոնցից 17-ը գտնվում էին հարավային կողմում, իսկ 9-ը՝ արևմտյան: Քաղաքի չորս անկյունների աշտարակները մյուսներից ավելի մեծ էին ու բարձր: Պարիսպների բարձրությունը 10-12 մ էր, պատերի լայնությունը՝ 1,5 մ, բերդի ընդհանուր երկարությունը 1000 մ էր, լայնությունը՝ 500 մ: Մինչև թուրքական լծից ազատագրվելը Կարսի բերդը բացառապես թուրքերով էր բնակեցված և բաժանված էր 17 թաղերի¹⁶: Էվլիա Չելեբին հիշատակում է բերդի շրջակայքի 220 խիստ ամրակուռ աշտարակների, ինչպես նաև 2080 պատնեշների ու պատվարների մասին¹⁷: Ջրով լեցուն խանդակներն ու արհեստական լճերը մեծացնում էին հարավային պարսպի անմատչելիությունը: Կարսի բերդի ողջ համալիրում երբեմն տեղավորվում էր 30000-40000 զինվոր: Բերդի ամրություններն ու մյուս կառույցները շարվել են անմշակ քարերով, բայց ամուր են, բարձր ու գեղեցիկ¹⁸:

Շահաստանը միջնադարյան քաղաքների բաղկացուցիչ մասն էր կազմում, որտեղ կենտրոնացած էր ողջ գործարար կյանքը: Կարսում շահաստանը կամ Հին քաղաքը, մոտ 30 հեկտար տարածությամբ, փռված էր ժայռազանգվածի հարավային փեշին և բոլոր կողմերից շրջապատված էր քարե հզոր կրկնապարսիպներով: Պարիսպների մեջ բացվում էին չորս դարպասներ (մեկը՝ արևելյան, երկուսը՝ հարավային, մեկը՝ արևմտյան պատերում): Ներսի պարսպի ուղղանկյուն և կիսաշրջան բուրգերը բավականաչափ խիտ էին դասավորված (10-12 մ հեռավորությամբ), մեծացնելով նրա պաշտպանական նշանակությունը¹⁹:

Քաղաքային պարիսպներից դուրս՝ բոլոր կողմերում, բացի հյուսիսայինից, տեղաբաշխված էին մեծ ու փոքր արվարձաններ, որոնց ընդհանուր թիվը հասնում էր 10-ի: Դրանցից էին «Օրթա-Կապու», «Մու-Կապու», «Բայրամ-փաշա», «Թիմուր փաշա» արվարձանները և այլն: Դրանցից ամենակարևորը «Օրթա-Կապու» կոչված հա-

¹⁴ Հարությունյան Վ. Մ., նշվ. աշխ., էջ 192:

¹⁵ Տե՛ս «Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին», կազմեց Ա. Խ. Մաֆրաստյանը, հ. Բ, Երևան, 1964, էջեր 26, 123: Բերդը վերանորոգվել է նաև շահ Աբասի կողմից ավերվելուց հետո՝ 1616 թ. (Տե՛ս նույն տեղում, էջ 99):

¹⁶ Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. Գ, էջ 70:

¹⁷ Տե՛ս Թուրքական աղբյուրները, հ. Գ, Էվլիա Չելեբի, Երևան, 1967, էջ 118:

¹⁸ Հակոբյան Թ. Խ., նշվ. աշխ., էջ 173:

¹⁹ Հարությունյան Վ. Մ., նշվ. աշխ., էջ 192:

րավային արվարձանն էր, ամենամեծն ու ամենահարմարավետը Նոր Կարսի կառուցապատման համար²⁰: Այն գտնվում էր միջնաբերդից հարավ ընկած հարթավայրում: Ռուսական կայսրությանը միացվելուց հետո այս արվարձանը հիմնովին վերակառուցվում է: Դրան նպաստում է այն, որ գրավվելուց մի քանի ամիս անց՝ 1878 թ. հունիսին, հրդեհի պատճառով այն համարյա ամբողջովին այրվում է: «Բայրամ-փաշա» արվարձանն առաջացել էր միջնադարյան Կարսի քաղաքային պարիսպներից դուրս՝ նրա արևելյան դարպասի մոտ, Կարս-Ալեքսանդրապոլ խճուղային ճանապարհի ուղղությամբ: Հայերով բնակեցված «Սու-Կապու» կամ ջրի դուռ և հայկական (բերդի հարավարևմտյան փեշերին) արվարձանները տեղաբաշխված էին դեպի գետն իջնող աջափնյա թեք տարածքի վրա: Նույն կողմում՝ փոքր-ինչ հարավ, գտնվում էր «Թիմուր փաշա» արվարձանը, որն իր անունը ծառանգել էր ժամանակին այնտեղ գտնվող ամրոցիկի անունից: Մի քանի ոչ մեծ արվարձաններ տեղաբաշխված էին գետի ձախ ափին²¹:

Քաղաքի տարբեր մասերն իրար էին կապվում Կարս գետի վրա կառուցված չորս կամուրջների շնորհիվ: Դրանցից մեկը ավերվել է 1880 թ., իսկ հին շուկայի մոտ գտնվող փայտաշեն կամ Մազլումի կամուրջը շարքից դուրս է եկել 1891 թ.: Մետաղյա կամ Միքայելյան կամուրջը կառուցվել է 1899 թ.:

Կարսի Քարե կամուրջը, կամ ինչպես առավել հայտնի է, Վարդանի կամուրջը կառուցվել է X դարում Կարս գետի վրա²²: Այս եռաչք կառույցը միջնադարում ծառայել է հաղորդակցության և բեռների փոխադրման համար: Բազալտ քարից կառուցված այս կամուրջը Կարս ժամանող զբոսաշրջիկների պարտադիր այցելության վայրերից է: Կամուրջը քաղաքի թաղամասերը կապել է Կարսի բերդի և Առաքելոց եկեղեցու հետ: Ըստ ավանդության՝ կամրջի տակ չարքեր են եղել, ինչն էլ վախեցրել է մարդկանց, և քահանան ասել է՝ երբ մարդիկ կանչեն Վարդանին, չարքերը կհեռանան:

Կարսի Առաքելոց եկեղեցին

Կարսի կարևորագույն հուշարձաններից է վերջինիս այցեքարտը համարվող Ս. Առաքելոց կամ Տասներկու առաքյալների եկեղեցին, որ կառուցվել է Աբաս Բագրատունու օրոք 931-942-ական թթ.: Ս. Առաքելոց եկեղեցին ներսից քառաթև է (խաչաձև), իսկ թմբուկն արտաքուստ 12-նիստանի է²³, որն էլ զարդարված է զույգ որմնասյուների հիմնված քանդակազարդ որմնակամարներով, որոնց կամարամիջոցներում ամփոփված են 12 առաքյալների բարձրաքանդակները²⁴: Մեծ ու փառահեղ այս կառույցը ներկայումս գործում է իբրև մզկիթ: Առաջին անգամ այն մզկիթի է վերածվել 1579 թ.²⁵: 1880-

²⁰ Հարությունյան Վ.Մ., նշվ. աշխ., էջ 475:

²¹ Հարությունյան Վ.Մ., Միջնադարյան Հայաստանի քաղաքաշինական կուլտուրան // Պատմաբանասիրական հանդես, 1963, N 2, էջ 46:

²² Վարդանյան Ս., նշվ. աշխ., էջ 147:

²³ Էփրիկեան Ս., Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ.2, Վենետիկ, 1907, էջ 342:

²⁴ Հարությունյան Վ. Մ., նշվ. աշխ., էջ 236:

²⁵ Մովսիսյան Ա., նշվ. աշխ., էջ 24: Թրքալեզու զբոսկանության մեջ կարելի է հանդիպել նաև այնպիսի տեղեկությունների, որ Ս.Առաքելոցն առաջին անգամ մզկիթի է վերածվել դեռևս 1064թ.՝

ականներից սկսած, Ռուսական կայսրության իշխանության տակ գտնվելով, Ս. Առաքելոցը գործել է իբրև ռուսական ուղղափառ եկեղեցի: 1920 թ. Կարսի անկումից հետո եկեղեցին երկար ժամանակ լքված է եղել և սկզբում ծառայել է որպես խոտի ամբար: 1963 թ. այն դարձել է թանգարան, իսկ 1988 թ. կրկին վեր է ածվել մզկիթի²⁶:

Հազարամյակը բոլորած այս կառույցը ճարտարապետական փոփոխության գրեթե չի ենթարկվել: Եկեղեցու պատերն առ այսօր զարդարում են արքայական զինանշանը, խաչերն ու առաքյալների պատկերները: Փոխարենը բացակայում է գմբեթի խաչը, ինչն ամենակարևորն է, և ինչի արդյունքում Կարսի Առաքելոցը կորցրել է իր բովանդակային նշանակությունը:

Թուրքական milliyet.com կայքում 2017 թ. հրապարակվել է մի հոդված՝ «Կարսի տուրիզմի ոլորտի մասնագետները ցանկանում են Քյումրեթ ջամին կրկին որպես թանգարան տեսնել» վերնագրով, որտեղ նշվում է, որ վերջինս որպես թանգարան ավելի շատ զբոսաշրջիկներ կունենա, և որ այս հարցում պետք է հաշվի առնել թե՛ տեղացի, թե՛ օտարերկրացի զբոսաշրջիկների պահանջները²⁷: Հարկ է նաև ավելացնել, որ օտարերկրացի զբոսաշրջիկների մեջ բավականին մեծ թիվ են կազմում հայերը:

Կարսում կատարած մեր ուսումնասիրությունների արդյունքում ակներև է դարձել, որ քաղաքում մզկիթների պակաս, բնականաբար, չի զգացվում, սակայն տեղացիներն իրենց նամազը շարունակում են անել մզկիթի վերածված հայկական եկեղեցում՝ մի տեղ, որտեղ իշխում են հայկականը և քրիստոնեականը: Կարսի բերդից բացվող տեսարանում Առաքելոցն իր տեղադրությամբ բավականին ազդեցիկ և իշխող տեսք ունի, ու չնայած բազմաթիվ մզկիթների առկայությանը, Ս. Առաքելոցը շարունակում է ամենատպալուրիչը լինել, իսկ դա փաստում ենք ոչ միայն մենք՝ հայերս, այլ նաև Կարսի ներկա բնակիչները:

Եղիշե Չարենցի տունը Կարսում

Կարսում էր գտնվում նաև Եղիշե Չարենցի տունը, որից միայն կիսավեր պատերն էին մնացել, և որը Կարսում հայ զբոսաշրջիկների այցելության կարևոր վայրերից էր: Ըստ գրականագետ Դ. Գասպարյանի՝ տունը մեծանուն բանաստեղծի հետ կապ չունի²⁸: Չնայած այս վիճելի հանգամանքին, ամեն տարի այստեղ հազարավոր հայ զբոսաշրջիկներ էին գալիս՝ հարգանքի տուրք մատուցելու գրողին և տեսնելու Չարենցի նկարագրած Կարսն ու գրողի սիրելի տունը: Հետևաբար, դա լինել գրողի նկարագրած տունը, թե ոչ, վերջինից արդեն կերտվել էր խորհրդանշական «Չարենցի տուն»-ը: Կիսավեր շինության սեփականատերն էլ շատ լավ հասկացել էր դա, ուստի պատահական չէին պատին թողնված հեռախոսահամարն ու «վաճառվում է» գրությունը: Գնել

վերանվանվելով Քյումրեթ ջամի: Տե՛ս [https://www.sabah.com.tr/turizm/2018/09/11/dogunun-gize-mli-sehrikars?fbclid=iwar1ialmm7ehiiqwcwryqqlm9tubbyf6finvkax2hqzfqzwwpqv6usqgyc4\(26.07.2021\)](https://www.sabah.com.tr/turizm/2018/09/11/dogunun-gize-mli-sehrikars?fbclid=iwar1ialmm7ehiiqwcwryqqlm9tubbyf6finvkax2hqzfqzwwpqv6usqgyc4(26.07.2021))

²⁶ Մովսիսյան Ա., նշվ. աշխ., էջեր 24-25:

²⁷ [https://www.milliyet.com.tr/yerel-haberler/kars/karsli-turizmciiler-kumbet-camiinin-muze-olmasini-istiyor-12172876\(27.07.2021\)](https://www.milliyet.com.tr/yerel-haberler/kars/karsli-turizmciiler-kumbet-camiinin-muze-olmasini-istiyor-12172876(27.07.2021))

²⁸ <https://armeniasputnik.am/society/20190301/17554727/karsum-qandvats-tunn-iskapes-charencinn-erte-gumar-ein-ashxatum-miamit-hayeri-mijocov.html>

ցանկացողների համար այդ կիսավեր շինության արժեքը տատանվում էր 100 հազար դոլարի սահմաններում: Տեղացիների կողմից երկու վարկած էր տարածվել. առաջինը, որ ազգությամբ հայերը ոչինչ չեն խնայի և կգնեն տունը, երկրորդն էլ, որ այդ արժեքով կիսաքանդ տունը երբեք չի վաճառվի: 2011 թ. թուրքական beyazgazete.com կայքում «Հայ գրողի տան արժեքը 250000 լիրա է» վերնագրով հոդված էր հրատարակվել, որտեղ նշվում էր, որ Կարսում գտնվող և ավերակի վերածված, հայ ճանաչված գրող Եղիշե Չարենցի տան ներկայիս սեփականատերը մոտ 130 քմ տարածքի համար 250 հազար լիրա է պահանջել Ստամբուլում բնակվող մի հայ գործարարից, որը ցանկացել է գնել գրողի տունը և թանգարան դարձնել: Վերջինս, սակայն, հրաժարվել է և չի գնել այն²⁹:

2019 թ. փետրվարին Չարենցի տունն ապամոնտաժվեց: Ըստ տեղացիների՝ քանդելու որոշումը կայացվել էր քաղաքապետարանի կողմից՝ պատճառաբանությամբ, որ շենքը վերածվել էր թմրանյութ և ոգելից խմիչք օգտագործող կարսեցիների հավաքատեղիի, որոնք անհանգստություն էին պատճառում շրջակայքի բնակիչներին: Եթե համադրենք փաստերը, ապա պարզվում է, որ այդ շրջանում Կարսում նախապատրաստվում էին ՏԻՄ ընտրություններին, իսկ Կարսի այդ ժամանակ գործող քաղաքապետը՝ ադրբեջանական արմատներով Մուրթազա Քարաչանթան, վերընտրվելու խնդրի առաջ էր կանգնած: Հայ գրողի տան ապամոնտաժումը մեկն էր այն տարբերակներից, որով կարելի էր հաճոյանալ ընտրողների ազգայնական հատվածին և բավարար ձայներ հավաքել:

Այսպիսով, մեկտեղելով մեր ուսումնասիրություններից ստացած պատկերը և Կարսի՝ տարբեր ազգային պատկանելությամբ բնակիչների հետ շփումների արդյունքները, կարելի է եզրակացնել, որ տեղացիները ևս չեն կարողանում հասկանալ, թե ինչպես կարելի էր հողին հավասարեցնել մի բան, որը պատկանում էր գրողի և ուներ հուշային բովանդակություն, և ուր այցելում էին բազմաթիվ զբոսաշրջիկներ: Ըստ կարսեցիների՝ ամենաքիչը, որ կարելի էր անել՝ գրողի տունը տուրիստական կենտրոն դարձնելն ու սեփական երկրում ևս մեկ այցելվող վայր ունենալն էր: Այս փաստն, իհարկե, Թուրքիայի վերին օղակների կողմից չէր կարող անտեսվել, բայց հարցի մյուս կողմում ՏԻՄ ընտրություններում ադրբեջանական արմատներով թեկնածուն էր, որը, այնուամենայնիվ, պարտվեց: Որպես հետևանք՝ մեզ համար թե՛ նյութական, և թե՛ հոգևոր արժեք ներկայացնող գրողի տունը քանդվեց, իսկ Կարսում պակասեց ևս մեկ հայկական հետք:

Եզրահանգում. Կարս քաղաքը մշտապես եղել է հայկական ու գտնվել է Մեծ Հայքի Այրարատ աշխարհի Վանանդ գավառում: Այն իր ծաղկման գագաթնակետին է հասել IX-X դդ., երբ նախկինում գոյություն ունեցող բերդաքաղաքից վերածվել է միջնադարյան հայ քաղաքաշինությանը բնորոշ կառուցվածքով քաղաքի: Օսմանյան տիրապետության ժամանակահատվածում դիմախեղվում է Կարս քաղաքի ազգային դիմազիծը, որը շարունակվում է նաև ռուսական տիրապետության շրջանում: Եթե 1885 թ. տվյալներով Կարսի առաքելական հայության թիվը հասնում էր 4631-ի, ապա Կարսի

²⁹ <https://beyazgazete.com/haber/2011/02/18/ermeni-sairin-evi-nin-degeri-250-bin-tl-12-469619.html> (27.07.2021)

նահանգապետի 1890 թ. «ամենահպատակ հաշվետվության» մեջ հայ բնակչության ընդհանուր թիվը 2497 էր:

Ներկայումս Կարսում կարող ենք տեսնել հայկական պատմամշակութային ժառանգության հետքեր՝ Կարդանի կամուրջը, բերդը, սգկիթի վերածված հայկական Ս.Առաքելոցը, որը թուրքերի ու քրդերի նամազի նախընտրելի վայրի է վերածվել:

КАРС: ПРОШЛОЕ И НАСТОЯЩЕЕ

Саркисян А. Г.

Ключевые слова: *Крепость, город, армяне, церковь Святых Апостолов, Османская империя, мечеть, дом Е. Чаренца, мост Вардана.*

Карс всегда был армянским и находился в провинции Вананд ашхара Айрарат Великой Армении. Пика своего расцвета Карс достиг в IX-X веках, когда был преобразован в город со структурой, типичной для средневековой городской застройки Армении. Во время османского владычества национальный облик города Карса был искажен, что продолжилось и в составе Российской империи. Если в 1885 г. количество апостольских армян Карса достигало 4631, то в 1890 году общее количество армян составляло 2497. В настоящее время в Карсе можно увидеть следы армянского историко-культурного наследия - мост Вардана, Карсская крепость, превращенная в мечеть церковь Святых Апостолов, где предпочитают делать намаз местные жители.

KARS: THE PAST AND THE PRESENT

Sargsyan A. G.

Key words: *fortress, city, Armenians, Church of the Holy Apostles, Ottoman Empire, mosque, E. Charents's house, Vardan bridge.*

Kars has always been Armenian and was located in the Vanand province of the Ayrarat ashkharh of Greater Armenia. It reached its peak of prosperity in the IX-X centuries, when it was transformed into a city with a structure typical of medieval Armenian urban development. During the Ottoman rule, the national image of the city of Kars was distorted, which continued during the Russian rule. If in 1885, according to the data, the number of apostolic Armenians of Kars reached 4631, then in 1890 the total number of Armenians was 2497. Currently in Kars we can see traces of Armenian historical and cultural heritage: Vardan Bridge, Kars Fortress, Armenian Apostolic Church turned into a mosque, where locals prefer to pray.

Գ ր ա կ ա ն ն ի թ յ ո ն ի

1. Առաքելյան Բ., Քաղաքները և արհեստները Հայաստանում IX-XIII դդ., Երևան, ՀՄՍՌ ԳԱ հրատ., 1958, 376 էջ:
2. Էփրիկեան Ս., Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ.2, Վենետիկ, Ս.Ղազար, Մխիթարեան տպ., 1907, 400 էջ:

3. Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, կազմեց Ա. Խ. Սաֆրաստյանը, հ. Բ, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1964, 339 էջ:
4. Թուրքական աղբյուրները, հ.Գ, Էվլիա Չելեբի, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1967, 349 էջ:
5. Հակոբյան Թ.Խ., Պատմական Հայաստանի քաղաքները, Երևան, «Հայաստան» հրատ., 1987, 256 էջ:
6. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ.Գ, Երևան, ԵՀ հրատ., 1991, 992 էջ:
7. Հարությունյան Վ. Մ., Հայկական ճարտարապետության պատմություն, Երևան, «Լույս» հրատ., 1992, 632 էջ:
8. Հարությունյան Վ. Մ., Միջնադարյան Հայաստանի քաղաքաշինական կուլտուրան // Պատմաբանասիրական հանդես, 1963, N 2, 85-100 էջեր:
9. Մանանդյան Հ. Ա., Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. 2, Երևան, Հայպետհրատ., 1960, 425 էջ:
10. Մովսիսյան Ա. Ե., Արևմտյան Հայաստանի 10 ուխտավայրեր, Երևան, «Զանգակ-97» հրատ., 2011, 112 էջ:
11. Մուրադյան Հ. Ղ., Կարսի նահանգի վարչաժողովրդագրական նկարագիրը 19-րդ դարի առաջին երեսնամյակին, Եր., ՀՀ ԳԱԱ ՊԻ հրատ., 2006, 236 էջ :
12. Պատմություն Արիստակեսայ վարդապետի Լաստիվերցույ, Թիֆլիս, Ադանեանցի տպ., 1912, 191 էջ:
13. Վարդանյան Ս., Հայաստանի մայրաքաղաքները, Երևան, «Ապոլոն» հրատ., 1995, 262 էջ:
14. Վրաստանի պատմության պետական արխիվ, ֆ. 12, ց. 7, գ. 3950:
15. Վրաստանի պատմության պետական արխիվ, ֆ. 415, ց. 1, գ. 21:
16. <https://www.sabah.com.tr/turizm/2018/09/11/dogunun-gizemli-sehri-kars?fbclid=iwar1ialmm7ehiiiqwcwrykqlm9tubbyf6finvkax2hqzfqzwpqv6usqgyc4>
17. <https://www.milliyet.com.tr/yerel-haberler/kars/karsli-turizmciler-kumbet-camiinin-muze-olmasini-istiyor-12172876>
18. <https://armeniasputnik.am/society/20190301/17554727/karsum-qandvats-tunn-iskapes-charencin-er-te-gumar-ein-ashxatum-miamit-hayeri-mijocov.html>
19. <https://beyazgazete.com/haber/2011/02/18/ermeni-sairin-evi-nin-degeri-250-bin-tl-12-469619.html>

Ընդունվել է՝ 11. 09. 2021

Գրախոսվել է՝ 22. 10. 2021

Հանձնվել է տպ.՝ 15. 11. 2021

Տեղեկություններ հեղինակի մասին

Անժելա ՄԱՐԳՅԱՆ՝ թուրքագետ, թանգարանագետ,
ՀՀ ԳԱԱ միջազգային գիտակրթական կենտրոնի մագիստրոս,
Էլ. հասցե՝ angelasargsyan.93@gmail.com

«ՍՈՂԱՑՈՂ ՆՎԱՃՄԱՆ» ԹՈՒՐԲԱԿԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ
1920 թ. ԹՈՒՐԲ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Կարինե Ալեքսանյան

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

Բանալի բառեր՝ *ղիվանագիտական զինանոց, միջազգային իրավունք, զինա-
դադար, Ալեքսանդրապոլի պայմանագիր, թուրք-հայկական պատերազմ:*

Ուսումնասիրությունը նվիրված է թուրքական զինանագիտական զինանոցում մշակված և 1920թ. թուրք-հայկական պատերազմի շրջանում իրականացված «սողացող նվաճման» ռազմավարության հարցին: Ռազմական ակտիվ գործողությունների և դրանից հետո միջազգային իրավունքի ու զինադադարի պայմանների խախտմամբ հակառակորդի տարածքներ զավթելու, նրա զորքին ու բնակչությանը հոգեբանորեն ճնշելու, բանակը թուլացնելու և բարոյազրկելու պայմաններում «սողացող նվաճման» ռազմավարության իրականացմամբ թուրքերը հասան Ալեքսանդրապոլի՝ իրենց համար հնարավորինս բարենպաստ «խաղաղության» պայմանագրի կնքմանը, որն այնուհետև նույն ռազմավարությամբ ամրապնդեցին Մոսկվայի և Կարսի պայմանագրերով:

Նախաբան. 1920 թ. թուրք-հայկական պատերազմը հայոց նորագույն պատմության ամենաողբերգական էջերից մեկն է: Պարտվելով այս պատերազմում՝ հայերը ոչ միայն կորցրին հայկական հողերը մեկ միասնական պետության մեջ միավորելու բացառիկ հնարավորությունը, զրկվեցին իրենց անկախ պետականությունից, թուրքերին զիջեցին նորանոր տարածքներ, կրեցին հսկայական նյութական վնասներ, այլև ցեղասպանության ենթարկվեց արևելահայ մի խոշոր հատված: Բացառիկ ծանր հետևանքներ ունեցավ այս պատերազմը հատկապես Ալեքսանդրապոլի զավառի բնակչության համար: Հայկական բանակի բարոյալքման պայմաններում թուրքերը, ռազմական գործո-

դուրսն են բերվել զուգակցելով դիվանագիտական խարդավանքներին, հեշտությամբ գրավեցին Ալեքսանդրապոլն ու գավառը: Այնուհետև, վարպետորեն օգտվելով թուրք-բոլշևիկյան դաշինքից, ոչ մի իրավական հիմք չունենալով մնալու այստեղ, կարողացան ամբողջ վեց ամիս գավառը պահել զինակալման դաժան ռեժիմի պայմաններում: Չնայած 1920 թ. դեկտեմբերի 2-ի Ալեքսանդրապոլի և 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի պայմանագրերով Ալեքսանդրապոլի գավառը մնում էր Հայաստանի կազմում, թուրքերն այստեղից ստիպված հեռացան միայն ռուսական հրամանատարության վերջնագրի պահանջով՝ 1921թ. ապրիլի 22-ին, բայց ոչ ընդմիջտ, այլ առաջին իսկ հնարավորության դեպքում վերադառնալու ակնկալիքով:

Ի դեպ, թուրքական ժխտողականության արմատները և հայոց ոչնչացման գաղափարը սնուցող ռազմավարությունները կենսունակ գտնվեցին նաև հարյուր տարի անց: 2020թ. սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ Ադրբեջանի և նրան դաշնակցած Թուրքիայի սանձազերծած պատերազմում նորագույն ռազմական սպառազինությունը զուգակցվեց թուրքական դիվանագիտական զինանոցի հին ռազմավարություններին: Հայ ժողովուրդը, ցավոք, ոչ միայն անպատրաստ գտնվեց դիմագրավելու թուրք-ադրբեջանական դաշինքի սանձազերծած պատերազմում թուրքական նորագույն սպառազինությանը, այլ նաև հին ռազմավարություններին, որոնք գործածվել էին իր դեմ ուղիղ 100 տարի առաջ:

Արցախյան երկրորդ պատերազմում կրած պարտությունը առաջնահերթություն է դարձրել հայոց պատմության վերագնահատումը, նոր ազգային անվտանգության ռազմավարության մշակումը, այլևս երբեք չցեղասպանվելու տրամաբանությամբ ապրելու և գործելու հրամայականը: Հայոց բանակը անհրաժեշտ տեխնոլոգիական միջոցներով և սպառազինությամբ զինելու հետ նույնքան առաջնային է թուրքական դիվանագիտական զինանոցի հանգամանալի ուսումնասիրության հիման վրա հայոց ազգային անվտանգության նոր ռազմավարության ստեղծումը:

Զինադադար և հաշտություն

Կարսի անկումից հետո, երբ Հայաստանի Հանրապետության պարտությունը պատերազմում արդեն ոչ մեկի մեջ կասկած չէր հարուցում, անխուսափելի էր նաև Ալեքսանդրապոլի անկումը. թուրքերն այն չեն գրավում ուժով, այլ նպատակ ունենալով զավթել ավելի շատ տարածքներ, դիմում են իրենց դիվանագիտական զենքերից մեկին՝ «սողացող նվաճման» ռազմավարությանը:

1920 թ. ամռանը ռուս-թուրքական բանակցություններում խորհրդային կառավարությունը առաջ էր քաշել հին թուրքական սահմանի ռեկտիֆիկացիայի այնպիսի սկզբունք, որի դեպքում մուսուլմանական գերակշիռ ազգաբնակչություն ունեցող հողերը կանցնեին Թուրքիային, իսկ այն հողերը, որտեղ մինչև 1914 թ. հայկական մեծամասնություն կար՝ Հայաստանին: Բայց թուրքական պատվիրակության ղեկավար Բեքիր Սամին համառորեն պնդել էր, որ պահպանվեն Բրեստ-Լիտովսկի պայմանագրով գծված սահմանները և պահանջել էր ճանաչել թուրքական Ազգային ուխտը, ինչպես նաև Ռուսաստանի համաձայնությունը (թեկուզ բանավոր) գրավելու Հայաստանի Հանրապետության որոշ տարածքներ, հատկապես Սարիղամիշը և Շահթախտիի շրջանը,

որով Նախիջևանի վրայով Կարմիր բանակի հետ անմիջական կապ կստեղծվեր, առանց որի իբր թե քեմալականները մեկ ամիս էլ չեն դիմանա: Կուրորեն հավատալով թուրքերի խոսքին, որ այդ գծից առաջ չեն անցնի՝ խորհրդային ղեկավարությունը համաձայնել էր: Այդ պատճառով, երբ 1920 թ. սեպտեմբերի 19-ին թուրքերը գրավեցին Սարիղամիշն ու մինչև հոկտեմբերի վերջը կանգնած մնացին այդտեղ, խորհրդային կառավարությունը առանձնապես չէր անհանգստանում: Բայց երբ հոկտեմբերի վերջին նրանք գրավեցին նաև Կարսն ու սկսեցին առաջանալ, ապա ռուսները ոչ միայն բողոքեցին, այլև դադարեցրին զենքի բարեխիղճ մատակարարումը՝ պահանջելով նախ զինադադար կնքել: Կարաբեքիրն իր հետագա առաջխաղացումն ապահովելու նպատակով դիմում է թուրքական դիվանագիտական արդյունավետ ու փորձած միջոցին՝ «սողացող նվաճման»՝ ռազմավարությանը՝ համոզելով խորհրդային Ռուսաստանին, որ իր բանակը «հեղափոխական ազատարար» բանակ է, որի նպատակն է փրկել հայ աշխատավորությունը «դաշնակների լծից և Հայաստանում հռչակել բանվորա-գյուղացիական իշխանություն»¹: Արդեն նոյեմբերի 3-ին 11-րդ կարմիր բանակի հրամանատարին ուղարկված հեռագրում նա համոզում էր, որ հարձակվեն Հայաստանի վրա՝ ասելով, որ դա ոչ թե պատերազմ կլինի, այլ մի թեթև զբոսանք, որը հեշտությամբ կհանգեցնի խորհրդային կարգերի հաստատմանը Հայաստանում»²:

Կարաբեքիրը, մի կողմից ջանալով իր առաջխաղացումը պայմանավորել Խորհրդային Ռուսաստանի շահերով, մյուս կողմից՝ Հայաստանի կառավարության հետ կնքված զինադադարի պայմանով, գրավում է Ալեքսանդրապոլի կարևոր ռազմաստրատեգիական կետերը՝ բերդն ու կայարանը»³:

Կարաբեքիրը, որն իր վերը նշված զինադադարով հայերին ստիպել էր փաստորեն առանց դիմադրության իրեն հանձնել Ալեքսանդրապոլը և զրկվել կարևոր ռազմաստրատեգիական դիրքերից, նոյեմբերի 8-ի երեկոյան հայկական կողմին Ջաջուռի ճակատի առաջավոր գծում ներկայացնում է Անկարայի կառավարության զինադադարի շատ ավելի ծանր պայմանները՝ նպատակ ունենալով մերժման դեպքում զարգացնել ռազմական հաջողությունները և գրավել ամբողջ Ալեքսանդրապոլի գավառը⁴:

Հայաստանի կառավարությունը, Ալեքսանդրապոլը թուրքերին հանձնելուց հետո չտեսնելով թուրքերի կողմից զինադադարը խախտելու ոչ մի հիմք, ակնկալելով բնակչության ու բանակի աջակցությունը, նոյեմբերի 10-ին մերժում է Անկարայի կառավարության զինադադարի պայմանները⁵:

Հայաստանի կառավարությունից այս պատասխանն ակնկալող Կարաբեքիրը իսկույն պատասխանն նոտա էր հղում. Քանի որ Հայաստանի կառավարությունը չի ըն-

¹ **Չոհրաբյան Է.**, 1920թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Երևան, 1997, էջ 146:

² Նույնը:

³ Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 200, ց. 1, գ. 600, թ. 111:

⁴ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 600, թթ. 202-203:

⁵ ՀԱԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 151, թ. 4:

դուրնում իր կառավարության պայմանները, ուստի ինքը ստիպված է վերսկսել ռազմական գործողությունները:⁶

Հարկ եղավ ռազմական գործողությունների մի քանի օր, որպեսզի Հայաստանի կառավարությանը պարզ դառնար, որ հաշտության կնքումն անհրաժեշտ է արդեն ամեն գնով, որ թուրքական զորքերի առաջխաղացումը կասեցնելու իր վերջին ճիգերը ձախողված են, որ բանակն ամբողջապես բարոյալքված է և անհաղորդ կառավարության կոչերին ու ձգտումներին:

Հայոց բանակի բարոյալքումը կանգնեցնելու, թուրքերի սողացող նվաճումը կանխելու միակ ելքը Հայաստանը խորհրդայնացնելն էր. նախ՝ որ Կարաբեքիրը հնարավորություն չէր ունենա հանդես գալու Հայաստանը խորհրդայնացնողի դերում, երկրորդ՝ կկոտորվեին հոգեբանական այն կապանքները, որի մեջ հայտնվել էր մեր բանակը: Խոսքը վերաբերում էր թշնամու գերակշիռ ուժին ու թուրք-բոլշևիկյան դաշինքին: Հայաստանի կառավարությունը գերադասեց զինադադարի պայմաններով Ալեքսանդրապոլը հանձնել թուրքերին՝ զրկվելով կարևոր ռազմավարական ստարտեգիական կետից և թուրքերի դեմ հանդիման անպաշտպան թողնելով բնակչությանը, որը ճարահատյալ ստիպված էր «աղուհացով» դիմավորել իր դարավոր թշնամուն: Ի դեպ, հայ պատմագիտական մտքի ու հասարակական գիտակցության մեջ քննադատվող այս երևույթը թուրքական «սողացող նվաճման» ռազմավարության կարևոր դրույթներից էր, որով նրանք կոտորում էին հայ բնակչության դիմադրական ոգին, պառակտում հայ հասարակությունը: Նախապես հայտնվելով, որ իրենց դիմավորելու պարագայում բնակչության նկատմամբ դաժանություններ չեն լինի, ապահովում էին իրենց հայ բնակչության դիմադրությունից⁷:

Տեսնելով, որ Հայաստանի իշխանությունները հապաղում են խորհրդայնացնել Հայաստանը, թուրքերը ռազմակալված Ալեքսանդրապոլում հռչակում են խորհրդային իշխանություն՝ գործնականորեն ցույց տալով, որ իրենց առաջխաղացումը պայմանավորված է Հայաստանում խորհրդային կարգեր հաստատելու հետ:

Հայաստանի կառավարությունը քիչ ուշ՝ դեկտեմբերի 2-ին, ստիպված էր կատարել անխուսափելի իշխանությունը հանձնել բոլշևիկներին: Նույն դեկտեմբերի 2-ի գիշերը կնքվում է Ալեքսանդրապոլի հաշտության պայմանագիրը թուրքերի հետ, որոնք, հրաժարվելով խորհրդային Ռուսաստանի միջնորդությունից, շտապեցնում էին կնքել հաշտության պայմանագիրը՝ ակնարկելով, որ հակառակ դեպքում կշարժվեն Երևանի վրա: 1920 թ. նոյեմբերի 30-ի գիշերը Քյազիմ Կարաբեքիրի վերջնագրին պատասխանելու նպատակով գումարված հատուկ ժողովը, որին մասնակցում էին խորհրդարանի պատգամավորները, կառավարության անդամները, ՀՀԴ Բյուրոն իր ողջ կազմով և մի շարք անհատ գործիչներ, որոշեց ընդունել հաշտության ստորագույցիչ պայմանները՝ հանուն հայ ժողովրդի փրկության:

Հայաստանի կառավարությունը դրանով փորձում էր ուղղակի կանգնեցնել թուրքական արշավանքը, փրկել Հայաստանի մնացած բնակչությանը կոտորածներից,

⁶ ՀԱԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 151, թ. 4: ֆ. 200, ց. 1, գ. 600, թ. 229:

⁷ ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 3000, թ. 105:

մինչև նոր կառավարության կազմվելը և Կարմիր բանակի մուտքը Երևան: Համենայն դեպս, այդպես էր հավատացնում Կարաբեքիրը: Մյուս կողմից, Թուրքիան կառչում էր Ալեքսանդրապոլի պայմանագրի առանձին կետերից, մասնավորապես՝ Հայաստանի մաս ճանաչված, բայց իրենց կողմից ռազմակալված տերիտորիաներին վերաբերող կետին, որին համաձայն՝ այդ շրջաններից պետք է հեռանային միայն «Հայաստանի կողմից ներկա պայմանագրի բոլոր պայմանների կատարման դեպքում»⁸: Մա հնարավորություն էր տալիս թուրքերին երկարացնելու Ալեքսանդրապոլի գավառի ռազմակալումը, քանի որ պայմանագիրը կազմված էր այնպես, որ միշտ էլ կարելի էր վկայակոչել ինչ-ինչ թերացումներ հայերի կողմից:

Ինչ վերաբերում է Խորհրդային Հայաստանի Հեղկոմի նախագահ Ս. Կասյանի՝ Ալեքսանդրապոլի պայմանագիրը չեղարկելու և բանակցություններ վերսկսելու առաջարկին, ապա Հայաստանի խորհրդայնացման խաղաքարտը հմտորեն օգտագործած Կարաբեքիրը պատասխանեց, որ ինքը շատ ուրախ է Հայաստանում բանվորագյուղացիական հանրապետության հռչակման համար, բայց Հայաստանի հետ նոր բանակցությունների չի պատրաստվում: «Մոտիկ ապագայում, -ասվում էր նրա հեռագրում, -կիրավիրվի կոնֆերանս, որտեղ Խորհրդային Ռուսաստանի և Հայաստանի ներկայացուցիչների հետ միասին քննության կառնվեն ընդհանրապես կովկասյան խնդիրները»⁹:

Խաղից դուրս թողնելով Հայաստանի խորհրդային իշխանությանը՝ թուրքական կառավարությունը հասնում է խորհրդային Ռուսաստանից առավելագույն զիջումների: Մասնավորապես, սպառնալով վերջինիս, որ կթեքվեն Անգլիայի կողմը, թուրքերը հասան նրան, որ 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի պայմանագրով, առանց հայ ներկայացուցիչների մասնակցության, Կարսի մարզն ու Սուրմալուի գավառը /124, 997 քառ կմ տարածությամբ և 572000 բնակչությամբ/ զիջվում է իրենց: Սակայն վերջիններս, չբավարարվելով նույնիսկ այսքանով և խախտելով Մոսկվայի պայմանագրի պայմանները, համառորեն չէին ցանկանում ազատել Ալեքսանդրապոլի գավառը: Դեռ ավելին, ձգտում էին գրավել Ախալցխայի ու Ախալքալաքի գավառներն ու Բաթումի մարզը:¹⁰ Իսկ ինչ վերաբերում է Չիչերինի առաջարկին՝ «դուրս գալ Ալեքսանդրապոլի շրջանից, քանի որ այստեղ հաստատվել են խորհրդային կարգեր»¹¹, պատասխանում են՝ հայ-թուրքական խաղաղությունը հիմնված է ազգերի ինքնորոշման իրավունքի վրա¹²:

Անդրկովկասի նկատմամբ զավթողական ծրագրերից չիրաժարվելու թուրքերի փորձերը առաջացնում են Մոսկվայի խորհրդային կառավարության գայրույթն ու զարմանքը: Տեսնելով, որ թուրքերն ուղղակի հեղինակազրկում են խորհրդային իշխանությունն Անդրկովկասում, 1921թ. ապրիլի 13-ին Մոսկվան վերջնագիր է ներկայացնում

⁸ ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 113, թ. 102:

⁹ ՀԱԱ, ֆ. 1022, ց. 4, գ. 72, թ. 2:

¹⁰ Մարգարյան Ե., Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում 1914-1918 թթ., Երևան, 1964, էջ 511:

¹¹ ՀԱԱ, ֆ. 1022, ց. 3, գ. 325, թ. 1-2:

¹² ՀԱԱ, ֆ. 1022, ց. 3, գ. 270, թ. 4-6:

թուրքական հրամանատարությանը՝ Ալեքսանդրապոլն ու շրջանը մաքրելու պահանջով¹³:

1921թ. ապրիլի 22-ին թուրքերը ստիպված են լինում հեռանալ Ալեքսանդրապոլի գավառից: Ի դեպ, հեռանալիս թուրքական Ազգային Մեծ ժողովի կառավարության արևելյան ճակատի Գյումրու տեղական հրամանատար Օսման Նուրին ցինիկաբար չի մոռանում երջանկություն մաղթել «բարեկամ» հայ ժողովրդին՝ խորհուրդ տալով նրան հեռու մնալ հայ ազգի երջանկությունը խաթարող որևէ ընթացքից: Հիշեցվում էր նաև խորհրդա-թուրքական բարեկամության մասին և, վերջապես, խորհուրդ էր տրվում չխախտել այդ միությունը:¹⁴

«Մողացող նվաճման» ռազմավարությամբ թուրքերն ի չիք դարձրին Կարսը վերադարձնելու հույսերը: 1920թ. դեկտեմբերի 2-ի Հայաստանի խորհրդայնացման Երևանի ռուս-հայկական համաձայնագրով Ռուսաստանը պարտավորվում էր Հայաստանի կազմում թողնել Կարսի մարզի հարավարևելյան մասը, որը գրավված էր թուրքերի կողմից: Վերջիններս, տարբեր պատճառաբանություններով դուրս չգալով Ալեքսանդրապոլի գավառից, հայկական կողմին ստիպեցին կենտրոնանալ Ալեքսանդրապոլի գավառի վրա և նվաճեցին ողջ Կարսի մարզը: Արդյունքում՝ թե՛ Ալեքսանդրապոլի և թե՛ Մոսկվայի ու Կարսի պայմանագրերով Ալեքսանդրապոլը մնաց Խորհրդային Հայաստանին, իսկ Կարսը՝ Թուրքիային:

Եզրահանգում. Ամփոփելով 1920 թ. թուրք-հայկական պատերազմում թուրքերի կողմից իրականացված «սողացող նվաճման» ռազմավարության հարցի քննությունը՝ կարելի է եզրակացնել, թուրքերն Ալեքսանդրապոլի գավառը գրավեցին՝ ռազմական հաջողությունները զուգակցելով դիվանագիտական խաղերին: Կարսը գրավելուց հետո պաշտոնապես դիմելով Հայաստանի կառավարությանը՝ խաղաղության բանակցություններ սկսելու, թուրքերը շարունակեցին իրենց առաջխաղացումը՝ պայմանավորելով այն Խորհրդային Ռուսաստանի շահերով:

Մի կողմից տպավորություն ստեղծելով, թե իրենք կողմ են անկախ Հայաստանի գոյությանը, թուրքերը Հայաստանի կառավարությանը դրդում են չընդունել Հայաստանի խորհրդայնացման վերաբերյալ Խորհրդային Ռուսաստանի առաջարկը, մյուս կողմից՝ ուխտադրուժ ռազմական առաջխաղացմամբ և զինադադարի նոր, ծանր պայմաններով անելանելի վիճակի մեջ դնում Հայաստանի կառավարությանը՝ ստիպելով դեկտեմբերի 2-ին խաղաղ ձևով իշխանությունը հանձնել բոլշևիկներին: Նույն դեկտեմբերի 2-ի գիշերը կնքվում է Ալեքսանդրապոլի հաշտության պայմանագիրը թուրքերի հետ:

Թուրքերը, կառչելով Ալեքսանդրապոլի պայմանագրի առանձին կետերին, մասնավորապես՝ Հայաստանի մաս ճանաչված, բայց իրենց կողմից զինակալված տարածքներին վերաբերող կետին, ամբողջ վեց ամիս չեն հեռանում Ալեքսանդրապոլի գավառից՝ մինչև վերջին հնարավորությունը թալանելով և կոտորելով գավառի բնակչու-

¹³ ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 10, թ. 17: **Զոհրաբյան Է.**, Մովետական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները, Երևան 1979, էջ 238:

¹⁴ ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 21, թ. 50:

թյանը: Ավելին, կես տարի մնալով Ալեքսանդրապոլի գավառում՝ ամրագրում են նաև Չարսի մարզի աննկատ նվաճումը:

ТУРЕЦКАЯ СТРАТЕГИЯ «ПОЛЗУЧЕЙ ЭКСПАНСИИ» ВО ВРЕМЯ ТУРЕЦКО-АРМЯНСКОЙ ВОЙНЫ 1920 г.

Александян К. В.

Ключевые слова: *дипломатический арсенал, международное право, прекращение огня, Александропольский договор, турецко-армянская война.*

Исследование посвящено стратегии «ползучее завоевание», разработанного в 1920 году во время турецко-армянской войны.

В результате активных военных действий и после этого, нарушая международное право и условия прекращения огня, завоеванием территорий, психологическим давлением войск и населения, в условиях ослабления и деморализации армии, в результате стратегии «ползучее завоевание» турки достигли как можно более благоприятного для себя подписания «мирного» соглашения об Александрополе, которое затем было укреплено такой же стратегией договорами Москвы и Карса.

TURKISH STRATEGY OF CREEPING EXPANSION IN 1920 IN THE COURSE OF TURKISH-ARMENIAN WAR

Aleksanyan K. V.

Key words: *diplomatic arsenal, international law, ceasefire, Treaty of Alexandropol, Turkish-Armenian war.*

The study focuses on the "creeping conquest" strategy developed in 1920 during the Turkish-Armenian war.

As a result of active hostilities and after that, violating international law and ceasefire conditions, conquering territories, psychological pressure of troops and population, in conditions of weakening and demoralization of the army, as a result of the strategy of "creeping conquest", the Turks achieved the most favorable signing of the "peaceful". The agreement on Alexandropol, which was then reinforced by the same strategy with the treaties of Moscow and Kars.

Գ ր ա կ ա ն ո թ յ ո ն ի ն

1. Զոհրաբյան Է, 1920թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Երևան, 1997, 146 էջ:
2. Զոհրաբյան Է., Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները, Երևան, 1979, 238 էջ:

3. Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 200, ց.1, գ. 600, թ.111: թ. 229: գ. 343, թ. 59: գ. 600, թթ. 202-203:
4. Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 4047, ց. 1, գ. 151, թ. 4:
5. Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 105, ց. 1, գ. 3000, թ. 105:
6. Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 114, գ. 10, թ. 17: ց. 2, գ. 21, թ. 50: ց. 2, գ. 113, թ. 102:
7. Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 1022, ց. 4, գ. 72, թ. 2: ց. 3, գ. 325, թ. 1-2: ց. 3, գ. 270, թ. 4-6:
8. Սարգսյան Ե., Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում 1914-1918 թթ, Երևան, 1964, 511 էջ:

*Ընդունվել է՝ 26. 09. 2021
Գրախոսվել է՝ 23.10. 2021
Հանձնվել է տպ.՝ 15. 11. 2021*

Տեղեկություններ հեղինակի մասին

Կարինե ԱԼԵՔՍԱՆՅԱՆ՝ պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտաշխատող,
Էլ. հասցե՝ karineal@mail.ru

ՌՈՒԲԵՆ ՀԵՐՅԱՆԻ ԵՎ ՎԱՀԱՆ ՉԵՐԱԶԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հեղինե Հովհաննիսյան

Երևանի պետական համալսարան

Բանալի բառեր՝ Ռուբեն Հերյան, Վահան Չերազ, Հայոց ցեղասպանություն, Տեր-Չոր, որբահավաք աշխատանք, ազատագրում, որբեր, որբանոցներ:

Սույն հոդվածում ներկայացվում է Ռուբեն Հերյանի և Վահան Չերազի գործունեությունը, երկու նվիրյալներ, ովքեր մտան պատմության մեջ որպես որբերին փրկող, դաստիարակող, հայրենասիրություն սերմանողներ, որոնց հիշում են այսօր և նրանց նվիրված հուշակոթողներ են դնում¹, հիմնում կազմակերպություններ նրանց անուններով, անվանակոչում փողոցներ: Անդրադարձ է կատարվում երկու հայրենասեր կերպարների, ովքեր իրենց գործունեությունը կազմակերպեցին համագործակցելով հայ ազգային կուսակցությունների, բարեգործական միությունների, Մերձավորարևելյան նպաստամատույցի և այլ կազմակերպությունների հետ:

Նախաբան. Վահան Չերազը ծնվել է 1886թ. օգոստոսի 16-ին Օսմանյան կայսրության մայրաքաղաք Կ.Պոլսում: Նա հայտնի մարզիկ էր, Կ. Պոլսի և հետագայում Հայաստանի Հանրապետության սկաուտական շարժման հիմնադիրներից մեկը:

1914թ., երբ սկսվում է Առաջին աշխարհամարտը, Վահան Չերազը մեկնում է Թիֆլիս, ընդգրկվում Չորավար Անդրանիկի կամավորական ջոկատում և նրա հրամանատարությամբ մասնակցում տարածաշրջանում ընթացող մարտական գործողություններին ընդհուպ մինչև 1919թ.: Անդրանիկի ջոկատի կազմալուծումից հետո Չերազը մեկնում է Պոլիս, իսկ 1920թ. ՀՀ Կրթության նախարար Նիկոլ Աղբալյանի հրավերով

¹ Այսպիսի հուշարձաններից է Արարայի հուշարձանը, որը նվիրված է զոհված և ճակատամարտին մասնակից հերոսներին և Չերազի արձանը Գյումրիում:

Պոլիսից տեղափոխվում Ալեքսանդրապոլ (այժմ՝ Գյումրի), որպեսզի հայրենիքում զարգացնի մարզական կյանքը²:

Այդ ժամանակաշրջանում ցեղասպանությունը վերապրած որբերի մի մասը կենտրոնացած էր Ալեքսանդրապոլում: Հայաստանի խորհրդայնացումից հետո, նա նախընտրում է մնալ հայրենիքում, իր սկաուտների մոտ, իսկ 1921թ. մասնակցում է փետրվարյան ապստամբությանը: Արդեն խորհրդային կարգերի օրոք Վահան Չերազը Ալեքսանդրապոլում (Գյումրի) աշխատում է Ամերիկյան օգնության կոմիտեում (Ամերկոմ. Ամերիկյան կոմիտե, "Near East Relief" կոչվող կազմակերպություն), զբաղվում է հայ որբերի խնամակալությամբ, կազմակերպում սկաուտական և մարզական մանկապատանեկան խմբեր³:

Չերազն առաքելություն ուներ: Նրան վիրավորում էր, երբ երեխաներին «որբ» էին անվանում: Չերազի ծնողասիրությունը զուսպ էր և միտված բացառապես սեփական անձի հանդեպ հարգանքի ու սիրո արմատավորմանը: Եվ հենց այդ հենքի վրա էր, որ Չերազի իմաստասիրական հայացքները, հոգևոր դաստիարակությունը նպատակ ունեին կերտելու իրական մարդուն, քաղաքացուն, հայրենասերին, ընտանիքի հանդեպ առողջ մտածողությամբ օժտված պատասխանատու անդամին⁴: Վահան Չերազի յուրաքանչյուր դրական հատկություն իսկական պարզ էր ընտանիքի ջերմությունից զրկված երեխաների համար: Նա պատասխանատու էր, հետևաբար թուլանալու, ընկճվելու, հիասթափվելու իրավունք չուներ: Կոփված էր ոչ միայն նրա մարմինը, այլ նաև միտքը: Մտքի «ամենօրյա մարզումները» Չերազին ամուր մնալու ուժ էին տալիս, հմտություն, որը փոխանցում էր նաև իր սաներին⁵:

Ռուբեն Հերյանը ծնվել է 1869թ. Թոքատում՝ Եվդոկիա⁶: 1883թ. ավարտելով հոգևոր դպրոցը տեղափոխվում է Ստամբուլ: Որոշ ժամանակ անց տեղափոխվելով Նյու Յորք՝ սկսում է սեփական գործը: Ստամբուլում գտնվելու ժամանակ Հերյանը նախ՝ անդամակցում է Հնչակյան կուսակցությանը, այնուհետև՝ Ռամկավար Ազատականներին: Նյու Յորքում ևս շարունակելով աշակցել նույն կուսակցությանը, մեծ ուշադրությամբ հետևում է միջազգային զարգացումներին: Երբ 1914թ. սկսվում է Առաջին համաշխարհային պատերազմը, Հերյանն աշխատանքային կյանքում բավականին հաջողություններ էր արձանագրել, ամերիկահայերի շրջանում հարգանք էր վայելում: Ցեղասպանության մասին լուրն առնելուն պես, ամեն ինչ թողնելով, մյուս հայ կամավորների հետ

² Վահան Չերազ. որբերի մարմնի, մտքի և ոգու կերտողը, <http://archive3.ankakh.com/article /101547 /%E2%80%8Bvahan-chyeraz%E2%80%A4-vorbyeri-marmni--mtqi-yev-vogu-kyertvoghe>

³ Իշխանյան Վ., Ընտանեկան պլան. Վահան Չերազ, Մաս 2, <https://inknagir.org/?p=6573>

⁴ Մարտոյան Թ., Վահան Չերազ. Հոգևոր դաստիարակությունը Կազախի պոստում, «Հոգևոր Շիրակ. Պատմական ուղի և արդիականություն» Միջազգային գիտաժողով՝ նվիրված Հայ Առաքելական եկեղեցու Շիրակի թեմի ստեղծման 100-ամյակին 17-18 նոյեմբերի, 2020, Գյումրի, Եր. 2020, էջ 134:

⁵ Մարտոյան Թ., նշվ. աշխ., էջ 135:

⁶ Մարգարյան Ն., Միջազգային անապատների հայ որբախույզները (1918-1923) // ԵՊՀ Հայագիտության հարցեր, 1 (13), Երևան, 2018, էջ 39:

Մերձավոր Արևելք տեղափոխված Հերյանը միանում է այնտեղի Հայկական լեգեոնին⁷: 1918թ. ամռանը Հայկական լեգեոնի կամավորներին մաս-մաս ուղարկում են պաղեստինյան ռազմաճակատ, Հերյանին տարիքի պատճառով բանակ չեն վերցնում. Կահիրեի մերձակայքում գտնվող հիվանդանոցում տեսուչ են կարգում: Հերյանի նամակներից պարզ է դառնում, որ վիրավոր հայ կամավորների և ֆրանսիացի զինվորներին խնամելիս երագում էր երկտասարդ լինել՝ միանալու համար Հայկական լեգեոնին և աջակցելու իր մարդկանց ու հայրենիքի փրկությանը: Հերյանը Միջագետքի Հայ օգնության կոմիտեի անդամ էր, որը գլխավորում էր Մուշեղ արքեպիսկոպոս Սերոբյանը: Արքեպիսկոպոսը Հերյանին լիազորել էր հայ փրկվածներին Դեր Զորից անվտանգ տեղափոխել Հալեպ: Երբ Հերյանը հասավ Դեր Զոր, նա հասկացավ, որ հայերի տեղափոխումը այդքան էլ բարդ չէ, որ շատ ավելի դժվար և կարևոր է փրկել այն հայերին, ովքեր անապատի մուսուլմանական տներում գերության մեջ էին: Արքեպիսկոպոսն համաձայնվեց և խնդրեց Ադանայի ֆրանսիացի հրամանատարին Հերյանին թույլ տալ գնալ Դեր Զոր և սկսել փրկարարական առաքելությունը: Հերյանը հիմնականում աշխատում էր Ջեզիրեում, Շամաթիեում, Խերեյթայում, Թերբանում, Հավիջայում, Մեյադինում, Աբուբեմալում և Շավում, որոնք տեղակայված էին Դեր Զորի շրջակայքում:

Ռուբեն Հերյանն իր վրա էր վերցրել ոչ միայն երեխաներին և կանանց փրկելու, այլև բնակեցնելու և վերականգնելու պատասխանատվությունը⁸: Տարիներ շարունակ տևած ֆիզիկական և սեռական բռնության հետևանքով ձեռքբերած ֆիզիկական և հոգեբանական խնդիրների պատճառով հատկապես կանանց հասարակությանն ինտեգրելու համար հատուկ խնամք և բուժում էր անհրաժեշտ: Այս առումով առաջին կազմակերպությունը, որի հետ նա սկսեց համատեղ աշխատանքը, «Հալեպի հայ կանանց միությունն» էր, որը շահագործման ենթարկված հայ կանանց ապաստան էր տալիս:

Այդ շրջանի բարդ հարցերից մեկն էլ այն էր, որ որբերն ու կանայք տարբեր պատճառներով մերժում էին հայկական ինքնությունը: Նրանց մեծ մասին շատ փոքր տարիքում էին պոկել արմատներից. Նրանք մոռացել էին իրենց լեզուն և ազգությունը: Միևնույն ժամանակ կային նաև մարդիկ, ովքեր թեև հիշում էին իրենց հայկական ինքնությունը, սակայն այլևս մերժում էին այն:

Չերազի և Հերյանի գործունեությունը բնութագրվում է բարոյահոգեբանական դաստիարակության աճանձնահատկություններով, փրկել և դաստիարակել հայ ազգի արժանի զավակների: Այս երեխաները, կանայք և պատանիները դարձան հայ ազգի բարգավաճման հիմքը XXդ. երկրորդ տասնամյակից սկսած, նրանց արմատները ամուր կապվեցին Չերազի և Հերյանի՝ հայ ազգի գոյատևման և հարատևման նպատակի հետ:

1922 թ. աշնանը Չերազն իր տղաներին մի արտասովոր հանձնարարություն տվեց՝ հսկել Ալեքսանդրապոլի Կազաչի պոստում մեծահասակ որբուհիների զբաղեցրած որբանոցները: Այս հրահանգը Չերազն անմիջապես արձակեց, երբ համոզվեց, որ

⁷ Ալեքսանյան Ա., Ռուբեն Հերյան կամ մի փրկչի պատմություն, <https://akunq.net/am/?p=36462>

⁸ Aleksanyan A., Rescuing Armenian Women and Children after the Genocide: The Story of Ruben Heryan, <https://armenianweekly.com/2016/05/31/ruben-heryan/>

ճիշտ են լուրերն այն մասին, թե որբուհիների արտաքննողների մոտ գտնվող թմբերի տակ մեծ թվով վիժած պտուղներ են թաղված⁹: Ցանկանալով հաստատել կամ մեկընդմիջտ հերքել այդ լուրերը՝ նա որոշեց քննել գործը և Մերձավորարևելյան նպաստամատույցի սուրհանդակին ուղարկեց ընկերոջ՝ Օնիկ Յազմաճյանի մոտ՝ խնդրելով, որ շտապ գա և միանա գործի քննությանը: Յազմաճյանը, որը տարիներ անց պատմում է այդ մասին, երեկոյան ինն անց կես հասավ Կազաչիի սկաուտանոց և Չերազին գտավ անկողնում՝ քշախոս և ինքնամիտփ: «Մինչև գիշերուան ժամը 11-ը,-գրում է Յազմաճյանը,-իմ հարցումներուն քար լռութիուն պահեց: Ցանկարծ ոտքի ելլելով՝ ահագանգի հրահանգ տուավ» և սկաուտներին ու սկաուտուհիներին կարգադրեց հավաքվել՝ հետները բերելով բահ ու բրիչ: Խումբն անձայն շարժվեց Կազաչի պոստի տարածքում գտնվող ամայի մի վայր:

Երեք մեթր տրամագիծով և մեկուկէս մեթր խորութեամբ փոս մը բանալու հրաման տրուեցավ: Քանի մը վայրկեանի մէջ փոսը պատրաստ էր¹⁰:

Կրկին ճամբայ ելանք և անաղմուկ պաշարեցինք որբուհիներու յատկացուած քարաշէն նախկին զօրանոց մը: Յիսնեակ մը սկաուտ-սկաուտուհիներով որբանոցէն ներս մտանք: Չերազ հրամայեց ճեմիշներու բերանները լայն բանալ...

Ինք առաջինն եղավ կոյուղիին մէջ իջնողը...

Այնուհետև Յազմաճյանը նկարագրում է, թե խումբն ինչպես վերադարձավ քիչ առաջ փորված փոսի մոտ, որպեսզի հողին հանձնէր կոյուղուց հանված վիժած մանկիկների մնացորդները:

Չերազ, երկու բահերու կոթերով խաչ մը պատրաստեց, պարապ շիշի մը մէջ երկտող մը սահեցուց և վիժածները պարփակող փոսը նետեց:

Թաղման հանդիսավոր արարողությունն ավարտվեց աղոթքով, և տղաները հողով փակեցին փոսը: «Մեր գիշերային առաքելությունը վերջացած էր», - գրում է Յազմաճյանը: Չերազը հրամայեց այդ «որբանոցի հայ կառավարչուհին ձերբակալել և բանտատեղի փոխադրել անձայն»: Յազմաճյանն իր պատմության մեջ չի բացահայտում կառավարչուհու ինքնությունը, ինչպես նաև լրացուցիչ տեղեկություններ չի հաղորդում այն մասին, թե ինչ հանգամանքներում էին կոյուղիները լցվել չձնված պտուղներով: Յազմաճյանը, այնուամենայնիվ, նշում է, որ այդ օրվանից հետո սկաուտները գիշեր-ցերեկ հսկում էին մեծահասակ աղջիկների որբանոցները¹¹:

Հայաստանի խորհրդայանցումից հետո հայ հասարակության մեջ փոփոխություն էր տեղի ունեցել հոգևոր դաստիարակության հանդեպ, ինչի մասին է վկայում սույն միջադեպը: Կարելի է եզրակացնել, որ ձերբակալված և բանտարկված հայ կառավարչուհին զրկված էր չձնված պտուղները քրիստոնեավայել թաղելու իրավունքից կամ չէր ցանկացել դա կատարել ըստ եկեղեցական կարգի ու սովորույթի:

⁹ Ներսիսյան Ն., Որբաքաղաքը. Նպաստամատույց աշխատողներ, կոմիսարներ և «Նոր Հայաստանը կառուցողներ», Ալեքսանդրապոլ / Լենինական 1919-1931, Հովհաննիսյան ինստիտուտ, Երևան, Զանգակ-97, 2018 էջեր 286-287:

¹⁰ Նույնը:

¹¹ Նույնը:

Այս դրվագը հետաքրքիր է նաև նրանով, որ Վահան Չերազի խնամակալության և դաստիարակության տակ գտնվող տղաները դառնում էին իր օգնականները և օժանդակում նրան իր աշխատանքներում:

Ջերմ էին նաև Ռ. Հերյանի հարաբերությունները իր կողմից փրկված տղաների հետ: Որոշ դեպքերում փրկված հայ տղաները չէին լքում Հերյանին և փորձում էին օգնել նրան իր առաքելության մեջ: Նրանք արաբների շրջանում ապրելու փորձ ունեին և գիտեին որդեգրված հայերի գտնվելու վայրը¹²: Կային նաև երիտասարդների խմբեր, որոնք հարցնում էին Հերյանի խորհուրդը և թույլտվությունը՝ մասնակցելու փրկարարական գործողություններին: Օրինակ, 1920թ. փետրվարի 5-ին Հերյանը նամակ ստացավ Թադեմի (Խարբերդ) մի խումբ երիտասարդներից, որոնք Հերյանին խնդրում էին սովորեցնել նրանց, թե ինչպես փրկել հայ կանանց և երեխաներին Ուրֆայի և Մարդինի տարածքներում: Հաճախ Հերյանը տղաներին խորհուրդ էր տալիս ամուսնանալ որբուհիների հետ և ստեղծել ընտանիք: Նա գործում էր «ազգասիրական զգացումներով»¹³: «Մոխրագույն մազերով երիտասարդ մարդ»-ը հոգատար էր, ճարպիկ, զվարթ և աշխույժ: Նրան սիրում էին բոլորը՝ փրկված պատանիները, աղջիկները, երեխաները, ջարդերից փրկված մեծահասակները: Իգուր չէ որ նրան կոչեցին «Որբերու հայր», «հայ որբերի լրտես, ազատարար ու փրկիչ»: Հերյանը աշխատում և գործում էր Հալեպի, Դեր Ջորի շրջակայքում, որը «ամենէն ոճրագործ քաղաքն էր»: Չերազի համար «Տեր Ջոր» հանդիսացավ խորհրդային դարձած Հայաստանը, որտեղ որպես ժողովրդի թշնամի ձերբակալվեց, այնուհետև աքսորվեց Սիբիր և գնդակահարվեց:

Եզրահանգում. Այսպիսով հողվածի շրջանակներում ցույց տրվեցին հայ ազգի երկու նվիրյալ կերպարների, երկու հայրենասեր հոգիների ազգանվեր գործունեության ընդհանրությունները: Գործելով միանգամայն տարբեր իրավիճակներում՝ այս խիզախ մարդիկ արեցին անհնարինը մոմի պես հանգչող ժողովրդի խլակների փրկության, տասնյակ հազարավոր հայ որբերի բարոյահոգեբանական դաստիարակության, նրանց կրկին կյանք վերադարձնելու, իբրև հայ ազգին արժանի զավակներ պատրաստելու իրենց նպատակադրումների իրականացման համար: Հերյանը զինվոր էր, Չերազը մարզիկ, և երկուսն էլ կամավորական հերոսներ էին, «ի պաշտոնե»՝ կարգապահ ու ազնիվ:

¹² Aleksanyan A., Rescuing Armenian Women and Children after the Genocide: The Story of Ruben Heryan, <https://armenianweekly.com/2016/05/31/ruben-heryan/>

¹³ ՀԱԱ, ֆ. 420, ց. 65, գ. 31, թ. 1:

СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ ДЕЯТЕЛЬНОСТИ РУБЕНА ГЕРЯНА И ВААНА ЧЕРАЗА

Оганнисян Е. А.

Ключевые слова: *Рубен Герян, Ваан Чераз, Геноцид армян, Дейр-эз-Зор, сиротская работа, освобождение, сироты, детские дома.*

В течение периода, который последовал Армянскому геноциду, многие миссионеры начали работать, имея цель спасти от рабства армянских сирот и женщин, которые оказались в мусульманских гаремах. В такой тяжелой работе себя проявили не только иностранцы, но и армяне. В статье представлена деятельность Рубена Геряна в пустыне Дейр-эз-Зор по спасению сирот и женщин по архивным материалам Национального архива РА. Работа Геряна неоценима для армянского народа, но также неоценима роль Ваана Чераз, который работал в сиротских приютах Александрополя в Восточной Армении. Оба героя самоотверженно проявили себя в то суровое время, они сделали все для спасения и воспитания сирот, которые стали основой перерождения армянского народа.

A COMPARATIVE ANALYSIS OF RUBEN HERYAN'S AND VAHAN CHERAZ'S ACTIVITIES

Hovhannisyan H. A.

Key words: *Ruben Heryan, Armenian genocide, Vahan Cheraaz, Der-Zor, orphan gathering work, liberation, orphans, orphanages.*

During the period that followed the Armenian Genocide, many missionaries began working with the goal of saving Armenian orphans and women who ended up in Muslim harems from slavery. In such hard work, not only foreigners, but also Armenians showed themselves. The article discusses the effort of Ruben Heryan in the Ter-Zor desert to save orphans and women according to some archival materials of the National Archives of the Republic of Armenia. Heryan's implementation is invaluable for the Armenian people. The role of Vahan Cheraaz, who worked in the orphanages of Alexandropol in Eastern Armenia, is invaluable as well. Both heroes selflessly proved themselves at that harsh time, they did their best to save, educate and bring up orphans, who became the basis of the rebirth of Armenian nation.

Գ ր ա կ ա ն ո թ յ ո ն

1. Ալեքսանյան Ա., Ռուբեն Հերյան կամ մի փրկյի պատմություն, <https://akunq.net/am/?p=3646>
2. Իշխանյան Վ., Ընտանեկան այբով. Վահան Չերազ, Մաս 2, <https://inknagir.org/?p=6573>
3. Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 420, ց. 65, գ. 31, թ. 1:
4. Մարտոյան Թ., Վահան Չերազ. Հոգևոր դաստիարակությունը Կազաչի պոստում // «Հոգևոր Շիրակ. Պատմական ուղի և արդիականություն» ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի Միջազգային գիտաժողով՝ նվիրված Հայ Առաքելական եկեղեցու Շիրակի թեմի ստեղծման 100-ամյակին 17-18 նոյեմբերի, 2020, Գյումրի, 2020:
5. Մարգարյան Ն., Միջազգեք իանապատների հայ որբախույզները (1918-1923) // ԵՊՀ Հայագիտության հարցեր, 1 (13), Երևան, 2018:
6. Ներսիսյան Ն., Որբաքաղաքը. Նպաստամատույց աշխատողներ, կոմիսարներ և «Նոր Հայաստանը կառուցողներ», Ալեքսանդրապոլ/Լենինական 1919-1931, Հովհաննիսյան ինստիտուտ, Երևան, Ջանգակ-97, 2018:
7. Վահան Չերազ. որբերի մարմնի, մտքի և ոգու կերտողը <http://archive3.ankakh.com/article/101547/%E2%80%8Bvahan-chyeraz%E2%80%A4-vorbyeri-marmni-mtqi-yev-vogu-kyertvoghe>
8. Aleksanyan A., Rescuing Armenian Women and Children after the Genocide: The Story of Ruben Heryan, <https://armenianweekly.com/2016/05/31/ruben-heryan/>

*Ընդունվել է՝ 20. 09. 2021
Գրախոսվել է՝ 22. 10. 2021
Հանձնվել է տպ.՝ 15. 11. 2021*

Տեղեկություններ հեղինակի մասին

Հեղինե ՀՈՎՀՎՆՆԻՍՅԱՆ՝ Երևանի պետական համալսարանի «Միջազգային հարաբերություններ՝ Ցեղասպանագիտություն» ստորաբաժանման մագիստրոս, էլ. հասցե՝ elline.hovhannisyana@mail.ru

ՀՏԴ՝ 93/94

DOI: 10.52971/18294316-2021.3-155

ՌՈՒՍ ԵՎ ԵՎՐՈՊԱՅԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՆԵՐԸ ՀՅՈՒՄԻՍԱՐԵՎԵԼՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (ՄԻՆՉԵՎ, 1820 թ.)

Հայկ Մելիք-Աղամյան

ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտ

Համազասպ Խաչատրյան

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

Արշավիր Հովհաննիսյան, Տիգրան Բաբայան

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

Բանալի բառեր՝ *Հյուսիսարևելյան Հայաստան, ռուս և եվրոպացի ճանապարհորդներ, երթուղիներ, մշակութաբանական և բնագիտական ուսումնասիրություններ:*

Հոդվածը նվիրված է ռուս և եվրոպացի ճանապարհորդների երթուղիների ճշգրտմանը և նրանց ուղեգրություններում առկա բնագիտական և մշակութաբանական տեղեկությունների վերլուծությանը, որոնք ցայսօր չեն կորցրել իրենց արդիականությունը: 1474 թ. մինչև 1820 թ. ընկած ժամանակահատվածում այս ճանապարհորդները՝ Ա. Կոնտարինին, Ջ. Բարբարոն, Ա. Ֆ. Կոտովը, Ժ. Շարդենը, Պ. դը Տուրնֆորը, Ի. Գիլդենշտեդտը, Ա. Մուսին-Պուշկինը, Յ. Ռեյնեգսը, Ֆ. Ա. Ֆրեյզան-Կուդրյավսկայան, Ջ. Մորիերը, Մ. Կոցեբուն, Ռ. Քլր Փորթերը, Վ. Մոնթեսը, Ա. Գրիբոյեդովը, Վրաստանի մի քանի քարավանային տարանցիկ ճանապարհներով անցել են հյուսիսարևելյան Հայաստան (ներկայիս ՀՀ Լոռու և Տավուշի մարզերն ու հարակից շրջանները) և թողել են հետաքրքրաշարժ տեղեկություններ Հայաստանի հյուսիսի մասին:

Նախաբան. Առաջին եվրոպացին, որ հաստատապես անցել է Լոռու մարզով, եղել է իտալացի դիվանագետ, Պարսկաստանում Վենետիկի դեսպան **Ամբրոսիո Կոնտարի-**

նին, որը 1474 թ. հուլիսին Թիֆլիսից մինչև Թավրիզ անցել է Բոլնիս - Լոռի բերդ - Պուշկինի լեռանոց - Վանաձոր - Ապարան - Երևան ուղեգծով¹: Մեկ այլ վենետիկցի ճանապարհորդ՝ **Ջոզեֆա Բարբարոն**, 1471 թ. Թիֆլիսից Թավրիզ ճանապարհորդելիս նույնպես անցել է Կոնստանդնուպոլիս ուղեգծով և 1478 թ. նույն ճանապարհով վերադարձել²:

Առաջին ռուս ճանապարհորդը, որ այցելել է հյուսիսարևելյան Հայաստան, մոսկովաբնակ վաճառական **Ֆեդոտ Աֆանասյևիչ Կոտովն** է, որ 1623 թ. 8 հոգանոց խմբով անցել է Գանձակ - Թովուզ - Հյուսիսարևելյան Հայաստան - Երևան երթուղիով, որը տևել է 6 օր³: Չնայած այն հանգամանքին, որ Հյուսիսարևելյան Հայաստանով նրա ուղեգիծը ոչ մի տեղ հստակ չի մատնանշված, կարելի է ենթադրել, որ այն անցել է Կողթ (Ղազախ) - Իջևան - Դիլիջան - Սևան երթուղիով:

1673թ. մարտի սկզբներին (հին տոմարով) ֆրանսիացի հայտնի ճանապարհորդ և ոսկերիչ **Ժան Շարդենը** (1643-1713 թթ.) Թիֆլիսից Երևան ուղևորվելիս անցել է այդ ժամանակ երկու քաղաքները կապող հիմնական սայլային ճանապարհով՝ Թիֆլիս Քուռ գետի հոսանքն ի վար Կուպրիբենդ կամ Կարմիր կամուրջ (ներկայումս՝ Վրաստանի և Ադրբեջանի սահմանային չեզոք գոտում՝ Խրամ գետի վրա, չորսթռիչքանի, կառուցված 1653 թ.՝ իրեն կից քարավանատնով) - Մելիքենդ (ներկայումս՝ Իջևանի շրջանի Ծաղկավան գյուղից 14 կմ հյուսիս-արևմուտք) - Դիլիջան երթուղիով: Նա վկայում է, որ այդ ժամանակ Դիլիջանում կար 300 տուն: Դիլիջանից ուղևորվել է դեպի Քարաքեշիշ (ներկայումս՝ Սևան քաղաքի Ցամաքաբերդ թաղամաս), որտեղ և իջևանել է: Ընդ որում, համաձայն Դիլիջան - Քարաքեշիշ ուղեգծի ճանապարհահատվածի նկարագրության, նա անցնում էր բուսածածկույթից զուրկ մի դժվարամատչելի և ձյունածածկ լեռան վրայով (լեռան անունը չի նշում)⁴: Կարելի է ենթադրել, որ այդ լեռը Դիլիջանից քիչ հյուսիս գտնվող Մեծ Եղջերվասարն է (2643մ), քանի որ շրջակայքում այլ անտառազուրկ լեռ չկա: Դիլիջան-Սևան ներկայիս ոլորապտույտ ճանապարհը խիտ անտառածածկույթի կամ այլ պատճառներով դեռևս կառուցված չի եղել:

1701 թ. հուլիսի վերջերին աշխարհահռչակ ֆրանսիացի բուսաբան **ժոզեֆ Պիրոն դը Տուրնեֆորը** (1656-1708 թթ.), անցել է նաև Շարդենի ուղեգծով, սակայն այս հատվածի մասին, հաշվի առնելով ժամանակի սղությունը, թողել է միայն մի քանի թռուցիկ տպավորություններ Դիլիջանից⁵:

Առավել հանգամանալից և բազմակողմանի հետազոտություններ է կատարել Պետերբուրգի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս գերմանացի **Իոհան Անտոն**

¹ Полнектов М.А. Европейские путешественники XII-XVIII вв. по Кавказу. Тифлис. АН ССР. -1935. с. 97.

² Հակոբյան Հ.Հ. Ուղեգրություններ (1800-1820թթ.), հատ. Ա, Երևան, «Մելքոնյան ֆոնդ», Երևան, 1932, էջեր 226-227:

³ Նույն տեղում, էջ 180:

⁴ Абрамян Г.С. Роль русской географической науки в изучении Армении. Автограф диссерт. на соиск. степ. канд. географических наук. Ереван. -1954. сс. 7-8.

⁵ Хождение купца Федота Котова в Персию. М. -1958. с. 56.

⁶ Путешествие Шардена по Закавказью в 1672-1673 гг. Тифлиси. Изд. М. Мартиросянца. -1902. сс. 232, 236-237.

⁷ Карагезян Г. Армянский мир в «Путешествии в Левант» Турнефор. «Тигутон». Ереван.-2017. с. 29.

Գիլդենշտեդտը (1745-1781), որը իր արշավախմբով 1771 թ-ի մայիսի վերջերին Թիֆլիսից Հայաստան է ուղևորվել սկզբում Շարդենի ուղեգծով՝ Թիֆլիս - Կարմիր կամուրջ, այնուհետև շարունակել հարավ, հարավարևմտյան ուղղությամբ՝ ավելի կարճ և ոչ ստանդարտ ճանապարհով՝ ներկայիս Հայաստանի և Ադրբեջանի սահմանագլխային Քանքիլի լեռնագագաթից (731մ) քիչ հյուսիս-արևմուտք տեղակայված լեռնանցքով: Անցնելով մոտ 18 վերստ՝ հասել է Նոյեմբերյանի շրջանի Կողբ կիսալքված գյուղատեղի: Այնուհետև ուղևորվել են հարավ-արևմուտք, այցելել Մշկավանք, որտեղ գիտնականը անձամբ չափագրել է Մշկավանքի՝ դեռևս 1247 թ-ին կառուցված Մբ Աստվածածին փոքր, միանավ բազիլիկ եկեղեցին (երկարությունը՝ 30 և լայնությունը՝ 20 ոտնաչափ): Պատճենահանել է եկեղեցու արևելյան խորանի մոտի մի վիմագիր արձանագրություն: Բնագետի քննախույզ աչքից չի վրիպել, որ եկեղեցին կառուցված է ավազաքարից: Դա այնքան էլ հեռու չէ իրականությունից, քանի որ ամենայն հավանականությամբ կառուցված է այդ վանքից ուղիղ գծով 7կմ հյուսիս-արևելք տեղեկայված Դովեղ գյուղի՝ մոտ 50-30 մլն տարի վաղեմությամբ (եռոցն) ֆելզիտային տուֆից, որը հրաբխանստվածքային ապար է և իր գունավորմամբ ու դեղնավուն երանգներով տարբերվում է վանքի մոտակայքում տեղակայված Բերդավան գյուղի բաց կապտագույն և կանաչավուն ֆելզիտային տուֆերից^{8,9}: Առանձնահատուկ ուշադրության են արժանի գիտնականի՝ Ախթալայի վանական համալիրի մասին տպավորությունները: Այդ համալիրի գլխավոր եկեղեցու 13-րդ դարի առաջին քառորդում կառուցված Սուրբ Աստվածածին կամ Մարիամ գմբեթավոր բազիլիկը, ըստ Գիլդենշտեդտի, ուներ 35 ոտնաչափ երկարություն և 25 ոտնաչափ լայնություն, իսկ ամբողջ համալիրը շրջապատված էր 400 ոտնաչափ երկարությամբ բարձր պարիսպով: Նա նաև նշում է, որ համալիրում առկա են ընդհանուր առմամբ 8 հայկական եկեղեցի¹⁰, սակայն չի հիշատակում դրանց անունները: Այդ թիվը լիարժեք համապատասխանում է ներկայիս իրավիճակին, որտեղ բացի Մբ Աստվածածնից, նշվում են նաև XIII դ. միանավ եկեղեցի, Մբ Գևորգ, Մբ Երրորդություն եկեղեցիները և այլն¹¹: Ուշագրավ են նաև Գիլդենշտեդտի կենդանաբանական դիտարկումները՝ մասնավորապես այն մասին, որ Հայաստանին սահմանակից, մասամբ հայաբնակ Մադախլո գյուղում նա ձեռք է բերում մի քանի շաբաթ առաջ սպանված ընձառյուծի մորթի, որը, ինչպես հայտնի է, վաղուց արդեն Հյուսիսային Հայաստանում գոյություն չունի: Այդ գյուղի շրջակայքում նա նկարագրել է նաև բրնձի և բամբակի ցանքատարածություններ¹²: Գիլդենշտեդտի արշավախմբում եղած տարբեր հետազոտող-

⁸ Геология Армянской ССР. т. VII. Неметаллические полезные ископаемые. Изд. АН Арм. ССР. Ереван. -1966, сс. 83-84.

⁹ Гильденштедт И. А. Путешествие по Кавказу. СПб. -2002. сс. 100-103.

¹⁰ Նույն տեղում, էջ 102:

¹¹ Շախիկյան Գ., Լոռի պատմության քարակերտ էջերը, Երևան, «Հայաստան» հրատ., 1986, էջեր 129-133:

¹² Гильденштедт И. А. Путешествие по Кавказу. СПб.-2002. с. 103.

ներից հայտնի է հանքախորշերի քարտեզներ կազմող¹³ ուն լեռնային ճարտարագետ Ստեփան Վանսկինի անունը:

1779 թ. Ախթալայի հանքավայրը և նույնանուն վանական համալիրը ուսումնասիրել է սաքսոնացի դիվանագետ և հետազայում վրացական Հերակլ II-ի պալատական բժիշկ Յակոբ (Իռահան) Ռեյնեգսը (1744-1793 թթ.), որը Վրաստան է ուղևորվել Կոնստանդինուպոլիս – Կարս - Երևան - Թիֆլիս ուղեգծով: Նա իր ուղեգրություններում ընդգծում է Ախթալայի բազմամետաղային հանքավայրի բարձր ոսկեբերությունն ու արծաթաբերությունը^{14,15}:

1805 թ. Հյուսիսային Հայաստան է այցելել հայտնի ռուսահպատակ գերմանացի բուսաբան Ֆեոդոր Կոնդրատի ֆոն Բիբերշտեյնը (1768-1826թթ.), որն այն ժամանակ Ռուսական Կայսրության հարավային շրջանների մետաքսագործության գլխավոր վերակացուն էր: Նա բուսաբանական ուսումնասիրություններ է կատարել և հերքարհումներ է հավաքել Ախթալայի, Լոռի բերդի և Սանահինի շրջակայքում^{16,17}:

Ռուսական միապետ Ալեքսանդր 1-ի 09.12.1801 թ. մանիֆեստով Վրաստանը (այդ թվում՝ նաև Հյուսիսային Հայաստանի մի մասը) միակցվում է Ռուսաստանին: Պատմական այս իրադարձությունը մեծ հետաքրքրություն առաջացրեց միացված տարածքների հանքահումքային ռեսուրսների ուսումնասիրության և հայտնաբերման նկատմամբ: Այդ նպատակով արդեն 1802թ. փետրվարին կազմակերպվում է հատուկ լեռնային արշավախումբ տարածքի լեռնահանքային արդյունաբերությունը (մասնավորապես՝ Ալավերդու և Ախթալայի) կարգավորելու և վերագործարկելու նպատակով, որոնց աշխատանքները խաթարվել էին 1785 թ. Օմար խանի գլխավորած լեզգիական հարձակումների ժամանակ: Տվյալ արշավախմբի ղեկավար է նշանակվում Ռուսաստանի «Բերդ-կոլեգիայի» անդամ, ավագ կոմս Ապպոլոս Մուսին-Պուշկինը (1760-1805 թթ.), որը նույն թվականի մայիսի վերջերին իր օգնականների, այդ թվում՝ լեռնային ճարտարագետներ (բերգաուերներ) Իվան Իվանովիչ Էյխվալդի (1780-1828թթ.), Ա.Ա. Բորզունովի և այլոց հետ ժամանում է Թիֆլիս և այնտեղից հավանաբար Սադախլո – Բերդաձոր - Շամլուղ կարճ ճանապարհով ժամանում է Ախթալա ու Ալավերդի և կատարում համապատասխան ուսումնասիրություններ Ախթալայի արծաթ-ոսկի-բազմամետաղային և Ալավերդու պղինձ-հրաքարային հանքավայրերում ու նրանց հարակից տարածքներում^{18,19}: Արշավախմբի հաջող գործունեության արդյունքում արդեն իսկ 1804թ. հնարավորություն ընձեռվեց Թիֆլիսում բացելու ռուսական պետական դրամա-

¹³ Тигранян С.Т. Развитие геологической мысли в Армении (предварительный отчет. Ереван, -1952, с. 5, ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի ֆոնդ)։

¹⁴ Степанянц О. С. Ахтальское полиметаллическое месторождение, Армфан. Ереван. -1938. с. 10.

¹⁵ Полнектов М.А., նշվ. աշխ., էջեր 165-168:

¹⁶ Նույնը:

¹⁷ Попова Т. Н. Конспект флоры Кавказа. Т. 1. СПб. -2003. с. 25.

¹⁸ Մելքունյան Բ.Գ., Հայաստանի հանքարդյունաբերության պատմություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1972., էջեր 29, 21:

¹⁹ Тигранян С. Т. История развития горного дела в Армении в XIX веке: сводный отчет Ереван. - 1959 / ՀՀ ԳԱԱ երկրաբանական ինստիտուտի ֆոնդ էջեր 26-27:

հատարան, որտեղի հատվող պղնձե և արծաթե դրամների հումքը ստացվում էր վերոնշյալ գործարաններից²⁰:

1812թ. հյուսիսարևելյան Հայաստանով Թիֆլիս - Կարմիր կամուրջ - Դիլիջան - Սևան - Երևան ուղեգծով է անցել ազգությամբ շոտլանդացի լեյտենանտ **Վիլյամ Մոնթեսը** (1790-1864թթ.)²¹՝ դիվանագետ սրբ Ջոն Մալիոլմի դեպի Պարսկաստան կատարած երրորդ դիվանագիտական դեսպանության կազմում:

Տարածաշրջանի մասին ուշագրավ տեղեկություններ է հաղորդել նաև գերմանացի բժիշկ Ս.Ֆ. Ֆրեյզանի կինը՝ **Ֆրեդերիկա Ֆրեյզան-Կուդրյավսկայան**, որը ուղեկցում էր իր ռուսահայտակ ամուսնուն Ռուսաստանից Պարսկաստան՝ պարսից թագաժառանգ Աբբաս-Միրզայի հետ դիվանագիտական բանակցությունների: 1812 թ. ապրիլի վերջերին նրանք Թիֆլիսից դեպի Գյումրի և Երևան անցնում են Թիֆլիս - Մադախլո - Մանահին - Վանաձոր - Սպիտակ - Մեծ Պարնի ուղեգծով: Երիտասարդ ուղեգրուհին մեծ հիացմունքով է արտահայտվում Մանահինի միակամար քարակերտ կամուրջի մասին, որի կամարը համարում է ճարտարապետական գլուխգործոց, նշում կամրջի ծայրամասերին փորագրված սֆինքսերի մասին, որոնք իրականում առյուծների բարձրաքանդակներ են: 1190-ական թթ. վերջերին կառուցված այս կամուրջը իր կիսաշրջանաձև բացվածքով՝ 18.6 մ, ներկայիս Հայաստանի տարածքի հայտնի 12 միջնադարյան կամուրջների շարքում ամենամեծն է, իսկ ընդհանուր երկարությամբ (60 մ) չորրորդն է Հրազդանի (1679 թ.) և Քասաղի (1664 և 1706 թթ.) կամուրջներից հետո^{22, 23}:

Որպես միջնադարյան ճարտարապետական մտքի գլուխգործոց՝ Մանահինի կամուրջը այժմ համարվում է մշակութային հուշարձան և ներառված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցանկում: 1814 թ. հունիսին Պարսկաստանից Վրաստան վերադառնալիս անգլիացի դիվանագետ **Ջեյմս Մորիերը** (1780-1849 թթ.) անցել է Երևան - Ապարան - Սպիտակի լեռնանցք - Վանաձոր - Դիլիջան - Իջևան երթուղիով և թողել ուշագրավ բնագիտական բնույթի տեղեկություններ՝ մասնավորապես ներկայումս անտառազուրկ Սպիտակ - Վանաձոր ճանապարհահատվածի անտառածածկույթի վերաբերյալ²⁴:

1817 թ. գեներալ Ա.Պ. Երմոլովի դեսպանության կազմում Վրաստանից Պարսկաստան ուղևորվելիս հետաքրքիր տեղեկություններ է թողել ռուսահայտակ սպա **Մ.Ե. Կոցերուն**, ըստ որի՝ դեսպանությունը անցել է մեր կողմից ճշգրտված, ոչ ստանդարտ՝ Թիֆլիս - Մառնեուլի - Բոլնիս - Աղքյորփի - Գայլի դրունք սահմանային լեռնանցք (1787 մ) - Պրիվոլնոյե - Սվերդլով - Ուռուտ - Ստեփանավան - Լոռի բերդի կա-

²⁰ Степанянц О. С. Ахталское полиметаллическое месторождение. Армфан. Ереван. -1938. с. 11.

²¹ Полиектов М. А., նշվ. աշխ., էջեր 124-125:

²² Աթարբեկյան Ռ., Հայաստանի ճանապարհները և ճանապարհային կառույցները// «Գիտություն և տեխնիկա» 1988, 9, էջ 18:

²³ Շախիկյան Գ., Լոռի պատմության քարակերտ էջերը, «Հայաստան» հրատ., Երևան 1986, էջ 93:

²⁴ Հակոբյան Հ. Հ., Ուղեգրություններ (1800-1820թթ.), հատոր Զ, «Մելքոնյան ֆոնդ», Երևան, 1934, էջեր 331-332:

մուրջ - Սպիտակ - Մեծ Պարնի - Գյումրի երթուղիով²⁵: Նա ևս նշել է Վանաձոր - Սպիտակ ճանապարհահատվածի անտառածածկության մասին:

Նույն թվականի նոյեմբերին Թիֆլիս - Սադախլո - Բերդաձոր - Մանես - Ալավերդի - Մանահինի կամուրջ - Օձուն - Վանաձոր - Սպիտակ - Մեծ Պարնի - Գյումրի - Անի ուղեգծով է անցնում շոտլանդացի դիվանագետ, հնագետ և նկարիչ **Ռոբերտ Քրոֆորթերը**, որը, բացի Մանահինի կամուրջից, հիացմունքով է արտահայտվում VI դարի վերջին կառուցված Օձունի գմբեթավոր բազիլիկ եկեղեցու մասին՝ նրա սրածայր կամարները նմանեցնելով եվրոպական ճարտարապետության գոթական ոճի հետ²⁶: Այս առումով նկարչի սուր և պրոֆեսիոնալ աչքից չի վրիպել, և նա մոտ մեկ հարյուրամյակ առաջ զարմանալիորեն կարողացել է կանխագգալ ճարտարապետության խորագիտակ, հանրահռչակ ավստրիացի **Յոզեֆ Ստրժիգովսկու**՝ 1918 թ. «Հայերի ճարտարապետությունը և Եվրոպան» գրքում արտահայտված այն՝ այժմ արդեն հաստատուն տեսակետը, որի համաձայն՝ միջնադարյան եվրոպական երկրների գոթական ճարտարապետական ոճի վրա զգալի ազդեցություն է թողել վաղ միջնադարյան հայկական ճարտարապետությունը²⁷:

1819 թ. փետրվարի սկզբին Ժան Շարդենի ուղեգծով Թիֆլիսից Երևան է ճանապարհորդել նաև հայ ժողովրդի մեծ բարեկամ **Ա.Ս. Գրիբոյեդովը**²⁸: Վերջինս ճանապարհորդել է չորս օր, անցել 248 վերստ ճանապարհ և թողել մի քանի թռուցիկ տեղեկություններ երթուղու գեղատեսիլության և դժվարանցանելիության վերաբերյալ²⁹:

Եզրահանգում. Վերոշարադրյալից ակնհայտ է դառնում, որ ռուս և եվրոպացի ճանապարհորդները հյուսիսարևելյան Հայաստանի տարածքով անցնելիս ոչ միայն թողել են ճամփորդական հաճելի նոթեր Հայաստանի անգուգական գեղեցկության մասին, այլև բնագիտական և մշակութաբանական բնույթի ուշագրավ, կարևոր և հավաստի տեղեկություններ, մասնագիտական ցուցումներ, որոնցից շատերը հետագայում նկատի առնվեցին տեղում արդյունաբերական կարողություններ հիմնելու գործում: Դրանց վերլուծությունը նաև ցույց է տալիս, որ այդ տեղեկությունների մեծ մասը շարունակում է մնալ արդիական մեր օրերում ևս:

²⁵ **Հակոբյան Հ. Հ.**, Ուղեգրություններ (1800-1820թթ.), հատոր 2, «Մելքոնյան ֆոնդ», Երևան, 1934, էջեր 521-516:

²⁶ Նույն տեղում, էջ 739:

²⁷ **Հարությունյան Վ.** Գիտնականի անանց երախտիքը (Ժոզեֆ Ստրժիգովսկու մահվան 50-ամյակի կապացությամբ), «Գիտություն և տեխնիկա», 1991, N7, էջ 40:

²⁸ **Միլոնյան Ռ.** Տավուշի մարզ, «Տիգրան Մեծ», Երևան 2012, էջ 163:

²⁹ **Грибоедов А. С.** Полное собрание сочинений. Т. 2. Санкт-Петербург. Нотабене. -1999. сс. 297-299.

РУССКИЕ И ЕВРОПЕЙСКИЕ ПУТЕШЕСТВЕННИКИ В СЕВЕРО-ВОСТОЧНОЙ АРМЕНИИ (ДО 1820г.)

*Мелик - Адамян Г. У., Хачатрян А. А.,
Оганесян А. Е, Бабаян Т. О.*

Ключевые слова: *Северо-восточная Армения, русские и европейские путешественники, маршруты до 1820г., культурологические и естественно-научные исследования.*

По территории северо-восточной Армении (Лорийский и Тавушские марзы Республики Армения), издревле проходили караванные пути. По маршруту Казах – Иджеван – Дилижан проходил Федот Котов, один из первых русских путешественников (1623), затем французские путешественники Жан Шарден (1673), Питон де Турнефор (1701), академик Иоган Гилденштедт (1771) и большой друг армянского народа Александр Грибоедов (1819). Гилденштедт оставил обстоятельное описание медно-серебряных рудников в Алаверды и Ахтала, а также описал средневековые армянские церкви Мшкаванк и Ахтала. В 1801-1805 гг. горно-геологические изыскания в районе рудников Алаверды и Ахтала проводила горная экспедиция во главе с А.А.Мусиным-Пушкиным. Шотландский художник Роберт Кер Портер (1817) сравнивал стрельчатые арки Одзунской купольной базилики VI века с готическим стилем и предвосхитил на столетие мнение австрийского теоретика архитектуры Йозефа Стрижиговского о преемственности некоторых формообразовательных элементов готического стиля из раннесредневековой армянской архитектуры.

RUSSIAN AND EUROPEAN TRAVELERS IN NORTH-EASTERN ARMENIA (UP TO 1820)

*Melik – Adamyan H. H., Khachatryan H. H.,
Hovhannisyan A. Y, Babayan T.O.*

Key words: *North-east Armenia, Russian and European travelers, routes, cultural and natural science studies.*

Since ancient times, caravan routes connecting Armenia passed through its northeastern part, (present-day Lori and Tavush marzes of the Republic of Armenia). Fedot Kotov, one of the first Russian travelers (1623) passed along the route Kazakh - Ijevan – Dilijan, then French travelers Jean Chardin (1673), Piton de Tournefort (1701), academician Johann Gildenstedt (1771) and a great friend of the Armenian nation Alexander Griboyedov (1819) also traveled to Armenia. The latter left a detailed description of the copper-silver mines in Alaverdy and Akhtala, as well as those of the medieval Armenian churches of Mshkavank and Akhtala. In 1801-1805, a mountain expedition led by A.A. Musin-Pushkin carried out mining and geological surveys near Alaverdy and Akhtala mines. Scottish artist Robert Ker Porter (1817) compared the pointed arches of the Odzun domed basilica of the 6th century with the Gothic style, thus anticipating by a century the opinion of Austrian architectural theoretician Josef Strzygowski concerning the continuity of some formative elements of the Gothic style from the early medieval Armenian architecture.

Գրականություն

1. Աթարբեկյան Ռ. Հայաստանի ճանապարհները և ճանապարհային կառույցները: «Գիտություն և տեխնիկա» 1988, N9:
2. Հակոբյան Հ. Հ., Ուղեգրություններ (1800-1820թթ.) հաստ. Ա. Երևան, «Մելքոնյան ֆոնդ», 1932:
3. Հակոբյան Հ. Հ., Ուղեգրություններ (1800-1820թթ.), հատոր Զ. «Մելքոնյան ֆոնդ», Երևան 1934:
4. Հարությունյան Վ. Գիտնականի անանց երախտիքը (Ժողովրդագրական մասի 50-ամյակի կապակցությամբ), Գիտություն և տեխնիկա 1991, N7, էջ 40:
5. Մելքոնյան Բ. Գ., Հայաստանի հանքարդյունաբերության պատմություն, ՀՍՄՀ ԳԱ հրատ., Երևան, 1972:
6. Շախիկյան Գ., Լոռի պատմության քարակերտ էջերը, Երևան, «Հայաստան» հրատ., 1986:
7. Սիմոնյան Ռ., Տավուշի մարզ, Երևան, «Տիգրան Մեծ» հրատ., 2012:
8. Абрамян Г.С. Роль русской географической науки в изучении Армении. Автограф диссерт. на соиск. степ. канд. геогр. наук. Ереван. -1954.
9. Геология Армянской ССР. Т. VII. Неметаллические полезные ископаемые. Изд. АН Арм. ССР. Ереван. -1966.
10. Гильденштедт И. А. Путешествие по Кавказу. СПб. - 2002.
11. Грибоедов А.С. Полное собрание сочинений, Т. 2. Санкт-Петербург. Нотабене. -1999. сс. 297-299.
12. Карагезян Г. Армянский мир в “Путешествии в Левант” Турнефор, Изд. “Гитутюн”. Ереван. -2017.
13. Полиектов М. А. Европейские путешественники XII-XVIII вв. по Кавказу. Тифлис. АН ССР 1935.
14. Попова Т. Н. Конспект флоры Кавказа Т.1. СПб. -2003.
15. Путешествие Шардена по Закавказью в 1672-1673гг. Тифлиси. изд. М. Мартиросянца. -1902.
16. Степанянц О. С. Ахталское полиметаллическое месторождение. Армфан. Ереван. -1938.
17. Тигранян С. Т. История развития горного дела в Армении в XIX веке, сводный отчет. Ереван. - 1959 /ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի ֆոնդ/.
18. Тигранян С. Т. Развитие геологической мысли в Армении: предварительный отчет. Ереван. -1952. /ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի ֆոնդ/.
19. Хождение купца Федота Котова в Персию. М. -1958.

*Ընդունվել է՝ 30.09.2021
Գրախոսվել է՝ 22.10.2021
Հանձնվել է տպ.՝ 15.11.2021*

Տեղեկություններ հեղինակների մասին

Հայկ Մելիք-Ադամյան՝ երկրաբանական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտ,
Էլ. հասցե՝ hmelik-adamyam@mail.ru

Համազասպ Խաչատրյան՝ ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական
հետազոտությունների կենտրոնի ավագ գիտաշխատող,
Էլ. հասցե՝ shirakmuseum@gmail.com

Արշավիր Հովհաննիսյան՝ երկրաբանական գիտությունների թեկնածու,
Էլ. հասցե՝ arshavir.h@gmail.com

Տիգրան Բարսեղյան՝ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարան, Էլ. հասցե՝ tigranmap@yahoo.com

LAY-LED CAMPAIGNS FOR ARMENIAN CHURCHES: WHY SO RARE?

Felix Corley

Journalist and independent historian, UK

Key words: *Armenia, Leninakan, Russia, Rostov, Church Worship Lay-people.*

This paper examines two rare campaigns in the late Soviet period to save and reopen Armenian Apostolic Churches, one in Rostov-on-Don in Russia and one in Leninakan in Armenia. Both were inspired by individuals who tried to mobilize popular support. Both failed.

Introduction: Spontaneous campaigns to defend threatened Armenian Apostolic churches in the later Soviet period were rare. Two such campaigns – one in Rostov-on-Don to try to save St Gregory the Illuminator Cathedral from destruction and the other in Leninakan to reopen Holy Saviour Church for worship – involved multiple supporters, but each was initiated by one individual. Tshkhugi Samurgasheva in Rostov died within a year of launching her campaign, but it continued after her death, while Vahan Terteryan in Leninakan pursued his campaign over decades. Neither succeeded in persuading the Soviet authorities.

Compared with members of other faiths in the Soviet Union, Armenian Apostolic believers were slow during the later Soviet period to try to stand up for their rights against the depredations of the Soviet regime. The growing human rights movement and self-confidence of religious believers of a variety of faiths saw an upsurge in protests, petitions, campaigns and independent writing. While Armenia itself shared in this growth of independent thought, writing and campaigning – with self-produced (samizdat) articles and journals circulating, as well as letters to the authorities – most of the content related to national issues, primarily recognition of the Ottoman era genocide and the destiny of the Armenian nation. Few known campaigns were launched among Armenians to defend imperilled churches – even during Nikita Khrushchev’s violent anti-religious campaign of 1959-64 which saw mass closures and destructions of places of worship of all faiths – or to reopen long-closed churches afterwards. Certainly, Catholicos Vazgen raised his concerns in private with any senior official who would listen. But spontaneous, lay-led campaigns were relatively rare.

Among the known campaigns were two which are of interest, one in Rostov-on-Don in the early 1960s and one in Leninakan which lasted from at least 1965 to the early 1980s. Significantly, both were led by apparently strong-willed individuals, Tshkhugi Samurgasheva in Rostov and Vahan Terteryan in Leninakan, who seem to have been able to mobilise wider popular support for their campaigns. Both campaigns also failed to achieve their objectives: Rostov's Surp Grigor Lusavorich cathedral was not reopened and indeed was soon bulldozed (after the main campaigner had died), while Leninakan's Holy Saviour Church was not reopened, despite the long-running campaign.

Neither campaigner appears to have been intimidated by the very real threat of government reprisals. When from the early 1960s Boris Talantov, a maths teacher and Russian Orthodox layman from the Russian town of Kirov, began protesting against church seizures and destructions, he was arrested in 1969 and died in a labour camp in 1971. The organisers of petitions to hand back the Catholic church in the Lithuanian port city of Klaipeda – which the authorities seized as soon as it had been completed in 1961 and before it could be opened – suffered severe KGB harassment.

The Soviet authorities had many means at their disposal of crushing any undesirable popular campaign or movement (indeed, they regarded any such activity as undesirable), as individuals were entirely dependent on the state for their income and well-being. The party could arrange for party members to be thrown out, individuals could be sacked from their jobs, officials could warn them of possible harm if they continued their campaigning, police and prosecutor's offices could consider punishments and, if all else failed, the KGB could intimidate and if necessary have them jailed.

During the post-war era, government control over religious life was publicly enacted through the Council for the Affairs of Religious Cults (CARC) and the Council for the Affairs of the Russian Orthodox Church (CAROC) in Moscow (which were united as the Council for Religious Affairs (CRA) in 1965) and, in Armenia, by the Council for the Affairs of the Armenian Apostolic Church (CAAC). The KGB controlled these Councils behind the scenes.

The Rostov campaign

By the late 1950s, Rostov region in southern European Russia had five functioning Armenian churches, according to the local commissioner of the Council for the Affairs of Religious Cults Aleksandr Baikov in his 23 December 1957 report.¹ By the end of the anti-religious campaign in 1964, this had fallen to just two. The Surp Grigor Lusavorich cathedral in the Proletarsky district of Rostov (formerly Nakhichevan-on-Don) was closed on 26 June 1959 after a brief state-organised campaign which local Armenians tried to counter in vain. A 'group of workers from the Krasny Aksai factory' wrote to the local authorities asking for a site to build a house of culture on Karl Marx square, where the cathedral was located. In addition, on 11 June 1959 the Rostov regional commissioner for religious cults had written to the council of ministers in Moscow with a draft resolution 'to remove the former technical station, currently used as an Armenian cathedral'. The commissioner claimed that on the anniversary of the end of the second world war, 9 May 1959, an eternal flame had been lit at the burial site of fallen soldiers. The site was visited 'by numerous workers every day and especially on anniversaries', the commissioner claimed, 'and the presence at this location of an Armenian cathedral is inappropriate'. Moreover, 'one should bear in mind that this premises is situated on a square near the monument to the founder of scientific atheism, Karl Marx'. On 29 July, four weeks after the cathedral's closure, the

¹ Centre for Documentation of Recent History of Rostov Region. f. R-9. op. 3, d. 491. pp. 82-83.

authorities had come at night to remove the cross from the dome and the bells. All the sacred vessels and other items of gold, silver and jewels were seized by the state finance authorities, while other property was handed to the city's Surp Karapet church. On 30 July the building was handed to the children's technical station.

Vazgen did what he could to try to save the cathedral, which he had visited in 1957, meeting Sergei Gasparyan, head of the CAAC, to urge the authorities not to confiscate it. He also wrote directly to the Soviet government on 17 June 1959. However, as CAAC acting head Suren Hovhanesyan wrote on 22 July to Aleksei Puzin, the head of the CARC in Moscow, Gasparyan gave Vazgen a 'direct explanation' of why the cathedral had been closed, telling him that towns are now being rebuilt and, of necessity, homes and churches need to be demolished. This 'inevitable process should not be regarded as an excuse to close any particular church, mosque or prayer house', Gasparyan claimed. He pointed out that the cathedral had been closed because of the reconstruction of the park 'and its use for other purposes'. He told Vazgen that his appeal to the city authorities 'cannot be satisfied'. 'Despite Gasparyan's explanation, Vazgen insisted that his letter be sent on to you,' Hovhanesyan told Puzin. Hovhanesyan added that the CAAC believed Vazgen's appeal should be rejected. Puzin responded to Hovhanesyan on 31 July, explaining the background to the closure. He noted that the building had been a children's technical station in 1939, but that 'prayer gatherings started during the [Nazi] occupation'. Reconstruction of Marx square had already begun, while the closeness to the eternal flame and the site of a proposed statue of Marx was a concern. Puzin claimed that local people had appealed to the city's Proletarian district and city executive committees calling for the children's technical station to be reopened there. 'Fulfilling the wishes of the city residents', the city executive committee had ordered the cathedral's closure. The CARC had approved the closure as located not far away was another Armenian church 'where Armenian believers of the city of Rostov can fulfil their religious needs'. The CARC instructed CAAC to pass on this message to Vazgen.²

On 11 July 1960, officials took the final decision to demolish the cathedral. A 9 August letter to Leonid Brezhnev, chair of the presidium of the Supreme Soviet in Moscow, from a group of Rostov cathedral parishioners led by Tshkhugi Samurgasheva courageously raised their complaints. The 79-year-old Samurgasheva, who died in April 1961, was from a prominent local Armenian family. She and the other complainants pointed out that the Soviet Constitution and laws proclaimed freedom of conscience for all, adding that nowhere was it allowed for local authorities 'to restrict believers, create obstacles to the carrying out of religious rituals or, all the more, to take away a church building from believers'.

We believers and parishioners of the Armenian cathedral in the city of Rostov-on-Don, just as millions of believers of other ethnicities, had at their disposal the cathedral building to be able to pray and satisfy our religious needs as the canons of the Armenian-Gregorian faith demand. The cathedral building handed to our religious community has always been kept in order, all legal demands of the administrative organs have been fulfilled and all taxes levied have been paid.

Samurgasheva and her fellow parishioners noted that the building was also recorded as a historical monument, and that during the Second World War, church members had contributed generously – as had other local Armenians – to the collections to support the war effort and wounded soldiers. They complained also at the way the local authorities had taken away the building 'in violation of Soviet laws and the rights of believers protected by these laws'. The retired priest Fr Kevork Darbinyan, who was no longer able to serve because of his health, had

² Armenian National Archive, f. 823, op. 3, d. 159, pp. 26-27, 30-31.

‘exceeded his powers’ by agreeing to the closure, as had two members of the church council ‘who had not found in themselves the civil courage to protest against Darbinyan’s illegal actions’. Parishioners complained that the seizure of the cross from the dome and the bells less than two weeks earlier in the middle of the night was ‘to avoid the discontent of [ethnic] Armenian citizens’. Describing themselves as angry, the parishioners called on the cathedral to be handed back for worship and an investigation to be launched into how it had been taken away. In a telling conclusion, the parishioners explained that they had waited more than a year to write the letter ‘because we had hoped for the intervention of our spiritual leaders, our diocesan head Archimandrite [Karekin] Ter-Hakopyan and Catholicos of All Armenians Vazgen I, but as our hopes and expectations have not been justified we decided to appeal to you directly, hoping for your just decision.’ Although Samurgasheva gave her address at the foot of the letter, no reply came and the cathedral remained closed.

The veteran local priest (officially the church’s assistant priest), Fr Mkrtych Chorchoyants, lost his home when the cathedral was closed and was ‘literally thrown onto the street’, as he complained in a 7 April 1960 letter to Nikita Khrushchev, the communist party general secretary. ‘I can’t allow that in the free Soviet country they can leave an old man without a crust of bread, and therefore I urgently beseech you, Nikita Sergeevich, to issue an appropriate instruction to allow me, a Soviet citizen, to continue service in the cemetery church of Rostov-on-Don to support my family.’ Fr Chorchoyants cited what he regarded as a cynical suggestion from Rostov’s CARC commissioner Nikolai Yendakov (a former secret police officer) that the cemetery chapel already had a priest and thus did not need another, and that therefore he should retire. Interestingly, Fr Chorchoyants made no overt complaint about the closure of the cathedral as a place of worship. (In a sign of further state retribution, the priest’s daughter was also barred from working as a foreign-language teacher in Rostov. She was told she would be allowed to teach only if she moved elsewhere.)

In May 1966, in a last-ditch effort to save their cathedral, a delegation of parishioners travelled to Moscow to petition the authorities. They were told at the Cabinet of Ministers that a government decree specified that historical monuments, including places of worship, were to be preserved. However, at night on 18 June, while the delegation was still in Moscow, the local authorities blew up the cathedral, choosing the night time to avoid popular protests. Local leaders had sent a Komsomol member to the mining town of Shakhty 70 kms north of Rostov to acquire explosives, and he helped the sappers place the explosives in the cellars of the cathedral. However, when the cathedral was built, egg yolk had been mixed with the cement which appears to have strengthened the structure, so after each of the first two explosions the sappers had to add more explosives. Only with the third explosion was the cathedral destroyed, together with the tombs it contained and the khachkars placed in the church walls, some of which had come from the medieval Armenian city of Ani. The Komsomol member soon moved into a bigger flat and his career flourished. However, it seems he died relatively young of cancer, while some of the other officials involved in the cathedral’s destruction are said to have had early deaths. In 1970, the Krasny Aksai factory’s house of culture was built on the site.³ Georgy Bagdykov, born in Rostov the following year, recalled that on the day the cathedral was destroyed, local Armenians ‘wept

³ **Malkhasyan A.** Armyanskie tserkvi na donsokoi zemli //,Nakhichevan-na-Donu (Rostov-on-Don). "Nos. 9-12 2010; **Vartanyan V., Kazarov S.** Istoriia Armianskoi Apostolskoi tserkvi na Donu, XVIII--XX vv.2nd edition, Taganrogskii institut upravleniia i ekonomiki, Taganrog, -2008. pp. 98-109; The August 1960 letter is in State Archive of Rostov Region, f. 4173, op. 3, d. 27, pp. 288-289.

with grief that tore their hearts'. He remembered the older people going to the site of the former cathedral where the house of culture had been built, where they 'knelt, wept and prayed'.⁴

The Leninakan campaign

Leninakan, Armenia's second city with a population in the early 1970s of more than 170,000 and where the population was regarded as being devout, had just one church, the Holy Mother of God (Surp Astvatsatsin) Church, located on May Victory Square in the city centre. The city was also the centre of the Shirak diocese, led in the late 1970s by Bishop Narek Shakarian, and several priests lived with the bishop.

Campaigners in Leninakan had long fought to reopen a second church in a city where, according to the Council for the Affairs of the Armenian Church's own figures, some 20,000 people attended the church over Easter 1978. Campaigners focused on trying to have Holy Saviour (Surp Amenaprkich) Church – then used as a philharmonic hall – handed back for worship.

The CAAC's deputy chairman Andranik Asratyan reported to Eduard Galustyan of the Moscow Council for Religious Affairs on 16 November 1978 that the Council and the Leninakan executive committee had been considering such requests since 1969. Asratyan reported that the church the campaigners wanted to reopen, Holy Saviour Church, was being used as a philharmonic hall and - what was worse - was located right next to a school. Asratyan reported scornfully that the reopening of the church was 'not desirable' as less than 100 metres away on the same square was the town's working church, Holy Mother of God (Surp Astvatsatsin) Church, 'which fully satisfies the needs of believers'. The CAAC chairman had been to Leninakan to hold an 'explanatory conversation' with the organiser of the campaign to reopen the church, Vahan Terteryan.⁵ Terteryan had collected many signatures on numerous petitions to the authorities (more than 1,000 signatures in 1965 and again in 1975) and was clearly not impressed by the CAAC chairman's arguments. He had written to Leonid Brezhnev and Aleksei Kosygin on 15 September 1978 and wrote again on 22 November. In what was presumably meant to be a reply on their behalf, Galustyan wrote to Terteryan from Moscow on 6 December explaining why the church could not be reopened. Terteryan persisted, with a 500 signature petition in 1981 and a letter to the CPSU Central Committee on 27 October 1981, but this resulted again only in a visit by a CAAC official in December 1981. The church remained closed.

Motivations

Sadly we do not know what made Tshkhugi Samurgasheva and Vahan Terteryan choose to risk possible punishment to try to protect rights to have places of worship. Nor do we know how much (if at all) they coordinated their campaigns with Church leaders. But both led campaigns at a time when information the government did not approve for publication was hard to come by and organising groups of people outside the framework of official organisations was a cause for suspicion and potentially dangerous.

While Samurgasheva died less than a year after launching the campaign, other former parishioners battled – in vain - to preserve the by now closed cathedral. Terteryan was persistent in his campaign, repeatedly addressing Soviet leaders in both Yerevan and Moscow. Religious affairs officials who visited to talk to him must have been frustrated and baffled as to why he failed to accept that he was not going to get his way.

Conclusion: Why were such campaigns so rare? Russian-based Armenians were far more likely to campaign for their places of worship than were Armenians in Soviet Armenia, as

⁴ Bagdykov G. *Armyanskie svyashenniki Dona "Veda"*. Taganrog, -2016. p. 21.

⁵ State Archive of the Russian Federation, f. 6991, op. 6, d. 1336, p. 29. See also pp. 31 and 34.

other campaigns against the destruction of Armenian churches in southern Russia attest. Explaining this is hard. Perhaps for Armenians in Russia their church was, in addition to being a place of worship, a cultural centre and an important symbol of national identity which they wished to cling on to amid a Russian-speaking world. If a church in one location closed, it was often some distance to the nearest functioning Armenian church.

In Armenia itself, a church was clearly not the only centre where Armenian identity could be expressed. Besides, Armenians often travelled from elsewhere in Armenia to noted religious sites on pilgrimage – such as to Echmiadzin, Geghard or Khor Virap. Many were used to travelling to Echmiadzin for baptisms. So the relatively few open churches in Soviet Armenia were offset by the habit of travel to religious sites. In addition, many Armenians were closer to folk beliefs than to organised church activity, and saw less need to go to a church to join the liturgy than to venerate holy objects at home or to visit a holy site (surp) that was recognised by the people, not necessarily with the Church's approval.

ԻՆՉՈ՞Ւ ԷՒՆ ԻՆՔՆԱԲՈՒԽ ԱՐՇԱՎՆԵՐՈՐ ՀԱԶՎԱԴԵՊ ՀԱՅՈՑ ԵՎԵՂԵՑՈՒ ՊԱՐԱԳԱՅՈՒՄ

Քորլի Ֆ.

Բանալի բառեր՝ Հայաստան, Լենինական, Ռուսաստան, Դոնի Ռոստով, եկեղեցի, սուրբ ծառայություն:

Ինքնաբուխ արշավները, ի պաշտպանություն վտանգված Հայ Առաքելական եկեղեցիների, սովետական ուշ ժամանակահատվածում հազվադեպ բնույթ էին կրում: Երկու այդպիսի արշավներ մեկնարկեցին. մեկը՝ Դոնի Ռոստովում, որը միտված էր փրկել Սուրբ Գրիգոր Լուսավորչի տաճարը կործանումից, իսկ մյուսը՝ Լենինականում՝ Սուրբ Փրկչի տաճարը վերաբացելու նպատակով: Ուշագրավ է այն, որ այս գաղափարը նախաձեռնել էր Դշխուհի Սամուրգաշևան Ռոստովում: Նրա մահից հետո էլ այդ արշավը շարունակվեց: Լենինականում Սուրբ Փրկչի տաճարը վերաբացելու՝ Վահան Տերտերյանի առաջնորդած արշավը նույնպես տասնամյակներ շարունակվեց: Ըստ էության, հնարավոր չէրավ համոզել խորհրդային կառավարությանը:

ЗАЧЕМ БЫЛИ РЕДКОСТЬЮ СПОНТАННЫЕ КАМПАНИИ В ЗАЩИТУ АРМЯНСКИХ ЦЕРКВЕЙ ?

Корли Ф.

Ключевые слова: Армения, Ленинакан, Россия, Ростов-на-Дону, церковь богослужение.

Спонтанные кампании в защиту находящихся под угрозой армянских апостольских церквей в поздний советский период были редкостью. Две такие кампании - одна в Ростове-на-Дону, чтобы попытаться спасти собор Святого Григория Просветителя от разрушения, а другая в Ленинакане, чтобы вновь открыть храм Святого Спасителя для богослужений, - привлекли сторонников, но каждая была инициирована одним человеком. Дшхуи Самурга-

шева в Ростове умерла в течение года после начала своей кампании, но кампания продолжалась после ее смерти, в то время как Ваган Тертерян в Ленинакане продолжал свою кампанию на протяжении десятилетий. Уговорить советскую власть не удалось.

References

1. Armenian National Archive, f. 823, op. 3, d. 159.
2. Bagdykov G.M., Armyanskie svyashenniki Dona, Taganrog, Veda, -2016 (in Russian).
3. Centre for Documentation of Recent History of Rostov Region, f. R-9, op. 3, d. 491.
4. Malkhasyan A.G., 'Armyanskie tserkvi na donscoi zemli', Nakhichevan-na-Donu, Rostov-on-Don, Nos. 912, -2010 (in Russian).
5. State Archive of Rostov Region, f. 4173, op. 3, d. 27.
6. State Archive of the Russian Federation, f. 6991, op. 6, d. 1336.
7. Vartanyan V.G., Kazarov S.S., Istoriiia Armianskoi Apostolskoi tserkvi na Donu, XVIII--XX vv, 2nd edition, Taganrogskii institut upravleniia i ekonomiki, Taganrog, -2008 (in Russian).

Accepted: 18. 08. 2021

Reviewed: 22. 10. 2021

Sent to publ.: 15. 11. 2021

Information about the author

Felix CORLEY: journalist and independent historian (UK)

E-mail: fcorley@letters.org.uk

ՀՏԴ՝ 93/94

DOI: 10.52971/18294316-2021.3-170

ՊՐՈՖԵՍՈՐ Պ.Ի. ԼԵՔԵՂԵՎԻ ԱՎԱՆԴԸ 1926Թ.
ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ
(ծննդյան 135-ամյակի կապակցությամբ)

Վահագն Կրթեկյան

ՀՀ ԱԻՆ Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա

Հայկ Մելիք-Աղամյան

ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտ

Բանալի բառեր՝ երկրաշարժ, միկրոշրջանացում, սեյսմիկ տարածաշրջան, ճեղքվածք, փլուզում, ցնցում, տատանում, շինություն, գյուղ, ճակատային, զուգահեռական, միջօրեական:

Հոդվածը նվիրված է ԽՍՀՄ ԳԱ թղթակից անդամ Պ. Ի. Լեքեղևի 1926 թ. հոկտեմբերի 22-ի Լենինականի (Գյումրի) երկրաշարժի հետևանքների ուսումնասիրության մեջ ունեցած ավանդին: Բուն երկրաշարժի հասցրած ավերածությունների մանրակրկիտ և բազմակողմանի գնահատականից բացի, գիտնականը նաև փաստացի կատարել է նախկին ԽՍՀՄ տարածքի սեյսմիկ միկրոշրջանացման առաջին փորձը:

Նախաբան. Անվանի գիտնական, Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի թցթակից անդամ երկրաբանահանքաբանական գիտությունների դոկտոր Պյոտր Իվանովիչ Լեքեղևը (1885-1948թթ.) մեծ ավանդ ունի նախկին ԽՍՀՄ տարածքի երկրաբանական տարաբնույթ ուսումնասիրությունների՝ ապարագիտության, միներալոգիայի, երկրաքիմիայի, ինչպես նաև սեյսմալոգիայի ասպարեզում: 1921-1923 թթ. նա եղել է Դոնի համալսարանի (Դոնի Ռոստով) ռեկտոր, իսկ այնուհետև գիտական աշխատանքով է զբաղվել Լենինգրադում և Մոսկվայում 1934-1935թթ., զբաղեցրել է ԽՍՀՄ ԳԱ Պետրո-

գրաֆիական ինստիտուտի փոխտնօրենի պաշտոնը¹: Վայելելով մեծ հեղինակություն և լինելով լայնախոհ ու բազմակողմանի զարգացած երկրաբան՝ Պ.Ի. Լեբեդևը առաջին գիտնականներից էր, ով հանգամանալից ուսումնասիրել է Լենինականի 1926թ. հոկտեմբերի 22-ի երկրաշարժի հետևանքները՝ այսպիսով զգալի ավանդ ներդնելով խորհրդային սեյսմոլոգիայի ասպարեզում: Դրա հետևանքներն ուսումնասիրելու համար ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայից Հայաստան է ժամանում աշխատանքային խումբ՝ Պ. Ի. Լեբեդևի գլխավորությամբ: Մեկ տարի անց՝ 1927 թ. մարտի 9-ին, նրա զեկույցը ակադեմիայի քննարկմանն է ներկայացվել ակադեմիկոս Ֆրանց Յուլի Լեվինսոն-Լեսինգի (1861-1939) կողմից, այնուհետ, նաև հրապարակվել է²: Այդ զեկույցը հիմք է հանդիսացել ներկայացվող հոդվածին: Չնայած այն հանգամանքին, որ այդ երկրաշարժը հետագայում բազմիցս և մանրակրկիտորեն ուսումնասիրվել է նաև այլ մասնագետների կողմից՝ Ն.Կ. Կարապետյան (1986), Վ.Գ. Տրիֆոնով և Ա.Ս. Կարախանյան (2004), Թ. Բաբայան (2006), Է. Ե. Խաչիյան (2008) և այլն: Այդ երկրաշարժի մագնիտուդի (M) ուժգնության (MSK-64, 12 բալանոց սանդղակ) և հիպոկենտրոնի կամ օջախի խորության մասին առ այսօր չկա միարժեքորեն ընդունված տեսակետ:

Այսպես, օրինակ, Ն. Կարապետյանը, Թ. Բաբայանը և Է. Խաչիյանը երկրաշարժի գլխավոր հարվածի մանգիտուդը (M) գնահատում են 5,7, ուժգնությունը (MSK-64)՝ 8-9 բալ: Ն. Կարապետյանի մոտ օջախի խորությունը 7 կմ է, իսկ Թ. Բաբայանի մոտ՝ 10 կմ^{3,4,5}: Սակայն Գ. Տրիֆոնովը և Կ. Կարախանյանը այդ երկրաշարժի մագնիտուդը բարձրացնում են մինչև 6, իսկ ուժգնությունը իջեցնում մինչև 7 բալ, որոնք էապես տարբերվում են մնացած հետազոտողների կարծիքներից⁶: Այս իրարամերժ հայացքների համատեքստում Պ. Ի. Լեբեդևի մոտ մեկ հարյուրամյակի վաղեմությամբ ուսումնասիրությունները ցայսօր չեն կորցրել իրենց արդիականությունը:

1926թ. հոկտեմբերի 22-ի երկրաշարժը տեղի է ունեցել Արաքսի վտակ Ախուրյան գետի հովտում: Այն զրանցվել է Թիֆլիսի գեոֆիզիկական աստղադիտարանի սեյսմոգրաֆների և Լենինգրադի Պուլկովոյի աստղադիտարանի կողմից: Երկրաշարժը ունեցել է նախացնցում (foreshock), գլխավոր հարված և բազմաթիվ հետցնցումներ (aftershock): Նախացնցման հետևանքով՝ տեղական ժամանակով 19:38, իսկ Գրինվիչի ժամանակով (UTC)՝ 15:38, դադարել է աշխատել Լենինականի կոմկուսի շենքի արևելյան պատին կախված ժամացույցը: Գլխավոր հարվածի ժամանակ (UTC 18:58), որը մեծ փլուզումներ է առաջացրել Լենինականում և հարակից շրջաններում, կանգ են առել սենյակային ժա-

¹ Лебедев П. И., Молявко Г. И., Франк В. П., Куличенко В. Г. Геологи-географы биографический словарь. Киев. "Наукова Думка". -1985. с. 317.

² Лебедев П. И. Ленинкаканское землетрясение 22 октября 1926 г. // Известия Академии наук СССР. VI серия. -1927. Том 21. Выпуск 5. сс. 887-912.

³ Карапетян Н. К. Механизм возникновения землетрясений Армянского нагорья. Изд. АН Арм ССР. Ереван. -1986. сс. 34, 144-145.

⁴ Բաբայան Թ. Հ. Հայաստանի Հանրապետության, Արցախի և հարակից տարածքների հնագույն ժամանակներից մինչև 2003թ. տեղի ունեցած ուժեղ երկրաշարժերի ատլաս Հայաստան. Գյումրի 2006, էջեր 44, 110

⁵ Хачиян Э. Е. Прикладная сейсмология Ереван. "Гитутюн". -2008. с. 434.

⁶ Трифонов В. Г., Караханян А. С. Геодинамика и история цивилизаций. М. "Наука". -2004. с. 612.

մացույցները, որոնք ցույց են տվել տեղական ժամանակով 22:58: Պետք է նշել, որ Լենինականում ժամացույցները կանգ են առել ինչպես միջօրեական ուղղվածություն ունեցող շենքերի պատերի վրա (կոմկուսի, կինոթատրոնի, Երանոսյանի բնակարանի), այնպես էլ երկայնական ուղղվածություն ունեցող (23-րդ փողոցի սրճարանը, ժամագործի արհեստանոցը): Նախահարվածին բնորոշ էր հյուսիսից հարավ ուղղությունը, իսկ գլխավոր հարվածին՝ արևելքից արևմուտք: Նույն տվյալներով նախացնցման ժամանակ տատանումները շարունակվել են 2-3 րոպե, լավել է ուժեղ ստորգետնյա որոտ:

Ցնցումները զգացվել են Երևանում, Թիֆլիսում, Սոչիում, սակայն լուրջ փլուզումներ չեն եղել: Մեծապես տուժել են Կարսի մարզի գյուղերը, սակայն թուրքական հատված խորհրդային զինականները չեն կարողացել ներթափանցել: Կարսի խորհրդային հյուպատոսը հաղորդել է, որ փլուզումներ կան շուրջ 20 գյուղերում: Երկրաշարժի էպիկենտրոնը գտնվել է Լենինականից մոտ 10 կմ դեպի հարավ՝ Բայանդուր գյուղի շրջակայքում: Հաջորդ օրերին՝ ընդհուպ մինչև Նոր տարի, զգացվել են բազմաթիվ թույլ հետցնցումներ:

ՀԽՍՀ տարածքում երկրաշարժից տուժել են 44 գյուղ, որոնցից 9-ը կործանվել են ամբողջությամբ: Ջոհերի ընդհանուր թիվը կազմել է շուրջ 300 մարդ, մեծ մասը՝ Լենինականի շրջակա գյուղերի բնակիչներ: Լենինականում քարե տները մասամբ վնասվել են, սակայն մնացել են կանգուն: Այսպիսով, երկրաշարժը ներառել է Անդրկովկասի զգալի մասը՝ 45000 կմ² տարածքով:

Երկրաշարժի հետևանքով Լենինականում զոհվել է 13 մարդ, վիրավորվել՝ 144-ը: Ղարիբջանյան (Ալեքսանդրովկա), Գետք (Դահարլի), Բայանդուր, Երազավորս (Արալլիս), Ագատան (Փոքր Ղարաքիլիսա) գյուղերում զոհվածների թիվը կազմել է 176 մարդ, վիրավորներինը՝ ավելի քան 180 մարդ: Ըստ Լեբեդևի՝ կորուստների ընդհանուր թիվը կազմել է 300 մարդ զոհված և այդքան էլ վիրավոր:

Տեխնիկական հանձնաժողովի եզրակացության համաձայն՝ 100 % ավերված 9 գյուղը տեղակայված են եղել երկաթգծի երկարությամբ, որոնց ընդհանուր էլիպսաձև տարածքը կազմել է 100 կմ² (20-10 կմ առանցքով), իսկ մասամբ վնաս կրած գյուղերի ավերածությունների գոտին ներառել է ևս մի էլիպսաձև տարածք՝ մոտ 1250 կմ² մակերեսով (40-25 կմ առանցքով):

Պ. Ի. Լեբեդևը տվել է աղետի հետևյալ գնահատականը. «Լենինականի երկրաշարժը, որի ավերիչ հետևանքները բացատրվում են հիմնականում Հայաստանի գյուղական շինությունների բնութագրով, ինչպես նաև Ախուրյան գետի հունի առանձնահատկությամբ (հրաբխային լավայի հոսքերի այլուվիալ նստվածքներ), կարելի է դասել 8 բալ ուժգնությամբ երկրաշարժերի շարքին»⁷:

Իր զեկույցում անվանի զինականը տալիս է ինչպես Լենինականի, այնպես էլ գյուղերի շենքերում և շինություններում տեղ գտած վնասվածքների և փլուզումների նկարագրությունը: Մանրամասն նկարագրում է քաղաքի մանկաբարձական և զինեկոլոգիական հիվանդանոցի, պետական բանկի, Տիգրանյանների տան, թիվ 25 փողոցի արհմիության վարչության շենքի, կենտրոնական հրապարակում կառուցված կոմկու-

⁷ Трифонов В. Г., Караханян А. С., նշվ. աշխ., էջ 896:

սի և գործկումի շենքերի, «Հոկտեմբեր» կինոթատրոնի, քաղաքային գերեզմանատան առանձին հուշարձանների վրա տեղ գտած ձեռքերն ու փլուզումները:

Ամփոփելով Լենինականի գերեզմանատան հուշարձանների տարաբնույթ շեղվածքների քննությունը՝ հեղինակը նշում է, որ դրանք քանակապես շատ չեն, և բնութագրում է որպես «պտտածն»: Ընդ որում, Լենինականում «պտույտը» նկատվել է ժամացույցի սլաքին հակառակ ուղղությամբ, այն դեպքում, երբ Ղարիբջանյան և Գետք գյուղերի գերեզմանատներում շարժումը եղել է ժամացույցի սլաքի ուղղությամբ: Հուշարձանների փլվածքների և անկման դեպքերը եղել են հիմնականում հարավային և արևմտյան ուղղությամբ⁸:

Պետք է նշել, որ ինչպես Լենինականում, այնպես էլ քաղաքից դեպի հարավ գտնվող առավել վնասված գյուղերում հիմնականում ավերված են եղել շինությունների արևմտյան և արևելյան պատերը, այն դեպքում, երբ հյուսիսային ու հարավային պատերը պահպանվել են համեմատաբար ավելի լավ: Դա նկատվել է նաև Ղարիբջանյան, Գետք, Բայանդուր, Իսահակյան (Ղազարաբաղ) և այլ գյուղերի համեմատաբար ավելի խոշոր և հաստատուն կառուցված շինություններում (եկեղեցիներում, դպրոցներում):

Տարածքի հողաշերտերի վնասվածքներից հետաքրքրական են Արփաչայի դաշտի լանջով, Ղարիբջանյան գյուղի հարևանությամբ, քաղաքից դեպի հարավ ձգվող, ոչ շատ լայն, պատռվածքներ նմանեցնող ձեռքերը, որոնք պահպանում էին հյուսիսից հարավ ուղղվածությունը: Այդ երևույթը, ինչպես նաև հորիզոնական ձեռքերը, որոնք առաջացել էին Լենինականի որոշ շենքերում և սյուների վրա (մանկաբարձական և գինեկոլոգիական հիվանդանոց, Կ. Մարքսի հուշարձան, գործկումի շենք), վկայում են Լենինականից դեպի հարավ զգացված ուղղահայաց ցնցումների մասին: Դրա մասին են խոսում նաև տուժած բնակչության շրջանում անցկացված հարցումները:

Երկրաշարժի հետևանքով առաջացած ավերածությունների հիմնապատճառը Պ. Ի. Լեբեդևը համարում է շինությունների պարզունակ բնույթը և հակասեյսմիկ շինարարության կանոնների լիակատար անտեսումը⁹:

Անվտանգ շինարարության ապահովման համար գիտնականը կարևորում է տարածքի երկրաբանական լուրջ հետազոտությունների անցկացումը և նշում, որ Հաստատում, որին բնորոշ է ոչ հարթ և բլրաշատ մակերևութապատկեր, առավել վտանգավոր է գյուղերի կառուցումը առանձին բարձունքների ստորոտում, որտեղ շատ հաճախ մի երկրաբանական գոյակցությունը անցում է կատարում մյուսին: Նա արձանագրում է, որ վնասված գյուղերը գտնվում են հրաբխային տարածքում՝ հիմնականում Արփաչայ գետի ձախ ափին, ուր իջնում են հինավուրց Արագած հրաբխի եզրային լեռնաձյուղավորումներն ու բարձունքները: Ըստ Լեբեդևի՝ երկրորդ կարևոր խնդիրը շինարարության համար նախատեսված հողի, այսինքն՝ ամուր ժայռային ապարների տեղադրվածության խորության և նրանց ծածկող ավելի թույլ ողողատների հիմնարար ուսումնասիրումն է: Հողվածագրի կարծիքով, շատ հետաքրքիր կլինեք երկրաշարժի տարածաշրջանի մանրակրկիտ ուսումնասիրության արդյունքում պարզել ստորգետ-

⁸ Трифонов В. Г., Караханян А. С. , նշվ. աշխ., էջ 898:

⁹ Նույն տեղում, էջ 908:

նյա ալիքների տարածման հարցում առանձին գետերի և գետադաշտերի նշանակությունը: Որոշ երկաշարժերի դեպքում այդ դաշտերը երբեմն հանդիսանում են տատանումների հետագա տարածման առջև բնական անջրպետներ:

Երկրաշարժերից խոցելի տարածքներում կարևոր նշանակություն ունի փողոցների ուղղությունը, ավելի ճիշտ, ապագա շինությունների պատերի ուղղության ընտրությունը, ինչը հնարավորություն կընձեռի առավել արդյունավետ դիմակայել հնարավոր երկրաշարժերի ալիքներին: Դա պայմանավորված է նրանով, որ սեյսմոակտիվ տարածքներում ստորգետնյա ցնցումների ուղղությունը, որը կախված է երկարաժամկետ գործող ստորգետնյա տեկտոնական գործընթացներից, հաճախ կրկնվում է, այսինքն՝ ցնցումներն ուղղվում են մշտապես կամ հյուսիսից հարավ կամ արևելքից արևմուտք: Քանի որ հիմնականում առավել խոցելի են այն պատերը, որոնք ստորգետնյա ալիքների նկատմամբ կառուցված են լայնակի, հետևաբար այդ պատերը չպետք է թուլացած լինեն դրների և լուսամուտների համար մեծաքանակ փորվածքներով: Երկրաշարժի ժամանակ Լենինականում և մի շարք գյուղերում (Բայանդուր և այլն) առավել վնասվել էին շինությունների արևելյան ու արևմտյան պատերը, այն դեպքում, երբ հյուսիսային և հարավային պատերը պահպանվել էին բավականին լավ:

Պ. Ի. Լեբեդևը տարածաշրջանում առկա շինանյութերի ուսումնասիրումը համարում է հաջորդ կարևոր գիտատեխնիկական խնդիրը: Այստեղ, երկրի հինավուրց քաղաքների համար պատմականորեն շինանյութ հանդիսացող հրաբխային տուֆերի բնութագրի և հատկությունների ուսումնասիրությունից բացի, անհրաժեշտ է նաև զանազան ցեմենտային նյութերի (կրաքարի, հրակայուն կավի, լեռնային նստվածքային ապարների և այլն) հետազոտումը¹⁰:

Եզրահանգում. Ավարտելով հոդվածը՝ նշենք, որ 1926 թ. հոկտեմբերի 22-ի Լենինականի երկրաշարժը եղել է ՀՍԽՀ տարածքում ուժեղագույններից մեկը, ուղեկցվել է զոհերով ու ավերածություններով, որոնց հիմնական պատճառը պարզունակ և ոչ սեյսմակայուն շինարարությունը էր: Այն նաև ՀՍԽՀ պատմության մեջ առաջին հիմնավոր ուսումնասիրված երկրաշարժն է:

Այսպիսով, Պ. Ի. Լեբեդևի գործնական առաջարկությունները փաստացի նախկին ԽՍՀՄ տարածքի սեյսմիկ միկրոշրջանացման (առանց այդ տերմինի կիրառման) առաջին փորձն էր: Ավելի ուշ սեյսմիկ միկրոշրջանացման եղանակը մշակվել է պրոֆեսոր Ս.Վ. Մեդվեդևի ղեկավարությամբ Լեբեդևի ուսումնասիրություններից մոտ 25-30 տարի անց՝ 20-րդ դարի 50-60-ական թթ.¹¹:

¹⁰ Трифонов В. Г., Караханян А. С., նշվ. աշխ., էջեր 907-910:

¹¹ Խաչիյան Է. Վիրառական երկրաշարժագիտություն, Երևան, «Գիտություն», 2001, էջ 169

**ВКЛАД ПРОФЕССОРА П. И. ЛЕБЕДЕВА В ИЗУЧЕНИЕ
ЛЕНИНАКАНСКОГО ЗЕМЛЕТРЯСЕНИЯ 1926 г.
(к 135-летию профессора)**

Կրբեկյան Վ. Գ., Մելիկ – Ադամյան Գ. Ս.

Ключевые слова: *землетрясение, микрорайонирование, сейсмический район, трещина, разрушение, сотрясение, колебание, строение, деревня, фасадный, параллель, меридиан.*

Статья посвящена огромному вкладу признанного петрографа, минеролога и геохимика, члена-корреспондента АН СССР профессора Петра Ивановича Лебедева (1885-1948) в изучение разрушительного землетрясения 22 октября 1926 г. в северной Армении, известного под названием Ленинанканского (ныне г. Гюмри). Позднее в том же году, возглавив рабочую группу АН СССР, ученый провел скрупулезную и комплексную научную работу, результаты которой были опубликованы в обширной статье объемом 25 страниц в “Известиях АН СССР” в 1927 г. По данным П.И. Лебедева, землетрясение с эпицентром в районе села Баяндур в 10 км юго-западнее Гюмри охватило значительную часть Закавказья. Кроме детального установления степени и направленности повреждений (в Гюмри и близлежащих селах наиболее пострадали восточные и западные стены построек), ученый определил, что вертикально стоящие надгробные памятники на Ленинанканском кладбище повернулись вокруг своей оси против часовой стрелки. Своими развернутыми практическими рекомендациями по укреплению сейсмостойкости зданий с учетом разнохарактерных геологических факторов, П.И. Лебедев фактически заложил основы микросейсмического районирования, предвосхитив на 25-30 лет работы проф. С.И. Медведева, разработчика научного метода сейсмического районирования. Актуальность данного исследования подтверждается также тем обстоятельством, что несмотря на детальное изучение этого землетрясения последующими исследователями (Н.К. Карапетян (1986), В.Г. Трифонов и А.С. Караханян (2004), Т.А. Бабалян (2006), Э.Е. Хачиян (2008) и др.), до сих пор в определении таких параметров этого землетрясения, как магнитуда (варируется от 5,7 до 6), бальность (по МСК-64 от 7 до 9), глубина очага (от 7 до 10 км), нет единого мнения.

**PROFESSOR P. I. LEBEDEV'S CONTRIBUTION TO THE STUDY
OF 1926 LENINAKAN EARTHQUAKE (to Lebedev's 135th anniversary)**

Krbekyan V. G., Melik-Adamyan H. H.

Key words: *earthquake, microzoning, seismic region, crack, destruction, shake, vibration, structure, village, facade, parallel, meridian.*

The article is devoted to the huge contribution of the recognized petrographer, mineralogist and geochemist, Corresponding Member of the USSR Academy of Sciences, Professor Pyotr Ivanovich Lebedev (1885-1948) to the study of the devastating earthquake on October 22, 1926 in northern Armenia, known as Leninakan (now Gyumri). Later in the same year, heading the working group of the USSR Academy of Sciences, the scientist carried out thorough and comprehensive scientific work, the results of which were published in an extensive 25-page article in Izvestia of the USSR Academy of Sciences in 1927. According to PI Lebedev, an earthquake with an epicenter near the village of Bayandur, 10 km southwest of Gyumri,

covered a significant part of the Caucasus. In addition to a detailed determination of the degree and direction of damage (in Gyumri and nearby villages, the eastern and western walls of buildings were most affected), the scientist found out that the vertically standing tombstones at the Leninakan cemetery turned counterclockwise around their axis. With his thorough practical recommendations on strengthening the seismic resistance of buildings, taking into account various geological factors, P.I. Lebedev actually laid the foundations for microseismic zoning, anticipating by 25-30 years the work of Prof. S.I. Medvedev, the developer of the scientific method of seismic zoning. The relevance of this study is also confirmed by the fact that, despite a detailed study of this earthquake by subsequent researchers - N.K. Karapetian (1986), E.E. Khachiyani (2001), V.G. Trifonov, A.S. Karakhanyan (2004), T.A. Babayan (2006), and others, there is still no consensus in determining such parameters of the earthquake as magnitude 5.7-6, magnitude 7-9, or focal depth 7-10 km.

Գրականություն

1. Բարսյան Թ. Հ. Հայաստանի Հանրապետության, Արցախի և հարակից տարածքների հնագույն ժամանակներից մինչև 2003թ. տեղի ունեցած ուժեղ երկրաշարժերի ատլաս. Հայաստան. Գյումրի 2006:
2. Խաչիյան Է. Կիրառական երկրաշարժագիտություն, Երևան, «Գիտություն», 2001:
3. Карапетян Н. К. Механизм возникновения землетрясений Армянского нагорья. Изд. АН Арм ССР. Ереван -1986.
4. Лебедев П. И. Ленинанское землетрясение 22 октября 1926 г. // Известия Академии наук СССР, VI серия, 1927, Том 21, Выпуск 5. сс. 887-912.
5. Лебедев П. И., Молявко Г. И., Франк В. П., Куличенко В. Г. Геологи-географы биографический словарь, Киев. "Наукова Думка" -1985.
6. Трифонов В. Г., Караханян А. С. Геодинамика и история цивилизаций. М. "Наука". -2004.
7. Хачиан Э. Е. Прикладная сейсмология Ереван. "Титутюн" -2008.

Ընդունվել է՝ 29. 08. 2021

Գրախոսվել է՝ 23. 10. 2021

Հանձնվել է տպ.՝ 15. 11. 2021

Տեղեկություններ հեղինակների մասին

Վահագն ԿՐԲԵԿՅԱՆ՝ պատմական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԱԻՆ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի դոցենտ,
Էլ. հասցե՝ krbek@mail.ru

Հայկ ՄԵԼԻՔ-ԱԴԱՄՅԱՆ՝ երկրաբանական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի
ավագ գիտաշխատող, Էլ. հասցե՝ hmelik-adamyani@mail.ru

Ժ Ո Ղ Ո Վ Դ Դ Ա Գ Դ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ДЕМОГРАФИЯ
DEMOGRAPHY

ՀՏԳ՝ 908

DOI: 10.52971/18294316-2021.3-177

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԹՎԻ ՇԱՐԺԸՆԹԱՅԸ (XX դ. վերջ - XXI դ. սկիզբ)

Արտաշես Բոյաջյան

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

Բանալի բառեր՝ ազգ, էթնիկական խմբեր, ազգային կազմ, սեռատարիքային կառուցվածք, կրթական մակարդակ, միգրացիա, ծնելիություն, մահացություն, լեզու, կրոն:

Հայաստանի Հանրապետությունում մարզերի բնակչության ազգային կազմին վերաբերող էթնոժողովրդագրական ուսումնասիրությունները սակավաթիվ են: Այդ առումով սույն հոդվածում փորձ է արվում ներկայացնել Շիրակի մարզի բնակչության ազգային փոքրամասնությունների կազմի շարժընթացը XX դ. վերջին XXI դ. սկզբին:

Նախաբան. Շիրակի մարզի ազգային կազմի թվային ցուցանիշների վերլուծության համար որպես հիմնական սկզբնաղբյուրներ ծառայել են ՀՀ 2001 թ. և 2011 թ. մարդահամարների արդյունքները, որոնց բազմաբնույթ ու բազմապիսի ցուցանիշների քննությունը հույժ կարևոր է ինչպես գիտական ուսումնասիրությունների, այնպես էլ ազգային քաղաքականության ծրագրեր մշակելու համար: ՀՀ մարզերի ազգային կազմի գիտական ուսումնասիրությունն էթնոժողովրդագրական և ազգագրական տեսանկյուններից անկախության տարիներին 1998-2003թթ. իրականացվել է «Ոստան» էթնոմշակութաբանական հետազոտությունների կենտրոն հասարակական կազմակերպության Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի Հայկական մասնաճյուղի աջակցությամբ ազգագրագետ Յու. Մկրտումյանի ղեկավարությամբ¹: Այդ

¹ ՀՀ ազգային փոքրամասնություններն այսօր. հ.1, Երևան, 2000, ՀՀ ազգային փոքրամասնությունները (Քաղաքացիական հասարակության կայացման արդի պայմաններում), հ 2, Երևան, 2005:

հետազոտության արդյունքում կազմվել է ազգությունների անվանացանկ, որը մեր ուսումնասիրության հիմքում է դրված:

Նորանկախ Հայաստանի Հանրապետությունում անցկացված մարդահամարներում ազգային կազմին վերաբերող հարցի պատասխանը հարցաթերթում գրառվել է ըստ պատասխանողի ինքնորոշման ու ցանկության: Երեխաների ազգությունը որոշվել է ծնողների կողմից: Մայրենի լեզու համարվել է հարցվողի մատնանշամբ գրառված լեզուն: Նույն կերպ է գրանցվել կրոնի, եկեղեցու կամ որևէ կրոնական ուղղության հետևորդ հանդիսանալու դեպքում: Պետք է փաստել, որ ազգային փոքրամասնությունների միասնական սահմանում միջազգային իրավունքում առ այսօր գոյություն չունի²:

XXդ. վերջին մեր հանրապետության, այդ թվում Շիրակի մարզի բնակչության ազգային կազմում տեղի են ունեցել որոշակի քանակական փոփոխություններ՝ պայմանավորված 1988 թ. դեկտեմբերի աղետալի երկրաշարժով, սոցիալ-տնտեսական և ռազմաքաղաքական գործոններով: Հիշատակենք, որ ազգություններից միայն ավելացել է պարսիկների թիվը՝ 59.5 անգամ: Նրանց թվի շեշտակի աճ գրանցվել է 1990 թ-ից հետո ընկած ժամանակահատվածում, այսինքն՝ անկախության տարիներին: Պարսիկները հիմնականում բնակվում են մայրաքաղաք Երևանում:

Չշեղվելով թեմայից՝ միայն նշենք, որ Հայաստանի Հանրապետության, այդ թվում Շիրակի մարզի ազգությունների թվի շեշտակի նվազումը հետևանք է նոր աշխարհաքաղաքական, տարածաշրջանային սոցիալ-տնտեսական, ռազմաքաղաքական և հասարակարգի փոփոխության գործընթացների, որոնցից կարևորներն են ԽՍՀՄ-ի՝ որպես միասնական սոցիալ-տնտեսական և քաղաքական միավորի, լուծարումը և 15 անկախ պետությունների ձևավորումը, որի արդյունքում գրեթե խզվեցին սոցիալական, տնտեսական և մշակութային կապերը, Ադրբեջանի կողմից հրահրված պատերազմը և առ այսօր այդ պետության և Թուրքիայի կողմից շարունակվող տրանսպորտային ուղիների շրջափակումը, արդյունաբերական ներուժի փոշիացումը՝ դրանով պայմանավորված ինստիտուցիոնալ գործազրկությունն էապես նպաստեցին ազգաբնակչության զանգվածային արտագաղթին:

Թվային տվյալների վերլուծությունից պարզ է դառնում, որ ՀՀ մարզերում էթնիկական կազմը դարձել է ավելի միատարր: Գրեթե բոլոր մարզերում ազգային փոքրամասնությունների թիվը նվազել է: Մեր հանրապետությունում թվով երկրորդ ազգությունը եզդիներն են, որոնց բացարձակ թիվը 2001-2011 թթ. պակասել է 5394 մարդով կամ 13.3%-ով, իսկ Շիրակի մարզում՝ 247 մարդով կամ 25,4%-ով, ինչը բավականին բարձր ցուցանիշ է: 2001 թ. եզդիների ընդհանուր թվի 85,6%-ը բնակվել է Երևանում, Արագածոտնի, Արարատի և Արմավիրի մարզերում: Այդ ցուցանիշը պահպանվել է նաև 2011 թ.: Նրանց մեծ մասը բնակվում է մեր հանրապետության գյուղական բնակավայրերում, և նրանց հիմնական զբաղմունքը ոչխարաբուծությունն է:

Շիրակը վերջին 150 տարվա ընթացքում դարձել է ավելի միաէթնիկ տարածաշրջան: Շիրակի մարզի ներկայիս տարածքում, 1897թ. ազգային փոքրամասնություն-

² ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույց (Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը ՀՀ-ում), Երևան, 2011, էջ 11:

ները կազմել են ամբողջ բնակչության թվի 14,6%-ը, 1914 թ.՝ 10,3%-ը, 1922 թ.՝ 5,6 %-ը, 1931 թ.՝ 9,0 %-ը, 1970 թ.՝ 8,1%-ը, 1989 թ.՝ 2,9%-ը, 2001 թ.՝ 1,1%-ը և 2011 թ.՝ 0,9%-ը: Բերված թվերից երևում է, որ ազգային փոքրամասնությունների թվի շեշտակի անկում գրանցվել է 1980-ականների վերջից, ինչը պայմանավորված է մի շարք գործոններով՝ աղետալի երկրաշարժով, միջէթնիկ հակամարտությամբ, սոցիալ-տնտեսականով: Հիշատակենք, որ նշված տարիներին շեշտակի նվազել է նաև հայերի թիվը: Այսպես, 1989 թ. տվյալների համաձայն՝ մարզի քաղաքային բնակչության ազգային կազմում հայերը կազմել են բնակչության գրեթե 98%-ը, իսկ գյուղական վարչական շրջաններում՝ 92%-ը³, իսկ 2011 թ. համապատասխանաբար 98,2%-ը և 99,2%-ը⁴: Ինչպես տեսնում ենք, եթե քաղաքային բնակավայրերում էթնիկ կազմը փոփոխության գրեթե չի ենթարկվել, ապա գյուղական բնակավայրերն ավելի միատարր են դարձել: Այսպես, 1989-2011 թթ. մարզի բնակչության բացարձակ թիվը պակասել է 24,3%-ով այդ թվում հայերինը՝ 19,5%-ով, Ամասիայի տարածաշրջանում բնակվող թուրքալեզու էթնիկ խմբերը, արցախյան հակամարտությունով պայմանավորված, ամբողջության արտագաղթել են Ադրբեջան և ԱՊՀ հանրապետություններ, հիմնականում՝ Ռուսաստան: Հիշատակենք, որ Շիրակի մարզի ներկայիս տարածքում 1979 թ. թուրքալեզու բնակչության թիվը կազմել է 14152 մարդ, այդ թվում 225-ը բնակվել են Լենինական քաղաքում⁵: Այդ տարիներին քուրդ և եզդի ազգաբնակչության թիվը գրեթե չի փոխվել, ռուսների թիվը նվազել է 5,9 , իսկ ուկրաինացիներինը՝ 9,3 անգամ: Պաշտոնական վիճակագրությամբ՝ Շիրակի մարզի ներկայիս տարածքում բնակվող եզդիների մասին առաջին հիշատակումը եղել է 1852թ. կամերալ ցուցակագրական տվյալներում: Ըստ այդ տվյալների՝ Շորագյալի տեղամասում բնակվել է 28 եզդի ընտանիք (139 մարդ)⁶: Շիրակի մարզում 2001 թ. բնակվող եզդիների ընդհանուր թվի 26,5%-ն է բնակվել քաղաքային բնակավայրերում, իսկ 2011 թ.՝ 19,2%-ը: Հիշատակենք, որ 2001-2011 թթ. մարզի քաղաքային բնակավայրերից եզդիների թիվը պակասել է 145-ով կամ 56,2%-ով, իսկ գյուղական բնակավայրերից 243-ով կամ 33,9%-ով: Քաղաքային բնակավայրերից եզդիների թվի շեշտակի նվազումը բացատրվում է հիմնականում նրանց արտագաղթով հանրապետության այլ մարզեր, ավելի կոնկրետ՝ Արարատյան դաշտ և Ռուսաստանի Դաշնություն⁷: Ըստ Մ. Գալստյանի հետազոտության արդյունքների՝ ազգային փոքրամասնությունների 75.1%-ը արտագաղթը պատճառաբանում է ընդհանուր առմամբ աշխատանքի բացակայությամբ (46.3%-ը՝ աշխատանքի բացակայություն, 5.9%-ը՝ մասնագիտական աշխատանքի բա-

³ Մանասյան Մ., Գրիգորյան Ա., Պոտոյան Ա., Շիրակի մարզ, Երևան, 2002, էջ 61:

⁴ ՀՀ Ազգային վիճակագրական կոմիտե (այսուհետև՝ ԱՎԿ), Շիրակի մարզի բնակչության էթնիկ կազմը քաղաքային և գյուղական բնակավայրերում, <https://www.armstat.am/file/doc/99483063.pdf> (05.02.2021):

⁵ Ленинанкан за 60 лет, статистический сборник. Ленинанкан. -1984. с. 13.

⁶ Հայրապետյան Ա.Ս., Ալեքսանդրապոլի գավառը վիճակագրական նյութերում (XIXդ.-XXդ. սկիզբ), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, 2011, էջ 52:

⁷ Բոյաջյան Ա. Գ., Շիրակի մարզի ազգային փոքրամասնությունները, Դաշտային ազգագրական նյութեր (այսուհետև՝ ԴԱՆ), տեսր 2, 2018:

Արտաշես Բոյաջյան

ցակայություն, 22.9%-ը՝ ընտանիքը պահելու համար բավարար միջոցներ վաստակելու անհնարինությունն)⁸: Այդ առումով ազգային երեք փոքրամասնությունների (հույներ, ռուսներ, ուկրաինացիներ) արտաքին միգրացիան պայմանավորված է ոչ միայն Հայաստանում ստեղծված սոցիալ-տնտեսական վիճակով, այլև նրանց ազգային պետությունների միգրացիոն քաղաքականությամբ:

Աղյուսակ 1

ՀՀ մարզերի բնակչության ազգային կազմի շարժընթացը 2001-2011թթ.

Մարզերը	Ընդամենը	2001թ.							
		Հայ	Ասորի	Եզդի	Հույն	Ռուս	Ուկրաինացի	Քուրդ	Այլ
Երևան	1103488	1088389	239	4733	308	6684	876	-	2259
Արագածոտն	138301	130678	-	6405	-	179	-	846	193
Արարատ	272016	263357	1926	5940	-	418	70	-	305
Արմավիր	276233	257362	242	17665	-	480	-	128	356
Գեղարքունիք	237650	236804	-	-	-	430	-	116	300
Լոռի	286408	280471	-	793	655	3882	-	-	607
Կոտայք	272469	266023	950	4097	-	684	-	229	486
Շիրակ	283389	280594	-	974	-	1048	222	-	551
Սյունիք	152684	152212	-	-	-	253	41	-	178
Վայոց Ձոր	55997	55877	-	-	-	71	-	-	49
Տավուշ	134376	133587	-	-	-	531	-	-	258
Ընդամենը	3213011	3145354	3357	40607	963	14660	1209	1319	5542
		2011թ.							
	Ընդամենը	Հայ	Ասորի	Եզդի	Հույն	Ռուս	Ուկրաինացի	Քուրդ	Այլ
Երևան	1060138	1048940	226	3268	300	4940	603	-	1861
Արագածոտն	132925	125552	-	5474	-	180	-	1616	103
Արարատ	260367	253125	1625	4,975	-	436	-	-	206
Արմավիր	265770	247,853	178	16906	-	426	-	157	250
Գեղարքունիք	235 075	234 474	-	-	-	328	-	-	273
Լոռի	235537	231066	-	652	360	3152	-	-	307
Կոտայք	254397	249508	676	3211	-	590	-	-	412
Շիրակ	251941	249742	-	727	-	1100	113	-	259
Սյունիք	141771	141353	-	-	-	259	-	-	159
Վայոց Ձոր	52324	52187	-	-	-	77	-	-	60
Տավուշ	128609	128001	-	-	-	423	-	-	185
Ընդամենը	2783779	2727327	2705	35213	660	11911	714	1773	4075

Աղյուսակը կազմելիս օգտագործվել են՝ ՀԽՍՀ կենտրոնական վիճակագրական վարչության աշխատություններ, պրակ N 2, Ժողովրդագրական բաժին, Երևան, 1922: Մանասյան Մ., Գրիգորյան Ա., Պոտոսյան Ա., Շիրակի մարզ, Երևան, 2002, էջ 52: ՀՀ ԱՎԿ-ի տվյալներ:

⁸ Գալստյան, Մ. Վ. Արտագաղթի միտումները հետխորհրդային Հայաստանի ազգային փոքրամասնությունների շրջանում // Լրաբեր հասարակական գիտությունների, 1, Երևան, 2016, էջ. 188:

1939-1989 թթ. մարդահամարներում եզդիները դիտվում էին որպես քրդեր, իսկ 1991 թ-ից հետո մեր հանրապետությունում, երբ էթնիկական լեզվական պատկանելությունը սկսեց հենվել անհատի հայտարարության վրա, նրանք նախընտրեցին եզդի էթնիկ պատկանելությունը, և այժմ բոլոր պաշտոնական փաստաթղթերում ազգային պատկանելիությունը նշվում է եզդի:

Եզդիներն իրենց համարում են Շարֆադինի կրոնի հետևորդներ: Ըստ 2011թ. մարդահամարի այդ կրոնի հետևորդների թիվը Շիրակի մարզում կազմել է 395 հոգի, ինչը կազմում է եզդիների ամբողջ թվի՝ 54,6%-ը: Արժե հիշատակել, որ մարզի տարածքում բնակվող եզդիների թվի 26,5%-ը հայ առաքելականներ են⁹: Եզդիների և քրդերի լեզուն պատկանում է հնդեվրոպական ընտանիքի իրանական լեզվախմբին: Եզդիների մայրենի լեզուն կուրմանջին է: Շիրակի մարզում եզդիների կողմից մայրենի լեզվի ուսուցումն իրականացվում է հիմնականում ընտանիքներում¹⁰: Հարկ է նշել, որ ազգային լեզվի իմացության նկատմամբ ուշադրությունը քաղաքներում ավելի թույլ է, քան գյուղերում: Ըստ էության, Շիրակի մարզի քաղաքային և գյուղական բնակավայրերի ազգային փոքրամասնությունների, հատկապես եզդիների մշակութային կյանքն այնքան էլ ակտիվ չէ, որն ունի իր բացատրությունը: Մեր կողմից անցկացված հարցումներից պարզվում է, որ նրանք ցանկություն չունեն մասնակցելու հրապարակային մշակութային միջոցառումների, իսկ իրենց ազգային տոներն անցկացնում են ընտանեկան պայմաններում¹¹: Մակայն, նշենք, որ Շիրակի մարզի Ազատան համայնքում (այսրում է ազգությամբ եզդի 27 ընտանիք) գործում է «Հյուսիսային մարզերի եզդիներ միավորում» հասարակական կազմակերպությունը¹²: Այդ կազմակերպությունը զբաղվում է Շիրակի մարզի եզդիների կրթական, մշակութային, սոցիալական և իրավունքների պաշտպանության հարցերով, կազմակերպում է ազգային և կրոնական տոներին նվիրված տարբեր միջոցառումներ:

Հայ-ռուսական ակնառու հարաբերությունները սկսվում են XIX դ. սկզբից: Շիրակի մարզի ներկայիս տարածքում 1897 թ. Համառուսաստանյան առաջին մարդահամարի տվյալներով բնակվել է 5672 ռուս, ինչը կազմել է մարզի բնակչության ընդհանուր թվի 3,5%-ը¹³, 1979 թ. համապատասխանաբար՝ 8950 և 2,7%: 1988 թ. Սպիտակի աղետալի երկրաշարժից հետո և 1990-ական թվականներին ռուսների թվի շեշտակի անկում է գրանցվում: Շիրակի մարզում 1989-2001 թթ. ռուսների բացարձակ թիվը նվազել է 6,2 անգամ, իսկ 2001-2011 թթ.՝ ավելացել է 52-ով կամ 5,0%-ով: Այդ թվում, 2001-2011 թթ. քաղաքային բնակավայրերում ռուսների թիվը ավելացել է 70-ով, իսկ գյուղական բնակավայրերում նվազել է 22-ով: ՀՀ ռուսների ընդհանուր թվի շուրջ 10%-ը բնակվում է Շիրակի մարզում: Ըստ 2011թ. մարդահամարի արդյունքների՝ մարզում բնակվող 303

⁹ ՀՀ ԱՎԿ, Շիրակի մարզի բնակչության էթնիկ կազմը քաղաքային և գյուղական բնակավայրերում, <https://www.armstat.am/file/doc/99483063.pdf> (03.02.2021):

¹⁰ Բոյաջյան Ա.Գ., Շիրակի մարզի ազգային փոքրամասնությունները, ԴԱՆ, տետր 2, 2018.:

¹¹ Նույնը:

¹² Նույնը:

¹³ Մանասյան Մ., Գրիգորյան Ա., Պոտոսյան Ա., Շիրակի մարզ, Երևան, 2002, էջ 52:

ռուսներ ազատ տիրապետել են հայերենին¹⁴: Ռուսական համայնքը Շիրակի մարզում վարում է ակտիվ հասարակական-քաղաքացիական գործունեություն: Հիշատակենք, որ «Ռոսիա» հասարակական կազմակերպության Գյումրու մասնաճյուղը հիմնվել է 1994 թվականին: 147 ընտանիք է գրանցված մասնաճյուղում, որի հիմնական նպատակը կազմակերպությունում կարիքավոր ընտանիքներին բարոյական և նյութական աջակցությունն է, ռուսական ավանդույթների, սովորույթների և մշակութային արժեքների պահպանումը, ինչպես նաև ռուս և հայ ժողովուրդների բարեկամության ամրապնդումը¹⁵: Ռուսերենի խորացված ուսուցում է իրականացվում Գյումրու թիվ 1, 6, 7, 23 դպրոցներում: Կազմակերպությունը համագործակցում է Գյումրիում Ռուսաստանի Դաշնության գլխավոր հյուպատոսության, Գյումրիում ՌԴ գիտության և մշակույթի կենտրոնի հետ¹⁶: Մարզի գիտամշակութային և կրթական կյանքում կարևոր նշանակություն ունեցավ 2017 թ. դեկտեմբերի 20-ին Գյումրիում բացվեց «Գիտության, մշակույթի և կրթության» ռուսական կենտրոնը, որի գլխավոր նպատակները մեկն է այդ ոլորտի երկկողմանի զարգացումը: Մարզում բնակվող ռուսների մեծամասնությունը ուղղափառ քրիստոնյաներ են: Ըստ 2011թ. պաշտոնական տվյալների՝ նրանց թիվը 740 էր^{17,18}:

Պատմությունից հայտնի է, որ ուկրաինացի (մալոռուս կազակներ) առաջին վերաբնակիչները ՀՀ ներկայիս տարածքում 1858 թ. հիմնադրել են մեկ գյուղ՝ Նիկոլանկա (1938 թ-ից. Կիրով, այժմ՝ Ամրակից)¹⁹: Շիրակի մարզում 1970-1979 թթ. ուկրաինացիների թիվն ավելացել է 481-ով կամ 30,1%-ով, 1116-ից հասնելով 1597-ի²⁰: 1979-2001 թթ. նրանց թիվը պակասել է 7,2 անգամ, իսկ 2001-2011 թթ.՝ ևս 2,0 անգամ: Ինչպես ազգային մյուս փոքրամասնությունների, այնպես է ուկրաինացիների թվի շեշտակի անկում գրանցվել է 1988 թ-ից հետո: Ներկայացվող ժամանակահատվածում ուկրաինացիների թվի անկման ամենաբարձր ցուցանիշ գրանցվել է քաղաքային բնակավայրերում: Այսպես, 2001-2011 թթ. մարզի քաղաքային բնակավայրերում ուկրաինացիների թիվը նվազել է 2,5 անգամ:

Այլ ազգություններից Շիրակի մարզում բնակվել են վրացիներ, հույներ, հրեաներ, լեհեր և այլք: 2001-2011 թթ. այդ ազգությունների ընդհանուր թիվը նվազել է 2,1 անգամ՝ 551-ից հասնելով 259-ի (տե՛ս աղյուսակ 1):

¹⁴ ՀՀ ԱՎԿ, ՀՀ Շիրակի մարզի բնակչությունն ըստ ազգության, սեռի և այլ լեզվի տիրապետման աստիճանի <https://www.armstat.am/file/doc/99483068.pdf> (03.02.2021).

¹⁵ Բոյաջյան Ա. Գ., Շիրակի մարզի ազգային փոքրամասնությունները, ԴԱՆ, տետր 2, 2018:

¹⁶ Նույնը:

¹⁷ ՀՀ ԱՎԿ, ՀՀ Շիրակի մարզի բնակչությունն ըստ ազգության, սեռի և այլ լեզվի տիրապետման աստիճանի <https://www.armstat.am/file/doc/99483068.pdf> (12.12.2020):

¹⁸ ՀՀ ԱՎԿ, ՀՀ Շիրակի մարզի բնակչությունն ըստ ազգության, սեռի և այլ լեզվի տիրապետման աստիճանի <https://www.armstat.am/file/doc/99483068.pdf> (12.12.2020):

¹⁹ ՀՀ ազգային փոքրամասնություններն այսօր հ. 2, Երևան, 2005թ., էջ 65:

²⁰ Նույն տեղում, էջ 68:

Ազգային փոքրամասնությունների էթնոժողովրդագրական հետազոտության կարևոր բաղադրիչներից է նաև սեռատարիքային կառուցվածքի ու կրթական մակարդակի փոփոխության ուսումնասիրությունը: Ըստ 2011 թ. մարդահամարի՝ մարզի քաղաքային և գյուղական բնակավայրերում կանայք թվաքանակով գերազանցել են տղամարդկանց: Հայ տղամարդկանց տեսակարար համաթիվը կազմել է 48.3%, եզդիներինը՝ 47.0%, ռուսներինը՝ 38.7%, ուկրաինացիներինը՝ 13,3% և այլ ազգություններինը՝ 89,7%²¹: Ձեռքի տակ չունենալով նախորդ տարիների սեռային կազմի ցուցանիշները՝ դժվարանում ենք գնահատել, թե ազգային փոքրամասնությունների սեռային կազմի փոփոխությունն ինչպիսի դինամիկա է ունեցել:

Աղյուսակ 2-ում ներկայացված թվային տվյալների վերլուծությունից պարզ է դառնում, որ 2001-2011 թթ. ընկած ժամանակահատվածում մարզում հայերի և ազգային փոքրամասնությունների տարիքային կառուցվածքում գրանցվել են լուրջ փոփոխություններ: Այսպես, մինչև 19 տարեկան ազգաբնակչության թիվը նվազել է 33.8 հազարով կամ 33.1%-ով, այդ թվում՝ հայերինը՝ 33.0%-ով, եզդիներինը՝ 45.3%-ով, ուկրաինացիներինը՝ 3.6 անգամ, իսկ ռուսների թիվն ավելացել է 20,8%-ով: Այդ տարիքային խմբում հայերի ու եզդիների թվի նվազումը բացատրվում է 1990-ական թվականներին ծնելիության թվի շեշտակի անկումով, իսկ ռուսների թվի աճը՝ 2000-ական թվականների ռուս զինվորական ընտանիքների քանակի աճով:

Աղյուսակ 2

ՀՀ և Շիրակի մարզի բնակչության էթնիկական կազմի տարիքային կառուցվածքը 2001թ.

	Ընդամենը	Հայ	Եզդի	Ռուս	Ուկրաինացի	Այլք
ՀՀ	3 213 011	3 145 354	40 620	14 660	1 633	7335
Շիրակի մարզ	283389	280594	974	1048	222	551
Մինչև 19 տարեկան	102398	101687	422	173	18	98
20-59 տարեկան	141759	140028	474	704	175	378
60 և բարձր տարիքի	39232	38879	78	171	29	75
Քաղաքային	174260	172535	258	868	182	417
Մինչև 19 տարեկան	59599	59248	108	161	15	67
20-59 տարեկան	90054	88922	132	559	145	296
60 և բարձր տարիքի	24607	24365	18	148	22	54
Գյուղական	109129	108059	716	180	40	134
Մինչև 19 տարեկան	42799	42439	314	12	3	31

²¹ ՀՀ ԱՎԿ, Շիրակի մարզի բնակչությունը (քաղաքային, գյուղական) ըստ ազգության, սեռի և տարիքի 2011թ. մարդահամարի տվյալներ, <https://www.armstat.am/file/doc/99485608.pdf> (28.01.2021):

Արտաշես Բոյաջյան

20-59 տարեկան	51705	51106	254	145	30	79
60 և բարձր տարիքի	14625	14514	60	23	7	21

2011 թ.

	Ընդամենը	Հայ	Եզդի	Ռուս	Ուկրա ինացի	Այլք
Շիրակի մարզ	251941	249742	727	1100	113	253
Մինչև 19 տարեկան	68610	68114	231	209	5	50
20-59 տարեկան	148129	146726	430	721	88	175
60 և բարձր տարիքի	35202	34902	66	170	20	28
Քաղաքային	146908	145512	171	938	91	190
Մինչև 19 տարեկան	38052	37663	47	198	5	38
20-59 տարեկան	85847	85042	102	605	69	124
60 և բարձր տարիքի	23009	22807	22	135	17	28
Գյուղական	105033	104069	556	162	22	63
Մինչև 19 տարեկան	30558	30351	184	11	0	12
20-59 տարեկան	62380	61623	328	116	13	41
60 և բարձր տարիքի	12095	12095	44	35	9	10

Աղյուսակը կազմելիս օգտագործվել են՝ ՀԽՍՀ կենտրոնական վիճակագրական վարչության աշխատություններ, Պրակ N 2, Ժողովրդագրական բաժին, Երևան, 1922: Մանասյան Մ., Գրիգորյան Ա., Պոտոսյան Ա., Շիրակի մարզ, Երևան, 2002, էջ 52: ՀՀ ԱՎԿ-ի տվյալներ:

Ներկայացվող ժամանակահատվածում 20-59 տարիքային խմբում ազգաբնակչության թվի փոփոխության պատկերը հետևյալն է. հայերի թիվն աճել է 4,8 %-ով, ռուսներինը՝ 2,4%-ով, իսկ եզդիներինը նվազել է 9,3%-ով, ուկրաինացիներինը՝ 49,7%-ով: Մարզում 60 և բարձր տարիքի բնակչության թիվը նվազել է 10,3%-ով, այդ թվում հայերինը՝ 10,2%-ով, եզդիներինը՝ 15,4%-ով, ուկրաինացիներինը՝ 31,0%-ով, իսկ ռուսներինը մնացել է անփոփոխ: Այդ տարիքային խմբի ազգաբնակչության թվի նվազումը պայմանավորված է եղել մահացության թվի աճով: Ի վերջո Շիրակի մարզում մինչև 19 տարեկանների բնակչության տեսակարար կշիռը բնակչության ընդհանուր թվում 2001-2011 թթ. նվազել է: Այսպես, եթե 2011 թ. մինչև 19 տարեկանները կազմել են մարզի ամբողջ բնակչության թվի 36,2%-ը, այդ թվում քաղաքային բնակավայրերում՝ 34,2 % և գյուղական՝ 39,2%, ապա 2011 թ. նույն ցուցանիշը կազմել է 27,2% (քաղաքային՝ 25,9%, գյուղական՝ 29,1%): Այդ տարիներին 20-59 տարեկանների տեսակարար կշիռն աճ է գրանցվել՝ 50,0%-ից հասել է 58,4%: Աճ է գրանցվել նաև 60 և բարձր տարիքի բնակչության տեսակարար կշիռն՝ 13,8%-ից հասնելով 15,7%-ի: Կարելի է արձանագրել, որ 2001-2011 թթ. Շիրակի մարզի բոլոր ազգությունների մոտ գրանցվել է ձեռացման միտում:

Ազգային կազմի էթնոժողովրդագրական կարևոր բնութագրիչներից է կրթական մակարդակի ուսումնասիրությունը: Շիրակի մարզում 2001-2011 թթ. գիտական աստիճանով և հետբուհական բարձրագույն մասնագիտությամբ հայերի թիվն ավելացել է 32,3%-ով, ինչը բավական բարձր ցուցանիշ է, ռուսներինը՝ 11,3%-ով, եզդիներինը՝ 2,1

անգամ: Թվարկյալ ազգությունները աճ են գրացել նաև ընդհանուր հիմնական կրթություն ունեցողների առումով²²: Հիշատակենք, որ 2001 թ. գիտական աստիճան և հետբուհական կրթություն ունեցողները կազմել են 7 և բարձր տարիքի բնակչության ընդհանուր թվի՝ 11.0%-ը, թերի բարձրագույն կրթություն ունեցողները՝ 17.3%-ը և ընդհանուր և միջնակարգ կրթություն ունեցողները՝ 43.8%-ը: Նույն ցուցանիշը 2011 թ. կազմել է համապատասխանաբար 15.9, 16.4 և 51.2%²³: Ինչպես տեսնում ենք, այդ 10 տարիների ընթացքում գրանցվել է գիտական աստիճան և հետբուհական կրթություն ունեցողների տեսակարար կշռի աճ: Գիտական աստիճանով և հետբուհական կրթությամբ անձանց ամենաբարձր ցուցանիշը 2001 թ. գրանցվել է ռուսների մոտ՝ 27%, ապա ուկրաինացիների՝ 13.3%, հետո հայերի՝ 10.9%, իսկ եզդիների մոտ՝ 1.3%: 2011 թ. նույն ցուցանիշը կազմել է համապատասխանաբար՝ 29.4%, 14.0 %, 15.9% և 3.5%²⁴:

Եզրահանգում. Շիրակի մարզի բնակչության ազգային փոքրամասնությունների վերաբերյալ շարադրվածը թույլ է տալիս անել հետևյալ եզրահանգումները.

- XX դ. վերջին և XXI դ. սկզբին Շիրակի մարզի բնակչության ազգային կազմում գրանցվել են որոշակի քանակական և որակական փոփոխություններ՝ պայմանավորված 1988 թ. Սպիտակի երկրաշարժով, ԽՍՀՄ-ի լուծարումով և սոցիալ-տնտեսական կապերի թուլացումով, 1990-ական թվականներից մինչև այսօր շարունակվող ռազմաքաղաքական անկայուն իրավիճակով: Էթնոժողովրդագրական գործընթացները հանգեցրել են նրան, որ մարզի ազգային կազմը դարձել է ավելի միատարր:
- Ներկայացվող ժամանակահատվածում մարզում բնակվող ազգային փոքրամասնություններից շեշտակի նվազել է ուկրաինացիների և եզդիների թիվը, իսկ Ամասիայի տարածաշրջանի թուրքալեզու բնակչությունը, արցախյան հակամարտությամբ պայմանավորված, ամբողջովին արտագաղթել է Ադրբեյջան: Սակայն ըստ 2001-2011թթ. մարզում գրանցվել է ռուսների թվի աճ, ինչը պայմանավորված է ռուս զինվորականների թվի ավելացումով:
- Ազգային փոքրամասնություններից մարզում ակտիվ հասարակական-քաղաքական գործունեություն է ծավալում ռուսական համայնքը:

Շիրակի մարզի ազգային փոքրամասնությունների էթնոժողովրդագրական պայմանները բարելավելու ուղիներ համարում ենք ազգային փոքրամասնությունների գիտակրթական և մշակութային կյանքի կտրուկ ակտիվացումը, տարաբնույթ միջոցառումների հաճախակի անցկացումը և պետական լրատվամիջոցներով դրանց հրապարակայնացումը:

²² ՀՀ ՍՎԿ, Շիրակի մարզի բնակչությունը (քաղաքային, գյուղական) ըստ կրթական մակարդակի, <https://www.armstat.am/file/doc/99485608.pdf> (03.02.2021):

²³ Նույնը:

²⁴ Նույնը:

**ДИНАМИКА ЧИСЛЕННОСТИ НАЦИОНАЛЬНЫХ МЕНЬШИНСТВ
ШИРАКСКОГО МАРЗА (конец XX - начало XXI вв.)**

Бояджян А. Г.

Ключевые слова: *нация, этнические группы, этнический состав, половозрастная структура, уровень образования, миграция, рождаемость, смертность, язык, религия.*

В статье делается попытка представить движение состава нацменьшинств Ширакской области в конце XX начале XXI веков. В последнее время в составе населения нашей республики, в том числе Ширакской области, произошли определенные количественные изменения, обусловленные произошедшим в 1988г. катастрофическим землетрясением, социально-экономическими и военно-политическими факторами декабря. Так, в 1989г. согласно данным переписи населения, в национальном составе городского населения области армяне составляли почти 98% населения, а в сельских административных районах - 92%, а в 2011 году - соответственно 98,2% и 99,2%. Как видим, если в городских населенных пунктах этнический состав практически не претерпел изменений, то сельские населенные пункты стали более однородными. В представляемый период из проживающих в области национальных меньшинств резко сократилось число украинцев и езидов, а проживающие в амасийском регионе тюркоязычные народы в связи с арцахским конфликтом эмигрировали в Азербайджан. В области зафиксирован рост числа русских.

**MOVEMENT OF THE NUMBER OF NATIONAL MINORITIES
OF THE SHIRAK REGION (End of XX century- Beginning of XXI)**

Boyajyan A. G.

Key words: *nation, ethnic groups, national composition, reproductive structure, level of education, migration, birth rate, mortality, language, religion.*

This article attempts to present the movement of the composition of the national minorities of the Shirak region in the XX century and at the beginning of the XXI century. Recently, certain quantitative changes have occurred in the composition of the population of our republic, including the Shirak region, due to the catastrophic earthquake in December 1988 and on the other hand by socio-economic and military-political factors.

Thus, in 1989, according to the data, Armenians made up almost 98% of the population in the national composition of the urban population of the region, and 92% in rural administrative districts, and in 2011-92%. respectively, 98.2% and 99.2%. as we can see, if the ethnic composition in urban settlements has practically not changed, then rural settlements have become more homogeneous. During this period, the number of Ukrainians and Yezidis living in the region sharply decreased, and the Turkish speaking people living in the Amasia region emigrated to Azerbaijan as a result of conflict with the Artsakh . Although we can see an increase in the number of Russians in the region.

Գ ր ա կ ա ն ո թ յ ո ն

1. Գալստյան, Մ. Վ. Արտագաղթի միտումները հետխորհրդային Հայաստանի ազգային փոքրամասնությունների շրջանում // Լրաբեր հասարակական գիտությունների, 1, Երևան, 2016:
2. Հայրապետյան Ա., Ալեքսանդրապոլի գավառը վիճակագրական նյութերում (XIX դ.-XX դ. սկիզբ). փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, 2011:
3. Մանասյան Մ., Գրիգորյան Ա., Պոտոյան Ա., Շիրակի մարզ, Երևան, 2002:
4. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույց (Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը ՀՀ-ում), Երևան, 2011:
5. ՀՀ ազգային փոքրամասնություններն այսօր հ.1, Երևան, 2000:
6. ՀՀ ազգային փոքրամասնությունները (Քաղաքացիական հասարակության կայացման արդի պայմաններում), հ 2, Երևան, 2005:
7. Ленинанкан за 60 лет, статистический сборник Ленинанкан. -1984.

*Ընդունվել է՝ 04. 08. 2021
Գրախոսվել է՝ 22. 10. 2021
Հանձնվել է տպ.՝ 15. 11. 2021*

Տեղեկություններ հեղինակի մասին

Արտաշես ԲՅՅԱԶՅԱՆ՝ պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի
ավագ գիտաշխատող, էլ. հասցե՝ a.bojayyan@mail.ru

ԽԻՊԻԼԻԿԸ ՈՐՊԵՍ ՄՂՁԱՎԱՆՋԻ ԴԵՎ

Հասմիկ Գալստյան

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Բանալի բառեր՝ *ժողովրդական գրույց, դև, խիպիլիկ, մղձավանջ, բրդոս գլխարկ, թզբեհ, կուժ:*

Հայ ստորին առասպելաբանության մեջ չար ոգիների շարքին է դասվում խիպիլիկ կոչվող ոգին, որն իր գուգահեռներն ունի արտերի արգասաբերությունն ապահովող ոգու՝ խվլիլիկի հետ: Ներկայացվող աշխատանքի մեջ խիպիլիկը դիտարկվում է որպես տարփոզի և մղձավանջի դև: Հայաստանի ազգագրական շրջաններում քննվող ոգին տարբեր անուններով է հանդես գալիս: Ժողովրդական գրույցներում խիպիլիկը ներկայացվում է չար ոգիներին բնորոշ բոլոր հատկանիշներով:

Նախաբան. Խիպիլիկը (խիփիլիկ, խպլիկ), արտերի ոգի լինելուց բացի, ժողովրդական գրույցներում հանդես է գալիս նաև այլ գործառույթներով՝ որպես *մղձավանջի ոզի, տարփոզի, հիվանդություն:* Ազգագրական որոշ շրջաններում խիպիլիկը կոչվում է նաև *գաբոսա, գաբուս* (Բուլանրիս), *գապուս* (Կարին) կամ *քարբուս*, նաև՝ *դառաղուռա, դարա-դուրա, գարա-գուրա* (Կեսարիա): Գ. Ասատրյանը, մեջբերելով Չարսանճազի հայերի հավատալիքներից, տարփանքի ու խեղդող ոգի է հիշատակում նաև *գողոսին*, «որ գիշերները մարդու վրա կշռքի և շունչը կբռնե»¹:

Մղձավանջ: Ալիշանը խիպիլիկին քննում է ոգեղենների՝ չար ոգիների շարքում և միննույն ժամանակ կարծում է, թե «պետք է դրվի հիվանդությունների կարգում, որովհետև քնած ժամանակ կրծքի վրա կարճատև նեղություն է կամ ճնշում, որի հետևանքով արթնանալուց հետո դեռ կիսաքուն մարդը երազախառն կարծում է, թե վրան

¹ Ասատրյան Գ., Դևի և մարդու սեռական կապը. Տարփոզինե // Արևելագիտության հարցեր, (№11) 2016, Երևան, 2014, էջ 275:

ծանրություն կա, կամ ավելի երագելով ու վախենալով կարծում է, թե իրեն ճնշողը իր անձը չէ, այլ մեկ ուրիշը: Եվ սա սովորաբար կոչվում է *մոդավանջ*, ֆրանսիացիների *cauchemar* ասածը»²: Միջնադարյան աղոթքներում հիշատակվում է «ի ծանրութենէ Խիպիլկաց» պահպանությունը, և Ալիշանի մեկնաբանմամբ պատճառը լինում է «տաքից ու պաղից»՝ մեջբերելով՝ գրում է. «Նշան, որ տաքէ լինի՝ այն է, որ երեսին գոյն կարմիր լինի և շատ քուն լինայ, և գիտենայ թէ մեկ ծանր իրք-մն ի վերան ընկել է և կամ ծանր իրք-մն ի վերան ծածկած է... Խպլիկ լինի, որ ի պիղծ խլտէ և պուխարէ լինի. և այն շուտ ողջանայ» և ավելացնում՝ «Եւ Աստուած պահէ զքեզ ի Խպլիկ ցաւուն, եղբայր. ամէն»³: Ժողովրդական մեկնաբանմամբ չար ոգի համարվող խիպիլիկը մոդավանջ-երագն է, որն առաջանում է երկար ժամանակ մեջքի վրա պառկելու հետևանքով: Բուլանըխում «խիպիլիկ ասելով հասկանում էին գաբուսը կամ մոդավանջը, որ քնի մեջ մարդկանց կրծքերը ճնշում և շնչահեղձություն էր պատճառում»⁴:

Խիպիլիկի՝ որպես քնած մարդկանց մարմինը վնասող չարքի կամ մոդավանջի ոգու հավատալիքը տարածված է հիմնականում Համշենում, Մուշ-Բուլանըխում, Ակնում, սեբաստահայերի և պարսկահայերի շրջանում:

Սեբաստահայերի հավատալիքներում խպլիկները կարճահասակ, անհամեմատ անդամներով, սրածայր գդակներով ոգիներ են, թշնամի են «ջլխտավոր» կանանց, որոնց չարչարում են իրենց խեղկատակություններով, տանջանքներով և այլն: Չբացառելով, որ խիպիլիկի ցավը մոդավանջն է, Կ.Գաբրիլյանը այն բնութագրում է որպես նյարդային (ջլխտային) հիվանդություն և գրում, որ «ըստ մեր բժշկարանաց hystérie-ն է, զոր այսպես սահմանեն. «Վասն Խիպիլիկի». Կան ոմանք, որ եք ի քուն «լինի նայ հանց թվի թէ ծանրը իրք մըն ի վերայ նստաւ, և թէ ճչէ ձայն ի դուրս չգայ, և խօսիլ «չկարէ և ահաւոր թվի և երկնչի...»⁵:

Կարինի ազգագրական շրջանը ներկայացնող գրույցներում խիպիլիկ-գապուսը համարվում է սատանաների «հատուկ պետ, ունի երեք աչք, որոնցից մեկն էլ ճակատին»⁶ է. նրա անձոռնի, ծուռումուռ ոտքերը, ձեռքերը մի-մի գազ երկար եղունգներով, ծուռ աչքերով սարսափ են ազդում մարդու վրա»⁷: Ապրում են գետնահարկ մութ տեղերում, գիշերները դուրս են գալիս և վնասում մարդկանց: Գապուսի հիմնական գործառույթն է՝ մարդկանց քնած ժամանակ խեղդել կամ չարչարել նրանց, բռնել լեզուն, որ

² Ալիշան Ղ., Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը, Երևան, 2002, էջեր 119-120:

³ Նույն տեղում, էջ 120:

⁴ Բենսէ, Հարք (Մշո Բուլանըխ) // Հայ ազգագրություն և բանահյուսություն (այսուհետև՝ ՀԱԲ), հ. 3, Երևան, 1972, էջ 61:

⁵ Գաբրիլյան Կ., Բառգիրք Սեբաստահայ գաւառալեզուի, Երուսաղէմ, 1952, էջ 261:

⁶ Այստեղ «գաբուսը» ճակատի վրա աչք ունենալու փաստով զուգահեռվում է *Ազնահուր* կամ *Ազնավուր* և *Թափագոց* կամ *Թեփեկոց* կոչվող հսկաների հետ, որոնց մասին գրույցները տարածված են ոչ միայն հայ, այլև հույն (կիլիկյաների մասին գրույցները) և այլ ժողովուրդների առասպելաբանության մեջ: Բուլանըխի հավատալիքներում Բենսէն հաղորդում է միակնանի դևերի մասին՝ համեմատելով Ողիսնսի՝ կիլիկյան հետ պատահած գրույցների հետ:

⁷ Մանասարյան Ս. և Վ., Ազգագրություն Կարնո նահանգի, ՀԱԲ արխիվ, մաս 9, էջ 79:

խոսել, ձայն հանել չկարողանան, բաց աչքերով ոչինչ չտեսնեն: Հիվանդների հետևից քայլում են, հետևում, որ հենց պառկեն՝ շնչարգելության ենթարկեն վերջիններիս:

Քննվող ոգու «գաբուս» անվանումը անմիջականորեն կապված է նրա հիմնական գործառույթի՝ մարդկանց վրա ծնկելու, ընկնելու կամ կռանալու՝ *գաբեղու* (Բուլանրիս), *գպեղու* (Շիրակ) հետ, որի արդյունքում, իրենց հաղթանդամ մարմնով ծանրանալով մարդու վրա, վնասում, խեղդում կամ մղձավանջի մեջ են գցում վերջինիս:

Ակնեցիները, *գաբոսային* համարում են աներևույթ կամ մարդակերպ էակ և առողջության համար վտանգավոր երևույթ: Ըստ ակնեցիների՝ գաբոսան «Գիշերները կը պտրտի տունները և, առանց սեռի ընտրութեան, իր սիրած անձը կռնակի վրայ դարձնելով՝ կը պառկի անոր վրայ այն ձեռով, որ բերանը քնացողին բերնին, քիթը՝ քթին, ձեռքերը՝ ձեռուններուն, ոտքերը՝ ոտուններուն վրայ տարածելով ծանր դիակի մը պէս՝ չի թողուր, որ իր գոհը շունչ առնէ կամ ձեռք-ոտք շարժէ: Այս դիրքին մեջ գաբոսային ենթական արթնցած է, չի կրնար շարժել որ եւ է մէկ անդամը. Միրտը ուժգին կբաբախէ, շնչառութիւնը դժուարացած, քրտինքի մեջ ողորում՝ ի գուր կը ճգնի պօռալ»⁸: Ակնեցիները հավատում էին, որ եթե մարդը կարողանա իր վրա ընկած պահին կծել գաբոսի բույթ մատը, ապա ընդմիջտ կազատվի նրա հարձակումներից:

Ելնելով Տ. Նավասարդյանցի հաղորդած գրույցից⁹՝ Աբեղյանն այս երևույթն անվանում է *գիշերախաբություն* կամ *սատանախաբություն*: Հայոց մեջ այս հավատալիքը խորը արմատներ ունի: Դեռևս 5-րդ դարում Կողբացին, խոսելով երազների պատճառների մասին, դրանց մի մասը համարում է հակառակորդից՝ դևերից տրված, որոնք «մարդու շնչի նման անմարմին են, սակայն զանազան կերպարանքներ են պատկերում մարդու աչքի առջև. մերթ կանանց կերպարանքներ՝ ցանկություն գրգռելու համար, մերթ ահռելի գազանների ու սողունների՝ զարհուրեցնելու համար»¹⁰:

Տարփալից երազներ չտեսնելու, գիշերային մղձավանջի մեջ չընկնելու և գիշերային չարքերից պաշտպանվելու համար ժողովուրդը դիմում էր պաշտպանական միջոցների, որոնցից հիմնականները հմայական բանաձևերն էին և քնոդ անձի կողմից ասվող հոգու և մարմնի պահպանմանն ուղղված աղոթքները:

Ընցավ չար,
Խանգավ ճրագ,
Չարթավ Քրիստոս պախապան՝
Չորեքդիման չարյաց խափան.
Չորս գլխի Ավետրան,
Ութ կանոն Մաղմոսարան,
Տըսվերկու փոխ շարական,
Քրիստոս գալոս՝ չարյաց խափան,
Խոզու ոզնական,

⁸ Խոսիւզեան Ա., Գաւառային կեանքէն // Բիւրակն, 1900, թիւ 44, էջեր 694-695:

⁹ Նաւասարդեանց Տ., Հայ ժողովրդական հեքիաթներ, Ոգիներ, եօթներորդ գիրք, Թիֆլիս, 1891, էջ 29:

¹⁰ Ե. Կողբացի, Եղծ աղանդոց, Երևան, 1994, էջ 145:

Մարմնուս պահապան¹¹:

Աղոթքը, խաչակնքումը, քնելուց առաջ սրբերի անունը տալը, սուրբ գրքերի, հմայիլների, կտրող, ծակող երկաթյա իրերի առկայությունը հիմնական գործիքներն են մարդու հոգին ու մարմինը տարատեսակ չարքերից պաշտպանելու համար: Սակայն ժողովուրդը, հավատալով խոսքի ուժի զորությանը, հաճախ կիրառում էր բանադրանքներ և դիմում պաշտպանական տարբեր գործողությունների: Բաբերդում դառա – դուռաների ներգործությունից զերծ մնալու համար քնելուց առաջ ասում էին հետևյալ բանաձևը. «Գնա բոլոր աշխարհի անտառները պտըտե՛ ու ապա եկու քովս»¹², իսկ Մարգվանի և շրջակա գյուղերի հայերը հավատում էին, որ «եթե մեկը գիշերը պառկած ատեն տափատը¹³ իր վրան առնե՛, դարա-դուրան կկոխե»¹⁴: Բուլանըխում «կանայք Ավագ հինգշաբթին պողպատե օղակներ շինել տալով կանցկացնեն վզներին՝ որպես զի գաբուսը չմտենայ իրենց»¹⁵:

Խիպիլիկները, սատանաների և մյուս չար ոգիների նման, բռնվում կամ խափանվում են երկաթյա իրերի միջոցով՝ մարդու վրա ընկած ժամանակ քթին¹⁶ կամ փողպատին¹⁷ մախաթ անցկացնելով և ոչ միայն:

Ժողովրդական զրույցներում *խիպիլիկ – գաբոս - դարա-դուրա* ոգիները նկարագրվում կամ ներկայացվում են հիմնականում երկու առարկաների ուղեկցությամբ, որոնք ամբողջացնում են ոգու գործառնությանն որոշ առանձնահատկություններ: Դրանցից առաջինը *խիպիլիկի բրդոտ գլխարկն* է՝ քոլոզը, որն ապահովում է տիրոջ անտեսանելիությունը¹⁸, իսկ մարդիկ հազար երանի են տալիս նրան, ով կարողացել է ձեռք բերել խիպիլիկի քոլոզը, քանի որ դառնում էր անսահման հարստության տեր:

Գաբուսին ուղեկցող երկրորդ առարկան *թզբեհն*¹⁹ է: Բենսեն երկու զրույց է ներկայացնում տարբեր աղբյուրներում գաբուսի և թզբեհի մասին, որոնք իմաստային առումով հակասում են միմյանց: Առաջինում գրում է. «Էնվախտ օր Գաբուս կիջնայ վրր քրզի՝ քանի կոնաս գօր տու յելի, առ զընդրա թզպեղն տար էցկե (անցուր) կժան բերան, էդ հըմալ օր էրիր՝ Գաբուս կը դառնայ մարդու օրինակ, կեղնի քրզի հեսիր (գերի): Գա-

¹¹ **Հարությունյան Ս.**, Հայ հմայական և ժողովրդական աղոթքներ, Երևան, 2006, էջ 168:

¹² **Պալեան Յ.** Պատառաշունչ Բաբերդի // Բիւրակն, 1899, թիւ 38-39, էջ 613:

¹³ Տե՛ս տաբատ

¹⁴ **Մինանեան Յ.**, Նախապաշարումներ եւ սովորութիւններ Մարգուանի եւ շրջականերու մէջ // Բիւրակն, 1900, թիւ 28, էջ 428:

¹⁵ **Բենսէ,** Բուլանըխ կամ Հարք գաւառ, Հաւատք, Բարի և չար ոգիներ// Ազգագրական Հանդես (այսուհետև՝ ԱՀ), գ.Զ, Թիֆլիս, 1900, էջ 10:

¹⁶ **Էօքսիզեան Ա.**, նշվ. աշխ., էջ 695:

¹⁷ **Բենսէ,** Բուլանըխ կամ Հարք գաւառ, Հաւատք, Բարի և չար ոգիներ//ԱՀ, գ. Զ, Թիֆլիս, 1900, էջ 11:

¹⁸ Սալմաստի ժողովրդական հավատալիքներում գլխարկի միջոցով աներևույթ դառնալու հանգամանքը վերագրվում է սատանաներին, **Աթայեան Ա.**, Սալմաստ, Նոր Ջուղա, 1906, էջեր 140, 152:

¹⁹ Տարբեր բարբառներում այն կոչվում է *թասփի, թեսպի, թզբեխ, ձեռնաքաշ, համրիչ, վարդարան, տերողորմյա*, և այլն: Պատրաստում են սաթից, վանակատից, ապակուց, մումից, փայտից, փղոսկրից, հացի խմորից և այլ նյութերից: Հատիկների քանակը նշվում է 7-9, 10, 36 և այլն:

բուսը մարդ խեղդել ուզած ժամանակ, իր թզպեհն (համրիչ) կը թողնե մարդու կշտին»²⁰: Երկրորդ գրույցը հետևյալն է. «Մարդկանց վրա հարձակվելուց առաջ իր թզբեհը (թեսպիհ) անց է կացնում կծի բերանը»²¹, ապա նոր խեղդում մարդուն: Ասում էին, այդ ժամանակ եթե կարողանան թզբեհը վերցնել կծի վրայից, գաբուսին կարելի կլինի բռնել»²²: Բենսեի ներկայացված երկու գրույցները խնդրո առարկա ոգու և նրա գործողությունների մասին տալիս են իրարամերժ պատկերացումներ: Մենք հակված ենք ընդունել և դիտարկել ոգու մասին առաջին գրույցում հաղորդվող տեղեկությունները, քանի որ հիմնավորվում և բացատրվում է առասպելաբանության տեսանկյունից և առավել հստակ է բնորոշում ոգուն վերագրվող գործառույթները:

Հայերի, հույների, եգիպտացիների ավանդույթի համաձայն՝ կուժը, կարասը, սափորն ունեն սիմվոլային ընդգրկուն համակարգ: Ժողովրդական հավատալիքային պատկերացումներում և առասպելաբանության մեջ խորհրդանշում են գերեզմանը, թաղումը և անդրաշխարհն ընդհանրապես (ձմռանը հացահատիկը, գինին, կաթնամթերքը պահվում էին սափորների մեջ՝ ստորգետնյա հատվածում: Հնագիտական նյութերը ցույց են տալիս Հայաստանի տարածքում կարասային թաղումների բազմաթիվ օրինակներ, որոնք հայտնի են ուրարտական ժամանակներից մինչև ուշ անտիկ շրջան: Սափորը համարվում է կնոջ սիմվոլ՝ խորհրդանշելով արգանդը, մարդու սկիզբը և այլն): Թզբեհն ընկալվում է որպես գործիք, որի մեջ ամփոփված են տիրոջ ուժն ու գորությունը: Հիշենք «Արա Գեղեցիկ և Շամիրամ» առասպելից «Հուռուրթ Շամիրամայ ի ծով» ասույթը, որտեղ ուլունքը տիրոջ՝ Շամիրամի հզոր զենքն էր, որի գորությամբ նա «իր կիրքն էր հագեցնում, մոգություններ ու չարություններ գործում»²³: Թզբեհը կարելի է դիտարկել նաև որպես գիծ, անջրպետ՝ այս և այն աշխարհների միջև: Անդրադառնալով հաղորդվող առաջին գրույցին՝ կարելի է ենթադրել, որ գաբուսի հարձակմանը ենթարկված անձը (կին կամ տղամարդ) պետք է խլեր ոգու գորությունն ամփոփած գործիքը՝ թզբեհը, և անցկացներ անդրաշխարհը խորհրդանշող կծի բերանին՝ փակելով վերջինիս (գաբուս) վերադարձի ճանապարհը դեպի իր բնակարան՝ անդրաշխարհ: Գաբուսը գրկվում էր իր գորությունից, դառնում մարդակերպ և ծառայության կամ գերության մնում մարդու մոտ: Այսպիսով՝ խիպիլիկի քոլոզն ապահովում էր տիրոջ անտեսանելիությունը, իսկ թզբեհը՝ ուժն ու գորությունը: Զրկվելով երկուսից էլ՝ չար ոգին համարվում էր խափանված:

²⁰ Բենսե, Բուլանըլիս կամ Հարք գաւառ, Հաւատք, Բարի և չար ոգիներ//ԱՀ, գ. Զ, Թիֆլիս, 1900, էջ 10:

²¹ Սատանաների մասին Սալմաստի ժողովրդական գրույցներից մեկում կին սատանաները կանանց «կոխելու» համար հանում են իրենց վզնոցները, զցում ջուր տանող կնոջ սափորի վրա և կնոջ բեռը ծանրացնում, Աթայեան Ա., Սալմաստ, էջ 142:

²² Մովսիսյան Ս. (Բենսե), Հարք (Մշո Բուլանըլիս) // ՀԱԲ, հ. 3, էջ 61:

²³ Աբեղյան Մ., Երկեր, հ. Ա, Երևան, 1966, էջեր 68-71:

ХИПИЛИК КАК ДЕМОН КОШМАРА

Галстян А.

Ключевые слова: *низшая мифология, народный рассказ, демон, хипилик, кошмар, шерстяная шапка, кувшин.*

В Армянской низшей мифологии одним из злых духов является дух *хипилик*, имеющий параллели с духом *хлвлик*, обеспечивающим плодородие полей. В данной работе хипилик рассматривается как демон ночного кошмара и болезни. Изучаемый дух в этнографических регионах Армении, имеет разные названия. В народных рассказах хипилик представлен со всеми характеристиками злых духов.

KHIPILIK AS A DEMON OF NIGHTMARE

Galstyan H.

Key words: *Lower mythology, folk story, demon, khipilik, nightmare, woolen hat, pitcher.*

In the Armenian lower mythology one of the evil spirits is *khipilik*. It has its parallels with the spirit that ensures the fertility of the fields, the *khlvlik*. In the presented work, *khipilik* is considered as nightmare demon and illness. The examined spirit *khipilik* in the ethnographic regions of Armenia comes under different names. In the national stories *khipilik* is presented with all the characteristics of evil spirits.

Գ ր ա կ ա ն ո լ յ ո ն

1. Աբեղյան Մ., Երկեր, հ. Ա, Երևան, 1966:
2. Աթայեան Ա., Մալմաստ, Նոր Ջուղա, 1906:
3. Ալիշան Ղ., Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը, Երևան, 2002:
4. Ասատրյան Գ., Դևի և մարդու սեռական կապը. Տարփոզինե//Արևելագիտության հարցեր №11, Երևան, 2014:
5. Բենսե, Բուլանըի կամ Հարք գաւառ, Հաւատք, Բարի և չար ոզիներ // Ազգագրական Հանդես, գ. 2, Թիֆլիս, 1900:
6. Բենսե, Հարք (Մշո Բուլանըի) // Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 3, Երևան, 1972:
7. Գաբիկեան Կ., Բառգիրք Սեբաստահայ գաւառալեզուի, Երուսաղէմ, 1952:
8. Էօքսիզեան Ա., Գաւառային, կեանքէն // Բիւրակն, 1900, թիւ 44:
9. Ե. Կողբացի, Եղծ աղանդոց, Երևան, 1994:
10. Հարությունյան Ս., Հայ հմայական և ժողովրդական աղոթքներ, Երևան, 2006:
11. Նաւասարդեանց Տ., Հայ ժողովրդական հեքիաթներ, Ոգիներ, եօթներորդ գիրք, Թիֆլիս, 1891:
12. Պալեան Յ, Պառաւաշունչ Բաբերդի // Բիւրակն, 1899, թիւ 38-39:
13. Սանասարյան Ս. և Վ., Ազգագրություն Կարնո նահանգի, ՀԱԻ արխիւ, մաս 9, էջ 79:
14. Սինանեան Յ., Նախապաշարումներ եւ սովորութիւններ Մարգուանի եւ շրջականերու մէջ // Բիւրակն, 1900, թիւ 28:

Ընդունվել է՝ 14. 08. 2021

Գրախոսվել է՝ 22. 10. 2021

Հանձնվել է տպ.՝ 15. 11. 2021

Տեղեկություններ հեղինակի մասին

Հասմիկ ԳԱՆՏՅԱՆ՝ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ,
Էլ. հասցե՝ hasmikgalstyan1979@gmail.com

ՏԵՂԱԿԱՆ ՋՐՈՒՅՑՆԵՐ ԳՅՈՒՄՐԻ-ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ
ՆՇԱՆԱՎՈՐ ԳԵՐԴԱՍՏԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Կարինե Սահակյան, Ռոզա Հովհաննիսյան

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

Բանալի բառեր՝ տեղական գրույց, պատում, երևելի գերդաստան, կերպար, արհեստ, մականուն, ավանդույթ, ծես, հավատալիք, արդիականացում:

Հոդվածում անդրադարձել ենք Գյումրի-Ալեքսանդրապոլի նշանավոր գերդաստանների մասին տեղական գրույցներին, գերդաստաններ, որոնք գաղթել են Կարսից, Ալաշկերտից, Էրզրումից, Բասենից և դարձել են քաղաքի պատմության կերտողներ:

Գյումրիում ավանդականացման գործընթացը իրականացվում էր առավելապես արհեստների ու արհեստավորական ավանդույթների ժառանգորդման սկզբունքով: Քաղաքի պատմական հիշողության մեջ շարունակաբար, նաև մեր հոդվածում՝ մասնավորապես հոլովվում են երևելի տոհմերի ու գերդաստանների, ինչպես նաև այս կամ այն արհեստի ու արհեստավորական ավանդույթի մասին տեղական գրույցներ ու պատումներ, թեև արհեստը արխիվացված է և այսօր չի կենցաղավարում:

Նախաբան. Գյումրի-Ալեքսանդրապոլի երևելի գերդաստանների էթնոմշակութային կերպարներից էին Պետրոս Չիթողյանը, Դրամփյանները, Կարանյանները, Չախմախյանները, Ծաղիկովները, Մազմանյանները, Մանոյանները, Քյանդարովները, Տարախյանները և էլի շատ-շատերը, որոնց մասին տեղական գրույցներն ու պատումները գերազանցապես գրի ենք առել նախաաղետյան շրջանում քաղաքի հնաբնակներից:

Ալեքսանդրապոլում հայտնի էին այնպիսի թաղամասեր, որոնք կրում էին նշանավոր տոհմերի անունները: Ըստ էության, ընտանիքն սկսվում էր թաղից (Բոշի թաղ, Թոփի դար, Չորի բողազ, Փափախանա, Սլաբողկա, Վերի և Վարի չարսուներ և այլն):

Անդրադարձ ենք կատարել Գյումրի-Ալեքսանդրապոլի նշանավոր գերդաստաններին՝ որպես ավանդույթների և բնավայրի պատմության կերտողների ու յուրատիպ տարեգիրների, քանի որ Գյումրին հին ու հողին ամրորեն արմատակալած գերդաստանների մի օրրան է՝ տոհմիկ հատկանիշներով, նշանավոր գերդաստաններին պատկանող առանձնատներով, մականուններով, ծեսերով ու սովորույթներով, ավանդույթներով ու հավատալիքներով:

Կարելի է ասել, որ Գյումրի-Ալեքսանդրապոլի գերդաստաններից յուրաքանչյուրը գրել է նրա պատմության մի էջը՝ Գյումրին դարձնելով տոհմատունների քաղաք:

Ինչպե՞ս հասկանալ Գյումրու կերպարային տիեզերքը, ինչպե՞ս թափանցել նրա՝ սև ու վարդագույն տուֆե պատերից ներս, այն պատերի, որտեղ քարերն իրար դեմ էնպես կուգան, որ կթվա՝ իրար կսիրեն...

Գուցե նախասահմանության հրաշքն այստեղ է՝ որպես հիշողության դարձ:

Քաղաքի բոլոր լուրջ խոսակցությունները տեղի էին ունենում միկիտաններում ու դայֆախաններում, որոնք սոսկ հանդիպավայրեր չէին: Կանանց շուրթերի ցերեկվա խոսակցությունը պտտվելով երեկոյան տեղափոխվում և վավերացվում էր այստեղ՝ սղամարդկանց շրջանում: Այսպես՝ քաղաքում խիստ հարգի Տիրատուրենց Մարգարի դայֆախանում, որտեղ հավաքվում էին առաջին գիլդի սղամարդիկ, Մի-րուն Մեթոն խոստանում է իր աղջկան կնության տալ ինչ-որ մեկին, որոշվում է մինչև իսկ նշանադիր օրը, բայց աղջիկը չի համաձայնվում: Հաջորդ օրը Մեթոն գալիս է դայֆախանա, գլխարկը հանում, դնում է հատակին և ասում՝ թռե՛ք վրայից:

Սովորության կենցաղում գլխարկ զցելը համագոր էր պատվագուրկ լինելուն, բայց Գյումրին պարադոքսների քաղաք է, նաև նորակերպությունների, գյումրեցին՝ որքան պատվախնդիր, այնքան՝ առաջադեմ:

Քաղաքն ամեն օր արթնանում էր մի նոր մոտիվով: Ու մի օր էլ քաղքի լոթի-փոթիների, դարաչուխալի տղերքի մեջ հայտնի Իզբիտով Արշալույսի խանչալի քարն ընկավ. Մարալենց տղերքը, Բուխարաջոնց Համբոն ու Ջանգուկենց Մեթը փախցրին Արշալույսի քրոջ աղջկան, մորը հրեցին, զցեցին ձյունների մեջ ու տարան սիրուն Մայային: Այս առիթով էլ քաղաքը չուշացրեց իր երգը. դաֆչի Թաթոսը խփում էր դա-փը ու սազանդարների հետ երգում.

Ես Թաթոսն եմ Մուրադենցեն,

Աղջիկ ուզի Փլավենցեն,

Պատգամ դրկի Ջամուշենցեն,

Տարա՛ն Մայայիս, տարա՛ն:

Իսկ ովքե՞ր էին քաղաքի երևելիները, ո՞րն էր նրանց ֆանտազմն այս աշխարհում, հասցեատե՞ր էին այս մարդիկ՝ Ձիթողյանները, Ծաղիկյանները, Տեր-Ավագենք, Քյանդարովեք, Խոյեցոնք, Քեշիշյանները, Դրամփյանները, Սանոյանները, Կարայանները, Սեյլանովները, էլի՛ բոլորը: Որքա՛ն պատվանուն տոհմաձառեր՝ հրաշալի արարմունքներով ու պտուղներով: Պատմում են՝ ինչպես մեծահարուստ Պետրոս Ձիթողյանն առավոտյան շրջում էր քաղաքի շուկաներում՝ Վերի ու վարի չարսուններում՝ ձգտելով ի մոտո ծանոթանալ բնակիչների կացությանն ու ապրելակերպի հոգեբանու-

թյանը: Շուկան նրա համար կյանքի ուսումնասիրության յուրօրինակ կենտրոն էր: Հաջորդ օրն աննպաստ վիճակում գտնվող գյումրեցիները վայելում էին նրա ուղարկած բարիքները՝ օրհնելով անանուն բարերարին:

Գեղեցիկ արարմունքներով հռչակված այս մարդն ուներ նույնքան գեղեցիկ մի դուստր: Նա միակն էր քաղաքում, որի ճակտնոցը զարդարված էր աղամանդե քարով, բախտի ցուլուն քարով, որ հավելում էր աղջկա գեղն ու հմայքը: Սոֆիկին երագող-սիրատածոնները շատ էին և նրա գեղեցկությանը վայել երգեր էին հյուսում, անհնարինի սահմանը հատող երգեր.

*Աչքով էրի, դուրս կանչեցի Սոֆիկիս,
Թուշը պագի, տուն ճամփեցի Սոֆիկիս,
Լայ-լայ, Սոֆիկ, լայ-լայ,
Լայ-լայ, սիրուն, լայ-լայ...*

Ահա և ներսի ու դրսի անուն ունեցող տղերքը՝ Պուլոզ Մուկուչն ու Ծիտրո Ալեքը (հայտնի գվարճախոս-կատակաբաններ. Պուլոզ Մուկուչին մի առիթով հարցնում են՝ ընչի՞ բոլոր գյումրեցիները էրկու անուն ունին, կպատասխանե՞մենք բացի մարդու դուրսը նայելուց, ներսն էլ կնայենք), Արդար Մանուկը, որն իր մականունն ստացել էր Մբ Ամենափրկիչ եկեղեցու խաչն ի գագաթ հանելու համար, Գյուման Կարոն (հույս էր բոլորի համար), Չանգի Խաչոն (Ալեքսանդրովսկու անկյունում խանութ ուներ), Յառի Մարգարը, Կախեթի Մուկուչը (գինու սկլադ ուներ), Այիայը՝ Խաչատուրը (սարթ մարդ էր, փողոցով անցնելիս կանայք ոտքի էին կանգնում: Մի անգամ հարսներից մեկը տեղից չի բարձրանում, զարմանքով ասում է՝ այ-հա՛յ, էս ո՞ւմ հարսն է, որ ոտքի չի կանգնի: Հին քաղաքի թիվ 14 փողոցը նրա անունով ցայսօր էլ ժողովուրդը կոչում է Այիայի դար): Սելավի Ակոն. ապրում էր Ձորի թաղում. մի օր Գյումրիում սելավ է ելել, Ակոյի կնկան ու երեխին շուրը օրոցքով քշել տարել է: Պատմում են՝ գուլար, կպտսովի ու կսեր՝ թուխսը ձագով են կորցրել: Գերեզմանի քարին էլ գրած է՝ Սելավի Ակո: Գաթաճի Կարոն. ֆուռ են ունեցել, կպատմեին՝ ընպես գաթա են թխել, աբրեշումի նման կհալիր բերնիդ մեջը: Ղասաբ Համոն (Պիճիկյան). կովը հեռվից տեսնիր, ճիշտ կսեր՝ քանի կլիռ կեղնի: Ղարիբ Կարոն. ոսկերիչ էր, ծնվել էր Էրզրումում, տեղափոխվել Կարս, ապա Ալեքսանդրապոլ: Քանի որ ուրիշ քաղաքից էր եկել, ըզպես էլ դարիբ մնաց, չձուլվեց էս քաղքին: Մոմճի Աբրահամը, պատվախնդիր ու հպարտ Երկան Ալեքը, Կունկի Գիրքորը (կառապան), խանութպան Ճերմակ Համոն՝ Ճերմակ երեսով ու Ճերմակ խալաթով, և էլի շատ ուրիշներ: Նրանց շուրջ ամեն պահի ու ակնթարթի իմաստավորմամբ ոտաց վրա ստեղծվում էին պատմություններ, տեղական զրույցներ, չափածո երգեր, երբեմն էլ հեքիաթի սկսվածքով.

*Էղել է, օր էղել է,
Ճերմակ Համոն խելըռել է,
Ես ի՞նչ էնեմ, խելըռել է,
Դու ի՞նչ էնես, խելըռել է,
Կնիկը տունը մոլըռել է...*

Կան մականուններ, որոնք տրվում էին ամբողջ տոհմին ու գերդաստանին. Տիպական մի անձի տրվող բնութագրումն ընդհանրական էր դառնում գերդաստանի համար, այսպես՝ Անարժան Հարուստենք (ըստ ժողովրդի՝ էդ հարստությանն արժանի չէին, քանի որ քրտինքով չէին աշխատել. գտել էին), Միլիոն Մանեթենք (մե մանեթով հաց են ծախել. մանեթ-մանեթ՝ միլիոն մանեթ), Բոբիկենք (թոռի պատմածով՝ պապս իր հարսանիքին սարքած սեղանների վրա ուրախությունից բոբիկ ոտներով են պե՛ս է պարել, որ ոչ մի ամսե տեղից չի շարժվել. դրա համար էլ մերոնց Բոբիկենք են ասել):

Գյումրիում հայտնի էին Վեքիլովների, Կոստանովների, Տեր-Մարտիրոսովների, Զիթողցոնց բաղնիքները, իսկ Գևոր աղի բաղնիքը հարսնբաղնիք էր՝ կենդանի հերթով, մեջը սալաքար (սեղանքար) կար, որի վրա բաղնիքից դուրս գալիս հաց էին ուտում. կենտրոնում Միմոնի ֆոնց բերած կարմրացրած գառն էր՝ կանաչը բերանին՝ զարդարված խնձորներով ու մումերով: Մինչև այսօր էլ հարսի օժիտի պարտադիր բաղադրամաս է բաղնոց բոխչեն: Ընդհանուր (օպչի) բաղնիքում հատուկ փակ տեղ կար՝ հուջուրա կոչվող, որտեղ լողանում էր նորահարսը՝ հագին սպիտակ բատիստե շապիկ, սրտանոցը՝ ասեղնագործած բուսանախշերով՝ իբրև չարի մուտքն արգելող և բեղմնավորումն ապահովող պահպանակ: Մնացած բոլոր կանայք փեշտըմալներով ու սպիտակ չեպչիկներով էին: Լողանալուց հետո ուղեկից կանայք հարսին դուրս էին բերում հուջուրայից և պղնձե եղակներն իրար խփելով՝ երգում էին՝ «Բացվի՛ր, նագելի՛ ս»:

Իսկ ովքե՛ր էին քաղաքի տատներները. Դայեկ Նոյենը, Հեղնարը, ինչպես նաև մանկաբարձության արվեստի մեջ հայտնի Զնգոն: Նրա անվանն են առնչվում մինչև այսօր էլ քաղաքում կենցաղավարող «Զնգոյի վարտիք» արտահայտությունը, նաև անգիր, քողազերձ մի պատմություն, որը շատ տարբերակներով է հայտնի: Վկայաբերենք ամենատպավորիչը. Ավդալենց Թաթոսի կինը Զնգոյի թեթև ձեռամբ ցանկանում է ընդհատել հղիությունը: Իբրև շնորհակալագին՝ Զնգոյին է նվիրում կապույտ քարով իր նշանի մատանին: Վերջինս էլ այդ մատանին տալիս է իր սիրեկանին: Մի օր հայտնի դաջֆախանաներից մեկում Ավդալենց Թաթոսն իր կնոջ մատանին նկատում է ուրիշ տղամարդու մատին, «թասիբին կեր չենող» գյումրեցին անխոս ու լուռ դուրս է գալիս, գնում է տուն և առանց բացատրություն պահանջելու կնոջը սպանում: Որոշ ժամանակ անց Թաթոսը ճշտում է իրողության մանրա-մասները. մեղքից թմրում է և անձնասպան լինում (ի դեպ, Պեչնիկ Ավդալենց Թաթոսի՝ որպես օջախի պատվախնդրություն մարմնացնողի յուղաներկ կտավն այսօր էլ պահվում է «Կումայրի» արգելոց-թանգարանի ֆոնդերում):

Թափանիվի պես օրը ցերեկով Գյումրի քաղաքում պտտվում է բանավոր ասքը, առոնին հարաբերությունները գեղարվեստական միջավայր են դառնում, սովորական մարդիկ՝ ֆիզուրներ, բանավոր հյուսվածքն իր մեջ է առնում մինչև իսկ քաղքի հրապարակ դուրս եկած պարզ ու շիտակ խենթախոսներին, որովհետև գյումրեցին գիտե սիրել ու փայփայել նաև իր...խելառին. հոգու փշուրն անգամ իր համար արժեք ունի...

Գյումրին նաև անսովոր ճակատագրերի ծանրաբեռն ուղեղ է: Պատմում են, որ Տայոնց Արտաշ աղեն տոմետի գործարան ուներ և տոմետի գաղտնիքը այդպես էլ ոչ մեկին չհայտնեց: Իրականում ոչ մի գաղտնիք էլ չկար, այլ պատրաստման եղանակն էր

կատարյալ: Ինչպես եղավ, թե չեղավ տան նոքարը սիրահարվեց Արտաշ աղի աղջկան: Աղեն իմացավ ու նոքարին «սրտի հանդգնության համար» դաժանորեն պատժեց: Քաղաքն արմանք-զարմանք կտրեց: Նվագածուները երգ կապեցին ու երգում էին.

Անաստված էր Արտաշ աղեն.

Չխնայեց իր նոքարին,

Կյանքը կախեց դռան մըխեն,

Աստված չունիիր Արտաշ աղեն:

Մարդկանց կյանքն այս քաղաքում նման է նովելի դիպաշարի՝ սրընթաց ու անսպասելի ավարտով: Մինչև էսօր էլ, բերնեբերան՝ հազար բերան, ժողովրդի հիշողության մեջ Մբբլ Ավոյի սուտ ու ճիշտ կերպարն է: Եղբորը հանիրավի կդատեն: Մբբլ Ավոն կնոտենա դատավորին, կըսե՝ դատավո՛ր ջան, քու էրածդ դատը ընձի դուր չեկավ: Ես էլ իմ դատս պիտի էնեմ: Ու դանակը դատավորի կողը կը կռիս:

Կան տեղական զրույցներ, որոնք ժամանակի հոլովություն ստացել են դարձվածքային արժեք՝ վկայաբերվելով իբրև վերաիմաստավորված արտահայտություն, ինչպես Քյոչակենց քյամարը: Քյոչակենք վեց ախպեր էին. վեց ախպերով մե չքնաղ քյամար՝ ունեին: Ամեն մեկը փորձում էր առավոտ մյուսներից ավելի վաղ արթնանալ, որ այդ օրն ինքը վայելեր արծաթե գոտու հմայքը: Գուցե հմայքի գաղտնիքը գոտին պատրաստողի՝ Մաշտի Գուրգենի հոր՝ Տարախյան Մարտիրոսի վարպետության մեջ էր: Ժողովուրդն ասում էր՝ ըղպես մարդ ո՛չ ծնվել է, ո՛չ էլ կծնվի, էդ մատները հողը չպտի մտնեին:

Ուշագրավ է, որ շուն զարկելու փեշակն անգամ այս քաղաքում անցնում է ժառանգաբար: Շուն զարկող Կըղկըղ Խչոյի տղա Հարություն ևս շարունակում է հոր գործը, և նրա շուրջ տեղական զրույցները հայտնի են բացառիկ հյութեղությամբ՝ վկայելով քաղաքի հասարակ մարդուն բնորոշ վարքագիծն ու հոգեբանությունը: Շուն զարկող Հարություն, այսպես ասած, «պասպորտ չունեցող», թափառող շներին կրակում էր և ամեն զարկած շան պոչի դիմաց ստանում աշխատավարձ: Բայց մտածում է. «Ընձի միշտ կմեղադրեն անմեղ հայվաններին սասկըցնելու մեջ: Բայց ես...», ճիշտն ըսած, մտածել եմ. աշքս թաք ըդոնց պոչերի վրա է... Ընչի՞ գեշ մարդ էղնիմ: Առանց էն էլ շան կյանք է իրանցն էլ, մե՛րն էլ...է՛, ես էլ փափախ կենեմ. շանը չեմ զարգե, պոչը կկտրեմ, կհանձնեմ»:

Ու այսպես տարին տարու վրա քաղաքի մեջ ավելանում է պոչը կտրած շների թիվը: Եվ գրո ու փըսն էն մասին, թե Հարություն էս շների պոչի գինը շուտո՛ւնց է կերել, մեկ-մեկ կհասներ նաև Հարության ականջին: Ինքն էլ ասողի հետ կխնդար՝ ասելով. «Շատ անգամ չիդեին, օր շուն զարգող Հարություն էս եմ: Ու էդ էր լավ»¹:

Իսկ ովքե՞ր էին քաղաքը քաղաք դարձնող ձեռքերը. դերձակ Ֆանտազի Արտաշը, որն իր մականունն ստացել էր երագում շորերի ֆանտաստիկ մոդելներ տեսնելու շնորհիվ: Շյապա կարող Նանիկը. տակավին պահպանվում էն նրա կարած շյապաների ձևվածքներն ու կաղապարները: Օսկի կարող Ֆլորը. ոսկեթել բուսանախ-

¹ Հովհաննիսյան Ռ., Շուն զարկող Հարություն // «Եղեգան փող» ՀԳՄ Շիրակի մարզային մասնաճյուղի պարբերաթերթ, հունիս, 2021թ.:

շերով գոգնոցի երկու ծայրերին կլապիտոն էր ասեղնագործում, վարդակներով թանթանա, գոտի՝ «*Ի վայելուն*» մակագրությամբ: Փափախչի Գարեգինը իր տեսակի մեջ մտավորական մի մարդ, որ, կարն ու գիրքը կողք կողքի, փափախ էր կարում: Այսօր էլ ընտանեկան մասունքի պես պահպանվում է նրա և խորոտ ու կոլոտ Աշխենի հարսանյաց հրավերը: Երբ Գարեգինի քեֆը քոք էր լինում, ինքնամոռաց ու տնկոզ երգում էր.

Երթանք կայր, բռնենք պարը, խանբաջի՛,

Դու սիրուն ես, քան քու տայր, խանբաջի՛:

Իսկ ո՞վ էր քաղաքին վերարկու հագցնում. Դրագոն Կարոն՝ մեծղի մի արարած, զրբբով ու զարզընդով մարդ, որ դռնեն ներս չէր մտնի. իր փառահեղ մարմնի համար Դրագոն էին ասում: Քաղաքն ուներ նաև թարգիներ՝ տեղական տարազներ կարողներ: Եվ բնավ պատահական չէ, որ Ալեքսանդրապոլում բազմաթիվ էին արհեստներով, զբաղմունքով, բնավորությամբ ու արտաքին հատկանիշներով պայմանավորված թե՛ մականունները և թե՛ անուն-ազգանունները (Տարախյան, Դուրգարյան, Փալանջյան, Դարբինյան, Ալանակյան և այլք):

Գյումրի-Ալեքսանդրապոլի հմայատիպերի մեջ ահա բարձրանում է մարմնի և հոգու դեղ ու մահլամ պատրաստողի՝ Իգիթենց Սոֆոյի (1883-1985թթ.) կերպարը: Պապերը գաղթել են Սուշից, ծնողները ծնվել են Ալեքսանդրապոլում: Ներքնատեսությամբ օժտված իմաստուն կին էր, ունեցել է ինը զավակ: Տիրապետում էր ժողովրդական դեղամիջոցներով բժշկելու արվեստին. բուժում էր յաման յարա, բկացավ, կարմիր քամի, քարխեց, էգ ու որձ դժվարբուժելի ցավեր, կերցավ, սզու, դոլինջ (մեջքացավ), վարամացավ և այլն: Հայտնի ոսկրաբույժ էր (սնխչի), գիտեր հմայություններ, գուշակություններ, վախ բռնել: Եղել է թաղի տատմերը: Իգիթենց Սոֆոյի առեղծվածն ու տատմերության մոգականությունն առավելապես առնչվում էր Աստվածածնա կաթաբարի հետ, որը՝ իբրև սրբություն, նրան բերել էին Երուսաղեմ ուխտ գնացողները. սպիտակ ու փխրուն այս քարը ջրի մեջ զցելիս մասամբ լուծվում էր, և ջուրը կաթնագույն էր դառնում: Հետո տալիս էր սակավակաթ կանանց՝ հաղորդելով կաթնաձիրության, կաթնառատության շնորհ:

Պատմում են, որ նա ծննդկանի ցավերը թեթևացնելու համար իբրև նմանակման հմայություն բացում էր աղբյուրը ու հոսող ջուրը մկրատով երեք անգամ կտրում: Նա նաև երազադատք էր. երազի միջոցով դատում և կանխատեսում էր մարդկանց կյանքի ու ճակատագրի անակնկալները: Մի անգամ երազում տեսնում է, թե ինչպես ամպերը հետ գնացին, և երևաց Փութքի գորավոր Մբ Սարգիսը: Հարցնում է՝ տղաս ե՞րբ պիտի պատերազմից վերադառնաս: Մուրբը պատասխանում է՝ այսօր՝ լուսաբացին, կգա Հարությունը: Նույն օրը ծեգին լսվում է պատուհանի ապակու մատնահարում: Մութուլուսի մեջ Սոֆոն մոտենում է պատուհանին և աչքերի առաջ տեսլանում է որդու ցանկալի պատկերը (իրականում վերադարձել էր Հարությունը՝ հարևանի տղան): Գերիբական լարվածությունից նա կորցնում է տեսողությունը՝ որպես մայր դառնալով սպասման չամչած ողկույզ:

Նույնքան միֆական էր նրա հեռացումն այս աշխարհից. հարյուրամյա իմաստությունն ուսած, սների մեջ կարմիր նարտոր կրծքին, հոսող ջրերի հեքիաթին ունկըն-

դիր՝ մեծ մայրը իր իսկ ձեռքերով փակեց աչքերը և ամփոփվեց՝ մրմնջալով՝ օլումս (մահս) գտա: Այնքա՛ն իմաստուն էր, որ մինչև իսկ խախտեց ժողովրդական մտածողության կարծրատիպը՝ ասելով, որ մահվանս օ՛րն էլ գիտեմ:

Գյումրին նաև կանխասացների ու գուշակների քաղաք է. եղունգ նայող Պոլոյենց Շողոն, երկու բուր մատներն իրար միացնելով՝ ապագայի իմացության էկրան էր ստեղծում և գուշակություններ անում. եղունգի մեջ պատկեր էր տեսնում, նույնիսկ ցորենի հատիկ: Գարի գցող Եվդոսը. երեք անգամ տալիս էր Աստծո անունը և գարիների դասավորությամբ գուշակում էր սրտի նպատակը: Մաղ գցող Արաքը. հո-գու աչքերով էր տեսնում, օգնության էր կանչում Ղալիչվա Կարմիր Ավետրանին: Թիզ չափող Երանյակը, իսկ նյութական կորուստի դեպքում դիմում էին ռամ գցողի օգնությանը:

Այս քաղաքում անեկդոտն ու զվարճախոսությունը գիրկընդխառն են. նրանց սյուժեներում թիրախը երբեք հիմարությունը չէ, այլ խելացի խորամանկությունը, մտքի աճպարարությունը՝ խորքում միշտ մնալով ազնիվ: Երբեմն անեկդոտը կա-ռուցում էին տրամաբանական խախտման վրա: Տեղի է ունենում պատահական հատկանիշներով սխալական ճանաչում կամ պատահական հասցեագրումով գործո-ղություններ: Չափազանցություններն ու խոսքի ուռճացումը, ինքն իր շուրջ անեկ-դոտային միջավայր ու զրույց հյուսելը մնում են գյումրեցու նախասիրությունների դաշտում: Խոսքն այնպես է կառուցում, որ տեքստը նույնիսկ իր համար անսպասելի է: Փոքր սյուժեների մեջ անգամ գտնում է զարմանալին՝ թվացյալ աննշան իրողությունները դարձնելով «մագալու» բան: Այսպես՝ Գմփրո Օսիկը (Ղարագոյզյան), որը շատ գեր մարդ էր, մեռնելուց առաջ ասել է. «Դարդս մեռնելը չէ, ըսա քաղաքը ֆորմից չընկնի»: Հորինումի տարերքով բռնված՝ նույն զրույցը, անեկդոտը ամեն անգամ գյումրեցիները կարող են պատմել նոր տարբերակով: Հորինումի տարերքով բռնված՝ նույն զրույցը, անեկդոտը ամեն անգամ գյումրեցիները կարող են պատմել նոր տարբերակով: Այսպես՝ Բաթում Մարտիրոսը կյանքի մեջ մենակ Բաթում է գնացել: Ով ինչ կխոսեր, ինքը Բաթումից կպատմեր:

Գյումրեցու հանկարծաստեղծ տեքստերում շարունակ բացահայտվում է նրա մտքի տարածությունը: Մինչև իսկ սահմանային իրավիճակներում նա դրսևորեց անհնարին պահերի լավատեսություն: Ինքն իրենից բարձրացավ ծիծաղով՝ սեփական կյանքը դարձնելով պատումի առանցք:

Ըստ էության, գյումրեցին ապրում է երդումն ու աղոթքը շուրթերին: Երդվում է այն ամենով, ինչ իր համար թանկ է ու նվիրական.

Էս բարի լուսը վկա: Էս աղոթքանը վկա: Թոփառվա սուրբը վկա. արդարն ու մեղավորը կշռվե: Մ. Հովհաննեսը վկա. անմեղի հավարին հասնող է: Խաչ, ժամ, պատարագ վկա: Կագնած, դադրած արեգակ Աստված վկա: Էս աղն ու հացը վկա:

Աղոթարանը, բարի լուսը, օրվա բարի ժամերը, երկինք-գետին քննողը վկայակոչումների մեջ դառնում են երդմնեցուցական խոսքային ասույթներ:

Եկեղեցաստեղծ ու ժամասեր այս ժողովրդի համար ամենաթանկը հավատքի վեճն է.

Աստվածածի՛ն, տո՛ւր մուրազս,

Բայքի կարոտս առնե՛ի,

Քաղե՛ի թուղլի մանուշակ,

Թերը հետը խառնելի:

Աղոթքը գյումրեցու համար հոգու սպեղանի է և ունի հմայական զորություն: Ժողովրդական աղոթքը պայմանականորեն տարանջատվում է հմայությունից, թեև որոշ տեքստեր ավելի նման են հմայությունների: Հմայական աղոթքները երդման բանաձևեր են՝ ուղղված բարի ոգիներին, նրանցում մշտապես վկայակոչվում են սրբերի անուններ, քրիստոնեացված աշխարհապատկեր: Տեքստերը մեծ մասամբ ուղեկցվում են ծիսական արարողակարգով: Կան աղոթքներ, որոնք որոշակի շեմի են տրված, «տվածուրիկ» են միայն տվյալ տոհմի արական ճյուղին:

Հայտնի են տարաբնույթ աղոթքներ. գորտնուկի աղոթք՝ «Նոր, նոր նորե զիս, նորը ելե, կուտե զիս, կտրե, թաբլե՝ չուտե զիս», շան բերանը կապող աղոթք՝ «Շունը կա, գոխը չկա», մրմնջուկի աղոթք, աչքի հատի աղոթք, գելկապի աղոթք, ինչ-որ մեկի սիրտը գրավելու աղոթք և այլն:

Ուշագրավ է, որ գյումրեցու լեզվամտածողությունը բանաձևային է. նա առավելապես վկայաբերում է այնպիսի խոսքեր, որոնք բխում են իր կենսափորձից ու գոյափիլիսոփայությունից: Հակված է իր ասելիքը կառուցելու նշանների և սիմվոլների լեզվով իբրև խոհափիլիսոփայական բանաձևեր: Առած-ասացվածքներում տեքստը նվազագույնի է հասցված: Օրինակ՝ *Մահը դավա է, ամեն մարդու դուռ կտքի: Դոխը խոսի, որ մատաղ է, հա՛վ, դու ընչի՞ կխոսիս: Չյուն է եկել, որ ձեռ ու ոտ մրսի: Զառի դաղըրը գառոյարը գիտե: Մազից մանանեխ կհանե: Բերնով դուռ բռնե՝ չեմ հավատա: Մա՛գ էրա, մի՛ կտրե: Բուրդ էր՝ ընկավ գգողի ձեռք* և այլն:

Բոլոր դեպքերում զրույցների իմաստաբանական հիմքը մարդու ենթագիտակցական արքետիպի մեջ է (այսպես՝ ամեն մարդ իր փոսը կլցնե): Յուրաքանչյուր պատում անփոփոխ ու քարացած խոսքային ասույթ չէ, քանի որ հարաճուն ապրում է մեր գիտակցության մեջ՝ համապատասխանելով կյանքի տարբեր իրադարձություններին: Այսինքն՝ տարածաժամանակային ներփակ-վածություն չի ապրում և բոլոր ժամանակների մտածողության համար ունի յուրահա-տուկ իմաստ: Յուրաքանչյուր ժամանակ բերում է բանահյուսության իր ըմբռումը:

Մրանով հանդերձ զրույցների մեկնությունների մեջ այնքան է խտացված մարդկային փորձը, որ երբեմն դրանք միտված են դառնալու բանաձևային մտածողության դրսևորումներ, օրինակ, *Դարդ կա՝ գուկա ու կերթա, դարդ կա՝ վառե ու կերթա: Բախտ կա համամ է, բախտ կա շամամ է, բախտ էլ կա՝ շան լակաման է: Ով տեսել է ջիգրի մրմուռ, նա թափել է նախշուն փետուր:*

Հաճախ ժողովուրդը կրճատում է բանաձևի առաջին մասը, քանի որ երկրորդն արդեն դրոշմավորված է նրա ենթագիտակցության մեջ, օրինակ, Խունկ ու մոմ էինք սրբերին (ձուր ու ծամոն էղանք լրբերին): Աստված թող ընձի յար էղնի (բովանդակ աշխարհը՝ չար):

Գյումրեցու խոսքը հակիրճ է, հյուրեղ, լեզվի պատկերավորման բոլոր միջոցներով հագեցած, ինքնակա և ինքնաբերական. *ընպես կխոսան, ինչխոր ձեթը կաթե ճրագը: Մինչև իսկ հիշոց-հայեոյանքները բանաստեղծական փոքրիկ հորինումներ են հիշեցնում՝ շատ հաճախ բարձրացող աստիճանավորումով: Օրինակ՝ ես քեզի վարող-վաս-*

տկողի գլխու քարին, դռնի վարդին, սրտի սալին, խունկ-խեծակին, ճարպ-ճրագին: Փառաքանքի խոսքերում սիրտ-հոգի-կյանք բառային սինվոլներով գաղտնագրվում են մարդու կյանքի ամենակարևոր պահերը: Այս խոսքերը հիշեցնում են յուրօրինակ ըզձական բանաձևեր, բոլորապտուղ սիրտ, նվիրումի և գոհաբերման գաղափարի արտահայտություններ: Այսպես՝ *Մազ էղնեի, ոտքերիդ տակն էղնեի: Դարդդ տանիս: Գլխիդ մեռնիս: Արնիդ մեռնիս: Կյանքիդ թելերին մեռնիս, սրտիդ՝ սներին: Թնավոր դուշ էղնիս, գլխիս վերևը պտտվիս:*

Եթե անեկդոտներն ու մանրապատումները ծնունդ էին առնում իրականությունից եկող տպավորություններից, այս կամ այն արատավոր երևույթը ծաղրելու անհրաժեշտությունից, ապա սրամիտ խոսքն այստեղ ծնունդ էր առնում և՛ ահռելի կենսաճանաչողությունից, և՛ ի բնե գյումրեցիներին հատուկ շրջահայացությունից, և՛ փիլիսոփայելու բնածին գրգիռներից: Գյումրեցիների անեկդոտներն ու սրամիտ խոսքերն ունեին իրենց բնավայրային բնավորությունը, տիպը, տեսակը, ծագումնաբանությունը, անգամ կառուցման մեթոդաբանությունը: ...Գյումրու անեկդոտներում հերոսների բնավորություններն ու վարքագծերն են շատ հաճախ իրենց վրա առնում սյուժեի զարգացումը: Մրամտություններն ու սրախոսություններն այստեղ երբեմն ձեռք են բերում աֆորիզմային արժեք, խտացվածություն, իմաստ²:

Եզրակացություն. Ամփոփելով ասենք, որ այս տարածքի բանահյուսությունն ամենևին նման չէ Գյումրու հարևանությամբ ապրող գյուղերի բանահյուսության նկարագրին, քանի որ իր խառնարանում ամփոփում է Ալաշկերտից, Ներքին Բասենից, Կարինից ու Կարսից վերաբնակեցվածների քաղաքային տիպի բանահյուսությունը ժանրային հարստությամբ:

Մեր գրառած տեղական զրույցների շրջանակներում բանահյուսական աստղ-ձր դրսևորվում է վիպականության հենքով՝ ծեսի, սովորույթի, ավանդույթի համակարգում, պատումի տարաբնույթ ձևերով և ազգաբանական շերտերի ընդլայնումով:

МЕСТНЫЕ РАЗГОВОРЫ О ЗНАМЕНИТЫХ СЕМЬЯХ ГЮМРИ-АЛЕКСАНДРОПОЛЯ

Տաակյան Կ. Ա., Օգաննիսյան Բ. Ս.

Ключевые слова: *местный разговор, история, семья, образ, ремесло, прозвище, традиция, ритуал, вера, модернизация.*

В статье рассмотрены местные разговоры о знаменитых семьях Гюмри-Александрополя, которые переселились из Карса, Алашкерта, Эрзурума, Басена и стали творцами истории города.

Становление традиции как таковой в Гюмри, происходило в основном путем наследования ремесел и ремесленных обычаев. Примечательно, что в исторической памяти города постоянно присутствуют разные рассказы, повествования и беседы о ремеслах и их тра-

² Սահակյան Կ., Հովհաննիսյան Ռ., Բառն ու բանը, Գյումրի. Քաղաքը և մարդիկ, Գյումրի, 2009, էջ 264:

дициях, относящихся к тем или иным семьям и кланам, хотя ремесла сегодня заархивированы и неприменяемы.

LOCAL NARRATIONS ABOUT CELEBRATED FAMILIES IN GYUMRI-ALEXANDRAPOL

Sahakyan K. A., Hovhannisyan R. P.

Key words: *local narration, narration, eminent family, personage, trade, surname, tradition, ritual, belief, modernization.*

In the article we touch upon the local conversations about famous Gyumri-Alexandropol families, families that migrated from Kars, Alashkert, Erzurum, Basen and became the creators of the city's history. The process of traditionalization in Gyumri was carried out mainly on the principle of inheritance of crafts and handicraft traditions. It is noteworthy that in the historical memory of the city there are constant conversations and stories about various clans and families, such as this or that craft and craft traditions, despite the fact that craft is archived and does not live today.

Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. Սահակյան Կ., Հովհաննիսյան Ռ. Բառ ու բան, Գյումրի. քաղաքը և մարդիկ, Գյումրի, 2009:
2. Հովհաննիսյան Ռ., Շուն զարկող Հարություն (խոհագրություն) // «Եղեգան փող» ՀԳՄ Շիրակի մարզային մասնաճյուղի պարբերաթերթ, հ. 177, հունիս, 2021թ.:

Ընդունվել է՝ 03. 09. 2021
Գրախոսվել է՝ 22. 10. 2021
Հանձնվել է տպ.՝ 15. 11. 2021

Տեղեկություններ հեղինակների մասին

Կարինե ՍԱՀԱԿՅԱՆ՝ հոգեբանական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի
ավագ գիտաշխատող, ՇՊՀ հոգեբանության, սոցիոլոգիայի և սոցիալական
աշխատանքի ամբիոնի վարիչ, դոցենտ, էլ.հասցե՝ sahakyanani@mail.ru

Ռոզա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ՝ բանաստեղծուհի, ազգագրագետ,
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի
գիտաշխատող, էլ. հասցե՝ vard-rosa@mail.ru

ՇԻՐԱԿԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՎԱԾՔԸ XIX ԴԱՐՈՒՄ
ԵՎ XX ԴԱՐԱՍԿԶԲԻՆ

Կարինե Բազեյան

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն,
ՀՀ ԿԳՄՄՆ «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի
պահպանության ծառայություն» ՊՈԱԿ

Բանալի բառեր՝ Շիրակ, գործվածք, գորգ, կարպետ, ասեղնագործություն,
ժանյակ, դաջազարդ:

XIX դարում և XX դարասկզբին գեղարվեստական գործվածքի տարբեր տեսակները՝ գորգն ու կարպետը, ասեղնագործ, ժանյակե բանվածքները լայնորեն կենցաղավարում էին շիրակցիների մեջ: Դրանք բնակարանի ներքին հարդարման կարևոր ու հարգի բաղադրիչներն էին, որպեսզի մնացին ընդհուպ մինչև XX դ. կեսերը: Հողվածում դիտարկվում են գործվածքի բոլոր տեսակներն ու ներկայացվում են դրանց տեխնիկական, ոճական, գեղագարդման առանձնահատկությունները՝ որպես Շիրակի էթնիկ մշակույթի կարևոր բաղադրիչ:

Նախաբան. Շիրակը ուստայանկության հնագույն կենտրոններից մեկն է Հայկական լեռնաշխարհում, ինչի վկայությունն են պեղումներից հայտնաբերված գտածոները և գրավոր պատմական սկզբնաղբյուրները: Հայաստանում հայտնաբերված գեղարվեստական գործվածքի հնագույն նմուշները պեղվել են Շիրակում. մասնավորապես Արթիկում¹, իսկ Անիի պեղումներից գտնվել են ինչպես կարպետի պատառիկներ, այնպես էլ XIII դ. թվագրվող ոսկերեկ-մետաքսաթել ասեղնագործության նմուշներ²: Անիի գեղարվեստական գործվածքի, մասնավորապես ասեղնագործության բարձր զարգացման վե-

¹ Хачатрян Т. Древняя культура Ширака. Ереван. -1975. с. 264.

² Орбели И. А. Избранные труды. Ереван. -1963. сс. 44-46.

րաբերյալ բազմաթիվ վկայություններ են պահպանվել: Տարբեր իրադարձությունների ու դեպքերի նկարագրություններում ուղղակի և ոչ ուղղակի, բայց շատ կարևոր տեղեկություններ են թողել Հովհաննես Դրասխանակերտցին, Ասողիկը, Մխիթար Անեցին, Մատթեոս Ուռնայեցին, Արիստակես Լաստիվերցին և այլ պատմիչներ³: Ժամանակի ընթացքում գործվածքի տարբեր տեսակներն ու հատկապես գեղարվեստական բանվածքն այստեղ բարձր զարգացում են ապրել՝ արտահայտելով տվյալ դարաշրջանի մշակույթի հիմնական գծերը և բնակչության աշխարհայացքն ու ճաշակը:

Կահույքի բացակայության պայմաններում հայոց մեջ փափուկ իրերի դերը խիստ կարևորվում էր: Ըստ կիրառության՝ դրանք տարբերվում էին գործվածքի տեսակով, չափերով ու գեղագարդամբ: XIX դ. դարում և XX դարասկզբին գեղարվեստական գործվածքի տարբեր տեսակները՝ գորգն ու կարպետը, ասեղնագործ, ժանյակե բանվածքները, լայնորեն կենցաղավարում էին շիրակցիների մեջ: Դրանք բնակարանի ներքին հարդարման կարևոր ու հարգի բաղադրիչներն էին, որպիսին մնացին ընդհուպ մինչև XX դ. կեսերը: Եթե ավանդական (հատկապես գյուղական) բնակարանում գործածական էին գորգերը, կարպետները, ջեջիմները, մեզարները, թաղիքներն ու դրանցից պատրաստված իրերը, ապա XIX դ. վերջից քաղաքային կենցաղ մուտք գործեցին ասեղնագործ ու ժանյակե նորաձև իրեր, որոնք լայնորեն տարածվեցին XX դարասկզբից՝ դառնալով բնակարանի ներսույթի պարտադիր բաղադրիչ: Գեղարվեստական գործվածքը ոչ միայն զարդարում էր հագուստն ու սենյակը, այլև կատարում էր յուրատեսակ սոցիալական ցուցիչի դեր, քանի որ դրա քանակը, որակը, տեսականին, զարդահամալիրը, կիրառման ոլորտները տարբեր էին քաղաքի բնակչության զբաղմունքին, կարողությանն ու կրթությանը համապատասխան:

Հիշյալ ժամանակաշրջանից հետո առանձնացված գործվածքի տեսակների դերն ու նշանակությունն աստիճանաբար նվազեցին, ինչը բերեց ավանդական գեղարվեստական արհեստների մասնակի դուրսմղմանն ու արհեստը կրողների կտրուկ նվազմանը: Դա պայմանավորված էր մի շարք գործոններով՝ քաղաքային նոր կենցաղի ձևավորումը, կանանց զբաղվածության վեկտորի փոփոխությունը (նրանց լայն ներգրավվածությունը ֆաբրիկա-գործարանային արտադրության մեջ), գործարանային արտադրության նույնանման իրերի ներթափանցումը շուկա և այլն:

Շիրակը Պատմական Հայաստանի գորգագործական ու կարպետագործական կենտրոնների թվում յուրահատուկ տեղ է գրավում: Հայտնի է, որ այս տարածաշրջանում այդ ոլորտն արդեն Բագրատունիների ժամանակաշրջանում գտնվում էր զարգացման բարձր մակարդակի վրա: Այստեղ ընդունված էին գորգերի ու կարպետների տեխնոլոգիական ու գեղագարդման այն սկզբունքները, որոնք այս կամ այն առանձնահատկություններով հանդերձ, հայտնի էին պատմական Հայաստանի պատմագագազրական բոլոր մարզերում: Այդ ավանդույթները տվյալ տարածաշրջանում այս կամ այն չափով

³ Բազեյան Կ., Անիի ասեղնագործության ու նրա ժառանգորդման շուրջ // Միջազգային գիտաժողով «Անին միջնադարյան Հայաստանի քաղաքական և քաղաքակրթական կենտրոն», Երևան, 15-17 նոյեմբերի, 2011, զեկուցումների ժողովածու, Երևան, 2012:

պահպանվել էին նաև խորհրդային տարիներին, և դրանց շատ արգասիքներ էլ, անշուշտ, կան նաև մեր ժամանակներում:

XIX դ.վ. - XX դարասկզբին Շիրակում ավելի լայն տարածում ուներ կարպետագործությունը, քան գորգագործությունը: Այս մասին վկայում են տարբեր աղբյուրներ: Ալեքսանդրապոլի մասին իր հուշերում Հ. Գյուլեցյանը պատմում է, որ «Գյումրիում կարպետ գործելն ավելի էր տարածված, քան գորգը գործելը: Կարպետները գործում էին զանազան ծաղիկներ, թռչուններ, զարդանկարներ արտահայտող նախշերով, հարմարեցնելով գույները: Պետք է ասել, որ բավականին լավ վարպետներ կային, որոնց աշխատանքները հիացմունք էին առաջացնում: Կարպետ գործող վարպետները գործում էին նաև փողով: [...] Կարպետը գյումրեցիների սենյակի զարդն էր համարվում, իհարկե, ամեն կերպ աշխատում էին վրան չնստել, չփռոտել, որքան հնարավոր է մաքուր պահել»⁴:

«Մուրճ» ամսագրի 1901 թ. 10-րդ համարում, որտեղ խոսվում է Կովկասի տնայնագործության մասին, գրված է «Այժմ Ալեքսանդրապոլի կարպետները իրանց նրբութեամբ, գույների ներդաշնակութեամբ ու դիմացկունութեամբ ամենայն համարձակութեամբ կարող են մրցել այդ տեսակի ամենալավ նմուշների հետ»⁵:

Շիրակի կարպետագործական կենտրոններին հիմնականում բնորոշ էին կարպետների հետևյալ տիպերին պատկանողները. *Բուսածաղկային* մանր հորինվածքներով կարպետներ, որոնց թվումն են «*նշանախշ*» ու «*կենաց ծառ*» նախշի տարբերակներով բնորոշվողները, որոնք ընդհանրապես ունեցել են համահայաստանյան տարածում ու հայտնի են եղել բազմաթիվ տարբերակներով: Շիրակում լայն տարածում ունեին նաև «*Գլաձոր*» կոչվող տիպին պատկանող կարպետները, որոնք բնորոշվում են շեղանկյունազարդով ու եզրերին պատկերված տերևանախշով կամ թռչնակերպ ոճավորումներով: Տարածաշրջանի կարպետագործական մշակույթի առանձնահատկությունները հատկապես նկատելի են այս խմբին պատկանող կարպետների *Բազմանիստ հորինվածքներով* բնորոշվող գեղազարդման համակարգերում: Շիրակի հայոց մշակութային համալիրների՝ XIX-XX դարերի նկարագրի ձևավորման հարցում որոշիչ դերակատարում են ունեցել 1830-ականներից սկսված ժողովրդագրական տեղաշարժերը: Դրանց արդյունքում Շիրակին բնորոշ կարպետագործական ավանդույթները լրացվեցին Բարձր Հայքից, Վանանդից, Վասպուրականի ու Տուրուբերանի հյուսիսային գավառներից ու այլ տարածաշրջաններից այդտեղ հաստատված հայերին ու էթնիկական այլ տարրերին բնորոշ համալիրներով: Ըստ այդմ էլ Շիրակը Ջավախքի, Վանանդի ու Բարձր Հայքի մի շարք գավառների կարպետագործական ավանդույթների հետ կազմում է մի ամբողջություն⁶:

⁴ Գյուլեցյան Հ., Գյումրի (Ալեքսանդրապոլ, Լենինական), տետր № 1, 1976, էջ 72 // Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրության բաժնի արխիվ, գործ 4/99:

⁵ «Մուրճ», 1901, № 10, էջ 226:

⁶ Պողոսյան Ա., Մուրադյան Տ., Շիրակի կարպետների տիպաբանության մասին // Պատմամշակութային ժառանգություն և արդիականություն» միջազգային գիտական նստաշրջանի զեկուցումների դրույթներ, Գյումրի, 2013, էջ 240:

Շիրակում ու հատկապես դրա կենտրոն Ալեքսանդրապոլ քաղաքում XIX դ.վ. – XX դարասկզբին ամենատարածված, պահանջված ու հարգի գեղարվեստական բանվածքի տեսակները ասեղնագործ ու ժանյակե իրերն էին, որոնք պատրաստում էին գերազանցապես կանայք ու աղջիկները: Ինչպես հիշում է Հ. Գյուլեցյանը, «Երբ աղջիկն արդեն 13-15 տարեկան է, նրան սովորեցնում են ձեռագործ անել կա՛մ մայրը, կա՛մ հարևանի ու բարեկամների աղջիկները: Ձեռագործ ասելով գյումրեցին հասկանում էր կանվայի վրա խաչկար, հարթակար, ցողունակար, թյակար՝ գունավոր կամ սպիտակ թելերով, հելունով զանազան հաշիաներ գործել: Այս տարիքից աղջիկները մոր հավաքած կոպեկներով գնած գունավոր մետաքս թելերով կարում կամ հելունով հաշիաներ են գործում, երեսսրբիչների, բարձի երեսների, շապիկների, կոֆտաների, թաշկինակների և այլնի համար՝ օժիտի և նվերներ տալու համար»⁷:

«Մուրճում» ևս հիշատակվում է Շիրակի ասեղնագործուհիների մասին. «Գեղեկուհիների մեջ կան և այնպես ասեղնագործներ, որ իրենց ձեռքի արվեստով կարող են զարմանք շարժել քաղաքի ամենալավ մետաքսի անկուածներ բանողին: Ասեղնագործության մեջ առաջին տեղը բռնում են ալաշկերտցի, մշեցի կնիկները»⁸:

Շիրակի ասեղնագործության մեջ կարելի է առանձնացնել երեք շերտ, որոնք տարբերվում են գործածված նյութերով, տեխնիկայով, զարդանախշերով ու կիրառման ոլորտներով: Դրանք են ավանդական-ժողովրդական, քաղաքային և վերնախավային ասեղնագործությունները⁹: Ավանդական ասեղնագործությունը, որ պահպանվել էր գյուղերում և քաղաքի արհեստավորական խավի մեջ, արվում էր խաչկարով, հարթակարով, թելքաշով: Այն կրում էր հայկական ասեղնագործության հնագույն գծերը և արմատներով հենված էր ժողովրդական ստեղծագործության վրա: Սրա մեջ է մտնում նաև ոսկեթել-ոսկեքող ասեղնագործությունը, ինչը կապված էր կանանց ավանդական տոնական հագուստի գեղազարդման հետ և Ալեքսանդրապոլում լայն տարածում ուներ: Ատրպետն այդ մասին գրում է. «... թանկարժեք թավիշների վրա ասեղնագործ գրակներ և թասակներ էին պատրաստում Ախալցխացի, Լենինականցի և Թիֆլիսեցի կիները, որոնք ճարպիկ առևտրականների ձեռքով հասցնում էին Ալեքսանդրիա, Գամիրք, Թունիս և Մարոք, ոսկի էին քաշում Կովկաս: Սրանց շարքին արդյունահանում էին նույնպես ոսկեթելով ծաղկված թավիշի երեսներով բաձկոններ, բաշմաղներ, որոնք նույնպես ապրուստ էին տալիս աշխատավորներին»¹⁰:

Քաղաքային ասեղնագործությունը նման է Հայաստանյան մյուս քաղաքների (Երևան, Շուշի, Նոր Բայազետ և այլն) նույն ժամանակների ասեղնագործությանը: Մա ավանդականի և նորի միացություն է, ուր համատեղ հանդես են գալիս ինչպես ժողովր-

⁷ Գյուլեցյան Հ., նշվ. աշխ., էջ 71:

⁸ Նիկողոսեան Ն. ք., Տպատրութիւններ Շիրակի գիւղերից // «Մուրճ», 1902, № 1, էջ 110:

⁹ Բազեյան Գ., Ասեղնագործությունը և ժանեկագործությունը Ալեքսանդրապոլի արհեստների համակարգում // ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 1, Գյումրի, 1997, էջեր 113-114:

¹⁰ Ատրպետ, Ինչ ժառանգեցինք, Լենինական, 1933, էջ 26 // Հայաստանի պատմության թանգարանի արխիվ, գ. 176 (ա):

դականը, համահայկականը, այնպես էլ արտաքին՝ ռուսական, եվրոպական քաղաքային մշակույթների ազդեցությունը: Դա դրսևորվել է այնպիսի կենցաղային իրերի բանվածքներում, ինչպիսիք են ծածկոցները, վարագույրները, սփռոցներն ու անձեռոցիկները: Սրանք պատրաստվում էին սպիտակ բամբակյա գործվածքից և ասեղնագործվում ու ժանեկազարդվում սպիտակ կամ բաց գույների բամբակյա ու մետաքսյա թելերով:

Ալեքսանդրապոլի ասեղնագործության երրորդ շերտը, որը շատ փոքր մաս է կազմում, արդեն անջատված է ավանդական-ժողովրդականից և արտաքին ազդեցության արդյունք է: Սա բնորոշ էր քաղաքային վերնախավին, որը, աշխատանքի կամ կրթության բերումով սերտ կապեր ունենալով եվրոպական ու ռուսական քաղաքների հետ, յուրացրել էր դրանց կենցաղին բնորոշ շատ երևույթներ, ուստի էականորեն տարբերվում էր տեղական ավանդական ասեղնագործությունից:

Ժանյակների վերաբերյալ պետք է ասել, որ Ալեքսանդրապոլում տարածված էին ասեղնագործ, հելունագործ և ավելի սակավ մեծ ու փոքր մաքրագործ և գլխիգործնակագործ ժանյակները¹¹: Ընդհանուր առմամբ նկատելի է, որ ասեղնագործ ժանյակը կիրառվում էր նուրբ, փոքրածավալ աշխատանքներում, իսկ հելունագործը՝ ինչպես փոքր, այնպես էլ խոշոր, հաստ ու մեծածավալ առարկաներ գործելիս: Այս մասին Ատրպետը գրում է. «Ժանյակի, օյայի գործը խիստ տարածված էր տնայնագործների մեջ: [...] Ամենանուրբ ոստայնը գործում էին ասեղով և կարթասեղով, որով զարդարում էին վզնոցները, կուրծքերը, յափուղների շրջապատը, շապիկների թևքերի շուրջը, նույնիսկ թաշկինակները»¹²:

Գորենակով հյուսում էին հիմնականում ժապավեններ՝ ներքնազգեստն ու սպիտակեղենը զարդարելու համար, իսկ փոքր ու մեծ մաքրքներով պատրաստում էին տարբեր չափերի ծածկոցներ, անձեռոցիկներ կամ առանձին փոքր դետալներ՝ տարբեր իրերն ու եվրոպական նորաձև հագուստը հարդարելու համար: Սրանք արվում էին գերազանցապես սպիտակ բամբակյա թելերով:

Յուրօրինակությամբ աչքի են ընկնում գունավոր մետաքսաթելերով ու ասեղով գործված ժանյակները, որոնցով զարդարվում էին կանանց գլխի ավանդական հարդարանքի մաս կազմող թանթանա-վարդը և դաջազարդ գլխաշորի եզրերը: Վարդը զարդարվում էր գերազանցապես ծաղիկներով, տերևներով, երբեմն նաև թռչուններով: Ծաղիկները կատարվում էին հնարավորինս ռեալիստորեն, բնական գույներով ու ձևերով: Միրված էին հատկապես մանուշակները, շուշանները, զանգակածաղիկները, վարդերը, նարգիզները, որոնք անպայման ամրացվում էին կանաչ ցողուններով և տերևներով կազմված դաշտի վրա: Որպեսզի ծաղիկները ամուր կանգնեն, թերթիկները չթուլանան և գեղեցիկ բացվածքով մնան, հաճախ դրանց հիմքում անցկացնում էին բարակ մետաղալար, որ փաթաթվում էր կանաչ թելով: Ծաղիկների ու տերևների եզրերում ամրացնում էին ձիու մազ, որ ժանյակը տեսքը չկորցնի: Այս ժանյակները աշխատանքի նրբության և բարդ ու աշխատատար տեխնիկայի պատճառով հասու չէին ամենօրին, ուստի

¹¹ **Բազեյան Կ.**, Ալեքսանդրապոլի ժանեկագործական մշակույթը // ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 6, Գյումրի, 2003, էջեր 110-115:

¹² **Ատրպետ**, նշվ. աշխ., էջ 29:

քաղաքում առանձնացել էին թանթանա գործող վարպետներ, որոնք հայտնի էին ինչպես Ալեքսանդրապոլում, այնպես էլ նրա սահմաններից դուրս:

XX դ. սկզբին ժանյակը լայնորեն սկսում է գործածվել քաղաքային բնակարանի ներսույթի հարդարման և եվրոպական նորաձև հագուստի մեջ: XIX դ. վերջից քաղաք մուտք գործած նորաձև կահույքն առաջացրեց ժանյակե և ժանեկազարդ իրերի նոր տեսակների՝ վարագույրների, ծածկոցների, սփռոցների, տակդիրների և այլ իրերի անհրաժեշտություն ու կիրառություն, կանանց եվրոպական հագուստում սկսեցին լայնորեն գործածվել ժանյակե օձիքները, թեզանիքները, ինչպես նաև ժանեկազարդ ներքնազգեստները:

Գեղարվեստական գործվածքի հաջորդ տեսակը, որն ավելի քիչ է հայտնի ու ավելի շուտ է դուրս մղվել տեղի բնակչության կենցաղից, կազմում են դաջազարդ իրերը: Դաջումը և ծաղկազարդումը բամբակյա գործվածքների զարդանախշման հնագույն եղանակներից էին: Առաջինը կատարվում էր փայտյա փորագրված նախշակադապարներով, որոնք մտցնում էին տարբեր գույների ներկերի մեջ ու տպում կտորի վրա, իսկ ծաղկազարդողները վրձիններով էին աշխատում՝ նուրբ ու մանր զարդանախշերը նկարելով գործվածքի վրա: Հայտնի էր նաև «տակառային» կամ «մոմուկ» տեսակը, որը կապույտ հիմնագույնով է՝ գեղազարդված սպիտակ կետանախշերով: Այս տեսակի դաջազարդ գործվածքները սովորաբար ներկվում էին ինդիգո ներկանյութով տակառների մեջ, նախապես մոմով վրան զարդանախշելով, որը եռացնելուց հետո հալվում էր՝ տեղում թողնելով սպիտակ պատկերներ¹³:

Խոսելով Շիրակում արտադրվող բամբակյա գործվածքների մասին, Ատրպետն անդրադառնում է նաև դաջազարդությանը՝ գրելով. «Նուրբ և լայն կտավի ավելի մեծ պահանջ կար դաջվածքների և չթեղենի (դալամբյար) համար: Կարսում հայտնի արհեստանոցներ ունեին Յաղջյանները իրենց դաճերով և Չթջոնք իրենց դալամբյարի կտորներով, որոնք 7 գույնի ներկերով ծաղկում էին չթերը»: Իսկ թե որքան էին դրանք արժևորվում շիրակցիների կողմից, դարձյալ փաստում է Ատրպետը. «Շավշիթի գյուղական պառավները իրենց դալամբյար շապիկները, զբունները և կուբաները տարիներով սնդուկներում ծավված պահում էին և իրենց թոռներին ու ծոռներին կտակում, որ պսակին հագնվեն, բաղդավորվեն և երջանիկ օրերի հասնին: Ընտիր դալամբյարները, որպես թալիսման ոչ միայն հարգվում, այլ պահանջվում էին նորինոր պսակվող դեռահասներից հատուկ պատգամավորներով, որպեսզի ամուսնացող դեռահասները բարի բաղդ-կյանք մտնեն, ծլեն ու ծաղկեն այդ հագուստի գեղանկար բույսերի, կոկոնների և վարդերի նման»¹⁴:

Գեղարվեստական գործվածքի վերոհիշյալ իրերի ողջ ճոխությունն ու բազմազանությունն արտահայտվում էր հատկապես օժիտում: Օժիտը պատրաստվում էր նախապես՝ մինչև ամուսնանալը, աղջկա կողմից, որի ձեռքով գործված, կարված, հյուսված ու ասեղնագործված իրերը վկայում էին նրա շնորհքի, վարպետության, ճաշակի

¹³ Մխիթարյան Ա., Հայոց ազգագրության թանգարանի դաջազարդ գործվածքի նմուշների գեղարվեստական հարդարանքը // «Էջմիածին», 2021, Ա, էջեր 117-138:

¹⁴ Ատրպետ, նշվ. աշխ., էջեր 10-11:

մասին, ինչը շատ բարձր էր գնահատվում հարսնացու ընտրելիս: Ալեքսանդրապոլի օժիտի լրակագնքը, որի նկարագիրը տվել է Հ. Գյուլեցյանը, ամբողջական պատկերացում է տալիս XX դ. սկզբի քաղաքային կենցաղում գործվածքի տեսականու ու դրա տոնածիսական նշանակության մասին:

«Աղջկան օժիտ էին տալիս բրդյա անկողին՝ մետաքս (քյաշանի) կամ ծաղկավոր շալ երեսներով, 2 մութաքա (կլոր, երկար բարձ) թավշյա կամ ձեռագործ երեսներով: Տալիս էին կոմոդ՝ ընկույզից պահարան դարակներով՝ հագուստը տեղավորելու համար, տալիս էին խալի կամ կարպետ (մեծ մասամբ կարպետ), վերարկու, բոլորովին նոր շրջագգեստներ 6-12 հատ, բրդյա և մետաքսյա կտորներ, սպիտակեղեն, նույնպես 6-12 ձեռք, անպայման ժանեկագարդ կամ ձեռագործով զարդարված, գուլպաներ՝ գործած (բրդից կամ բամբակից) նվերների համար (աղջիկ կար, որ դեռ 1 տարեկանը չըրացրած՝ մայրը, տատը և մյուս հարազատները սկսում էին գործել նրա օժիտի գուլպաները), բաղնեց չամաշուր (սպիտակեղեն)՝ ցամքոցը կամ շապիկը (խալաթ) և գլխեկապը, որոնք գործում էին հատուկ արհեստավորներ, եղակը կամ թասը՝ պղնձից, գլխներին ջուր լցնելու համար, նալիկներ ընկույզի փայտից պատրաստված, սադաֆով զարդարված: Տալիս էին քյաշանի բողշա՝ հագուստի համար, բաղնեց բողշա՝ սպիտակ կտորից, ժանյակներով զարդարված՝ սպիտակեղենի համար: Որպես օժիտ՝ աղջկան տալիս էին քյաշանի փեշտմալ (մետաքսից հատուկ կտոր էր, որ լողարանում կանայք փաթաթում էին): Օժիտի հետ դնում էին նաև կեսրանց համար նվերներ՝ վերնաշապիկներ, գուլպաներ, երեսարբիչներ, գլխի շալ և այլն»¹⁵:

Եզրահանգում. Այսպիսով, գեղարվեստական գործվածքը Շիրակի բնակչության կենցաղում կատարում էր առօրյա-կիրառական, գեղագարդման-գեղագիտական, տոնական-հարգարժան, ծիսական, էթնիկական գործառույթներ, որոնցով էլ կարևորվում է որպես ուրույն երևույթ ողջ մշակութային համալիրի մեջ:

ХУДОЖЕСТВЕННОЕ ТКАЧЕСТВО ШИРАКА В XIX- НАЧАЛЕ XX ВВ.

Базеян К. Р.

Ключевые слова: *Ширак, текстиль, ковер, ковры, вышивка, кружево, набойка.*

Ширак - один из исторических регионов Армении, где ткачество было развито с древнейших времен, о чем свидетельствуют археологические артефакты и исторические письменные источники. В течении последующих столетий художественное ткачество здесь достигло наивысшего расцвета. Ковры, ковры, вышитые и кружевные изделия стали самыми распространенными атрибутами повседневного и праздничного быта населения. В докладе рассматриваются все виды и типы художественного текстиля Ширака, и представляются их технические, стилистические и другие особенности в контексте сельского и городского быта населения.

¹⁵ Գյուլեցյան Հ., նշվ. աշխ., էջեր 32-33:

FABRIC OF ART OF SHIRAK IN XIX AND THE BEGINNING OF THE XX TH CENTURY

Bazeyan K. R.

Key words: *Shirak, textile, rugs, carpets, embroidered, lace, block-painting.*

Shirak is one of the historical regions of Armenia, where weaving has been developed since ancient times, as evidenced by artifacts and historical written sources. Over the next centuries, artistic embroidery reached its peak here. Rugs, carpets, embroidered and lace products have become the most common attributes of everyday and holiday ritual life of the population. The report examines all types of artistic textile of Shirak and presents their technical, stylistic and other features in the context of rural and urban life of the population.

Գ ր ա կ ա ն ո յ յ ո ն

1. Ատրպետ, Ինչ ժառանգեցինք, Լենինական, 1933, Հայաստանի պատմության թանգարանի արխիվ, գործ 176 (ա):
2. Բազեյան Կ., Անիի ասեղնագործության ու նրա ժառանգորդման շուրջ // Միջազգային գիտաժողով «Անիի միջնադարյան Հայաստանի քաղաքական և քաղաքակրթական կենտրոն», Երևան, 15-17 նոյեմբերի, 2011 թ., Զեկուցումների ժողովածու, Երևան, 2012:
3. Բազեյան Կ., Ասեղնագործությունը և ժանեկագործությունը Ալեքսանդրապոլի արհեստների համակարգում, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 1, Գյումրի 1997:
4. Բազեյան Կ., Ալեքսանդրապոլի ժանեկագործական մշակույթը, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 6, Գյումրի, 2003:
5. Գյուլեցյան Հ., Գյումրի (Ալեքսանդրապոլ, Լենինական), տետր № 1, 1976, էջ 72 // Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրության բաժնի արխիվ, գործ 4/99:
6. Մխիթարյան Ա., Հայոց ազգագրության թանգարանի դաջազարդ գործվածքի նմուշների գեղարվեստական հարդարանքը, «Էջմիածին», 2021, Ա:
7. Նիկողոսեան Ն. ք., Տպառություններ Շիրակի գիւղերից, Մուրճ, 1902, № 1:
8. Պողոսյան Ա., Մուրադյան Տ., Շիրակի կարպետների տիպաբանության մասին // Պատմամշակութային ժառանգություն և արդիականություն» միջազգային գիտական նստաշրջանի զեկուցումների դրոյթներ, Գյումրի, 2013: Տնայնագործությունը Կովկասեան ցուցահանդեսում, Մուրճ, 1901, № 10:
9. Хачатрян Т. Древняя культура Ширака. Ереван. -1975.
10. Орбели И. А. Избранные труды. Ереван. -1963.

Ընդունվել է՝ 20. 09. 2021

Գրայնություն է՝ 22. 10. 2021

Հանձնվել է տպ.՝ 15. 11. 2021

Տեղեկություններ հեղինակի մասին

Կարինե ԲԱԶԵՅԱՆ՝ պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ., ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի ավագ գիտաշխատող, ՀՀ ԿԳՄՄՆ «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի գիտահետազոտական բաժնի պետ, էլ. հասցե՝ bazeyan60@mail.ru

ԼԵՆԻՆԱԿԱՆԸ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՔԱՂԱՔ
ԴԱՌՆԱԼՈՒ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ
(«մարդկանց ձայները» որպես ուսումնասիրության աղբյուր)

Վարդուհի Մելքոնյան

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

Բանալի բառեր՝ պարբերական մամուլ, Խորհրդային Միություն, արդյունաբերական քաղաք, բանվոր, արհեստներ, ֆաբրիկա, առօրեականություն, «մարդկանց ձայներ», ազգագրական հետազոտություն, արդյունաբերություն:

Աշխատանքում 1920-1930-ական թթ. իրականության զարգացումների մասին դիտարկումներ են արվում մարդկանց պատմությունների և «մարդկանց ձայների» միջոցով¹ ներկայացնելով ոչ թե այդ ժամանակահատվածում Լենինականի քաղաքային իրականությունը, այլ Խորհրդային իրականության ընկալումը և դրա հանրայանցումը: Ցավոք, այսօր արդեն սահմանափակ են խնդրո առարկայի վերաբերյալ ազգագրական նյութեր գրառելու հնարավորությունները: Հատուկենտ են այն բանասացները, որ դեռ հիշում են ու կարող են ներկայացնել 1920-30-ական թթ. Առօրեականությունը, քաղաքային կյանքը:

¹ Ժամանակակից մարդաբանական հետազոտություններում մեծ տեղ է հատկացվում case study մոտեցմանը: Այս մեթոդով անհատների կամ առանձին դեպքերին առնչվող պատմությունների ուսումնասիրություններով կարելի է հանգել ընդհանուր եզրակացությունների: Մանրամասն տե՛ս Starman A. B., The case study as a type of qualitative research // Journal of contemporary educational studies, Medvode, Slovenia, pp. 28-43; Case Studies and Theory Development in the Social Science. Cambridge: MIT press,-2005.

Գիտարկվել է մասնավորապես 1920-30-ական թթ. սկզբի, այսինքն՝ նախապատերազմյան շրջանի պարբերական մամուլը՝ ի դեմս քաղաքային «Բանվոր» թերթի նյութերի²: Ընդ որում, չնայած նրանցում գաղափարախոսական-քարոզչական տարրի ցայտուն առկայությանը³, այնուամենայնիվ բազմաթիվ հրապարակումներում կարելի է տեսնել ազգագրական տեսանկյունից խիստ ուշագրավ ու կարևոր նկարագրություններ: Ակնհայտ է, որ կատարվածի սահմաններում հնարավոր չէ ներկայացնել մամուլի նյութերն ամբողջությամբ, ուստի ներկայացվել և վերլուծվել են հիմնականում այն նյութերը, որոնք առավելագույնս համահունչ են սույն աշխատանքի խնդիրների շրջանակին, վերականգնվում և ներկայացվում է այն ժամանակաշրջանը, երբ Լենինականը արհեստագործական քաղաքից անցում էր կատարում արդյունաբերական քաղաքի⁴ իր բազմաթիվ հիմնախնդիրների ծանր բեռը շալակին:

Նախաբան. «Բանվոր» թերթի 1930թ. 145-րդ համարում կարդում ենք. «Հնում Լենինականը եղել է հողագործական, մանր առևտրական քաղաք, որտեղ արդյունաբերությունը կենտրոնացած էր փոքրիկ արհեստանոցներում և մի երկու գործարանում՝ գարեջրի, օձառի, լիմոնադի, աղյուսի, որոնց բանվորների ընդհանուր թիվը 180-ից չէր անցնում: Իսկ գավառում ջրաղացներից ու ձիթհանքերից բացի այլ «արդյունաբերություն» չկար:

Մի քանի տարվա համառ աշխատանքը նկատելիորեն փոխեց քաղաքի դեմքը՝ առաջին հերթին զարգացնելով արդյունաբերությունը»⁵: Մասնավորապես խթանվեց տեքստիլ արդյունաբերությունը, ինչի շնորհիվ այդ տարիներին Լենինականը դարձավ Հայաստանի տեքստիլ արդյունաբերության խոշոր կենտրոն⁶: Վերջինիս կազմակերպման համար բոլոր նախադրյալները կային, մասնավորապես՝ բարձրորակ հումքի առկայությունը, Լենգեսից էժան էլեկտրաէներգիայի մատակարարումը, և ամենակարևորը՝ չկար բանվորական ուժի խնդիր՝ պայմանավորված էր Շիրակի խիտ բնակեցվածությամբ, թե՛ Լենինականում բազմահազար հայ որբերի առկայությամբ⁷:

Թերթի համարներից մեկում կարդում ենք. «Տեքստիլում այժմ աշխատում է 3400 բանվոր, որոնցից մոտ 20-30 տոկոսը ընտանիքավոր են, իսկ մյուսները որբեր են և մենակներ»⁸: Համեմատության համար նշենք, որ մանվածքի գործարանում ևս 1927-1928 թթ. աշխատում էր շուրջ 2000 բանվոր՝ հիմնականում որբանոցների սաներից⁹:

² Տե՛ս «Բանվոր», իմբ. Ա. Հախումյան, Լենինական, 1923-1990 թթ.:

³ Schudson M. Discovering the News. New York. -1978.

⁴ Մանրամասն տե՛ս Կոզմոյան Կ., Լենինական, Երևան, 1957: Գաբրիելյան Հ. Կ., Լենինական, Երևան, 1984:

⁵ Ա. Հ., Արդյունաբերությունը Լենինականի գավառում, «Բանվոր», 1930, №145, էջ 2:

⁶ Բոյաջյան Ա.Գ., Լենինականի տեղական արդյունաբերությունը և արհեստագործական արտելները // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 13, 2010, էջ 144:

⁷ Հակոբյան Հ.Հ., Լենինականի տեքստիլ կոմբինատի պատմությունից. Կոմբինատի հիմնադրումը և առաջին քայլերը // «Բանվոր», 1930, էջ 13:

⁸ Գևորգյան Թ., Մննդի գործը Լենինականի տեքստիլ գործարանում // «Բանվոր», 1930, № 81, էջ 3:

1920-1930-ական թթ. Լենինականի զարգացող արդյունաբերությանը բազում խոչընդոտներ էին խանգարում, դրանց թվում՝ մի շարք տեխնիկական խնդիրներ, որոնք իրենց հետ բերում էին բարդություններ: «Բանվոր» թերթի 1930թ. 59-րդ համարում կարդում ենք. «...գործարան ընդունվեցին 140 նոր և անորակ բանվորներ, որոնք սկզբնական շրջանում ոչ միայն չբարձրացրին արտադրությունը, այլև ավելացրին բրակի քանակը»¹⁰: Մատնացույց էր արվում նաև այն հանգամանքը, որ ոչ միայն բանվորները, այլև ղեկավարները չէին արդարացնում իրենց, և առաջարկվում էր առաջին հերթին քաղաքականապես վերակրթել մարդկանց¹¹:

Հաջորդ հրատապ ու ցավոտ խնդիրը բանվորների կացության հարցն էր: Նշվում է, որ թեև հանրակացարանում տեղավորել են 200 բանվորի, սակայն «...տեղը նեղվածք է, սանիտարական դրությունն անմխիթար վիճակում է գտնվում: Ճաշարանը ևս սանիտարական անմխիթար դրության մեջ է: Խմորեղենի փուռը նույնպես հակասանիտարական վիճակում է»⁸:

«Տեքստիլին կից ֆաբրործուսում բանկոռայի բացած ճաշարանը խայտառակ սանիտարական պայմաններում է: Փլավի գլխով առնվազն 2-3 գիշեր է անցել, իսկ սովուզ կոչված ճաշն անտանելի է: Եթե տեղի աշխատակից Հայկուշին հարցնես, թե ինչու է ճաշի որակը վատ, կոպտաբար կպատասխանի՝ մեր ճաշն այսպիսին է, կուզես՝ կեր, կուզես՝ ջայնմին»¹²:

Մյուս չափազանց կարևոր խնդիրը, որին բազմաթիվ անդրադարձումներ կան «Բանվոր» թերթի 1930 թվականին համարների գերակշռող մասում, փչացած կամ անորակ ապրանքին է վերաբերում: «Բանվոր»-ի 111-րդ համարում կարդում ենք. «Գործվածքային գործարանում 2-3 վարպետներ կան, բայց բրակ ռովնիցիաներին հաշիվ չկա: Մանավանդ անգլիական կորպուսում բրակն ավելի շատ է: Այս բրակներին և թափթփվածությունը պետք է վերջ տալ, հատուկ միջոցներ ձեռք առնել»¹³:

Թերթի 128-րդ համարում առաջարկվում են նոր եղանակներ ու արդյունավետ միջոցներ կորուստների դեմ պայքարելու համար: Այսպես, տեքստիլի արտադրական միավորումներում կազմակերպվում են կորուստների դեմ պայքարող շտաբներ: Կորուստների դեմ պայքարելու համար աշխատանք է տարվում նաև ակումբում, ուր կազմակերպվում է կորուստների նմուշների ցուցահանդես: Անգամ կազմակերպվել է երեկո, ուր 40 բանվորներ տեխնիկական հարցերին ճիշտ պատասխանելու համար նվերներ են ստացել: Կորուստների դեմ պայքարն ավելի ընդլայնելու համար առաջարկվել է հանրակացարաններում և գործարաններում ընդմիջումների ժամանակ տանել բացատրական աշխատանքներ¹⁴:

⁹ Գևորգյան Թ., նշվ. աշխ., էջ 4:

¹⁰ Տեխնիկական անհարմարությունները խանգարում են տրիկոտաժին // «Բանվոր», 1930, № 59, էջ 3:

¹¹ «Բանվոր», № 86, էջ 2:

¹² Զ. Գևորգ, Բանկոռայի ճաշարանում // «Բանվոր», 1930, № 96, էջ 3:

¹³ Ուղարնիկ, Բրակը շարունակվում է տեքստիլում // «Բանվոր», 1930, № 111, էջ 3:

¹⁴ «Բանվոր», 1930, № 128, էջ 2:

Նույնատիպ կորուստները առկա են նաև մանարանում: «Մի ամիս է, ինչ մանա-րանի համար բամբակ է ստացվել, բայց մինչև այժմ մնում է դուրսը՝ քամու և անձրևի տակ և փչանում է, բացի այդ՝ օրական 2-3 ֆուտ բամբակ պակասում է՝ քամու հետևանքով: Ոչ ոք չի մտածում բամբակը կամ ծածկելու, կամ ուրիշ տեղ տեղափոխելու մասին»¹⁵: «Երկար ժամանակ բացօթյա վիճակում մնացած բամբակը թրջվելուց հետո փչացումից ազատելու համար տախտակե միածածկ պատրաստեցին, որտեղ թաց-թաց իրար վրա դարսեցին բամբակի 50 տոկոսը միայն: Այդ բամբակը Տաճկաստանից է ստացված և պետք է ուղարկել Մոսկվա: Մակայն պրեսիրովկա չանելու պատճառով մնաց տեքստիլի վրա»¹⁶:

Զնայած բազմաթիվ ահազանգերին ու թղթակիցների մտահոգություններին՝ «Բանվոր»-ի №128-ից պարզվում է, որ կորուստների դեմ պայքար չկա: «Մտիր տեքստիլի մանվածային գործարանը, այստեղ դու կտեսնես գետնին թափթփված մաքուր բամբակի կտորներ, կտրված ժապավեններ ու ռովնիցաներ: Այս բոլորը ոտնատակ են գնում, յուղոտվում են և իբրև կեղտոտված ու արժեքազուրկ թափթփուկ, ուղարկում են պահեստ. բացի դրանից կեղտոտված ու յուղոտված ձեռքերը սրբում են ժապավենով ու ռովնիցայով, ինչից արտադրությունը դարձյալ տուժում է: Դուք հաճախ կտեսնեք թափթփված ու ջարդված վիճակում շպալներ ու բանկաբրոշի բազմաթիվ կոճեր, որոնք արժեն յուրաքանչյուրը 5-16 կոպեկ: ...Սրանք վերացնելը հեշտ է. հարկավոր է միայն գիտակից վերաբերմունք ցույց տալ դեպի աշխատանքը»¹⁷: Նույնն է պատկերը նաև մանվածքային գործարանում, ուր մեքենաների հազարավոր մասեր են կուտակել, հետո կտուրից ցած են նետել իբրև սև հաց հանձնելու համար¹⁸:

Այդ տարիներին մամուլում ամենաշատ բարձրաձայնված խնդիրը թերևս բանվորների հոսունությունն էր: «Բանվոր» թերթի 1930 թվ. համարների մեծ մասում կարելի է գտնել հոդվածներ այդ ցավոտ հարցի մասին: Մասնավորապես նշվում էին հոսունության պատճառները, իսկ դրանք տարբեր էին՝ սկսած նրանից, որ երեխաներին մանկապարտեզ չեն ընդունում, վերջացրած արձակուրդի հարցով: Բանն այն է, որ արձակուրդից հետո շատերը չէին վերադառնում, քանի որ այդ ընթացքում գնում էին աշխատելու Գյանջայի, Բաքվի, Թիֆլիսի գործարաններում, որտեղ բանվորական ուժի մեծ կարիք կար, դրա պատճառով աշխատավարձն ավելի բարձր էր, բացի դրանից՝ այնտեղ աշխատանքի կարգապահությունն ավելի ընկած էր¹⁹: Շատ բանվորներ, վերադառնալով այս գործարաններից իրենց նախկին աշխատավայրեր, «այնպես էին աշխատում, որ վարչությունը ստիպված էր նրանց աշխատանքից հեռացնել»²⁰:

¹⁵ Պապիկյան Լ., «Բանվոր», 1930, № 83, էջ 2:

¹⁶ Ավետիսյան Ն., Կորուստներ և թափթփվածություն մանարանում // «Բանվոր», 1930 № 128, էջ 2:

¹⁷ Մկվորցով Ի., Մեծ կորուստներ և թափթփվածություն մանվածքային գործարանում // «Բանվոր», № 131, էջ 2:

¹⁸ Ավետիսյան Ն., «Բանվոր», 1930, № 128, էջ 2.;

¹⁹ Ղազարյան Ս., «Բանվոր», 1930, №180, էջ 2:

²⁰ Սահակյան Գրիշա, վարպետ, «Բանվոր», 1930, № 180, էջ 2:

Գործվածքային գործարանի կառավարիչ ինժեներ Մաթևոսյանն այս առումով նշում էր. «Գործվածքային գործարանում նույնպես բանվորական ուժի հոսունություն է նկատվում: Դա երևաց արձակուրդից հետո: Մեր պլանների թերակատարման պատճառներից մեկն էլ պետք է համարել եղանակ: Թե՛ խոնավությունը, թե՛ արևի ճառագայթները բացասական դեր են կատարում: Պլանը կազմելիս մենք այդ հանգամանքը հաշվի չենք առել: Արտադրության անկումը որոշ չափով պետք է բացատրել բամբակի վատ որակով, որն անդրադառնում է կոմբինատի 3 գործարանների՝ մանարանի, գործվածքային և տրիկոտաժի արտադրանքի քանակի և որակի վրա: Վատ որակի բամբակը մեծացնում է բրակը, իսկ այս վերջինը զցում է արտադրանքի քանակական և որակական ցուցանիշները»²¹:

Բանվորական հոսունությունը կանխելու համար խորհրդային ղեկավարությունը սկսում է նոր բանվորական կադրերի պատրաստման աշխատանքներ տանել: Ընդ որում, վերցնում էին հիմնականում կանանց և Ստեփանավանի մանկատան երեխաներին²²: Կար նաև այլ վտանգավոր պատճառ. դա այն էր, որ շատ արտադրամասերում բանվորների նկատմամբ ցուցաբերվում էր արհամարհական մոտեցում, սրան գումարվում էին անորակ մեքենաների վատ աշխատանքը և ցածրորակ հումքի առկայությունը, և այս ամենը իրար հետ՝ հանգեցնում էր հոսունության²³: Դրա մասին «Բանվոր»-ի մեկ այլ համարում կարդում ենք. «Վարիչը չափից դուրս կոպիտ է վարվում բանվորների հետ, եղել են դեպքեր, որ քիչ է մնացել վեճ սարքի»²⁴:

Եզրահանգում. Այսպիսով, 1920-1930-ական թթ. Լենինականը կամաց-կամաց արհեստագործական քաղաքից վերածվում էր արդյունաբերական քաղաքի ու այդ դժվարին ճանապարհին ստիպված էր լուծելու իր առջև ծառայած բազմաթիվ խնդիրներ՝ հմուտ բանվորներ պատրաստելուց մինչև աշխատանքի նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի ձևավորումը: Այս խնդիրները բարձրաձայնելու ամենաարդյունավետ միջոցը դարձավ պարբերական մամուլը՝ վերածվելով իշխանությունների լավագույն հենարանի: Հենց նրա նյութերի՝ «մարդկանց ձայների» միջոցով (case study մեթոդ, որը լավագույնս է ներկայացնում ազգաբնակչության տեսանկյունից կարևոր հիմնախնդիրները) վերականգնելով 1920-1930-ական թթ. խորհրդային իրականության ընկալումը և նրա հանրայնացումը՝ արծարծեցինք ընդամենը մի քանիսն այն հիմնախնդիրներից, որոնք բարձրաձայնում էր մամուլն այդ տարիներին՝ անտարբեր վերաբերմունք պետության գույքի և ունեցվածքի նկատմամբ, ձեռնարկությունների ղեկավարների արհամարհական վերաբերմունք բանվորների նկատմամբ, կադացող կարգապահություն, բանվորների հոսունություն և այլն: Ահա այն խնդիրներից՝ արատավոր երևույթներից մի քանիսը, որոնք պետությունը փորձում էր այդ տարիներին շտկել մարդկանց ձայների միջոցով:

²¹ «Բանվոր», 1930, № 180, էջ 2:

²² Նույնը:

²³ Նույնը:

²⁴ **Վերոյան Թ.**, Մանդի գործը Լենինականի տեքստիլ գործարանում // «Բանվոր», 1930, № 81, էջ 3
Մանրամասն տե՛ս «Բանվոր», 1930, № 86, էջ 2:

**В ПУТИ ПРЕВРАЩЕНИЯ ЛЕНИНАКАНА
В ПРОМЫШЛЕННЫЙ ГОРОД
(голоса людей как источник исследования)**

Мелконян В. Г.

Ключевые слова: *периодическая печать, Советский Союз, промышленный город, рабочий, ремесло, фабрика, голос народа, повседневная жизнь, этнографические исследования, индустрия.*

В 1920-1930-ых годах, когда Ленинакан постепенно превращался из ремесленного города в промышленный, ему приходилось решать ряд стоящих перед ним проблем. Они были разнообразными: начиная с подготовки опытных рабочих, заканчивая ответственным отношением к работе и т.д. Лучшим инструментом для постановки и решения этих вопросов стала периодическая печать, когда страна пыталась решать свои проблемы голосом народа.

**THE WAY OF LENINAKAN'S BECOMING AN INDUSTRIAL CITY
(People's Voices as a Source of Study)**

Melkonyan V. G.

Key words: *periodical press, Soviet Union, an industrial city, worker, crafts, factory, the voices of the people, daily life, ethnographic research, industry.*

In 1920-1930, when Leninakan was slowly turning from a craft city into an industrial one, it had to solve a number of problems. And they ranged from creating skillful workers to the responsible attitude towards their work. The best tool for raising these issues was the periodical press, when the Soviet Union was trying to solve its problems through the voices of the people.

Գ Ր Ա Կ Ա Ն Ա Յ Ո Ւ Ն

1. «Բանվոր» քաղաքային թերթի 1923-1930թթ համարներ:
2. Բոյաջյան Ա.Գ., Լենինականի տեղական արդյունաբերությունը և արհեստագործական արտելները // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 13, 2014:
3. Գաբրիելյան Հ. Կ., Լենինական, Երևան, 1984:
4. Կոզմոյան Կ., Լենինական, Երևան, 1957:
5. Брукс Д. «Людей, которые не читают газет, надо морально убивать на месте». СПб. -2006.
6. Schudson M. Discovering the News. New York. -1978.
7. Starman A. B. The case study as a type of qualitative research // Journal of Contemporary Educational Studies. Medvode, Slovenia, pp. 28-43; Case Studies and Theory Development in the Social Science. Cambridge: MIT press.-2005.

Ընդունվել է՝ 13. 09. 2021

Գրախոսվել է՝ 21. 10. 2021

Հանձնվել է տպ.՝ 15. 11. 2021

Տեղեկություններ հեղինակի մասին

Վարդուհի ՄԵԼԿՈՆՅԱՆ՝ ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի ասպիրանտ /ազգագրագետ/, էլ. հասցե՝ varduhi.melkonyan93@mail.ru

**CHILDLORE AND CHILDREN'S FOLKLORE
IN THE UK AND IN ARMENIA
(Historical and Current Perspective)**

Robert McDowall

The Folklore Society, UK

Hasmik Matikyan

Shirak Center for Armenological Studies of NAS RA

Key words: *childlore, communication, collection, nursery, childlore themes, traditions, play, covid, Ethnography.*

This paper provides a retrospective view of Childlore and Children's Folklore, the major themes in its history, developments and concludes with reflections on the current environment in the UK and Armenia. The survey provides a guide for future research on aspects of childlore outlined in this paper. The first part of the paper is presented by Robert McDowall, former president of the Folklore Society (UK). Hasmik Matikyan, researcher at Shirak Center for Armenological Studies of NAS RA, studies Children's Folklore in Armenia.

Introduction: Childlore is an aspect of folklore. Childlore is the culture of children and young people (sometimes over rigorously defined as those between the ages of 6 and 15 years of age.) The repertoire of Childlore has expanded since the inception of the notion in 17th/18th Century. The repertoire includes games, riddles, rhymes, jokes, pranks, superstitions, magical practices, wit, lyrics, guile, epithets, nicknames, torments, parody, oral legislation, seasonal customs, tortures, obscenities, codes, as well as individual activities such as solitary play, daydreaming, fantasies, imaginary and heroes, collections, scrapbooks, model worlds, comic reading, mass media interests, dramatizations, stories, art. Childlore examines the activities which are learned and passed on by children to other children. The stories and games taught by adults to children are not considered Childlore, except insofar as the children adapt and make them their own. In western culture most folklorists are concerned with children after they join elementary school or kindergarten. The traditions of childhood are considered to cease when the child enters intermediate school, which, theoretically at least, coincides with puberty and adolescence.

The brief history of the development of Childlore in the UK

Childlore is a distinct branch of folklore that deals with activities passed on by children to other children, away from the influence or supervision of an adult. Children's folklore contains artifacts from all the standard folklore genres of verbal, material and customary lore. Children teach, learn and share their own traditions, flourishing in a street culture outside the view of adults. The social group of children is studied on its own terms. The culture of children is quite distinctive; it is generally unnoticed by the sophisticated world of adults, and not really affected by it. Songs, rhymes, poems, games and other children's pursuits have existed since Roman and Greek times—they appear in the plays of the Roman playwright, Terence for example. Playwrights, Ben Jonson, in *Masque of Oberon* and William Shakespeare in *A Midsummer Night's Dream* continued that tradition. However, the first documented compilation in modern times appears to be the publication by Newsberry Publishing of "Mother Goose's Melody" and "Sonnets for the Cradle," the first known publication of the collection of Mother Goose rhymes in 1780. The publication was described as a compilation of traditional English nonsense nursery rhymes and songs. Each had its own black and white illustration and came from a variety of sources. The term 'Mother Goose' has been linked with traditional children's nursery rhymes and songs in the English speaking world ever since. The term 'Mother Goose rhymes' is interchangeable with nursery rhymes. The term originates from the early 1600s in relation to a collection of stories in a monthly periodical from a French critic, Jean Loret's "*La Muse Historique*." This periodical contains the earliest reference to Mother Goose in the line "Comme un conte de la Mere Oye" translated into "Like a Mother Goose story."

Recording/collecting and consolidating Childlore gathered pace in the 19th Century. In the early 19th century printed collections of rhymes began to spread to other countries, including Chambers *Popular Rhymes of Scotland* (1826) and *Mother Goose's Melodies*. This period times is the origins and authors of rhymes. "Twinkle" which combines the melody of an 18th-century French tune "*Ah vous dirai-je, Maman*" with a 19th-century English poem by Jane Taylor, entitled "The Star" used as lyrics.

Early folk song collectors also often collected (what are now known as) nursery rhymes. They include Scotland's Sir Walter Scott. The first, important academic collection to focus on Childlore was James Orchard Halliwell's *The Nursery Rhymes of England* (1842) and *Popular Rhymes and Tales* in 1849. He divided rhymes into antiquities (historical), fireside stories, game-rhymes, alphabet-rhymes, riddles, nature-rhymes. By the time of the publication of Sabine Baring-Gould's *A Book of Nursery Songs in 1895* containing places and families, proverbs, superstitions, customs, and nursery songs (lullabies). Folklore was an academic study, full of comments and footnotes. A professional anthropologist, Andrew Lang (1844–1912) produced *The Nursery Rhyme Book* in 1897.

Childlore collections were compiled through observation, capture and documentation of Childhood activities and games by: a) *Direct communication* – the communication of the players/participants in the game is direct, 'face to face', by verbal and nonverbal means. Direct communication enables spreading of the game via individual players or the whole group; b) *Anonymous authors* – individual authors of the children's group games are unknown, but it can be concluded that several generations have participated in creating these games. The exact time of creation of the so called original game forms cannot be precisely determined; c) *Oral communication* – the players communicate none verbally by gesturing and performing the game physically and verbally. The game spreads by participation, imitation and verbal communication; d) *Mutual communication* – mutual communication among the players is a prerequisite for the

game to take place. One player quits the game if communication with the other players ceases; e) *Informal distribution* – the games are not distributed by a body or collective. They are created and distributed spontaneously. Some elements of the children's folklore can be copied and distributed by the adults, usually teachers, but those elements can be lost in the spontaneous communication of the children; f) *Performance*– the whole way of conducting games, from the preparation activities to the playing itself, with or without props, are a form of performance; g) *Public aspect* – the majority of the games are conducted in the open spaces, which are usually parks and playgrounds in their neighbourhoods, school fields, beaches, streets; h) *Collectivist* - the games represent the collective property of the small children's groups and forms a part of their culture. Children's games are a representation of the collective identity of the children.

The forms and contents of children's games have been established by cultural and social patterns. The content itself may be construed as symbolic communication between society and the participants in the games. Contents of the games, as with most games, do not represent a medium only between the society and its members, but also among the members themselves. Through their communication process transmission of the games occurs through the same generation group and intergenerationally. During the transmission the contents do change as new elements are introduced, which transform or reduce the content. The qualities of the games and their creation define children's games as a folklore form.

Preschool education is one of the most important stages in personal development. It is the period when children find their place in the world. They start to play different social roles at a time of development of their identity and self-concept. The children learn to evaluate themselves from different positions and opinions as friends, as persons, as son, daughter, brother and sister and so on. Self-perception and perception of other is more and more meaningfully. Preschool education is the time of arbitrary and mediate memory development which is the foundation for developing eye-mindedness. Preschool education is also a starting point for further development of speaking skills. Children of preschool education begin to use language in their cognitive activity. The development of preschool children speaking skills occurs under the influence of adult through parents, nursery teachers, grandparents. It is very important how people speak around a child and what he or she listen to. In this situation it is not necessary to reinvent the wheel; something new in methods to develop children's speaking skills. It is simply to take into account the experience of generations.

Major contributors to development of collections of Childlore in the UK

Historically, the major contributors to the development of the study of Childlore were Alice Gomme and Iona and Peter Opie. More recently, there have been contributors, whose work we acknowledge, below. There have also been wider contributions to Childlore on a contemporary basis from the USA but as this paper is focussed on UK contributions we have not elaborated on overseas contributions.

Alice Gomme (1852-1938)

“Alice Bertha Gomme was a founder member of the Folk-Lore Society and a member of its Council from 1912 to her death at the age of 86 in 1938. From 1883 to 1936, she contributed articles and notes on topics ranging from material culture to aetiological legends, custom to folk medicine, in the pages of *The Folk-lore Journal* and *Folk-Lore*, and lectured widely. She was a founding and Committee member of the Folk-Song Society and also the author of a number of popular books on children's games, some of which are still in print today. With her husband, Laurence Gomme, she wrote an accessible but academically uncompromising introduction to the study of British folklore, folksongs and singing. The Gommess thought that folklore was a science:

rigorous academic standards should be applied within it. The study's intellectual basis determined that cultures evolved like biological species, carrying traditions, 'survivals in culture'. Using comparative methodology associated with cultural evolution, the studies used evidence of practices and beliefs derived from historical and contemporary cultures at 'lower stages of the cultural progression'. The evidence and practices and beliefs determined the 'original' form and function of contemporary traditions in 'advanced', European societies. The founders of the Folklore Society believed that through the application of this theory and method, uniquely among academic disciplines, folklore could provide scientifically based evidence of the psychology of early man, in the study of philosophy, religion, science and medicine, in social organization and ceremonial, or in the more strictly intellectual regions of history, poetry and other literature. Fortunately these hubristic notion of folklore have failed to stand the test of time!

Iona Opie CBE(1923 –2017) and Peter Opie(1918 – 1982)

Iona and Peter Opie were a husband-and-wife team of English folklorists. They are best known for the numerous books they published on children's culture, including nursery rhymes and songs (1951, 1997b), school-aged children's language, verbal play, custom and belief (1959), outdoor games (1969), musical play (1985), and outdoor games with playthings (1997). Iona Opie published a selection of the notes she made during weekly observations of playtimes at her local school in Hampshire (1993). Through their work, the Opies helped to establish childhood culture as a serious field of study. Meticulously researched and accessibly written, these books have become classics, widely read by scholars, teachers, students and the general public.

The Opies were enthusiastic collectors. Over their lives they built one of the world's largest collections of children's books and printed ephemera, which comprise children's literature from the 16th to the 20th century. The Opie Collection of Children's Literature was left to the Bodleian Library in 1988. But for their research in children's culture the Opies not only relied on books published for children. They also wanted to collect the oral traditions of childhood – the rhymes, songs and games, the language and customs of the playground – and, quite a new approach at the time, they wanted to collect these *from the children themselves*.

Steve Roud (born 1949)

Steve Roud is best known as the creator of the Roud Folksong Index. He is Honorary Librarian of the Folklore Society. His book "The Lore of the *Playground*" looks at the games children have enjoyed, the rhymes they have chanted, and the rituals and traditions they have observed over the past hundred years and more." "From conkers to marbles, from British Bulldog to tag, not forgetting "one potato, two potato" and "eeny, meeny, miny, mo, each generation has had its own favourites. Some pastimes, such as skipping, have proved remarkably resilient, their complicated rules carefully handed down from one class to the next. Many are now the stuff of distant memory, and some traditions have proved to be strongly regional, loved by children in one part of the country, unknown to those elsewhere.

Sheffield University

The **Childhoods and Play** project undertakes research into the Opies and the collection and supports projects which involve the Opie materials. **Childhoods and Play** is a long-term project publicise and improve the accessibility of the Iona and Peter Opie archival collection by making the research materials contained in it freely accessible for research and public engagement. Established in 2012, the project is a collaboration between the University of Sheffield, University College London, the Bodleian Libraries, the Folklore Society and the British Library. It has the status of a British Academy Research Project, a kite mark of academic excellence for major infrastructural projects and research facilities. It will result in a digital

resource which brings the distributed elements of the Opie Archive together via a common search interface and allows them to be browsed and searched to item level, such as an individual rhyme, song, game, belief, custom or saying. The resource will serve a diverse audience, including academics across a range of disciplines, schools, community groups, reminiscence groups and the general public. It will include search and browse facilities, user guides, bibliography, information on the historical context of the collections, a crowdsourcing interface for transcription. Professor Jack Marsh of the University of Sheffield and Professor Andrew Burn of University College, London established the project but have now retired. Dr Yinka Olusoga at the University of Sheffield and Professor John Potter take the project forward, joining Dr Julia Bishop who continues in her role as joint Co-Director.

Major themes in the development of Childlore in the UK including regional variations

This table provides a useful but not exclusive analysis of Childlore by age and activity categorisation

<i>Early ChildhoodLore</i>	<i>School-Age Lore</i>	<i>Games</i>
<i>Bogey Warnings and Moralistic Stories</i>	<i>Calls, Cheers, Chants, and Yells</i>	<i>Ball-Bouncing, Hopscotch, and Rope-Skipping</i>
<i>Nursery Chants</i>	<i>Defiance and Retorts</i>	<i>Choosing and Counting-Out</i>
<i>Nursery Games</i>	<i>Humorous Narratives, Modern Topical Verses, and Songs</i>	<i>Jacks, Marbles, and Mumble Peg</i>
⁸ Մալխասեանց Ս., Հայերեն բացատրական բառարան, հ. 1, էջ 263, Հայկական ՍՍՌ Պետհրատ., Երևան, 1944:

⁹ Պատկանյան Ռ., Երկեր, Երևան., «Սովետական գրող», 1980, էջ 89:

¹⁰ Նույն տեղում, էջ 79:

խաբերական: *Գոտին կապել*-ը համագոր է գոտեպնդվել, գոտեմարտի պատրաստ լինել իմաստներին: Մեջբերենք հետևյալ դարձվածքային կապակցությունները *գոտի(կ)* բառային միավորով. 1. *մեջբին այսինչ գոտիկը կապել*- այսինչի վիճակին անցնել, իբրև այսինչ մեջտեղ ելնել, 2. *գոտիկը վրա կապել/բրբ/-* իր ներսը պահել, 3. *գոտին լայն կապել*- լավ ապրուստ ունենալ, այդպիսի ապրուստի հասնել¹¹:

Նժույգ ձի բառային երկմիավորով առավել է սաստկանում պայքարի մեկնելու ոգին:

Ակներև է, որ հեղինակային վերը բերված տեքստի գրական կերպարը ընդհանրություն ունի Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի գլխավոր հերոսի՝ Աղասու հետ. «Թուրքերը նրա անունը լսելիս լեղապատառ էին ըլում: Շատ անգամ, կոհիվ քցած վախտը հենց նրա ձեռքն իմանում էին թե չէ, ճանձի պես ցրվում, դես ու դեն էին կորչում, գյում ըլում: Ավելին անունը Ասլան բալասի էին դրել»¹²:

Հայ միջնադարյան քնարերգության մեջ Պաղտասար Դպիրի՝ «Ի ննջմանեղ» տաղը հայրենիքի հանդեպ անսահման սիրո ու գովքի արտահայտություն է, նաև զարթնումի պատգամ.

Ի ննջմանեղ արքայական

Էհաս նշոյլն արեզական,

Ջարթի՛ր, նազելի իմ, զարթի՛ր,

Ջարթի՛ր, նազելի իմ, զարթի՛ր»¹³

Ջարթի՛ր, նազելի իմ, զարթի՛ր-ը՝ որպես կրկնակ տող, առանցքային, գաղափարակիր տող է:

Շնորհալու գրչարվեստը ևս հարուստ է արթնացումի տեքստերով.

Ջարթի՛ք, փա՛նք իմ, զարթի՛ք,

Մանկունք վերինն Միռնի. ալելուիա:

Եւ ես զարթեայց առաւօտուց. ալելուիա:

Ջարթի՛ք ընդ զուարթունս,

Ջարթի՛ք և մի՛ ննջեք՝

Նման յիմար կուսից նիրհեք. ալելուիա¹⁴:

Օրորոցային տեքստերում *արթնանալ* բայն ունի բացառիկ իմաստավորում. օրոր երգողը բառային տարբեր կիրարկումներով է հյուսում իր խոսքը՝ երեխային քնից հետո արթուն տեսնելու մեծագույն ցանկությամբ, ինչպես բանահյուսական օրորի այս պատառում.

Քե դնեմ օսկի ուրուրոց,

Շուտով քնես, բարով զարթնես,

Վերեղ քաշեմ մարկրտե ծածկոց.

Իմ վարդ որդի, խուկուտ եմ ես¹⁵:

Ժողովրդական ընկալմամբ երկար քունը վտանգավոր է՝ շուտ է հոգնեցնում, թմրեցնում: Այս առիթով նշենք՝ *քունը քուն կրերե* արտահայտությունը, որը հաճախ նույնացվում է մեծ քնին՝ մահվանը:

¹¹ **Բեդիրյան Պ.**, Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, ԵՃ հրատ., Երևան, 2011, էջ 353:

¹² **Աբովյան Խ.**, Վերք Հայաստանի, Երևան, ԵՃ հրատ., 1981, էջ 62:

¹³ Հայ հին և միջնադարյան քնարերգություն (կազմ.՝ **Ս. Ս. Հակոբյան, Է. Պ. Չալիկյան**), «Լույս», Երևան., 1987, էջ 387:

¹⁴ Նույն տեղում, էջ 158:

¹⁵ **Գրիգորյան Ռ.**, Հայ ժողովրդական օրորոցային և մանկական երգեր, Երևան, Հայկ.ՍՍՀ ԳԱ հրատ., 1970, էջ 59:

Բանասացներից Շուշի Թումանյանը¹⁶ մեզ հետ ունեցած մասնավոր զրույցում հասկանալի է. «Օրորոցային երգերը հանգստանալու լուսազոյն միջոցն է թե՛ փոքրիկիս, թե՛ ինձ համար: Երգելով մեր հինավուրց օրորները միաժամանակ նաեւ վերլուծում եմ երգերի բառերը՝ փորձելով հասկանալ մեր նախնեաց յոյզերը: Ի վերջոյ ամէն օրորոցային նախեստաջ յոյզերի շղթայ է, որն անմիջականօրէն փոխանցում է ձագուկին երգողի ձայնի ելեւէջներով: Օրորոցային երգը նաեւ հանդարտեցնում է մօր կամ երգողի փոթորկայոյց հոգին եւ անգամ մտահոգիչ դրվագներ նկարագրող երգերից երեխային փոխանցում միայն դրականը, որի արդիւնքում էլ երեխան քնում է: Նման մի օրինակ է Սասնա օրորոցայինը, որի մէջ այսպիսի բառեր են հնչում՝ «...ասկեար բռնէ սարեր բոլոր, հայոց հարսներ մացին մոլոր»: Այսպիսով պարզ է դառնում երգող մօր հոգեվիճակը: Վստահաբար, մայրը երգել է իր ցաւը՝ ցաւը պահելով իրէն, իսկ երգը՝ որպէս ողենորոգիչ ուժ փոխանցել ձագուկին: Ժամանակի ընթացքում եւ էլ սկսեցի երգել իմ հոգեվիճակն ու սրտիս ասելիքը իմ փոքրիկին: Եւ ստացուեց այնպէս, որ օրինակ յայտնի «Ղուրի» օրորոցայինի երաժշտութիւնը իմ երգում նաեւ այլ բառապաշարով արտայայտուեց»:

«Հէյրուր, հէյրուր, բուրի կենիմ իմ ձագուկին, Բուրի կենիմ, դուն բուրենաս,
Իմ անդրանիկ քաջ զաւակին, հէյրուր, հէյրուր, Դուն պստիկ իս քաջ այր մեծնաս,
Ազգիդ արժան Ձինուոր դառնաս:

Բանասացը զրույցի ընթացքում առանձնացրեց. «Մեծ սիրով եւ ամէն օր երգում եմ նաեւ Անդրանիկ Աթովանցի բառերով եւ իմ երաժշտութեամբ այս օրորոցայինը»:

Քնի՛ր հանգիստ, զաւակս, Որ թեւերդ ամբանան,
Քնի՛ր դու անուշ քնով, Թեւաթափը մոռանան:
Քնի՛ր, քնով զօրացիր, Քնի՛ր հանգիստ, զաւակս,
Որ յաղթես ամէն խնդիր: Հոգուդ աչքերը բացիր,
Քնիր հանգիստ, զաւակս, Քո էութեան խորքերի
Քնից զօրութիւն քաղիր, Իմաստութեամբ թարմացիր:

Օրորասացը օրորոցային երգելով երեխային կոչ է անում ոչ թե քնել, այլ խոսել ու «ոտքի կանգնել»: Բանաձևային մտածողությամբ, մասնավորապէս փաղաքուշ խոսքերով է տեքստը առանձնանում՝ *ծենիտ մատաղ, ջանիտ մատաղ*.

Մուրազ ունեմ եւ քեզ տալու,բալա ջան, *Խոսա, խոսա, ծենիտ մատաղ, այ՛բալա*,
Առանց քեզի ման չեմ կյալու,բալա ջան, Լավ եւ կաղնել, *ջանիտ մատաղ*, ջան՛բալա¹⁷:

Վերոնշյալ օրորի վերջնատողերում օրոր երգողը օգտագործում է *զարթնիր* բառամիավորը, որը ենթադրաբար դառնում է փակող բանաձև.//*Չարթնիր տենամ որդի՛ ես քնել*//Ա՛յ բալանե՛, ա՛յ բալանե՛, ա՛յ բալա՛//:¹⁸

¹⁶ Բանասաց՝ Շուշի-Շուշան Թումանեան. ծնուել է 1988թ. Լոռուայ Շնողում: Կրթութիւնը՝ բարձրագոյն, գերմանագէտ է: Նախնիներից մօրական կողմը Մուշ-Բայազետից է գաղթել ռուս-թուրքական պատերազմին (1877-78թթ.) եւ հաստատուել Քուչակում, իսկ հօրական կողմը Կողբ գիւղից է: Հօր պապը որդեգրուել է Շնողի Թումանեանների կողմից (գրառումը իմն է – Հ.Մ.):

¹⁷ Հայ ազգագրութեան և բանահյուսութեան (կազմ.՝ Է. Խեմչյան), հ. 21, Տավուշ, ՀՀ ԳԱԱ հնագիտութեան և ազգագրութեան ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ «Գիտութեան» հրատ., 2000, էջ 215:

Բառային կրկնաբանությունը (*ա՛յ կանչի բացականչությամբ*), սաստկական երանգ է տալիս, ամբողջ պատկերը գծագրվում է:

Հայ մեծերը հեղինակային օրորներով, ռազմի ու հայրենասիրական երգերով պատգամ են թողել սերունդներին վաղվա օրը լույսով դիմավորելու բարեկամեցողությամբ:

Ռ. Պատկանյանը այն տեսակետին էր, որ հայ ժողովրդի հոգեկան կերտվածքը և ազգային բնավորությունը պետք է մշակել այդ ժողովուրդը կազմող անձանց մանուկ հասակից: Մանկան դաստիարակությունը նրա համար մի կողմից՝ ազգային հոգեբանության դաստիարակություն էր, մյուս կողմից՝ հասարակական մարդու, կատարյալ քաղաքացու դաստիարակություն¹⁹: Ռ. Պատկանյանի *Արի՛, իմ սոխակ* օրորոցայինը արթնացում տեքստի բացառիկ օրինակ է.

Թո՛ղ որսըդ, արի՛, քաջասի՛րս բազե, *Բազեն որ եկավ՝ որդիս լըռեցավ,*
Քու երզը գուցե իմ որդին կուզե... *Ռազմի երգերի ձայնով քընեցավ:*

Ռազմի երգի ձայնով է սնվում երեխան, ռազմերգով է սնվում: Ըստ էության, այս օրորը նույնպես արթնացումի տեքստ է. քիչ հավանական է, որ ռազմի երգերի ներքոնը տիրի երեխային:

Հովհ. Շիրազի բանարվեստում, ինչպես արդեն նշեցինք, ուրույն տեղ ունի օրոցքի և օրորի նկարագիրը՝ որպես արթնացումի բացառիկ դրսևորում: Այս տեսանկյունից մեջբերենք հեղինակի *Նոր բալիկս (Միփանին)* բանաստեղծությունից պատառներ.

Նոր ձագս ուրիշ է, *օրոր մի՛ ասա,* *Իմ նորաբարուրը՝ և՛ ըմբոստ, և՛ խեղճ,*
Չես տեսնում՝ բարուրը կտրատում է սա, *Ասես ծուռ Մհերն է Վանա ժայռի մեջ*²⁰:

Ազգային մեծ բանաստեղծն օգտագործում է խոսքը, ասելիքը ոճավորելու հնչյունական ու պատկերավորման ամբողջական համակարգ՝

Իմ ձագը թեկուզ մոր օրորն ի՛նչ կանի, *Ժեռ բարուր բալիկս Մհերն է փոքրիկ,*
Օրորը կապանքից Մհեր չի հանի, *Իմ ազգի լեռ բարուր պատկերն է գողտրիկ*²¹:

Առաջին տողում նշված *մոր օրորն ի՛նչ կանի* ասույթը խորքային է՝ բացառիկ ասելիքով. մոր օրորը միշտ մեղմ է, հանգիստ ու անրջուն:

Չարթոնք բառը դառնում է պատգամ-բանաձև շիրազյան նշված բանաստեղծության մեջ.

Օրոցքը շատ նեղ է, դուրս կուզե թռչել, *Շատ դարեր քնեցինք, զարթոնքից խոսա,*
Շղթայված *զարթոնք* է բարուրի մեջ էլ... *Նոր բալիկս ուրիշ է, օրոր մի՛ ասա,*
Օրորի դար չէ, ստինքդ հանիր՝ *Չարթոնքի կայծակե սուրբ կաթով սնիր*²²:

Բանաստեղծը երկու իմաստամերձ բայերով՝ *զարթոնում է, զարթոնք է բերում*, մատնանշում է իր երազանքը՝ զավակին տեսնում է հայոց սուրբ լեզվի կրող, պահպանող և Վանա ու Սևանա ծովերն իրար միացնող.

Բալիկս *զարթոնում է, զարթոնք է բերում,* *Դու քնացնում ես, նա զարթոնում է, թո՛ղ,*

¹⁸ Նույն տեղում, էջ 216:

¹⁹ Մկրտչյան Վ., Ռափայել Պատկանյան, Երևան, «Հայաստան» հրատ., 1966, էջ 4:

²⁰ Շիրազ Հ., Իմնոց մանկությունը, Երևան, «Հայաստան» հրատ., 2012, էջ 28:

²¹ Նույն տեղում, էջ 28:

²² Նույն տեղում, էջ 28:

Ժպտում է Մասիսը լացող աչքերում... Քեզանից խելոք է բալիկս *զարթնող*...²³

Նշենք կարևոր մի մեկնություն. *զարթնելը* գործընթաց է, իսկ *զարթոնքը*՝ եղելություն, իրողություն, որը արդեն վիճակ է... *Չարթնում է, զարթնել* հնչյունային բառախաղը՝ հարանունների կիրարկմամբ, ունի նաև հակադրություն այս պատկերի մեջ, *դու քնեցնում ես, ինքը զարթնում է*:

Թալինի բանահյուսական օրորի տեքստը ձևավորվում է հարսանեկան կարևոր բաղադրիչով՝ *կանաչ-կարմիր գոտիով*.

Էլե՛ք, լաո՛, ձիեր հեձնինք, Տու բզդիզ իս, պարով մեձնաս, հարս տառնաս...
Էրտանք հրսնինք Սուրմալու, Էլե՛ք, լաո՛, ձիեր հեձնինք,
Քանաճ-զարմիր կողի պերիս՝ Էրտանք հասնինք Մուշ, Մասուն,
Մախսպոր գուլբանդ զարեղու: Էրտանք ի դես՝
Օրոր ըսիս, շորոր ըսիս քնենաս, Մըր սարերուն սիրուն...՝²⁴

Ինչպես նկատելի է, գրական միջավայրում զարթնումի տեքստերը բավականին տարողունակ են ու տարածական:

Պ. Սևակի *Օրորոցային* բանաստեղծության մեջ օրորի՝ հանգստություն ու քուն բերող նկարագիրը կա.

Գիշերային մութը միշտ էլ քուն է բերում:

Եվ ահա ես՝

-Քնե՛ք,- ձեզ եմ ասում մոր պես,

-Քնե՛նք,- ինձ էլ խառնում եմ ձեզ:

-Քնե՛նք,

Որ զուր չմտածենք ծանր ու բարակ,

Որ մեզանից պոկենք ամեն մի ստորում,

Մեր բարձի տակ ճիւղենք ամեն խոկում ու խոհ:

Քնե՛նք, թեպետ ըստ առածի՝

Մեկ է, իբրը, մեռել ու քուն:

Բանաստեղծության հաջորդ տողերում զարգանում է արթնացման պահանջը.

-Քնե՛ք ուրեմն,- ասում եմ ձեզ,-

Որ արթնանաք:

Արթնանալը շատ պետք է ձե՛զ,

Մե՛զ՝

Ամենքի՛ս...

Այսպիսով՝ *զարթնել* և *զարթոնք* բառերը տեքստերի հյուսվածքում միահյուսվում են՝ դառնալով ցանկության բանաձև, կոչ, հորդոր՝ կորսված հայրենիքը հետ բերելու միտումով:

²³ Ծիրագ Հ., նշվ. աշխ., էջ 28:

²⁴ Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 19, Թալին/Ռ. Խաչատրյան/, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1999, էջ 150:

Եզրահանգում. Ամփոփելով նշենք, որ բանահյուսական և հեղինակային օրորների համատեքստում բավականին մեծ թիվ են կազմում արթնացում բովանդակող տեքստերը, որոնք լեզվական տեսանկյունից նոր խոսք ու ասելիք ունեն: Կան օրորերգի տեսակներ, որոնք զարթնումի, վերելքի ուղեծիրով են առանձնացվում: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերնագրային մակարդակում կան օրորներ, որոնք չեն հիշվում/նշվում որպես օրորերգ, սակայն միջավայրը վկայում է օրորերգ լինելը:

КОЛЫБЕЛЬНАЯ КАК ПРОБУЖДАЮЩИЙ ТЕКСТ

Матикян А. Г.

Ключевые слова: *колыбельная, автор, рассказчик, фольклор, колыбель, сон, формула, контекст, текст.*

В статье колыбельная представлена как пробуждающий текст. Мы выбрали колыбельные, носящие пробуждающий характер. Речь относится к смысловым пластам армянских колыбельных, которые удерживают взор ребенка в центре внимания Родины, злых сил, окружающего мира. И армянский фольклор, и литературная среда переплетаются с такими колыбельными текстами. Следует отметить, что колыбельные для пробуждения имеют явные и неявные способы выражения. Рассматриваются «пробуждающие» языковые элементы (զարթնի՛ր).

LULLABY AS AN AWAKENING TEXT

Matikyan H. H.

Key words: *lullaby, author, narrator, folklore, cradle, sleep, formula, context, text.*

The paper presents the lullaby as an awakening text. We have selected the lullabies, that are of awakening nature. The speech refers to the semantic layers of Armenian lullabies that keep the child's eye into focus on the motherland, evil powers, the surrounding world. In essence, both Armenian folklore and literary environments are interwoven with such kind of lullaby texts. It should be mentioned that awakening lullabies have explicit and implicit ways of expression. The paper dwells upon the 'awakening' linguistic elements (զարթնի՛ր).

Գ ր ա կ ա ն ու թ յ ու ն

1. Արովյան Խ., Վերք Հայաստանի, Երևան, ԵՃ հրատ., 1981:
2. Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, «Հայաստան» հրատ., հ.1, 1976:
3. Բեդիրյան Պ., Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, ԵՃ հրատ., Երևան, 2011:
4. Գրիգորյան Ռ., Հայ ժողովրդական օրորոցային և մանկական երգեր, Երևան, Հայկ.ՍՍՀ ԳԱ հրատ., 1970:

5. Խրիմյան Հայրիկ, Դրախտի ընտանիք, Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2011: Կոմիտաս, Երկերի ժողովածու, №3, Խմբերգեր / (Խմբ.՝ Ռ. Ա. Աթայան). Երևան, «Հայաստան» հրատ., 1969:
6. Հայ ազգագրություն և բանահյուսություն, (Ռ. Գրիգորյան), հ. 14, Գեղարքունիք, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1983:
7. Հայ ազգագրություն և բանահյուսություն, (Ռ. Խաչատրյան), հ. 19, Թալին /, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1999:
8. Հայ ազգագրություն և բանահյուսություն (կազմ.՝ Է. Խեմյան), հ. 21, Տավուշ, ՀՀ ԳԱԱ Հայ ազգագրություն և բանահյուսություն (կազմ.՝ Է. Խեմյան), հ. 21, Տավուշ, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2000:
9. Հայ հին և միջնադարյան քնարերգություն (կազմ.՝ Ս. Ս. Հակոբյան, Է. Պ. Չալիկյան), «Լույս», Երևան., 1987:
10. Մալխասեանց Ս., Հայերեն բացատրական բառարան, հ. 1, էջ 263, Հայկական ՍՍՌ Պետհրատ., Երևան, 1944:
11. Մկրտչյան Վ., Ռափայել Պատկանյան, Երևան, «Հայաստան» հրատ., 1966:
12. Շիրազ Հ., Երկեր, հ. 4, Երևան, «Սովետական գրող», 1986:
13. Շիրակ Երգարան. 50 -ամեակ, կազմող եւ խմբագիր Կարապետ Հաննէսեան, Պէրոյթ, 2010:
14. Պատկանյան Ռ., Երկեր, Երևան., «Սովետական գրող», 1980:

*Ընդունվել է՝ 29. 09. 2021
Գրախոսվել է՝ 22. 10. 2021
Հանձնվել է տպ.՝ 15. 11. 2021*

Տեղեկություններ հեղինակի մասին

Հասմիկ ՄՄՏԻԿՅԱՆ՝ բանասիրական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտություններն կենտրոնի գիտաշխատող, Շիրակի պետական համալսարանի անգլերեն լեզվի և գրականության ամբիոնի դասախոս, էլ. հասցե՝ hasvrej@mail.ru

Ա Ր Վ Ե Ս Ս Ա Բ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
ИСКУССТВОВЕДЕНИЕ
ART STUDIES

ՀՏԴ՝ 7.072.2

DOI: 10.52971/18294316-2021.3-246

ԴԱՆԻԵԼ ԹԵ՞ ԹԵԿՂԱ. ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՂՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՔԱՆՂԱԿԻ
ՄԻ ՀՈՐԻՆՎԱԾՔԻ ՏԱՐԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐԸ

Զարուհի Հակոբյան

Երևանի պետական համալսարան

Բանալի բառեր՝ Դանիել, Թեկղա, Պողոս առաքյալ, կոթողներ, վաղմիջնա - դարյան, քանդակ, Կեչրոր, Հառիճ, Եղվարդ, Ավան, Մեքենացիներ:

Հոդվածը նվիրված է պատմական Հայաստանի վաղմիջնադարյան քառանիստ կոթողների վրա հաճախ հանդիպող մի հորինվածքի քննությանը, որի բովանդակությունը՝ նույն պատկերազրական սխեմայի առկայության դեպքում, կարող է լինել տարբեր: Դա աղոթողի դիրքով կանգնած և առյուծներով շրջապատված ֆիգուրն է: Պատկերազրական վերլուծությունը ցույց է տալիս, որ նշված հորինվածքում կարող են ներկայացված լինել ինչպես Դանիել մարգարեի, այնպես էլ Մբ Թեկղա նախավկայի հրաշալի փրկության պատմությունները, որոնք լավ հայտնի են եղել վաղքրիստոնեական արվեստում:

Նախաբան. Հայկական վաղմիջնադարյան քանդակում հաճախ է հանդիպում մի հորինվածք, որտեղ աղոթողի դիրքով կանգնած ֆիգուրը շրջապատված է առյուծներով: Այն անվերապահորեն մեկնաբանվել է որպես Դանիել մարգարեն առյուծների գբում հինկտակարանային պատմության վերարտադրություն¹: Նման հորինվածքների թիվը քառանիստ կոթողների վրա անցնում է մեկ տասնյակից՝ գերազանցելով հինկտակա-

¹Ազարյան Լ., Դանիելի պատկերազրությունը միջնադարյան Հայաստանի քանդակում // ՀՄՄՀ ԳԱ արվեստի ինստիտուտի գիտական նստաշրջան (առանձնատիպ), Երևան, 1970, էջեր 1-5; Мнацаканян Ст. Рельефные изображения и символика Даниила в мемориальной пластике Армении раннего средневековья // ВОН. -1977. № 6. сс. 48-64; Ժամկոչյան Ա., Դանիելի և Հովնանի պատկերազրությունը միջնադարյան քանդակում // Աստվածաշնչական Հայաստան (կոնֆերանսի նյութեր), Երևան, 2005, էջեր 662-670:

րանային թեմաներով այլ պատկերները (օր.՝ Աբրահամի գոհաբերությունը, Երեք մանկունք հնոցում են): Երկու կողմից առյուծներով շրջապատված աղոթողի կամ օրանտայի պատկերներ կան հետևյալ վայրերից գտնված կաթողների վրա. Ավան, Մասնաշեն, Աբովյան, Էլար (արխիվ), Եղվարդ, Հառիճ, Նահապետավան, Մուղնի, Մեքենոցավանք, ինչպես նաև Ագարակ, Կեչոր և Կարս (Արևմտյան Հայաստան)², Ուսնետի (Վրաստան)³ են:

1. Ինչու՞ Թեկղա, ո՞վ է Թեկղան

Այն, որ նման հորինվածքները թերևս կարող են ներկայացնել մեկ այլ կերպար, օրինակ Սբ Թեկղային, առաջին անգամ նշել է Ա. Ղազարյանը՝ Էջմիածնի մայր տաճարի հին քանդակներին նվիրված իր աշխատության մեջ⁴: Եվ իսկպես, արվեստաբանական քննությունը ցույց տվեց, որ հարցադրումը ճիշտ էր, իսկ Սբ Թեկղայի կերպարը թե՛ գրականության, թե՛ կերպարվեստում մեզանում քաջ հայտնի է եղել:

Հարավկովկասյան տարածաշրջանում Սբ Թեկղայի պատկերի միակ օրինակը մինչ օրս համարվել է Էջմիածնի մայր տաճարի հյուսիսային պատին ագուցված քանդակը, որտեղ սրբուհին պատկերված է իր ուսուցչի՝ Պողոս առաքյալի առջև (համարվում է Վդ. սկիզբ), և որտեղ հունարենով տրված են նաև նրանց անունները: Թեկղայի այս պատկերագրությունը հանդիպում է մի շարք այլ հուշարձաններում, օրինակ, դատական Էլ-Բագավատ նեկրոպոլիսի Խաղաղության մատուռի որմնանկարում (V-VI դդ.), Հռոմի Մանտա Մարիա Անտիկվա եկեղեցու մարմարե սրակոֆագին (III-IV դդ.)⁵:

Ով՞ էր Սբ Թեկղան (կամ Թեկղին), և ինչպե՞ս է նրա կերպարը առնչվում Հայաստանին: Հայտնի է, որ սրբուհու պաշտամունքը լայն տարածում ուներ Փոքր Ասիայում (նա կոչվում էր Իկոնիայի Թեկղա) և Սիրիայում (Մելեկիա, Անտիոք): Նաև հայտնի է, որ Մերիամիկում (Փոքր Ասիա) էր գտնվում նրան նվիրված Այաթեկլա մեծ եկեղեցական համալիրը՝ խոշոր ուխտագնացության կենտրոնը (IV,VI դդ.)⁶: Սրբուհու մասին պատմող աղբյուրը «Գործք Պողոս առաքյալի» մաս հանդիսացող «Գործք Պողոս առաքյալի և Թեկղայի» գրվածքն է, որ ստեղծվել է հունարեն դեռ II դ., բայց պահպանվել է ավելի ուշ՝ ասորերեն խմբագրությամբ, որից էլ Վդ. առաջին կեսին թարգմանվել է հայերեն՝ որ-

² Thierry J. M., Donabédian P. Les Arts Arméniens. -Paris. -1987. fig. 192, 194: **Գրիգորյան Գ.**, Հայաստանի վաղ միջնադարյան քանանիստ կոթողները, Երևան, 2012, նկ.նկ. 7, 143, 175, 189, 221, 223, 255 (բ), 257; **Ժամկոչյան Ա.**, Դանիելի ..., նկ.նկ. 1-6:

³ Чубинашвили Н., Хандиси. Тбилиси. -1972. сс. 107-108. Таб. 79.

⁴ Казарян А. Кафедральный собор Сурб Эчмиадзини восточнохристианское зодчество IV-VII веков. М. -2007. сс. 48-67: **Ղազարյան Ա.**, Թեկղա նախավկայի և Պողոս առաքյալի պատկերները Էջմիածնում // Աստվածաշնչական Հայաստան (կոնֆերանսի կյութեր), Երևան, 2005, էջեր 653-661:

⁵ Semoglou A. Η Θέκλα στην αυγή του Χριστιανισμού: εικονογραφική μελέτη της πρώτης γυναικας μάρτυρα στην τέχνη της Ύστερης Αρχαϊότητας [Thècle à l'aube du christianisme. Une étude iconographique de la première femme martyre dans l'art de l'Antiquité Tardive], Thessaloniki, -2014, fig. 6, 12.

⁶ Pilhofer Ph., Das frühe Christentum im kilikisch-isaurischen Bergland. Die Christen der Kalykadnos-Region in den ersten fünf Jahrhunderten, Berlin-Boston, -2018, pp. 218-227; Kristensen T. Meryemlik, Gathering and the Archaeology of Pilgrimage // Identity and Cultural Exchange in Ancient Cilicia. New Results and Future Perspectives (ed. A. Cortes), Wiesbaden,- 2020, pp. 138-156.

պես «Թեկղի Գործք» (կամ «Պատմություն վարուց Սրբոյն Թեկղեայ»)՝: Հարկ է նաև նշել, որ նույն սրբուհու վարքը երկրորդ անգամ հայերեն է թարգմանվել արդեն XI դ. հունարեն մեկ այլ խմբագրությունից և կոչվել է «Թեկղի հրաշքք»⁸: Մա վկայում է մեզանում սրբուհու հանդեպ ունեցած մեծ հետաքրքրության մասին և ոչ միայն: Ինչպես ցույց է տվել Վ. Կայցուլարին, բացի վարքի թարգմանությունից, այս տեքստը բացառիկ նշանակություն է ունեցել միջնադարյան հայկական գրականության ձևավորման համար, քանի որ աղբյուր է հանդիսացել Սբ Հռիփսիմեի⁹, ինչպես նաև Թադեոս առաքյալի ու Մանդուխտ կույսի մասին¹⁰ պատումների ստեղծման: Ինչպես փաստում է գիտնականը, Թեկղայի վարքի առանձին հատվածներ պարզապես ներմուծվել են ազգային նշված վարքեր: Բացի այդ, սրբուհու մասին խոսվում է նաև Ազաթանգեղոսի և Փավստոս Բուզանդի Պատմություններում¹¹: Այս ամենը կարևոր նախադրյալներ են եղել Հայաստանում Սբ Թեկղայի պաշտամունքի տարածման և արվեստում նրա կերպարի ի հայտ գալու տեսանկյունից:

2. Թեկղայի պատկերագրական տարբերակները վաղմիջնադարյան արվեստում

Վերը նշված էջմիածնի մայր տաճարի հորինվածքը Թեկղայի մասին պատմող տեսարաններից գեթ մեկն է: Մակայն վաղորդիստոնեական և վաղրյուզանդական արվեստում հայտնի են եղել նրա վարքը լուսաբանող այլ տեսարաններ ևս: Համաձայն վարքի ընդունելով Պողոս առաքյալից նոր հավատը, Թեկղան ենթարկվել է բազմաթիվ փորձությունների՝ մահապատժի, բայց ամեն անգամ հրաշքով փրկվել է: Նրա համբավը այնքան մեծ էր, որ նրան անվանում էին առաքելուհի, նախավկա, Սբ կույս: Սբ Թեկղայի վարքի կուլմինացիոն պահերից է այն, երբ նրան մահապատժի համար նետում են գիշատիչներով լի կրկեսի հրապարակը: Այս կարևոր դրվագը պատկերագրորեն արտահայտվել է «Սբ Թեկղան գիշատիչների հետ» տեսարանում, ուր սրբուհին նույն օրանտայի դիրքով կանգնած է երկու գազանների՝ առյուծների (հանդիպում են նաև

⁷ Ալիշան Ղ., Վարք եւ վկայաբանութիւնք սրբոց հատրնտիր քաղեալք ի ճառընտրաց, հ. 1, Վենետիկ, 1874, էջեր 513–531; Calzolari V. Apocrypha armeniaca I: Acta Pauli et Theclae, Prodigia Theclae, Martyrium Pauli// Corpus Christianorum. Series Apocryphorum. 20, Brepols. -2017. pp. 124–157.

⁸ Calzolari V. Un nouveau texte arménien sur sainte Thècle: Les Prodiges de Thècle (Présentation et analyse linguistique) // Revue des études arméniennes. 25. -1996–1997. pp. 249–271.

⁹ Calzolari V. Le sang des vierges et le plan de Dieu. Réflexions à partir de l'ancienne historiographie arménienne ancienne (V^e siècle ap. J.-C.) // Victimes au feminine (eds. A.A. Nagy, F.Prescendi), (L'Équinoxe). Genève. -2011, pp. 181–182; eadem, The Legend of St. Thecla in the Armenian Tradition: from Asia Minor to Tarragona through Armenia // Thecla: Paul's Disciple and Saint in the East and West (eds. J.W. Barrier et al.). Leuven. -2017. pp.286–289.

¹⁰ Կայցուլարի Վ., Պատմութիւն սրբոյ Թեկղի եւ վկայաբանութիւն Ս. Թղեոսի եւ Մանդխտոյ կուսին. Համեմատութիւն եւ բնագրական նկատողութիւններ // Բանբեր Մատենադարանի, 21, 2014, էջեր 63–77; Calzolari V. Les Acts de Paul et Thècle et le Martyre de Thaddée et Sanduxt arméniens: phénomènes d'intertextualité et rôle des femmes // “Muséon”. 128. 2015. pp. 381–414.

¹¹ Փավստոս Բուզանդ, Պատմություն հայոց (թարգ, ներ., ծանոթ. Մտ. Մալխասյանցի), Երևան, 1968, էջ 154; The Lives of Saint Gregory. The Armenian, Greek and Syriac Versions of the History Attributed to Agathangelos (ed.R.W. Thomson), Michigan, -2010, pp. 256; Calzolari V., De sainte Thècle à Anahit: une hypothèse d'interprétation du récit de la mort de l'empereur Valens dans les *Byzandaran Patmut'iwnek* // Armenian Perspectives (ed. N. Awde). Richmond. -1997. pp.39–49.

ցույն ու արջը) միջև¹²: Մա ցույց է տալիս, որ վաղմիջնադարյան արվեստում հայտնի էին առնվազն երկու տարբեր պատմություններ, որտեղ կային գազանների կողմից հռչոտման և հրաշքով փրկության տեսարաններ: Այն, որ նշված երկու պատկերագրա-



Նկ. 1 Սբ. Թեկղա, Երզնկա, գծանկարը ըստ
Բ. Առաքելյանի

կան հորինվածքները ձևավորվել և կիրառվել են քրիստոնեական արվեստում զուգահեռաբար, տեսնում ենք վաղբյուզանդական փորագիր մի սանրի օրինակով, որի մի կողմում պատկերված է Դանիել մարգարեն, իսկ մյուսում՝ Սբ Թեկղան¹³: Երկու դրվագներում էլ աղոթող ֆիգուրներ են՝ առյուծներով շրջապատված: Լրիվ նույն հորինվածքի դեպքում հստակ երևում է, որ մի երեսին կին է պատկերված, իսկ

մյուսին՝ տղամարդ: Դա ակնհատ է թե՛ կերպարից, թե՛ հանդերձանքից, թե՛ նրանց մարմնի կառուցվածքից: Վաղքրիստոնեական արվեստում Դանիելն ու Թեկղան մահապատժի այս տեսարանում ներկայացվում են նաև մերկ՝ որպես արդարներ:



Նկ. 2 Սբ Թեկղա, դպտական քանդակ, VI-VII դդ.,
Բրուկլինի թանգարան, ԱՄՆ

Հայկական քանդակում հանդիպող նման հորինվածքների ուշադիր զննումը ցույց տվեց, որ առկա է ֆիգուրների տարբեր մեկնաբանություն: Երզնկայից գտնված քանդակի օրինակում (գծանկար)¹⁴ [Նկ.1] հստակ երևում է կնոջ մերկ կուրծքը, որն արդեն իսկ բացառում է Դանիելի վարկածը, և այս տարբերակը պատկերագրորեն նույնանում է VI-VII դդ. դպտական մի քանդակի հետ (Բրուկլինի թանգարան)¹⁵ [Նկ. 2]: Հայկական այլ քանդակների դեպքում էլ, օրինակ, Կեչրորից

(Կարսի մոտ) և Մեքենցացվանքից¹⁶, ֆիգուրը կրում է երկար զգեստ, ունի ընդգծված

¹² Օրինակ, քարե սկավառակը Նելսոն-Աթլինս թանգարանից, ԱՄՆ (V դ.), Պաղեստինյան տափաշները Լուվրի և Բրիտանական թանգարաններից (VI-VII դդ.): St u Semoglou A., H Θέκλα..., fig. 32, 36, 37b.

¹³ Semoglou A. H Θέκλα..., fig. 19.

¹⁴ Առաքելյան Բ., Հայկական պատկերաքանդակները IV-VIIդդ., Երևան, 1949, նկ. 48:

¹⁵ Beckwith J. Coptic Sculpture, 300-1300. London. -1963. fig. 121.

¹⁶ Thierry J.M., Donabédian P. Les Arts..., fig. 192, 194.



Նկ. 3 Դանիել, Հառիճ, ՇՊԹ



Նկ. 4 Օրանտան առյուծների հետ, Աղցք, Արշակունիների դամբարան

բարակ իրան և լայն կոնքեր: Մոտ զուգահեռ կարող է համարվել VI դ. սիրիական ռելիեֆը Դամասկոսի թանգարանից¹⁷:

Իսկ ահա Հառիճավանքի և Նահապետավանի հորինվածքների դեպքում¹⁸ վստահաբար կարելի է փաստել տղամարդու ֆիգուր, քանի որ վերջիններս պատկերված են կարճ գոտկավոր բաճկոնով, նեղ տաբատով և, որ ամենակարևորն է՝ սրածայր փրյուզիական գլխարկով, որը բացառվում է Թեկղայի դեպքում: Ուստի կասկածից վեր է, որ նշված օրինակներում տեսնում ենք Դանիել մարգարեին [նկ. 3]: Դանիելի հանդերձանքի նույն տարրերն ենք տեսնում նաև վաղբյուզանդական հուշարձաններում, օրինակ, Փրինստոնի համալարանի սալաքարը (V-VI դդ.), փայտե պատվարի դրվագը Բեռլինի թանգարանից (VI դ.): Դանիել մարգարեի հատուկ հանդերձանքը պահպանվում է նաև հայկական ավելի ուշ շրջանի հուշարձաններում, ինչպես Աղթամարի Սբ Խաչ եկեղեցու (915-921 թթ.) և Աղջոցվանքի (XIII դ.) որմնաքանդակներում (նաև մոդուրով)¹⁹:

3. Մբ Թեկղայի պատկերը և Աղցքի դամբարանի հորինվածքը

Որպես առյուծներով շրջապատված օրանտայի հորինվածք, անհրաժեշտ է առանձին անդրադառնալ հայկական ամենահայտնի քանդակին՝ Աղցքի Արշակունիների դամբարանի համապատասխան պատկերին: Դամբարանի արկոստիլի վրայի տեսարանը մեկնաբանվում է որպես «Դանիելն առյուծների գբում»²⁰ [նկ. 4]: Վերը կատարած քննության լույսի ներքո հարց է ծագում՝ արդյոք այստեղ Դանիել լն է, թե՞ կարող է լինել նաև Թեկղան, որի պատկերման հավանականությունը չպետք է բացառել: Ճիշտ է, ռելիեֆը մաշված է, և հանդերձանքի մանրամասները տեսանելի չեն, սակայն հաշվի առնելով Մբ Թեկղայի պաշտանմունքի փաստն ու կարևորությունը հայկական մշակույթի համատեքստում, ինչպես նաև վերջինիս պատկերի տեղադրումը երկրի գլխավոր տա-

¹⁷ Warns R., Weitere Darstellungen der heiligen Thekla, Studien zur frühchristlichen Kunst II (ed. G. Koch). Wiesbaden. -1986, SS. 94-98, Taf. 20.

¹⁸ Գրիգորյան Գ., Հայաստանի վաղ միջնադարյան..., նկ.նկ. 221, 223, 255 (բ):

¹⁹ Մնացականյան Ստ., Աղթամար Սուրբ Խաչ վանքը 915-921, Երևան, 1985, նկ. 18: Զաքարյան Լ., Աղջոց Սուրբ Ստեփանոս, Երևան, 2007, նկ. 13:

²⁰ Ազարյան Լ., Վաղ միջնադարյան հայկական քանդակը, Երևան, 1975, էջ 23, նկ. 4:

ճարի պատին՝ նման եզրակացությունը տեղին է: Այստեղ պետք է հաշվի առնել նաև վաղքրիստոնեական ավանդույթը, որի համաձայն՝ Մբ Թեկղայի պատկերը հայտնվում էր դամբարանային կառույցներում և սարկոֆագների վրա, քանի որ վաղ քրիստոնյաների փրկության աղոթքներում սրբուհին հիշատակվում էր և հանդես էր գալիս որպես միջնորդ: Այս լույսի ներքո, եթե այնուամենայնիվ կարելի է ընդունել Թեկղայի պատկերի առկայությունը Աղցքում, ապա առաջ է գալիս դամբարանի թվագրման հարցը:

Համարվում է, որ Արշակունիների դամբարանը ունի ստույգ թվագրություն՝ 364 թ.՝ հիմնված պատմական տվյալների վրա: Մասնավորապես Փավստոս Բուզանդը նշում է, որ Շապուհ Բ-ի սկսած պատերազմի ժամանակ պարսիկների կողմից ազգային մասունքների՝ սրբացված թագավորների ոսկորների գերեվարման փորձ է արվում, որը կանխվում է Վասակ Մամիկոնյանի խմբի կողմից: Փրկված մասունքների մասին պատմիչը գրում է. «...տարան թաղեցին Աղձք կոչված ամուր գյուղում, Արարատ գավառում, որ գտնվում է Արագած մեծ լեռան նեղ ու դժվարամուտ խորշերից մեկում»²¹: Ինչպես տեսնում ենք Բուզանդը ոչինչ չի ասում դամբարանի կառուցման մասին, այլ լուր մասունքները Արագածի փեշին թաղելու մասին: Իսկ ինչ վերաբերում է բուն դամբարանին, ապա այն, հավանաբար, կառուցվել է ավելի ուշ²²: Աղցքի դամբարանի քանդակների թվագրության հետ կապված կա նաև Ս. Տեր-Ներսեսյանի կարևոր դիտարկումը: Մեծանուն գիտնականը ուշադրություն է դարձնում այն հանգամանքին, որ միացազիր խաչերի պատկերների տարածման գործընթացը քարիստոնեական աշխարհում տեղի է ունենում IV դարի երկրորդ կեսի և V դարի սկզբի ժամանակահատվածում, որը հիմք է տալիս Աղցքի հարդարանքում առկա նմանատիպ խաչերը համարել ոչ վաղ, քան V դարը: Ըստ այդմ՝ հեղինակը ենթադրում է, որ արկուստլի սալաքարերը կարող էին տարբեր ժամանակի պատկանել²³: Ս. Տեր-Ներսեսյանի այս տեսակետը համարում ենք ավելի քան հիմնավորված: Հաշվի առնելով վերը բերված պատմական աղբյուրը՝ նաև Մբ Թեկղայի այստեղ պատկերված լինելու հավանականությունը և նրա վարքի թարգմանության ժամանակահատվածը, ինչպես նաև Ս. Տեր-Ներսեսյանի դիտարկումը, կարելի է եզրակացնել, որ Աղցքի դամբարանը *terminus post quem* V դարի կեսից շուտ չի եղել: Բացի այդ, հարկ է նշել, որ Աղցքի քանդակ(ների)ի թվագրության հարցը պետք է նաև համաժամանակեցնել Էջմիածնի պատին ագուցված Թեկղայի և Պողոս առաքյալի պատկերի հետ, որն ունի ընդհանրական թվագրություն, և որտեղ հաշվի չեն առնվել Թեկղայի վարքի ու պաշտամունքի հանգամանքները:

4. Մբ Թեկղայի այլ պատկերագրական տիպերը

Վերադառնալով կոթողների պատկերներին՝ նշենք, որ վերը բերվեցին սրբուհու պատկերման երկու առավել հայտնի տարբերակները, սակայն քարիստոնեական արվեստում կան Մբ Թեկղային ներկայացնող այլ տեսարաններ ևս: Նրա վարքում տեղ գտած փորձությունների շարքում նշվում է մի դրվագ, երբ կենդանիներից միայն մեկը՝

²¹ Փավստոս Բուզանդ, Պատմություն..., գիրք.4, գլ. 24:

²² Համեմատության համար կարող ենք հիշատակել Ամարասի Գրիգորիսի դամբարանը, որը կառուցվել է V դ. վերջին՝ սրբի նահատակվելուց մոտ մեկ դար հետո:

²³ Der Nersessian S., L'art arménien. Paris. -1989. p. 63.

Էգ առյուծն է հնագանդորեն պառկում սրբուհու ոտքերի տակ և պաշտպանում Թեկղային մյուս գիշատիչներից: Այս պատկերագրական տարբերակը հայտնի է մի շարք օրինակներով (ղպտական կավե տափաշիշը Լուվրից (VI-VII դդ., Մակեդոնիայի Ստարո-Նագորիչիտյի որմնանկարը (XIII դ.) ևն)²⁴: Մեկ առյուծի և մեկ ֆիգուրի պատկերներ տեսնում ենք Մաստարայից [Նկ. 5] և Ջավախքի Զեդա-Տնագվի բնակավայրերից գտնված կոթողների վրա²⁵: Երկու դեպքում էլ կենդանին հնագանդության նշաններ է ցույց տալիս, կա՛մ ծնկաչոք է, կա՛մ թաթերը վեր պարզած: Այս երկու քանդակի վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ չկա հստակեցում՝ պատկերագրական սխեմայի խորթ լինելու պատճառով:



Նկ. 5 Մբ Թեկղա, Մաստարա, արխիվային լուսանկար՝ ըստ Գ. Գրիգորյանի

Մի հորինվածք ևս, որն առկա է Բրդաձորի մեծ կոթողի վրա²⁶, կարելի է վերագրել Մբ Թեկղային: Հորինվածքի պատկերագրական նախօրինակը, որը եզակի նմուշով է հայտնի քրիստոնեական արվեստում, Եփեսոսի՝ Պողոս առաքյալին նվիրված քարանձավի որմնանկարն է (VIդ.), որտեղ պատկերված են երեք ֆիգուրներ: Դրանք են Պողոս առաքյալը, Թեկղան և Թեոկլիան՝ Թեկղայի մայրը՝ համապատասխան անունների գրություններով²⁷: Այս հորինվածքին համապատասխանում է Բրդաձորի մեծ կոթողի ռելիեֆը, ուր նույնպես երեք ֆիգուրներ են. Պողոս առաքյալը ծալովի ցածր աթոռին է նստած, ինչպես Էջմիածնի քանդակում, իսկ երկուսը, որ կանգնած են նրա

առջև, պետք է լինեն Թեկղան և նրա մայրը²⁸: Եթե դա այդպես է, ապա հայկական վաղմիջնադարյան քանդակում մենք ունենք շատ հազվադեպ պատկերագրական մի տարբերակ: Նաև կարևոր է նշել, որ նույն Բրդաձորի մեծ կոթողին, այս տեսարանից անմիջապես վերև կա առյուծներով շրջապատված օրանտայի պատկեր, բայց տեսարանների ավելի վստահ նույնականացմանը խանգարում է քանդակի վնասվածությունը:

²⁴ L'art copte en Égypte. 2000 ans de christianisme (eds. M.-H. Rutschowskaya, D. Bénazeth). Paris. -2000. fig. 7; Warns R. Weitere Darstellungen... SS. 94-95. Taf. 26 (1).

²⁵ Գրիգորյան Գ., Հայաստանի վաղ միջնադարյան..., նկ.146 (1); Чубинашвили Н. Хандиси. Тбилиси. -1972. таб. 79.

²⁶ Կոթողը կանգնեցված է եղել հայկական Բրդաձոր գյուղում, առաջին անգամ նկարագրել և հրատարակել է Գարեգին Հովսեփյանը: Այժմ գտնվում է Թբիլիսիի Վրաստանի արվեստի թանգարանի բակում:

²⁷ Zimmermann N. Die spätantike und byzantinische Malerei in Ephesos // Byzanz – das Römerreich im Mittelalter (eds. F. Daim et al), Mainz, 2010, S. 644, Abb. 25.

²⁸ Հակոբյան Զ., Բրդաձորի մեծ կոթողի պատկերագրական շարքը // Հայաստանը և Արևելաքրիստոնեական քաղաքակրթությունը III կոնֆերանսի զեկույցներ և նյութեր, Երևան, 2018, էջ 125:

Եզրահանգում. Հայկական վաղմիջնադարյան քանդակի մի շարք հորինվածքների քննությունը ցույց տվեց, որ Մբ Թեկլայի պատկերներն ու համապատասխանաբար սրբուհու պաշտամունքը տարածում են ունեցել վաղմիջնադարյան Հայաստանում: Ավելին, հայկական արվեստում հայտնի է եղել սրբուհուն վերաբերող մի քանի պատկերագրական տարբերակ, որը խիստ արդիական է վաղքրիստոնեական արվեստի ուսումնասիրության տեսանկյունից և կարևորում է Հայաստանի դերը այդ համատեքստում: Այն, որ Մբ Թեկլայի պաշտամունքը կարևոր է եղել հայկական միջավայրում, հաստատում է սրբուհու մատուցման անկախությունը Կիլիկյան Հայաստանում, որոնք այնտեղից փոխադրվել են Իսպանիա: Բայց սա արդեն մեկ այլ առիթ է սրբուհու պաշտամունքին անդրադառնալու համար:

**ДАНИИЛ ИЛИ ФЁКЛА?
О РАЗНОЧТЕНИИ ОДНОЙ КОМПОЗИЦИИ В
РАННЕСРЕДНЕВЕКОВОЙ АРМЯНСКОЙ ПЛАСТИКЕ**

Акопян З. А.

Ключевые слова: *Даниил, Фёкла, апостол Павел, стела, раннесредневековый, скульптура, Кечрор, Арич, Егвард, Аван, Мекеноцацаванк.*

Статья посвящена рассмотрению часто встречающейся композиции на четырехгранных стелах исторической Армении, где при наличии одной и той же изобразительной схемы трактовка сюжетов может быть различной. Это изображение фигуры в позе оранты, фланкируемая двумя львами. Иконографический анализ показал, что в указанной композиционной схеме могут быть представлены как пророк Даниил, так и Св. Фёкла, а точнее истории их чудесного спасения, хорошо известные в раннехристианском искусстве. Более того, стало ясно, что в раннесредневековой пластике Армении были известны разные иконографические изводы изображения Св. Фёклы, и в этом смысле армянские примеры имеют важное значение в контексте изучения раннехристианского искусства и иконографии.

**DANIEL OR THECLA?
ON THE READING OF A COMPOSITION OF EARLY MEDIEVAL
ARMENIAN SCULPTURE**

Hakobyan Z. A.

Key words: *Daniel, Thecla, Paul the apostle, stelae, early medieval, sculpture, Kechror, Haritch, Eghvard, Avan, Mekenotsatsvank.*

The paper presents one of the frequently encountered compositions on the tetrahedral stelaе of historical Armenia, where in the case of one pictorial scheme the interpretations of the

latter could be different. This is concerning to the image of a figure in the orant pose flanked by two lions. The iconographic analysis has showed that both the prophet Daniel and St. Thecla can be represented in the indicated composition, namely the stories of their miraculous salvation well known in the early Christian art. Moreover it has become clear that various iconographic versions of St. Thecla had been known in the early medieval sculpture of Armenia, and due to this the Armenian samples are of a great importance in the context of studies in early Christian art and iconography.

Գրականություն

1. Ազարյան Լ., Դանիելի պատկերագրությունը միջնադարյան Հայաստանի քանդակում // ՀՄՄՀ ԳԱ արվեստի ինստիտուտի զիտական նստաշրջան (առանձնատիպ), Երևան, 1970, 1-5 էջեր:
2. Ազարյան Լ., Վաղ միջնադարյան հայկական քանդակը, Երևան, 1975, 136 էջ:
3. Ալիշան Ղ., Վարք եւ վկայաբանությունը սրբոց հատընտիր քաղեալք ի ճառընտրաց, հ. 1, Վենետիկ, 1874, 721 էջ:
4. Առաքելյան Բ., Հայկական պատկերաքանդակները IV–VII դդ., Երևան, 1949, 118 էջ:
5. Գրիգորյան Գ., Հայաստանի վաղ միջնադարյան քառանիստ կոթողները, Երևան, 2012, 288 էջ:
6. Ժամկոչյան Ա., Դանիելի և Հովնանի պատկերագրությունը միջնադարյան քանդակում // Աստվածաշնչական Հայաստան (կոնֆերանսի կյուլթեր), Երևան, 2005, 662–670 էջեր:
7. Կալցոլարի Վ., Պատմությունը սրբոց Թեկլի եւ վկայաբանությունը Ս. Թղեռսի եւ Սանդխտոյ կուսին. Համեմատություն եւ բնագրական նկատողություններ // Բանբեր Մատենադարանի, 21, 2014, 63–77 էջեր:
8. Հակոբյան Ջ., Բրդաձորի մեծ կոթողի պատկերագրական շարքը // Հայաստանը և Արևելա-քրիստոնեական քաղաքակրթությունը (խմբ. Ա. Հակոբյան), Կոնֆերանսի զեկուլցներ և կյուլթեր, Երևան, 2018, 122-129 էջեր:
9. Ղազարյան Ա., Թեկղա նախավկայի և Պողոս առաքյալի պատկերները էջմիածնում // Աստվածաշնչական Հայաստան (կոնֆերանսի կյուլթեր), Երևան, 2005, 653–661 էջեր:
10. Մնացականյան Ստ., Աղթամարի Սուրբ Խաչ վանքը 915-921, Երևան, 1985, 173 էջ:
11. Փավստոս Բուզանդ, Պատմություն հայոց (թարգմ., ներ., ծան. Ստ. Մալխասյանցի), Երևան, 1968, 351 էջ:
12. Казарян А. Кафедральный собор Сурб Эчмиадзини восточнохристианское зодчество IV–VII веков. М. -2007. 216 с.
13. Мнацаканян Ст. Рельефные изображения и символика Даниила в мемориальной пластике Армении раннего средневековья // ВОН. -1977. № 6. 48-64 сс.
14. Чубинашвили Н., Хандиси. Тбилиси. -1972. 125 с.
15. Beckwith J. Coptic Sculpture. 300–1300. London. -1963. 63 p.
16. Calzolari V. Un nouveau texte arménien sur sainte Thècle: Les Prodiges de Thècle (Présentation et analyse linguistique) // Revue des études arméniennes, 25. -1996–1997. 249–271 pp.
17. Calzolari V. De sainte Thècle à Anahit: une hypothèse d'interprétation du récit de la mort de l'empereur Valens dans les *Byzandaran Patmut'iwnek'* // Armenian Perspectives (ed. N. Awde). Richmond. -1997. 45-62 pp.
18. Calzolari V. Le sang des vierges et le plan de Dieu. Réflexions à partir de l'ancienne historiographie arménienne ancienne (V^e siècle ap. J.-C.) // Victimes au féminin (eds. A.A. Nagy, F. Prescendi). (L'Équinoxe). Genève. -2011. 178-194 pp.
19. Calzolari V. Les Acts de Paul et Thècle et le Martyre de Thaddée et Sanduxt arméniens: phénomènes d'intertextualité et rôle des femmes // "Muséon". 128. -2015. 381–414 pp.

20. Calzolari V. Apocrypha armeniaca I: Acta Pauli et Theclae, Prodigia Theclae, Martyrium Pauli // Corpus Christianorum. Series Apocryphorum. 20. Brepols. -2017. 124–157 pp.
21. Calzolari V. The Legend of St. Thecla in the Armenian Tradition: from Asia Minor to Tarragona through Armenia // Thecla: Paul's Disciple and Saint in the East and West (eds. J.W. Barrier et al.). Leuven. - 2017. 285-305 pp.
22. **Der Nersessian S. L'art arménien..Paris. -1989. 255 p.**
23. Kristensen T. Meryemlik, Gathering and the Archaeology of Pilgrimage // Identity and Cultural Exchange in Ancient Cilicia. New Results and Future Perspectives (ed. A. Cortes), Wiesbaden. -2020. 138–156 pp.
24. The Lives of Saint Gregory. The Armenian, Greek and Syriac Versions of the History Attributed to Agathangelos (ed. R.W. Thomson). Michigan. -2010. 536 p.
25. L'art copte en Égypte. 2000 ans de christianisme(eds.M.-H. Rutschowskaya, D. Bénazeth), Paris. -2000. 253 p.
26. Pilhofer Ph. Das frühe Christentum im kilikisch-isaaurischen Bergland. Die Christen der Kalykadnos-Region in den ersten fünf Jahrhunderten. Berlin-Boston. -2018. 345 p.
27. Thierry J. M., Donabédian P. Les Arts Arméniens. Paris. -1987. 623 p.
28. Semoglou A., Η Θέκλα στην αυγή του Χριστιανισμού: εικονογραφική μελέτη της πρώτης γυναίκας μάρτυρα στην τέχνη της Ύστερης Αρχαιότητας [Thècle à l'aube du christianisme. Une étude iconographique de la première femme martyre dans l'art de l'Antiquité Tardive]. Thessaloniki. -2014. 198 p.
29. Wams R. Weitere Darstellungen der heiligen Thekla, Studien zur frühchristlichen Kunst II (ed. G. Koch). Wiesbaden. -1986. 75-131 SS..
30. Zimmermann N., Die spätantike und byzantinische Malerei in Ephesos // Byzanz – das Römerreich im Mittelalter (eds. F. Daim et al.). Mainz. -2010, 615-662 SS.

Ընդունվել է՝ 10. 09. 2021

Գրախոսվել է՝ 22. 10. 2021

Հանձնվել է տպ.՝ 15. 11. 2021

Տեղեկություններ հեղինակի մասին

Զարուհի ՀԱԿՈԲՅԱՆ՝ արվեստագիտության թեկնածու,
Երևանի պետական համալսարանի արվեստի պատմության և
տեսության ամբիոնի դոցենտ, էլ.հասցե՝ hakobyanzaruhy@ysu.am

ՀՏԴ՝ 7.072

DOI: 10. 52971/18294316-2021.3-256

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՔԱՆԴԱԿՆԵՐԸ ԱՆԻՒ ՍԲ ԳՐԻԳՈՐ
ԵՎԵՂԵՑՈՒ ԱՐՏԱՔԻՆ ՀԱՐԴԱՐԱՆՔՈՒՄ. ԽՈՐՀՐԴԱՔԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ ԶՈՒԳԱՀԵՌՆԵՐԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅ ԱՐՎԵՍՏՈՒՄ

Արվինե Պետրոսյան

Մ. Մաշտոցի անվ. հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ

Բանալի բառեր՝ *Անի, Տիգրան Հոնենց, որմնակամարաշար, քանդակագարդ գոտի, կենդանաքանդակ, իրական ու երևակայական կենդանիներ:*

Անիի Սբ Գրիգոր եկեղեցին իր արտաքին քանդակային հարդարանքով համեմատաբար լավ պահպանված հուշարձաններից է և առանձնանում է որմնակամարաշարը պսակող քանդակագարդ գոտիով, նաև իրական և երևակայական կենդանիների առանձին ու սյուժետային քսանվեց պատկերաքանդակներով:

Հոդվածում դիտարկվում է եկեղեցու քանդակային հարդարանքը՝ պատկերագրական, ռճական և խորհրդարանական առումներով՝ հնարավորության սահմաններում անդրադառնալով նաև ներկայացված կենդանիների ու թռչունների տեսակների նույնականացմանը: Եկեղեցու ընդհանուր քանդակային հորինվածքն ու սյուժեն դիտարկված են հայ արվեստում առկա զուգահեռների համատեքստում՝ պարզաբանելու համար դրանց ակունքներն ու հետագա կիրառությունը:

Նախաբան. Անիի Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին (կառուցման ավարտը՝ 1215 թ.)¹ գրականության մեջ առավել հայտնի է իր պատվիրատուի՝ Տիգրան Հոնենցի անու-

¹ Ըստ եկեղեցու հարավային պատի շինարարական արձանագրության՝ այն եղել է պարսպապատ, ներառել է հոգևորականների համար նախատեսված աշխարհիկ շինություններ և համարվել է վանական համալիր: **Թորամանյան Թ.**, Անիի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ (Տիգրան Հոնենցի) եկեղեցական համալիրը, Երևան, 2011, էջ 17; Documenti di architettura Armena /

նով²: Կառույցին վերաբերող ուսումնասիրությունների զգալի մասը շոշափում է պատվիրատուի, եկեղեցու, սյունասրահի, որմնանկարների թվագրության, դավանաբանական կողմնորոշման խնդիրները, որոնք ուշադրության են արժանացել հայ և օտարագրի մասնագետների կողմից³: Հուշարձանը գիտական լայն շրջանակներում հայտնի է դարձել հատկապես ներքին տարածությունն հարդարող որմնանկարների շնորհիվ, որոնք համակողմանի քննության են ենթարկվել տարբեր ժամանակներում, տարբեր մասնագետների կողմից: Այնուամենայնիվ, թեև քիչ, բայց առկա ուսումնասիրություններն⁴ ու գծագրերը⁵ տալիս են եկեղեցու արտաքին հարդարանքի ընդհանուր պատկերը և դառնում կարևոր սկզբնաղբյուր հուշարձանի ուսումնասիրության համար՝ հատկապես ՀՀ տարածքից դուրս գտնվելու պարագայում: Մբ Գրիգոր եկեղեցու քանդակալին հարդարանքի քննությունը Անիի քանդակագործական դպրոցի գեղարվեստական ու խորհրդարանական սկզբունքների, դրանց՝ հայկական միջնադարյան արվեստի գեղարվեստական ավանդույթների համատեքստում դիտարկելու համար կարևոր հուշարձան է: Սույն ուսումնասիրությունը փորձ է հնարավորինս ամբողջական ներկայացնել Մբ Գրիգոր եկեղեցու որմնակամարաշարի քանդակալին հարդարանքը՝ դրանցում առկա կենդանիների տեսակների նույնականացման, պատկերագրական, ոճական և խորհրդարանական խնդիրները:

Եկեղեցին չորս կողմից բոլորում է խուլ կամարաշարը՝ հենված նիստավոր բարձիկներով, ուղղանկյուն խոյակներով պսակված զույգ սյուների վրա: Սյուների խոյակները, կամարաղեղներն հարդարված են հարուստ բուսական ու երկրաչափական զարդանախշով, քանդակալին հարդարանք ունեն նաև եկեղեցու ճակատների դեկորատիվ զույգ որմնախորշերը: Այս հարդարանքին առանձնահատուկ շքեղություն է հաղորդում կամարաշարը պսակով ֆրիզը (ծովորը)՝ անտրվուտերին ներկայացված ու

Documents of Armenian Architecture, Ani, Facoltà di Milano, Accademia delle Scienze dell'Armenia Sovietica, 12, Venezia, -1984, pp. 80-81;

² Անիում Մբ Գրիգոր Լուսավորչին նվիրված ևս մի քանի եկեղեցի կա՝ գրականության մեջ առավել հայտնի հովանավորի / մեկենասի անունով. Աբուղամրենց (մինչև 994 թ.), Գագկաշեն (1001-1020 թթ.), Բախտաղեկի կամ Խաչուտի (XIII դ.): Ներկայացվող հուշարձանի մեկենաս Տիգրան Հոնենցի անվան հետ են կապված նաև Անիի և շրջակայքի մի շարք եկեղեցիների ու կառույցների նորոգումն ու շինարարական աշխատանքները, ինչպես նաև նվիրատվությունները. Անիի Մայր տաճար (985-1010 թթ.), Բեխենց կամ Կուսանաց (1211 թ., Հռոմոսի (X դ.), Խծկոնքի (VII-X դդ.) վանքերը:

³ Տե՛ս վերջին ուսումնասիրությունը՝ **Հակոբյան Ջ.**, Հայ - քաղկեդոնական ավանդույթների արտացոլումը Անիի Մբ Գրիգոր (Տիգրան Հոնենց) եկեղեցու որմնանկարներում // Էջմիածին, 2018, 62-88 էջեր:

⁴ **Измайлова Т.** Декоративное убранство двух анийских памятников начала XIII века (Церкви Тиграна Онеца и Бахтагеки) //ТЭ. Т. II (Труды отдела Востока Эрмитажа; т. 5). Л.- М. -1958. сс. 159-166.

⁵ Եկեղեցին չափազանց ճարտարապետ Թ. Թորամանյանի՝ տեղում կատարված գծագրերի ձեռագրերը հրատարակվել են Մբ Գրիգոր եկեղեցուն նվիրված հրատարակությամբ: Դրանք ներառում են նաև քանդակալին հարդարանքում առկա որոշ պատկերաքանդակների վերարտադրություններ: **Թորամանյան Թ.**, 2011:

դրա խորհրդաբանությունն ընդգծող բազմազան պատկերաքանդակներով⁶: Կամա-բա-դեղները զարդարված են հյուսածո երիզով, որն առանց ընդհատվելու բոլորում է եկեղեցու ճակատները, իսկ անտրվոլտները ներառում են նրբահյուս բուսանախշ երիզ, որը ծառայում է որպես ֆոն իրական ու երևակայական կենդանիների ու թռչունների պատկերների համար: Վերջիններս, բավական ազատ ու որևէ օրինաչափության չենթարկվելով, հարդարում են որմնակամարաշարի գրեթե բոլոր անտրվոլտները և դառնում ընդհանուր ծոփորի ներդաշնակ մաս: Մբ Գրիգորի քանդակային հարդարանքի մասին հիշատակվում է ինքը՝ անեցի մեծահարուստ Տիգրան Հոնենցը՝ եկեղեցու հարավային ճակատին թողած դոնատորական արձանագրության մեջ⁷: Պատվիրատուն առանձնակի հպարտությամբ է շեշտում քանդակային ձևավորման փաստը՝ գրելով՝ «...և զարդարեցի բազում զարդիք...»:

Եկեղեցու հյուսիսային և հարավային կողմերը բոլորում է տասական՝ նույն լայնության կամարադեղների շարքը, իսկ արևելյան և արևմտյան ճակատները՝ հնգական՝ կենտրոնական, ավելի լայն ու բարձր աղեղներով որմնակամարաշար: Դրանց անտրվոլտներում տեղ են գտել առանձին կամ հորինվածքով հանդես եկող քսանվեց պատկերաքանդակ (նկ. 1,3,4), որոնց տեղադրությունը ըստ ճակատների ու անտրվոլտների տրված է աղյուսակով.

Հյուսիսային երկայնական ճակատ (ալ.-ամ. հաջորդականությամբ)	Հարավային երկայնական ճակատ (ամ.-ալ. հաջորդականությամբ)
1. Հովազ ? ⁸	1. Գիշատիչ թռչուն ?
2. - (պատկերաքանդակ չկա)	2. - (պատկերաքանդակ չկա)
3. - (պատկերաքանդակ չկա)	3. Ցուլ ?
4. Ցուլ ?	4. Առյուծ ?
5. Գառանը կտցող թռչուն	5. Կենդանավազք (քարայծ ?, հովազ ?)
6. Երկու թռչուն	6. Չույզ հուշկապարիկներ
7. Չույզ թռչուն	7. Քարայծ ?
8. Չույզ թռչուն	8. Չույզ կաչաղակ ? / թուփակներ ?
9. Միրամարգ ?	9. Փասիան ?
10. Աքաղաղ ?	10. Չույզ թռչուններ
11. Գիշատիչ թռչուն ?	11. Գիշատիչ թռչուն ?

⁶ Եկեղեցու քանդակազարդ հարուստ հարդարանքի պատճառով տեղաբնակ քրդերը դրան տվել են «Նախշլի» անվանումը: Մբ Գրիգոր եկեղեցուն վերաբերող Թ. Թորամանյանի ձեռագիր չափագրություններում ու գծագրերում այն նշված է եկեղեցու անվան կողքին: **Թորամանյան Թ.**, 2011, էջ 25:

⁷ Documenti di architettura Armena / Documents of Armenian Architecture, Ani, 1984, p. 81.

⁸ Հնարավորության չափով տրված են կենդանիների ու թռչունների տեսակները, և նույնականացման անճշտություններից խուսափելու համար դրանց անվանումներն ուղեկցվում են «?» նշանով:

Արևելյան ճակատ (հվ.-հս. հաջորդականությամբ)	Արևմտյան ճակատ (հս.-հվ. հաջորդականությամբ)
<ol style="list-style-type: none"> 1. Գիշատիչ թռչուն ? 2. Զույգ նապաստակ ? 3. - (պատկերաքանդակ չկա) 4. առյուծ ? 5. - (պատկերաքանդակ չկա) 6. Գիշատիչ թռչուն ? 	<ol style="list-style-type: none"> 1. -* 2. -* 3. Աքաղաղ ? 4. - (պատկերաքանդակ չկա) 5. Թռչուն 6. Գիշատիչ թռչուն
<p>*Եկեղեցու ամ. ճակատին հետագայում կցված պունասարահի պատճառով առաջին և երկրորդ անսովորների պատկերաքանդակները չեն երևում:</p>	

Ըստ Տ. Իզամայլովայի՝ Մբ Գրիգոր եկեղեցում այսպիսի հարդարանքը ժառանգվել է X-XI դդ. թվագրվող Անիի պալատական աշխարհիկ կառույցներից⁹: Գիտնականը, այն համարելով «պարզապես դեկորատիվ» հարդարանք, հիմնվում է Անիի Միջնաբերդի պեղումների ընթացքում հայտնաբերված մի բեկորի պատկերագրության վրա և նկարագրում հետևյալ կերպ. «Այն իրար կից երկու կամարով փայտե որմնակամարաշարի դրվագ է՝ անտրվոլտում՝ բուսական ֆոնին պատկերված կենդանական մտիվով, որտեղ երևում են հովազի գլուխ և ինչ-որ որս ճանկած թռչնի պատկեր»: Հայտնի չէ այս բեկորի գտնվելու վայրը, սակայն նկարագրությունից պարզ է, որ այն պատկերագրորեն շատ մոտ է Մբ Գրիգոր եկեղեցու պատկերաքանդակներին: Անիում նույնանման հարդարանք է ունեցել նաև Բախտադեկի (Խաչուտ)¹⁰ (XIIդ. վերջ-XIIIդ. սկիզբ) եկեղեցին: Հուշարձանը գիտական շրջանառության մեջ է մտել XX դարասկզբին՝ Ն. Մառի 1892թ. դեկավարած հնագիտական արշավի արդյունքում¹¹: Խոնարհված եկեղեցու բեկորներից պարզ է դառնում քանդակային հարդարանքի հիմնական սկզբունքը: Դրանք կրկին առատ, ավելի մանրահյուս, քան Տ. Հոնենցում է, բուսական ֆոնով անտրվոլտներ են՝ իրական ու երևակայական կենդանիների ու թռչունների քանդակներով (նկ. 2): Այստեղ տեսնում ենք հայելային պատկերմամբ գույգ թռչուններ, հուշկապարիկ, թռչնամարտի տեսարան, կենդանավազք, առանձին ներկայացված թռչուններ, որոնք գրեթե նույնությամբ կրկնում են Տ. Հոնենցի ֆրիզի պատկերաշարը և ոճական առանձնահատկությունները¹²: Վերը նկարագրված հուշարձաններից պարզ է, որ գեղարվեստա-

⁹ Измайлова Т., նշվ., աշխ., էջեր 161-162:

¹⁰ Բախտադեկի եկեղեցին ևս նվիրված է եղել Գրիգոր Լուսավորչին և հնարավոր է՝ կառուցվել է Տիգրան Հոնենցի եկեղեցուց ավելի վաղ:

¹¹ Марр Н. Ани, книжная история города и раскопки на месте городища. Ереван. -2011. с. 54.

¹² Նկարագրությունն՝ ըստ արխիվային լուսանկարների. Марр Н., 2011, табл. XVII-XVIII; Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն:

կան այս հարդարանքն Անիում կիրառվել է ոչ միայն Ս. Հոնենցի եկեղեցում, այլև սիրելի է եղել դեռևս Բագրատունիների իշխանության օրոք:

Անիի պալատի փայտե դրվագը, սակայն, միակ սկզբնաղբյուրը չէ, ըստ որի՝ ձևավորվել է Ս. Հոնենցի եկեղեցու արտաքին հարդարանքը: Հայկական արվեստում այս ավանդույթի ակունքներն ու ավելի վաղ զուգահեռները կարելի է գտնել Ջվարթնոցի տաճարում¹³: Հայտնի է, որ հայկական արվեստում քանդակագարդ որմնակամարաշարն առաջին անգամ հանդիպում է հենց այստեղ¹⁴, ապա որպես հայկական ճարտարապետության դասական գեղարվեստական մոտիվ դրսևորվում Բանակի, Իրինդի բուլորակ կառույցներում (VII դ.)՝ դառնալով օրինաչափ Անիի եկեղեցական հարդարանքում¹⁵: Որմնակամարաշարի կիրառումը քրիստոնեական ճարտարապետության մեջ ծագել է գլխավոր սրբավայր համարվող Մբ Հարության տաճարի օրինակից՝ արտահայտելով վերջինիս խորհրդարանությունը¹⁶: Անիում այն դրսևորվում է զույգված, նուրբ համամասնություններով սյուների ու աղեղների շարքով, որոնք ունեն պարզ տրամատներ կամ ոճավորված են բուսական ու երկրաչափական զարդանախշերով ու հարդարում են պատուհանների բացվածքները, բուլորում եկեղեցիների ճակատներն ու գմբեթների թմբուկները (Անիի մայր Տաճար, Աբուղամրենց Մբ Գրիգոր, Մբ Փրկիչ, Գագկաշեն, Աղջկաբերդի, Բախտաղեկի Մբ Գրիգոր եկեղեցիներ, Բեխենց վանք և այլն):

Որմնակամարաշարի անտրվուտների հարդարանքում ոճավորված բուսական պատկերներ հանդիպում են Անիի Մայր տաճարում, Բեխենց կամ Կուսանաց վանքում, Գագկաշենում: Եթե վերը նշված եկեղեցիներում որմնակամարաշարի մոտիվով հղում է արվում համաքրիստոնեական սրբավայր համարվող տաճարին, ապա Ս. Հոնենցի Մբ Գրիգոր եկեղեցում ամբողջացվում է դրա խորհրդարանական իմաստավորումը՝ ներառելով նաև դրախտային խորհրդանիշներ: Մերելով Ջվարթնոցի արտաքին հարդարանքից, որտեղ Դրախտային այգու¹⁷ խորհրդարանությամբ բուսական մոտիվները (խաղողի որթ, նռան պտուղներ) հարդարում են առաջին հարկաբաժնի անտրվուտները, Ս. Հոնենցի եկեղեցու որմնակամարաշարը պսակող գոտին բուսական ոճավորված զարդանախշի հետ միաժամանակ հարդարված է նաև կենդանաքանդակներով: Առհասարակ Դրախտային այգու զագափարը հայկական միջավայրում չափազանց կարևոր դեր ու-

¹³ Ջվարթնոցի տաճարը ևս նվիրված է եղել Մբ Գրիգոր Լուսավորչին և ամփոփել է սրբի մասունքները: **Հակոբյան Ջ.**, Ջվարթնոցի խորհրդարանական կերպարը (Պատկերաքանդակների մեկնարանման շուրջ) // «Էջմիածին», 2009, էջ 77:

¹⁴ **Казарян А.**, Церковная архитектура стран Закавказья VII века, Формирование и развитие традиции. М. -2012. с. 492.

¹⁵ **Казарян А.** Столичная школа армянской архитектуры эпохи Багратидов. Новый обзор развития // Вопросы всеобщей истории архитектуры. Вып. 8. М.-СПб. -2017. с. 96.

¹⁶ **Հակոբյան Ջ.**, 2009, էջ 78; **Казарян А.** Образы «Майр екехеци» Матери-церкви) в армянской архитектуре // Древнерусское искусство. Идея и образ. Опыт изучения византийского и древнерусского искусства. -2009. сс. 9–28.

¹⁷ **Հակոբյան Ջ.**, 2009, էջ 81:

ներ և նույնացվում էր գոյատևման իդեալական միջավայրին¹⁸: Միջնադարի ողջ ընթացքում տեսնում ենք այդ մոտիվի վիզուալիզացումը՝ յուրատեսակ դրսևորմամբ նաև Տ. Հոնենցի եկեղեցում:

Կառույցը բոլորող բուսական ու ֆիգուրատիվ հարդարանքի լավագույն օրինակ է Աղթամարի Մբ Խաչ եկեղեցու որթագալարի գոտին, որտեղ տարբեր կենդանիներ ու մարդկանց պատկերներ ներկայացված են խաղողի այգում¹⁹: Մբ Գրիգոր եկեղեցու զարդագոտին, ստանալով այլ լուծում, ձեռք է բերել առավել ռիթմիկ ու ռճավորված հարդարանք: Այստեղ կենդանիները պատկերված են բուսական ֆոնին՝ առանձին կամ թեմատիկ հորինվածքներով՝ կենդանավազք, կենդանամարտ, հայելային՝ գույգ թռչուններ ու կենդանիներ: Մակայն, ինչպես Մբ Խաչի դեպքում է, այստեղ ևս դրանք հանդես են գալիս տեսակների ու հորինվածքների բազմազանությամբ՝ շատ դեպքերում կրկնելով Մբ Խաչում առկա հորինվածքներն ու կենդանատեսակները:

Բուսական զարդանախշ ֆոնին պատկերված թռչունների պատկերաքանդակներով մի եզակի օրինակ է մեզ հայտնի Սևանի վանքից (IX դ.)²⁰: Այժմ ՀՊԹ-ում պահվող սյան փայտե խոյակը զարմանալի երևակայությամբ ստեղծված թռչունների բարդ պատկեր ներկայացնող փորագրությամբ է. հերալդիկ երկու թռչունները պատկերված են միավորված մարմնով, իսկ պոչերը ռճավորված են այնպես, որ փոխակերպվում են գլուխների:

Մեր թեմային է առնչվում նաև Մշո Մբ Առաքելոց վանքի Թարգմանչաց եկեղեցու քանդակազարդ փայտե դռան (1134 թ.) փորագրության հորինվածքը²¹: Դուռը երեք կողմից եզերող շրջանակը հարդարված է բուսական գոտու մեջ պատկերված երևակայական և իրական կենդանիների ու թռչունների կենդանավազք ներկայացնող հորինվածքով՝ առավել իրապաշտական մեկնաբանությամբ:

Տ. Հոնենցի եկեղեցուն ռճական առումով առավել մոտ մենկաբանություն ունի ավելի քան մեկ դար ուշ կառուցված Ամաղու Նորավանքի Աստվածածին եկեղեցու (1339թ.) ճակատային հարդարանքը, որտեղ կրկին իրական ու երևակայական կենդանիների ու թռչունների պատկերները հարդարում են ճակատային կամարաշարի ու շքամուտքի անտրվոլտներն ու բարավորը՝ ներկայացնելով սֆինքսների, հուշկապարիկների, թևավոր առյուծների ու թռչունների պատկերներ: Բուսական զարդանախշի հետ հանդիպող կամ «ծաղկած» կոչվող այս կենդանիներն ու թռչունները ներկայացնում էին դրախտային արարածների ու պահապանների կամ հանդիսանում էին իշխանության, պահպանիչ սիմվոլներ²²:

¹⁸ Պետրոսյան Հ., Հայ միջնադարյան պատկերացումները իդեալական կենսատարածքի և կենսա-ընթացի մասին. աշխարհը որպես այգի // Հանդես ամսօրյա, 2002, էջեր 411-440:

¹⁹ Կենդանիների տեսակներն ու հորինվածքների մանրամասն նկարագրությունը տես՝ Մնացա-կանյան Ս., Աղթամար, Երևան, 1983, էջեր 120-133:

²⁰ Der Nersessian S. Armenian Art, Switzerland. 1977 and 1978, p. 205.

²¹ Микаелян Л. «Расцветшие» животные в искусстве Сасанидского Ирана и средневековой пластике Армении X–XIV веков // Актуальные проблемы теории и истории искусства, VII Сборник научных статей. С-Пб. 2017. с. 261.

²² Микаелян Л. 2017. сс. 263-264.

Եզրսահանգում. Այսպիսով, Մբ Գրիգոր եկեղեցու քանդակային հարդարանքը միայն տեղային գեղարվեստական ավանդույթների արգասիքը չէ, այլ ընդգրկում է առավել լայն՝ համահայկական, բնականաբար նաև համաքրիստոնեական գաղափարախոսության տարրեր՝ համադրելով դրանք Անիի քաղաքային մշակույթին հատուկ գեղարվեստական ընկալումներին: Եկեղեցու որմնակամարաշարը պսակող ծոփորի կենդանաքանդակները ներկայացնում են հայկական միջնադարյան արվեստում քրիստոնեական պատկերագրության՝ դարերի ընթացքում ձևավորված տիպեր, որոնք պատկերագրական ու խորհրդաբանական հարուստ իմաստավորումից զատ այստեղ ստանում են ռճական յուրատեսակ մշակում՝ արժանի առանձնահատուկ ուշադրության:

Քանդակային հարդարանքն ընդգրկող բուսական ու երկրաչափական զարդանախշերը, կենդանիների պատկերներն ունեն ճարտարապետական սլացիկ ու նրբագեղ ձևերին համապատասխան կառուցվածք: Յուրաքանչյուր անտրվոլտում պատկերված առանձին կամ հորինվածքով ներկայացված կենդանի ու թռչուն չի կրկնում մյուսին, պատկերված է շեշտադրված դիրքով ու շարժումով, համապատասխանեցված անտրվոլտի ուրվագծերին: Հիշելով Մբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու արևելյան ճակատին Տիգրան Հոնենցի թողած արձանագրությունը՝ պետք է ենթադրել, որ այս քանդակային հարուստ համակարգը, բացի խորհրդաբանական պատկերից, ցույց է տալիս Անիի քաղաքային ու աշխարհիկ կյանքի որոշակի շերտեր, տեղացիների գեղարվեստական բարձր ճաշակը, ակնահաճո ու պերճաշուք միջավայր ստեղծելու ձգտումը:

Լուսանկարներ



Նկ. 1 Կենդանավազք (քարայծ, հովազ), զույգ հուշկապարիկներ, քարայծ
Տ. Հոնենցի եկեղեցու հարավային ճակատի ծոփորի դրվագ
Լուս.՝ Դ. Գրիգորյանի



Նկ. 2 Թռչուններ, կամարաշարի դրվագ,
Բախտաղենի եկեղեցի

Լուս.՝ Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն



Նկ. 3 Աքաղաղ,
Տ. Հոնենցի եկեղեցու արևմտյան,
ճակատի կամարաշարի դրվագ.
Լուս.՝ Դ. Գրիգորյանի



Նկ. 4 Թռչնապայքար հորինվածք, թռչունների առանձին ու հերալդիկ պատկերաքանդակներ
Տ. Հոնենցի եկեղեցու հյուսիսային ճակատի ծովորի դրվագ.
Գծագիրը՝ Թ. Թորամանյանի, աղբյ.՝ Անիի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ (Տիգրան Հոնենցի)
եկեղեցական համալիրը, Երևան, 2011:

СКУЛЬПТУРЫ ЖИВОТНЫХ ВО ВНЕШНЕМ УБРАНСТВЕ ЦЕРКВИ СВ. ГРИГОРИЯ В АНИ: СИМВОЛИКА И ПАРАЛЛЕЛИ В СРЕДНЕВЕКОВОМ ИСКУССТВЕ АРМЕНИИ

Петросян А. С.

Ключевые слова: *Ани, Тигран Онец, аркатура, скульптурный фриз, рельефы животных, реальные и фантастические животные.*

Церковь Св. Григория или Тиграна Онеца (1215) в Ани выделяется богатым скульптурным декором фасадов. Окаймляющая стены аркатура увенчана фризом с образами животных на богатом растительном фоне. Это рельефы реальных птиц и зверей, а в одном случае – фантастических существ в виде парных сирен. Рельефы представляют богатый цикл одиночных и геральдических композиций, мотивов борьбы птицы и животного, звериного гона и т.д. Скульптурный фриз церкви Св. Григория имеет свои прообразы в раннесредневековом искусстве Армении, ярким примером которого является внешний декор храма Звартноц, отождествлявшийся с идеей Райского сада. Скульптуры животных анийского храма имеют иконографические параллели в “поясе виноградника” церкви Св. Креста в Ах-

тамаре, в композициях деревянной капители Севанского монастыря, в резной двери монастыря Св. Апостлов в Муше, в оформлении фасадов церкви Богородицы в Амагу Нораванке. Очевидно, что кроме глубоких иконографических и символических традиций христианской культуры, декор Св. Григория отражал богатство художественных традиций городской культуры Ани и личные вкусы ее знати.

**ANIMAL SCULPTURES OF THE EXTERIOR DECORATION OF THE
CHURCH OF ST. GREGORY IN ANI:
SYMBOLISM AND PARALLELS IN MEDIEVAL ARMENIAN ART**

Petrosyan A. S.

Key words: *Ani, Tigran Honents, arcade, sculptural frieze, reliefs of animals, real and fantastic animals.*

Church of St. Gregory or Tigran Honents (1215) in Ani is distinguished by a rich sculptural decor of the facades. The arcade, surrounding the walls, is crowned with a frieze depicting animals on a rich plant background. The depictions of reliefs of real birds and animals can be seen in the spot, and in one case, some fantastic creatures are drawn in the form of twin sirens. The relief represents a rich cycle of single and heraldic compositions, motifs of bird and animal's struggle, beast hound, etc. St. Gregory church has its sculptural frieze prototypes typical for the Armenian early medieval art, such an example is the external decor of the temple Zvartnots, which is associated with the Paradise Garden. The animal sculptures of the Ani temple have iconographic parallels in the "vineyard belt" of the Church of Holy Cross situated in Akhtamar. The similarities are noticed in the compositions of the wooden capital of the Sevan monastery, in the carved door of the monastery of St. Apostles in Mush, in the facades of the Church of the Virgin in Amagu Noravank. Except the rooted iconographic and symbolic traditions particular for the Christian culture, the decor of St. Gregory reflects the traditional artistic richness of Ani's urban culture with its inherent style of nobility.

Գ ր ա կ ա ն ո թ յ ո ն

1. Թորամանյան Թ., Անիի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ (Տիգրան Հոնենցի) եկեղեցական համալիրը, Երևան, 2011:
2. Հակոբյան Ջ., Զվարթնոցի խորհրդաբանական կերպարը (Պատկերաբանականների մեկնաբանման շուրջ), Էջմիածին, 2009:
3. Հակոբյան Ջ., Հայ - քաղկեդոնական ավանդույթների արտացոլումը Անիի Սբ Գրիգոր (Տիգրան Հոնենց) եկեղեցու որմնանկարներում, Էջմիածին, 2018:
4. Մնացականյան Ս., Աղթամար, Երևան, 1983:
5. Պետրոսյան Հ., Հայ միջնադարյան պատկերացումները իդեալական կենսատարածքի և կենսունկյալի մասին. աշխարհը որպես այգի // Հանդես ամսօրյա, 2002, էջ 410-410:
6. Измайлова Т. Декоративное убранство двух анийских памятников начала XIII века (Церкви Тиграна Онеца и Бахтагеки) // ТЭ. Т. II (Труды отдела Востока Эрмитажа; т. 5). Л.- М. -1958. сс. 159-166.

7. Казарян А. Образы «Майр екехеци» (Матери-церкви) в армянской архитектуре // Древнерусское искусство. Идея и образ. Опыт изучения византийского и древнерусского искусства / Ред.-сост. А. Л. Баталов, Э. С. Смирнова. М.: Северный паломник. -2009. сс. 9-28.
8. Казарян А. Столичная школа армянской архитектуры эпохи Багратидов. Новый обзор развития. Вопросы всеобщей истории архитектуры. Вып. 8. М.- СПб. -2017. сс. 87-116.
9. Казарян А. Церковная архитектура стран Закавказья VII века. Формирование и развитие традиции. М. -2012.
10. Марр Н. Ани. Книжная история города и раскопки на месте городища. Ереван. -2011.
11. Микаелян Л. «Расцветшие» животные в искусстве Сасанидского Ирана и средневековой пластике Армении X–XIV веков // Актуальные проблемы теории и истории искусства. VII Сборник научных статей. СПб. -2017. с. 256-268.
12. Der Nersessian S. Armenian Art. Switzerland. -1977 and -1978.
13. Documenti di architettura Armena / Documents of Armenian Architecture, Ani, Facoltà di Milano, Accademia delle Scienze dell'Armenia Sovietica. 12. Venezia, -1984.

*Ընդունվել է՝ 01. 09. 2021
Գրախոսվել է՝ 22. 10. 2021
Հանձնվել է սպ.՝ 15. 11. 2021*

Տեղեկություններ հեղինակի մասին

Արմինե ՊԵՏՐՈՍՅԱՆ՝

Մ. Մաշտոցի անվ. հին ձեռագրերի գիտահետազոտական
ինստիտուտի ասպիրանտ, էլ. հասցե՝ armine.petrosyan23@gmail.com

ՀՏԴ՝ 7.072

DOI: 10.52971/18294316-2021.3-266

ԿԵՆՂԱՆԱԳԼՈՒԽ ԲԱՐՁՐԱՔԱՆԴԱԿՆԵՐԸ ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻ ՇԱՐՔ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՐԴԱՐԱՆՔՈՒՄ

Լիլիթ Միքայելյան

Երևանի պետական համալսարան

Բանալի բառեր՝ միջնադարյան արվեստ, բարձրաքանդակ, կենդանիների գլուխներ, պրոտոմներ, ցուլ, խոյ, խորհրդաբանություն, արխետիպ, ալեգորիա:

Հայաստանի X-XI դդ. քանդակում հայտնի են կենդանիների գլուխների և պրոտոմների մի շարք բարձրաքանդակ օրինակներ, որոնք հիմնականում զարդարում են եկեղեցու ներսի՝ գմբեթական տարածությունը: Դրանք որպես կանոն ցուլի, խոյի, հովազի գլուխներ են՝ համադրված մարդկային դեմքերի և արծիվների պատկերներին: Հոդվածում քննվում են այս գլխաքանդակների նշանակության շուրջ նախկինում եղած տեսակետները, և առաջ են քաշվում դրանց խորհրդաբանության նոր ասպեկտներ:

Նախաբան. Հայկական միջնադարյան ճարտարապետության մեջ հայտնի են կենդանիների գլուխների կամ նրանց պրոտոմների բազմաթիվ քանդակային օրինակներ՝ արված հիմնականում բարձր ռելիեֆի տեսքով: V-VII դդ. դրանք քչաթիվ են և մեծ մասամբ ներկայացնում են ցլի կամ խոյի գլուխներ: X-XI դդ. կենդանագլուխ քանդակները զարգացման նոր փուլ են ապրում. ընդլայնվում է կերպարների շարքը, և ավելանում են դրանց պատկերագրական տիպերը: Այս փուլի վաղագույն և առավել արտահայտիչ օրինակները Աղթամարի Մբ Խաչ եկեղեցու կլոր քանդակին մոտեցող գլուխներն են, որոնցում արդեն հանդիպում են հետագա հուշարձանների բոլոր կենդանատեսակները:

Աղթամարին անմիջապես հաջորդող հուշարձանները, որտեղ առկա են նույնատիպ քանդակներ, մեծ մասամբ գտնվում են Հյուսիսային Հայաստանի՝ Բագրատունյաց թագավորական տան տիրույթներում և կառուցվել են արքայական բարձր պատվերով (Անիի պալատական եկեղեցին, Կարսի Առաքելոցը) կամ նրանց ոչ ուղղակի հովանավորությամբ (Կարսի «Գումբեթ քիլիսեն», Գնդեվանքի Սբ Ստեփանոսը, Սանահինի Սբ Աստվածածինը): Բոլոր թվարկված եկեղեցիների կենդանագլուխները գտնվում են կառույցի ներսում, հիմնականում տրոմպերի վրա և ունեն ընդգծված պատկերագրական և ոճական ընդհանրություններ: Լինելով X-XI դդ. մեկ ընդհանուր գեղարվեստական հոսանքի արգասիք՝ այս ռելիեֆները հետաքրքիր գուգահեռներ ունեն Կրաստանի համաժամանակյա հուշարձաններում, որոնց ներգրավումը կարող է օգնել հնարավորինս պարզաբանելու բարձրաքանդակների վիճահարույց խորհրդաբանությանը:

Նախևառաջ անդրադառնանք կենդանագլուխ քանդակների վաղմիջնադարյան օրինակներին և նրանց տեղական և հունա-հռոմեական նախատիպերին: Ինչպես առհասարակ կենդանու, այնպես էլ նրա առավել բնութագրական մասի՝ գլխի պատկերումը համաշխարհային արվեստի հնագույն և արքեոտիպային թեմաներից է: Որոշ դեպքերում այն փոխարինում էր սրբազան կենդանու ամբողջական պատկերը, ինչպես օրինակ ուրարտական ծիսական անոթները զարդարող ցուլի գլուխները: Անտիկ արվեստում լայն կիրառվող ցուլի կամ խոյի գլուխներից (կամ գանգերից) և ծաղկաշղթաներից կազմված ծոփոնները (*bukranion*) ուղղակիորեն ծագում էին շատ ժողովուրդների մոտ կիրառվող հին սովորույթից, երբ մատաղացու կենդանիների գլուխները պահվում և ամրացվում էին սրբատեղիների պատերին: Քանի որ հիմնական զոհաբերվող կենդանին եզր կամ խոյն էր, ուստի հենց նրանց գլուխներից են կազմված անտիկ տաճարները, սարկոֆագները, զոհասեղանները զարդարող բուկրանիոնները:

Հայկական ճարտարապետության եզակի կառույցներից մեկի՝ VI-VII դդ. Բարեկամավանի դամբարանի քիվը կազմված է այդպիսի կենդանագլուխներից (մեծ մասը ցուլի, այժմ պահպանվել են 24-ը), ոճավորված ծաղկաշղթաներից և ականթի տերևներից¹: Արցախի Բերդաշենի VI-VII դդ. կոթողների չորս խարիսխների անկյունային մասերում քանդակված են խոյերի խիստ ընդհանրացված գլուխներ, մեջտեղում խաչերի և այլ քրիստոնեական սիմվոլների համադրությամբ²: Նույն ոճով արված խոյի գլուխ է գտնվել Արցախի Տիգրանակերտի քրիստոնեական թաղամասի պեղումներից³: Չնայած որ Քրիստոսի փրկչագործական խաչելության հիմնական, կանոնիկ սիմվոլը գառն էր,

¹ **Ղազարյան Գ.**, Բարեկամավանի հուշարձանը. Ճարտարապետական հորինվածքը, արտաքին ու ներքին հարդարանքը մինչև վերակառուցումը և վերակառուցումից հետո // «Էջմիածին», 2008, էջեր. 92-93:

² **Պետրոսյան Հ.**, Խաչքար: Ծագումը, գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանությունը, Երևան, 2008, էջեր 64-65:

³ **Պետրոսյան Հ. և այլք**, Մշակութային հետազոտություններն Արցախում. Շուշի, Հանդաբերդի վանք, Տիգրանակերտ, Երևան, 2009, էջ 45:

խոյր կամ եզր նույնպես ուներ այդ խորհուրդը⁴: Այս գաղափարն ակնհայտորեն արտահայտված է Բոլնիսի Միոն եկեղեցու (V դ. վերջ) խորանի որմնախոյակին արված ցուլի գլխի քանդակում, որի կոտոշների արանքում խաչ է պատկերված:

Հայկական մշակույթի զարգացման հաջորդ շրջափուլում՝ X դ-ից սկսած կենդանագլուխների մոտիվը ստանում է նոր դրսևորումներ: Եզան ու խոյի հետ հայտնվում են նաև կատվազգի գիշատիչների գլուխներ ու պրոտոմներ: Աղթամարի Մբ Խաչ եկեղեցու (915-921) կենդանիների բարձրաքանդակների շարքում տեսնում ենք եզակի տեսակներ՝ օրինակ, ձիու, ուղտի (?) և փղի գլուխները, ինչպես նաև միայն այստեղ հանդիպող պրոտոմների պատկերագրական տիպը՝ անկենդան կախված առջևի ոտքերով: Մբ Խաչի կենդանապատկերների մի շարք հարցերի մենք անդրադարձել ենք առանձին հոդվածում⁵. այստեղ անդրադառնանք միայն մեկ սկզբունքային խնդրի:

Ժամանակին Աս. Մնացականյանի առաջ քաշած և որոշ մասնագետների կողմից ընդունվող տեսակետն այն մասին, որ Աղթամարի կենդանագլուխները վերաօգտագործված՝ հեթանոսական շրջանի քանդակներ են⁶, պետք է միանգամից բացառել: Նախևառաջ, վերջիններս և՛ քարի գույնով, և՛ կատարման տեխնիկայով, և՛ պատկերագրական մանրամասներով հար և նման են եկեղեցու մնացած կենդանապատկերներին, ինչը շեշտել էր դեռ Ստ. Մնացականյանը⁷: Երկրորդ՝ եկեղեցում նույն կենդանիները, իրենց բավականին ռեալիստական կենսաբանական տիպերով (մուֆլոնը, ընձառյուծը և այլն) պատկերված են և՛ պրոտոմի տեսքով բարձրաքանդակների գոտում (նկ. 2), և՛ ամբողջական ֆիգուրով որթագալարի շարքում: Սա ևս ապացույց է այն բանի, որ այդ քանդակները միաժամանակյա են, մեկ ընդհանուր գեղարվեստական ծրագրի արգասիք են և հետևաբար պետք է դիտարկվեն X դ. մյուս հուշարձանների կենդանագլուխների հետ միասին: Այսպես, Աղթամարի տաճարում բացահայտ է մի շարք կենդանագլուխների ապոտրոպեիկ նշանակությունը (արևելյան ճակատի հովազները), ինչպես նաև դրանց արքայական ուժի և փառքի խորհրդաբանությունը (ներսի թագավորական օթյակը հարդարող գլուխները) և այլն⁸: Ուստի X-XIդդ. մյուս նույնօրինակ պատկերները կարող են ունենալ նման խորհրդաբանություն:

Այդպիսինն են, օրինակ՝ Անիի միջնաբերդի Պալատական միանավ եկեղեցու ներսի կենդանագլուխները, որոնք զարդարում էին հարավային՝ այժմ քանդված պատի

⁴ Холл Дж. Словарь сюжетов и символов в искусстве. М. -1996. с. 138; Ендольцева Е. Синкретические образы: изображение бычьей головы в архитектурной пластике христианских храмов на южном Кавказе в период средневековья // Проблемы истории, филологии, культуры. 2 (2017). 335-336.

⁵ Mikayelyan L. Beyond the Canon: Archaic and Polyethnic Traditions in the Sculpted Images of Fabulous Creatures in Armenia and Georgia (10th-14th cc.), in: Dorfmann-Lazarev I. (ed.), Sharing Myths, Texts and Sanctuaries in the South Caucasus: Apocryphal Themes in Literatures, Arts and Cults from Late Antiquity to the Middle Ages, Leuven (in print).

⁶ Մնացականյան Աս., Հեթանոսական ժամանակների քանդակներ Աղթամարի Սուրբ Խաչ վանքի որմնաշարվածքում // Լրաբեր հասարակական գիտությունների, 1983, № 2, էջեր 83-93; Մաթևոսյան Կ., Պատմահնագիտական դիտարկումներ, Երևան, 2020, էջեր 70-75:

⁷ Մնացականյան Ստ., Աղթամար, Երևան, 1983, էջ 112:

⁸ Մնացականյան Ստ., Աղթամար, էջեր 107-121:

որմնամույթերը: Կառույցը չունի ստույգ թվագրություն. համաձայն ընդունված տեսակետի՝ նրա հիմքում եղել է վաղմիջնադարյան կառույց, որը հիմնովին վերաշինվել է Բագրատունիների օրոք: Եկեղեցու դեկորատիվ առանձնահատկությունները նույնպես համապատասխանում են X-XI դդ., ցավոք, կենդանաքանդակները այժմ կորսված են, պահպանվել են միայն որոշ գծանկարներ և արխիվային լուսանկարներ, ինչպես նաև՝ Ն. Մառի նկարագրությունները: Վերջինս գրում է, որ կառույցի հարավային որմնամույթերի վրա պատկերված են եղել երկուական ճանկող արծիվներ ու ցուլեր, և որ բացի դրանցից եկեղեցում եղել են նաև առյուծի և ցուլի գլուխներ, որոնք այդ ժամանակ արդեն պոկված են եղել⁹: Առյուծի ծավալային գլուխները հավանաբար նույնպես երկուսն են եղել. համենայն դեպս այդպես է երևում Մ. Բրոսսեի գծանկարում¹⁰:

Մեզ հետաքրքրող հուշարձանների հաջորդ խմբի կենդանագրուխները քանդակված են եկեղեցիների տրոմպերի վրա և գմբեթատակ գոտում¹¹: Այդ բարձրաքանդակների մեծ մասն այժմ հողմնահարված են, մասամբ կոտրված, ինչը երբեմն դժվարեցնում է նրանց նույնականացումը: Ժ.-Մ. Թիերրին Կարսի Առաքելոց եկեղեցուն (930–943) նվիրված իր աշխատության մեջ մանրամասն անդրադարձել է Կաթողիկեի, ինչպես նաև Կարսի "Գումբեթ քիլիսեի" (X դ. երկրորդ կես - XI դ. սկիզբ), Սանահինի Սբ Աստվածածին եկեղեցու (930-ական թթ.), Գնդեվանքի Սբ Ստեփանոս եկեղեցու (931–936 թթ.) տրոմպերի ռելիեֆներին: Բոլոր չորս կառույցներում կենդանաքանդակների հետ միասին կան նաև մարդու գլխի պատկերներ: Չտեսնելով ոչ մի այլ հնարավոր մեկնաբանություն այս գլուխների համար՝ Ժ.-Մ. Թիերրին դրանք համարել է ավետարանիչների խորհրդանիշներ¹², չնայած որ դրան հակասում են մի շարք փաստարկներ¹³:

Այսպես, Կարսի Կաթողիկեի չորս գմբեթատակ տրոմպերի հիմնաքարերին քանդակված են երկու սիսեմատիկ մարդկային գլուխ, մեկ ցուլի գլուխ և մեկ արծվի ռելիեֆ (նկ. 1): Եկեղեցու ութ գմբեթատակ կամարներից չորսի առաջաստների հիմքում պատկերված են առաջիններին նման, խիստ ընդհանրացված ոճով արված խոյի (նկ. 3), ցուլի և երկու մարդու գլուխներ: Այսպես թե այնպես, երկու մարդու գլուխները և խոյը հակասում են ավետարանիչների սիմվոլների պատկերագրությանը: Ինքը Ժ.-Մ. Թիերրին նշում է, որ կարելի է ենթադրել, որ մնացած առաջաստների վրա նույնպես եղել են

⁹ Март Н. Ани. Книжная история города и раскопки на месте городища. Ереван. – 2011. сс. 49-53.

¹⁰ VirtualANI, The Church of the Citadel Palace; <http://virtualani.org/citadel/palacechurch.htm>

¹¹ Առհասարակ Հայաստանի միջնադարյան ճարտարապետության մեջ տրոմպային անցումների վրա քանդակի առաջին օրինակները հայտնի են VII դ. Սիսավանի (պատվիրատուների քանդակներ) և Պեմգաշենի (հրեշտակ) եկեղեցիներում:

¹² Thierry J.-M., La Cathédrale des Saints-Apôtres de Kars (930-943), Louvain-Paris. -1978. pp.50-53. pl. VII.

¹³ Նույնը պետք է ասել նաև Կարսի Կաթողիկեի թմբուկի պատկերների վերաբերյալ նրա հայտնած տեսակետի մասին, ըստ որի՝ դրանք ներկայացնում են առաքյալներին, ինչն արդեն հերքվել է: Մանրամասն տես՝ Գրիգորյան Դ., Կարսի Ս. Առաքելոց տաճարի թմբուկի քանդակները // Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական հինգերորդ նստաշրջանի նյութեր, Երևան, «Գիտություն» հրատ., 2011, էջեր 229-239:

քանդակներ, որոնք չեն պահպանվել հետագա վերանորոգումներից հետո, և որ վերջիններս հնարավոր է՝ ունեցել են զուտ դեկորատիվ նշանակություն¹⁴:

Մանահինի Մբ Աստվածածին եկեղեցում բարձրաքանդակները տեղադրված են ոչ թե անմիջապես տրոմպերի վրա, այլ գմբեթատակ կամարները կրող վերնասալերի տակ: Գրեթե կլոր, ընդհանրացված ծավալներով քանդակված են երկու ցուլի գլուխ (նկ. 7), մեկ մարդու և մեկ՝ հավանաբար խոյի գլուխ: Վերջինս բավականին մաշված է, անհասկանալի են մոտթի մանրամասները, սակայն կողային մասերի ուրվագծերը նմանվում են հզոր, ոլորուն պոզերի¹⁵: Նմանատիպ խոյի գլուխներ հայտնի են Ջեմո Կրիխիի (Վրաստան, Ռաչայի շրջան) X դ. Հրեշտակապետաց եկեղեցու ներսում¹⁶: Այսպիսով, Մանահինի եկեղեցու բարձրաքանդակները շատ մոտ են Կարսի Առաքելոցի պատկերներին և նույնպես չեն կարող ավետարանիչների սիմվոլներ լինել¹⁷:

Գնդեվանքի Մբ Ստեփանոս եկեղեցում¹⁸ գլուխները տրված են գմբեթատակ առագաստների հիմքում և ներկայացնում են ցուլի (նկ. 4), կատվազգի կենդանու, մարդու գլուխներ և հավանաբար արծվի պրոտոմ: Ելնելով դրանց կազմից՝ միայն Գնդեվանքի դեպքում կարելի է հնարավոր համարել բարձրաքանդակների ավետարանիչների սիմվոլներ լինելը, որոնք էլ պատկերագրորեն հարում են Գանձասարի Մբ Կարապետ եկեղեցու (1216-1238) գմբեթատակ քանդակներին:

Եվ, վերջապես, Կարսից 10 կմ հարավ-արևմուտք գտնվող, այսպես կոչված, «Գումբեթ քիլիսե» եկեղեցում (այժմ ավերակ) քանդակները արված են տրոմպերի հիմնաքարերին: Նրանցից մեկի վրա մարդու գլուխ է՝ երկար, փարթամ մազերով և մորուքով, որոնք մշակված են զուգահեռ ակոսներով (նկ. 6): Հաջորդ տրոմպի վրա եղել է դիմահայաց, թևատարած արծվի ռելիեֆ, որն այժմ կորսված է և պահպանվել է միայն արխիվային նյութերում¹⁹: Մյուս երկու բարձրաքանդակները ներկայացնում են կենդանիների պրոտոմներ՝ առջևի ծաված ոտքերով: Վերջիններս նույնպես զգալի հոդմնահարված են: Հավանաբար մեկը կատվազգի կենդանու, իսկ մյուսը խոյի պատկեր է (նկ. 5): Վերջինիս առկայությունը նորից ինքնին բացառում է ավետարանիչների սիմվոլիկան:

¹⁴ **Thierry J.-M.**, *La Cathédrale...*, p. 53: Այժմ մզկիթի վերածված Կարսի Կաթողիկեի -այդ հատվածները, գլուխների հետ ներկված են, սակայն ծավալները լավ տեսանելի են:

¹⁵ Ժ.Մ. Թիերրին այս քանդակի մեջ տեսնում էր արծվի պատկեր՝ սպիրալաձև մշակված թևերով, իսկ երկրորդ ցուլի գլուխը որոշում որպես առյուծի, նշելով որ վերջինս չափազանց սրածայր ականջներ ունի, որոնք իրականում ցուլի կոտոշներն են:

¹⁶ **Dadiani T., Khundadze T., Kvachatadze E.**, *Medieval Georgian sculpture*. Tbilisi. -2017. p. 118, fig. 307-308.

¹⁷ **Մնացականյան Ստ.**, Պահպանիչ խորհրդանշանները միջնադարյան հայ քանդակագործության մեջ, Պատմա-բանասիրական հանդես, 1970, № 3, էջեր 191-192:

¹⁸ Կառուցել է Մյունաց իշխան Սմբատի կինը՝ Սոփին, Գազիկ Արծրունու հարազատ քույրը, որոնց մայրը Բագրատունյաց տոհմի իշխանուհի էր:

¹⁹ VirtualANI, The Church Known as "Kumbet kilise", <http://virtualani.org/kumbetkilise/index.htm>

Մեր խնդրի պարզաբանման համար չափազանց կարևոր նշանակություն ունի Ջավախքի Կումուրդոյի Մբ Համբարձման եկեղեցին (964)²⁰: Կառույցի արևելյան ճակատի պատուհանի շրջանակի կամարը հենված է չորս ավետարանիչների սիմվոլների բարձրաքանակների վրա: Մատթեոսը ներկայացված է հրեշտակի տեսքով՝ ողջ հասակով, լուսապսակով, անմորուս և թևերով՝ համաձայն նրա ավանդական պատկերագրությանը: Նրա դիմաց տրված է Հովհաննես ավետարանչի խորհրդանիշ արձիվը՝ նույնպես լուսապսակով: Դրանք էլ հենված են ներքևում քանդակված Ղուկասի և Մարկոսի սիմվոլների՝ թևավոր ցուլի և թևավոր առյուծի վրա²¹:

Վերջին երկու կենդանիները տրված են բարձրաքանակ պրոտոմների տեսքով, դիմահայաց, կարծես, պատի հարթությունից դուրս գալիս (գլուխներն այժմ կոտրված են): Այսպիսի ծավալային կատարումը հասուկ էր դիտարկվող ժամանակաշրջանին. այն հանդիպում է Աղթամարի Մբ Խաչ եկեղեցու և «Գումբեթ քիլիսեի» պրոտոմներում, ինչպես նաև Վրաստանի X-XI դդ. մի շարք եկեղեցիներում, որոնցից են Կուրսեբիի «Ջենոբանին» (Իմերեթի մարզ), Նակիպարիի եկեղեցին (Վերին Սվանեթի), Քութաիսիի Բագրատի տաճարը և այլն²²: Այնուամենայնիվ Կուրսեբիի չորս ավետարանիչների հորինվածքը, ինչպես տեսանք, համապատասխանում է նրանց պատկերագրության կանոնիկ սկզբունքներին: Նման կերպ են, օրինակ, ներկայացված ավերարանիչները Հոռոմոսի ժամատան (1038) ծածկի արևելյան սալի Աստվածահայտնության տեսարանում²³:

Կումուրդոյի եկեղեցու արևելյան, հարավային և հյուսիսային ճակատների խորշերի մեջ պատկերված են մարդկային գլուխներ: Նույնպիսի քանդակներ հայտնի են նաև հայկական մի շարք եկեղեցիներում. վաղագույն օրինակներից է VII դ. Միսավանի տաճարը, Տաթևի Մբ Պողոս-Պետրոսը (895-906), Գնդեվանքի վերը դիտարկված Մբ Ստեփանոսի ճակատային խորշերի նմուշները և այլն²⁴: Բոլոր այս դեմքերը, հատկապես X դ., արված են նույն ընդհանրացված, սխեմատիկ ոճով, ինչպես և մեզ հետաքրքրող կենդանագրուիների շարքում հանդես եկող մարդկային գլուխները (նկ. 1, 6), այսինքն՝ նրանք պետք է որ ունենային որոշակի իմաստային ընդհանրություն: Իսկ Կումուրդոյի դեմքերը ունեն նաև կից գրություններ, ինչը հազվադեպ է միջնադարյան սիմվոլիկ բնույթի պատկերների համար:

Արևելյան ճակատի երկու խորշերի գլուխների կողքին գրված է համապատասխանաբար՝ «երկինք» և «երկիր»: Հարավային խորշի տղամարդու գլուխը պատկերում է

²⁰ Համաձայն եկեղեցու վրացերեն արձանագրությունների՝ այն հիմնադրվել է Աբխազիայի թագավոր Լեոն Գ-ի և նրա քույր՝ «Վրաց թագուհի» Գուրանդուխտի մեկենասությամբ, որոնց պատկերները քանդակված են եկեղեցու երկու գմբեթատակ տրոմպերին: **Կարապետյան Ս.** Ջավախք, Երևան, 2006, էջ. 315-337.

²¹ **Dadiani T., Khundadze T., Kvachatadze E.**, Medieval Georgian..., p. 120, fig. 328.

²² **Dadiani T., Khundadze T., Kvachatadze E.** Medieval Georgian..., pp. 118, 192. fig. 291-295.

²³ **Vardanyan E.** (ed.), Horomos Monastery: Art and History, Paris, -2015. pp. 255-262, fig IV-12.

²⁴ Առանձին նախնական ուսումնասիրությամբ դրանց անդրադարձել է Ջ. Հակոբյան (տե՛ս **АКОПЯН З.** Изображение масок в средневековой скульптуре Армении // Актуальные проблемы теории и истории искусства: сб. науч. статей. Вып. 5. СПб. -2015. сс. 263-269.

Ադամին, իսկ հյուսիսայինը՝ Եվային²⁵: Տաթևի Սբ Պողոս-Պետրոս եկեղեցու վերաբերյալ վերջերս արված մեր դիտարկումները ցույց տվեցին, որ կառույցի արևելյան խորշերից վեր պատկերված կանացի երկու դեմքերը՝ գույգ օձերով շրջապատված (ինչպես նաև Կարսի Առաքելոցի պատուհանի երեսակալի օձերով գլուխը), ոչ թե իշխանական դիմապատկերներ են²⁶, այլ ամենայն հավանականությամբ լուսատուների ալեգորիաներ²⁷: Այսպիսի այլաբանական պատկերները լայնորեն կիրառվել են հունա-հռոմեական մշակույթում և ապա նաև քրիստոնեական արվեստում: Հետևաբար մարդկային գլուխների ալեգորիկ նշանակությունը կարող է անկյունաքարային լինել նույն համատեքստում քանդակված կենդանագլուխների խորհուրդը հասկանալու համար:

Կենդանագլուխների և պրոտոմների խորհրդաբանությունն ունի մի քանի ասպեկտ: Վաղմիջնադարյան հուշարձանների պարագայում ցույր և խոյր հանդես էին գալիս որպես Քրիստոսի փրկչագործական խաչելության այլաբանություն, որի խորքում ընկած է զոհաբերության համամշակութային արխետիպը: Ջոհաբերված կենդանուն, ինչպես նաև թագավորական որսի համար նախատեսված, կամ նրա փառքն ու ուժը խորհրդանշող կենդանիների պատկերման տեղական արխայիկ ավանդույթները առավել վառ արտահայտությունն են գտել Ադթամարի Սբ Խաչ եկեղեցու բարձրաքանդակներում: Անիի պալատական եկեղեցու չպահպանված կենդանագլուխները հավանաբար կրում էին այդպիսի խորհրդաբանություն և միևնույն ժամանակ ունեին պաշտպանիչ գործառույթ:

Եզրահանգում. Քննվող չորս եկեղեցիներից, որտեղ կենդանիների և մարդկանց գլուխները հանդես են գալիս միասին, գմբեթատակ տարածության վրա, միայն Գնդեվանքի Սբ Ստեփանոսի առագաստների գլուխները կարող են դիտարկվել որպես ավետարանիչների խորհրդանիշեր: Մնացյալ կառույցների բարձրաքանդակների սինվոլիկան, ամենայն հավանականությամբ, կապված էր լուսատուների, երկնքի և այլ հնարավոր ալեգորիաների հետ՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ եկեղեցու գմբեթն ընկալվում էր որպես երկնակամարի մանրակերտ: Օրինակ՝ Կարսի Առաքելոցի տրոպեյի տղամարդու երկու գլուխները կարող էին լինել երկնքի և երկրի, իսկ արծիվն ու ցույրը համապատասխանաբար՝ արևի և լուսնի ալեգորիաներ: Երկու լուսատուների այսպիսի սինվոլիկան լավ հայտնի է նաև խաչքարային արվեստում: Որոշ դեպքերում էլ խոյի և եզան գլուխները, ինչպես և վաղ միջնադարում, կարող էին խորհրդանշել Փրկչի քավության զոհը, իսկ արծիվը հոգու հարության գաղափարը:


Բացի իրենց իմաստաբանական կողմից, այս կենդանագլուխները հաճախ ունեին ընդգծված գեղագիտական նշանակություն, ինչպես, օրինակ՝ Սանահինի եկեղեցում: Այստեղ դրանք կարծես իրենց վրա են կրում գմբեթատակ կամարների ծանրու-

²⁵ Северов Н., Чубинашвили Г. Кумурдо и Никорциминда. М. -1947. с. 11. Рис. 7.

²⁶ Մնացականյան Ստ., Հայկական աշխարհիկ պատկերաբանական IX-XIV դդ., Երևան, ՀՍՄՀ ԳԱ հրատ., 1976, էջեր 66-67:

²⁷ Միքայելյան Լ., Վիշապ-օձի կերպարը Հայաստանի X-XIV դդ. քանդակում. Պատկերագրությունը և խորհրդաբանական եզրերը քրիստոնեական մշակույթի համատեքստում. Վիշապը հեքիաթի և իրականության սահմանին, Բոբոխյան Ա. և այլք (խմբ.) Երևան, 2019, էջեր 397-399.

թյունը՝ շեշտելով կառույցի արխիտեկտոնիկան: Նմանատիպ կենդանագլուխ խոյակների պատկերեր են հայտնի հայկական մանրանկարներում, ինչից կարելի է եզրակացնել, որ այդպիսիք գոյություն են ունեցել միջնադարյան աշխարհիկ ճարտարապետության մեջ, որը մեզ գրեթե չի հասել: Հետագա XII-XIV դդ. հուշարձաններում (Մանահին, Անի, Գեղարդ, Գանձասար, Նորավանք) շարունակվում է կենդանագլուխ ռելիեֆների կիրառումը նախկինում մշակված խորհրդաբանությամբ և ավելի հղկված գեղարվեստական կատարմամբ:



Նկ. 1 Կարսի Առաքելոց եկեղեցու տրոմպերի ռելիեֆները, գծանկարը ըստ Ժ.-Մ. Թիերրիի, 1978



Նկ. 2 Մուֆլոնի պրոտոմ, Աղթամարի Սբ Խաչ եկեղեցի, արևելյան ճակատ (լուս.՝ հեղինակի)



Նկ. 3 Խոյի գլուխ, Կարսի Առաքելոց եկեղեցի, առազաստի դրվագ (լուս.՝ Պ. Տոնապետյանի)




Նկ. 4 Ցուլի գլխաքանդակ, առազաստի դրվագ, Գնդեվանքի Սբ Ստեփանոս եկեղեցի (լուս.՝ ՀՃՈՒՀ-ի)



Նկ. 5 Խոյի պրոտոմ, տրոմպի դրվագ, Կարսի «Գումբեր» քիլիսե եկեղեցի (լուս.՝ Պ. Տոնապետյանի)



Նկ. 6 Մարդու գլուխ, տրոմպի դրվագ, Կարսի «Գումբեր» քիլիսե եկեղեցի (լուս.՝ Պ. Տոնապետյանի)



Նկ. 7 Յուլի գլխաքանդակ, վերնասալի մաս, Մանահինի Սբ Աստվածածին (լուս.՝ Ա. Զախարովայի)

БАРЕЛЬЕФЫ ГОЛОВ ЖИВОТНЫХ В ОФОРМЛЕНИИ РЯДА ЦЕРКВЕЙ БАГРАТИДСКОЙ АРМЕНИИ

Микаелян Л. III.

Ключевые слова: *средневековое искусство, барельеф, головы животных, протомы, бык, баран, символика, архетип, аллегория.*

В скульптуре Армении X-XI вв. известен целый ряд голов и протом животных, выполненных в высоком рельефе. Самым ранним памятником данного периода и самым богатым по числу представленных видов животных, является церковь Св. Креста на острове Ахтамар, на которой эти барельефы украшают как фасады, так и интерьер церкви. В следующей группе памятников головы животных украшают внутреннее подкупольное пространство храма. Это в основном головы быка, барана, барса, вместе с которыми как правило изображены также человеческие лики и фигуры орлов. В статье рассматриваются существующие до сих пор мнения о значении этих голов и выдвигаются новые аспекты их символики.

BAS-RELIEFS OF ANIMAL HEADS IN THE DECORATION OF
SOME CHURCHES OF BAGRATID ARMENIA

Mikayelyan L. Sh.

Key words: *medieval art, bas-relief, animal heads, protomes, bull, ram, symbolism, archetype, allegory.*

In the sculpture of Armenia of the 10th-11th centuries a number of animal heads and protomes in high relief are known. The earliest monument of this period and the richest in the number of represented animal species is the Holy Cross Church on the Akhtamar Island, on which these bas-reliefs decorate both its facades and the interior. In the next group of monuments, animal heads decorate the inner domed space of the church. These are mainly the heads of a bull, ram, leopard, depicted as a rule along with human faces and eagle figures. The article examines the still existing opinions about the meaning of these heads and puts forward new aspects of their symbolism.

Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Յ Ո Ւ Ն

1. Գրիգորյան Դ., Կարսի Ս. Առաքելոց տաճարի թմբուկի քանդակները // Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական հինգերորդ նստաշրջանի նյութեր, Երևան, «Գիտություն» հրատ., էջեր 229-239:
2. Կարապետյան Ս., Ջավախք, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ. 2006:
3. Ղազարյան Դ., Բարեկամավանի հուշարձանը. Ճարտարապետական հորինվածքը, արտաքին ու ներքին հարդարանքը մինչև վերակառուցումը և վերակառուցումից հետո // «Էջմիածին», 2008:
4. Մաթևոսյան Կ. Պատմահնագիտական դիտարկումներ, Երևան, «Մուղնի» հրատ., 2020:
5. Միքայելյան Լ., Վիշապ-օձի կերպարը Հայաստանի X-XIV դդ. քանդակում. Պատկերագրությունը և խորհրդաբանական եզրերը քրիստոնեական մշակույթի համատեքստում // Վիշապը հեքիաթի և իրականության սահմանին, Բոբոխյան Ա. և այլք (խմբ.) Երևան, 2019, էջեր 396-410:
6. Մնացականյան Աս., Հեթանոսական ժամանակների քանդակներ Աղթամարի Սուրբ Խաչ վանքի որմնաշարվածքում, Լրաբեր հասարակական գիտությունների, 1983, № 2, էջեր 83-93:
7. Մնացականյան Սո., Աղթամար, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1983:
8. Մնացականյան Սո., Հայկական աշխարհիկ պատկերաքանդակը IX-XIV դարերում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1976:
9. Մնացականյան Սո., Պահպանիչ խորհրդանշանները միջնադարյան հայ քանդակագործության մեջ, Պատմա-բանասիրական հանդես, 1970, № 3. էջեր 185-202:
10. Պետրոսյան Հ. և այլք, Մշակութային հետազոտություններն Արցախում. Շուշի, Հանդարբերդի վանք, Տիգրանակերտ, Երևան, Արցախի հնագիտական արշավախումբ, 2009:
11. Պետրոսյան Հ. Խաչքար: Ծագումը, գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանությունը, Երևան, «Փրինտինֆո» հրատ., 2008:
12. Акопян З. Изображение масок в средневековой скульптуре Армении // Актуальные проблемы теории и истории искусства: сб. науч. статей. Вып. 5. СПб. -2015. сс. 263–269.

13. Ендольцева Е. Синкретические образы: изображение бычьей головы в архитектурной пластике христианских храмов на южном Кавказе в период средневековья // Проблемы истории, филологии, культуры, 2 (-2017). сс. 323-338.
14. Марр Н. Ани, Книжная история города и раскопки на месте городища. Ер. Изд. «Гитутюн» НАН РА. 2011.
15. Северов Н., Чубинашвили Г. Кумурдо и Никорцминда. М. -1947.
16. Холл Дж. Словарь сюжетов и символов в искусстве. М. "Кронпресс". -1996.
17. Dadiani T., Khundadze T., Kvachatadze E., Medieval Georgian sculpture. Tbilis., Cezanne Printing House. -2017.
18. Mikayelyan L Beyond the Canon: Archaic and Polyethnic Traditions in the Sculpted Images of Fabulous Creatures in Armenia and Georgia (10th-14th cc.), in: Dorfmann-Lazarev I. (ed.), Sharing Myths, Texts and Sanctuaries in the South Caucasus: Apocryphal Themes in Literatures, Arts and Cults from Late Antiquity to the Middle Ages, Leuven, Peeters Publ. (in print).
19. Thierry J.-M. La Cathédrale des Saints-Apôtres de Kars (930-943). Louvain-Paris. Peeters Publ. -1978.
20. Vardanyan E. (ed.), Hořomos Monastery: Art and History. Paris. ACHCByz. Publ. -2015.

Ընդունվել է՝ 11. 09. 2021

Գրախոսվել է՝ 22.10. 2021

Հանձնվել է տպ.՝ 15. 11. 2021

Տեղեկություններ հեղինակի մասին

Լիլիթ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ՝ Երևանի պետական համալսարանում
ՀՀ ԿԳՄՄՆ գիտության կոմիտեի 21T-6E291 գիտական ծրագրի
կատարող, էլ. հասցե՝ mikayelyan.lilit@yahoo.com

Ա Ր Վ Ե Ս Տ Ա Բ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
ИСКУССТВОВЕДЕНИЕ
ART STUDIES

ՀՏԳ՝ 7.072

DOI: 10.52971/18294316-2021.3-277

ՔՇՈՑՆ ՈՒ ԽԱՉՎԱՌԸ XIII ԴԱՐԻ ՄԿՁԲԻ
ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԹՄԲՈՒԿՆԵՐԻ ՀԱՐԴԱՐԱՆՔՈՒՄ
(Հատիճավանք, Հովհաննավանք, Գանձասար)

Թագուհի Ավետիսյան

Երևանի պետական համալսարան

Բանալի բառեր՝ խաչվառ, քռոց, եկեղեցի, թմբուկ, քանդակային հարդարանք, Երկնային արքայություն, հրեշտակ, Հատիճավանք, Հովհաննավանք, Գանձասար:

Հատիճի, Հովհաննավանքի և Գանձասարի եկեղեցիների թմբուկների վրա ներկայացված են քռոցների և խաչվառերի քանդակներ: Սույն հոդվածում տրված են դրանց խորհրդանշական և կիրառական բացատրությունը, գեղարվեստական մեկնաբանումը և փորձ է արված ներկայացնելու այն նախադրյալները, որոնք հիմք են հանդիսացել այս տարրերի՝ հենց XIII դարի եկեղեցիների արտաքին հարդարանքում, մասնավորապես թմբուկների վրա տեղ գտնելու համար:

Նախաբան. Հայկական միջնադարյան արվեստի կարևոր ճյուղերից է քանդակը, որը հանդես է գալիս թե՛ որպես եկեղեցական կառույցի հարդարման տարր, թե՛ որպես գեղարվեստական ընկալումների արտահայտություն: Հայկական եկեղեցական համալիրները, VII դարից սկսած, աչքի են ընկնում հարուստ հարդարանքով՝ դեկորատիվ բնույթի տարրերով, տարբեր հորինվածքներով ու պատկերաքանդակներով: Նման առատ հարդարանքի ի հայտ գալը պայմանավորված է հայկական ճարտարապետության մեջ սրբատաշ քարի (միդիս շարվածքի) կիրառմամբ, որն էլ ընձեռում էր քարի մշակման ու հարդարման այդ հնարավորությունը:

Դարաշրջանի խորհրդանշական, պատկերագրական ավանդույթներով և ճարտարապետական հորինվածքի առանձնահատկություններով պայմանավորված՝ հայ-

կական արվեստում ձևավորվում է քանդակային հարդարման ընդհանրական համակարգ: VII դարից սկսած համընդհանուր տարածում են ստանում նաև կենտրոնազմբեթ կառույցները¹, որոնցում թմբուկի գործառույթը մեծապես կարևորվում է և եկեղեցիների արտաքին հարդարանքում շեշտադրվում:

Կոնստրուկտիվ իմաստով թմբուկն իրար է կապում եկեղեցու կարևոր հատվածները՝ աղոթասրահն ու գմբեթը, իսկ խորհրդանշական առումով եկեղեցական կառույցի եռամաս բաժանման մեջ (երկիր-երկինք-երկինք) այն հանդիսանում է Երկնքի խորհրդանշանը²: Իսկ թմբուկն ու գմբեթը միասին խորհրդանշում են երկնային տիրույթն ընդհանրապես, Երկնային եկեղեցին, Երկնային արքայությունը, որտեղ գտնվում է Աստծո գահը (Գ Թագ. 8:27, Եսայի 6:1, 40:22, 66:1)³: Հենց այս պատկերացումների համատեքստում էլ ձևավորվում է եկեղեցու թմբուկի հարդարման համակարգը թե՛ արտաքինից (քանդակ), թե՛ ներքինից (որմնակար և խճանկար⁴): Այս համակարգի քննությունը ցույց է տալիս, որ XIII դարի սկզբի մի քանի եկեղեցիների հարդարանքում առանձնակի տեղ է հատկացվում քրոջի ու խաչվառի պատկերներին: Դրանք են Հառիճի Մբ Աստվածածին (1201 թ.), Հովհաննավանքի Ս. Կարապետ (1216-1221 թթ.), Գանձասարի Ս. Հովհաննես Մկրտիչ (1216-1238 թթ.) եկեղեցիները:

1. Քրոջի և խաչվառի խորհրդարանությունը

Եկեղեցու ծիսական սպասքի մաս կազմող քրոջն ու խաչվառը Ս. Պատարագի ժամանակ կիրառվող կարևոր իրերից են: Խաչվառը ձողաբարձ, խաչով պսակված ծիսական իր է, որին ամրացված քառանկյուն կտավի ծայրերն ավարտվում են ծոպերով և դրա վրա պատկերված է լինում Խաչը, Տնօրինական շարքի կամ Տիրամոր հետ կապված որևէ տեսարան⁵:

¹ Ընդունված է Էջմիածնի Սայր տաճարը համարել ամենավաղ կենտրոնազմբեթ կառույցը Հայաստանում, սակայն այդ հարցը դեռևս վերջնական պատասխան չի ստացել (տե՛ս **Garibian N.**, La Jérusalem nouvelle et les premiers sanctuaires chrétiens de l'Arménie, méthode pour l'étude de l'église comme temple de Dieu, Isis Pharia. -2009; **Казарян А.**, Церковная архитектура стран Закавказья VII века, формирование и развитие традиции. Т. 1. М. -2012):

² **Демус О.** Мозаики византийских храмов, Принципы монументального искусства Византии. М. – 2001. сс. 11-12.

³ **Եսեքիոս Կեսարացի**, Պատմութիւն եկեղեցւոյ (թարգմ. ի ձեռն Հ. Աբրահամ Վ. Ճարեան), Վենետիկ, Ս. Ղազար, 1877, էջեր 742-743; **Вагнер Г. К.** Византийский храм как образ мира // "Византийский временник". 1986. Т. 47. сс. 173-174; **Казарян А. Ю.** Тромпово-парусный подкупольный переход. Происхождение и эволюция в системе купольных глав // "Архитектурное наследие". - 2012. Вып. 57. с. 8: **Ավետիսյան Թ.**, Հայկական միջնադարյան եկեղեցիների թմբուկների քանդակային հարդարման խորհրդանշական և պատկերազրական ավանդույթները // Բանբեր Մատենադարանի, 2018, հտ. 25, էջ 355: **Ազնավորյան արք. Ջ.**, Հասկանանք մեր Պատարագը. Սուրբ Պատարագի զարգացումը, կառույցը, բովանդակությունը (արևելահայերենի վերածումը՝ Ս. Խաչատրյանի), Երևան, 2020, էջեր 45-46:

⁴ **Демус О.** Мозаики..., с. 1-64; **Лазарев В. Н.** Система живописной декорации византийского храма IX-X вв. // Византийская живопись, Сборник статей. М. – 1971. сс. 98-99.

⁵ **Մարգարյան ավ. քին. Ե.** Սպասք եկեղեցական. Խաչվառ // Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, Երևան, 2002, էջ 919:

Խաչվառք եկեղեցական թափոքին ուղղորդող դեր ունի և ընդհանուր առմամբ խորհրդանշում է մահվան, չարի դեմ հաղթանակը⁶: Այն սերում է լաբարումից՝ հռոմեական գորքի դրոշից, որի նշանակությունը քրիստոնեական մշակույթում պայմանավորված է Կոստանդինոս կայսեր տեսիլքով, ըստ որի, վերջինս Քրիստոսի խարիզմայով պսակված լաբարումի ուժով հաղթում է վճռական ճակատամարտում (Եվսեբիոս Կեսարացի)⁷:

Հաջորդը՝ քշոնցը, կիրառվել է քրիստոնեության ամենավաղ շրջանից սկսած՝ կատակոմբներում: Այն եղել է կաշվից, կտորից կամ սիրամարգի փետուրներից՝ սկավառակաձև, քառակուսի և աստղանման, բայց վերջնականորեն ստացել է մետաղական սկավառակի տեսք: Համարվում է, որ այն ի սկզբանե օգտագործվել է Ս. Սեղանին դրվող Ս. Հաղորդությունը թոչող միջատներից պաշտպանելու համար և որի պատասխանատուները, ըստ առաքելական ցուցումների, սարկավագներն էին, որպես Աստծուն ծառայող հրեշտակներ: VII դարից սկսած քշոնցների գործածական նշանակությունն էլ ավելի է կարևորվում (Երուսաղեմում, VII դարի սկզբին), քանի որ դրանք ներկայացվում են որպես եկեղեցու խորհուրդներին անտեսանելի մասնակիցների՝ սերովբեների ու քերովբեների կերպարներ, որոնք էլ երկնքում, ինչպես սարկավագները երկրի վրա, Պատարագի ընթացքում չար ուժերից պաշտպանում են Ս. Հաղորդությունը (Եբր. 9:3-5)⁸: Եվ այս առումով, քրիստոնեական խորհրդանշական իրերի շարքում ինչպես խաչվառք, այնպես էլ քշոնցն ունի իր կարևոր տեղը. այն ենթադրում և ամբողջացնում է ինչպես երկրային, այնպես էլ երկնային Պատարագը⁹, խորհրդանշում հրեշտակների օրհներգը¹⁰ (Եսայի, 6:1-4): Այս իմաստով կարելի է ասել, որ քշոնցը զալիս է լրացնելու առաքյալների¹¹, հրեշտակների¹² (նրանց հետ են նույնացվում սարկավագներ

⁶ «Խաչվառ-Շողակաթ 2008», էլ. հասցե՝ http://masis.tv/component/option,com_afm/pid,128/vfile,992/lang,hy/ "Хоругви", «Православная энциклопедия "Азбука веры"». Дата обращения: 16 февраля 2017. Архивировано 9 января 2017 г., эл. адрес: <https://azbyka.ru/xorugvi>

⁷ Бутырский М. 'Лабарум' // Православная энциклопедия эл. адрес: <https://www.pravenc.ru/text/2462397.html> (08.08.2021); Պետրոսյան Հ., Խաչքար. ծագումը, գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանությունը, Երևան, 2007, էջ 21-22:

⁸ Dictionnaire d'archéologie chrétienne et de liturgie, t. 5 (2), Paris, 1923, pp. 1610-1625: Սարգսյան ավ. քին. Ե., Սպասք եկեղեցական. Քշոնց // Քրիստոնյա Հայաստանի հանրագիտարան, Երևան, 2002, էջ 919; Богослужебная утварь (глава 3). Настольная книга священнослужителя. эл. адрес: <http://www.magister.msk.ru/library/bible/comment/nkss/nkss16.htm> (08.08.2021)

⁹ Պատարագամատոյց ըստ արարողութեան Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցոյ, Էջմիածին, 2006, էջեր 86-91: Ազնավորյան արք. Ջ., Հասկանանք մեր Պատարագը..., էջեր 40-50, 49-55; Казарян А. Кафедральный собор Сурб Եճմիաձյն и восточнохристианское зодчество IV-VII вв. М. – 2007. с. 103.

¹⁰ Սարգսյան ավ. քին. Ե., Սպասք եկեղեցական., էջ 919; Ազնավորյան արք. Ջ., Հասկանանք մեր Պատարագը..., էջ 50:

¹¹ Օրմանյան Մ., Ծիսական բառարան, Երևան, 1992, էջ 60:

¹² Սարգսյան ավ. քին. Ե., Սպասք եկեղեցական..., էջ 919:

րը¹³), հրեշտակապետերի շարքը, մանավանդ, որ վերջիններս էլ գրեթե միշտ պատկերվում են քռոցներով և բոլորը միասին փառաբանում են մեծ խորհրդի հրեշտակին՝ Քրիստոսին (Եսայի 9:6): Հատկանշական է, որ եկեղեցում Ս. Պատարագի ժամանակ օգտագործվող քռոցների վրա պատկերվում են սերովբեներ¹⁴՝ որպես հրեշտակների՝ երկնային ուժերի ներկայության խորհրդանիշներ¹⁵, իսկ դրանցից կախված զանգակները, համաձայն Գրիգոր Տաթևացու, արտահայտում են 12 առաքյալների քարոզչության ձայնը¹⁶: Հաշվի առնելով քռոցի և խաչվառի խորհրդանշական իմաստները, հիմնավորված է դառնում դրանց՝ հենց եկեղեցու թմբուկի՝ երկնքի տիրույթում պատկերված լինելը:

2. Երեք եկեղեցիների թմբուկների քանդակային հարդարանքը

Խաչվառի և քռոցի քանդակային պատկերներ տեսնում ենք XIII դարի միայն երեք եկեղեցիների թմբուկների հարդարանքում: Հառիճավանքի գլխավոր՝ Ս. Աստվածածին եկեղեցին ամենավաղն է այս շարքում, այն կառուցվել է 1201 թ., Չաքարե Բ. Չաքարյանի կողմից: Եկեղեցու արևելյան ճակատին կան պատվիրատուների՝ Չաքարյան եղբայրների պատկերները: Եկեղեցու թմբուկի 20 նիստերին, որոնք եզերվում են եռափունջ որմնասյուներով (ինչպես նաև Հովհաննավանքի և Գանձասարի դեպքում), քանդակված են միայն քռոցներ¹⁷, որոնք ենթարկված են գեղարվեստական տարբեր մշակումների: Այստեղ տեսնում ենք սկավառակի մեջ ներառված խաչի, բազմաթև աստղանման, բուսական, երկրաչափական, հյուսածո և այլ նախշերի կիրառում: Չողերի կամ սյուների հենման համար, որոնց վրա ամրանում են քռոցները, հիմք է ծառայում թմբուկը եզերող ստորին գոտին: Պետք է նշել, որ Հառիճավանքի Սբ Աստվածածին եկեղեցու թմբուկը նմանատիպ քանդակային հարդարանք ունեցող օրինակների կարապետն է, որից էլ սերում են Հովհաննավանքի և Գանձասարի թմբուկները:

Գանձասարի եկեղեցու թմբուկի դեպքում 16 նիստերից միայն 4-ի վրա է, որ խաչվառ-քռոցներ են, իսկ մնացած 12-ի վրա սյուժետային և այլ քանդակներ են ներկայացված: Ինչպես Հառիճում, այնպես էլ այստեղ, քռոցների ձևավորման մեջ հանդիպում

¹³ Герман Константинопольский. Сказание о Церкви и рассмотрение таинств. М. – 1995. с. 16-17: Պատահական չէ, որ Ս. Պատարագի ժամանակ սարկավազների կողմից հնչեցվող «Քրիստոս մեր մեջ հայտնվեց, ...Մուրք Սեղանին բազմած է Քրիստոս արքան և Նրան շրջապատող երկնային զորքերը» խոսքերի ժամանակ նրանց ձեռքներին եղած քռոցները ձայնակցում են այս երգին, և ի պատասխան այդ խոսքերի՝ դպիրներն ու ժողովուրդն ասում են. «...Հրեշտակների հետ օրհներգում ենք Քեզ, Տե՛ր, և սրբերի հետ՝ «Տե՛ր, փա՛ռք Քեզ» (տե՛ս Ազնավորյան արք. Չ., Հասկանանք մեր Պատարագը..., էջեր 49-50):

¹⁴ Մարգարյան ավ. քին. Ե., Սպասք եկեղեցական..., էջ 919:

¹⁵ Պատարագամատոյց ըստ արարողութեան ..., էջ 86; Казарян Г., Храм в Гандзасаре. Архитектура и рельефы // Автореферат канд. диссертации, Москва, - 2010, с. 24; Richardson H. Remarks on the Liturgical Fan, Flabellum or Rhipidion, The Age of Migrating Ideas // Early Medieval Art in Northern Britain and Ireland. Proceedings of the Second International Conference on Insular Art. Gloucestershire, - 1933. p. 29.

¹⁶ Օրմանյան Մ., Ծիսական բառարան..., էջ 60:

¹⁷ Այստեղ քռոցների շարքը ընդհատվում է միայն ամեն կողմի մեկ նիստի վրա արված կամ եղած պատուհանով:

ենք համադրված բուսական և երկրաչափական, երբեմն գալարահյուս, կամ բուսական տարրերի և խաչերի: Այստեղ պոնտերից երկուսը չունեն մշակում, իսկ մյուս երկուսը՝ գրեթե ասեղնագործ մշակման են ենթարկված:

Այս երկու եկեղեցիների թմբուկներում զարդամոտիվների նմանություններից¹⁸ զատ՝ առկա է նաև տարբերություն, ինչը դրսևորվում է Գանձասարի խաչվառ-քշոցների ձողաբարձ պոնտերի խարսխավոր վերջավորությամբ¹⁹:

Անդրադառնալով Հովհաննավանքի եկեղեցու թմբուկի հարդարմանը՝ պետք է նշել, որ այստեղ առնչվում ենք Հառիճի և Գանձասարի եկեղեցիների թմբուկների վրա կիրառված տարրերի միախառնման, մշակված ձևերի «վերակազմավորման» հետ: Այստեղ այս խորհրդանշական տարրերի մեջ կարծես համատեղվում են խաչվառն ու քշոցը: 12 նիստ ունեցող թմբուկի 8 նիստերի քառանկյուն շրջանակների մեջ բուսանախշ «վարդյակաձև» խաչվառ-քշոցներ են առկա, որոնք պսակում են «պատվանդան» ունեցող պոնտերը: Հետաքրքրականն այն է, որ քառանկյուն շրջանակի մեջ առնված և գալարուն նախշերով ձևավորվող այս «նախօրինակ» տարրը երեք եկեղեցիների վրա էլ հանդիպում է. երկուսի դեպքում եկեղեցու ճակատային (Հառիճավանք, Հովհաննավանք), մեկի դեպքում՝ թմբուկի հարդարման մաս կազմելով (Գանձասար): Փաստորեն, երեք եկեղեցիների հարդարման տարրերն իրենց համալրված և համադրված, կամ անփոփոխ արտահայտությունն են գտնում 1918 թվականի երկրաշարժից հետո վերականգնված Հովհաննավանքի թմբուկին²⁰: Ավանդույթների շարունակությունը դրսևորվում է նաև հետևյալ առումներով. քիվն ունի նույն մշակումը, ինչը տեսնում ենք Հառիճի գմբեթի քիվի դեպքում: Ունի հովհարաձև վեղար, եռափուսջ պոնտեր՝ վերնախարսխով և գետնախարսխով, պատուհանների սիմետրիկ բաշխում թմբուկի բոլոր կողմերի մեկ նիստում և ըստ սիմետրիկության սկզբունքի մյուս տարրերի պատկերում յուրաքանչյուր կողմի նիստերին և այլն: Այս երեք հայկական եկեղեցիներից բացի, թմբուկների հարդարման նմանատիպ սկզբունք է արտացոլված նաև Վրաստանի տարածքում գտնվող Ջարգմայի (Ախալցխայի մոտ) Պայծառակերպության վանքի Ս. Հովհաննես Ավետարանչի եկեղեցու թմբուկին (XIV դարի սկիզբ)²¹, որում քշոցն ու խաչվառը քանդակված են կեղծ և իրական պատուհանների որմնակամարաշարերի միջև: Իսկ Սաղամոյի (Ախալքալաքի մոտ) Ս. Երրորդություն եկեղեցու հարավային մուտքի ճակատակալի վրա (XIII-XIV դդ.)²² ներկայացված է խաչվառ-քշոց:

¹⁸ Միննույն ժամանակ ճարտարապետական ներքին լուսավորության խնդիրն էլ է լուծված՝ պատուհանի փոքր բացվածքներ են ներառված այս տարրերի մեջ:

¹⁹ Խարիսխը խորհրդանշում է Գողգոթան (տե՛ս Պետրոսյան Հ., Խաչքար..., էջ 23):

²⁰ Ղաֆադարյան Կ., Հովհաննավանք // Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, Երևան, 2002, էջեր 611-612:

²¹ Շնորհակալություն Լ. Միքայելյանին՝ այս կարևոր զուգահեռի մասին մեզ տեղեկացնելու համար:

²² Dadiani T. et al. Medieval Georgian sculpture. Tbilisi. -2017. pp. 277-278. fig. 624.

3. Քշոցն ու խաչվառը արվեստի նմուշներում

Քշոցն ու խաչվառը, խորհրդարանական և գործածական տեսանկյունից լինելով համաքրիստոնեական ծիսական իրեր, ներկայացվել են արդեն վաղքրիստոնեական արվեստում: IV դարից հայտնի լաբարումը, որպես նոր հավատի խորհրդանիշներից մեկը²³, տեսնում ենք օրինակ, Կոստանդիանոս Մեծի բրոնզե մետաղադրամի վրա (327 թ.), ինչպես նաև Ռոսսանոյի ավետարանի մանրանկարում (VI դարի կես): Հայկական արվեստում լաբարումի ամենավաղ պատկերն ունենք վաղքրիստոնեական քառակող կոթողների վրա (Ուջանից, Մրենից, Թալինից (3 օրինակ)²⁴, Անիպեմզայից, VII դար)²⁵: Քշոցների պատկերներ մեզ հայտնի են XIII դարի հայ-քաղկեդոնական որմնանկարներում²⁶, ինչպես նաև նույն ժամանակաշրջանի մասնատուփերի վրա: Հետաքրքրական է, որ Հառիճում և Գանձասարում ունենք քշոցի նույն խաչանման մշակումը, որը տեսնում ենք նաև Էաչի Պռոշյանի համար արված Խոտակերաց Ս. Նշան մասնատուփի (1300 թ.) վրա²⁷: Մեկ այլ օրինակ է Հալեպի Ստումա դաշտից գտնված արծաթե քշոցը (VI-VII դդ., Ստամբուլի թանգարան): Սկավառակի վրա ներկայացված է սերովբե, նրանից ներքև՝ երկու բոցավառվող անիվ: Քշոցի եզրավորումը սիրամարգի փետուրների տեսքով է՝ ինչպես սերովբեների թևերը: Հորինվածքն արտահայտում է Աստվածհայտնության գաղափարը և նույնանում Եզեկիել մարգարեի տեսիլքներով Քրիստոսի Համբարձման կամ Փառաբանման տեսարանի հետ²⁸ (հմմ. Լմբատավանքի որմնանկարը):

Եզրահանգում. Փորձելով պատասխանել այն հարցին, թե ինչու է հենց XIII դարի սկզբի եկեղեցիների հարդարանքում հանդիպում խաչվառ-քշոցը, պետք է բերել հետևյալ հիմնավորումները: Կարծում են՝ այս տարրերի քանդակման համար պատկերագրական աղբյուր է ծառայել եկեղեցու ներքին հարդարման բյուզանդական ավանդույթը, ինչը լայնորեն կիրառվում էր այդ ժամանակ թե՛ խորանի պատին, թե՛ թմբուկի նիստերին, որտեղ տրվում էր Երկնային պատարագի պատկերը՝ ի դեմս առաքյալների Հաղորդության (խորան) և առաքյալներով, մարգարեներով շրջապատված Քրիստոսի Փառաբանման (թմբուկ և գմբեթ) տեսարաններում՝ քշոցներով հրեշտակապետերի ներկայությամբ: Մեզ հասած հայկական որմնանկարները լավ չեն պահպանվել: Բայց պահպանված ունենք XIII դարի սկզբի հայ-քաղկեդոնական որմնանկարներ (նաև Հաղբատի Սբ Նշանի խորանի որմնանկարը), որոնցում Հաղորդության տեսարանը պարտադիր էր նաև դավանաբանական տեսանկյունից²⁹: Անիի Սբ

²³ Սարգսյան ավ. քին. Ե., Սպասք եկեղեցական ... էջ 919: Պետրոսյան Հ., Խաչքար..., էջեր 21-22; Холт Дж. Словарь сюжетов и символов в искусстве. М. – 1996. сс. 304, 601.

²⁴ Ազարյան Լ., Վաղ միջնադարյան հայկական քանդակը, Երևան, 1975, նկ. 52:

²⁵ Գրիգորյան Գ., Հայաստանի վաղմիջնադարյան քառանիստ կոթողները, Երևան, 2012, նկ.նկ. 57, 113, 114, 115, 205, 261:

²⁶ Драмбян И. Фрески Кобайра. Ереван. – 1979. с. 10.

²⁷ Der Nersessian S. L'art arménien. Paris. -1977. p. 202, fig. 158.

²⁸ Dictionnaire d'archéologie chrétienne et de liturgie, t. 5 (2), Paris, 1923, p. 1618-1619.

²⁹ Акопян З., Особенности иконографии армяно-халкидонитских памятников (X-XIII вв.) // ИФЖ, 2009, № 2-3, сс. 168- 169, 178, 181, 184.

Գրիգոր եկեղեցու (Տիգրան Հոնենցի, 1215 թ.) որմնանկարներում՝ գմբեթում, ներկայացված է Քրիստոսի Համբարձումը՝ չորս հրեշտակներով, իսկ թմբուկում՝ առաքյալները՝ Տիրամոր և հրեշտակապետերի, ինչպես նաև մարգարեների, քահանայապետերի հետ³⁰: Թմբուկում պատկերների բաշխման այս սկզբունքը հետևում է բյուզանդական ավանդույթին:

Մյուս կարևոր նախադրյալը կապված է Չաքարյանների հետ: Հայտնի է, որ եղբայրներից ավագը՝ Չաքարեն, Հայ Առաքելական եկեղեցու հետևորդ էր, իսկ Իվանեն՝ քաղկեդոնական, բայց և այնպես դա չէր խանգարում նրանց գործել համատեղ ջանքերով: Նրանց կառավարման ժամանակ է, որ երկու դավանական համայնքների միջև միառժամանակ ձևավորվում է փոխադարձ հանդուրժողականության մթնոլորտ: Չաքարեն անգամ փորձում է հայկական եկեղեցու ծեսում որոշակի փոփոխություններ ներմուծել՝ համաձայն բյուզանդականի և ստանում Գրիգորի և Լևոն Բ թագավորի և Հովհաննես Զ կաթողիկոսի հավանությունը³¹: Չնայած այն բանին, որ այդ առաջարկությունները կյանքի չեն կոչվել, բայց կարևոր հանգամանք է, որ այդ հարցերը քննարկվել են Լոռիի (1205 թ.) և Անիի (1207 թ.) եկեղեցական ժողովներում, ինչը ևս խոսում է պետական վերնախավի կողմից ծիսական հարցերին մեծ կարևորություն տալու մասին: Մույն խնդիրների քննարկումն ու վերհանումը, ինչպես նաև արվեստում այդ պատկերազարկան կանոնով առաջնորդվելը հասկանալի են դարձնում քռոց-խաչվառի խորհրդանշական պատկերի ի հայտ գալը հայկական եկեղեցիների հարդարանքում հենց XIII դարի սկզբին: Քռոցի և խաչվառի՝ որպես խորհրդանշական և գեղարվեստական տարրերի կիրառումը հայկական մի շարք հուշարձաններում, որը, չնայած, հիմնված է համաքրիստոնեական ավանդույթների վրա, այնուամենայնիվ կարելի է բնութագրել որպես հայկական քանդակային արվեստի ինքնատիպ դրսևորումների արդյունք:



Հաղորդություն, Ախթալա, XIII դարի սկիզբ

³⁰ Հակոբյան Զ., Հայ-քաղկեդոնական ավանդույթների արտացոլումը Անիի Ս.Գրիգոր (Տիգրան Հոնենց) եկեղեցու որմնանկարներում // «Էջմիածին», 2018, Դ, էջեր 68-69:

³¹ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց (աշխատ. Կ. Մելիք-Օհանջանեանի), Երևան, 1961, էջ 174:



Հատինալանք, 1201 թ.



Քշոց, XVIII դար, Մայր Աթոռ Ս.
Էջմիածնի թանգարան



Գանձասար, 1216-1238 թթ.



Հովհաննալանք, 1216-1221 թթ.

РИПИДА И ХОРУГВЬ В УБРАНСТВЕ БАРАБАНОВ АРМЯНСКИХ
ЦЕРКВЕЙ НАЧАЛА XIII ВЕКА
(Аричаванк, Ованаванк, Гандзасар)

Аветисян Т. Р.

Ключевые слова: *хоругвь, рипида, церковь, барабан, скульптурное убранство, Царство Небесное, ангел, Аричаванк, Ованаванк, Гандзасар.*

На барабанах главных монастырских церквей Аричаванка, Ованаванка и Гандзасара размещены рельефные изображения декоративных рипид и хоругвей. В статье дается символическая и практическая интерпретация этих литургических предметов, а также обзор художественного решения последних в декоративной системе церквей начала XIII века. Также делается попытка выявить предпосылки, которые могли способствовать включению данных декоративных элементов в декоративную систему, а точнее, в убранство барабанов ряда армянских церквей начала XIII века.

RHIPIDION AND BANNER IN THE DECORATION OF THE
DRUMS OF THE ARMENIAN CHURCHES
OF THE EARLY 13TH CENTURY
(Harichavank, Hovhanavank, Gandzasar)

Avetisyan T. R.

Key words: *rhipidion, banner, church, drum, sculptural decoration, Kingdom of God, angel, Harichavank, Hovhanavank, Gandzasar.*

On the drums of the main monastic churches of Harichavank, Hovhanavank and Gandzasar, there are sculpture images of the decorative rhipidions and banners. The article provides a symbolic and applied interpretation of these liturgical objects, and describes the character of the artistic definition of the latter in the system of church decoration in the early 13th century. There is also an attempt to identify the prerequisites that could contribute to the emergence of these decorative elements in the sculpture decoration, namely on the drums of a group of Armenian churches of the early 13th century.

Գրականություն

1. Ազարյան Լ., Վաղ միջնադարյան հայկական քանդակը, Երևան, 1975, 139 էջ:
2. Ազնավորյան արք. Ջ., Հասկանանք մեր Պատարագը. Սուրբ Պատարագի զարգացումը, կառույցը, բովանդակությունը (արևելահայերենի վերածումը՝ Ս. Խաչատրյանի), Երևան, 2020, 80 էջ:
3. Ավետիսյան Թ., Հայկական միջնադարյան եկեղեցիների թմբուկների քանդակային հարդարման խորհրդանշական և պատկերազարկական ավանդույթները // Բանբեր Մատենադարանի, 2018, 25, էջ 353-366:
4. Գրիգորյան Գ., Հայաստանի վաղ միջնադարյան քառանիստ կոթողները, Երևան, 2012, 288 էջ:
5. Եսեբեոս Կեսարացի, Պատմութիւն եկեղեցւոյ (թարգմ. ի ձեռն Հ. Աբրահամ Վ. Ճարեան), Վենետիկ, Ս. Ղազար, 1877, 775 էջ:
6. Խաչվար-Շողակաթ 2008, էլ. հասցե՝ http://masis.tv/component/option.com_afm/pid.128/vfile.992/lang.hy/
7. Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց (աշխ. Կ. Մելիք-Օհանջանեանի), Երևան, 1961, 551 էջ:
8. Հակոբյան Ջ., Հայ-քաղկեդոնական ավանդույթների արտացոլումը Անիի Ս. Գրիգոր (Տիգրան Հոնենց) եկեղեցու որմնանկարներում // Էջմիածին, 2018, Դ, 62-88 էջեր:
9. Ղաֆադարյան Կ., Հովհաննավանք // Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, Երևան, 2002, 611-613 էջեր:
10. Պատարագամատոյց ըստ արարողութեան Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ, Էջմիածին, 2006, 96 էջ:
11. Պետրոսյան Հ., Խաչքար. ծագումը, գործառույթը, պատկերազարկությունը, իմաստաբանությունը, Երևան, 2007, 393 էջ:
12. Սարգսյան ավ. քին. Ե., Սպասք եկեղեցական. Խաչվար // Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, Երևան, 2002, 918-919 էջեր:
13. Սարգսյան ավ. քին. Ե., Սպասք եկեղեցական. Քշոց // Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, Երևան, 2002, 918-919 էջեր:
14. Օրմանյան Մ., Ծիսական բառարան, Երևան, 1992, 182 էջ:
15. Акопян З. Особенности иконографии армяно-халкидонитских памятников (X-XIII вв.) // ИФЖ. -2009. № 2-3. сс. 167- 185.
16. Богослужебная утварь (глава 3), [Настольная книга священнослужителя](http://www.magister.msk.ru/library/bible/comment/nkss/nkss16.htm), эл. адрес: <http://www.magister.msk.ru/library/bible/comment/nkss/nkss16.htm> (08.08.2021)
17. Бутырский М. Лабарум // Православная энциклопедия, эл. адрес: <https://www.pravenc.ru/text/2462397.html> (08.08.2021)
18. Вагнер Г. К. Византийский храм как образ мира // Византийский временник. -1986, т. 47, сс. 163-181.
19. Демус О. Мозаики византийских храмов, Принципы монументального искусства Византии. М. – 2001. 64 с.
20. Дрампян И. Фрески Кобайра. Ереван. -1979. 91 с.
21. Казарян А. Кафедральный собор Сурб Эчмиадзин и восточнохристианское зодчество IV-VII вв. М. 2007. 216 с.
22. Казарян А. Церковная архитектура стран Закавказья VII века, формирование и развитие традиции. Т. 1. М. – 2012. 388 с.

23. Казарян А. Тромпово-парусный подкупольный переход. Происхождение и эволюция в системе купольных глав // Архитектурное наследство. -2012. Вып. 57. 8-24 с.
24. Казарян Г. Храм в Гандзасаре. Архитектура и рельефы. Автореферат канд. диссертации. М. - 2010.
25. Лазарев В. Н. Система живописной декорации византийского храма IX-X вв. // Византийская живопись. Сборник статей. М. -1971. 406 с.
26. Герман Константинопольский. Сказание о Церкви и рассмотрение таинств. М. -1995. 90 с.
27. Холл Дж. Словарь сюжетов и символов в искусстве. М. -1996, 656 с.
28. **Хоругви** // Православная энциклопедия “Азбука веры”. Дата обращения: 16 февраля 2017. эл. адрес: <https://azbyka.ru/xorugvi>
29. Dadiani T. et al. Medieval Georgian sculpture. Tbilisi. -2017. 375 p.
30. Der Nersessian S., L'art arménien, Paris, 1977, 258 p.
31. Dictionnaire d'archéologie chrétienne et de liturgie. t. 5 (2). Paris. -1923. 2744 p.
32. Garibian N. La Jérusalem nouvelle et les premiers sanctuaires chrétiens de l'Arménie, méthode pour l'étude de l'église comme temple de Dieu. Isis Pharia. -2009, 405 p.
33. Richardson H. Remarks on the Liturgical Fan, Flabellum or Rhipidion, The Age of Migrating Ideas, Early Medieval Art in Northern Britain and Ireland // Proceedings of the Second International Conference on Insular Art. Gloucestershir. -1933. 27-34 p.

*Ընդունվել է՝ 06. 09. 2021
Գրախոսվել է՝ 22. 10. 2021
Հանձնվել է տպ.՝ 15. 11. 2021*

Տեղեկություններ հեղինակի մասին

Թագուհի ԱՎԵՏԻՍՅԱՆ՝ Երևանի պետական համալսարանի
ասպիրանտ /արվեստաբանություն/, էլ. հասցե՝ taguhiavetisyan@yandex.ru

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ XX ԴԱՐԻ
ՄԿՁԲԻՆ. ՆԿԱՐՉԱԿԱՆ ՍՏՈՒԴԻԱՅԻ (ԴՊՐՈՑԻ) ՀԻՄՆԱԴՐՄԱՆ
100-ԱՄՅԱԿԻՆ ԸՆԴԱՌԱՋ

Արաքս Մարգարյան

Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի Գյումրու մասնաճյուղ
Շիրակի պետական համալսարան

Բանալի բառեր՝ *Ալեքսանդրապոլ, նկարչական ստուդիա, առաջին ցուցահանդես, նկարիչների առաջին միություն, Գևորգ Բրուտյան, Եղիսաբեթ Պատկանյան, նկարչական դպրոց, Ենոք Նազարյան, Ստեփան Ալթունյանը, 100-ամյա տարեդարձ:*

Հաղորդումը նվիրված է Ալեքսանդրապոլի գեղարվեստական կյանքի առանձնահատկություններին, որոնք, զրական, թատերական և երաժշտական կյանքի աշխուժացմանը զուգընթաց, նկատվում են XX դարի սկզբին: Քաղաքը դարձավ գեղարվեստական կյանքի կենտրոններից մեկն իր տեղաբնակ արվեստագետներով, արվեստասեր հասարակայնությամբ: Կարելի է ասել, որ հենց այստեղ են հիմնվել գեղարվեստական կյանքի համար կարևորագույն կառույցները. 1913թ-ին քաղաքում բացվում է առաջին նկարչական ցուցահանդեսը, ինչն այդ տարիներին մեծ համարձակություն էր պահանջում: 1916թ Ալեքսանդրապոլում ձևավորվում է նկարիչների առաջին միությունը:

1921թ. հիմնվում է առաջին նկարչական ստուդիան Անդրկովկասում, որը հետագայում վերածվելու է Մերկուրովի անվան նկարչական դպրոցի: Հեղինակը սեղմ, բայց բնութագրող տողերով ներկայացնում է նրա մի շարք երախտավորներին, բացահայտում նրանց դերը 100-ամյա գեղարվեստի դպրոցի կենսագրության մեջ:

Նախաբան. Քաղաքի, մասնավորապես նկարչական ավանդույթների ձևավորման գործում մեծ խթան են հանդիսացել այստեղ ստեղծված կրթական հաստատությունները, մասնավորապես՝ դեռ նրա ալեքսանդրապոլյան շրջանում **նկարչական ստուդիայի** հիման վրա ստեղծված քաղաքի առաջին նկարչական դպրոցի բացումը. ըստ որոշ կարծիքների՝ այն առաջինն էր Խորհրդային Հայաստանում, Անդրկովկասում և նույնիսկ Խորհրդային Միությունում: 1921թ. բացված այս դպրոցի առաջին տնօրենն էր Եղիսաբեթ Պատկանյանը (1921-1923), իսկ հիմնադիրներն էին նկարիչներ Յուլիա Վերբեժցկայան, Աշոտ Սաֆարյանը, Գևորգ Բրուտյանը, Էնովբ Նազարյանը, Ստեփան Ալթունյանը:

Ստուդիայում սովորող աշակերտների առաջին խումբը բաղկացած էր 13 հոգուց: 1936 թվականին այն դարձել է քառամյա նկարչական դպրոց, որը 1947 թվականից սկսել է կրել այդ շրջանում Խորհրդային Միությունում մեծ համբավի արժանացած տեղացի քանդակագործ Ս. Մերկուրովի անունը: Ինչպես կարելի է ենթադրել տեղի նկարիչների կենսագրական տվյալներից, այստեղ են իրենց նախնական կրթությունն ստացել հետագայում հանրահայտ դարձած տեղի արվեստագետների մեծամասնությունը: Իր պատանեկան տարիների մասին հուշեր պատմելիս դպրոցի նախկին տնօրեն, գեղանկարիչ Սամվել Գալստյանը¹ պատմել է ոչ միայն դպրոցի՝ այդ ժամանակվա համբավի, այլ նաև հարուստ արխիվի ու գույքի մասին. «Մերկուրովի անվան նկարչական դպրոցը, որը շուտով կլինի 100 տարեկան, երկրաշարժից առաջ շատ հարուստ էր իր գրադարանով, օժանդակ նյութերով: Լուսանկարներ կային, որտեղ երևում է, թե ինչպես Լենինգրադի գեղարվեստի ակադեմիան, մեր դպրոցին՝ իբրև Խորհրդային Միությունում բացված առաջին նկարչական դպրոցի, քանդակներ էր ուղարկում. հին լուսանկարներում մեր դասատուները, որ երիտասարդ աղջիկներ էին այն ժամանակ, այդ փաթեթներն են բացում, արձանները հանում»²:

Նորաբաց ստուդիան 1921թ-ից գործել էր Ալեքսանդրապոլի Սուրբ Նշան եկեղեցու հարևանությամբ գտնվող Սահականուշյան օրիորդաց դպրոցի շենքի առաջին հարկի երկու սենյակներում, հետո տեղափոխվել է «Դալտոպլանի» շենք, 1928թ-ից տեղափոխվել է քաղաքի մեծահարուստ Դրամփյանի աղջկա համար նախատեսված հայտնի «օժիտի շենքը», որը մի ժամանակ Ալեքսպոլի քաղաքապետարանն էր, 1940-ականներին տեղակայվել է Օլգինյան գիմնազիայի մի մասում (ներկայումս՝ Պուշկինի անվան թիվ 6 դպրոց): 1970-ից գործել է Մ. Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտի շենքում (ներկայիս Գյումրու տեխնոլոգիական կենտրոնը): 1980-ական թվականներին 250 աշակերտների հետ վերադառնում է «օժիտի շենք», որտեղ գործում էր մինչև 1988թ. երկրաշարժը: Երկրաշարժից հետո այս 30-սենյականոց շենքում բնակություն էին հաստատել անտուն մնացած ընտանիքներ, և դպրոցը հայտնվել էր քաղաքային այգու տարածքում, որտեղ մոտ 25 տարի գործել է տնակային պայմաններում: Ցավալի է, բայց հետերկրաշարժյան տարիներին կորել, ոչնչացել են դպրոցի մեծ արխիվն ու գրադար-

¹ Գալստյան Ս., Գյումրի. Ս. Մերկուրովի անվան նկարչական դպրոցի նախկին տնօրենի հուշերից, Գյումրի, 2019:

² Նույնը:

րանը: 2015-ից դպրոցի համար տրամադրվել է Չերազի փողոցի վրա գտնվող առանձնատունը (նախկինում՝ Հովհաննես Թումանյանի անվան մանկական գրադարան), որտեղ և մինչ օրս այն տեղակայված է:

Բարդ ողիսականը չի խանգարել ստուդիայում (դպրոցում) որակյալ գեղարվեստական կրթության մատուցման գործին: Տարբեր տարիներին ստուդիայի սաներն են եղել հայտնի նկարիչներ Խաչատուր Եսայանը, Մարիամ և Երանուհի Ասլամազյան քույրերը, Կարո Տիրատուրյանը, Շանթ Մարգարյանը, Հակոբ Անանիկյանը, Հրաչյա Ռուխկյանը, Խաչատուր Վարդպարոնյանը, Սուրեն Ստեփանյանը, Հակոբ Անանիկյանը և այլք: Նրանցից շատերը տարբեր ժամանակներում դարձել են նույն դպրոցի ուսուցիչներ և երբեմն էլ տնօրեններ³: Գյումրեցի գրեթե բոլոր արվեստագետների մասնագիտական կենսագրությունը սկսվում է այս դպրոցից, և նրանք մեծ հիացմունքով են խոսում դպրոցի երբեմնի համբավի, իրենց դասավանդած ուսուցիչների մասին, որոնք հետագայում առանցքային դեմքեր են դարձել ոչ միայն տեղի նկարչական դպրոցում, այլ նաև մեծ համբավ են ձեռք բերել Խորհրդային Հայաստանում և նրա սահմաններից դուրս: Խորհրդային տարիներին այն պրոֆեսիոնալ ակադեմիական դպրոց էր, որտեղ ամեն ցանկացող չէ, որ կարող էր ընդունվել, իսկ շրջանավարտները բարձրագույն ուսումնական հաստատությունների համար արդեն իսկ պատրաստ կադրեր էին: Ուշագրավ է, որ այս դպրոցը քաղաքում իր գոյությամբ ձևավորում էր արվեստի մի յուրօրինակ մթնոլորտ:

Դարասկզբին Ալեքսանդրապոլում ապրած ու ստեղծագործած արհեստավարժ նկարիչները մեծ թիվ չէին կազմում, սակայն ներկայացնում էին որակյալ մի հատված: Կերպարվեստի ոլորտում կյանքի են կոչվում գեղանկարչական ու գրաֆիկական տարբեր ժանրերի՝ կենցաղային, դիմանկար, բնանկար առանձին ստեղծագործություններ: 1913թ-ին քաղաքում բացվում է առաջին նկարչական ցուցահանդեսը, ինչն այդ տարիներին մեծ համարձակություն էր պահանջում, որի հիմնադիրն էր Գևորգ Բրուտյանը, որ իր նման երկու նվիրյալների՝ հավանաբար Վերբժիցկայայի ու Մովսիսի հետ գրաֆիկական ու գեղանկարչական գործերով ներկայացել է Ալեքսանդրապոլցիների դատին: Ցուցահանդեսը գոհունակությամբ է ընդունվել արվեստասեր հասարակության կողմից: 1916թ. Ալեքսանդրապոլում ձևավորում է նկարիչների առաջին միությունը:

Այստեղ ապրել ու ստեղծագործել են Ենթ Նազարյանը, Գևորգ Բրուտյանը, Օհան Բաղդասարյանը: Հատկանշական է, որ այս տարիներին Ալեքսանդրապոլում ստեղ-

³ Նկարչական ստուդիայի/ դպրոցի տարբեր տարիների տնօրենները՝ Եղիսաբեթ Պատկանյան (1921-1923), Գևորգ Բրուտյան (1923-1930), Աշոտ Սաֆարյան (1931-1932), Ստեփան Ալթունյան (1932-1935), Յուլյա Վերբժիցկայա (1935-1936), Անդրանիկ Մարկոսյան (1936-1937), Մամիկոն Փանոսյան (1937-1945), Շանթ Մարգարյան (1945-1953), Հարություն Սահակյան (1953-1954), Շանթ Մարգարյան (1954-1979), Սերգեյ Միրզոյան (1979-1987), Մամվել Լաճիկյան (1987-1995), Հովհաննես Գասպարյան/ Ծիբո/(1995-2009), Վազգեն Ստեփանյան (2009-2010), Մամվել Գալստյան (2010 -2016), Ժակլին Մարգարյան(2016-ից մինչ օրս):

ծագործել ու նկարչական ստուդիայում դասավանդել են ռուս սպաների կանայք՝ Յուլիա Վերբոժիցկայան, Մոլևան, Եղիսաբեթ Պատկանյանը:

Դիմանկարային արվեստի ամենափայլուն վարպետներից մեկը պոլսահայ **Ենոք Նազարյանն** (1868-1928) էր՝ իր ողջ ստեղծագործական կյանքը Ալեքսանդրապոլին ու նրա բնակիչներին նվիրած մի արվեստագետ: Նրա կավճանկար «Հ. Հեքիմյանի», «Մ. Հեքիմյանի», «Կարապետ Կուզիկյանի» դիմանկարները լուրջ ներդրում են այս ժանրում: 1915-20-ականների ծանր իրադարձությունների տարիներին Ե.Նազարյանը կարճ ժամանակով լքում է Ալեքսանդրապոլը, սակայն հետագայում վերադառնում է և իր ակտիվ մասնակցությունն է բերում քաղաքի գեղանկարչական կյանքի զարգացմանը:

Ե. Նազարյանի ժամանակակիցն էր տեղացի նկարիչ-ազգագրագետ **Արշակ Բրուտյանը** (1866-1936): Նրան են վերագրվում Յոթվերք եկեղեցու որմնանկարները, Ալ. Մխիթարյանցի, տեր Խոբեն քահանա Աբգարյանի դիմանկարները, որոնք վկայում են նկարչի մասնագիտական պատրաստվածության մասին: 1912թ. նկարչական ասպարեզ է իջնում նաև նրա որդին՝ **Գևորգ Բրուտյանը** (1888-1952), որի անվան հետ էին կապվելու Ալեքսանդրապոլի գեղարվեստական կյանքում տեղի ունեցած գրեթե բոլոր դրական տեղաշարժերը: Ընդհանուր կրթությունը նա ստացել էր Ալեքսանդրապոլում, իսկ մասնագիտականը՝ Թիֆլիսում՝ Օսկար Շմերլինգի նկարչական դպրոցում: 1910թ-ից նա արդեն Ալեքսանդրապոլում էր և իր նման նվիրյալների հետ ձեռնամուխ է լինում քաղաքի մշակութային կյանքի վերափոխմանը: Նրա նախաձեռնությամբ 1913թ. կազմակերպված ցուցահանդեսին ներկայացվել էին հետևյալ աշխատանքները՝ «Հիվանդ ընկերոջ մոտ», «Հուղարկավորություն», «Ճակատագրական հարսնացուն»: Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից անմիջապես հետո Բրուտյանն սկսում է ակտիվորեն մասնակցել քաղաքական-մշակութային կյանքին: 1916-1919թթ. Ալեքսանդրապոլում հրատարակվող «*Наша дна*» լրագրում և «*Набат*» շաբաթաթերթում Գ. Բրուտյանը հանդես է եկել կենցաղային նկարներով ու ծաղրանկարներով՝ «ուղղված սոցիալական անհավասարության, սնտիապաշտության, բուրժուական բարքերի և նման երևույթների դեմ»: Երբ 1921թ. Ալեքսանդրապոլում բացվում է առաջին նկարչական ստուդիան, Բրուտյանը աշխատանքի է անցնում նախ՝ իբրև դասատու, ապա տնօրեն՝ դպրոցը ղեկավարելով մինչև 1930թ.:

Գ. Բրուտյանի հետագա գործունեությունը համընկնում է խորհրդային շրջանին, որին կանդրադառնանք մեր ուսումնասիրության հաջորդ գլխում:

Օհան (Հովհաննես) Բաղդասարյանը (1869-1948) թեև ծնվել էր Ալեքսանդրապոլում ու այստեղ անցկացրել ստեղծագործական ողջ կյանքը, միայն ուշ տարիքում է սկսել ցուցադրվել: Նրա «Արարատը Տաճկաստանի Գարապուլաք գյուղից» (1909) յուղաներկ էտյուդը թյուրիմացաբար ներկայացվել է սփյուռքահայ նկարիչների ցուցահանդեսում⁴:

Ալեքսանդրապոլի գեղարվեստական կյանքում նկատելի ներդրում է ունեցել ծնունդով ջավախեցի **Մտեփան Այթունյանը** (1893-1961), որը, 1918թ. ավարտելով Կիևի գեղարվեստի ուսումնարանը, 1919թ. բնակություն է հաստատում Ալեքսանդրապոլում,

⁴ **Աղասյան Ա.** Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում, Երևան 2009, էջ 260:

որտեղ 1919-31թթ. նկարչություն է դասավանդել քաղաքի դպրոցներում, նկարչական ստուդիայում (դպրոցում): Նրա մոտ են նկարչության իրենց առաջին դասերը ստացել խորհրդահայ, այդ թվում՝ Արևմտյան Հայաստանում ծնված, 1915 թվի կոտորածներից մազապուրծ Ալեքսյուրի ամերիկյան որբանոցում ապաստան գտած ապագա արվեստագետներից շատերը՝ Կ. Մինասյանը, Խ. Եսայանը, Ա. Չիլինգարյանը, Կ. Տիրատուրյանը, Հ. Ավետիսյանը, Կ. Միմոնյանը, Հ. Ռուխկյանը, Հ. Անանիկյանը և ուրիշներ⁵:

ХУДОЖЕСТВЕННАЯ ЖИЗНЬ АЛЕКСАНДРОПОЛЯ В НАЧАЛЕ XX ВЕКА: К СТОЛЕТНЕМУ ЮБИЛЕЮ ОСНОВАНИЯ ХУДОЖЕСТВЕННОЙ СТУДИИ

Маркарян А. В.

Ключевые слова: *Александрополь, художественная студия, первая выставка, первый союз художников, Геворг Брутян, Елизавет Паткянян, художественная школа, Енок Назарян, Степан Алтунян, 100-летний юбилей.*

В работе представлены особенности художественной жизни Александрополя в начале XX века, которая развивается параллельно с театральной, музыкальной, литературной жизнью. Город со своими художниками, скульпторами, любителями искусства становится средоточием художественной жизни. Можно сказать, что именно здесь были основаны важнейшие для художественной жизни институции. В 1913-ом в городе открылась первая художественная выставка, что было достаточно смело для тех лет. В 1916 г. в Александрополе был основан первый Союз Художников. В 1921 г. была основана первая художественная студия в Закавказье, которая в последствии была переименована в художественную школу имени Меркурова.

THE ARTISTIC LIFE OF ALEXANDROPOL AT THE BEGINNING OF THE XX CENTURY: TO THE 100TH ANNIVERSARY OF THE FOUNDATION OF THE ART STUDIO (SCHOOL)

Markaryan A. V.

Key words: *Alexandropol, art studio, first exhibition, first Union of Artists, Gevorg Brutyan, Elizaveta Patkanyan, art school, Enok Nazaryan, Stepan Altunyan, 100-year anniversary.*

The article presents the features of the artistic life of Alexandropol, which are observed in parallel with the revival of literary, theatrical and musical life at the beginning of the XX century. The city has become a center of artistic life with local artists, art lovers. We can say that it was here that the most important structures for artistic life were founded: in 1913, the first art exhibition opened in the city, which in those years required great courage. The first Union of Artists was formed in Alexandropol in 1916. In 1921, the first art studio in Transcaucasia was founded, which later turned into the Merkurvov Art School.

⁵ Նույն տեղում, էջ 260:

Գ ր ա կ ա ն ո թ յ ո ն

1. Աղապյան Ա. Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում, Երևան, 2009:
2. Александров Н. Закавказье. Армяне. М. -1901.
3. Военно-статистическое обозрение Российской империи. Т.16.
4. Гукасян А. Гюмри." Тигран Мец". -2009.
5. Художественная школа им. С.Д. Меркурова. Ленинакан. -1981.

Ընդունվել է՝ 26. 08. 2021

Գրախոսվել է՝ 22.10. 2021

Հանձնվել է տպ.՝ 15. 11. 2021

Տեղեկություններ հեղինակի մասին

Արաքս ՄԱՐԳԱՐԳԱՆ՝ արվեստագիտության թեկնածու, դոցենտ,
Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի Գյումրու մասնաճյուղի
կերպարվեստի տեսության ամբիոնի վարիչ, ՇՊՀ գեղարվեստի ամբիոնի
դասախոս, Էլ. հասցե՝ araxmargaryan@gmail.com

Ա Ր ի Տ Ե Ք Տ Ր Ա
Ճ Ա Ր Տ Ա Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
A R C H I T E C T U R Y

УТД: 72.02

DOI: 10.52971/18294316-2021.3-294

Շ Ե Ր Կ ՈՎ Ի Ն Ո Ր Ա Տ Ի Ն Ե Ն Կ Ո Ն Ե Ն Կ Ո Ն Ե Ն Կ Ո Ն
Ա Ր ի Տ Ե Ք Տ Ր Ա Ն ՈՒ Ն Կ ՈՒ Ն Կ ՈՒ Ն Կ ՈՒ Ն
ЦЕРКОВЬ НОРАШЕН В КОНТЕКСТЕ АРМЯНСКОЙ
АРХИТЕКТУРНОЙ ШКОЛЫ ТАЙКА И ГУГАРКА X-XI вв.¹

Դավիթ Նատակյան

Ширакский центр арменоведческих исследований НАН РА
Проблемная лаборатория архитектуры и строительства им. Ал.Таманяна

Ключевые слова: *архитектурная школа Тайк-Гугарка, церковь в Норашене, планировочные решения, объемно-пространственные решения, декоративные решения.*

В статье представлена церковь в бывшей армянонаселенной деревне Норашен в контексте с армянской средневековой архитектурной школы Тайка и Гугарка X – XI вв., с целью получения более всесторонних результатов. Были проведены планировочные, объемно-пространственные и декоративные исследования, как с современными однотипными постройками церкви Норашен, так и были проведены параллели с армянского зодчества раннехристианского периода.

Введение: В период развитого средневековья для стран Византии и Закавказья большую роль сыграл регион Тайк с его географическим местоположением и сильными правителями. В раннем средневековье (IV-VIII вв.) Тайк был владением знаменитой княжеской фамилии Мамиконянов, но в конце VIII в. и начале IX в. ситуация изменилась. Являясь организаторами восстаний в 774-775 гг., они потерпели поражение и подверглись преследованиям со стороны арабов. Мамиконяны вынуждены были покинуть свои владения и переселиться в Византию, оставив в Тайке младшую ветвь (Горникянов и Чордванелянов). В конце IX в. князь Ашот (Мсакер) Багратуни построил в Тайке замок Калмах и перевез туда свою семью, а также и княжеский род Гнуни, которые попросили о помощи Ашота в защите от арабов. Багратиды пользуясь положением взяли Тайк и стали еще сильнее. В связи с малой информативностью известно, что в Тайке в первой половине X в. правили Тайкские ку-

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՄՆ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21T-2A292 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

рапалаты из северной ветви Багратидов. Княжество Тайк стало сильнее во время правления Давида Курапалата (966-1000 гг.), когда княжества в Закавказье боролись за независимость от западных эмиратов. Армянские и грузинские княжества вместе с Тайком создали нерушимый союз, который помог им защититься. Северные регионы Тайка были во владении родственников северных Багратидов, с юга и юга-востока они граничили с Кайсикским эмиратом и с Карсским княжеством Багратидов, а с северо-запада - с Византийской империей, с которой поддерживались хорошие отношения, но потом Тайк был захвачен ими. Тайк был населен армянами, которые, в основном были обращены в Византийскую веру (халкидонитами). В правление Давида Курапалата (966-1000 гг.), особо процветало Тайкское княжество, куда входила и часть Гугарка, а другая часть Гугарка была у другого армянского княжества Ташир - Дзорагета. Тайкское княжество в третьей четверти X в. было доминантным среди соседних армянских и грузинских малых княжеств, но сохраняло союзнические отношения с Армянским королевством и Византией, после смерти Давида Курапалата и аннексией Византии и Тюрков сельджуков в XI в. регион опустел и стал обычным византийским регионом вместе со всей Арменией².

Тайк стал для Византии опорой для завоевания всей Армении и Грузии. В 1045 г. Византия, завоевав центральную Армению, создала Армянский Катепанат, который объединила с другими армянскими (в числе и Тайк) и грузинскими княжествами, создав две фемы - Армения и Иберия. В северной части Армении (восточные регионы Гугаркской провинции) возникло Кюрикидское (ветвь Багратидов) княжество Ташир-Дзоракерта. В IX в. Ашот I Багратуни очистил от арабов и присоединил земли Гугарка к владениям Багратидов как придворные земли, с назначением наместников. По сравнению с другими армянскими княжествами Ташир-Дзорагетское княжество создало самое центральное правительство. Центром был замок Самшулде, потом замок Лоре, который с севера граничил с Кахетским княжеством. В 30 годы XI в. роль княжества Ташир-Дзорагета усилилась в Закавказье, когда в Кахетии (между Гугарком и Картли) начала править ветвь Кюрикидов (Багратидов). Сын Давида Гагик стал основателем богатства Кюрикидов в Кахетии и союзничал с Лорийскими Багратидами³.

Атрпет пишет, что коренными жителями Аджарии, Имерхевии и округа бассейна Чорох являются армяне, вынужденно принявшие ислам. Они соблюдали древнеармянские обычаи, не забывая свой родной язык. Их легко узнать по армянским фамилиям, хотя имена у них исламские. Атрпет отмечает существование многочисленных армянских слов, которыми пользуются жители региона в своей повседневной речи. Население региона в IX-XI вв. состояло из армян, принявших халкидонитское (греческое) вероисповедание, позднее они приняли грузинское вероисповедание, а затем, под давлением турок были вынуждены принять ислам. Возможно, по этой причине армянское название храма сохранилось до наших дней⁴.

В деревне Норашен района Кхардж провинции Гугарк, входившей в Великую Армению (ныне деревня Буланьк провинции Ардвин в современной Турции) находится одноимённая церковь Норашен (турец. — Йени Рабат). Здание мало изучено, его чёткой датировки нет, но по архитектурным чертам церковь относится ко второй половине X — первой четверти XI веков.

² Հայ ժողովուրդի պատմություն, հ. III, ՀՄՄՀ ԳԱ հրատ., Երևան, 1976, էջ 95:

³ Հայ ժողովուրդի պատմություն, հ. III, էջեր 15, 104:

⁴ Ասրպլետ, Ճորձիի ավազանը, Վիեննա, 1929, էջ 198:

Русский археолог и историк архитектуры Андрей Павлинов в 1888 году осматривал церковь и писал, что исторических источников о ней и месте её расположения довольно мало, но известно, что одно из названий поселения было Антонис, а коренные жители местности называли её «Норашен», в переводе с армянского — «новое поселение», «новозведенный». То же значение имеет и нынешнее турецкое название церкви «Йени Рабат»⁵.

Атрпет из Конгрегации Мхитаристов после путешествия в регион упоминает поселение Эни Рабате/Энги Рабат (тур. Йени Рабате). Он пишет, что до войны (первая мировая - Д.Н.) в Тандзуте и Эни Рабате жили коренные жители армяне-ремесленники, которые остались как осколки памяти о былых величиях поселений⁶.

Востоковед Николай Марр тоже посетил Норашен в конце XIX и начале XX вв., и в своей работе пишет, что жителями деревни являются армяне, которые исповедуют армянскую григорианскую апостольскую веру и являются единственными жителями, численностью 25 домов. Церковь тогда действовала и, как упоминает Марр, имела две новые надписи на стенах на армянском. Первое находилось в западном фасаде - «Ք ի ծիսով Յօհաննէս» «Ованнес слуга Христа» Д. Н., а второе на южном фасаде, но к сожалению автор не указал какие надписи были. Марр перед входом увидел развалины каменного входа в церковь, а отец Григорий сообщил, что он помнит сводчатый вход в неразрушенном виде⁷.

Около западной стены южного рукава креста находились каменные обломки, где в одной из этих камней Марр нашел следы армянских и грузинских надписей, которые были в плохом состоянии. Про это армянский священник из села Тандзут Григор Тер-Есаянц сказал, что около 40 лет назад, когда армяне обновляли/ремонтировали церковь эти обломки случайно попали на территорию церкви, а старик по имени Галуст сообщил, что на западной стороне церкви Норашен есть подземный вход, ведущий на нижний этаж церкви, который сейчас завален⁸.

Другие более поздние исследователи (И. Жданевич, супруги Тиери, В. Джобадзе, П. Закарая и др.) церковь Норашен идентифицируют с Шатбертом⁹. Кстати «Шатберт» на армянском означает «место где есть много крепостей», «много крепостный».

Из картографических и других источников нам стало известно о другом Шатбертском монастыре, который тоже находится в округе Артанудж (Артануш), близ села Агарак (ныне Окумушляр). И, как показывают наши натурные обследования, из села и монастыря видны остатки средневекового замка (полагаем, что замок Шатберт), который расположен на возвышенности. Так как около села Норашен и около церкви нет никакой крепости, мы полагаем, что Норашену не имеет смысла присваивать имя Шатберт.

Планировочные решения и анализ.

Начиная с IV в. в армянской архитектуре, параллельно с базиликальными композициями, начали возводиться и купольные церкви. Первыми из них стали центрально-купольные церкви. Как отмечает М. Асратян, «эта архитектурная форма имеет происхождение сугубо местное. Центричные культовые памятники были известны на территории Армении еще в первой половине I тыс. до н.э. Подавляющее большинство известных нам урартских

⁵ Павлинов А. М. Экспедиция на Кавказ 1888 г. // Материалы по археологии Кавказа, собранные экспедициями Императорского МАО. Вып. III. М. с. 69.

⁶ Արթրէտ, ԿԶԸ, ԿԶԻ, ԿԶԵՐ 205-206:

⁷ Марр Н.Я. Георгий Мерчул. Житие Григория Хандзтийского, Грузинский текст, перевод, с дневником путешествия в Кларджию и Шавшию. СПб. -1911. с. 100 .

⁸ Марр Н.Я. Георгий Мерчул... с. 103.

⁹ Закарая П. Зодчество Тао-Кларджетии. Тб. -1990. с. 85.

храмов имеют центричную композицию. Известная темница (III в.) древнего Арташата, которую позже сохранили без изменений, превратив в церковь св. Григория, имела купол, опирающийся на круглое основание. Церковь св. Григория находится на территории монастыря Хор-Вирап. Каменные купола в Армении происходят от деревянных шатровых перекрытий, которые принадлежали армянскому народному жилищу, описанному еще Ксенофонтом. В истории мировой архитектуры существует ряд примеров композиционных перевоплощений элементов жилого дома в элементы культового здания, одним из таких примеров может служить схожесть древнейших храмов Греции и типа жилого дома эгейской эпохи. Армянский жилой дом «глхатун» с перекрытием типа «азарашен» является настоящим примером композиции куполообразного перекрытия, основанного на квадрате»¹⁰.

Церковь крестово-купольного типа с крестообразным планом, хотя расположенные около апсиды дяконник и жертвенник (на армянском авандатун) «маскируют» крестообразность. Северный и южный рукава крестов почти в 2.5 раза меньше западного. Церковь построена из жёлто-розового камня.

В плане три рукава крестов заканчиваются прямоугольно, и только восточный рукав заканчивается полукруглой апсидой. Апсида сейчас разрушена, но по останкам и надстенным следам видно, что она первоначально была высотой около 0.5 м. На вертикальных стенах полусферической апсиды есть симметрично расположенные маленькие ниши, которые предназначены для религиозных церемониальных нужд и типичны для армянского зодчества. Из апсиды есть вход в северный дяконник или жертвенник, который является одной из особенностей армянской архитектурной школы Тайка и Гугарка, и часто встречается в армянских халкидонитских церквях. Имеет два входа - из западной и южной стены западного рукава креста, где в последнем столетии западный вход был закрыт. Окна имеются со всех четырех сторон, а главное окно расположено над алтарной частью.

Общий планировочный анализ показывает, что церковь Норашен схож с другими религиозными постройками в Тайке и Гугарке как Ишхан, Цкаростав, Тбет (после реконструкции), Хах или Хаху, Описа (ныне разрушена), Миджнадзор, Долисхана, Екек, Дадашен, Хожорни. Такой тип встречается и в окрестностях Багратидской столицы Ани X-XI вв, а также в провинции Карс, например Егегнамор/Лернамор (ныне Чанглы). По своим пропорциям и размерам более похож на церковь Долисхана, который построил/перестроил король Тайка Давид Курапалат Багратуни (966-1000 гг.).

Большинство из вышеуказанных аналогов церкви Норашен в Тайке и Гугарке построил/перестроил Давид Курапалат, поэтому очевидная датировка церкви это вторая половина X в. Тип церкви Норашен был самым популярным в провинциях Тайк и Гугарк, и, не считая Норашен, мы насчитали 10 однотипных церквей. Несмотря на однотипность, каждая постройка уникальна по своему, такое архитектурное мышление проявляется в армянском зодчестве не только в ранехристианский период, но и до этого. Во всех постройках этого типа мы видим расположенные около апсиды дяконник и жертвенник (на армянском авандатун), которые строились двухэтажными в больших храмах (Ишхан, Тбет, Хах), а в более маленьких и средних церквях как Норашен они одноэтажные. Некоторые дяконники и жертвенники (на армянском авандатун) как в Норашене имеют полуциркульную апсиду (Ишхан, Хах, Миджнадзор, Хожорни, Екек и др.), а в других постройках они прямоугольные и без апсид.

¹⁰ Асратян М.М. Армянская архитектура раннего христианства. М. Инкомбук. -2000. с. 18.

Другая планировочная характеристика Церкви Норашен это вытянутый западный рукав креста, который почти 2.5 раза длинее остальных (1:2.5). Такая черта проявляется и в большинстве других церквях Тайка и Гугарка (в Опизе 1:4,1, в Долисахане 1:2,8, и др.) и является одной из особенностей армянской архитектурной школы Тайка и Гугарка. Анализ показывает, что общий планировочный тип Норашен преемствовал с раннехристианского армянского сакрального зодчества. Крестообразные небольшие церкви VII в. как церковь в Сасунике, церковь св. Степаноса в Коше и др., являются основой архитектурно-планировочных решений Норашена. В раннехристианских постройках этого типа мы видим приделы, которые расположены около апсиды, так как сделано в Норашене¹¹.

Объемнопространственные и конструктивные решения и анализ.

Исследуемая церковь построена в армянской традиционной трехслойной кладке «мидис», где принцип кладки состоит в том, что камень кладется в двух лицевых частях, и обычно в лицевой части хорошо обрабатывается, а с другой части клинообразно грубо обрабатывается для хорошей хватки, а в середине кладки тесно кладутся вымытые обломки и маленькие остатки из обработанных камней и заливается жидким известниковым раствором¹². В церкви Норашен и аналогичных церквях школы Тайк Гугарк есть особенности кладки. В наружной лицевой части камни чистотесанные (арм. «србаташ») и очень тонкие, чем напоминают облицовку. Таким образом основным несущим звеном в стенах становится известниковый бетон, который в целом не меняет философию кладки Мидис, который до сих пор используется в армянском зодчестве (конечно в основном заменяя известняк на цемент). Еще одной любопытной и логической модификацией классической армянской системы кладки Мидис является внутренняя кладка церкви Норашен. Внутренняя кладка стен из грубо обработанных камней, только конструктивные элементы (арки, пилоны, пояса, своды и др.) сделаны из чистотесанных камней. Остальная часть внутренней кладки сделана из грубо обработанных и, по сравнению с наружными чистотесанными камнями, в среднем почти в половину раза меньшими размерами. Это объясняется тем, что Норашен и многие другие церкви области были постройками православных армян (армян-халкидонитов), стены изнутри покрывались фресками, поэтому не имело смысла слишком чисто обрабатывать камни. В Армянском средневековом зодчестве с такими грубо обработанными камнями в основном строились нерелигиозные постройки (защитные, жилые и др.).

Известно, что в армянской архитектурной школе Сюника есть примеры с возведениями церковных построек с грубо обработанными камнями, потому что в регионе не имелись качественные каменные ресурсы¹³.

Одним из раннехристианских известных церквей с обеих сторон грубо обработанными камнями кладки Мидис является церковь Мохренис «охт дрни», который датируется VI в¹⁴.

¹¹ Նահատակյան Գ. Ս. Հայաստանի և Վրաստանի եռախորան գմբեթավոր տաճարների ճարտարապետությունը // Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական յոթերորդ նստաշրջանի նյութեր / ՀՀ ԳԱԱ արվեստի ին-տ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, էջեր 222-234:

¹² Տմ. Թորամանյան Թ., Շինակությունը և նրանց գործածությունը հին Հայաստանում, նյութեր, հ.1, Արմֆանի հրատ., Երևան, 1942, էջեր 134-141: Հարությունյան, Վ., Հայկական ճարտարապետության պատմություն, բուհական ձեռնարկ, Երևան, «Լույս» հրատ., 1992, էջեր 104-108:

¹³ Մնացականյան Ս. Խ., Սյունիքի ճարտարապետական դպրոցը, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1960, էջեր 6-16:

¹⁴ Асратян М. М. указ. соч. с. 300.

Таким образом кладка стен сделана с традиционной армянской кладкой мидис, и, вопреки некоторым особенностям, в основном сохранились традиции кладки.

Внутреннее покрытие сделано с помощью двуцентрических сводов, с чистотесанными камнями. Интересно, что внутренние камни вертикальных стен сделаны с груботесанными камнями, а свод начинается с хорошо обработанными камнями. Логика такой кладки в том, чтобы сделать максимально симметричный свод. Своды опираются на боковые стены и подпружные арки, но так как западный рукав более длиннее свод имеет дополнительное усиление с помощью подпружной арки. Подпружные арки в свою очередь опираются на двуступенчатые пилястры, которые тоже сделаны с хорошо обработанными и более крупными камнями. Подпружные арки, своды и пилястры по своей стилистике совпадают почти со всеми постройками школы Тайка и Гугарка в X-XI вв. В зависимости от размеров, вышеупомянутые приемы несколько измененно, но в пределах основной логики, применялись почти во всех постройках Тайка и Гугарка вне зависимости от типов, например в Ошке (трехапсидный крестовокупольный), Ишхане, Пархаре (трехнефная базилика) и др., пилястры и подпружные арки многоступенчатые, а пилястры в верхних частях усилены с помощью кронштейнов. Такую картину мы имеем когда сравниваем типы арок (двуцентричные), грубо обработанные внутренние стены и др.

Как уже говорилось выше, почти у всех храмов Тайка и Гугарка арки двухцентровые. Чтобы выявить высоту арок, нами был проведен пропорциональный анализ конструктивных арок, т.е. соотношение ширины к высоте подкупольных арок. В Ошке, Ишхане, Цкароставе, Тбете пропорции составляют 1:2,5, в Кумбурдо - 1:3,5. В других храмах, как Хаху, Ехегнамор, Норашен и Долосхана, соотношение 1:2, а в Опизе - 1:1,5. В больших храмах, как Ошк, Ишхан, Тбет и Цкаростави, арочные пропорции совпадают (1:2,5), в средних храмах Ехегнамор, Норашен и Долосхана арочные пропорции совпадают с пропорциями Хаху (1:2). Получается, что в Опизе самые низкие (1:1,5) - это возможно объясняется тем, что этот храм построен раньше IX в.

В ранних церквях этого типа в Талине пропорции высоты подкупольных арок примерно составляют 1:2, в Дорбантаванке в восточной и западной частях 1:2,2, северной и южной - 1:3, а в Коше - 1:2,3.

Отметим, что такие высокие арки в развитом средневековье были и в других армянских архитектурных школах, например, в васпураканской школе, в знаменитом храме Сурб Хач (св. Креста) в Ахтамаре (915-921 гг.), где пропорции подкупольных арок составляют 1:3, хотя арки не двухцентровые. В Анийском соборе, построенном в конце X - начале XI в., пропорции арок составляют 1:2,5, и арки двухцентровые. Отсюда следует, что в раннюю эпоху все арки этого типа имели полукруглую форму, а пропорции составляют примерно 1:2 - 1:2,5. Позднее в IX-X вв. уже появилась тенденция строить высокие арки, а начиная со второй половины X в. это становится основным стилем, и пропорции по высоте арок составляют до 1:3,5 (как строится Ошк, Тбет, Кумбурдо), а в других памятниках Армении - до 1:3. В первой четверти XI в. этот прием начинает развиваться и в Грузии, как например в Алаверди, Светицховели, Никорцминда и др., где пропорции достигают до 1:3,5. Вышеупомянутые решения тоже встречаются в армянском зодчестве раннехристианского периода, но двуцентрические своды и подпружные арки тогда редко встречаются. В других армянских средневековых архитектурных школах как Ани-Ширак, Сюник и Васпуракан в IX-XI вв. тоже встречаются двухцентровые арки и своды, но в школе Тайка и Гугарка они являются основным решением, таким образом подчеркивая черту школы.

